



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Նորայր Պողոսյան

ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐ

ՎԱՂԱՇԽԱՐՀԱԲԱՐՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

(16-18-րդ դդ.)

3000 բառ, բառաձև և դարձվածային միավոր

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԳ 801.3=919.81:941 (479.25)

ԳՄԳ 81.2Հ-4+63.3(2Հ)

Պ 797

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ հայ
բանասիրության ֆակուլտետի խորհուրդը:*

Պ 797 Պողոսյան Ն.

Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում: 16-18-
րդ դդ./ Ն. Պողոսյան. -Եր.: ԵՊՀ, 2014.- 224 էջ:

*Բառարանում ընդգրկված են վաղաշխարհաբարյան բնագրե-
րում հանդիպող նորակազմ, իմաստափոխված, հնչյունափոխված,
նոր փոխառյալ, բարբառային բառերը:*

ՀՏԳ 801.3=919.81:941 (479.25)

ԳՄԳ 81.2Հ-4+63.3(2Հ)

ISBN 978-5-8084-1875-2

© ԵՊՀ հրատարակչություն, 2014

© Ն. Պողոսյան, 2014

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա) Տպագիր

- Ագույ. կոնդ.** - Գեորգ Տէր-Վարդանեան, Ագույիսի Սուրբ Թովմա Առաքելի վանհում գտնուած նուիրական կոնդակներ, «Էջմիածին», 2012, ԺԱ:
- Ա. Երեմ.** - Արամ Երեմեան, Մի անյայտ ձեռագիր տաղարան (կրօնական, գինու և սիրոյ տաղեր), Թէհրան, 1947:
- Ակոռ.** - Հակոբ Փափազյան, Ակոռու Ս. Հակոբ վանքի բյոթուկը, «Բանբեր Մատենադարանի», ք. 12, Եր., 1977:
- Աղան. Միաբանք** - Մկրտիչ Եպս. Աղանունի, Միաբանք և այցելով Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929:
- Առ էջմ.** - Թուրք Գրիգորի Կեսարացոյ առ էջմիածնեցիս:- Ներսէս Ակինեան, Մովսէս Գ Տաթևացի կաթողիկոսն և իր ժամանակը, Վիեննա, 1936:
- Բունիաք** - Բունիաք Սեբաստացի, Գիրք բժշկութեան (ժէ դար), աշխատ. Գ. Մ. Կարապետյանի, Եր., 1987:
- Գալ. Կենս.** - Գրիգորիս Ծ. Վ. Գալեմեարեան, Կենսագրութիւն երկու հայ պատրիարհներու և տասն եպիսկոպոսներու, Վիեննա, 1915:
- Գաազ. Աղթմ.** - Ներսէս Ակինեան, Գաազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920:
- Գովր.** - Գրիգոր Գովրիկեան, Հայք յեղիսաբերոպոլիս Դրանսիլուանիոյ, Վիեննա, 1893:
- Դաան.** - Դաանաբանական անտիպ էջեր ժէ դարէն, հրատ. Կարապետ Եպս. Ամատունի, «Բազմավէպ», 1978, թիվ 1-2:
- Դաարիժ.** - Առաքել Դաարիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատ. Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990:
- Դ. Զէյթ.** - Դաիթ Զէյթունցի, Զափածո տոմար:- Դաիթ Զէյթունցի, Մեկնութիւն փերականի, Եր., 1981:

- Դիան Ժ** - Դիան Հայոց պատմութեան, գիրք Ժ. Մանր մատենագիրք, ԺԵ-ԺԹ դարեր, հրատարակեց Գիտ Աղանեանց, Թիֆլիս, 1912:
- Դիան Մխիթ.** - Մայր դիան Մխիթարեանց ի Ա. Ղազար (1707-1773), Վենետիկ, 1930:
- Դիան Ն. Զուլ.** - Դիան Նոր Զուլայի Ս. Ամենափրկիչ վանքի, մասն Ա, էջ-միաձնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705), աշխատասիրեց՝ Խաժակ Տէր-Գրիգորեան, Անթիլիաս, 2003:
- Դիւ. Ա.Յակ.** - Դիան Սուրբ Յակոբայ (Ա-ԺԹ), «Սիոն», 1930 նոյեմբեր - 1941 յուլիս-օգոստոս:
- ԴՀՎ II** - Դիվան հայ վիմագրության, պրակ II, Եր., 1960:
- ԴՀՎ III** - Դիվան հայ վիմագրության, պրակ III, Եր., 1967:
- ԴՀՎ IV** - Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Եր., 1973:
- ԴՀՎ V** - Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Եր., 1982:
- ԴՀՎ VI** - Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Եր., 1977:
- ԴՀՎ VII** - Դիվան հայ վիմագրության, պրակ VII, Եր., 1996:
- Եզով** - Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом (документы), С. Петербург, 1898:
- Ե. Մուշ.** - Հ. Ոսկեան, Եղիա Մուշեղեան և իր գրական արտադրութիւնները, «Հանդէս ամսօրեայ», 1927:
- Զ. Ազուլ.** - Զաւարիա Ազուլեցու Օրագրութիւնը, Եր., 1938:
- Զաք. Ա, Բ, Գ** - Զաւարեայ Սարկասագի Պատմագրութիւն, Գիրք Ա, Բ, Գ, Վաղարշապատ, 1870:
- Զուար** - Զուար Ճիլերեհի Օղլու Բահանայի Ճանապարհագրութիւն և ուխտ յԵրուսաղէմ, «Բազմավէպ», 1867-1869:
- Թորգ. Տապան.** - Վահրամ Յ. Թորգոմեան, Կ. Պոլսոյ հայ պատրիարքներու տապանագիրները, «Բազմավէպ», 1918:
- Թորոս աղբար** - Գարեգին Մրումնտեանց, Թորոս աղբար, Կ. Պոլիս, 1884:
- Ժամ. Պող.** - Ժամանակագրոյթուն (XI-XVIII դդ.), հրատ. Նորայր արք. Պողոսյան, «Բանբեր Մատենադարանի», թիվ 9, Եր., 1969:
- Կալվաժ.** - Կալվաժագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ I, կազմեց Հար. Աբրահամյան, Եր., 1941:
- Կ. Ամատ.** - Կարապետ Եպս. Ամատունի, Ժէ դարու երևելի վարդապետներ, Վենետիկ-Ս. Ղազար, 1989:

Կամենից - Կամենից, Տարեգիր հայոց Լեհաստանի և Ռումենիոյ, աշխատ.

Ղևոնդ Ալիշանի, Վեներտիկ, 1896:

Հայ-Վենետ - Ղևոնդ Ալիշան, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք Հայոց և Վե-
նետաց ի ԺԳ-ԺԴ և ի ԺԵ-ԺԶ դարս, Վեներտիկ, 1896:

Հնատիպ - Նորայր Պողոսյան, Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատա-
կագրություններ (1512-1712 թթ.), Եր., 2012:

ՀՎԲ - Ս. Գևորգյան, Հայ վիմագիր բանաստեղծությունը, Եր., 1989:

Ձեռ. յիշ. ԺԷ - Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հտ. Ա,
Եր., 1974:

Ղուկ. նամ. - Ղուկաս կաթողիկոսի նամակը Ավստրիայի Յովսէփ Բ կայսե-
րը և այդ երկրի դեսպանին Ս. Պետերբուրգում:- Լեոն Բարայեան, Հա-
յերը Մոլդավայում և Բուֆովինայում, Թիֆլիս, 1911:

Ճեմն. - Հ. Սահակ Ճեմնեմեան, Նոր նիսբեր Կ. Պոլսոյ երջանկայիշատակ
պատրիարք Յովհաննէս Կոլոտի մասին (ֆաղուած Ս. Ղազարի դիւա-
նէն), «Բազմավէպ», 1978, 3-4:

ՄԺ I - Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դ.), հատոր I, կազմեց՝
Վ. Ա. Հակոբյան, Եր., 1951:

ՄԺ II - Մանր ժամանակագրություններ (XVII-XVIII դ.), հատոր II, կազ-
մեց՝ Վ. Ա. Հակոբյան, Եր., 1956:

Յ. Թութունջ. - Յովհաննէս Թութունջի, Ուղեգրութիւն (1678-80թթ.): - Հ. Ա-
նասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաս-
տանում, Եր., 1961:

Յիշ. Ուլմ. - Յիշատակարան Կարապետի կաթողիկոսի Ուլմեցոյ Վարք ինֆ-
նագիր, հրատ. Հ. Սահակ Ճեմնեմեան, «Բազմավէպ», 1978, 3-4:

Յ. Կարն. - Յակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց (յիշատակարան ԺԷ
դարու), Վաղարշապատ, 1903:

Յ. Կոլոտ - Գ. Բամպուրեան, Յովհաննէս Պատրիարք Կոլոտ (1678-1741)
և իր աշակերտները, Ստանպոլ, 1984:

Յ. Ղր. - Յովհաննէս Ղրիմեցոյ Պատմութիւն հոշակատր վանից Հաղբա-
տայ Ս. Նշանին, հրատ. Համագասպ Ոսկեան, Վիեննա, 1965:

Յ. Քիրտ. - Յ. Քիրտեան, Ջողայեցի խօջայ Նազար և իր գերդաստանը
(առանց տպ. թվ. և վայրի):

Ներք. Սրապ. - Գրիգոր Կեսարացի, Ներքողեան ի վերայ մահուան տեառն
Սրապիոնի Ուրհայեցոյ, «Սիոն», 1953:

Նշխարք - Նշխարք մատենագրութեան Հայոց, հրատ. Ք. Պատկանեան, Ս.
Պետերբուրգ, 1884:- Օգոստինոս Բաշենց, Ժամանակագրութիւն:

- Նոր ծաղ.** - Նորագոյն ծաղիկ զօրութեանց, թարգմ. Յ. Կոստանդնուպոլսեցու, Վենետիկ, 1685թ. (ըստ ՄՄ 786 օրինակի):
- Շահմ. յիշ.** - Մահառեսի Շահմուրատի յիշատակարանը: -Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961:
- Ուղոս.** - Մետրոպ Վ. Ուղոսլեան, Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցոյ նոցա ի Լիվոնոյ քաղաքի, Վենետիկ, 1891:
- ՈՒՄՀԲ I** - Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), աշխատասիրությամբ Հասմիկ Սահակյանի, հտ. I, Եր., 1986:
- ՈՒՄՀԲ II** - Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), աշխատասիրությամբ Հասմիկ Սահակյանի, հտ. II, Եր., 1987:
- Ոսկ. նամ.** - Ոսկան Վարդապետի (Երևանցու-Ն. Պ.) նամականիքն, հրատարակեց Հ. Պօղոս Անանեան, «Բազմավէպ», 1966-67:
- Պատմ. Երուս.** - Սարգիս Վարդապետ, Պատմութիւն Երուսաղէմի, «Սիոն», 1931-32:
- Պատմ. Խոթ.** - Յովհաննէս Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթի-նու, աշխատասիրութեամբ Հ. Ս. Անասեանի, Երևան, 1964:
- Պօղ. նամ.** - Նամակներ Պօղոս Արապեան տպագրիչի, հրատ. Հ. Սահակ Ճեմենեան, «Բազմավէպ», 1978, թիվ 1-2:
- Սանահն.** - Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Բէօթուկը), աշխատ. Պարոյր Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007:
- Սիմ. Լեհ.** - Սիմէոն Դպրի Լեհացոյ Ռիդեգրութիւն, հրատ. Ներսէս Ակի-նեան, Վիեննա, 1936:
- Ս. Ապար.** - Սիմէոն Ապարանեցի, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Կարապետ Սոմխասյանի, Եր., 1976:
- Ստ. Ռօշֆայ** - Ստեփանոսի Ռօշֆայ ժամանակագրութիւն կամ տարեկանի եկեղեցականի, հրատ. Հ. Ոսկեան, Վիեննա, 1964:
- Վ. Յուն.** - Վարդան Յունանեան, Բառարան գրոյս:- Յովհաննէս Պոնայի Ձեռքածութիւն յերկինս, Հոռոմ, 1674:
- Տէֆթ.** - Աւետիք Տիգրանակերտցի, Տէֆթեր գիրք:- Աւետիք Պաղտասարեան ընթերցող Տիգրանակերտցի (հոդվածի հեղինակն ամենայն հավանականությամբ Ղևոնդ Ալիշանն է), «Բազմավէպ», 1897 թ.:
- Քէօմ.** - Երեմիա Ձէլէպի Քէօմիւրեան, Ստամպոլոյ պատմութիւն, հրատ. Վահրամ Թորգոմեան, Վիեննա, 1913:

Բ) Ձեռագրեր

Երուս. դիսան - Ժե դ., Երուսաղեմի հայոց պատրիարհության դիվանական փաստաթղթեր (առանց էջահամարների):

ՄՄ 1127 - Ժե դ., Ժողովածոյ, Բաղդիբ, էջ 133ա-156բ:

ՄՄ 1430 - 1658 թ., Իգնատիոս Տիգրանակերտցի, Համառոտութիւն պատմական և տաղաչափական, էջ 93ա-103ա:

ՄՄ 1528 - 1649-51 թթ., Թարգմանութիւն բառից ի Նահապետ ծաղկողէ, էջ 1ա-2բ:

ՄՄ 1756 - Ժե դ., Բանբ իմաստասիրականբ և աստուածաբանականբ, էջ 7ա-182ա:

ՄՄ 2019 - 1600 թ., Հանդէս բանաստեղծաց, էջ 162բ-170ա:

ՄՄ 2281 - Ժե դ., Այս բառբ գեղջուկբ, որ կարի պիտոյ է վարժասիրաց. Հանդէս բանաստեղծաց, էջ 122բ-136ա:

ՄՄ 6275 - Ժե դ., Բժկարան, էջ 184բ-239ա:

Գ) Բառարաններ

ԱԲ - Առձեռն բառարան հայկազեան լեզուի, կազմ. Գ. Ճէլալեան, Անթիլիաս, 1988:

Աբիկ. - Մ. Աբիկեան, Երեւելեզուեան ընդարձակ բառարան տանկերէն-հայերէն-գաղղիերէն, Կ. Պոլիս, 1888:

ԱՀԲԲ - Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. Ա-Բ, Եր., 1976:

Արևմտ. Բառ. - Ռ. Սաբապետոյեան, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Եր., 2011:

ԲԱՀ - Ժ. Թազպազեան, Բառարան արաբերէնէ հայերէն, Պէլրուք, 1960:

Բառ. պարսկ. - Բառարան պարսկերէն, ըստ կարգի հայկական այբուբենից, Կ. Պոլիս, 1826.

ԲՀ - Հ. Ամալյան, Բաղդիբ հայոց, Եր., 1975:

Գառ. բառ. - Հ. Անտեան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:

Լատ. - Աշ. Հայրապետոյան, Լատիներեն-հայերեն բացատրական բառարան, Եր., 2005:

Կարստ - Միջին հայերէնի բառարան (անտիպ):

ՀԱԲ - Հ. Անաոյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Ա-Դ, Եր., 1971-79:

- ՀԲԲ - Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հտ. I-IV, Եր., 1944-45:
- ՀԳԲ - Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան (նշե-ում չվկայված բա-
ներ), Եր., 2010:
- ՀԼԲԲ - Հայոց լեզվի բարբառային բառարան, հտ. Ա-Զ, Եր., 2001-2010:
- ՀՊԲ - Վ. Յարութիւնեան, Հայերէնից պարսկերէն բառարան, Թեհրան,
2006:
- ՄՀԲ - Ռ. Դազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր.,
2009:
- Ն. Բիւզ. - Նորայր Բիւզանդացի, Բառգիրք ստորին հայոց, ի մատենագրու-
թեանց ԺԱ-ԺԷ դարուց, հրատ. պատրաստեց Մ. Մինասեանը, Ժնև,
2000 (Պ-Ֆ տատերը՝ անմշակ):
- ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հեղ. Գ. Աւետիբեան, Խ. Սիւսմէ-
լեան, Մկ. Աւզերեան, հտ. Ա-Բ, Եր., 1979-81:
- Փէշտ. - Գ. Փէշտիլմանեան, Բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Ա-Բ, Կ. Պո-
լիս, 1844-46:
- ՕԲԲ - Ալ. Մարգարյան, Աշ. Հայրապետյան, Օտար բառերի բացատրական
բառարան, Եր., 2004:
- Օսմ. - Պ. Կարապետեան, Մեծ բառարան օսմաներէնէ հայերէն, Կ. Պոլիս,
1912:
- Большой немецко-русский словарь, т. I-II, М., 1980.
- Большой польско-русский словарь, состав. Гессен Д., Стыпула Р.,
Варшава-Москва, 1967.
- Венгерско-русский словарь (40.000 слов), ред. Ласло Гальди,
Москва-Будапешт, 1987.
- Гришин К. А., Французско-русский словарь, М., 1982.
- Зорько Г. Ф., Новый большой итальяно-русский словарь, М., 2006.

Գ) Համառոտագրություններ

ա. - ածական
առանց մեկն. - առանց մեկնաբա-
նության
արար. - արարերեն
բառ. - բառարան
բժշկ. - բժշկական (բառ, տերմին)

բղղչ. - բաղադրիչ
բնստ. - բանաստեղծական
բոխղ. - բառախաղ
բոկպ. - բառակապակցություն
բոց. - բառացի
բար. - բառաբանություն

գ. - գոյական
գերմ. - գերմաներեն
գրք. - գրաբար
գրչ. - գրչագրական տարբերակ
դ. - դերանուն
թ. - թվական
թուրք. - թուրքերեն
ժող. ստուգ. - ժողովրդական ստուգա-
բանություն
իմաստափոխ. - իմաստափոխություն
իտալ. - իտալերեն
լատ. - լատիներեն
լեհ. - լեհերեն
ծան. հրատ.- ծանոթագրություն բնա-
գիրը հրատարակողի
կ. - կապ
կբ. - կրավորական բայ
կենդ. - կենդանաբանություն
կրաւ. - կրավորական
հայ. - հայերեն
հայկ. - հայկական
հեղ. - հեղինակային

հնգ. - հնացած
հրատ. - հրատարակիչ բնագրի
հրդ. - հարադրություն, հարադիր կազ-
մության բառ
հունգ. - հունգարերեն
մկ. - մակբայ
ՄՄ - Երևանի Մաշտոցյան Մատենա-
դարան
յուն. - հունարեն
նբ. - ներգործական սեռի բայ
նոյն նշ. - նույն նշանակությամբ
շ. - շաղկապ
շբ. - շեզոֆ սեռի բայ
պարսկ. - պարսկերեն
պբ. - պատճառական բայ
ռուս. - ռուսերեն
ռումին. - ռումիներեն
սխլգր. - սխալագրություն
վրաց. - վրացերեն
փխբ. - փոխաբերական իմաստ
փղջ. - փաղափշական ձև
ֆրանս. - ֆրանսերեն



ԲԱՌԱՐԱՆԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայերենում նոր բառերի ստեղծումն ու տարածումը չդադարող ընթացք է: Անվերջ ընթացք է նաև նոր բառերի հայտնաբերումը տարբեր բնագրերից: Հրատարակվող յուրաքանչյուր նոր երկ իր հետ բերում է նախկինում չարձանագրված նորանոր բառեր, բառաձևեր ու դարձվածքներ, փոխառյալ ու իմաստափոխված բառեր, ի վերջո՝ նորաբանությունների զանազան շերտեր, որոնք մեծապես բնորոշում են տվյալ շրջանի հայերենի բառապաշարի առանձնահատկությունները:

Բառային նորաբանությունների սահմանումը, բացահայտումն ու ֆննդությունը միշտ արդիական են եղել հայերենագիտության համար: Այդպես է նաև ներկայումս, և առանց վարանելու կարելի է ասել, որ հայ լեզվաբանության վերջին շրջանի ամենից շատ արժանի թեմաներից մեկը *Նորաբանագիտությունն է: «Նորաբանագիտության (նեոլոգիա) կարևորագույն խնդիրներից է որոնել-գտնել նոր բառերի երևան գալու պատճառները, ինչպես նաև այն շարժիչ ուժերը, որոնք պայմանավորում են լեզվի այդ բնական առաջընթացը»*,¹- գրում է Ա. Մարտիրոսյանն իր մենագրության մեջ¹:

Հայերենագիտության այս ոլորտի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ, մենագրություններ, բառարաններ են հրատարակվել նաև վերջին տասնամյակում²: Դրանց մեջ պետք է շեշտել, նախ՝ մեծանուն բանասեր Նորայր Բյուզանդացու հեղինակած՝ միջին հայերենի անավարտ բառա-

¹ Ա. Մարտիրոսյան, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Եր., 2007, էջ 29: *Նորաբանագիտություն* տերմինի սահմանումը առաջինը թերևս հանդիպում ենք Ա. Մարտիրոսյանի այս աշխատության մեջ:

² Տե՛ս, օրինակ՝ Ա. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան (Նոր բառեր, իմաստներ, դարձվածքներ, բառակապակցություններ, արտահայտություններ, հապավումներ), Եր., 2002: Ռ. Ղազարյան, Յ. Ավետիսյան, Նորահայտ բառեր գրաբարում, Եր., 2007: Փ. Մեյթիսանյան, Նոր բառերի բացատրական բառարան, Եր., 1996: Ռ. Ղազարյան, Յ. Ավետիսյան, Նորահայտ բառեր գրաբարում, Եր., 2007: Ա. Գրիգորյան, Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ (Գրիգոր Տաթևացի), Եր., 2009: Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Եր., 2011:

րանի լույս ընծայումը: Բառարանի ձեռագրերն ամբողջացրել և հրատարակել է Մ. Մինասյանը, և ինքն էլ հետևյալ համառոտ բնութագիրն է տվել աշխատանքին. «Հրատարակում եմ այն բոլորը, ինչ փրկուել է միջին հայերենի այս թանկագին բառարանից, ուր հեղինակի ուշադրութիւնը գրաւել են յատկապէս հայերէն կամ հայերէնացած բառերը, ի տարբերութիւն «Միջին հայերէնի բառարան» արժեքատու աշխատութեան զոյգ հատորների, որոնք Մատենադարանում լրիւ չեն օգտուել Նորայրի այս անտիպ գործի մանրաժայլակնից»³:

Միջին հայերենի վերաբերյալ մեկ այլ բառարան տպագրության ընթացքի մեջ է ներկայումս: Խոսքը Յոզեֆ Կարստի «Միջին հայերենի բառարանի» մասին է: Այդ աշխատության մեծածավալ ձեռագիր էջերը պահպանվում են Երևանի Մաշտոցյան Մատենադարանում, որոնք թվայնացրել և դրանց հիման վրա Կարստի բառարանը հրատարակելու որոշակի ֆայլեր է կատարել Գերմանիայի Հալլե/Վիթենբերգի համալսարանի գիտական խումբը, որի կազմում աշխատելու պատենությունը ունեցել ենք նաև մենք:

Հին հայերենի բառապաշարային մեծաքանակ արժեքավոր նյութ է պարունակում Լավրենտի Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանը»⁴: Այն ամբարում է 5-11-րդ և հետագա դարերի գրաբար բնագրերից ֆաղված նոր բառերը, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում: Այդ իմաստով բառարանը հայերենի հին շրջանի բառաստեղծման աղբյուրի արժեք է ստանում:

Բայց որքան որ նոր բառարաններ և ուսումնասիրություններ ստեղծվեն, միևնույն է՝ անսահման է հայերեն գրավոր մշակույթը, և անհնար է սպառված համարել բառապաշարային նոր իրողությունների ու նոր բառերի հայտնաբերումը: Խոսքը վերաբերում է հատկապէս ուշ միջնադարում ստեղծված բնագրերին ու ստեղծագործություններին այն առումով, որ դրանցից շատերն իրենց բազմաժանրությամբ հանդերձ լեզվական պատշան ֆննությունների չեն արժանացել, առանձին երկեր բառապաշարային հարթության վրա ընդհանրապէս չեն դիտարկվել: Քիչ ուսումնասիրված են մնացել նաև վաղ աշխարհաբարյան բնագրերում հանդիպող նոր բառերը:

Ներկա բառարանն, անհա, նվիրված է վաղ աշխարհաբարյան աղբյուրներից ֆաղված նորահայտ բառերին, որոշ չափով ամբողջացնում է դրանք:

³ *Նորայր Բիւզանդացի*, Բազմիք ստորին հայոց, ի մատենագրութեանց ժԱ-ժԵ դարուց, Իրատ. պատրաստեց Մ. Մինասեան, Ժնեւ, 2000 (Պ-Ֆ տառերը՝ անմշակ), էջ 3:
⁴ *Լ. Հովհաննիսյան*, Գրաբարի բառարան (ՆՀԲ-ում չվկայված բառեր), Եր., 2010:

* * *

Որպես «նորահայտ բառ» հասկացության հումանիշ գիտական գրականության մեջ հանդիպում են **նորակազմ, նորակերտ, նորահնար, նորակերպ, նորաստեղծ, նորածին, նորամուտ, նորալուս** (Ա. Բագրատունի), **նորաբնույթ** (Ռ. Ղազարյան) բառերը: Հ. Անաոյանը տարբեր աղբյուրներով գործածում է **նորագյուտ, նորածին, նորակերտ** տերմինները: Հանախ հեղինակները նաև սահմանում են իրենց նախընտրած տերմինը, օրինակ՝ «12-16-րդ դդ. նյութերը պարունակում են զգալի թվով **նորաբնույթ** բառեր, որոնք *արձանագրված չեն միջինհայերենյան գրավոր մյուս աղբյուրներում*»⁵:

Համարժեք այս տերմիններից գերադասեցին գործածել **նորահայտ բառեր**, որ ավելի է բնորոշում բառարանի ընտրանքը. դրանք նորահայտ են այնքանով, որ նոր են ի հայտ եկել և շրջանառության մեջ դրվել:

Փորձենք առավել հստակեցնել, թե որո՞նք են վաղաշխարհաբարյան շրջանի համար համարվել նորահայտ բառեր և ներմուծվել մեր բառարանի մեջ:

Մեր դիտարկած բնագրերն ընդգրկում են 16-րդ դարի վերջից մինչև 18-րդ դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանը: Այն համապատասխանում է վաղ աշխարհաբարին (ըստ Գ. Ջահուկյանի սահմանումի)՝ միջին հայերենից նորմավորված աշխարհաբարին անցնելու ենթաշրջանին⁶ և շաղկապում է մի կողմից միջին հայերենը, մյուս կողմից՝ ձևավորվող ու նորմավորվող գրական աշխարհաբարի վաղ տարբերակները (Կ. Պոլսում, Վենետիկում, Արարատյան գավառում, պարսկահայ գաղթօջախներում և հատկապես Նոր Ջուղայում)⁷:

Ընդ որում՝ այդ շրջանում ստեղծված երկերը լեզվական առումով բնութագրվում են անմիօրինակությամբ. իրար կողմ-կողքի գոյակցում են գրաբարով, նոր ձևավորվող աշխարհաբարով ու ժամանակի բարբառներով գրված երկերը:

Հայերենի զարգացման շրթայում միջանկյալ և անցումային դիրք գրավող և դեռևս նյութերի չտարանջատված աշխարհաբարի այս փուլում

⁵ Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 33:

⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Յայոց լեզվի կազմավորումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 49-64:

⁷ Վաղ աշխարհաբարի քննությանն են նվիրված՝ Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը 17-18-րդ դարերում, Եր., 1979: Նույնի՝ Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Եր., 1978: Ս. Գալստյան, Ակնարկներ աշխարհաբարի պատմության, Եր., 1963: Է. Սկրտչյան, Աշխարհաբար տերմինի մասին, ԲԵՅ, 1979, թ. 3: Գ. Ջահուկյան, Յայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը XVIII-XIX դարերում, 1954 (անտիպ): Տ. Շահրբազյան, Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Եր., 1963: Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Եր., 2002:

անկա են բնագրերի երեք կարգի տարատեսակներ՝ հին գրական հայերեն կամ գրաբար, խոսակցական (ֆաղաֆացիական) հայերեն, բարբառներ:

Ըստ լեզվական որակի՝ մեր ֆննած և ֆարտագրած երկերը հենց նման երեք հիմնական խմբերի են բաժանվում:

1. Գրաբար բնագրեր: Ուշ միջնադարում գրաբարը պահպանել էր եկեղեցու, գիտության լեզու լինելու իր գործառույթը, և բնականաբար գրաբարով էին ստեղծվում բազմաթիվ դավանաբանական, աստվածաբանական, պատմագրական և այլ երկեր: Այս շրջանի գրաբարը որոշակիորեն տարբերվում է դասական շրջանից: Նոր որակի գրաբար է լատինաբան հայերենը:

2. Գրաբար-աշխարհաբար միախառն բնագրեր: Այս խմբում տարբերակվում են երկու ենթախմբեր: ա) Աշխարհաբար («ռամկախառն») տարբերով հարուստ գրաբար, ուր ֆերականական հիմքը գրաբարն է, սակայն անկա են նաև խոսակցական լեզվին, աշխարհաբարին բնորոշ ինչ-ինչ իրողություններ (Յովհաննէս Կամենացի «Պատմութիւն պատեազմիւն հոթիւնո», Զաֆարեայ Սարկասագ «Պատմագրութիւն», Յակոբ Կարնեցի «Տեղագիր Վերին Հայոց» և այլն): բ) Գրաբարախառն աշխարհաբար, ուր հենքը ընդհանուր առմամբ չնորմավորված աշխարհաբարն է, բայց հեղինակները գործածում են նաև գրաբարյան ձևեր (Յովհաննէս Թութունջի «Ուղեգրութիւն», Օգոստինոս Բաջենց «Ժամանակագրութիւն», Աւետիֆ Տիգրանակերացի «Տէֆթեր գիրք» և այլն):

Գրաբար-աշխարհաբար միախառն բնագրերից բերվող հետևյալ հատվածները կարող են լավագույնս ցույց տալ, թե ինչպես մեկ նախադասության մեջ միաձուլվում են գրաբարյան, միջինհայերենյան, աշխարհաբարյան տարրերը.

«Տէր կամեսցի, և մինչ ի Ղաթեա գամ, թէ տեսնում, թէ դապիլ է, միայնակ թինչով կու ժամանեն» (հատված Ս. Հակոբի դիվանական գրություններից): *«Ի թվականութեանս մերում ՌՄՆ (1606) սով սաստիկ է եղեար, որ մարդ գմարդ, շուն և կատու կերեալ են»* (Հակոբ Կարնեցու «Ժամանակագրութիւն»-ից): 17-րդ դարի հետևյալ հիշատակագրությունը շատ բանով հիշեցնում է ավելի ուշ շրջանի գրական լեզուն. *«Սուրբ էջմիածնայ գիւղի անունն Վարդգէս է, Վաղարշ Արշակունին մեծացրել է և իւր անունն դրել»:*

3. Բարբառային բնագրեր: Այս դեպքում խոսքը այնպիսի տեխտերի մասին է, որոնք գրվել են ուղղակի իր ժամանակի բարբառով, և նրանցում հնարավոր է մատնացույց անել կոնկրետ բարբառի հնչյունական, ձևաբանական կամ այլ հատկանիշի առկայությունը: Դրանք որոշ առումով

կարելի է դիտարկել որպես այս կամ այն բարբառի նախնական արտահայտություններ: 17-րդ դարից պահպանված և մեզ հասած հայերեն բարբառային առաջին մնուշներից է, օրինակ, Ամստերդամի հայերի խնդրագիրը՝ ուղղված իր ժամանակի իշխանությանը. «*Կու խնդրիմ որ էտոնց բաներին վերահասու լինես, որ ետ խեղջ տղին ջապր ու սեվնամ առին...* շուն էտ բաներն տեղտայ ա անում»⁸: Նման բարբառային բնագրեր են նաև Տրանսիլվանիայի հայերի գրագրությունները (հրատ. Գովրիկյան), Զուար Բահանայի «Ուղեգրությունը», Եղիա Կարնեցու նամակները, Զաֆարիա Ագուլեցու «Օրագրությունը», «Յիշատակարան Սանահնոյ վանից», «Ակոռու Ս. Յակոբ վանիի ֆեթուկը» և այլն:

16-18-րդ դարերի նկարագրված հայերեն բնագրերում, ահա, հանդիպում են մեծ թվով բառեր ու արտահայտություններ, որոնք որոշակիորեն տարբերվում են թե՛ գրաբարից, թե՛ միջին հայերենից: Դրանք զուտ «վաղաշխարհաբարյան բառերն» են, որոնք հայերենի մեջ են մտել 16-17-18-րդ դարերում, չեն կիրառվել գրաբարյան ու միջինհայերենյան բնագրերում և բնականաբար դուրս են եղել գրաբարի ու միջին հայերենի բարանագիրների ուշադրությունից: Հեղինակային նորակազմություններ են դրանք, որոնք հանդիպում են գեղարվեստական գրականության մեջ և բազմաթիվ այլ ժանրերի երկերում: Հին հայերենի համեմատ հնչյունափոխված և իմաստափոխված բառեր⁹ են, որոնք ձևավորվել կամ գրի են առնվել այս շրջանում:

Առանձին շերտ են կազմում վաղ աշխարհաբարում կատարված փոխառությունները: Շատ հաճախ փոխառությունների մի մասն իր ժամանակին համագործածական է եղել, այնքան, որ շատերը «ներխուժել են» անգամ գրաբար բնագրերի մեջ: Հայերն ու հայոց լեզուն ուշ միջնադարում տարածված էին հեռավոր Հնդկաստանից, Պարսկաստանից մինչև Հունգարիա, Լեհաստան, Հոլանդիա: Հայերի սփռված լինելու մասին բնորոշ մի համեմատություն է անում Սիմեոն Լեհացին իր ուղեգրության մեջ. «*Եւ ուր եւ ինչ տեղ գնայաք, նա հայ գտանէաք, զի տարածեալ եւ սփռեալ էին ընդ երեսս երկրի որպէս զփոշի*»¹⁰: Այս շրջանում հայերն ու հայերենը շփումների մեջ էին Ասիայի (պարսկերեն, արաբերեն, թուրքերեն) ու Եվրոպայի (իտալերեն, լեհերեն, հունգարերեն, գերմաներեն, ռուսերեն, ռումիներեն, հունա-

⁸ Ա. Սարուխան, Յուլյանդան և հայերը ԺՁ-ԺԹ դարերում, Վիեննա, 1926, էջ 20:

⁹ Վաղ աշխարհաբարի իմաստափոխությունների մասին տե՛ս՝ Լ. Պողոսյան, Վաղ աշխարհաբարի իմաստափոխության դասակարգման կոր փորձ, ՊԲՀ, 2012, թիվ 2, էջ 227-239:

¹⁰ Սիմեոն Դպիր Լեհացոյ Ուղեգրութիւն, հրատ. Յ. Ներսես Վ. Ակինեան, Վիեննա, 1936, էջ 41:

րեն և այլն) մի շարք լեզուների հետ: Իրենց բնակության երկրների հայերեն տարբերակներում, բնականաբար, գերակշռում են տիրապետող լեզվից կատարվող փոխառությունները, Հունգարիայում՝ հունգարերենից ու գերմաներենից, Կ.Պոլսում՝ թուրքերենից, Նոր Զուլայում՝ պարսկերենից և այլն: Սակայն շատ հաճախ գրեթե անհնար է լինում հստակ որոշել, թե ո՛ր լեզվում է ծագել տվյալ բառը և ո՛ր լեզվից է անցել հայերենին: Այս դեպքում մեզ համար առաջնային չափանիշ է այն, թե որ երկրում ստեղծված բնագրի հետ գործ ունենի և ենթադրաբար՝ որ լեզվից կարող էր տվյալ բառն անցած լիներ հայերենի այդ հատվածի մեջ: Այսպես օրինակ՝ Սիմեոն Լեհացու, Ս. Ռոշֆայի պարագայում փոխառյալ բառերի մեծ մասի սկզբնաղբյուրը կարող է լինել լեհերենը, անկախ նրանից, թե լեհերենն իր հերթին որ լեզվից է փոխառել տվյալ բառը: Ընդհանուր առմամբ որևէ տեքստի բառային կազմի վրա հենվելով՝ կարելի է մոտավոր պատկերացում կազմել, թե որտեղ է ստեղծվել այդ բնագիրը՝ Եվրոպայում, Թուրքիայում, Իրանում, թե այլուր: Նման եզրահանգման կարելի է գալ նաև բառապաշարի վրա տվյալ տարածքի խոսվածքի հնչյունական հատկանիշների արտացոլումը հաշվի առնելով՝ ո>ր, բ>պ, պ>բ և այլ կարգի փոփոխություններով:

Ներկա բառարանում ընդգրկված բառերի շրջանակն, այսպիսով, հետևյալն է. տասնյակ բնագրերից հաղվել և բառարանի մեջ են մտնվել՝

1. նորակազմություններ բառակերտման միջոցով (*ծոմարձակ, խցակացուժիւն, կաթնամեղրաբուխ*)
2. իմաստափոխված բառեր (*երկաթ* «խարխախ», *ձող* «դրոշ»)՝
3. հնչյունափոխված բառեր (*փուռվառ, կարմոճ, Փառանձեւ*)
4. նոր փոխառություններ (*թանճարա, ուքազ, չիվէլ*)
5. դարձվածային նոր միավորներ (*չմարդի ունել, տակուն լինել, գլուխ քաշել*):

* * *

Բառարանից օգտվելիս պետք է հաշվի առնել հետևյալ մի քանի դիտարկումները:

Բառարանում գլխաբառից հետո տրվում է տվյալ բառի խոսքում սային պատկանելությունը, ձևաբանական դիտարկումները հազվադեպ են, քանի որ մեկ-երկու կիրառությամբ մեզ հասած բառերի դեպքում անհնար է պարզել, թե ինչ հոլով, խոնարհում և այլ լեզվական ձևավորում ունեն:

Այնուհետև տրվում է գլխաբառի բացատրությունը կամ օտար բառերի դեպքում՝ ծագումն ու ստուգաբանությունը: Բացատրությունները և

առհասարակ բառարանը գրված է ավանդական ուղղագրությամբ՝ խոսափելու համար միևնույն տեքստում, միևնույն նախադասության մեջ երկու տարբեր՝ հին և նոր ուղղագրությունները գործածելու անհարմարությունից:

Ապա տրվում են անխտիր բոլոր բառերի բնագրային վկայակոչումներ՝ ֆաղված տպագիր աղբյուրներից, ձեռագիր բնագրերից ու բառարաններից:

Բառացանկում կարելի է գտնել բառեր, որոնք այսօր, հնարավոր է, գործածական են և ընդգրկված են արդի հայերենի բառարաններում, սակայն չկան գրաբարի ու միջին հայերենի բառարաններում: Այս դեպքում «նորահայտ բառ» բնորոշումը այդ բառերի վրա տարածվում է իրենց ժամանակին՝ վաղ աշխարհաբարում ստեղծվելու կամ փոխառվելու և հայերենի մեջ նոր-նոր տարածվելու առումով: Այդպիսի բառեր կարող են դիտվել, օրինակ՝ *այցարար*, *լեզուագիտություն*, *թուփուն* և այլն: Սակայն պետք է ասենք, որ աշխատել ենք, որքան հնարավոր է, բառարանը զերծ պահել այնպիսի բառերից, որոնք այսօր էլ համագործածական են:

Շատ դեպքերում բառահոդվածները համադրված են հեղինակավոր բառարանների (ՆՀԲ, ԱԲ, ՄՀԲ և այլ) տվյալների հետ¹¹: Այդ բառարաններում հանդիպող՝ մեր ֆաղված նոր բառին կազմությամբ կամ իմաստով մոտ բառերը նպատակահարմար համարեցինք ներկայացնել գլխաբառի բացատրությունից անմիջապես հետո: Օրինակ՝ *հանճարայեղ* բառի դիմաց ՀԲԲ-ն ունի *հանճարայեղ*, *համարողականություն*-ի դիմաց ԱԲ-ն ունի *համարողություն*՝ նույն կամ մոտ նշանակություններով, և նման համարժեքները ներառել ենք բառահոդվածների մեջ՝ մեր ֆաղված բառի իմաստային դաշտը ճիշտ որվագծելու նպատակադրումով: Այդպիսով բառարանը որոշ իմաստով ստանում է **հոմանշային նշանակություն**:

Բառահոդվածների մեջ ըստ հնարավորին արտացոլված են **պատմական համանուններ**: Դրանք այն բառերն են, որոնք, հայերենի տարբեր փոյերում ծագած լինելով, իրարից անկախ ստացել են նույն ձևավորումը, սակայն տարբեր են իմաստներով, օրինակ՝ *յոտնաշափ* - մեր ֆաղված բնագրում ունեցել է «ոտանավոր, չափածո» իմաստը, ԱԲ-ում՝ «ոտքի բնական չափ», *դարակեղ* «դասակարգել», ՀԲԲ-ում՝ «դարանակել՝ զաղտնիքը դուրս հանել», *խոյակապ* «թագակապ՝ գմբեթավոր», ԱԲ-ում՝ «հոյակապ» և այլն:

¹¹ Ընդհանրապես պետք է հիշատակենք ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողուհի Յրիփսիմե Կոստանյանին, որ սիրահոծար կերպով մեզ օգնեց բառարանային որոշ տվյալներ համեմատելիս:

Իմաստափոխված բառերը բառարանում մատնանշված են *իմաստափոխ*. համառոտագրությամբ, օրինակ՝ *վատնել* - մեր բառարանում ունի «վատաբանել», իսկ ԱԲ-ն ունի «փչացնել, մսխել» (իմաստափոխ):

Արտացոլված են նաև գրաբարի և միջին հայերենի համեմատ վաղ աշխարհաբարում ի հայտ եկող տարբերակները՝ բառակազմական (*մոնոգոնիկ-մոնոգոնակ, մուճակար-մուճակակար, շուտափութութիւն-շուտափութիւն* և այլն), հնչյունական (*կիշեռել-կիշռել, պաշտունմ-պաշտուն, իգայտեղ-այգետեղ* և այլն): Վերջինների մեջ հանդիպում են հնագույն շրջանի բառային այնպիսի վերապրուկներ, որոնք պահպանվել են վաղաշխարհաբարյան աղբյուրներում՝ շրջանցելով գրաբարն ու միջին հայերենը: Այդպիսի բառեր կարող են դիտվել *ոյնել* (ունել), *կաշառակուր, աղջագուրել, անդադիր, շեաղջ* և այլն:

Աղբյուրներում իսիստ առատ են պայթական և պայթաշփական բաղաձայնների համակարգային տեղաշարժերով պայմանավորված հնչյունական տարբերակները, ինչպես՝ *բողբատ, գերթողահայր, գահանայ, դեսբան, թաբուր, լաբել, միդի (միթէ), ընձայ, ձակուկ, կանկատ, հրաշակործութիւն, ամպար* և այլն: Ուշ միջնադարի ցանկացած բնագրում սփռված են հնչյունական նման փոփոխությունների անհամար օրինակներ, և տեղին չի լինի դրանք զուտ վաղաշխարհաբարյան իրողություն համարել: Մենք բառարանի մեջ մտնել ենք հիմնականում այն տարբերակները, որոնք կարող են ժամանակի հնչյունական, բառակազմական առանձնահատկությունների կնիքը կրել ու նաև՝ համանունության առիթ տալ (*անցաւ-անձաւ, կօշիկ-գօշիկ*): Այս վերջինը հատկապես կարևորում ենք որպես նոր բառեր գոյանալու, բառային նոր իմաստներ ածանցվելու միջոց (*ուղեւոր-ուղաւոր, տաղաւար-տեղաւար*):

Որոշ բառեր, հնարավոր է, պատահական վրիպումների արդյունքում են սպրդել բնագրերի մեջ, որոնցից և անցել են մեր բառարանի մեջ: Տարբերեցումները նոր բառերի կարող են հանգեցնել մի շարք պատահառնություն, ինչպես՝ ձեռագրերում հանախ *ա-ու, գ-դ, ս-ո* և այլ տառերի գծագրությունը հստակ շտաբերակելու, բառակցման եղանակով շարադրելու (*երկտասն, նորնորու, քարմեղեալ*), կրճատ գրությունը սխալ բացելու (*մհտերեցկին*), անձանոթ բառերը հայերեն կամ օտար այս կամ այն բառին նմանեցնելու և ժողովրդական ստուգաբանության (*եղայ շրջեալ-հեղաշրջել*) և ուրիշ շատ պատճառներով¹²: Որպես օրինակ բերենք բնագրերից (ձեռագիր և տպագիր) ֆաղված գրչագրական տարբերակների,

¹² Տարբերակների առաջացման ուղիների մասին մանրամասն տե՛ս «Բառգիրք հայոց», քննական բնագիրը՝ 3. *Ամայանի*, Եր., 1975, էջ ԺԳ:

հնչյունափոխված ձևերի մի փունջ, որոնք կարող են նորակազմ բառեր համարելու առիթ տալ, բայց ամեն դեպքում պետք է քննել՝ պարզելու համար դրանց նիշտ սկզբնաձևը. անհարեստ (փոխ. անահեստ), բոբոր (բոբր), գծողիկ (գծողիկ), խստացալ (խստացալ), կաթտարելապէս (կատարելապէս), հայրկազանց (հայկազանց), մաբրափայլ (մաբրափայլ), նաաստ (նուաստ), նոյաբողբոջ (նորաբողբոջ), տառասպող (տառապող) և այլն: Աստղանիշ (*) ունեցող բառերը հենց այդպես են եղել ձեռագիր կամ տպագիր զբերում, օրինակ՝ *եխտել**, *խաւարակուրբ**, *ուղպատակի**, *սրտաթաւումն** և այլն:

Նման տարբերակներից բառաւանդ կազմելիս իսպառ գերծ մնալ անհնար է, կարծում ենք՝ հետևյալ հիմնական պատճառով. այդ բառերն ու տարբերակները ներկայացնում են վաղ աշխարհաբարի պատկերը, արտացոլում են ուղղագրական, գրչագրական ու նաև փերկանական այն «խառնարանը», որից ավելի ուշ պիտի ծնվեր գրական նոր ու նորմավորված հայերէնը:

Ներկա բառաւանդում, այսպիսով, ընդգրկված է ոչ թե «զտված» բառաւորներ, որն իր կազմությամբ ու իմաստներով կասկած չի հարուցի արդի հայերէնի լեզվամտածողությունն ունեցող ընթերցողին, այլ՝ մի բառաւորներ, որն իր ժամանակի՝ վաղ աշխարհաբարի արտացոլումն է ներկայացնում իր ունեցած լեզվական բազմաշերտությամբ, իմաստային տեղաշարժերով, տարածային տարբերակներով, հեղինակային նորակազմություններով, հանախ նաև՝ գրչագրական առանձնահատկություններով: Այնքան, որքան բազմաձև է վաղ աշխարհաբարն իր փերկանությամբ, նիշտ նույնքան էլ բազմաշերտ է այս շրջանի բառապաշարը: Այդ բազմաշերտ բառերը, ինչ-որ իմաստով կարելի է ասել, զանազան բնագրերից հատիկ-հատիկ եկել-խաշվել են ներկա բառաւանդում:

* * *

Վաղ աշխարհաբարի նոր բառերն ի մի հավաքելու աշխատանքն անշուշտ ավարտ չունի և չի կարող ունենալ, մանավանդ որ՝ շարունակ նորանոր աղբյուրներ են հրապարակվում և շրջանառության մեջ դրվում: Առանձին քննության կարիք ունեն հատկապես ձեռագիր մատյաններում պահպանված փոքր բառաւանդներն ու բառաւանդային պատառիկները¹³, հատկապես այն նմուշները, որոնք ուղղակիորեն կապ չունեն Երեմիա

¹³ Այդ մասին տե՛ս Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, (XVII դ. վերջ-ՎԻԻ դ. սկիզբ), հտ. 1, Եր., 2006: Ն. Պողոսյան, 17-րդ դարի հայ բառարանագրական հուշարձաններ.-Չահուկյանական ընթերցումներ, Եր., 2012, էջ 252-264: Ն. Հովհաննիսյան, Գրաբարի տպագիր բառարաններում չվկայված բառեր (ձեռագիր բառարանների Նյուլթի հիման վրա), ՊԲՀ, 2012, թ. 2, էջ 170-180:

Մեղրեցու «Քաղցիր հայոց»-ի ձեռագրական տարբերակների հետ և ինֆունուրոյն բառարանային միավորներ են ներկայացնում: Այդպիսին է, օրինակ, 17-րդ դարում ստեղծված «Նահապետի բառարանը», որի փոքր ծավալի մեջ անգամ հանդիպում են բազմաթիվ նոր բառեր և իմաստափոխություններ, ինչպես՝ *համփսոն, մարմաշել, մժեռ, վրիժել* և այլն: Քննության կարող են նաև հնատիպ գրքերի, գիտական գրականության (աստղագիտություն, մաթեմատիկա, իմաստասիրություն, կենսաբանություն, բժշկություն և այլն) թե՛ բառապաշարը, թե՛ լեզվական առանձնահատկություններն ընդհանրապես: Դրանցից յուրաքանչյուրը տարողունակ մի թեմա է, որին առանձին ուսումնասիրություններ կարող են նվիրվել:

Վերջում կցանկանայինք հավելել, որ ներկա բառարանը մի քանի է հայերենի վաղ աշխարհաբարի ամբողջական բառարան ստեղծելու նախապահին, այն օրինակով, ինչպես որ ստեղծվել են գրաբարի, միջին հայերենի, արդի հայերենի բառարանները: Բառերի ընդգրկումով, իմաստներով, փոխառություններով, հնչյունափոխությամբ և լեզվական այլ դրսևորումներով վաղ աշխարհաբարի բառարանը պատկանելի մի ամբողջություն կարող է կազմել ու ամբողջացնել հայերենի բառապաշարի ուսումնասիրումը: Իսկ դա էլ, իր հերթին, մի քանի կլինի հայերենի լիակատար բառարան ստեղծելու համար: Մեր համեստ կարծիքով փառավոր ավանդույթներ և արդյունք ունեցող հայ բառարանագրության նոր հանգրվանը կարող է լինել հայերենի լիակատար բառարանի կազմումը:



-Ա-

ԱԲՐԱՀԱՄԱԶՆ, գ. Աբրահամի սերունդից: Գրիգոր պարթեւաց, զարմն օրհնութեանց՝ Աբրահամազանց (ՌիՄՀԲ II, 22):

ԱԳՂՕԼ, գ. Ագլոր: ՀԲԲ ունի ագլոր նոյն նշ.: Զինչ թռչուն ուզես կայր ի նմա... սիրամարգք, ագլօլք, աղաւնիք (Սիմ. Լեհ., 153):

ԱԿԱՎԱԹ, գ. Արդարութիւն: Իւր երկիրն է խիստ աղալաթ, որ ոչ գող կայ և ոչ բող, և երկիրն բնաւ գերմայրուկ չկայ ոչ ի մտանեկն և ոչ ի յելանեկն (Յ. Թութունջ., 310):

ԱԿԻՆԱԿԻՏԱԿ, ա. Աղեմի՝ դրախտի նմանող: Յակոբ կաթողիկոս ամենայն հայոց և պատրիարգ... աղինաղիտակ և արեգակնապայծառ Մեծի Աթոռոյ Սրբոյն էջմիածնի (Դիւան ն. Զուղ., 51):

ԱԿԻՆԱՏԱՐԱԶ, ա. Աղեմի՝ դրախտի տարազ՝ տեւք ունեցող: Աղինատարազ արեգնապայծառ Մեծի Աթոռոյ Սրբոյն էջմիածնի (Դիւան ն. Զուղ., 51):

ԱԶԱՏԱԿԱՆԱԲԱՐ, ա. մկ. Ազատ կերպով, ազատ կամով: Ազատականութիւն է... ջանիւ հոգալ զպտուղս ստացուածոց իւրոց՝ առ ի յազատականաբար բաշխել այլոց (ՄՄ 1756, 10բ):

ԱԶԿԱՅԵՂՈՒԹԻՒՆ, գ. Ազգակցութիւն, արիւնակցութիւն: Գուցէ ոք տեղեակ իցէ ազգացեղութեան նոցա, որոյ ի լսելն՝ եկեալ յառաջագոյն ծանուցէ. եւ այսպէս յետ բազում քննութեանց՝ թէ ոչ գտցի ազ-

գացեղութիւն ի մէջ նոցա (Դաւրիժ., 272):

ԱԶՆՈՒԱԲԱՐՈՅՈՒԹԻՒՆ, գ. Ազնուութիւն, բարոյականութիւն: Նմանին պարկեշտաբարոյք լիսնկանաց, որք սակս ազնուաբարոյութեան և պարկեշտութեան իւրեանց, միանգամ միայն ճաշակեն յաւուրն (Նոր. ծաղ., 191):

ԱԶՈՆԱՄԲԲԱԿ, գ. (բւբ.) Ամբալի՝ արմաւեճու պտուղք, արմաւ: Ազոխամբբան, որ է ամբբալին գլուխն և ծաղիկն (ՄՄ 6275, 184ա):

ԱՌՈՒԱԿԻՐ, գ. ա. Նստավայր, արթունիստ, մայրաքաղաք: Թվին ՌԶԸ յունիս Բ հոգոյ Գալլստեան կիրակին դարձաւ եմուտ յաթոռադիր քաղաքն իւր՝ ի Ստամպոլ մեծաւ զօրօք (ՄԺ II, 270):

ԱՌՈՒԱՏԷՐ, գ. Աթոռակալ, փխբ. կաթողիկոս: Գրեցաւ գիրս... հաւանամբ երկուց երեւելի աթոռատիրաց... Յակոբայ և եղիազարու ըստ նարդենիս բարեսէր կաթողիկոսաց (Դիւ. Ս. Յակ., 1940, 153): Երկու աթոռք են պիտանացու ազգիս, և երկու աթոռատեարքն հարկին զմիմեանս գտանել (Դիւ. Ս. Յակ., 1940, 318):

ԱՌՈՒԻԿ, գ. Փոքրիկ արոտ: ԱՒ ունի աթոռակ նոյն նշ.: Ոչ իմն տեղի գտի հանգստեան կամ աթոռիկ մի նստելոյ (Կամենից, 151):

ԱՌՈՒՌ, գ. Աթոռ: Մինաս Փէրվազեան վարդապետ... առաջնորդ

Հաղբադու Սբ. Նշանին թագաւորաշէն աթուոյն և բոլոր Վրացտանու վերատեսուչ (եղով, 338):

ԱՌՐԱՑ, մկ. Չորս կողմը, բոլորաբախ: Թաւայ ասերն տիվանխանայ է, Յե միլիօն է, թող զմիջինն և զաթրաֆն (Շահմ. յիշ., 317):

ԱԺՆՈՒԹԻՒՆ, գ. էժանութիւն: Ն. Բիզ. *աժանութիւն* «թերևոսքիւն գնոյ»: Ընդէ՛ր այժմ ամենայն մոռացեալ... զսղութիւն և զաժնութիւն երկրին ոչ յուզեալ (Դիւ. Ս. Յակ., 1940, 318): է տարի է, որ թանկութիւն է, հիմի Աստուած երես անշափ, որ յառաջի *աժնութեան* խարարն կու գտանեմք (ՄԺ I, 223): Չմսին միւլպահոթիւն մի ասեմ, զինուն *աժնութիւնն* մի ասեմ (Չուար, 1867, 132): Ի Պուրսայ... *աժնութիւն*, լիութիւն եւ ամէն բարեաց առատութիւն էր (Սիմ. Լեհ., 312):

ԱՂՊՈՒ (հունգ. altal «շնորհիւ»), մկ. Միջնորդութեամբ (կոմսի՝ կրօֆիւն): Կու տեսնունք, որ այս բանս կրօֆին ալղօլ պէտք է որ վերջանայ» (Գովր., 155):

ԱԼԵՍՎԿՈՒԹԻՒՆ, գ. ա. Ծաղկած՝ ներմակած ալիքներով՝ մօրոմով: Աբ *ալէժաղիկ* «ալէխառն», ՀԲԲ *ալէժաղիկ*՝ «աե՛ս ալէգարդ»: Իսկապէս վերապատուեալ ձերունի հար հայոց կըրկնամեծար *ալէժաղիկութեամբ* (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):

ԱԼԿԱՐԿԱՍ, ա. Ալեկոժ, ալբախ: Բագմավիշտ տագնապաւ խոշտանկեցայ, յարտաբուստ և ի ներքուստ ար-

հալիրք և *ալէկարկառ* բախմամբ փորձովթեանց (Ոսկ. նամ. 1967, 134):

ԱԼԻՇ ՎԵՐԻՇ (թուրք. alişveriş), գ. Առետտու: Ամենայն *ալիշ վերիշ* աղով կանեն (Յ. Թուրունջ., 304): Բնաւ սքայ շունի, այլ աղով կանեն *ալիշ վերիշն* (Յ. Թուրունջ., 308):

ԱԽԱՐ-ԲԱԽԱՐ (արաբ.-պարսկ. āxer «վերջ» բառի կրկն.), գ. Աւարտ, ւարտ-մաւարտ, վերջմերջ: Մինչև կողմն էվատի հողի ափն, որ էն կուռն *ախար-բախարն* Գօգու գեղըցի եղիկին այ (Սանահն., 148):

ԱԽԱՐԵԹ (թուրք.), գ. Եկամուտ: Չամենայն մնացեալսն ըստ չափու բաշխեաց եկեղեցուն, զի յեկեալ *ախարեթներէն* վճարեսցեն (Դիւան ժ, 87):

ԱԽԻԼԷ (արաբ. akula), գ. (բժշկ.) Կերցաւ հիւանդութիւնը: Յորժամ յաւելնա զանդամն խոց առնէ, որ տաճիկն *ախիլէ* ասէ (Բունիաթ, 103):

ԱԽՈՐԺԱՀԱՅՔ, ա. Ախորժ՝ գեղեցկատեսuf: Կեղի փոքր զդեակ... է այժմ պարոնանիստ եւ կարի *ախորժահայք* (Յ. Կարն., 10):

ԱԽՈՐԺԱՓՈՐՉ, ա. Ախորժութեան փորձ ունեցող, ախորժաբեր: Միանգամ եւեթ մտադրաբար ծասքողաց զզանազան համս ճաշակաց ընձեռէ *ախորժափորձ* կոկորդին (Յ. Կոլոտ, 234):

ԱԽՈՐԺՈՒՀԻ, գ. *Ախորժուհի* - թագուհի (ՄՄ 2019, 180բ):

ԱԽՈՒՐՔ, ա. Խաւար: *Ախուրք* - խաւար, մառն, մոեղն, խաւարակուրք,

թուզմ, արջնաթոյր, խրթնի (ՄՄ 2281, 135ա):

ԱՆՊԻՆՔ (միջին հայ. աղբիւն «աղբուա, բերրի»), գ. Պարարացուած, բերրի հող: Արխի տեղի համար բազալն տվիր մեզ Փոխտանցէ գնուածու **ախպինքն** (Սանահն., 160):

ԱՆՏԱՋԵՐ, գ. Հիւանդութիւն, տապ: **Ախտաջեր-սեռական իմն անուն** դժնդակի հիւանդութեան, գոր լաթինացիք ֆէպոիս յարանուանեն, և է՛ անբարեխառն ինչ տապ (Վ. Յուն., 3):

ԱՄԷՆԱԱ, նբ. Լցնել (աձել>աձենալ): Յորժամ գինւոյ փարչն գայ / Մարդոյ սիրտն ուրախանայ / Մատըրվակն պատրաստ կայ / Կարմիր գինին **աձէնայ** (Ա. Երեմ., 36):

ԱԿԱՐ (պրսկ. agar), շ. Եթէ: **Ակար** այս ցաւս ի յանձին ի մէկ դին հասնի, սարա կանէ, **ակար** ի յամէն անձն հասնի, նա սքթա այնէ (Բունիաթ, 68):

ԱԿՆԱԱՐԱՏ, ա. Աչըր արատող՝ ապականող: Տէր Աստուած հաստատ եւ անտես պահեսցէ **յակնարատ** պշրանաց (Յ. Կոլոտ, 227):

ԱԿՆԱՐՈՒՆ, ա. Աղբիւրներ բխեցնող: Ունի եայլայ **ակնաբուխ** անասնոց եւ խաշանց վայելուչ վայրք (Յ. Կարն., 17): է այժմ պարոնանիստ եւ հացալից երկիր եւ կարի խոտաւէտ եւ **ակնաբուխ** սառն ջրոց յոյժ (Յ. Կարն., 19):

ԱԿՆԱՇՐՋԱԾԵԼ, շբ. Նայել, աչըր շորադին աձել: **Ակնաշրջածեմ** հոգունակաբար շուրջ աձելով զաչս, այսր և անդր հայիմ մտադրու-

թեամբ, լատ. չիոքումսփիցիո (Վ. Յուն., 4):

ԱԿՈՒՄԷՋ, գ. (բժշկ.) Ատամների մէջ, լինդէր: **Մարդ որ ախոամէջն քոր ունենա, դեղն այսպէս արա. առ կոմարի տերէն և աղվեստոսի աղ, ջրով պինտ եփէ** (Բունիաթ, 104):

ԱՀԱԿՈՒԳԱՅ, «Ահա կու գայ»՝ ահա գալիս է, ժող. ստուգ. ագուգայ «ջրանցք» բառի: Դրամ բազում եմ խարճեալ եւ ջուր բերեալ, որ այլեւայլ անուն ասեն. հայոց լեզուան՝ **ահակուգայ**, թուրքի լեզուան՝ քարեզ, իսկ պարսիցն՝ դանաթ (Կտակ Յակ. 328):

ԱՀԱՅՈՒՑԱՆՈՂԱԿԱՆ, ա. Վալիս պատմաառող, ահարկու: Զի՞նչ ևս կարծէք զմէնջ, որ այսքան **ահացուցանողական** սպառնալեալք մեծաբանեալ էք ի վերայ իմ (Գիւ. Ս. Յակ., 1940, 318):

ԱՀԵՂԱԿՈՆ, ա. Ահեղ՝ արագ վազող, սրարշաւ: Այժմ տկարանամ ի պատմել լսողացդ զսարսափելի սաստիցն՝ զտեսիլ՝ մանաւանդ գոռունն եւ ճայթումն... խխնջիւն եւ որոտմունք **ահեղակոխ** երիվարաց (Պատմ. հոթ., 58):

ԱՀԵՂ ԴԻԻԱՆ, կայուն բոկպ. Ահեղ դատաստան: Ի Քրիստոսի **ահեղ դիւանին** քո ստեղծողին ի՞նչ կու ասես / Գնա ի դուռն եկեղեցւոյն, որ զգրոց բան լսես (Գիւան ժ, 29):

ԱՂԱՆԵՐԱՄ, ա. Աղանիների նման երամ կապած: **եկեալ պատմեսցէ ձեզ... զաղաներամ** բազմալոյլովեանց եւ կամ զմերոյ ծերու-

նակ տկարութեանց (Ագուլ. կոնդ., 94):

ԱՂԲԱՒԻ, ա. Աղբով լի, աղառա: ՀԲԲ ունի աղբալից նոյն նշ.: Ափսոսացի զաղաշանս այնպիսոյ առն զարարեալս, վասն այնպիսոյ տան աղբալոյ, ժահահոտի եւ տղմամածի (Կամենից, 151):

ԱՂԲԱՐԱՆ, գ. Աղբաման, աղբանոց: Եւ էնկիչարոց փառաց կաթսան / Թահմազն արար իւր աղբարան (ՄՄ 1430, 100ա):

ԱՂԲԻՐԱՍԱՐԱՍ (հայ. աղբիւր և սարաս «տարագ, ձև, կերպ»), ա. Աղբիւրի նման, յորդ: Նախանձէին... մանաւանդ ընդ աղբիւրասարաս աստուածատուրն բեմբասացութիւն (Յ. Կոլոտ, 205):

ԱՂԵՂԱԲՈՅՆ,
ԱՂԵՂԱՆՅՖՈՅՆ, գ. Կապարն: ԱԲ աղեղնաբուն նոյն նշ.: Փառանգոր, կապարճք, աղեղաբոյն (ՄՄ 2019, 170ա): Աղեղանցբոյն - կապարճ, փառանգաւոր (ՄՄ 2281, 131ա):

ԱՂԵՐՍԱՆԱՌՆ, ա. Աղերսանով խառն՝ լի, պաղատածայն: Երգ աղերսախառն առ սուրբ Աստուածածինն (Գալ. Կենս., 160): Գովեստ աղերսախառն ի սուրբ Աստուածածնի տաճարն (Գալ. Կենս., 161):

ԱՂԷՏԱԿԻՅ, ա. Աղէտին հաղորդակից: Ի միջի գոլով աղէտակից եղէք, այժմ ևս ունկնդիր լինէք շարագործաց (Դիւան Ն. Ջուլ., 107):

ԱՂՐՈՒԹԻՒՆ, գ. Յաղթութիւն, յաղթանակ: Մեծ իշխանքն տեսեալ գլխատուծոյ եղեալ յաղթութիւնն՝

ասէին, թէ Մեր երգումն զմեզ բռնեց (Սիմ. Լեհ., 367):

ԱՂԻՒՍԱՐԱՐ, գ. Աղիս պատրաստող, աղիսագործ: Իսկոյն կազմեցին զուսուցիչս եւ զորմաղիրն եւ զաղիսարարն (Ջաք. Բ, 37):

ԱՂՈՒԹՔ, գ. Աղոթք: Ջձեռս ի վեր կալեր, Աղութք եմ արեր (ՌԻՄՉԲ, 101):

ԱՂՈՒՆԳՔ, գ. Վնաս, արհաւիրք: ԲՆ և ԱԲ աղունք «չարիք»: Աղէտք - աղունդք, տխրութիւնք (ՄՄ 2019, 167բ):

ԱՂՋԱԳՈՒՐԵԼ, նբ. Ողջագորուել, ողջոյն տալ: Մոլորեալ ազգն հրէից ամենեքեան ընդ առաջ ընթանային եւ աղջագուրէին, ի հեռուստ եւ ի մօտոյ զձեռս տարածեալ փրկութիւն անձանց խնդրէին (Դարիժ., 493):

ԱՂՋԵԼ, չբ. Փաղաքել - աղջել կամ անուշ գրուցել (ՄՄ 1127, 156ա):

ԱՂՏԱՂՏՈՒՆ, ա. Աղտաղտուն - չորային (ՄՄ 1528, 1ա):

ԱՂՏՈՏՐ, ա. Աղտոտ: Այլ յառաջ եւ լրւացուք՝ աղտոտը ջուրք պարսպէն հեղան (Քէօմ., 15):

ԱՂՕԹԱՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ, գ. Աղոթի նուիրում, աղօթասիրութիւն: Փէշա. աղօթանուէր «աղօթ ընող»: Սպասաւորեալ ամենայն կենօք և քաղաքավարութեամբ իւրով Աստուծոյ, մանաւանդ սրբոց տաճարաց, աղօթանուիրութեամբ և պատարագամատուցութեամբ (Ոսկ. նամ., 1967, 134):

ԱՂՕԹԱՌԻՐ, գ. Աղօթարար, աղօթ անող: Ն. Բիւզ. և ՄՉԲ ունեն աղօթաւոր նոյն նշ.: Խղճալի ազգն

մեր... աղօթաուրբ և բարեբանք լիցին յաղագս ինքնակալ կայսերն մեծի (Ղուկ. նամ., 126):

ԱՂՕՐԹ, ա. Ուղղորդ, ճիշտ: Ողջի խօրակն ես կուտամ. աղօրթ որ գոլ ես բաց (Եզով, 425):

ԱՃ, գ. Շահոյթ, յաւելում: Ով որ այս բանիս հակառակի... առած գինն իւր շահովն ու աճովն էջմիածնայ տայ, և կատարողը գրոյս արհնին Աստուծոյ (Սանահն., 143):

ԱՃԵՄԻՍՏԱՆՅԻ, գ. Իրանցի, պարսիկ: Աճեմիստանցի է այս Ենկիպէկ մահտեսիս (ԴՉՎ VII, 116):

ԱՄԱԳԱԳԻՆ,

ԱՄԱԿԱԳԻՆ (թուրք. cemek «աշխատանք»), գ. Աշխատանքի դիմաց վճարը, արժէքը, արժեզին: Յիգայտեղն... իր ջրովն տվինք Սարգիս պարոնտրին վերայ ծախէցինք, մեր ամակագինն (գրչ. ամագագին) հախ առանք (Սանահն., 140):

ԱՄԱԼԻՍ, գ. Գինի: Ամալիս, որ է խաղողի գինի (ՄՄ 6275, 185բ):

ԱՄԱՆ ՏԱԼ (թուրք. aman «ողորմութիւն, թողութիւն»), հրդ. Ողորմութիւն տալ, այստեղ՝ աման չէր ետ «or ու արև շտուեց»: Վասն սաստիկ ցրտութեան Գ ամիս գիշեր ցորեկ մէկ արմն աման չէր ետ մինչև ի մարտի ժե, ապա արև և արեգակ տեսաք (ՄԺ I, 210):

ԱՄԲԱՐՁԻ, գ. Զիւն պաշտպանող հանդերձանքի մաս: Ն. Բիւզ. ամբարձի «զարդ ձիոյ»: Զձին իւր զարդարեաց ոսկեզարդ սարօք... թէ՛ կշտապանակն, թէ՛ ամբարձին, թէ՛ սրտապանակն (Զաք. Ա, 22):

ԱՄՔՆԵՐԱՆ, ա. Ամենաեռանելի, փխբ. Աստուած: Լսելով ամենայն գրոց սրբոց և բարի ոք խրատից, մանաւանդ սուրբ աւետարանականէ, զոր հրամայէ ամքներանն բերանոյն (Հնատիպ, 14):

ԱՄԻԼՏԱՐ (թուրք. amil «վագֆը կառավարող, հարկահաւաք»), գ. Կառավարիչ: Համ փաշայ է, համ ամիրտար է, նազըր է, ով կու գուրուցէ, զինչ որ անէ՝ ձեռն է (ՄԺ I, 216):

ԱՄՍԱԶԱՓ, մկ. Մէկ ամսի չափ: Ամսաչափ միոյ աուրս երեք հարիւր եւ յիսուն այր դարձուցին յօրէնս Մահմետի (Դարբիժ., 363):

ԱՄՍՈՂՁԷՔ, գ. Ամսական վարձ, ամսավճար: Զրուցանել կու տայ քեզ, թէ՛ ամսողչէքն ուզեց (Պօղ. նամ., 90): Գնաս Տայուս ամսողչէքն առնուս (Պօղ. նամ., 90):

ԱՄՐԱԲԵՐԱՆ, ա. Քչախօս, փխբ. պարկեշտ: Ն. Բիւզ. ամրաբերան «զգուշախօս»: Ո՛չ [էր] որպէս միւս տաճիկս լիբբ եւ հայհոյիչ, այլ ամրաբերան եւ լաւ (Զաք. Բ, 56):

ԱՄՐԱԽԻՃ, ա. Ամուր խնով: Ամրախիճ կրօք շինեցին և գահրիզի առաջի ձորի բանտն (ամբարտակ) (Ակրո. 198):

ԱՄՐ ՂՐԿԵԼ, հրդ. Հրաման հղել: Արգրում ես ամր զրկեցին, բերթի միջի եկեղեցին մէշիդ արարին եւ ամենայն քրիստոնէից գլուխն սեաւ կտակ անցուցին (ՄԺ I, 242):

ԱՅԳԱՀՈՂ, գ. Ինքնահող: Ն. Բիւզ. այգահող «նոյնն է՝ այգալաց», ՀԲԲ այգահողը «այգողք, այգա-

լաց»։ Ի վաղուեան աւուրն, յորժամ գնասցեն քրիստոնեայք ի գերեզման սպանելոյն վասն այգահող կատարելոյ (Դաւրիժ., 411)։

ԱՅԳԱՏԵՂԻ,

ԱՅԳՈՅ ՏԵՂ, գ. Այգի, այգու տեղ՝ տարածք։ ՄՀԲ այգետեղ «այգի տնկած տեղ»։ Իմ յօժար կամօքն և իմ միաբանից ռազուլթեամբն Սուրբ Յովանիսի աղբիւրի տակի այգոյ տեղէն տվի մէկ ջաղացի տեղ (Կալված., 31)։ Երեք թուղթք՝ վասն ի հաթիպն եղեալ մի աւերակ այգատեղոյ (Կալված., 120)։

ԱՅԳԵՆԱԼ, չբ. Յագենալ (սխալագր.)։ ԱԲ և ՀԲԲ այգենալ «այգը բացուել, լուսանալ» (համանուն)։ Հոտով անուշ, գունովդ պայծառ, մարդ քո սիրովդ ոչ այգենար (ՌԻՄՀԲ, 282)։

ԱՅԼԱՅԻՆ, ա. գ. Ուրիշը, օտարը, անձանօքը։ Մի՛ հաւատար գրեզ այնմիկ, որ ոչ սիրէ գծնօղս և գիւրայինս, քանզի որ ոչ սիրէ գծնօղս և գիւրայինս, զիւրօք սիրիցէ գայլայինս (Նոր. ծաղ. 12)։ Տկար է այն, որ ոչ կարէ պահել զխորհուրդս թէ՛ զիւրս և թէ՛ գայլայինս (Նոր. ծաղ., 231)։

ԱՅԼԱՇԱԽԻՂ, ա. Այլ տեսակի, այլաբան։ Շնորհակալ լինիմ նմա, զի զայսպիսի այլաշաւիղ եւ այլատեսակ եւ այլանուն եւ անընտել բանս իւրովի եգիտ զամենայն ի սկզբանէ մինչեւ զկատարածն (Դաւրիժ., 315)։

ԱՅՍՏԻՑ, մկ. դ. Այստեղից։ Երկրպագութեամբ արզ լիցի, այստից յառաջ արզ էի արարեալ (Եզով, 256)։

ԱՅՍՐՈՍՏԵԼ, չբ. Յատկել, հետցատկել։ Այսրոստել - յետս ցաթկեմ (Վ. Յուն., 5)։

ԱՅՅԵԼ, չբ. Հայցել։ ՀԲԲ այցել «այցելել» (համանուն)։ Այցել - հայցել, զննել, գգրել, կրկտել (ՄՄ 2281, 125բ)։

ԱՆԱՂՕՏԱԳՈՅՆ, ա. Ոչ աղօտ գոյն ունեցող՝ լուսաւոր, պայծառ։ Արփիաճեմ շաւօք յերփնարփեան լուսոյն / Լուսաւորես զաշխարհս անաղօտագոյն (ՌԻՄՀԲ II, 141)։

ԱՆԱՅԼԵԼԻ, ա. Անսահման։ Անայլելի - անհաս, անսահման, անպարիմանալի (ՄՄ 2281, 126բ)։

ԱՆԱՅՏ, ա. Անյայտ։ Որպէս գարնան ծաղիկ երեւեցան եւ աշաց մարդկան անայտ եղան (ՄԺ I, 222)։

ԱՆԱՆՍԱՅԱԲԱՐ, ա. Անխնայաբար, անխիղճ կերպով։ ԱԲ անխայել «խղճալ, խնայել»։ Միանգամայն բարձին անանխայաբար զբնաւին յոյս զօրութեան ի քրիստոսադաւան ժողովրդոցն (Պատմ. Խոթ., 34)։

ԱՆԱՆՅԱԲԱՐ, ա. Անանց կերպով, անխախտ։ Ջերդմունսն հարցն մերոց... ոչ կամիմք շփոթել վասն կարեւոր իրաց անցաւորիս եւ պահեմք հաստատուն մինչեւ զայսօր անանցաբար (Պատմ. Խոթ., 40)։

ԱՆԱՏՈՂՅԻ, գ. Անատոլիայի բնակիչ։ Հանդերձեցին ամենայն զօրավարքն եւ զօրագլուխքն զբովան-

դակ հեծեալքն եւ զհետեւակազօրս՝ որպէս զՏաճիկս, նոյնպէս... զՊոսնացիս եւ զԱնատոլցիս (Պատմ. Խոթ., 62):

ԱՆԲԱՅԻԿ, ա. Առանց բացելու: Հասցէ թուղթն ի մայրաքաղաքն Հաշթարխան..., *անբացիկ* հասուցողն օրհնեսցի (եզով, 140):

ԱՆԲՂԻՏԱՆԱԼ, չբ. Յանկալ, տովալ: *Անբղիտանալ* - յիմարել ի տոփանս կամ պշնուլ (ՄՄ 1528, 1ա):

ԱՆԲՈՆԱԲԱՐՈՒԹԻՒՆ, գ. Ոչ ստիպողականութիւն: ԱԲ *անբոնաբար* «առանց բռնութեան»: Շինութիւն միաբանութեան է՝ խրատն բարի, կամք սանձահարեցեալք, *անբոնաբարութիւն* ի գործս (Նոր. ծաղ., 212):

ԱՆԳԻՏՆԱԿԱՆ, ա. Անտեղեակ: էառ զԴարկէժ եւ իւր սահման / եւ այլք բազումք *անգիտնական* (ՄՄ 1430, 99բ):

ԱՆԳՈՐԴԱՆՔ, գ. Կատար: Բէ ունի *անգուրդ* «կատարելութիւն»: *Անգորդանք* - կատարք, գագաթք, ուրորտք, *անգաւանք*, *գրաւնք* (ՄՄ 2281, 135ա):

ԱՆԴԱԳԻՐ, ա. մկ. Անդադար: Այտ ձեր քաշ գօվելի վէհագունին մեք *անդադիր* *ամենեքումք առ Աստուած կու հայցեմք* (եզով, 139): Մինչև հիմի *անդադիր* *առ Աստուած կու աղաղակէինք* (եզով, 154): Ապա Աշդարխանայ *անդադիր* *աղաղակաւ առ մեզ գրեալ են* (եզով, 371):

ԱՆԳԻՊԱՆՈՐՈՒԹԻՒՆ, գ. Անհարմարութիւն, անպատեհութիւն: Սակաւ զանազանութիւն *անցելոյ*

գիշերին պատահեցաւ յանդիպաւորութենէ ճանապարհին եւ ի վիրաց (Կամենից, 154):

ԱՆԳՂԵԼԻ, ա. Անշարժ: ԱԲ և ՀԲԲ *անդղղելի* նոյն նշ.: *Անդղելի-անշարժ* կամ *անբաժան* (ՄՄ 2019, 177բ):

ԱՆԴՐԱՆԿԱՄԱՀ, գ. Անդրանիկ ծնունդների՝ առաջնեկների մահը: *ՌձՀէ խիստ անդրանկամահ եղև յաշխարհի և մանաւանդ թէ ի քաղաքս Վան* (Դիւան ժ, 122):

ԱՆԴՐԱՓՈՒՆԵԼ, չբ. Անդր՝ այն աշխարհը փոխուել, վախճանուել: Յովհաննէս վարդապետն ի փետրրվարի ամսին *անդրափոխեցաւ աստի կենաց* (ձեմճ., 260): Յովհաննէս վարդապետն *անդրափոխեցաւ աստի կենաց* (Յ. Կոլոտ, 90):

ԱՆԵՋՆՐԱԲԱՐ, մկ. Անեգր՝ անսաման կերպով: *Ջոր նշանակէ յոլովութիւն անեգերաբար*, *գնոյն նշանակէ անուն երրորդութեան եգերաբար* (ՄՄ 1756, 58ա):

ԱՆԵՆԹԱԴԱՏ, ա. Դատական վարոյթիմ շենթարկուող, իմֆնակամ: Յայնմ վայրի դատաւորք *անենթադատք* բարդեալք ի վերայ իմ գզուուուշս հազարս (Կամենից, 148):

ԱՆԵՐԵԵԼ, ա. Անտեսանելի, փողարկուած: ԱԲ և ՀԲԲ *աներեւելի* «անտեսելոյք, աչփի շընկնող, մկ. անյայտ կերպով»: *Աներեւել* - խորախորհուրդ, քողախուզեալ, քողաբորբեալ, առագաստեալ, որչատուզեալ (ՄՄ 2281, էջ 136ա):

ԱՆՋՈՒՏ, ա. Ոչ մաքուր: ՀԲԲ *անգուտ* «ոչ զուտ, չզուված»: *Անգուտ*

- արատ, աղտեղի, փբիծ (ՄՄ 2281, 127բ):

ԱՆԸՆԳԱԿԻՅ, ա. Անընդակից - ուղիղ, համեմատ (ՄՄ 2281, 122բ):

ԱՆԸՆԹԵԼ, ա. Անընտել, անսովոր: Լուեալ գայտոսիկ *անընթել* զառաջարկութիւնս (Դաւան., 120):

ԱՆԻՄԱՍՏԻԿ, ա. Անիմատ: Պակասամիտ *անիմատիկս* / չոգիս այրի ի մէջ աղտիս (ՈՒՄՉԲ, 220):

ԱՆԼՈՒՐԱԾԵԼԻ, ա. Անլսելի, աներևակայելի: Հրամայեմք *ամենեցուն*, որպէսզի *անլուրածելի* իմն եղանակաւ պահեսցեն և պահեսցուցեն զվերոյիշեալ տուչութիւնս, ապահարկութիւնս (ՈՒՂՈՒՐ., 254):

ԱՆԽԻՁ, ա. Անխզելի՝ անխախտ: Ի լուսապաճոյճ եւ ի գերահռչակ Տալիթայէզ հովանասցի շնորհք, սէր եւ հանապազեայ խնամ *անխիզ* միացելոյդ (Թորոս աղբար, 401):

ԱՆՆՈՆԱՐՀԱՔԱՐՈՅ, ա. Անխոնարհաբարոյ - անհաճոյ (ՄՄ 2019, 178ա):

ԱՆԿԱԾԱՆԱԼ, չբ. Թշուառանալ: Բէ ունի *անկածան* «հարուածան», ՀԲԲ *անկածել* «անկած դառնալ, նուաստանալ, արհամարհուել», ՄՉԲ *անկածնիլ* «ուժից ընկնել, ակարանալ»: *Անկածանալ* - թըշուառանալ, տատապել, մարկանալ, խոհարանալ (ՄՄ 2281, 127բ):

ԱՆԿԱՂԷՏ, գ. Աղէտի ճիչ: *Անկաղէտ* - ճիչք, աւաղ, սրթաթաւուսն*, կամխիք, վկանդ (ՄՄ 2281, էջ 135ա):

ԱՆԿԱՆՈՒՐԳ, գ. Աւարտ: ՀԲԲ *անկանուրդ*, *անկարուրդ* «կոշկի երե-

սը կամ կոշկի տակը»: *Անկանուրդ* - անկուսն, աւարտ, դարուսն, անդոյր, յարեկ (ՄՄ 2281, 124բ):

ԱՆԿԱՐԵԼՈՉ, գ. Լաբիրիթոս, բափղ: *Անկարելոչ*-տեղի ինչ, շրջափակեցեալ պատուարաւ և լարաբաժանեցեալ ի ներքս յորձապատիւ ճանապարհօք և համանմանիք. ի յունաց և լաթինացոց լապիրիթլոս վերաձայնի (Վ. Յուն., 6):

ԱՆԿԱՐԵԼՈՒԹԻՒՆ, գ. Անհնարինութիւն, անելանելիութիւն: ՀԲԲ ունի *անկարելիութիւն* «անկարելի՝ անհնարին լինելը»: *Չմտաւ ածի զանկարելութիւն հատուցման* (Կամենից, 148):

ԱՆԿԻՆԱՅԵԱԼ, ա. Անկիւնացած, միացած: Երևի բարձրադիտակ կամար մի *անկինացեալ* ի մէջ որմոյ և փայտեայ ճաղիւ փակեցեալ (Պատմ. երուս., 1932, 13):

ԱՆԿԻՆԻ (գրբ. անկանիլ), չբ. Ընկնել, յնուել: *Ոմանք կանգնեն նման փայտի, ծուր չի դնեն յեկեղեցի / Անկինի ի վերայ գաւազանի, զթիկունքն տան ընդդէմ պատի* (Իրան ժ, 65):

ԱՆԿՈՆԱՏ, ա. Աննահանջ, չղիջող: *Անկոխատ* - որ ո՛չ ստորադրէ գինքն այլում կամ խոնարհեցուցանէ, և կամ՝ որ ո՛չ տայ կոխատիլ ինքեան (Վ. Յուն., 7):

ԱՆԿՈՂՆԱՏԵՂԻ, գ. Անկողին, տեղի ֆնելու: Ելցեն քահանայք ի տանց եւ դադարեցցեն ի *յանկողնատեղիս* (Ճեմճ., 268):

ԱՆԿՈՒԱԾԻԼ, չբ. Ծոպանալ: ԱԲ և ՀԲԲ *անկուած* «անկուսն, ընկնե-

լը»: *Անկուածիլ* - ծուլանալ, յանգել, ջերանիլ, խոհարանալ (ՄՄ 2281, էջ 135բ):

ԱՆԿԻՃԻՄ, ա. Անանջատ, փխբ. հարազատ: ԱԲ *կրճիմ(ն)* «աարբերուփիւն, դժարուփիւն»: Յորմէ ժամանեալ հասցէ ողջոյն և սէր... ընդ ձեզ և մեր հարազատագոյն և *անկրճիմ սիրելեացն և բարեկամացն* (Դիւ. Ս. Յակ., 1933, 284):

ԱՆՀԱՃԵՂՈՒԹԻՒՆ, գ. Անհաճոյ լինելը, անդուրեկանութիւն: *Չոմանս* ի նոցանէ վասն ձերութեան, եւ զոմանս վասն *անհաճելութեան*, եւ զոմանս յայլ ինչ պատճառէ հանեալ ի տանէ թագաւորին ի բաց արձակէին (Դարիժ., 349):

ԱՆՀԱՆՃԱՐՈՂՈՒԹԻՒՆ, գ. Անմտութիւն: ԱԲ *անհանճարութիւն* «անխելքութիւն»: Շուտափութութիւն կամ *անխորհրդականութիւն* է պակասութիւն խորհրդոյ եւ է տեսակ *անհանճարողութեան* (ՄՄ 1756, 131բ):

ԱՆՀԱՏՈՂՈՒԹԻՒՆ, գ. Անսահմանութիւն: *Անհատողութեան սկիզբն* ի նիւթական իրս է կրկին, այսինքն՝ նիւթ առաջին եւ քանակութիւն շափակական (ՄՄ 1756, 14բ): *Սկիզբն անհատողութեան* է՝ նիւթն (ՄՄ 1756, 15ա):

ԱՆՀԵՏԻ ԼԻՆԵԼ, հռք. Անյայտանալ: Յնորեալ ի խելաց՝ *անկաւ* ի գեան եւ *անհետի եղեալ* բնական գիւահար գոլով (ՄԺ II, 315):

ԱՆՁԱԵՈՐԳ,

ԱՆՁԱԵՈՐԳԱԿԱՆ, ա. Ձախորդութիւնից զերծ: Պահել... ընդ երկար

ամօք եւ *անձախորդ բարօրութեամբ* (Յ. Կոլոտ, 311): *Ըստ մարմնոյ զանձախորդական բարօրութիւն* (Յ. Կոլոտ, 316):

ԱՆՁԵՈՆԵԼԻ, ա. Անշօշափելի, անտեսանելի: Առիթ *ազատութեան ըստ ողբերգող արթնածային սրբոյ* ի շաւիղս կրկնաշուս *առձեռնելի* և արդար և վաստակախոնջ (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):

ԱՆՁՆԱՉԱՏՈՒԹԻՒՆ, գ. Ազատութիւն, անհոգութիւն: *Չունէի այլ իմն հոգ և կոծ և կայի անձնազատութեամբ* (Դիւ. Ս. Յակ., 1940, 317):

ԱՆՁՆԱՄԻՆ, ա. Անձամբ ծնած: Փոխանակ իմ առաքեցի զորդեակն իմ և զծառայ քո... *զանձկալին իմ և զխնդրելին քո, զանձնածինն իմ և զհոգեծինն քո* (Դիւ. Ս. Յակ., 1932, 279):

ԱՆՁՆԱՅԼԱԿ, գ. Դիմակ, դիմափոխակ: ՀԲԲ *անձնայլակ* «ա. դիմակաւորուած, ծպտուած»: *Անձնայլակ* - ազանելի ինչ այլանդակ եւ անսովոր, որով փոխակերպեն զղէմս (Վ. Յուն., 8):

ԱՆՁՆԱՏՐՈՒԹԻՒՆ, գ. Անձնատու լինելը՝ հանձնուելը: Փէշտ. անձնատուութիւն նոյն նշ.: *Անու զամուրն Արտագեր անձնատրութեամբ անհամբեր բնակչաց* (Ստ. Խօշքայ, 48):

ԱՆՁՆԵԼ, նբ. Յանձնել: Առաջին գիրն և այս ինչ որ *անձներ եմք Մինաս վարդապետին* (Եզով, 156):

ԱՆՄԱՐՏԱՍՏԱՆ, ա. Անմարտատան - ընդարձակ, բարձրաբերձ (ՄՄ 2019, 178ա):

ԱՆՄԵՂԱՍԻՐՏ, ա. Ամմեղ սիրա ունեցող, ամմեղակից: *Ողջամիտ և պարկեշտաբարոյ երիտասարդաց, կաթնասուն և անմեղասիրտ տղայոց (Դիւան Ն. Ջուղ., 68):*

ԱՆՄՈՌ ՌԻՆԵԼ, ա. Ամմոռաց պահել: Պարտական կացուցանեմք զմեզ... *անմոռ ունելով ի միտս մեր քաղցր յիշատակ բարերարութեան զձերոյ (Ղուկ. նամ., 127):*

ԱՆՄՈՒՂԻ (ան+մուհր «կնիք»), ա. Անկնիք, տե՛ս ՄՈՒՂԻ: *Եւ ոմանք անմուհրք գոլով բանիւք և խորհրդով՝ ընդ այսց ուխադրութեանս միաբանեցաք (Դիւան Ն. Ջուղ., 81):*

ԱՆՅԱՆԿՈՐԻՈՒԹԻՒՆ, գ. Անհանգըստութիւն: ԱՖ ունի *անանդորր «անհանգիստ»*: *Անյանդորրութիւն մարդկան ի յըստացմունս ըղձալեաց նշանակէ զլինելութիւն գերազանցագունելի երջանկութեան (Նոր. ծաղ., 234):*

ԱՆՇՆԱՋԱԻՐ, ա. Անշնորհակալ, անշնորհի: ԱՖ *անշնորհաւոր «անշնորհի»*: *Ջենիշարադասին նոյնպէս ընկենու ի փառացն, պատճառս տալով նոցա, թէ դուք անշնահաւոր եւ անբաղդ ոմանք էք (Պատմ. Խոթ., 62):*

ԱՆՈՏՆՈՒՆԵԼԻ, ա. Հաստատուն, անսայթափ: *Անոտնունելի կենաւք խնամարկէին նոսին զմեզ (Սանահն., 48):*

ԱՆՈՐՈՆ, ա. Չորոնոսած՝ անյայտ: ԲՀ *անորոնելի «անշոշափելի»*: *Անորոն - անյայտ (ՄՄ 1127, 135բ):*

ԱՆՈՒՄՆ, գ. Անուն: Այս խաբարս նոր լսեցինք, որ մեր մուվադին մեր

մին էրէց ա՛ննումն Աւաք Մարգարիշ (Գալ. Կենս., 232):

ԱՆՈՒՆ ԿՏՐԵԼ, հրդ. Անուամարկել: *Նորագոյն շար ոմն... Յոհան վարդապետ, սա եղև պատճառ քո անուն կտրելոյ (Դիւան Ս. Յակոբայ, 1940, 282):*

ԱՆՈՒՐԱՉԵՆՈՒԹԻՒՆ, գ. Օղի ձև ունենալը, օղակուելը, փխբ. գալարուել, անուրանետութիւն անձանց՝ «վշտից օղակուելը» (ըստ Վարազ Ատաբէլեանի): *Անդ էր տեսանել զանուրածեութիւն անձանց, զբեկումն միջաց եւ զթափումն մտաց (Դարիթ., 426):*

ԱՆՈՒՐԲ, մկ. Անուր՝ որևէ տեղ շունեցող, անսահման (բոխղ. աներբ-անուրբ): *Կամօք եւ հաճութեամբ եւ ողորմութեամբ անեղին եւ անմահին Աստուծոյ, անուրբ եւ աներբ, անորակ, անքանակ (Գալ. Կենս., 258):*

ԱՆՉՏԻՆ, ա. Խաւար, մթամած, հմմտ. խաւարչոյն: *Յերբ բանայ զաչն առ ի առնել, տեսանէ խաւար, որ ոչ կարէ անշոին աշխատիլ, հարկի դարձեալ յակամայ ննջել (Ն. Մուշ., 244):*

ԱՆՊԱՏ, ա. Անպատ - անշէն (ՄՄ 1127, 135ա):

ԱՆՊԱՐ, Ամբար, շտեմարան: ԱՖ և ՀԲԲ *անպար «պարելու անվարժ»* (համանուն): *Այլ ի վայր անպարն գարուոյ, որ է մինն նստեալ արքունեան (Քէօմ., 26, 28):*

ԱՆՍՊԱՌԱՆԱՆԱՂԱՅ, ա. Անսպառ, անդադար խաղացող: *Գթութիւն գոյակցի ամենասուրբ Հոգւոյն անսպառախաղաց մշտահոս ծաւա-*

լեսցի ի վերայ քո (Դիւ. Ս. Յակ., 1941, 157):

ԱՆՎԵՐԱՆԱՎԻ, ա. Չվերացոտդ: Խաւար թանձրամած պատեաց զիս առաւել քան զեգիպտականին, զի նոցայն վերացաւ և իմս *անվերանայի* (Ներք. Սրապ., 20):

ԱՆՏԱՆԻՔ, գ. Ընտանիք: Թէ մեր ազգ ու *անտանիք* դաւի անի կամ գրաւ քարշի (Ձեռ. յիշ. ժէ, 364):

ԱՆՏԱՐԲ, ա. Աղբատ, նուաստ: ԱՖ և ՀԲԲ *անտարր* «տարբ չունեցող, տարբերից չբաղկացած, աննիւթակամ» (իմաստափոխ.): *Անտարր* - չբաւոր, փինատ, անբաւոր, չուար, արուակ (ՄՄ 2281, 125բ):

ԱՆՏԻՐԱԿ, գ. (բար.) Ծառի մի տեսակ: *Անտիրակ*, որ է զօջայ եմիշի, կարմիր ծառ է և կարմիր պտուղ ունի (ՄՄ 6275, 186բ):

ԱՆՅԱՆՈՒԵԼ, չբ. Անցնել, անցկացնել: Քուռ գետն լօթկօվ *կանցանուի*, լօթկէն զզլպաշի և զարապօրկի ձեռին է (եզով, 422):

ԱՆՅՈՒՐԳ, գ. Անցարան, նաև խաչմերուկ: *Կամուրջն...* կարի հարկաւոր էր. քանզի բազում գաւառաց եւ բազում ճանապարհաց *անցուրդ* է (Դաւրիժ., 285):

ԱՆՓԱԹԵՐԱԿ,

ԱՆՓԱԹԵՐՆԱԿ (հայ. ան+պարսկ. patyarak «փորձանք, չարիք»), ա. Անվտանգ: *Երգեա՛վստահ, անփաթերակ* (գրչ. *անփաթերնակ*) / եւ զգծողս յիշեա՛յրակ (ՈՒՄՀԲ, 35):

ԱՆՓՈՓՈՆԱԿՈՐԾ, ա. Անկործանելի՝ անփոփոխ: Արդարութիւն է՝ ու-

նակութիւն, ըստ որում որ հաստատուն եւ *անփոփոխակործ* կամօք իւրաքանչիւր ումեք զիւրն բաշխէ (ՄՄ 1756, 27ա):

ԱՇԽԱՏԱՅՈՅՐ, ա. Դժուարին, աշխատատար: ՀԱԲ յոյր «հաստ, թանձր»: *Աշխատայոյր-լի աշխատութեամբ և դժուարութեամբ* (Վ. Յուն., 9):

ԱՇՃՈՒԹԻՒՆ (թուրք. *asci* «խոհարար»), գ. Խոհարարութիւն: Գ տարի Սբ. Ծնունդն *աշճութիւն* է արեր, ֆըլայններու տէրտն և նեղութիւն է կրեր (Աղան. Միաբանք, 293):

ԱՇՆԱՆՄՈՒՏ, գ. Աշնանամուտ, աշնան սկիզբ: ՄՀԲ *աշնանամուտ* նոյն նշ.: *Ռձժժ* գիսաւոր աստղ մի երեւեցաւ յերկինս *աշնանմտէն* մինչեւ ի գատիկն (Մժ I, 243):

ԱՇՈՐՆԵՅԻ, գ. Կափ մի տեսակ: *Աշորնեցի*, որ է կարմիր կաւ, որ է ատորնեցի կարմիր կաւ (ՄՄ 6275, 187ա):

ԱՉԻՉ (ՌԺ), գ. Աչի ուժ՝ տեսողութիւն: *Կաշին նօսր լինի, աչիչ ուժն* պակաս լինի, գաչքն թէզ թէզ թարթէ (Բունիաթ, 66): *Ջերեսաց ջեղն գաչիչն* և զպոկներուն և ըզճակտին ջըղերն կու քաշի և կու ծռէ (Բունիաթ, 72):

ԱԶԿ, գ. Կամար, հարտարապետական թոխիք, մին աչկէ՝ «միակամար, մի թոխիքանի»: *Աստի մինչի ջվլիգի մին աչկէ կարմունջն՝ աղաջ Բ* (Չ. Ագուլ., 10): *Աստի գնայ Դուշաղի տակի մին աչկէ կարմունջն՝ աղաջ Գ* (Չ. Ագուլ., 10): *Տուխուրդանու մինչի կշտի մեծ գետն, Ե աչ-*

կէ կարմունջն՝ կէս աղաջ (Ձ. Ա-
գուլ., 25):

ԱԶԲԱՆԱԲ, ա. Աչբը խաբոդ՝ խա-
բուսիկ: Ձայն դիւահարաց բանն
եւ այլ ինչ աչքախաբ գործք, զոր
ինքեանք տեսեալ էին ի մոլորեցու-
ցիչ Սապէթայէն (Դարիժ., 491):

ԱԶՔԷ ԶԳԵԼ, հրդ. Անտեսել, անու-
շադրութեան մատնել: *հնդրեմ ա-
ղաշանօք վեհանձնութենէդ, որ մեզ
աչքէ ձգես ոչ (Գալ. Կենս., 231):*

ԱՊԱԶՆԻ, ա. Ոչ ազնուական, ա-
նագնիւ: *Ապազնի-որ ոչ է սերե-
ցեալ յազնուականէ տոհմէ, կամ
ուամիկ. նոյնպէս և արարք անպա-
տեհք կոչին ապազնիք (Վ. Յուն.,
9):*

ԱՊԱՀԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. Հարկից
զերծ՝ ազատ լինելը: Աբ ապա-
հարկ «ազատ, ազատութիւն ի
հարկաց», ՀԲԲ ապահարկել
«հարկերից ազատել»: Վայելեն ի
բազում ապահարկութիւնս (Իրան
Մխիթ., 14): Տամք և շնորհեմք
զշնորհաբաշխութիւնս և զարտօ-
նութիւնս, զառանձնաշնորհմունս,
զազատութիւնս և զապահարկու-
թիւնս (Ուղուր., 254): Պահեսցեն և
պահեսցուցեն զվերոյիշեալ տուու-
թիւնս, ապահարկութիւնս (Ուղուր.,
254):

ԱՊԱՐԺԱՆՈՒԹԻՒՆ, գ. Անարժան
լինելը: *Առաքելով նովա ընծայ առ
ապարժանութիւնս մեր (Յիշ. Ուն.,
291):*

ԱՊԱՌՈՑԵԼ, նբ. Ինչ-որ բանից
հրաժարել: *Ապառոցեմ - ի բաց թո-
ղում և հրաժարիմ յիրէ յայնմանէ,*

*զոր ունեցեալն էի նախկնաբար,
լատ. ունուցիօ (Վ. Յուն., 9):*

ԱՊԻԿԵՂԷՆ, գ. Ապակի, ապակեայ
անօթներ: Ն. Բիւզ. ունի ապիկի
«ապակի»: *Մնայ ասել բրդեղէնս,
ապիկեղէնս, երկաթեղէնս և այլն
յամենայն ի մէջ եկեղեցոյս և ար-
տաքինս (Սանահն., 115):*

ԱՊԿՆԵԼ (հայ. ապականել բառից),
նբ. Տանջել: *Տանջել, ջնել (գաւա-
զանով հարուածել), ապկնել (ՄՄ
2019, 166բ):*

ԱՊՈՒՇ ՄՆԱԼ, հրդ. Ապշել: Պերճ
բանիւ եւ խրոխտ ձայնիւ համար-
ձակ ընթեռնուին, առ որ հիացեալ
զարմացեալ ապուշ մնային ամե-
նայն ժողովք հանդիսին (Դարիժ.,
490): *Ամենեքեան սոսկացեալք
զարմացեալք ապուշ մնային (Դա-
րիժ., 410): Նորա տեսեալ զարմա-
ցաւ և ապուշ մնաց (Տէֆթ., 319): Ի
տեսանելն մարդ հիանայ եւ ապուշ
մնայ (Յ. Կարն., 42):*

ԱՊՕՐԻՆԱՒՈՐԱՊԷՍ, ա. Ապօրինի
կերպով: *Արգելին զնոսա ի քահա-
նայազործութենէն առ ժամանակ
մի իբրեւ ապօրինաւորապէս ձեռ-
նադրեալս (Գալ. Կենս., 244):*

ԱԶԱՄՊՈՒՐ, գ. Աջհամբոյր: Ռեմի
Ն. Բիւզ. առանց մեկն.: *Գնացեալ
տուաք զմոմն և զաջամպուրն
(Ձուար, 1867, 135):*

ԱԶՈՐԳ, մկ. Յաջորդ: *Զիս՝ Յակոբս
Յիսուսի ընթրեաց վերայնամող
կարգիս միաբանողաց և աջորդ ժո-
ղովրդեանն (ՄԺ I, 196): Որ ես ա-
ջորդ մածին Մօսկովի թագաւորին
(եզով, 166):*

ԱՌԱԳՐԵԼ, նր. Ասել, վերագրել: ԲՀ առագրել «ինննագրել»: *Առագրել - ասել, պատմել, վարկանել, բացառոցել, բացիրել (ՄՄ 2281, էջ 136ա):*

ԱՌԱՆԳԻ, գ. Անատոյգ բառ: *Եղեալ մարմին Յովհաննէսի / Հովիւ, հայր եւ առանդի (Գալ. Կենս., 39):*

ԱՌԱՋԱՍԱՅԵԱԼ, ա. Առաջ՝ նախկինում ասուած, վերոնշեալ: *Յիշեսցիք... զառաջասացեալն զՏէր Անդրէաս հայրն մեր (Աղան. Միաբանք, 252):*

ԱՌԱՋՄԱՆԷ,

ԱՌԱՋՄԷ, մկ. Նախկինում, ի սկզբանէ: *Առաջմանէ հոչակաւոր վանք լեալ է քաղաքիս (Յ. Կարն., 36): Առաջմանէ շարածըճիկ ազգն Հոռոմոց բազում նեղութիւնս հասուցին ազգիս Հայոց (Յ. Կարն., 52): Տես զհրաշքն, որ առաջմանէ շատ թէքլիֆ ըրին, չէր կամեցեր (Աղան. Միաբանք, 312): Առաջմէ Զ-է օրաւար հող ծախսած կար, այսոնք այլ նոր ծախեցինք (Մանահն., 156):*

ԱՌԱՋՆԱԳԷՄ, մկ. Նախապէս, սկզբում: *Ձոր ցուցի յառաջնադէմն՝ առ ընթեր կայ Այեա Սօֆեան (Քէօմ., 29):*

ԱՌԱՋ ՏԱԼ, հոդ. Առաջարկել, խնդիր ներկայացնել: *Դարձեալ առաջ տվին վերոյգրեալ Աղաչայ տէրուպագուշներն (Գովր., 155):*

ԱՌԱՏԱՍՄԱԻԱԼ, ա. Առատապէս ծաւալուող, առատածեռն: *Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ... և առատածաւալ*

պարգեատուէ (Սանահն., 41): Ի Հոգւոյն Սրբոյ կենարարէ և առատածաւալ պարգեատուէ (Դիւան Ն. Ջուղ., 56):

ԱՌԱՔԵԼԱԿԵՐՏ, ա. Առաքեալի կերտած՝ հիմնած: *Կամեցայ եւ եկի ի Գաղատիայ յառաքելակերտ վանս այս (Յիշ. Ուլն., 286):*

ԱՌԱՔԵԼԱԿՏԱԿ, ա. Ինչպէս առաքելական կտակ: *Համարձակաձայն վստահ եմք առ այդ... առաքելակտակ կանոն և տեսառնահաստատ հրաման (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):*

ԱՌԱՔԻՆԱՓՈՅԼ, ա. Առաքինութեամբ փայլող: *Տեսուն Յովհաննէսի առաքինափայլի վարդապետի (Ազուլ. կոնդ., 93):*

ԱՌԵՂԻՅԻ, նր. Կինի, կատարովի: *Ողորմութիւն նորին էակից Բանին... մշտազուարճ առեղիցի (Կամենից, 257):*

ԱՌՁԵՌՆԱԿԱՆ, ա. Առձեռն՝ ձեռքի տակ: *Եթէ ոչ ունիք ճար առձեռնական, ընդէ՛ր լինիք բժիշկ մեղանչական (Դիւ. Ս. Յակ., 1940, 318):*

ԱՌՆԱՆԻԼ, նր. Անուանել, վերագրել: *Ն. Բիւզ. առնանիմ «առեալ լինիմ»: Առնանիմ - փոխաբերութեամբ առնանի վասն ազնուագունեղի, հոչակաւորի և համբաւածաւալի (Վ. Յուն., 70):*

ԱՌՆԵԼԱՅՈՒ,

ԱՌՆԵԼՅՈՒ, գ. Առնելիք, ակնկալիք շահոյք: *Ամայ առնելացու շատ ունէր թէ Ըսպհան, թէ Երեւան, թէ Արուսիս (Զ. Ազուլ., 163): Այր ոք որ պատրաստ ունեցաւ ի տան այնքան հազար ոսկի, ապայ որքան*

պարտ էր նմա ունիլ առ դուրս առնեցուք և կամ ի վերայ ընկերացն (Ե. Մուշ., 31):

ԱՌՆԼԻՔՔՔՔ, հրդ. Պարտք ու պահանջ, ակնկալիք: ՀՖԲ առնելիք-տալիք նոյն նշ.: Ազարն ընդ Սեղբոսի ամիրային զատ իլախայ (մասնակցութիւն) եղեալ է, առնլիք տալիք ո՛չ ունի (Երուս. դիւ.):

ԱՌՈՏԻՆՔՔ, գ. Ոտքի տակ եղած(ներ)ը, մտաւկայ բաները: Որք զառոտինան անգիտանան, ոչ է յարմար բերանաբաց լինիլ (Յ. Կոլոտ, 241):

ԱՌՈՒԱՐԵԱՆ ՄԵՐՉԱՒՈՐ, հրդ. Արիւնակից, մերձատր: Աստուած ողորմի ասացէք մահդասի խօճայ Սահակին... և այլ ամենայն առուարեան մերձատրացն (Ակոռ., 198):

ԱՌՈՒԿԱՊ ԼԻՆԵԼ, հրդ. Առտուրը կանգնել՝ կապուել (բոխը. առուծախ-առուկապ): Վաճառականքն առուկապ եղեալ են եւ ոչ կարեն գնալ ուրեք (Դիւան Մխիթ., 80):

ԱՌՈՒՆԻԼ, նբ. Չգտել, հասնել ցանկալիին: Առնունիլ - հասանեմ ցանկացելոյ իրին, զոր կամէի, արդ ընկալեմ զնոյն, լատ. Քոնսէգուօս (Վ. Յուն., 10):

ԱՍՍՆԻԼ, նբ. Թում է՝ հասնել, կամ՝ ասուել, պատմուել: Չի՛նչ է այս կրկնակի շարաբօթ լուր, որ ասանի ի Սուրբ Աթոռս և յականջս ամենեցուն (Դիւան Ն. Ջուղ., 107):

ԱՍՐՆՈՅ, գ. Մրանց (ժան. հրատ.): Ես՝ Թաւթանս միաբանեցա Սուրբ Կարապետիս եւ գնեցի ի Վա-

ղաղնոյ զասընոցին Ը՛ բաժնէ զմինն (Դիւան հայ վիմ. II, 104):

ԱՍԻ (թուրք. asi), գ. Ապստամբ, խռովարար, ըմբոստ: Պօղտան կոխեց անցաւ գնաց եւ նոքայ միամըտեցան, թէ մեք ասի չեմք, մեք Օսմանլի ծառայ եմք (ՄԺ I, 225):

ԱՍՊԱՊԵՂԷՆ (թուրք. espap), գ. Հագուստ, շորեղէն: ՄՀԲ ասպապ «զգետս»: Բարեպաշտն Միրաբ ելեալ զա Արզրում եւ առնու ապըրը մեղէնս եւ ասպապեղէն եւ ցորեանս, զի տարցէ ի տուն (ՄԺ I, 247):

ԱՍՏԵՂԱՇՐՉԱԳԱՅՈՒԹԻՒՆ, գ. Աստղագիտութիւն, աստղաբաշխութիւն: Ոմանք իմաստասիրական բանից հետեւեցան, բազումք քերա կանութեան եւ աստեղաշրջագայութեանցն ծանօթացան (Պատմ. Խոթ., 32):

ԱՍՏԵՒԱՆԿ, մկ. Այս ու այն կողմ: Անկայ ի գետնի՝ ծաւալեալ աստեւանդ իբրու զխելաթափ (Դիւան Մխիթ., 63):

ԱՍՏՈՒԱԾՈՒԲԱՆԱՊԵՏ, գ. Աստուածարանութեան պետ, ուսուցչապետ: Երեքերանեան աստուածաբանապետն եկեղեցւոյն Դիոնէսիոս (Յ. Կոլոտ, 240): Եղեալ է նորին աստուածաբանապետ եւ գլուխ այնորիկ քաղաքին ազգատէմիւ (Դիւան Մխիթ., 21):

ԱՍՏՈՒԱԾԱԷՋ,

ԱՍՏՈՒԱԾԱՅԷՋ, ա. Աստծու իջած, էջմիածնիմ առտող մակդիր: Հաստատեցաք հրամանաւ և բարձր իշխանութեամբ Ս. Աթոռոյս էջմիած-

նի և աստուածաէջ Ս. Կաթողիկէի (Սանահն., 99): Տէր Նահապետ կաթողիկոս ամենայն Հայոց և պատրիարք Վաղարշապատու լուսապայծառ և աստուածայէջ Սրբոյ Աթոռոյս էջմիածնի (Դիւան ն. Զուղ. 112): Ի գահն շողազարդ եւ աստուածաէջ աթոռոյս էջմիածնի (Գալ. Կենս., 196): Աստուածաէջ եւ շնորհատու Աթոռս (Յ. Կոլոտ, 122):

ԱՍՏՈՒԱԾԱՎՐԱԿԱՆ, ա. Աստուածային, աստուածական: ՄՀԲ աստուածալուր «Աստուծոց լուր պարունակող, աստուածային»: Օն առեալ գշնորհն և զգեղմունս աստուածալրական պարգևեացն ի վերոյ գրեկոցն ընձեռնութեանց յաստուածահոտն սրբութեանց (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):

ԱՍՏՈՒԱԾԱԿԱՅՈՅՅ, ա. Աստուծու կանգնեցրած, աստուածահանոյ: ՀԳԲ աստուածակեցոյց «աստուածային»: [Թուղթ] աստուածակացոյց տանդ և իմաստնապերճ կառավարչիդ և խնամատարիդ հասարակաց, յԱստուծոյ հօրէ ընտրեցելոյ (Ղուկ. նամ., 117): Սիրով ընկալաւ զմեզ ի գալն մեր յաստուածակացոյց քաղաքս Բիւզանդիոյ (Աղան. Միաբանք, 441):

ԱՍՏՈՒԱԾԱՀՈՏ, ա. Աստուծու բուրմունքն ունեցող: Օն առեալ գշնորհն և զգեղմունս աստուածալրական պարգևեացն ի վերոյ գրեկոցն ընձեռնութեանց յաստուածահոտն սրբութեանց (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒԳ, ա. Աստուծու շրջած, փխբ. Երուսաղէմ: Մտեալ

այսուհետեւ ի յաստուածաշուրջ քաղաքն և պատմեսցուք համառօտակի զտեղեացն այնոցիկ (Պատմ. Երուս., 1931, 237):

ԱՍՏՈՒԱԾԱՊԱՐ, ա. Աստուծով պարուրուած՝ շրջապատուած: Պետր վէթիլ իփրատօր ծովու և ցամաքի աստուածապար իշխեսցողի (Եզով, 418):

ԱՍՏՈՒԱԾՈՅԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Աստուածաբանութիւն: Աշղարխանայ այսպէս գրեալ են մեզ, թէ Մինաս աստուծոյբանութեան վարդապետ (Եզով, 370):

ԱՍՐԱԿԱՆ (բմառ.), ա. Այս, այստեղի: Յորժամ ընթեռնուք իրս ասրական / Մի՛ կատակիք որպէս գուսան (ՄՄ 1430, 102բ):

ԱՍՐԱՊ, գ. Կապար: Ասրապ (գրչ. ասրաբ), որ է ապար, որ է կապար, որ է արճիճ (ՄՄ 6275, 187ա):

ԱՎԷՏՈՒԹԻՒՆ, գ. Աւետիս, ուրախ լուր, շնորհատուանք: Երկու կողմանց ավետութիւն ելել նորայ, պարսից երկիրն խռովէց և կտրվէց (Եզով, 353):

ԱՏԵՆԱԶՐՈՅՅ, ա. Ատենանով գրուցող՝ փարոզող, ատենախօս, ումի ն. Բիւզ. առանց մեկն.: Ինքն Եղիազար էր յոյժ ճարտարախօս եւ ճոռոմաբան, ատենագրոյց եւ բաղդատր (Զաք. Բ, 73):

ԱՐԱԲԱՏՈՒ, ա. Արաբների սերունդ տուող (վայր): Ելանէր մարդ եւ Որդի ի գործս իւր՝ սրբեալ եւ պարարտացեալ ի բուրաստանս եւ յանգաստանս արաբատու (Ագուլ. կոնդ., 88):

ԱՐԱՏԱՄԻՏ, ա. Արատաւոր միաբ
ունեցող, շարամիտ: *Արատամիտ*
եւ զբազմախորհուրդ արքայս Շա-
հաբաս զորդիս իւր զոմանս սպան
եւ զոմանս կուրացոյց (*Դարիժ.*,
255):

ԱՐԱՐՄՈՒՔ, գ. Արարք, գործեր,
բայեր: *Եթէ քոյդ արարմուք վասն*
իմ անկարգութեանս և անարժա-
նութեանս էր, ո՞վ էր քեզ դիմակաց
(Դիւ. Ա. Յակ., 1934, 124): Կու
լսենք քո մեծ քաշութիւնդ և ամե-
նայն ինչ բարի արարմուքդ (եզով,
156):

ԱՐԱՒՏԳԱՆ, գ. Արտավայր: Ծա-
խեցի... *Թէ՛ պահէզատեղ, թէ՛ ջուր,*
թէ՛ ջաղաց, թէ՛ մեր հորսագահ, թէ՛
արաւտգահ (Սանահն., 153):

ԱՐԳԱՍԱՊԱՏԻՒ, ա. Մեծապատիւ,
պատուարժան: Ժամանեցի գիր
սիրոյ և ողջունի՝ հանդերձ քրիստո-
սական օրհնութեամբն առ արգա-
սապատիւ և մեծաբառ սիրելի պա-
յազատազարմ և իշխանագուն Խօ-
ճայ Յակոբիդ (*Դիւան Ն. Զուղ.,*
44): Խորհրդաթիւ դատաւորաց,
արգասապատիւ տօլվաթաւորաց
(*Կամենից, 255):*

ԱՐԳՈՅԱԳԱՆ, գ. Մեծայարգ գահա-
կալ, արթուակալ: *Արգոյագահի և*
վեհագոյն բաբունուոյ մեծի բարե-
բարիդ իմոյ սիրով աստուածակա-
նան յուշ առնեմ սրբոյդ (Դիւ. Ա.
Յակ., 1932, 252):

ԱՐԳՈՅԱՌՈՐ, ա. Յարգելի, մեծա-
յարգ: *Հարկ է քեզ, զի ըստ արգո-*
յաւոր անուան քում երեւելի յիշա-
տակ հոգեւոր թողցես քեզ յերկրի
(Դարիժ., 276): Լեալ ամաց վաթ-

տուն եւ երից, արգոյաւոր եւ մեծա-
շուք առաջի ամենայն ազանց
(Դարիժ., 278):

ԱՐԳԱՐԱՎԱՍՏԱԿ, ա. Արդար՝ ազնիւ
վաստակող: *Շնորհք առաքելական*
ի վերայ... փառազարդ իշխանաց,
փարթամայոյց և գոյիւք զեղուն դօլ-
վաթաւորաց, արդարավաստակ և
քրտնաջան երկրագործաց (Դիւան
Ն. Զուղ., 94): Հասցէ գիր օրհնու-
թեան... արդարավաստակ երկրա-

գործաց և առհասարակ ամենայն
ժողովրդականաց (Սանահն., 104):
Հացագործ վարպետներաց, ի ստա-
նալն քրտնավաստակ եւ ի վայելելն
արդարավաստակ երկրագործաց (Ա-
գուլ. կոնդ., 85):

ԱՐԳԻՆԱՐԱՐ, ա. Արդիւնաւոր: *Արդի-*
նարար - շատբեր (ՄՄ 1127, 133բ):

ԱՐԳԻՆԱՎՈՐԻՉ, գ. ա. Նպաստող,
զարգացնող: *Լինել արդիւնաւորիչ*
ընկալեցելոյ քանքարին (Գալ.
Կենս., 107):

ԱՐԵԱՆ ՄԵՐՉԱՌՈՐ, տե՛ս ԱՌՈՒ-
ԱՐԵԱՆ ՄԵՐՉԱՌՈՐ: *Օրհնեալ ձայ-*
նին արժանի եղէն... և զամենայն
արեան մերձաւորքն՝ զկենդանիքն
և զհանգուցեալքն ամէն (Դիւան ժ,
27):

ԱՐԵԿԱԿՆԱՊԱՅԾԱՌ,

ԱՐԵԿՆԱՊԱՅԾԱՌ, ա. Արեգակի
նման պայծառ: *Յակոբ կաթողի-*
կոս ամենայն հայոց և պատրիարգ
Վաղարշապատու... ազինադիտակ
և արեգակնապայծառ Մեծի Աթո-
ռոյ Սրբոյն էջմիածնի (Դիւան Ն.
Զուղ., 51): Տէր Գրիգոր Բաղիշեցի
արեգնապայծառ և սրբազան մեծ

վարդապետն (Աղան. Միաբանք, 62):

ԱՐԵՆԱՏ,

ԱՐԸՆԱՏ, ա. Բնիկ: ՄՀԲ արենատ «աւելորդ արիւն» (Իմաստափոխ.): Կայփսիկ է քուրվիրշտն Սաքսին եւ է լօթուան արենատ երկիրն (ՄԺ II, 406): Հայրն... էր փառք եւ պարծանք արընատ ազգիս հայոց (Գիւան Մխիթ., 135): Նաեւա շնորհակալ կուզա արընատ քաղաքը (Գիւան Մխիթ., 135):

ԱՐԵՆԵԼԱԿԱՆ,

ԱՐԵՆԵԼԵԱՆՅԻՔ, գ. Արեւելցի, Արեւելեան Հայաստանից: Յորմէ ժամանեացի գիր սիրոյ եւ օրհնութեան... ճշմարտայոյզ վարդապետացր, արեւելականացր եւ արեւմտականացր (Գալ. Կենս., 339): Ձեզ ամենեցունդ պատուիրեմ հարկիւ թէ արեւելականքդ եւ արեւմտականքդ (Գալ. Կենս., 340): Որքան հարուստ է սա անձն եւ ամենայն արեւելեանցիք (Գալ. Կենս., 277):

ԱՐԵՆՄՏԱԿԱՆ, գ. Արեւմտացի, Արեւմտեան Հայաստանից: Յորմէ ժամանեացի գիր սիրոյ եւ օրհնութեան... ճշմարտայոյզ վարդապետացր, արեւելականացր եւ արեւմտականացր (Գալ. Կենս., 339): Ձեզ ամենեցունդ պատուիրեմ հարկիւ թէ արեւելականքդ եւ արեւմտականքդ (Գալ. Կենս., 340):

ԱՐԸՆՏԱԴՕՐ (լատ. arcedator), գ. Վարձառու: Զայնպիսին անպատճառ ունենայ ճուրղամ տալու ժիմճրի. կէսն դըլնաճին ըլայ, կէսն արընտագօրինը ըլայ (Գովր., 100):

ԱՐԹՆԱԿԱՅՈՒԹԻՒՆ, գ. Արթնութիւն, զգօնութիւն: Ամենեքեան զարդարեալք էին զանազան առաքինութեամբք... ոմանք արթնակացութեամբ, ոմանք արտասուահեղութեամբ, ոմանք լուկացութեամբ (Գաւրիժ., 221):

ԱՐԹՆԱԶԱՅՆ, ա. գ. Արթուն՝ կենսատու ձայն: Մաքրոցն է այս նիւթ պսակաց եւ պատժապարտիցն՝ առիթ ազատութեան ըստ ողբերգող արթնաձայնին սրբոյ (Գիւ. Ս. Յակ., 1941, 200):

ԱՐԺԱՆԱՆՈՒՄԲ, ա. Արժանատր խմբով: Կիցի համարձակութեամբ զբրիստոսական պաշտօնս կատարել առաջի Քրիստոսի... եւ ընդ երջանիկ արժանախումբ ձեր սուրբ հանդէսդ (Գաւրիժ., 471):

ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԵԱԼ, ա. Արժանապատիւ, պատուի արժանի: Զարժանապատուեալ եպիսկոպոսունս երուսաղէմայ՝ զՏէր Սարգիս եւ զՏէր Եսայի աղաչեմ յիշել (Աղան. Միաբանք, 479):

ԱՐԾԱԹԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ, գ. Արժաքի վաճառութիւն, փխբ. կաշառակերութիւն: ՀԲԲ արժաթալաճառ «արժաք վաճառող, դրամի առևտուր անող»: Փաշալք մեծամեծք եւ զօրեղք առեալ զիշխանութիւն արժաթալաճառութեամբ՝ եւ հնարկու ձեւով գան, եւ դողացուցանեն զամենեսեան (ՄԺ II, 393):

ԱՐԿԱԹԵՂԷՆ, գ. Երկաթեղէն: Ես՝ Զաքարիայ ամէն շինեցի՝ թէ՛ ուստի, թէ՛ արկաթեղէնի, թէ՛ փայտի,

թէ՛ դուրգար ու թէ՛ գաջի, թէ՛ քարի (Զ. Ագուլ., 91):

ԱՐԿԱԹ ԶԳԵԼ / ԳԶԵԼ, հրդ. Խարիսյ ցգեղ (նալի): *Յամի ՌձԹ յունվարի մէկուճն նալն եկին Իսպանիայ, ի քաղաքն Կալիս արկաթ գձեցինք* (Զ. Ագուլ., 55): *Այսօր եկինք Իզմիր, արկաթ գձեցինք, դուրս ելանք ցամաք* (Զ. Ագուլ., 55):

ԱՐԿՂԱՊԵՏ, գ. Գանձապետ, գանձապահ: *Արկղապետ, ի ձեռս որոյ հարկ է յանձնեալ լինել ամենայն հասոյթի եկամտական* (Ուղուր., 270): *Ջամենայնն ամիս յամսոյ հասուցանել ի ձեռս արկղապետին* (Ուղուր., 271):

ԱՐՀԵՍՏԱԿԵՐՏ, ա. Առուեստաւոր կերպով կերտուած՝ կառուցուած, հոյակերտ: *Դուռն է յոյժ ընդարձակ և բարձրագոյն ի մէջ եկեղեցւոյն բացեալ, և տեսութիւն դրանն կարի գեղեցկատես և արհեստակերտ* (Պատմ. Երուս., 1931, 273):

ԱՐՀԻԳՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ, գ. Արեւալիսկոպոս, եպիսկոպոսապետ: *Ի պատրիարքութեան տեսոն Պետրոսի նորապսակ արհիեպիսկոպոսապետի* (Աղան. Միաբանք, 365):

ԱՐՀՆՈՒԹԻՒՆ, գ. Օրհնութիւն: *Ի թվին ՌՀԴ (1625) եկայք ի սուրբ Երուսաղէմ և այսքան տարիս զվանաց արհնութեան նամակներն կու գրէաք* (Աղան. Միաբանք, 356):

ԱՐՁԱԿԱԳԼՈՒՆ, ա. Արձակ զլխով, առանց խոյրի, փխբ. գոռոզացած: *Դու որ արհամարհէիր... զանուղղագնաց վարս այլ սևազլիաց ինքնահաւան, ինքնահաճ, արձա-*

կազուլի շրջողաց (Դիւ. Ս. Յակ., 1934, 124):

ԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ, գ. Լայնարձակութիւն, ազատութիւն: *Ն. Բիւզ. արձակութիւն «հետատրութիւն»* (Իմաստափոխ.), *ՀԲԲ արձակութիւն «արձակ լինելը»*: *Ամենայն կողմից արձակութիւն է նոցա, որ քան զմոծակ բազում են ի վերայ երեսաց երկրի* (Յգով, 372):

ԱՐՃԷՃ, գ. Արհիմ: *Ի Հապաշի երկիրն ոչ գոյ բնաւ արծաթ, պղինձ, կլայէկ, արճէճ, բայց ոսկի շատ* (Յ. Թուլթունջ., 310):

ԱՐՃՃԱՊԱՏ, ա. Արհիմով պատուած: *Բոլոր վերնատունն, որ է շուրջ զգերեզմանան Քրիստոսի, ունի ժՁ կամարս... և մեծ գմբէթն արճճապատ* (Պատմ. Երուս., 1931, 339): *Ի ներքոյ արճճապատ մեծի գմբէթին շինեալ գոյ մատուռ* (Պատմ. Երուս., 1931, 339):

ԱՐՄԵՆՈՊՈՒՍԵՅԻ, գ. Հայերի համար կառուցուած փաղափ բնակիչ, տե՛ս նաև ՀԱՅԱՔԱՂԱՔ: *Անդաստանս եւ գեօղս, որպէս ունին արմենոպոլսեցիք* (Դիւան Մխիթ., 142):

ԱՐՈՒՃԱՆ, ա. Ճոխ, հպարտ: *ԲՀ ունի արուճանակ «լիբացօղ»*: *Արուճան - պերճ, ճոխ, սէգ, աշխարհալուր* (ՄՄ 2281, 135ա):

ԱՐՈՒՅՄՈՒՆՔ, գ. Վարաբում, յորդացում (ջրի), ջրհեղեղ: *Թվին ՌԿՁ յուլիսի ժէ քաղաքս անձև եկաւ, գետոց արուցմունք եղաւ, ժ-Ի կարմունճ տարաւ, Ե-Ձ հոգի խեղդեցաւ* (ՄԺ I, 208): *Մէկալունն գի-*

շերն անձրեւ եկաւ, գետոց արուց-
մուք եղաւ, որ շատ տուն բլաւ, շատ
կարմունճ տարաւ (ՄԺ I, 227):

ԱՐՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Իրագործում,
ի կատար ածուելը: ՀՖԲ ունի ար-
տագործել «գործել՝ գլուխ բերել,
անել, կատարել»: Յանձնեալ զիս
Աստուծոյ եւ սրբոց խնամակա-
լուացս՝ ակնկալէի արտագործու-
թեան կարծեացս (Կամենից, 151):

ԱՐՏԱԾԱՒԱԸՆԸ, շք. Բոլոր կողմերը
տարածուել՝ ծաւալուել: Բղխիցի
լոյսն ի սրբազնասուրբ գերեզմա-
նէն, որ ի նոյն ժամայն որոտալով ի
ներքուստ կողմանէ արտածաւալե-
ցաւ լոյսն ի սուրբ գերեզմանէն
(Պատմ. Երուս., 1932, 13):

ԱՐՏԱՀԵՂԱՆԻԼ, նբ. Բխել, յորդել,
տարածուել: ԱԲ արտահեղում
«դուրս վազցընել»: Յատուկ ար-
տահեղանի ի յենթակալէ՝ առանց
փոփոխման (ՄՄ 1756, 115ա): Ա-
մենայն բարի տրամադրութիւն
մարմնոյ արտահեղանի առ սիրտ
(ՄՄ 1756, 157ա):

ԱՐՏԱՍՈՒԱԹԱՓ, ա. Արտասոմ թա-
փելով, արտասուալից: Հայցեմ ա-
ղերսիւ, զի ընկալցի Տէրդ իմ զձօ-
նեալս երկրպագութիւն արտաս-
ուաթափ հայեցողութեամբ (Դիւ. Ա.
Յակ., 1930, 385):

ԱՐՏԱՍՈՒԱԹՈՅՐ,

ԱՐՏԱՍՈՒԱՅՈՒՈՒ (գրբ. արտաս-
ուաթօր), ա. Արտասուալից: Ա-
մենեքեան ցաւագին սրտիւ՝ արտա-
սուաթոյր աչօք սգային վասն ազ-
գին Հայոց (Դարբիժ., 303): Կալի
աչօք և արտասուալթոռ սրտիւ տո-

չորմամբ լանձօք ծունկս անկեալ
աղաչանօք արդ արարից (Եզով,
340):

ԱՐՏԱՍՈՒԱՀԵՂՈՒԹԻՒՆ, գ. Արտա-
սոմի հեղում: Ամենեքեան զարդա-
րեալք էին զանազան առաքինու-
թեամբք... ոմանք արթնակացու-
թեամբ, ոմանք արտասուահեղու-
թեամբ, ոմանք լուակացութեամբ
(Դարբիժ., 221):

ԱՐՏԱՏՆԻ, ա. Արտախին, դրսել, ոչ
տնային: Արտատնի - որ ի գործ
արկանի արտաքս քան զտունն, և
կամ իր ինչ, որ ո՛չ է տնային (Վ.
Յուն., 14):

ԱՐՏԱՔԱՂԱՔ, գ. Քաղաքից դուրս
գտնուող մասը, արուարձան: Գո-
լով իմ յարտաքաղաքի... գնացի առ
Ս. Խաչն, որ է հանդէպ նոյնոյ վա-
նացն ի վարժատանն քահանայապե-
տական (Կամենից, 147): Հարին եւս
զարտաքաղաքն (Կամենից, 147):

ԱՐՏԱՔԱՐԾԵԼ, 1. նբ. Դուրս փաշել,
դուրս բերել: Արջք մուծանեն
զգլուխս իւրեանց ի ներքս, զի ար-
տաքարշիցեն զխորիսիս, իսկ մե-
ղուքն զայրացեալք և սրտմտե-
ցեալք խայթեն զաչս նոցա (Նոր.
ծաղ., 52): Արտաքարշեցեալ ան-
տուստ (բնագրում՝ անտուստ) ի
սպասաւորէն՝ գնացաք ընդ ուղիս
շաղախուստ, ցանկամիջոց Պուղտա-
նուվքային (Կամենից, 149): 2.
փխբ. Թարգմանել: Ես տեսի, որ
կարի հարկաւոր էր արտաքարշել ի
մեր բառն, բայց անկարելի էր և
դժուար (Տէֆթ., 319):

ԱՐՏԱՔՍՈՒ, մկ. Արտախուսած: Ար-
նուցեալ որդեակդ ի քէն արտաք-

սու /Գէշ-գէշ պատառի գազան ոսոխու (ՈՒՄՀԲ II, 77):

ԱՐՏԵԼԱՆԵԼ, չբ. Դուրս ելնել, դուրս գալ: Գոնէ նախ քան զմուտ արեւոյն յանտառէն արտելանիցէաք (Կամենից, 153):

ԱՐՏԵՒՈՒՆ, գ. Արտևանունմ: Փէշու. արտեւան «գագաթն բարձր տեղոյ իրիք, ծայր, կատար»: Արտեւուն - վերջնագոյն մասն ճակատոյն, որ մակաշաց վերակայի, ծածկեցեալ հերօք կարճաբուսիք, զոր ոսմկօրէն ունք վերաձայնեն (Վ. Յուն., 14):

ԱՐՏՈՒՂԱՆԱՂԱՅ, ա. Զարտողի ընթացող: Ոչ որպէս զարտուղախողաց նախ զկծեալ արդ, այլ... սկզբնագոչ ձայնիւ ջանամք ի դոյն և յարիմք ի դոյն (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):

ԱՐՏՈՒՂԱՅ, գ. ա. Զարտողի, փխբ. խառնակիչ, խոռվարար: Ի Հալէպ խառնակութիւն ինչ եղեալ իցէ, յորմէ արտուղայք հալածումն յարուցեալք իցեն (Իլւան Մխիթ., 111):

ԱՐՅԱՆԱԳԻՐ, գ. Արձանագիր (ձց): Ընդ այլ եկեղեցական անցուցանիցեն ի յարցանագիրս (գրչ. արձանագիր) իւրեանց (Իլւան Մխիթ., 15):

ԱՐՓԱՆԱՂԱՅ, ա. Արեգակնափայլ, արեգակնային: ԱՐ արփիախաղաց «արեգակից ծագող՝ բխող»: Դասն Հոփիսիմեաց... որք իբրեւ զաստեղակուռ բանակա արփախաղաց ճառագայթիք յարմեմտից յարեւելս դիմելք (Ագուլ. կոնդ., 88):

ԱՐՓԱՏԵՍԱԿ, ա. Արեգակի նմանութիւնն ունեցող: ԱՐ արփիատեսիլ «արևի նման»: Իբր ի հայերևոջ ի յինքեանան զարփատեսակն զգեցեալ (Յ. Կոլոտ, 313):

ԱՐՔԱՅԱԳԱՆ, գ. Գահանիստ, մայրաքաղաք: Գրեցաւ սուրբ և սրբոց ճեմարան Յայսմաուրս ի մեծապանծ և ի բարձրափառ, ի ծովապատ և յարքայազահ քաղաքն Կոստանդնուպոլիս (Դարիժ., 403):

ԱՐՔԱՆԻՍ, ա. գ. Արփայանիստ: Թափեաց ի նմանէ զՄիջագետս, զԱսորեստան և զայլ արքանիստ աշխարհն (Մժ II, 315):

ԱՐՔԵԱԿԱՆ, գ. Արփայական: Ոսկին պատիւ արքեական, աւետիս (ՈՒՄՀԲ, 90):

ԱՐՕՏԱՇՐՋԵԼ, չբ. Արօտավայրում շրջել՝ արածեցնել: Ամէն օր հանդիպէաք բանակի նոցա, զոր յարօտաշրջեալ արածէին զուզտս, որպէս ի Տաճկաստան՝ թուրքմանք (Միմ. Լեհ., 310):

ԱՒԱԳԱՅՐ, գ. Աբգար անուան ստուգաբանութիւնն է՝ ըստ Ստեփանոս Ռօշփայի: Կոչեցաւ Աագայր, որ ոչ կարացեալ ասորոց և յունաց ուղղակի արտաբերել՝ կոչեցին Աբգարոս (Ստ. Ռօշքայ, 3):

ԱՒԱԶԱԳՈՅՆ, ա. Աագի գոյնն ունեցող: Դու ևս սուտակն լիգիրոն / Որ է կապուտ, աւազագոյն (ՈՒՄՀԲ II, 82):

ԱՒԱՂԱԿՈԶԱԿԱՆ, ա. Կ. Պոլսի դարպասներից մէկի անուանումն է: Անցանելովն ընդ դրունս Մաքսապետականին և Աաղակոչակա-

նին՝ վախճան առեալ առ տունն վանից (Դարբիժ., 426):

ԱՒԱՆԱՄԷՋ, գ. Ասանի մէջ, ասանի ներսը: Ոչ ումեք տուեալ զծանօթութիւն, թէ եւ յաւանամիջի անդ զոմանս տեսի (Կամենից, 156):

ԱԻԵԼԱԿՇԻՌ, գ. ա. Աւելի կշիռով, ավելի շատ: Ասացեալ են ի «Խասիաթի գիրքն», թէ երկու պատերազմողի որ կողմն որ աւելակշիռ արմատտ լինի, այն կողմն յաղթող լինի (Դարբիժ., 444):

ԱԻԵԼ(ՈՐԿ) ԱՆՈՒՆ, հրդ. Յաւելեալ ամուճ՝ մականուն, յաճախ նաև ազգանուն: Այս է տապան հանկըստենի Մահտեսի տէր Հայրապետի, սա է գեղճէն Կալերցի, աւել անուն սա Տաստչի (ԳՆՎ II, 140): Երեւանայ Սէֆիդուլի խանիցն ղաշար Յուսէնխան բէկն Ազուլիս այսօր դուրուղայ եկաւ ժ ձիաւորաւ, աւել անունն որ կոչի Թարխան (Զ. Ագուլ., 70): Սկսեցին այնպէս ձայնել Յեահիչեայ, այս իմ աւելորդ անունս անկից մնաց (Յ. Մուշ., 130):

ԱԻԵՏԱՐԱՆԱԶԱՓ, գ. Աւետարանի չափն ունեցող, ոչ մեծ (պատկեր): Այս խորանի վերայ [կայ] խաչ մի... և չորս կողմն աւետարանաչափ պատկեր (Զուար, 1868, 379):

ԱԻԵՏԱՐԱՆԱՅՈՒ, գ. Աւետարանի համար նախատեսուած (մագաղաթ): Որնէր Բ աւետարանցու մագաղաթս (Աղան. Միաբանք, 231):

ԱԻԵՐԱԲՆԱԿ, ա. Աւերակներում բնակուող: Եւ յաղագս երկնանման եւ ադինասարաս եկեղեցեաց զի՞նչ

ասացից, որք ի խաւարի մնացեալ եւ... եղեալ հանգրուանք աւերաբնակ բուոց (Դարբիժ., 88):

ԱԻԺՆՏԱԿ, գ. Օժանդակ: Աւժնտակ - գործակից (ՄՄ 1127, 133ա):

ԱԻԻՂԱՅՆԵԼ, նբ. Աւելացնել, յաւելել: Էլ իվելի ձեր Հայոց ասկին նեղութիւն և տանջանք կու աւիլացնեն (Եղով, 358):

ԱԻԻԻ, մկ. Աւելի շատ, առաւել: Տարիմըն կեցաւ պահմն Կաֆան, Կէզլով, Խարա-Սուն եւ այլ պաղի տեղրանք, ալի մեր քաղաքն եկաւ (Մժ I, 218):

ԱԻՐԼՈՅԵԼ, նբ. Անջատել, բաժանել: Աւրուցել - անջատել, տրամատել, պողել, քահել, մեկուսել, քեցել, բացառաբել (ՄՄ 2281, 124բ):

ԱԻՐՈՒԿ, ա. Չնչին: ՀԲԲ արուկ «աւրուած, մանրած մանր դրամ» (իմաստափոխ.): Աւրուկ - չբաւոր, փինատ, անքատ, շուար, անտարր (ՄՄ 2281, 125բ):

ԱՔԱՌՆԱՇՈՅՏ, ա. Հապեւայ, ինքնավստահօրէն արագ: Առաքնաշոյտ - կարի վաղվաղուն և երագ ի փոխել արեացն, յորում ցուցանի երբեմն ինքնահաւանութիւն իմն, լատ. փոէփոսփէոսս (Վ. Յուն., 16):

ԱՔՍՈՐԱՏԱՐ, գ. Ախորի տանող, ուղեկից պահապան: Կաշառեցին զղափուճի պաշին աքսորատարն պատրիարգին գիտութեամբ և խորհրդեամբ պօստանճի պաշուն (Իւրան ժ, 85):

- Բ -

ԲԱԳՁԱԶԱՅՆ, մկ. Միանգամայն: ԱԲ բազձաձական «հաաաական», ՀԲԲ բազձաձ «հաաաաաաաա, հաաաաաաաա»: Փաղանգամայն - միանգամայն, բազձաձայն (ՄՄ 2281, էջ 136ա):

ԲԱԴԱԼ (արար. badal), գ. Փոխաանորդ, հաաաաաաաա: Արիսի տեղի համար բաղայն տվիր մեզ Փոխտտանցէ գնուաձու ախպինքն, Փրձուանցէ գնուաձու այգու կէսն (Սանահն., 160):

ԲԱԶՄԱԵՐԿ, ա. Բազմաշան, տնաաաաաա: Արդ՝ այսպէս բազմաերկ աշխատութեամբ... հագի թէ կարաց բառնալ գձանր բեռն հարկին (Դարիժ., 256): Տէր Փիլիպպոս կաթուղիկոսն բազմաերկ վաստակօք զամենայն շինուաձսն վերրստին շինեաց բովանդակ (Դարիժ., 260): Ես այսու դիտաւորութեամբ եւ յուսով յանձն առի զայսպիսի յոգնաշխատ եւ զբազմաերկ եւ զտաձանելի գործս (Դարիժ., 502):

ԲԱԶՄԱԸՆԾԱՅ, ա. Բազում ընձաներ պարունակող: Տեսեալ զամենայն նախարարս՝ զհինս եւ զնորս եւ հաճեալ զմիտս նոցա բազմաընձայ աղերսիւ (Դարիժ., 255):

ԲԱԶՄԱԿԱՆ, գ. Հարկի տեսակ, թեւս՝ խնջոյքների, հաաաաաաաաաաի հաաաաա առուելի հարկ: ԱԲ բազմական «հաաաաաաաա, հաաաաաաաա

սական» (իմաստափոխ.): Մեզ հէնց գիր տվին, որ մեզանէ էլ բազմական չուզեն (Սանահն., 136):

ԲԱԶՄԱԿՈՒՏԱԿՈՒՄՆ, գ. Բազում մեծ կուտակումով: ԱԲ բազմակոյտ, ՄՀԲ բազմակուտակ նոյն նշ.: Զբազմակուտակումն տարրական շրոց ի բերանոյ Բարձելոյն կոչեաց ծովս (Յ. Կոլոտ, 245):

ԲԱԶՄԱՀԵԾԵԼ, ա. Բազում հեծեալներ ունեցող, զօրեղ: Ի յԱրգրում քաղաքին Ապագա փաշայն, յոյժ արի եւ քաջ պատերազմող եւ բազմահեծել (Դարիժ., 432):

ԲԱԶՄԱԶԱԳՈՒՆՔ (բնսա.), գ. Բազմաթիւ ձագեր ունեցող: Ըզձեզ գովեմք, ո՛վ հոգեսունք... ծառք կըրկնոստեղք քաղցրաբանիչք եւ զարդուցիչք բարձրաթըրիչք բազմաձագունք (Յ. Կոլոտ, 94):

ԲԱԶՄԱՄԲԱՐ, ա. Փարթամ: ՀԲԲ բազմամբար «բազմահամբար», վերջինս էլ՝ «աձ. մեծ համբար՝ մեծ պաշար պարունակող, շատ համբարուաձ»։ Բազմամբար - փարթամ, կարող, համակալ (ՄՄ 2281, 135ա):

ԲԱԶՄԱՅՈՅՈՒԹԻՒՆ, գ. Բազմութիւն, բազմաբանակութիւն: Եկեալ պատմեսցէ ձեզ զաղաներամ բազմայոյութեանց եւ կամ զմերոյ ձերունակ տկարութեանց (Ագու. կոնդ., 94):

ԲԱԶՄԱՇԱՐԵԼ, նր. Շարժել, փոփոխել: ԱՖ և ՀՖՖ *բազմաշար* «աձ. շատ շարժեր ունեցող, շատ օղակներից բաղկացած (շղթայ)»: *Բազմաշարել* - շարժել, միտել, յեղանակել, միաշարել, խարբարել (ՄՄ 2281, էջ 135բ):

ԲԱԶՄԱՈՐԴԻ, ա. Բազմազուակ: ԱՖ *բազմորդի* նոյն նշ.: *եթէ մայրն բազմորդի և Աթոռն Քրիստոսագիր այսպէս կայր, որպէս ասացաք (Դիւան ժ, 49):*

ԲԱԶՄԱՊԱՌԱԿ (հայ. պառակ «ոչ խարնէրի հօտ», նաև՝ «շերտ»), ա. Բազմաշերտ, նեղֆեր ունեցող: *Դարձեալ կարկատեցաւ բազմապառակ հերձումն նոցա (Դիւան Մխիթ., 142):*

ԲԱԶՄԱՍՔԻ, գ. Խառնիճաղանջ ամբոյ (ծամ. հրատ.): *եւ օր մի շաւղաթ արար շահն, թէ՛ բազմասքին թող իջնու, բան չեմ ասեր (Դիւան ժ, 25):*

ԲԱԶՄԱՎԱՆՔ, ա. Բազում վանֆեր պարունակող: *Վասն պահպանութեան իրեանց գոլով պահարան բազմավանք սրբոց նշխարաց ներեղին պահարանոջ (ԴՆՎ VII, 110):*

ԲԱԶՄԱՏԵՆԶ, ա. Խիստ տենչալի: ԱՖ ունի *բազմատենչալի*, բազմատենչիկ նոյն նշ.: *Բազմատենչ սիրով և համբոյր երկնագնաց գարշապարաց ձերոց... և հարցանեմ զհարգից ձերոց և զորպիսութեանց (Ոսկ. նամ., 1966, 294): Մեծամեծաց և փոքրոնց բազմատենչ սիրալրական ողջոյն քրիստոսապարգև (Դիւան Ն. Զուղ., 106):*

ԲԱԶՄԱՏՈՒ,

ԲԱԶՄԱՏՈՒՐ, ա. Շատ տոտղ՝ առատաձեռն: *Ի մէջ կաթողիկոսական իշխանութեանն Մեկքիսէթն առաւել ձեռնբաց եւ բազմատուր (գրչ. բազմատու) էր դրամօք եւ այլ իրօք (Կարիժ., 193):*

ԲԱԶՄԱՌՈՒՐՅ, մկ. Վաղուց ի վեր, հնուց: *Մինչ բազմաուրց ակն ունէի / Կենաց առնուլ զըջան (ՀՎՖ, 319):*

ԲԱԶՄԵՂԱՆԱԿ, ա. Բազմատեսակ: *Ստութիւն որ է՛ մոլութիւն իմն ընդդէմ ճշմարտութեան և է՛ բազմեղանակ (Նոր. ծաղ., 129):*

ԲԱԶՄՈՂՈՔ, գ. Մեծ ողոճով՝ աղաշանճով: *ՀԳՖ բազմողորմ «բարեգութ»:* *Ապա անդ ողորմաբար խեղդամահ արարեալ՝ կորուսանեն զարքայն [Սաման] իւրեանց, որ բազմողոք աղաղակաւ հայցէր ամենից զփրկութենէն և ոչինչ օգտէր (Պատմ. Խոթ., 79):*

ԲԱԶՊԱՆՏ, գ. *Բազպանտ* - թեզենիք (ՄՄ 1127, 136բ):

ԲԱԺԱԿԱՐՔՈՒ, ա. (Չարչարանֆների) բաժակից ըմպող, փխբ. շարչարակից: *ՀՖՖ բաժակարբու «գինի խմող»:* *Ո՞հնի զգլուխ առաջին բաժակարբու մարտիրոսին և սիրելի աշակերտին Քրիստոսի (Յ. Կոլոտ, 211):*

ԲԱԺՆՈՂ, գ. *Բաժնող* - հերձուածող (ՄՄ 2019, 182ա):

ԲԱՂՁԱՔԱՐՇՈՒԹԻՒՆ, գ. Բաղձամբ, կարօտ ֆաշելը: *Բաղձաքարշութիւն* - քարշումն ի բաղձանս և ի

կարօտանս կամ քարշեցումն ի բարձանաց (Վ. Յուն., 16):

ԲԱՂՈՒԲԱՂՋԱՅ, գ. Այգի ու մարգագետին, բոստան: Շիրնեցի զխուժ, զբաղուբաղջէս և զջրաղացներս եկեղեցւոյս վախճ տուի (ԳՉՎ V, 215):

ԲԱՄՊՈՒԿ, գ. Զորի: Բամպուկ, որ է շորեակ (ՄՄ 6275, 190ա):

ԲԱՆՆԵԼ, չբ. Զայնել, ձայն հանել: ՀԲԲ բանել «աշխատել. պիտանի լինել. մշակել, աշխատագործել», ՄՉԲ բանիլ «աշխատանք կատարել, գործել»: Բանել - ոգել, ձայնել, առադրել (ՄՄ 2281, էջ 136ա):

ԲԱՆԿԻԿ, գ. Բան (փղբշ.), մի կարն խօսք, միտք: Քանի բանկիկ մի այլ ասեմ / Վասն հայոցն, որք ի Լովն են (Սիմ. Լեհ., 402):

ԲԱՆՊԱՍԱՆՔ, գ. Բամբասանք: Մեղուցեալ եմ... ականջովս չարին ունկն դնելով, բանպասանաց դատարկութեամբ դատողութեամբ (Հնատիպ, 37):

ԲԱՆՏԱՏԵՂ, գ. Բանտի տեղ, Յիսուսի բանտի տեղը Երուսաղէմում, Սուրբ Յարութեան տանարի մէջ: Է յաշակողմն սեղանոյն բանտատեղն Քրիստոսի Աստուծոյ մերոյ... և մեծարի յազգէս մերմէ (Պատմ. Երուս., 1931, 235): Զախ կողմն բանտատեղն է, որ Աննայի տունն է (Զուար, 1868, 371):

ԲԱՇԵԱՅ (թուրք. baska), մկ. Ուրիշ, բացի: Շահ ինչ, զէնէն բաշխայ, ետոյ է արապայ մարդ եկաւ մերկիկ, բորբք (ՄԺ I, 221):

ԲԱՉՃԻ (թուրք. pacaci) գ. Խաշ պատրաստող և վնասող, խաշանոց: Կածկըտուն, հեղեղն եկաւ եւ պատեց բոլոր քաղաքն... աշճիներն ու բաշճիներն, պէզազներն ու խազազներն (ՄԺ I, 219):

ԲԱՌՆԻԼ (գրբ. բառնալ), նբ. Վերացնել, փխբ. պատծել: ՀԲԲ բառնել «վերացուել, բարձուել»: Ի բառնիլ Տեառն զօրութեամբ այնպիսիեաց ցեցակեղէք կերչացն (Յ. Կոլոտ, 264):

ԲԱՍՄԱՅ ՏԱԼ,

ԲԱՍՄՈՎ ՀԱՆՆԵԼ, (թուրք. basma «տպուած»), հրդ. Տպագրել, տէս նաև ՊԱՍՄԱՅ ԳԻՐ: Ոսկան վարդապետն այժմուս գնացել էր վասն գրքեր բաամայ տալու, որ այս ժամ է Ֆունգստան է (Զ. Ագուլ., 108): Աստուածաշունչն այս Ոսկան վարդապետս հանեց բաամով, շատ շատ գրգէր հանեց (Զ. Ագուլ., 108):

ԲԱՐԱԿԵՕՍԻԿ, ա. Նրբաձայն: Իմ կանանչագոյն թութակ հաւիկ / Զերդ բանաւոր բարակխօսիկ (Ուրիշ, 350):

ԲԱՐԱՀԱՅՐ, գ. Բարի հայր, նախահայր: Զայս արծաթն գործեաց բարահայրն Աբրահամու (Հնատիպ, 14):

ԲԱՐԲԱՐ, ա. Բարին, բարիքը (բնագրով եղել է բարբարին, սակայն հրատ. դարձել է բարին): Աստուած զիրեանցն բարբարին իշէ և իւր ծնունդքն (Սանահն., 174):

ԲԱՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Խրթնութիւն, բարդ խօսելը: Զանալի է հոգունակաբար զգուշանալ ի սնա-

փառութենէ եւ ի բարգաբանութենէ
(Դիւան Մխիթ., 59):

ԲԱՐԵԱՅԱՍԷՐ, ա. Բարեսէր, բարե-
պաշտ: Որում բարեացասէր
գունդք յերկնէ (Դիւան Մխիթ.,
140):

ԲԱՐԵԲԱՂՁ, ա. Բաղձալի: Բարե-
բաղձ տենչանօք ձեզ ձօնեալ նուի-
րեմ (Յ. Կոլոտ, 235):

ԲԱՐԵԲԱՇՏ, ա. Բարեպաշտ: Աստ-
ուած ողորմեսցի բարեմիտ և եր-
կիրպած և աստուածասէր բարե-
բաշտ Սօլթանին (Հնատիպ, 71):

ԲԱՐԵԲԱՐՈՅՈՒԹԻՒՆ, գ. Բարոյա-
կանութիւն, առաքինութիւն: Մար-
դավարութիւն, որ ըստ Պրիսկիա-
նոսի կայանայ ի յերիս. նախ ի քա-
ղաքականութիւնս և ազատակա-
նութիւնս, երկրորդ ի բարեբարո-
յութիւնս (Նոր. ծաղ., 190):

ԲԱՐԵՆՕՍԻՁ, գ. Միջնորդ: Ետ գե-
րազանցութեան ձերոյ զմի մեծ բա-
րեխօսիչ (Դիւան Մխիթ., 65):

ԲԱՐԵԿԵՆՅԱՂՈՒԹԻՒՆ, գ. Կյանքի
բարիք, վայելչութիւն, բարեկար-
գութիւն: Պարտ է սիրել զուսուցիչս
քան զծնողս, զի ծնողքն տան
զկեալն, իսկ ուսուցիչքն՝ զբարե-
կենցաղութիւն (Նոր. ծաղ., 230):

ԲԱՐԵՅՈՐԻ, ա. Բարիք յորդո՛ղ առ-
ող: Շնորհաբ ամենասուրբ երրոր-
դութեանն և բարեյորդ, մշտաբուխ,
յարբախնամ կերտողին (Սանահն.,
88):

ԲԱՐԵՈՒՂԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ, գ. Ուղիղ
եւ բարի ընթացք, բարեյաշողու-
թիւն: Տէր Աստուած... առաջնորդես-
ցէ և զառաջիկայ զբարեուղղագնա-

ցութիւնս քո Հոգին Սուրբ յաշողեսցէ
(Դիւ. Ս. Յակ., 1941, 83):

ԲԱՐԵՊԱՇՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Բարե-
պաշտութիւն, նաև՝ եկեղեցասի-
րութիւն: Ծանուցումն լիցի բարե-
պաշտասիրութեան ձերում (Դիւան
Մխիթ., 10): Աստուածահաճոյ բա-
րեպաշտասիրութեան ձերոյ (Դի-
ւան Մխիթ., 10):

ԲԱՐԵՊԱՇՏԱՓԱՅԼ, ա. Բարեպաշ-
տութեամբ փայլող: Ծանուցում լի-
ցի բարեպաշտափայլ աստուածա-
սիրութիւնդ ձերին, քանզի առէա-
ցուցիչն էիցս ասեն մարդիկը
(Ազուլ. կոնդ., 100):

ԲԱՐԷԱՐՈՒԹԻՒՆ, գ. Ուրախութիւն,
բարօրութիւն: Բարէարութիւն - բա-
րէկենդանութիւն (ՄՄ 2019, 183ա):

ԲԱՐԻՆ ԱՋՈՂԻ, հրդ. Բարի յաշո-
ղում, բարեմաղթամբ: Նաև էր
Ֆէլյամիկ, անուն նաւին Մարգանդ
կիօնը. Աստուած բարին աշողի
(Չ. Ազուլ., 51):

ԲԱՐԻՇՈՒԹԻՒՆ, գ. Հաշտութիւն,
միաբանութիւն: Թուին ՌՁԹ եղեւ
բարիշուութիւն ի մէջ երկուց ազգացն
եւ թագաւորացն Օսմանցոց եւ
Պարսից (Դարիժ., 434): Միաբա-
նեցան երկոքին թագաւորքն եւ ա-
րարին բարիշուութիւն (Դարիժ.,
434): Արար զբարիշուութիւն հետ
Ղզլբաշին (Դարիժ., 479):

ԲԱՐԻՎԱՅԵԼՈՒՁ, ա. Բարի եւ վայե-
լուչ, պարկեշտ: Յիշեցէք... զբարի-
վայելուչ պատանին՝ զխոջա Շեխի-
ջանն (Աղան. Միաբանք, 404):

ԲԱՐՁԻ ԹՈՂՈՎ, հրդ. Բարձիթողի
անել: Լուսոյ ստեղծիչ ես դու / Մի՛

բարձի թողուր զիս ի քէն (ՈՒՄՇԲ, II, 221):

ԲԱՐՁՐԱԶԵՏԵՂ, ա. Բարձր՝ երկրն-
փում զետեղուած (հրեշտակներ):
Ըզձեզ գովեմք, ո՛վ հոգեսունք,
բարձրագետեղք յորդեալ հեղեղք,
ծառք կըրկնոստեղք քաղցրաբա-
նիչք (Յ. Կոլոտ, 94):

ԲԱՐՁՐԱՀՐԱՄԱՆ, գ. ա. Բարձր՝
թագաւորական հրաման(ով):
Ընդ կայսրախօս համարձակեալքդ
և բարձրահրաման ինքնակա-
լեալքդ զիջեալ աստանօր զխաղա-
ղութիւն մարդէք (Դիւ. Ս. Յակ.,
1941, 200):

ԲԱՐՁՐԱՓԱՌ, ա. Բարձր ու փառա-
ւոր, հուշակատր: Գրեցաւ սուրբ եւ
սրբոց ճեմարան Յայսմատուրս ի
մեծապանծ եւ ի բարձրափառ, ի
ծովապատ եւ յարքայազահ՝ քա-
ղաքն Կոստանդնուպապլիս (Թորոս
աղբար, 403):

ԲԱՐՈՎԱԳԻՐ, գ. Բարեւի գիր, նաև՝
բարեւաղթանք: Օվ ոք որ կամենայ
քան զայս առաւել լսել, որոնեսցէ
զմատենագիրս բարովագրիցն ի-
մոց (Ն. Մուշ., 375):

ԲԱՐՈՎԻԼ, չր. Բարեւել: Ն. Բիւզ. բա-
րովել նոյն նշ.: երկոքին սկսան
բարովիլ ընդ միմեանս եւ հարցա-
նել զողջունէ իրերաց (Դաւրիժ.,
366):

ԲԱՅԱՌԱՔԵԼ, նր. Անշատել, տրո-
նել: Բացառաքել - անշատել, տրա-
մատել, պողել, քահել, մեկուսել,
աւրլոցել, քեցել (ՄՄ 2281, 124բ):

ԲԱՅԱՍՄԷՋ, գ. Միջակայ տարածու-
թիւն: Համայար և սեկօրէն կաշ-

կանդութեամբ ի տարուատ իբր ի
մօտոյ բացատմէջ (Դիւ. Ս. Յակ.,
1941, 200):

ԲԱՅԻՐԵԼ, նր. Պատմել, ներկայաց-
նել: Ասել - ոգել, պատմել, բացի-
րել, տենաբանել (ՄՄ 2019, 166բ):

ԲԱՒԱԿԱՆԱՐՈՒԹԻՒՆ, գ. Բաւական
լինելը, բաւարարութիւն: Բաւակա-
նարութիւն - բաւականապէս վճա-
րումն պարտաւորութեան, զի բա-
ւական արութիւն է այնքան առնել,
որքան բաւական լինի բարկացե-
լոյն, լատ. սաթիսֆաքցիօ (Վ.
Յուն., 18):

ԲԵՄԲԱՍԱՅԱԿԱՆ, ա. Բեմասացա-
կան, փառօրէնական: Արդ ես՝
վերջինս յեկեղեցւոյ եւ տրուպս ի
բեմբասացականաց Մինաս վար-
դապետս Տիգրանակերտցի (Թորոս
աղբար, 485):

ԲԵՄԲԱՍՈՒԹԻՒՆ, գ. Բեմից խօսելը,
փառօրէնութիւն: Զայս իբրեւ լուս
սուրբն Սահակ՝ ի բարկութիւն
բրդեալ, զմահ յանձն առեալ, կան-
գուն կացեալ ի բեմբասութեան ձեւի,
համեստ հայեցաւծով (Մժ II, 327):

ԲԵՌՆԱԿՈՐՈՒՄ (բնատ.), ա. Բերը
կորցրած, նաաբէլ եղած: Դեկիս
օղ չուղի եղաք նմանի բեռնակորու-
սի / Դեկիս օղն զրկի բեռանց մե-
ծագնի, մուրացող լինի (ՈՒՄՇԲ II,
31):

ԲԵՌՆԵԼ, նր. Բռնել: Մարդ բեռնե-
ցինք, թէ մեզ պիտի ուրիշ ճանա-
պարհաւ տանես Ալիկօննա (Գալ.
Կենս., 231):

ԲԵՐԱՆԱԲԵՐ, ա. Բեղուն - բերնաբեր
(ՄՄ 2019, 168ա):

ԲԵՐԱՆԱՓԱԿ, ա. Բերանը փակ՝ լուռ, փխբ. աննկատ: *Յահէն պետիս՝ բոլոր հերձուածք բերանափակ տային խոյս (Քորգ. Տապան., 176):*

ԲԵՐԱՆՔ, գ. Սահման: ՄՀԲ բերանք «ամանի բերան» (իմաստափոխ.): *Պարսից թագաւորն հեծել առաքեց, Արզրումայ բերանքէն հետ քշեց (Նշխարք, 6):*

ԲԵՐՂԱԿԱՆ,

ԲԵՐԹԱՅԻ, գ. Բերդաբնակ, հմմտ. ԳԻԻՂԱԿԱՆ: *Իբրեւ ետես խանն զամուր միտս բերդականացն, թէ ոչ տան զբերդն, դարձաւ ի բերդէն եւ յարձակեցաւ ի վերայ գաւառաց աշխարհին (Դարիժ., 74): Կօնիայ եւ այլքն քաղաքն բերթացիք հայնակ չի գիտեն, դրսեցիք գիտեն (Միմ. Լեհ., 333):*

ԲԵԻՆՈՒՔԱՇ, գ. Ագան: ԱԲ և Ն. Բիւզ. բեւեռաքարշ նոյն նշ.: *Եւ առեալ զբեւեռաքաշս, այսինքն քալբաթին, եւ այնու կտրեցին զմիսն ծղեացն (Դարիժ., 187):*

ԲԵՎՆԻՅԱ (լեհ. pivnica), Գարեջրատուն, զինետուն: *Եւ գետնափոր մաղարանի, բիւնիցանի քարէ, որ ամառն ըմպելին ցուրտ եւ պաղ լինի (Միմ. Լեհ., 337):*

ԲԻՐԵՂԷՆ, ա. Բիրեղեայ: ՄՀԲ և ՀԳԲ բիրեղէն «շատ» (համանուն): *Ընծայս մատոյց սրբազան փափին... զճրագարանս երկու գարեպարեայս և գերկու բիրեղէն բաժակս (Ստ. Ռօշքայ, 189):*

ԲԼԲԿԵԱԼ, ա. Փլփլուած, խարխուլ: *Թէ ուրեք գոյր ես, եւ այն ես ան-*

շուք եւ անճահ եկեղեցի անուան՝ խրթին եւ նսեմ, խարխալեալ եւ բլբկեալ (Դարիժ., 229): Շինուածք տանցն եւ յարկացն խարխալեալ եւ բլբկեալ [էին], եւ դիրք շինուածոցն յոռի եւ անպիտան (Դարիժ., 281):

ԲԼԵԼ, չբ. Փլչել, փլուզուել: ՄՀԲ բլանիլ «փոլ գալ», ՀԲԲ բլել «տէս բլչել, փլչել»: *Բագում տունք խախտեցան ի քաղաքն և սակաւք բլան, մինչ զի և միջին դուռն քաղաքին ևս խախտեցաւ (Դիւան ժ, 121): Եղեւ շարժ ահագին ի քաղաքն էրեւան... եւ կամուրճ, որ ի վերայ Հուրաստան գետոյ, բլաւ (Մժ I, 311): Քաղաքն առհասարակ բլաւ (Ժամ. Պող., 278): Ընդ իշանել բագմօրեայ անձրեւոյ... տանիք մի եւս բլաւ բովանդակ (Ագուլ. կոնդ., 92):*

ԲԼՐԱՅԵԱԼ, ա. Բլուր դարձած կուտակուած: *Տարակուսէին վասն հողոյն եւ մոխրոյն, որ բլրացեալ կայր շուրջանակի (Դարիժ., 252):*

ԲՂԶՄՈՒՆՔ, գ. Պղպշալը (ջրի), պնպնում: *Այլք վերացեալ որպէս շուր՝ գհուրն հեղուին ի վերայ մարդկանց, եւ յալոց հնչմունք, բղբշմունք ելանէին (Միմ. Լեհ., 167):*

ԲՂԻՆՁԵՂԷՆ, գ. Պղինձեղէն, պղնձէ ապրամբներ: *Այդ ժբ գեղում դաւար... շորեղէն, բղինձեղէն, արծաթեղէն, արկաթեղէն, չալթուք չի մնացել (Եզով, 415):*

ԲՆԱԳՐԱՐԱՆ, գ. Բնագիր, բնօրինակ: *Եցոյց ինձ Մօնսինեօն Պալտէսքի՝ խորհրդունակ սրբազանի համագումարին զսերեցմանէ հա-*

ւատոյ (*de Propagande fide*), ի բնագրարանում նորա (Կամենից, 128):

ԲՆԱԶԳԻՅԻԿ, ա. Բնական, բնատուր: *Բնազդեցիկ շարժմամբ մերով, հասուն գիտութեամբ և լիագոր բացարձակ իշխանութեամբ տնօրինեմք յամենայնի (Ռեդուր., 254):*

ԲՆԱԶՆՆՈՒԹԻՒՆ, գ. Բնագիտութիւն: Յովհաննէս Յակոբեան Կոստանդինուպոլսեցի... թարգմանեաց զճարտասանութիւն, զՉեռագննութիւն, զԲնագննութիւն (Ստ. Ռօշքայ, 187):

ԲՆԱՄԱՄԾ, ա. Բնական, իրական, հարազատ: Բայց հայցեմ ի բնամած գիտյ քո և յանդատին գորովոյդ (Իիւ. Ս. Յակ., 1932, 279): *Բնամած սիրով և գիտով իմս մեղապարտի՝ եղիազար կաթողիկոսի (Իիւ. Ս. Յակ., 1941, 126):*

ԲՆԱՇԷՆ, ա. Շէն, փարթամ: Քաղաքս Կամենից բնաշէն, որ նորոգ յայնժամ գտեալ էր ի Ռուզաց երկրիս (Ստ. Ռօշքայ, 196):

ԲՆԱՔԱՐ, գ. Բնական քար՝ սահման, բնասահման: Տաշտայձորի ճալի հողն գնեցինք, որ մին ափն ջուրն, մին ափն վէրի բնաքարն, որ մէջն Ե արավար այ լաւ գովթանի (Սանահն., 167):

ԲՆՈՒԹԵՆԱԿԱՆ, ա. Բնութիւնից տրուած, մարմնատուր: Ի մոլութեանց բնութենականաց առաւել զգուշանալ պարտ է, քան թէ ի բարոյականաց (Նոր. ծաղ., 233):

ԲՆՏԲԵԼ, նր. Փնտրել: ՄՀԲ բնտուել «փնտրել, որոնել»: *Յանկարծակի եղև կորած, Հնդ որ բնտրեցաք, չերևաց (ՌԻՄՀԲ, 192):*

ԲՇԺԿԱՆՄԱՆ, ա. Բժշկի նման: Աստուածանման խնամարկելով, Բժշկանման ողջացնելով, Գետոց նման ոռոգելով, Գիտողանման ակնարկելով (Առ էջմ., 194):

ԲՇԻԺԿ, գ. Բժիշկ (դրափոխ.): Անտրիգոնոս բշիժկ առաքեաց եւ թունաւոր դեղովք սատակեցին զնա (ՄԺ II, 311):

ԲՈՒԱԻՐԷԱՆՔ, մկ. Բոլորը, ամենը միասին՝ միատեղ: *Չեր ամեն գեղի բոլարէանքովդ տվինք Սանահնու Սուրբ Աստուածածնին, որ ձեր ամէն հասք ու իրաւունք, ձեր անթերի պտուղն, սրբայրամն... տվէք Տէր Բարսեղ արհեպիսկոպոսին (Սանահն., 84):*

ԲՈՒՈՐԱԳԵՐԾ, ա. Բոլորովին՝ ամբողջովին գերծուած, ածիլուած: Աք գերծ «ածիլած»: *Զիարդ հերք գլխոյ քոյ են այգպէս բոլորագերծք և ոլորունք (Նոր. ծաղ., 159):*

ԲՈՒՈՐԱՄՐՈՐԻՍ, ա. Մեծ՝ լայն մօրուով: *Քանզի էր հայրն մեր Գէորդ անձամբն երկայն եւ լայն, կարմիր երես եւ երկայնաքիթ, ճաղատ եւ բոլորամօրուս (ՄԺ I, 249):*

ԲՈՒՈՐԱՊԱՏ, ա. Բոլորին պատող՝ պարունակող: ՄՀԲ բոլորոպատել «ըջապատել»: *Պարզ էութիւն ինքն Աստուած, որ բոլորապատ ի մէջ իւր զամենայն էական ստեղծուածքն (Տէֆթ., 379):*

ԲՈՂՈՐԱՊԱՐ, ա. Բոլորապառույտ, շրջանաձև: Որք ի միասին բոլորապար պարուք խրատողօք (Կամենից, 262):

ԲՈՂՈՐՈՎԱԳՈՒՆԳ, գ. Գլորուս, նակ՝ կիսագունդ: Կենամաշ աշխատութեամբ ի բազում ժամանակաց հետեւեալ արարի զերկնային և զերկրային բոլորովագունդս (Տէֆթ., 380):

ԲՈՂՈՐՈՎԻ, մկ. Բոլոր, ամբողջովին: Աք և ՀԲԲ ունեն բոլորովիմբ կամ բոլորովին նոյն նշ: Շրջակայ եւ բոլորովի գորականք (Կամենից, 50):

ԲՈՂՈՐՁՈՎ (լեհ. bolpochek «տակառ»), գ. Չափի միավոր, կոտ: Բագում գանձք խոստացաւ նոցա... գոր ոմանք ասէին երկու բոլորչօք կարմիր ֆլորի (Կամենից, 61):

ԲՈՎԱՆԱՅ (վրաց. bogana, bogano), գ. Ընչագուրկ, եկուոր: Մեք՝ Սամձէրէցիքս, գիր տվինք Սանահնու Բարսեղ եպիսկոպոսին, որ տուն Դուր մաշակ գնաք թէ բովանայ կայ, թէ բունիաթ տուն Ե Կոնայ սար ի վէց չափ քաղցու (Սանահն., 158):

ԲՈՆԲԻԻՆՔ, գ. Թնդիւն, բումբիւն: Ի Հոսմայ երևեցան ի յօդս բագում բագինք... լսելի լինէին ճայթմունք և բոնբիւն գարհորելիք (ՄԺ I, 275):

ԲՈՎՐ, ա. Արգաւանդ: ՄՀԲ բովր «վաւաշոտ, շուայտ» (իմաստափոխ.): Իմ կամաւ և ուժար սրտիւ Ունակայ իմ ծիլ բովր հողն տվի Բարսեղ եպիսկոպոսին (Սանահն., 176):

ԲՈՅԵՂԷՆ, գ. Բոցանիք՝ հրագէն, հմմտ. ՍՐԵՂԷՆ: Աք և ՀԲԲ ունեն բոցեղէն «բոցից շինուած, հրեղէն, լուսատր» (իմաստափոխ.): Կայսր ետ նմա ոչ բագում ինչ գորս... և թէ բոցեղէն, և թէ սրեղէն (Կամենից, 19):

ԲՈՒՌ, գ. Փող, շեփոր, տէն նակ ՊՕՌՕՉԱՆ: Այս է գենաթն... ԻԳ խաշալամով, Լ դապուշխանայ թրէմպէթով, նաֆիրով, բուտով (Յ. Թութունջ., 308):

ԲՈՒՌՎԱՌ,

ԲՈՒՌՎԱՐ, գ. Բուրվառ, տէն նակ ՓՈՒՌՎԱՌ: Աւագ խորանն կու դնեն երկու սարկաւազ բուռվառով (Ջուար, 1867, 205): Եւ ամենայն կղերիկոսօք, ջահիւք եւ լապտերօք, բուռվառօք եւ խաշալամով, խնկօք եւ մոմեղինօք դէմ գնան: Լուցեալ ջահս, լապտերս, խաշիւ եւ խաշալամով եւ բուռվարով եւ ամենայն զարդիւք (Սիմ. Լեհ., 255):

ԲՈՒՍԱՇՈՒ, գ. Բուսած՝ բնական, անտաշ: Եւ էին բուսածու վէմք մեծամեծք, որ եւ տներն ամէն ի վիմէ կոփած էր (Սիմ. Լեհ., 7):

ԲՈՒՍՈՎԻ, ա. Անովի, ընդաբոյս: ՄՀԲ բուսանովի «բնածին»: Ա որպէս նոխուտ և բակլայ և Ա որպէս ձնէբեկ բուտովի ի մէջ դամիշի (Յ. Թութունջ., 303):

ԲՈՒՐԿՐԱԹՕՌ (լատ. procurator, իտալ. procuratore «հսկող, վարող, միապետի շահոյթը վերահսկող»), գ. Վերակացու, դատախագ: Պարտին իմ գոմարքն և բուրկրաթօներն իմ ինթրաթի ըս-

տըկէն շինել զպակասութիւն աւերման տանն այն (Հայ-Վենետ, 482):

ԲՌԱՄԱԾ, ա. Ծեփուած, ձեփածոյ: Յոլովատածան կրիւք նորոգեցաք վերստին ապառաժ և անհեթեթ վիճօք և բռամած պնդութեամբ (Սանահն., 119):

ԲՌԱՄԲ, մկ. Բռնի ուժով: Յայնժամ սորա տիրելոց են բռամբ ի քաղաքս նոցին (Գիւան Մխիթ., 51):

ԲՌՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. Բռնութիւն, չարութիւն: Փրկագործ չարչարանօք Կենարարին ազատեցաւ ազգ մարդկային ի բռնաբերութենէ Բելիարայ (Գիւան Ն. Ջող., 109):

ԲՌՆԱԳԼՈՒՆ, ա. Գլուխը բարձր բռնած՝ գոռոզ: Այլ եւ կուռէճ խանս էր այր գոռոզ եւ բռնագլուխ, այլ եւ կուռէճ ընդ քրիստոնէից (Կարիժ., 277):

ԲՌՆԱՅՈՐ, գ. Բռնատը՝ բռնակալ: Բագոսմ նեղութիւն ունիմք ի մէջ բռնայորացս սակս անցիցն առաջնաւորացն (Եզով, 140):

ԲՌՆԵՏԳ, գ. Բռնատեղ՝ կոթ: Ն. Բիւզ. ունի բռնատեղ՝ առանց մեկն.: Բռնեաղ - ոսմկօրէն՝ կոթ (Վ. Յուն., 19):

ԲՏՈՒԵԼ, նբ. Փնտրել: Յետոյ կաթէն զիս բռուեցին գտան (Պօղ. նամ., 91):

ԲՐԳՎԱՍ (նուսին. parcalab «գրկեակի կառավարիչ»), գ. Բերդապահ, տուեալ շրջանի ղեկավարը, տե՛ս նաև **ՊՌԿԱՍ**: Ի շաբաթ օրն եկն չափուշ մի, եւ ընդ նմա մեծաւոր Պողոտանցի մի որ բրգալապ կոչիր. ուստի ետուն

զբերդն խոթինու ի ձեռս նոցա (Պատմ. խոթ., 68):

ԲՐԿԱՌԱՓ, ա. Թափուած բուրդով: Ընդէր են այդպէս բրգաթափք գաւակք դոցա, վասն զի յոյժ յամերք են ի գնալ, ուստի ի պատճառս բազմաց ձաղից թօթափեցան հերքն (Նոր. ծաղ., 128):

ԲՐԻՎԻԼԵԿ, ԲՐԻՎԻԼԵԿՈՍ (լատ. privileg), գ. Արտոնութիւն: ՄՀԲ բրիվիլեայ նոյն նշ.: Հայք Կամենիցացիք յայսմ ամի սկսան ի ձեռն բրիվիլեկաց թագատրացն Լեհաց (Կամենից, 133): Իբրև գամս երիս յամեցեալ վասն ընդունելոյ գրբիվիլեկոս ի կայսերէն հաստատելոյ զազատութիւն նորաշէն քաղաքին Շամուշուվարի (Կեռլայ), որ այժմ Հայաքաղաք կոչի (Ստ. Ռօշքայ, 198): Կարոս կայսրն... շնորհեաց գրբիվիլեկոս և զիշխանութիւն, որ էր Շամուշուվար՝ փոխեալ կոչեաց Հայաքաղաք Armenopolis (Ստ. Ռօշքայ, 200):

ԲՐԾԱՆ, չբ. Պրծան՝ ազատուեցին: Մէկ ճժ մարդ փախան բրծան (Եզով, 419):

ԲՐՀԱՐ, գ. (բբբ.) Ջրուղի, առու, քերես քիւր+հար(ել), որ պիտի հասկանալ փորուած, փխրեցուած վայր, հերկած, հերկ (ծան. հրատ.): Այլվի յետ տվինք յիգայտեղն իր Դ կոպարովն, մեր ճանճանոցովն, իւր բրհարովն (Սանահն., 140): Մեր որդովքս առանք պարոնտէր Սարգսիցն Քարատակի այգին իր ընձանովն... իւր բրհարովն (Սանահն., 142):

ԲՐՆԾԱՀԱՆ, գ. Բրինձը թեփից գա-
տող գործիք: Ն. Բիլզ. *Բրնձահանք*
«Բրնձաղաց»: *Ի վերայ այսմ ջրոյ*
շինեաց զջրաղացս եւ բրնձահանս
եւ արար ծով եւ ելից ձկամբ (Ջաք.

Բ, ԼԵ): Շինեաց Ա բրնձահան, Բ
ջրաղաց ի Փարպի (Ջաք. Գ, 28):
ԲՕԱՆԱՒԱ, շք. Առատանալ, շատա-
նալ: *Ես Ջաքարիայ որ այսօր գա-*
տիկ արարի, միսն, իւղն խիստ էր
մինչի մայիսի Ի, ապայ բօլացաւ
(Չ. Ագուլ., 129):

-Գ-

ԳԱԲԵՂԱՆ (իտալ. cappellano), գ.
Հոգեւորականի օգնական, զօրքի
սպասաւոր հոգեւորական: *Առնէ*
զնա պաղատան իւրոյ երէց, որ կո-
չի գաբէլլան, և յետոյ կանոնիկոս
նոյն եկեղեցւոյ (Ստ. Ռօշքայ, 188):

ԳԱԲԻՅԻԱ, գ. Մի պաշտօնեայ՝
ըստ իմաստի: *Ի գեղջէն Օրմեանին*
կոչեցելոյ, զոր այժմ եգուիդայքն
ունին, ի գրոց գաբլիցիային, քա-
ղաքս այս եկին ազգն մեր բնակիլ
(Ստ. Ռօշքայ, 196):

ԳԱԶԱՆԱՄՈՐԹ, ա. Գազանի մոր-
թոց պատրաստում: Բայց ի գօ-
րաց Լեհացն գնացին ուղարկել
զդեսպանան երկու հարիւր հեծեալք,
զարդարեալ ազգի ազգի ճոխու-
թեամբ եւ վայելչատեսիլ գազանա-
մորթ վերարկուօք (Պատմ. Խոթ.,
65):

ԳԱՂԻՆՔ, գ. Կարլինական, տե՛ս
ԿԱՂՈՒԻՆՔ: Լուաք ի բազմաց, թէ
յերկիրն Ֆրանսացւոց են հերձուա-
ծողք լութերականք եւ գալլինք
(Դաւան., 113):

ԳԱՀՐԻՉ, գ. Ջրանցի: *Ամրախիճ*
կրօք շինեցին և գահրիզի առաջի
ձորի բանտն (ամբարտակ, պատ-
նեշ), որ գահրիզի ջուրն անց են
կացուցել, անտի մինչև ի դուռն
Սուրբ եկեղեցւոյս (Ակոռ., 198):

ԳԱՂԱՅՓԱՌ, գ. Գաղափար: Գա-
ղայփառ թուղթին հայոց առ թա-
գաւորն Ֆրանց (Դաւան., 122):

ԳԱՂԳԵԼ*, նբ. Ջնջել: ՀԲԲ գաղել
«թախցնել, ծածկել, պահել»: *Գաղ-*
գել - ջնջել, հարկանել, շարշարել,
ջնել (ՄՄ 2281, 126ա):

ԳԱՂԵԼ, շք. Թախցնել: ՄՀԲ գաղտել
«թախցնել, պահել, ծածկել»: *Ի մէջ*
մացառացն խտից կրկգեալք գաղե-
ցաք (Կամենից, 149):

ԳԱՂՈՒՍՏ, ա. Գաղտնի, գաղուստ
առնել՝ «թախուն պահել»: *Իւրա-*
քանչիւր ոք պահելով թաքուստ եւ
գաղուստ արարեալ ի յարկս եւ ի
խորս եւ ի վիհս եւ ի պատշաճաւոր
տեղիս (Դարիժ., 398):

ԳԱՂՋՄԷՉ, ա. Տախուկ, գոյ: Ըստ
պիտոյից գաղջմէջ եւ ջերման, Ջո-
վանալ եւ ջերմանալ (Քէօմ., 23):

ԳԱՂՋՕՐԷՆ (հայ. գաղջ «եղկ, գոլ» բառից), ա. Ոչ ջերմ և ոչ սառն՝ անտարբեր (խօսել): Այսպէս գաղջօրէն, մանաւանդ թէ ցրտաբար խօսէր, մինչ զարմանալ իմ (Կամենից, 155):

ԳԱՅԹԱԳՂՈՍ,

ԳԱՅԹԱԿՂՈՍ, գ. Գայթակղեցնող (բոխղ. կաթողիկոս-գայթակղոս): Անիրաւ և անողորմ և յանաստուած յԱկօբ գայթակղոսն բազում կերպիւ նեղույթիւնս արար սորա (Դիւ. Ս. Յակ., 1940, 203): Ժողովն այն ասացեալ է ի յայն բանադրանաց գրին մէջ, թէ ոչ կոչեսցի կաթողիկոս, այլ գայթակղոս (Դիւան Մխիթ., 129):

ԳԱՅԹ Ի **ԳԱՅԹ**, մկ. Կաղալով: Աբ գայթ ի գայթ, գայթ ի գայթի «թոյլ, անհաստատ» (իմաստափոխ.): Գայթ ի գայթ - կաղ ի կաղ (ՄՄ 1528, 1ա):

ԳԱՅԼԱՍՍԱՐԱՍ, ա. Գայլի նմանութեամբ, գայլակերպ, փխբ. դաժան, սարաս բղղչ. համար տէս **ԱՂԲԻԻՐԱՍՍԱՐԱՍ**: Զրկումն դոցին եւ անիրաւույթիւն գայլասարաս հովուին (Կամենից, 248):

ԳԱՅԼԱՍԱՐ, ա. Գայլի տարած: ՈՒնի Ն. Բիւզ. առանց մեկն.: Այնմ ժամանակեան գայլատար մանկանցն բազումք գոն այժմ, որք եղեալք են արք կատարեալք (Դաւրիժ., 111):

ԳԱՅԼԱՔԱՏԱԿ (հայ. գայլ և փտակ «նմանութիւն, օրինակ»), ա. Գայլի նման, գայլատեսակ,

փխբ. գազանաբարոյ: Ոչ է տուեալ թոյլ գայլաբարտակ հովուին գիշատել զգոսա (Կամենից, 248):

ԳԱՆԱՂՕԲԱՅ (վրաց. ganaqopi «քաժանուածք, դրացի»), գ. Բաժնեմաս, հարևան: Ես՝ Շանշի որդի պարոն Գօրգիս... գանաղօբերս՝ էստատէս, Դարիսպանս, մեր Սամծերու յայգին տվինք վախմ Սանահնու Սուրբ Աստուածածնին (Սանահն., 150):

ԳԱՆԹԵՂ, գ. Կանթեղ: Ազիզբէկն և Գիրակոսն բերին... մէկ արծաթէ գանթեղ (Ակոռ., 203):

ԳԱՆՁԱՆԱԿԱՆ, ա. Գանձանակին տրուող, նուիրատուական: Տուեալ էք նմա... զհոգեկան տուրան ձեր՝ զնուիրակականն, զհոգեբաժնականն, զգանձանականն եւ զայս յայսպիսիս (Ագուլ. կոնդ., 108):

ԳԱՇԴԱԼԱՆ (գերմ. kastellan), գ. Բերդապահ, տէս նաև **ՔԱՇԴԱԼԱՆ**: Յայնժամ մեծ գաշդալան Բոլոցքին եւ հսկայագինն Շենեաւքին... հրամանաւ մեծ զօրաւարին ելանեն խոյեան մարտի (Պատմ. հոթ., 52): Գաշդալանն Բոլոցքի հետամղեալ բարկութեամբ մեծաւ եւ քաջապէս մարտուցեալ դարձուցանէր զձախ թեւ գնդին (Պատմ. հոթ., 53): Ընդ նմա առաքեն զդեսպանս քրիստոնէից զգաշդալան բան Պլզեցքին (Պատմ. հոթ., 65):

ԳԱՋԵԼ, չբ. Գաջով պատել: Թվին Ռձլն մայիսի Ի-ումն ըսկիսքն արին այս եկեղեցիս գաջելու: Գաջեցին, ծաղկեցին, հոքսեմբերի լԱ-ումն հրաշալի օրհնեցին (Զ. Ագուլ., 65):

ԳԱՐՆԱՎԱԼ (գերմ. Karneval, լեհ. karnawał), գ. Տօմահանդէս, դիմակահանդէս: *Եւ ի Գարնավալն, որ է մեծ Բարեկենդանք, զայն երկու շաբաթ ամէն օր մէկ խաղ մի եւ շատլիս կառնեն (Միմ. Լեհ., 159):*

ԳԱՐՇԱԿ, ա. **Գարշակ** - աղտեղի (ՄՄ 2019, 178ա):

ԳԱՐՇԱՏԵՍ, ա. Գարշադէմ, տգեղ: ՀԲԲ և ԱԲ ունեն գարշատեսակ, գարշատեսիլ «գարշելի՝ զգուելի տեսնով»: *Եւ շարշու մի կար մեծ հաւուզ, եւ բոլորն ազգ եւ ազգ ահագնատեսիլ մարդիք եւ գարշատես պառաւք (Միմ. Լեհ., 132):*

ԳԲԱՊԵՂ, ա. գ. Գոսք՝ փոս փոռող, որոնող: *Գբապեղքն անկանելոց են ի խորխորատ ըստ սաղմոսին (Դիւան Մխիթ., 56):*

ԳԵԼԱԳԱՐ, ա. Անմիտ, խենթ: *Շամբուշ - խաւ, մորոս, գելագար (ՄՄ 2019, 168ա):*

ԳԵՂԱՉԱՆՈՒԹԻՒՆ, գ. Կատակերգութիւն: *Զաւեշտարար, կատակերգ կամ գեղազանութիւն (ՄՄ 2019, 172ա):*

ԳԵՂԱԿԱՆ, գ. Գյուղաբնակ, տես ԳիտիՂԱԿԱՆ:

ԳԵՂԱԿԻՑ, գ. Համագիւղացի: *Հոգեւոր եղբայրն իմ Յովհաննէս վարդապետն գեյթուցի գեղակիցն իմ (Յիշ. Ուլն., 293):*

ԳԵՂԳԵՂԷՇ, ա. Գեղանի: ԱԲ գեղեղէշ «սիրուն»: *Գեղգեղէշ - հրաշագեղ (ՄՄ 2019, 184բ):*

ԳԵՂԵՑԿԱԳՈՎ, ա. Գեղեցիկ՝ գովելու արժանի: *Կարմրագգեստ գե-*

ղեցկագով սուրբ տաճար (Գալ. Կենս., 153):

ԳԵՂԵՑԿԱՅԱՐԿ, ա. Գեղեցիկ յարկ ունեցող, հոյակերտ: *Վերբատին շինեաց գեկեղեցին գեղեցկայարկ շինուածով եւ եդ անդ զմարմին սուրբ կուսին (ՄԺ II, 359):*

ԳԵՂԵՑԿԱՅՈՐԻՆԵԱԼ, ա. Գեղեցիկ կերպով յօրինուած: *Վերստին նորոգեցաւ Սբ. Խաչ վանքս գեղեցկայօրինեալ (ԳՀՎ VII, 105):*

ԳԵՂՈՒԳԵՂ, մկ. Գիւղովի, ողջ գիւղ(եր)ով: *Մէկ Բ օր տեսանք միաքններն ծուռ... ղոնաղ արինք, գեղուգեղ թամամ կոտորեցինք (եգով, 420):*

ԳԵՂՁՈՒԿ, գ. Գիւղ (նուագ.), գիւղակ: ՀԲԲ և ԱԲ և այլոս՝ *գեղջուկ «գյուղացի, ուսմկական» (համանուն): Երկուշաբթին յայն կոյս անցեալ մտաք ի գեղջուկ մի Միշին անուն (Միմ. Լեհ., 6):*

ԳԵՏՅԱՐՈՒՑ, գ. Զրհեղեղ, բոց. գետի յարուցում՝ մակարդակի բարձրացում: *Յայսմ ամին մեծ գետյարուց եղև, զոր քաղաքին զխապախներն կոտորեց (Կամենից, 39): Դարձեալ ի սոյն ամին մեծ գետյարուց եղև ի Կամինիցս (Կամենից, 55): Մեծ գետյարուց եղաւ... զջրաղաշներն աւերեց, զի հաց անկամ ոչ գտանէին (Կամենից, 62):*

ԳԵՐԱՐՆԱԿԱՆ, ա. Գերբնական: ԱԲ *գերաբնակ «երկինք բնակուող»:* Բան մարդոյ է կատարեալ ըստ երկուց յեղանակաց, այսինքն՝ բնական կատարելութեամբ եւ գերա-

- բնական կատարելութեամբ (ՄՄ 1756, 31ա):*
- ԳԵՐԱԶԻԱՐՃ**, ա. Գերագոյն զուարեանք բերող, գերապայծառ: *Ի քեզ դիմեմ, գերազարճ կոյս / Գերազարճ կոյս, այց արա՛ խղճոյս (Գալ. Կենս., 157):*
- ԳԵՐԱԹԻԻ**, ա. Գերագոյն, գերադաս: *Համապատիւ և գերաթիւ երջանկագգի և քրիստոսընկալ դասուող, որք գերկնաւորական տպաւորութիւնն որ ի Քրիստոսէ Փրկչէ... ունիք (Ոսկ. նամ., 1967, 134):*
- ԳԵՐԱԿԱՆ**, ա. Գերագոյն: *Պատրիարք գերական սրբոյ և մեծի աթոռոյս Գանձասարայ (եզով, 315):*
- ԳԵՐԱՅԱԿՆ**, ա. Յանկալի: *Գեղապանձ - գերայան, ուրճանակ, հաճելի, գերամիտ, կատարուն (ՄՄ 2019, 166ա):*
- ԳԵՐԱԲՈՒՆ**, ա. Գերյագեցած, պայծառագոյն: *Իսկական գերարբուն լուսոյն անթարգման (ՈՒՄՇԲ II, 202):*
- ԳԵՐԸՆԹԱՅ**, գ. Ուղիղ՝ նշմարիա ընթացի: *Բայց մեք չեանեալ ի նոցունց գերընթաց շաւղաց, գտաք պարտեալ ընդդիմամարտէն ի բազում նուագս (Գիւ. Ս. Յակ., 1941, 126):*
- ԳԵՐԾՆՈՒԿ**, նբ. Քերտել՝ մաքրել, ածիլել: *ԱԲ ունի գերծել/գերծուլ «ածիլել»: Նաև գմորունս գերծնուլ ըստ նագարեցուցն, որ յարեւմուտս մնաց (Թօշքայ, 10):*
- ԳԵՐՄԱՅՐՈՒԿ**, 1. Մաքս, 2. Մաքսատուն, հմմտ. **ԳՕՄՐՈՒԿՁԻ**: *Իւր երկիրն է խիստ ազալաթ, որ ոչ գող*

- կայ և ոչ բող, և երկիրն բնաւ գերմայրուկ չկայ (Յ. Թովթունջ., 310):*
- ԳԵՐՕՐՀՆԵԱԿ**, ա. Ամենաօրհնեալ: *Յիշատակ է Ակնցի Յովհաննէսի որդի գերօրհնեալ մահտեսի եաղուպ աղային (Աղան. Միաբանք, 117):*
- ԳԶՐԵԼ**, նբ. Զննել: *ՀԲԲ գգրել «գործած յանցանքի վրայ մտածելով արիւտսալ, ապաշաւել» (իմաստարիւն): Գգրել - հայցել, զննել, կրկաւել (ՄՄ 2281, 125բ):*
- ԳԷՆԳԷՇ ԱՆԵԼ** (թուրք. yigis «ժողով») բառից), հրդ. ժողով անել (ժան. հրատ.): *Գ ազգ՝ նողայ, չըղաթայ, թաթար ելան, Խրիմէն գնացին, Գ-ըն մէկ տեղ եկան գէնգէշ արին (ՄԺ I, 222):*
- ԳԸՌԳԸՌՈՒՆ**, գ. ա. Գոգոց, գլոտոց: *Զան խիստ չիլի, քամի և գրոգրոուն շատ լինի (Բունիաթ, 93):*
- ԳԹԱՇԱՏ**, ա. Գթառատ, գթասիրտ: *Գիրս այս հասեալ է գթաշատ հօրն իմոյ (Պօղ. նամ., 93):*
- ԳԹԱՇԱՐԺՈՒԹԻԻՆ**, գ. Գութը շարժելը, կարեկցանք: *Ընծայեալ մատուցի թուղթն այս մաղթանաց և խնդրուածոց, գթաշարժութեան և ողորմարկութեան (Ղուկ. նամ., 117):*
- ԳԹՆՈՒԿ**, նբ. Գտնել: *Մորմոքահար կու գան, մէկ սարանջամ չեն կարեր գթնուլ (Գիւան Ն. Զուղ., 50):*
- ԳԺԵՆՅ**, **ԳԺՕՆԾ**, (լեհ. ksiadz), գ. Հոգևորական, քահանայ: *Ի Կամենից քաղաք նոր եպիսկոպոս նստաւ, անուն գժենց Մարցին (Կամենից, 50):* *Հանգեաւ առ Աստուած Կամեն*

նից քաղաքիս Ֆռանգի եպիսկոպոսն գժճնձ Տեւուշ Սեցենովաքից (Կամենից, 47):

ԳԻՁ, գ. Հայ գէլգ «արատ, բիծ, սպի» բառից: Փանճակուշտ և քազմազու և քասնի և գիգ գրջէ ի քացախն և ի վրա փայծղան դիր՝ օգտէ (Բունիաթ, 98):

ԳԻՆԱՆՄԻՆ, գ. Գինեխմութիւն, հարբեցութիւն: Ն. Բիւզ. ունի գինեխմութիւն առանց մեկն., ՄՀԲ գինեխմել «հարբել»: Յետով այս շխալիսլամս ընկաւ գինախմիլ, լաւանդութիւն անիլ (Չ. Ագուլ., 145):

ԳԻՆԵՐԲՈՒԹԻՒՆ, ա. Գինարբու, խրախնամ: Սեղանք նոցա յամենայն աւուր ոչ էր առանց գինուց, եւ ծախք նոցա ոչ թէ սակաւ, եւ ծամանակ գիներբութեանն միշտ (Դարիժ., 197):

ԳԻՆ ՏԱԼ, հրդ. վճարել, համարժէք գինը տալ: Քարատակի այգին... իւր բրնարովն առանք ու գին տվինք Դարպասի սինուռումն Գ հող՝ Մարգարի բարձհողն (Սանահն., 142):

ԳԻՇԵԼ, նբ. Քշել: Ետ այնորիկ Շահինքէրայ ելաւ գնաց, թէ սէֆէր կերթամ, գնաց եւ բազում նողայ գիշեց ի ներս իբեր (ՄԺ I, 213):

ԳԻՇԵՐԱՎԱՆ, գ. Գիշերուայ վախ: Ոսկէ քարն, որ է թիլայ, ով ոք որ ի հետն վերցնէ, գիշերավախ եւ յերազոյ անհոգ կենայ (Դարիժ., 444):

ԳԻՇՈՒ ՈՐԳԻ, գ. Գէշ՝ վատ մարդու որդի: Գիշու որդի չՋաքարիայն, որ վանայ դօրուաթաւորքն գինքն ի վա-

րագայ արսորեալ հալածեցին (Թորոս աղբար, 288): Ջայն գիշու որդին չՋաքարիան (Գալ. Կենս., 49):

ԳԻՐԳ, գ. Գիրք: Մին գրգում տէսայ, թէ թվին ՌՂԱ-ունն փոքր Շահաբաս Ըսպհան թախտ նստաւ թագաւոր (Չ. Ագուլ., 109):

ԳԻՐ ՈՒՆՏԻ, հրդ. Դաշնագիր: Այս գիր ուխտի հաստատութեան եղև ի քաղաք Ալասա... ի մէջ հոգետան (Գիւան Ս. Յակոբայ, 1941, 127):

ԳԻՐ ՏԱԼ, հրդ. Ստորագրել՝ համաձայնութիւն տալ: Միաբանքս մեզ հէնց գիր տվին, որ մեզանէ էլ բազմական (խնջոյքների, հաւաքոյթների համար տրուելիք հարկ) շուգեն (Սանահն., 136): Ես՝ Մարկոս էրէցս Յոփըցի, գիր տվի Սանահնու Սուրբ Աստուածածնի դռանն Ղուկաս եպիսկոպոսի առաջնորդութեանովն (Սանահն., 139):

ԳԻՐՔԱԿԱԼ, գ. Գրակալ: Տէր Յոհան և իւր հայր Գրիգորն ետուն մէկ Յիսուս Որդի, մէկ Ջայնաւոր գիրք, մէկ գիրքակալի շապիկ (Ակոռ., 208):

ԳԻՒԳԻՒՇ (հունգ. kotes «կապ»), գ. Հանգոյց (հագուստի): Ամենեւին մէկ հագըսդէղէնուն վերայ արծըթէ ոսգու զարդարանքներ չի գըտվի, ոչ գիւղիւշ, ոչ չիբգայ, ոչ բօռդիշբան, ոչ բասամանդ, ոչ Ֆրանձըլ (Գովր., 45):

ԳԻՒՂԱԿԱՆ, գ. Գիւղացի, գիւղաբնակ, հմմտ. ԲԵՐԳԱԿԱՆ: ՀԲԲ գեղական «գիւղական», ՄՀԲ գիւղական «գիւղի հարկահամ պաշտօնեայ» (իմաստափոխ.): Ընդ գոեհկաց և գիւղականաց պարտ է խօսիլ

զսերմանելոյ, զփորելոյ և զհերկելոյ զերկիր, գտնկելոյ զծառս (Նոր. ծաղ., 196): Որք շինականք էին ևս **գեղականք**, ի շրջակայ գաւառսն քաղաքին Սպահանու բնակեցուցին (Դարիժ., 82):

ԳԻԻՂԻԿ, ա. Գիւլ (փղջ): ԱՖ գիւղակ նոյն նշ.: Եկեալ հասար ի Յործանք աստուածախառն **գիւղիկ** (Յ. Կորոտ, 206):

ԳԼՍԱԴԻՐ, ա. Այն վայրը և արբատեղին Երուսաղէմի հայոց Ս. Յակոբ մայրավանքում, ուր թաղուած է Ս. Յակոբ Առաքեալի գլուխը: Այս է Ակոբ առաքելոյ **Գլխադիր** (Աղան. Միաբանք, 165): Առաւօտու պատարագն **Գլխադիրն** եղև (Զուար, 1869, 178):

ԳԼՍԱՎԵՐ, մկ. Վերին, վերելի: Մեր յօժար սրտիւ ծախեցինք հէշերկուտի փոսի **գլխավէր** հողն ի վերայ Բարսեղ պարոնտէրին (Սանահն., 227):

ԳՂՈՒՆԲԱՅ, ա. մկ. Գլուխը բաց: ՄՀՖ գլուխ ի բաց նոյն նշ.: Հայ ու հոռոմ ու խաշապաշտ՝ ամէնն բուկիկ ու **գլուխբաց** (ՈՒՄՀԲ, 357):

ԳՂՈՒՆ-ՔԱՂԱՔ, գ. Գլխաւոր քաղաք մայրաքաղաք: Միայն ի գլուխ-քաղաքսն ունին սակաւ մի անդորրովիւն և հանգստութիւն, որպէս Հալապ, Ստամբուլ և այլ այլապիսիք (Միմ. Լեհ., 272):

ԳՂՈՒՆ ՔԱՇԵԼ, հրդ. Գլուխ բարձրացնել՝ ծառանալ: Թվին ՋՀՁ Տաւրիու Հոռոմն **գլուխ քաշեց** (ՄԺ II, 266): Ի ՌԷԴ թուին Օսման փաշան առաւ զՇրուան, որ է Աղուանք, և յետ հինգ ամի քուրտն **գլուխ քա-**

շեց եկեալ յեզնկայն (ՄԺ II, 394): Թուին ՋՀՁ Տաւրիու հոռոմքն **գլուխ քաշեցին**, և Հուսէյն փաշայն ի վերայ գնաց զհոռոմքն ջարդեաց և գերեաց (Դարիժ., 474): Յայսմի ամի քուրթն **գլուխ քաշեց** և եկն Եզրնկէն (Ժամ. Պող., 278)

ԳՄՈՂ, գ. Հեղինակ, գրող, կազմող: Ն. Բիւզ. գծողիկ «գրողիկ, գրչակ», ՄՀՖ գծող «գրիչ», ՀԳՖ գծողակ նոյն նշ.: Պարտ է մեզ՝ **գծողացս**, սակաւ մի ճառել զպակասումն ազգաց և զպատուհասն յանցանաց մերոց (Դիւան ժ, 19):

ԳՆԱՁ,

ԳՆԵԱՁ (ռուս КНЯЗЬ), գ. Իշխան, տէս նաև **ՔՆԱՁ**: Աստուծոյ աջողովեամբ **գնազ** Կոստանդին 14.000 հոգով կոտորեց զՄոսքովցիքն 80.000 (Կամենից, 16): **Գնազ** Կոստանդին կոտորեց զգաղարն (Կամենից, 17): **Գնեազ** Վիշնովսքից ոմն Ըռուզ իշխանն (Կամենից, 31): **Գնաց** փախստական առ Մոսկովի **գնեազն** (Կամենից, 30):

ԳՆԱԼ ՈՒ ԳԱԼ, հրդ. Երթուղարձ անել: Ես՝ Ձաքարէս **գնալ ու գալն** մին ամիս քաշեց (Ձ. Ագուլ., 104):

ԳՆԴԵԼ, նբ. Բռնել, խմբել, տէս նաև **ԳՈՒՆԴԵԼ**: ՈՒԳԵՐՉԻ զաջար աղայ Յումաթբէկն իւր Գ տղայովն բռնէ, **գնդէ**, զրկէ Լսպհան (Ձ. Ագուլ., 136): Այս Յիմաթբէկս Գ տղոցովն **գնդած** Երեւանայ դուս էլաւ (Ձ. Ագուլ., 137):

ԳՆՈՎԻ, ա. Գումարով գնում՝ ի տարբերութիւն նուիրումի: Իմ ստացելոցս՝ թէ ճարովի իցէ և կամ

գնովի... տասանորդն լիցի կաթո-
ղիկոսին (Կտակ 3ակ., 329):

ԳՆՈՒԱՅՈՒԻ, ա. Գնուած, հմմտ.

ԳՆՈՎԻ: Արխի տեղի համար բաղաձև
տվիր մեզ Փոխտանցէ գնուածու
ախայինքն, Փրճօլանցէ գնուածու այ-
գու կէսն (Սանահն., 160): Մեր Գալէ-
բանցի հողն ծախէցինք ի վերայ
Բարսեղ պարոնտէրին, որ էր գնուա-
ծու (Սանահն., 166):

ԳՈՆԵԴԻԿ, ա. Գաղտնի: Անհաւատի
ձեռնից ձեր կարողութեամբն գոխ-
դիկ պախում էք (եզով, 357):

ԳՈՄՄԱՐ (լատ. commissarius, իտալ.
commissario), գ. Կոմիսար, լիազոր
պաշտօնեայ, տէ՛ս նաև ԳՕՄԻՍԱՐ:
Պարտին իմ գօմսարքն և բուրկրա-
թօններն իմ ինթրաթի ըստրկէն շի-
նել զպակասութիւն աւերման տանն
այն (Հայ-Վենետ, 482):

ԳՈՅԱԿԱԿԱՆ, գ. ա. Գոյութիւն ու-
նեցող, գոյացական: Օրհնեսցէ
զձեզ Տէր Աստուած... այգեստանօք
և բուրաստանօք և ամենայն գոյա-
կականօք (եզով, 140):

ԳՈՅԹ, գ. Գոյթ - սէր (ՄՄ 1127,
136բ):

ԳՈՌԱՅՄՈՒՆՔ, գ. Որոտ, թնդիւն,
աղմուկ: Յանկարծակի լինի որո-
տում եւ գոռացմունք, մինչև սա-
ռանիլ ոմանց (Միմ. Լեհ., 289):

ԳՈՌՈՋԱԿՐՕՆ, ա. Կրօնի մէջ գո-
ռոզ՝ անզիջում: Աշխատութիւնս
կրէր... թէ ի մերայնոց ամբարտա-
ւանից, թէ գոռոզակրօն ինքնահա-
ճից (Յ. Կոլոտ, 205):

ԳՈՎԵԼԱԲԱՐ, մկ. Գովասանքի ար-
ժանի ձևով: Յոհան Օձնեցին ոչ գո-

վերաբար զաթոռն նստեալ... վախ-
ճանի (Ստ. Ռօշքայ, 87):

ԳՈՐԾԱՌԳՈՐԾՈՎ, մկ. Շուտափոյթ:

Գործառզործով - վաղվաղակի,
փութանակի (ՄՄ 2281, 125ա):

ԳՈՐԾՈՂ, գ. Բանուոր, գործատու:

Առատագոյն յերկիր եհեղ գանձս,
որ տայր գործողաց, երեսուն քար-
տաշ հանապազ նստեալ քար տա-
շէին (Դարիժ., 282):

ԳՈՒԲԱ (հունգ. kupa «գաւար»), գ.

Չափման միատուր: Գիտացվի, օր
տվանք ըզըրախին արնտայով Ա-
ղաշայ Մարուկին սացուան մէկ
տարով, որ ինքը ծախէ գութով ալ
եւ վատրայով ալ եւ ընդօր ուզենայ
(Գովր., 100):

ԳՈՒՂՈՒ, գ. Գնդակ (հրազէնի):

էանց գուլույն եւ ծակեաց զգուռն
եւ զգրքակալն (Ջաք. Բ, 65):

ԳՈՒՀԱՐԵՂԷՆ, գ. Գոհարեղէն, թան-

կարծիք ակնեղէն: Պարտի լինիլ իմ
տանն հարիւր հազար մառչիլ թէ
արծաթեղէն, թէ ոսկեղէն, թէ գու-
հարեղէն (Յ. Մուշ., 31):

ԳՈՒՄԱՐԵՏՂ, գ. Ժողովատեղի,

հաւաքատեղի: Գումարեաղ - տեղի
գումարման մարդկանց կամ այլոց
իրաց (Վ. Յուն., 21):

ԳՈՒՆԴԱԿ, գ. Կոնդակ: Ահա Դ տա-

րի էանց, ի մէջ եղև նուիրակի ժամ
գալստեան, զոր ամենեցունց ի
խնդրոյ կարգեալ գունդակիւ և լոյս
մեռոնաւ (Դիւան Ն. Ջուղ., 63):

ԳՈՒՆԴԵԼ, նբ. Կուտակել, գնդել,

տէ՛ս նաև ԳՆԴԵԼ: Չունուզու սուլ-
թանն Գժ՝ ձիաւորաւ եկաւ Աքուլիս,
Ավդուլայ բէկն բռնեց, մին ժե

մարդ գունդեց, տարաւ Զունուզ (Զ. Ագուլ., 111):

ԳՌԱՆԳՌԻԿ,

ԳՐԱՆՏՈՒԳ (իտալ. granduca), գ. բոց. Աւագ դոմս, մեծ իշխան Տոսկանայի, տե՛ս նաև ԿՐԱՆՏՈՒՔԱՅ: [եկաք] յերկիրն թուականաց (Տոսկանիա) գոանդուկի (Յ. Թուլթունչ., 306): Ի Մարու ծովով եկաք ի Ալիկոնայ երկիրն գրանտուգին (Յ. Թուլթունչ., 310):

ԳՌՄԵՏԱՎ, շք. Գոմուպ, փխբ. դժգոհել: Մեք այլ նորա խօսիւքն ճՄ դուռուշ տըւաք, հագիւ լոեցուցաք, դեռ կու գոմխտայ (Դիւ. Ս. Յակ., 1941, 84):

ԳՏԱԿ ԿՈՐՍՏԵԱՆ, հրդ. Կորուստ գտնող՝ նիւթող, կորստեան մատնող (առիթ): Գտակ կորստեան և առիթն ամենայն շարեաց բազմահնար մեքենայիւք մարտ եղեալ ոգորէր առ սուրբ տեղիսն (Դիւան Ս. Յակ., 1941, 157):

ԳՐԱԲԵՄԲ, գ. Բեմ, եկեղեցու դաս: Ի կողմն հարաւոյ երկուս գրաբեմբա գեղեցկաշէնս (Զաք., 12): Ինքն իշխանն Վաչէ վախճանեալ զնի ի մէջ եկեղեցւոյն՝ առաջի գրաբեմբին (Զաք., 13):

ԳՐԱՄՈՒՏ, ա. Գրեթի մէջ մտնող՝ իմաստուն: Ն. Բիւզ. ունի գրամիտ նոյն նշ: Գիտենալ այլ տեսողք. բայց շատ գրամուտ և հմտաբուն պիտի լինի, որ գիտանիխուռն իմանայ (Տէֆթ., 318):

ԳՐԱՍԱՆԵՆԼ, ա. Գրաստի խելք ունեցող, անմիտ: Ամենայն ոք ըստ իւր կարծեացն և գրաստախել ի-

մացմամբ այլևայլ բարբաշանս յօղեալ հաստատեն և մոլորեցուցանեն զմիամիտսն (Տէֆթ., 380):

ԳՐԱՓ, գ. (ռու. граф, գերմ. Graf), գ. Ազնուականական տիտղոս, գրաֆ կոմս: Աստուածասէր և բարեպաշտ իմաստնախոհ և շքեղափառ գրաֆ Դէկովէնցլ մեծարգոյ դեսպան ի Պետրպօլք (Ղուկ. նամ., 124): Իմ վէլինամաթ և սահապղովաթ բարուն գրաֆ Գավուէլ Իվանիչ Գոլովքին (Եղով, 424):

ԳՐԳԱԿԱԶՄ, գ. Գիրք կազմող՝ կազմարար: ՄՃԲ ունի գրակազմ «գիրք՝ ձեռագիր մատեան կազմող»: Անդէն ի տան գրգակազմի ուրումն ուղի՝ Գասառուպեաք կոչեցելոյ օթեցինք (Կամենից, 154):

ԳՐԳԱՏՈՒՆ, գ. Գրատուն, գրադարան: Զայս գիրքս եգիտ ի գրգատունն եւ ինձ գրել ետ, որ է մուսավատայ (Յ. Կոլոտ, 173):

ԳՐԳԵՐ ՀԱՆԵԼ, հրդ. Գրբեր տպագրել, ստեղծել: Այս Ոսկան վարդապետս... շատ շատ գրգէր հանեց (Զ. Ագուլ., 108):

ԳՐԳՈՒԿ, գ. Գրեոյկ: Յիշատակ է գրգուկս Պետրոս Բերիացի բանասիրի (Աղան. Միաբանք, 413):

ԳՐԷՔԻՆ (ֆրանս. crepine «ծոպ»), ա. Վերջաւորութիւն, ծոպ: Նմանապէս ոչ էրիկ մարդիկաց, ոչ կնտոց հագաստի վրայ ոսգու կամ արծըթէ գրեքին չի գտվի (Գովր., 46):

ԳՐԻԳՈՐԱՇԷՆ, 1. ա. Գրիգոր Լուսաւորչի կողմից շինուած՝ հաստատուած: 2. գ. Գրիգորաշէն տուն՝ էջմիածին: Գայ հասանէ

նոյն օր արագ, Գլխոյն ընտրեալ հայկազնոյս թագ, Գրիգորիսի, որ պատրիարգ, Գրիգորաշէն տան լուսածագ (Առ էջմ. 185):

ԳՐԻԺԱԳ (լեհ. krzyzak), գ. Խաչակիր, ասպետ: Յաղթութիւնս ընկալան ընդդէմ բազմագոյն ներհակաց օտար եւ ընտանի թշնամեաց՝ երբեմն ընդ Գրիժագաց եւ երբեմն Շուետաց (Պատմ. Խոթ., 43):

ԳՐԿԱՏԵԼ, նբ. Փարուել, գրկել: Փարել - գրկատել կամ շուրջ զալ կամ մերձենալ (ՄՄ 1127, 155բ):

ԳՐԿՈՒՆՔ, գ. Գրեհ: Ես՝ նուսատ Կարապետ վարդապետս տուի զիմ գրկունքս, որ է նոր Կտակարանքն, Առակքն... (Աղան. Միաբանք, 200):

ԳՐՉԵԱՅ, գ. Գրչագիր, ձեռագիր: Յիշատակ ետու զայս գրչեայ գիրքս, որ կոչի Դիոնէսիոս (Աղան. Միաբանք, 255):

ԳՐՉՄԱՅ (հունգ. koresma «գիներտուն»), գ. Պանդոկ: Որն որ զբաղաքն կի կարավարին, նայ ունենայ Ա գրչմամն բրոնէլու (Գովր., 58):

ԳՐՉՈՒՆԱԿ, ա. Գրելու՝ ստեղծագործելու ունակ: Որք երիտասարդք էք եւ գրչունակք (Յիշ. Ուն., 285):

ԳՐՕՎԻ, ա. մկ. Ձեռագիր, գրչագիր, ոչ տպագիր՝ ի հակադրութիւն տպագիր գրեհի, որ այս յիշատակարանի գրութեան ժամանակ՝ 1691 թ. անշուշտ տարած-

ուած էին հայ եկեղեցիներում: Ետու յիշատակ Բ Շարակնոց գրովի, Բ Քարոզգիրք, Բ Մաշտոց գրովի, բուն Ա ձեռաց ետու յիշատակ սուրբ վանացս (Սանաճն., 118):

ԳՕՁՕՇ (հունգ. kőzos «ընդհանուր»), գ. Համայնֆայիմ՝ ընդհանուր (ֆաղաֆ): Մեր քաղաքացիքը հիվօր գօգօշ քաղաքը ներս մտնելու ու ան քաղաքն ալ պարտական ըլլա նես առնէլու (Գովր., 195):

ԳՕՄԻՍԱՐ, աե՛ս ԳՈՄՍԱՐ: Գրիգոր արքեպիսկոպոսն երթայ յերուսաղէմ... որպէս ցուցանէ երուսաղէմայ գօմիսարն ճանապարհագիրն (Կամենից, 136):

ԳՕՄԻՌԻԿՅԻ (թուրք. gümrükcü), գ. Մաֆս առնող, մաֆսատր: Ընդ այն ժամանակն ...էմին եւ գօմրուկչի այնպէս ջերմ սէր ունէին ի վերայ քահանայից եւ եկեղեցաց, որ բնառչ հրաժարին վարդապետաց կշտէն (ՄԺ I, 248):

ԳՕՏԷԳՈՐԾ, գ. Գօտի գործող՝ պատրաստող արհեստատր: Կայր սուրբ երուսաղէմ ժԲ տուն հայի բնական, բայց աղքատ, ամէնն ջուլֆայ են եւ գօտէգործ (Սիմ. Լեհ., 260):

ԳՕՏԷՀԱՆԿՈՒՅՑ, գ. Գօտու հանգոյց, նարմանդ: Բացեալ զկողսն հարկանեն զմարմինս անխնայ գօտէհանկուցովք՝ այնչափ մինչեւ արիւն բխէ (Սիմ. Լեհ., 162):

-Գ-

ԴԱՔ, կ. Դեպի: *Դաք ձեր Հայոց երկիրն ճանապարհ լինի, որ մին գմինոյ խէտ ամենայն ինչ որ զարուր լինի, հազրեմք (եզով, 357): Էս ժամանակումն դաք ձեզ յետ աղարկեցինք (եզով, 394):*

ԴԱԴԱՐ, գ. Թաթար: *Հաւատարիմ ծառայից, նոյնպէս եւ զգադար, որք են իսմայելացիք (Կամենից, 65), Զգադարն մինչև իւր դախոն, որ կոչի Դրիմն, հալածեաց (Կամենից, 15):*

ԴԱՀԵԱԿ, գ. Դայակ: *ՀԲԲ դահեկ «մանկաբարձ կին՝ ուսում շառած»: Յիշատակ է... դահեակ սնուցիչ երկու քոռն իմոյ Սառին, Յաշաքին (ԴՀՎ V, 173):*

ԴԱՇՆԱԿԱՆ, ա. Համաձայնողական, փոխադարձ համաձայնութեամբ: *ՀԲԲ դաշնականք «ներդաշնակ երգ» (համանուն): Դարձեալ փակեցից զսա դաշնական վճռաւ եւ երդմամբ հաստատնովք (Դիւ. Ս. Յակ., 1941, 127): Կրեցաւ գիրս դաշնական ի թվականիս մերոյ ՌՃԺԶ (Դիւ. Ս. Յակ., 1941, 127):*

ԴԱՇՆԱԿՈՒԹԻԻՆ, գ. Դաշինք կոելլ՝ հաստատելը, դաշնադրութիւն: *Հաստատեցաւ ի վեր քան զառաջինն սէր եւ ուխտադրութիւն դաշնակոռթեան աթոռոց սրբոց (Դիւ. Ս. Յակ., 1940, 316):*

ԴԱՇՏԻԿ, գ. Փոքրիկ դաշտ: *ՀԲԲ դաշտակ նոյն նշ., ՄՅԲ դաշտիկ*

«խոց» (համանուն): Դաշտիկ ծաղկալի, որոյ սկիզբն է նախագգուշացումն խոստովանահարց եւ կոշնակիկն զարթուցողական (Դալ. Կենս., 291):

ԴԱՊԱ (հունգ. tabla «խորհուրդ»), գ. Բարձրագոյն աստեան: *Դաուզա չէրթա մեր դատաստանէն զըմարն, հապա երթա դապլան կամ կուպէրնիումը (Գովր., 194):*

ԴԱՊՆ ԴԱՏԱՐԿ, հոդ. Դափ-դատարկ: *Տեսաք ամենայն ապրանքն թալանած, շատ տուն եւ վանք կրակ տուած երած, դապն դատարկ ժողովուրդն մնացին Աստուծոյ փառք տալով (Նշխարք, 8):*

ԴԱՌՆԱԳՈՉՈՒՆ, ա. Դառնաձայն, տխրահունչ: *Ես չեմ կարել ճառել զաղաղակ նոցին / Զի էր դառնագոշուն ի մէջ գաւառին (ՈՒՄՅԲ II, 134):*

ԴԱՌՆԱԿԵՆՅԱՂ, ա. Դառն կեանք ունեցող, վշտալի: *Որգիաբար համարձակեալ հարցանեմք զորպիսութիւն վեհիդ եւ ի յոգնավիշտ եւ ի դառնակեցաղ կրիցդ (Դիւ. Ս. Յակ., 1941, 201):*

ԴԱՌՆԱՀԱՄԲԱԻ, ա. Դառն՝ վատ համբաւ բերող (լուր): *Եւ մահահրաւէր լուրս եւ դառնահամբաւ բոթս այս յայսմ իսկ երեկոյի եհաս առ Բաղդասար երէցն (Դաւրիժ, 155):*

ԴԱՌՆԱՇԱՏ, ա. Դառնութիւններով լի, դառնաշունչ: *Յայնպիսի վշտա-*

լից եւ դառնաշատ ժամանակին կանխաժաման մահուամբ բաժանեցաւ ի փոփոխական կենցաղոյս (Պատմ. Խոթ., 61):

ԴԱՍԱՌԱԿ, գ. Դաստառակ (սխալագր.՞): *Դասառակ - ձեռաց ջնջող (ՄՄ 2019, 185բ):*

ԴԱՏԱՄԱՀՐՈՒՄ, ա. Իրաագորկ, դատագորկ: *Օրէնքն ո՛չ հրամայեն դատամահրումին տալ յընչից հօր (Ձաք. Ա, 44):*

ԴԱՐԱԳԻՐՏ, անստոյգ բառ, յատուկ անուն՞: *Յորժամ լուա Շահ Ապագն, զղազախն քշեց տարաւ դարագիրտ (Մանահն., 64):*

ԴԱՐԱԿԵԼ, նբ. 1. Դասակարգել, 2. ճանաչել: *ՀԲԲ ունի դարակել՝ «տե՛ս դարանակալել» (համանուն): Դարակեմ - ճանաչեմ այնքան նրբագունիւ խուզմամբ և հետազօտմամբ, մինչ մնայ և ո՛չ ինչ յենթակայուն ճանաչելուց, գաղեցեալ յիմոյս ճանաչմանէ (Վ. Յուն., 23): Դարակել - ճանաչել (ՄՄ 2019, 185բ):*

ԴԱՐԱՅՓՈՒԼ (պարսկ. dare+pol «լեռնանցք»), գ. Կիրն, լեռնանցք: *Ն. Բիւզ. ունի դարափուլ «տե՛ս փուլ» հղումով, ՄՇԲ դարափուլ «բարձր տեղից փուլ եկած՝ պոկուած» (իմաստափոխ.): Ըստեփանոսի գեղի սինոսուն՝ Դօրչու մեծ խմհատն... աղբիւրի գլխի դարայփուլն (Մանահն., 148):*

ԴԱՐԲԻՆԴ, գ. Դարբին: *Ես՝ դարբինդ Գրիգորի որդի Անդրիասս... ծախեցի ի կամաւս իմ մայրենիք*

ընձանափակի արտն (Կալված., 29):

ԴԱՒԱԿԷՏ, ա. Գաղտնի, դաւադիր: *Դաւադէտ - ծածուկ, դարանամուտ (ՄՄ 2281, 129ա):*

ԴԱԿԵՏԵՐ գ. Վէճի տէր, հայց յարուցող: *Ով որ դաւի անէ՝ այն հողին դաւէտէրն ես ըլիմ, հետ պարտնտրին ո՛չ ով բան շունենայ (Մանահն., 158):*

ԴԱՎՎԱԹԱՒՈՐ (արաբ. պրսկ. dovlat), գ. Հարուստ, իշխանատու: *ՄՇԲ գոլվաթ «հարստութիւն, հօբութիւն»:* *Ընդ խաղաղական հոգևոր ողջոյնիս ծանացում լինի ձեզ՝ Տաշրոյ երկրի և բոլոր գաւառի բահանայք և տանուտէրք, դաւվաթաւորք (գրչ. դաւաթաւոր, դովաթաւոր, քովաթաւոր, տօվաթաւոր) և ուսմիկ ժողովուրդք (Մանահն., 87): Փարթամայոյց դօլվաթաւորաց (Մանահն., 104):*

ԴԱՅԱՅ (թուրք. tefa), մկ. Անգամ, դարձեալ: *Թէ այդ Բ դաֆայ փողդ Ռ թումանն թամամէ ոչ իմ ինչ որ ձեզ մօտ ունիմ՝ թէ ոսկի, թէ արծաթ, թէ ֆարշ ֆրուշ, ինչ ունիմ՝ ծախեցէք (Դիւան Ն. Զուղ., 92):*

ԴԵԶԱՆՔ, գ. Ամբար, հացի շտեմարան (ծան. հրատ.): *Եւ զջրադացքներն աւերեց, եւ զկարմունջներն տարաւ, եւ զգեզանքն հացի եւ խոտք շատ տարաւ (Կամենից, 39):*

ԴԵԿՆՈՍ, գ. Սկիզբ: *Դեկնոս - սկիզբն, սերմն, աշխարհք, զարմք, ներունք (ՄՄ 2281, 125ա):*

ԴԵՆ ԱՆՆԵԼ, հրդ. Կողմ դարձնել, դեմ՝ բռք. «Կողմ»: Ն. Բիւզ. և ՀԲԲ ունեն դեհ «Կողմ, տե՛ս եւ դիմ, յորմէ միադիմ»: *Ով խաւսք ունենայ, մեզ հետ խաւսի, Աստուծոյ վկայութեամբ տվինք մի դեհ արարինք (Սանահն., 143): Մի դեհ արարինք, սինուտ գրինք աղբիւրն և իւր ներքի թումբն (Սանահն., 147):*

ԴԵՂԱԾԱՆ, գ. Դեղ ծախող, դեղավաճառ: *Գնայ՛ առ դեղածախն, այս գրած հաւէճն առ և բեր ինձ (Ե. Մուշ., 497): Իմ դեղածախս տեսեալ խնդրեցի գօրինակն (Ե. Մուշ., 501):*

ԴԵՂ ԿՈՆ ԼԻՆԵԼ, հրդ. Դեղերի շափաբաժնից թունատրուել, մահանալ: *Այս ձմերային դեղօրայք անօգուտք են. դեղ կոխ լինի հիւանդն եւ մեռանի (Յ. Կոլոտ, 84): Իբր դարմանեալ՝ դեղ կոխ արարեալ զնա (Յ. Կոլոտ, 84):*

ԴԵՂՋՆԻԿ, գ. *Դեղձնիկ* - աղմուկ, շիտթ, փազար, մունգ (*ՄՄ 2281, 135ա*):

ԴԵՂՆԱՄՕՐՈՒՔ, ա. Դեղին՝ շէկ մօրուով: *Այնպէս գեղեցիկ դեղնամօրուք եւ շէկ մազ, սպիտակ մարմին յօրինած էր, որ տեսողքն հայրան մնային (Սիմ. Լեհ., 162):*

ԴԵՆԵՆՔ, ա. գ. Տեղեակ: ԲՆ դենեակ նոյն նշ: *Դենենք* - տեղեակ (*ՄՄ 2019, 186բ*):

ԴԵՈՒԱՇԷՆ, ա. Նորաշէն, նորակառոյց: *Արտաքոյ պարսպին մերձ առ հարաւային դրանն երկու դեռաշէն ձիթահանք նոր շինեցան (Դարբիժ., 261):*

ԴԵՐԲԿԱՅ, գ. Դերբուկ, ապառաժ:

Դերբկայ - վէմ կամ ապառաժ քար (*ՄՄ 1127, 138ա*):

ԴԵՐՋԻԿ, գ. Դերձակ, հմմտ. բուրժ. terzi «դերձակ»: ՄՆԲ ունի *դերձիկ* նոյն նշ: *Աստուած արհնէ դերզիկ Մկրտչէնց տղայքն՝ Պօղոսն և Պարսամն (Ակոռ., 211): Կու ժողովեն, ուսուցանեն... թէ դերզիկ է կամ թէ խառատութիւն և նկարակերտութիւն (Նշխարք, 20):*

ԴԵՐՅԱՐԳԱՐԵԼ, նբ. վերստին ուղղել, վերակազմել: *Դերյարգարել* - գլխիւրեցեալն և զխանգարեցեալն վերստին ուղղեմ և յարգարեմ, լատ. էմէնտ (*Վ. Յուն., 23*):

ԴԷՄ ԴՈՒՆ, մկ. Դէմ դիմաց, հանդէպ: *Դէմ դոանս դուռն շուկայի՛ է Մըարի կամ Ենիի կոշման (Քէօմ., 31):*

ԴԷՄԷ ԴԷՄ, մկ. Մէկը մէկի փոխառէն: *ՀԲԲ դէմադէմ նոյն նշ: ԼեՍ (35000) դիւան փող էլ Բալասանէն վերնակ առինք, որ դէմէ դէմ փոխեցինք (Կալված., 59):*

ԴԷՎԱՂՈՒՇԻ, գ. Ջայլամ, տե՛ս նաև ՏԱՎԱՅ ՂՈՒՇԻ: *Կա և ազգ մի կենդանի, որ զառնափա ասեն, որ վիզն խիստ երկայն է, դէվաղուշու նման է (Յ. Թուլթունջ., 310):*

ԴԸԿԸՏՈՒԴ ԱՆՆԵԼ (հունգ. tagadni «մերժել»), նբ. Ուրանայ, հերբել: *Հապա գրկըտուիդ կու անէր, թէ չէ քալուցիլ (Գովր., 51):*

ԴԸՌԲԱՅՔ, գ. Դոնբացիք, Ծաղկագարդի երեկոյան եկեղեցու դռները բացելու արարողութիւն: *Ամէն մարդ իւր տուն զընաց, եկեղեցիք փակուեցան, Ծաղկայգարդին օրն*

գիշերն *զըրբացօք չեղաւ* (ՄԺ I, 227):

ԴԺՈՆԱՔԵՐԱՆ, ա. Դժոխային՝ շարբերան ունեցող, շարախօս: Սուլումանաստր *Պասմաճը օղլու կոչեցեալ դժոխաբերանն* (Ճեմճ., 260):

ԴԻԴՓԱԼ (վրաց. դեդոփալի), գ. Թագատրի մայր, Վրաստանի թագատուրների մօտ տիադոսը: ՄՀԲ *դէդեպուլ* «վրաց ազնուական»: *Շահաբաս...* զոմն յիշխանաց իւրոց առաքեալ է, զի կամ դարձուսցէ *զդիդօփալն* ի բրիստոնէութենէ յօրէնս Մահմետի եւ կամ շարաշար մահուամբ կորուսցէ (Դաւրիժ., 143): Մերձ կացեալ ի դուռն *դիդօփալին* կոչեաց զնա (Դաւրիժ., 145):

ԴԻՄԱԼՄԲՈՍՏԵԼ, չբ. Հակառակել, դիմադրել: *Դիմարմբոստեմ - ընդդէմ զինիմ և հակառակ կամ, զի մի՛ լիցի, և իբր բարձրավզօրէն կիրճ արկանեմ և խանգարեմ զլինելութիւն իրին, լատ. իմփէ՛տիօ* (Վ. Յուն., 24):

ԴԻՊԱՅ, կ. Դէպի: Ն. Բիւզ. *դիպան* նոյն նշ.: *Մեր սղնախի խալղը աչքն մնացել է դիպայ ետ* (Եզով, 437):

ԴԻՊԻՐ, գ. Դպիր: *Գտանելով անդ ոմն դիպիր* (Յ. Կոլոտ, 84):

ԴԻՄԴՈՒԹԻԻՆ (հունգ. tiszt «պաշտօնեայ, սպայ»), գ. Պաշտօն, իրաւաստութիւն: *Վօվօր քայլցնու նատ բացայ, նայ պիտոր ունենայ դիսղութիւն, այսինքն ընտօր պիրօվն ու աղաներն ու նօզարիշներն ու սարըսդան...* հոս քաղքին մէջ ունենան քալցնելու (Գովր., 30):

ԴԻՏՈՂԱՆՄԱՆ, ա. Դիտողի նման ֆննախոյզ կերպով: *Աստուածանման խնամարկելով...* Գետոց նման ոռոգելով, *Դիտողանման ակնարկելով* (Առ էջմ., 194):

ԴԻԻՐԱԿԻ, ա. մկ. Դիւրութեամբ, անմիջապէս: *Առ ի չճանաչելոյ յումեքէ դիւրակի, օթեցի անդէն* (Կամենից, 148):

ԴԻԻՐԱՃԱԿԱՆ, ա. Դիւրին՝ հեշտօրէն անոդ: *Պարտուցն յաճախութիւն զօրէն դիւրաճականն փշոյ՛ էհաս տոկոսեացն աճամբ* (Յ. Կոլոտ, 261):

ԴՆՋՈՒԹԻՆ, գ. Հանգստութիւն, անհոգութիւն: *Մեր մեծ և բարձր ինփրայթօռութեան ողորմութեան հրամանին տակուն լինէք, որ ձեր կալէ համար և ձեր դնջութիւն* (Եզով, 393): *Դուք տեղն ձեր դնջութեամբն ավարանի* (՞) *զցէք* (Եզով, 393): *Ամենայն ժամ յավիղենական դնջութեան միջում կու լինեն* (Եզով, 406):

ԴՈՄԻՆԻԿ, գ. Դոմինիկեան միաբանութեան ներկայացուցիչ, տե՛ս նաև ՏՈՄԻՆԻՔԱՆ: *Առաքեցին ի Հոռոմ զպատգամաւորս իւրեանց առ Իննոց. Փափն և առ Դոմինիկաց եներալ հայրն* (Ստ. Թօշքայ, 150):

ԴՈՅՋԱՆԳԻԾ, ա. Սոսկ գիծ ունեցող, սակաւագիծ, փխբ. աննշան, չնչին: *Յետ դոյզնագիծ տրակիս՝ ծառայ քո Եղիաս յատկապէս ծանուցանեմ տեառնդ իմում* (Դիւ. Ա. Յակ., 1941, 202):

ԴՈՐ, մկ. Դէպի ուր (բրբ.): Թէ գնան՝ ազատ եմ արարել, դորն որ գնան՝ ոչ ով հետնէրուն բան չունենայ, ազատ ըլին (Սանահն., 150):

ԴՌՈՒՄՈՒՏ, ա. Դիւրին՝ հեշտ կերպով մտած: ՀԲԲ դիրամուտ նոյնն է: Խելայեղեալ ազգն Յունաց շփոթեալք այր զարամբ ելանէր... վասն այնորիկ դուրամուտ եղեւ սուլթանն (ՄԺ II, 354):

ԴՌՆԱՌԱՋ, գ. Սրահի՝ տան հարակից տարածք, բակ: Մինչև հասարակաց կալն ու Շարվանց բակերն՝ իր սրահն ու դռնառաջն տվինք պարոնտէր Սարգիս եպիսկոպոսին ու վանքին (Սանահն., 144): Մեր կամաւ և օվժար սրտիւ ծախէցինք Համզանց խուց իր մառանով, իր դռնառաջով (Սանահն., 159): Շարվխանց տուն ու կալն ու մարաքն, դռնառաջն ծախէցինք (Սանահն., 176):

ԴՎՈՒՒՅ (ռուս. дворец), գ. Պալատ: Գոս մեծի ինփրայթօռին դվոռէցն և ըզքեզ եավլառես ինստրանըց դել կալէգում (Եզով, 406):

ԴՐԱՆՏԱՍԱՐԱՄ, ա. Դրախաի նման, սարաս բողջ. համար տէս ԱՂԲԻԻՐԱՍԱՐԱՄ: Իսկ ի մտանել մայիս ամսոյն կանանչացեալ սաղարթախիթ դրախոնասարաս, կանանչանայ սար եւ ձոր (Յ. Կարն., 40):

ԴՐԱՄԾԱՆ, գ. Դրամի ծախս, ծախսատարութիւն: Չեռն ետուն

ուճեմն նորոգել եւ նորոգեցին շատ դրամածախիւք (Յիշ. Ուլն., 291):

ԴՐԱՄԱՏՐՈՒԹԻՒՆ, գ. Նուիրատուութիւն (դրամի): Թողումք ասել զայլ եւ այլ վարկպարագի հարկատրութիւնս եւ դրամատրութիւնս (Ազուլ. կոնդ., 93):

ԴՐՈՇՄԱՆԸՇԱՆ, գ. Դրոշմ, դրոշմագիր: Կանգնեաց մեծ Թէոդոսն այն հէլէն եւ լաթին գրովք եւ գիտնոց դրոշմանշան (Քէօմ., 10):

ԴՐՈՒԱՏԱԲԱՆ, ա. Գովաբանող, ներբողական: Պարտ էր մեզ յայսմ վայրի գրել ձեզ օրհնութիւնս և շնորհակալութիւնս և ներբողեանս դրուատաբանս (Ներբ. Սրասպ., 19):

ԴՐՈՒԱՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Դրուատանք, ներբողաբանութիւն: Ո՞ր եղից զգրուատաբանութիւն գերամբարձութեանդ (Յ. Կոլոտ, 314):

ԴՔՍԱԿԱՆ, ա. Դոմսին յատուկ: Մինկղիտոսն (ձերակոյտ) Բուշելայի պաշտօնեայ իրաւագիտութեանն աւագ դքսական (ՈՒԿՈՐ., 276):

ԴՕՎՈՎ ԶՈՒՌՆԱՅ, հրդ. Դնով-գոունա, երգ-երաժշտութիւն: Ջրաւորհնիք Ազուլիս արարի, գետումն ջուր աւրհնեցին դօվուլ զոնով (Զ. Ա. գուլ., 74):

ԴՕՅԻՆ (ֆրանս. dauphin), գ. Թագածաւանգ: Եւ տեսաք... մոնսիենեօր դօֆինին, որ տղայ է եղեր իւրն (Շահմ. յիշ., 318):

-Ե-

ԵԱԽՈՒ ԱՆԵԼ, հրդ. Սպեղանի դնել: ՀԲԲ *Եախու* «ամրացնող՝ կապող սպեղանի»»: Ա դրամ *դեղին մոմով Եախու անեն* և ի վրա *ցաւուն դնեն* (Բունիաթ, 97): Սեւ ձուլք Ա *բաժին խառնեն յիրար ի փայծղանն ի վրա Եախու անեն* (Բունիաթ, 99): Զամենն ծեծեն և եփեն և *Եախու անեն* և ի վրան *դնեն* (Բունիաթ, 108):

ԵԱՂՄԱՅ ԱՆԵԼ, հրդ. Աւիբել, փշացնել: Մաշատ սոցա *իմամն է, որ շահն յառաջ ուխտ գնաց, ԺԳ օրէն տեղ եաղմայ են արել* (Եգով, 258): Կուզան շահին երկիրն *եաղմա կանեն* (Եգով, 258):

ԵԱՂՈՒԲԻՔ, գ. Յակոբիկ՝ ասորի քրիստոնէական յարանաւանութիւն, ասորի: Ժողովեցան *անբաւ բազմութիւնք քրիստոնէից, ոչ միայն Հայք՝ այլ և Հռոմք, և Ասորիք, և Եաղուբիք* (Դաւրիժ., 410):

ԵԱՂՄԱՐՔԻ (ռուս. Ярмарка), գ. Տօնավանաւ: Ան տաճիկ ազգն... *անթիւ մալ և խազնա տարաւ, զմարդիկ ի սուր մաշեց և զայլսն գերի տարաւ, վասն զի Եարմարքի ժամ էր* (Կամենից, 57): 9 զօլաթին մնաց *կոյվու Եարմարքի պիտի տայ* (Կամենից, 112):

ԵԳԵՄԱՍԱՐԱՍ, ա. Եղեմի՝ դրախտի նման, հմմտ. ԱՂԲԻԻՐԱՍԱՐԱՍ: Երկնանման և *Եղեմասարաս* եկեղեցին ունի Դ գրունս (Պատմ. Երուս., 1931, 274):

ԵԴԻՆԱԼ, չր. Ռիշանալ, հետ մնալ: *Հրաման ունիք գալու. միք եդինալ և յամենալ* (Եգով, 432):

ԵԶԵՐԱԲԱՐ, մկ. Սահմանուած սահմանափակուած կերպով, հմմտ. ԱՆԵԶԵՐԱԲԱՐ: Զոր նշանակէ յոլովութիւն *անեգերաբար, զնոյն նշանակէ անուն երրորդութեան եգերաբար* (ՄՄ 1756, 58ա):

ԵԶԵՐԻԶ, ա. Եգերող, փխբ. արգելակող (բոխղ. Եգր-եգերիչ): Այս ինչ բան է քո արած բանն, զի՞ կամիս երկրորդ եգր լինել՝ *Եգերիչ և խանգարիչ հայոց ազգիս* (Թորոս աղբար, 290):

ԵԶՆԱԲԱՐՈՅ, ա. Եզան բարբ ունեցող, փխբ. անմիտ: Առողք *զանձին եզնաբարոյ ազգն Հայոց՝ ո՛չ միայն ոչ շահեցուցին, այլ և զգլուխն ևս կորուսին* (Դաւրիժ., 149):

ԵԶՎԱՅԻԿ, ԵԶՎԱՅԻՔ,

ԵԶՎԱՅԻՏ (ֆրանս. jesuite «Յիսուսեան»), գ. Յիսուսեան միաբանութեան անդամ, նիզվիտ, տէս նաև ՃԵԶՈՒԻՑ: ՀԲԲ *Եզուիտ* նոյնն է: Այնուհետև *զնաց առ եկեղեցականս Ֆռանկաց, որք կան ի մէջ քաղաքին Իլովայ, և մանաւանդ առ այնոսիկ, որք ի կարգէն եզվայիտայ* (գրչ. *Եզվայիթայ*) *են* (Դաւրիժ., 301): *Եզվայիտայք* (գրչ. *Եզվայիթայք*) *ընդդիմացան և ոչ թողին* (Դաւրիժ., 305): Եպիսկոպոսն

յարեցաւ յարեղայսն Ֆոանկաց, որք էին յեզվայիտայ (գրչ. յեզվայիթայ) կարգէն (Դաւրիժ., 482):

ԵԿԱԶԱՆ, ա. Եկած՝ վրայ հասած, բազմազան՝: Այլք բազումք առնեն անկարգութիւնք ընդդէմ կանոնաց եկազան շարիս (Գալ. Կենս., 212):

ԵԿԵՂԵՅՆԱԿ, գ. Փոքր եկեղեցի: Յառաջ գնացեալ տեսաք փոքր եկեղեցնակ մի քարէ եւ շուրջ եկեալ տեսաք բազում խորանս (Սիմ. Լեհ., 116):

ԵՂԱՆԱԿԱՒՈՐ, ա. 1. Խազագրած, նոտագրած: ՈՒնի Ն.Բիւլգ. առանց մէկն., Ա.Բ եղանակաւոր «եղանակով» (իմաստափոխ.), ՀԲԲ եղանակաւոր «եղանակ ունեցող, երգաւոր»: Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականիս հայոց ՌեԴ (Գաւազ. Աղթն., 127): 2. Քաղցրաձայն, համեղաձայն: Այլ եւ ծերունի եպիսկոպոս մի քաղցրահամ եւ անուշ եղանակաւոր (Սիմ. Լեհ., 186):

ԵՂԲՕՐՈՐԴԵԱԿ, գ. Եղբօր որդի (փղջ.): Յիշեսցի՛ք զկենդանի եղբօրորդեակն իմ զՏէր Յակոբն (Յիշ. Ուն., 295):

ԵՂԵԳՆԵԼ, նբ. Եղեգնի պէս շախշախել, տապալել, կոտորաւել: Տեսեալ Սմբատ Բագրատունին / Չի շախշախեալ եղեգնէին (Ս. Ապար., 139):

ԵՃԵՃ, ա. Չարամիտ: ԵՃԵՃ - չարաբարոյ, նենգաժէտ (ՄՄ 2281, էջ 136ա):

ԵՆԵՐԱԼ, գ. Գեներալ, տե՛ս ՃԷՆԷՐԱԼ: Առաքեցին ի Հոռոմ զպատգամաւորս իւրեանց առ Իննոց.

Փափն և առ Դոմինիկաց Էներալ հարն (Ստ. Ռօշքայ, 150):

ԵՆԴԱՅԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ, գ. Դատադուրբն, մտածում: Ա.Բ ենթադատութիւն «կարծիք»: Հանճարամիտ խոհեմ ի խորհրդական ենդայդատողութեան (Դաւան., 122):

ԵՆԹԱԴԱՏԵԼԻ, ա. Ենթադրելի, փոփոխական, հմմտ. ԵՆԴԱՅԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ: Ապշութիւն... զանգիտենայ ի ենթադատելի ներկայում եւ հետախնդիր լինել ի յապագայում (ՄՄ 1756, 58ա):

ԵՆԹԱՏՐՈՀԵԼ, նբ. Բխեցնել, ենթադրել: Ի վերացուցանել սրբոյ խորհրդոյն՝ իսկոյն ենթատրոհեցին երկաքանչիւրն (Կամենից, 157):

ԵՆԹԱՏՐՈՀՈՒՄՆ, գ. Ուսումնասիրում, վերլուծում: Ենթատրոհումն կոչի առաքինութիւնն այն, որ ներփակէ յինքեան զվճիռ և զիսկական վերլուծումն զիրացն հետազայից, նրբազունիւ հետազօտմամբ, լատ. տիւրուէցիօ (Վ. Յուն., 25):

ԵՆՓԵՐԱՏՕՐ,

ԵՆՓՐԱԹՈՒ, գ. Իմպերատոր՝ ինքնակալ, կայսր, տե՛ս ԻՄՓԷՐԱԹՕՐ:

ԵՆՓՐԱԹՈՒՅՑ, գ. Կայսրուհի, տե՛ս ԻՄՓՈՒԳՐԻՅԱ:

ԵՆՓՐԱԹՈՒՈՒԹԻՒՆ, գ. Կայսերական իշխանութիւն: Մեր ենփրաթօնութեան ողորմութեամբն շատ բարև կասեմք (Նզով, 432):

ԵՌԱԳՆԱՅ, ա. Երեմ ընթացք՝ տառայ եղանակ ընդգրկող: Զի՞նչ շահեցաք մինչև ցայժմ եռազնաց, և որ ի շորորոգ ժամանակի ձմերան

զի՛նչ յարգիցիմք (Դիւ. Ս. Յակ., 1932, 279):

ԵՌԱԹՇՈՒԱՌԵԱՆ, ա. Եռակի թըշուառ, դժբախտ: ՄՉԲ եռաթշուառ նոյն նշ.: Առանց պատժոց դատապարտութեան մի՛ մնասցէ եռաթշուառեանն այն եպիսկոպոս (Դիւան ժ, 100):

ԵՌԱՆԴԱՍԱՐԱՍ, ա. Եռանդուն կերպով, սարաս բղղշ. համար տե՛ս ԱՂԲԻԻՐԱՍԱՐԱՍ: Ի վաղ ժամանակաց եռանդասարաս արծարծեալ ի ներքին մարդ օթեցաւ (Յ. Կոլոտ, 235):

ԵՌԱՆԴԱՍԷՐ, ա. Եռանդոտ, ջանասէր: ՀԲԲ եռանդնասէր նոյն նշ.: Ետ գրել զայս սուրբ տառս մեծաւ տենչմամբ և եռանդասէր սրտիւ (Աղան. Միաբանք, 144):

ԵՌԱՇԱԲԱԹ, գ. Երեւշաբթի: Շաբաթ եւ ի կիրակի յերկշաբաթայն եւ յեռաշաբաթայն (Քէօմ., 27):

ԵՌԻԻ, մկ. Եռալով՝ վարարած, յորդացած: Ամէնն թափելով կէտն տանէր որպէս եօիւ գարնանային (Եզով, 340):

ԵՍՕՐ-ՎԱՂՆ ԳՁԵԼ, հրդ. Հետածգել, ուշացնել: Այս Շմաւոնս եսօր-վաղն գձելով՝ այս պարտքս մնայ (Չ. Ագուլ., 99):

ԵՏՆԱՄՆԱՅ, գ. Սերունդ, հետնորդ, հմմտ. ՅԵՏՆԱԳԱՅ: ՄՉԲ ետմնացող, յետմնաց «ժառանգ»: Ինքեանք պատմեացեն զետնամնացից իւրեանց, զի եւ նոքա ժառանգօղբ լիցին մասին ի լոյս (ՄԺ I, 249):

ԵՏՈՎ, մկ. Հետո, այնուհետև: Մահ-գասի Մէլիքշահայ որդիքն՝ մահդա-

սի Աւետիքն և Գիգորն... շուրջառ էլ ետով կարել տվին (Ակոու., 211):

ԵՏՈՒՍ, մկ. Հետեւից: Ամենն քշելով տանէին դէպ ի Դադատանն. ետուառ սուր, ի առաջուառ Կուր կէտն (Եզով, 340):

ԵՐԱԾ ՔԱՐՓԻՉ, հրդ. Թրծած աղիւս, տե՛ս ՔԱՐՔԻՉ: Աքուլաց սուրբ Թումայի առաջնորդ Պետրոս վարդապետն... մաղայցէք շինեց, ոմն կիր ու քարով գումբէզի, ոմն երած քարփիչ ու գաշով գումբէզիք (Չ. Ագուլ., 78): Երած քարփիչով գլուխն փոշիշն արարին (Չ. Ագուլ., 97):

ԵՐԱՄԱԳՆԱՅՔ, գ. Երամով՝ խմբով ընթացք, թոխչ: Զանազան երամս հաւուց եւ թռչնոց ընդ երեսս դաշտին սփռեալ լինին երամագնացիք (Յ. Կարն., 40):

ԵՐԱՄ ԿԱՊԵԼ, հրդ. Խումբ-խումբ կազմել: Երամ կապես հետ հարսներուն / ճեմես ի հետ աղջիկներուն (ՌիՄՉԲ, II, 332):

ԵՐԱՆԱԲՈՒՆ, ա. Երանաւտ: Յետ այնքան երանաբուն կենաց կենցաղոյ (Յ. Կոլոտ, 232):

ԵՐԱՆՍՏԵՆՉ, ա. Տենչալի, բաղձալի: Սակարք են... որ անունն զերանատենչ ըղձից լրումն (Ագուլ. կոնդ., 100):

ԵՐԲԵՄՆՈՒԹԻՒՆ, գ. մկ. Երբեմն: Երբեմնութիւն - անուն բաղկացեալ ի մակբայէն երբեմն և նշանակէ զկիրառումն ժամանակի նովիմբ մակբայիւ (Վ. Յուն., 25):

ԵՐԳՆԱԿ (բնստ.), գ. Երգիչ (փղբշ.), բանաստեղծ: Պահեայ զփեսայն քո, որ է անարատ / Չի

զխըղճալի երգնակս արասցէ ազատ (Գայ. Կենս., 164):

ԵՐԻՄՆԵՅՈՂՈՒԹԻՒՆ, գ. Եկեղեցում ծեսից առաջ երգում կատարելը: Սուրբ Եկեղեցին ի սկզբանէ սովորեցաւ նախ քան զմկրտութիւն առնել **զերգմնեցողութիւն**, զոր եւ Հայք անեն (Ստ. Ռօշքայ, 10):

ԵՐԵԳ, ք. Երեմ: Յամենայն ոք յաւուրս **երեգ** նստել ի խրախոսութիւն ընդ տիւ եւ ընդ գիշեր եւ եղեւ այնպէս (ՄԺ II, 249):

ԵՐԵՍԱՀԱՃ, ա. Արամուստ հանելի, Երեսպաշտ: Նոքա ըստ մարդելոյց եւ **երեսահաճ** եւ խաբուսիկ բարոյից իւրեանց զամենեսեան հաճեցուցանէին յինքեանս (Իււրիժ., 167):

ԵՐԵՍԱՔԱՐՇ, ա. Երեսանկեալ, բերանփիվայր: Ե՞րբ ստահակեցայք ի բանից նոցին, զի կարօտանայք **երեսաքարշ** տանել առ ձեզ (Դիւ. Ս. Յակ., 1940, 316):

ԵՐԵՅՓՈՒՅԱՆ,

ԵՐԻՅՓՈՒՅԱՆ, գ. Երեսփոխան, պատգամատու: ԱՒ և Ն. Բիւզ. Երեսփոխան «վերակացու, վէբիլ», ՄՀԲ էրէսփոխան նոյն նշ.: Պր. Միխնոյ Կամէնիցու **երեցփոխանն...** անզաւակ մեռաւ (Ստ. Ռօշքայ, 170): Միաբան ժողովրդենէ և **երիցփոխանացն** ամենեցուն (Դիւ. Ս. Յակ., 1940, 156):

ԵՐԵՆԱԿԵՐՊԵԼ, նք. Երեսակայել, պատկերացնել: ԱՒ **երևակերպք** «գիշերային երևոյթներ»: **Երեսակերպեցէք**, թէ զինչ սիրտ մնայ կա-

տարել զպաշտօն շարչարանաց Տեառն (Դիւան Մխիթ., 73):

ԵՐԵՆԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. Երեսակայութիւն: Տրտմութիւն է՛ մքռութիւն իմն, նորում ոք ի պատճառս **երևակերպութեան** ուրուք մտաց, զբազումս և զզանազանս խոկմունս յառաջ բերէ (Նոր. ծաղ., 43):

ԵՐԵՒԻՆԱԼ, նք. Երևալ, ի յայտ գալ: ՄՀԲ **երեւանալ**, **երեւենալ** նոյն նշ.: Գարնան ծաղկի նման, որ **երեւնայ** / Այսօր զքեզ տեսայ և ուրախացայ (ՈՒՄՀԲ, 166):

ԵՐԵՔՍՔԱՆԶԵԼԵԱՆ, գ. ա. Սուրբ Երուրդուրեանը տրուող մակդիր: **Երեքսքանչլեան** - լոյս, ճաճանչ, փաղփոն, լուսերանգ, լուսակիզն, երեքլուսեան, երեքհրէան, բազմալոյս (ՄՄ 2281, 123ա):

ԵՐԹԵԿՅՈՒԹԻՒՆ, գ. Փոխադարձ այցելութիւն: **Երթեկցութիւն** - կցորդութիւն գնալոյց և գալոյց առ միմեանս, սովորութիւն քաղաքավարիլոյց ի միասին, լատ. քօնվէոսայիօ (Վ. Յուն., 26):

ԵՐԹՆԱԿԵՐՏԵԱՆ, տե՛ս ԵՐԹՆԱԿԵՐՏԵԱՆ:

ԵՐԻՇ* ԱՆՆԵԼ / **ԵԼՆԵԼ** (թուրք. yaris «մենամարտ, մրցում»), հրդ. Գը՛րոհել, հարձակուել: ՀԲԲ **երիշ** «հայլելու ձևը, յոխորտալով վրայ գալը»: Շահ Սաֆին էրեկ գընաց բերդին վերայ, Գ ամիս նստաւ, մարտի ժե օրն **երիշ** **ելաւ** բերդին վերայ (ՄԺ I, 196): Հիմա պինդ կուզեն զմեզ ձեռն առնուն այս գարունս և ապա **երիշ անեն** (Եղով, 433):

ԵՐԻՅՓՈՒՑ, տե՛ս ԵՐԵՅՓՈՒՑԱՆ: Հաւատարիմ՝ *երիցփոխաց* եւ գանձապետաց (Ագուլ, կոնդ., 85):

ԵՐԿԱՍՄ, գ. Երկու ամ՝ տարի: ԱՔ երկամի, երկեմեան նոյն նշ.: Բայց իննևտասն *երկամին* / Թիւ մի աւել վերադըրին / Բախշեա՛ գթուականն տասեին (Դ. Զեյթ., 184):

ԵՐԿԱՍՄԻՍ, գ. Երկու ամիս: Կիսակ ամսոց այսպէս գործի / Ի նաւասարդէ առաջ թուի / Ամէն ամսից կէս-կէս առցի / *երկամսոյն* կիսակ կազմի (Դ. Զեյթ., 183):

ԵՐԿԱԹԱԿՈՒԻ, ա. Երկաթով կռած, շինած, երկաթակու: Մաճրի պարոնն... ունէր կի հոգի *երկաթակուր* (գրչ. երկաթակուր) պահատուր (Սիմ. Լեհ., 376):

ԵՐԿԱԹԱՇԷՆ, ա. Երկաթով շինուած, երկաթեայ: Սուրբ Յակոբայ դուռն *զարմանալի երկաթաշէն մեծ*, և ունի ի մէջ տեղն փոքր պօլմէ դուռ մի (Զուար, 1867, 80):

ԵՐԿԱԹ ԱՌՆՈՒԼ, հրդ. Խաթիսիւր քաշել՝ բարձրացնել, տե՛ս նաև ԱՐԿԱԹ ԶԳԵԼ: Իսկ նաւավարքն յունաց ազգին / Յետ այնորիկ *զերկաթն առին* (ՌԻՄՉԲ, II, 561):

ԵՐԿԱԹ ԲԱՆՈՂ, գ. Երկաթագործ, բանուոր: Ե խալեան կուզէ... պիտի ըրդատ, [պի]տի *երկաթ բանող*, ամէն էսնէֆէ մընացեալ (ՄԺ I, 227):

ԵՐԿԱԿՈՂՄԵԱՆ, ա. մկ. Երկու կողմի, երկակի: *երկակողմեան* պարտուցս այսց հատուցմունքն պարտին ի ձեռն նուիրակաց լինել (Ագուլ, կոնդ., 108):

ԵՐԿԱՅՆԱԳԻՐ, ա. Երկայն դիրճով դրուած՝ տարածուած: Միս աղօթանոցն է ի կողմն հարաւոյ, *երկայնադիր* դէպ ի հիւսիս, գմբէթն սագաշէն (Պատմ. Երուս., 1932, 15):

ԵՐԿԱՐԱԺԱՄԱՆԱԿ, ա. Երկար ժամանակ, երկարատև, երկար կեանք: Ով որ ի հետն [զմորուխտ] պահէ, աշաց ցաւ շտեսնէ, լոյսն աւելնայ, *երկարժամանակ լինի*, հաւուր շինի (Դարիժ., 452):

ԵՐԿԱՐԱՆՍՈՒԹԻԻՆ, գ. Շատախօսութիւն: Մի՛ *երկարախօսութեամբ* զգուեսցուք զլսելիս ձեր (Ագուլ, կոնդ., 102):

ԵՐԿԱՐԱՇԱՐ, ա. Երկարաբան շարադրանքով: Գրեաց նաև զխրատս վասն ուղիղ հաւատոյ և առաքինութեանց յոյժ *երկարաշար* և պիտանի (Ստ. Խօշքայ, 107):

ԵՐԿԱՐ ԲՈՆԵԼ, հրդ. Երկար տեւել, երկար շարունակուել: Ի թվին ՌՉ տանուտէրն կարիճն, զեկտեների ժԸ՝ ձըմընամուտին, ձմեռն *երկար բռնեց* և դիժար (ՄԺ I, 209):

ԵՐԿԷԹԷ, ա. Երկաթեայ: Կոոց դարբններն եբեր, *երկէթէ* տատաշ կտրեցին (ՌԻՄՉԲ, 83):

ԵՐԿԻՒՂԱԿԱՐԾ, ա. Երկիւղի մէջ ընկած, մտատանջ: Վասն արիւնաթաթախ գոլոյն *երկիւղակարծ* եղև, թէ մի գուցէ սպանեալ իցեն զպարոնն (Դարիժ., 395):

ԵՐԿԻՒՂԱԿԻՐ, ա. Երկիւղ կրած, երկիւղած: Զայն տեսեալ զօրացն Պարսից՝ *երկիւղակիր* լեալ զանգիտէին, որով սող ինչ պարտեալ երեւիր կողմն Պարսից (Դարիժ., 66):

ԵՐԿՆԱԳՈՒՆԱԿ, ա. Երկնագոյն:

Իսկ զօրք անհաւատիցն... միահամուռ կապուտազգեստ եւ երկնագունակ, երկաթապատ պողոպատիկ զրահիւք հաստատեալ կային ի դիմի (Պատմ. հոթ., 54):

ԵՐԿՆԱՔՋ, ա. Երկնից իջնող: Ղամբար

երկնաէջ անաղօտական.../ Սիւն քո ծառայի, լեր յար պահապան (ՌեՄՇԲ II, 120):

ԵՐԿՆԱԿԱՅԼԱԿ, ա. Երկնային: Որպէս

անդ ուրեմն առ նախնեօք՝ վտակք երկնակայլակք անվկանդ (Դիւան Մխիթ., 140):

ԵՐԿՆԱՀԱՄԲՈՅՐ, ա. Երկինքը համբուրող:

Միջնորդութեամբ սմին՝ գլխոյ խոնարհմամբ, երկնահամբոյր շրթամբբ... երկրպագութիւն մատուցանեմ (Դիւ. Ս. Յակ., 1932, 185):

ԵՐԿՆԱՆԿԱՐ, ա. Իբրեւ Երկնային նկար, փխբ. Աստծու պատկերը

կրող: Փիլիպպոս կաթողիկոս Ամենայն Հայոց ե պատրիարզ Վաղարշապատու լուսակառոյց ե երկնանկար Սրբոյ Աթոռոյ էջմիածնի (Դիւան Ն. Զուղ., 44):

ԵՐԿՆԱՏԻՊ, ա. Երկնի տիպը՝ կերպարանքն ունեցող, եթեային:

Տանկելով զմերս նաստութիւն յերկնատիպ սրօքէապար լուսաւորչակերտ ուխտն (Յ. Կողոտ, 206):

ԵՐԿՆԵՂՈՒՏ, ա. Երկնային, փխբ. աստուածային: Զամենամաքրիչ,

զերկնեղուտ մեռոնն բաշխեսցէ ձեզ՝ երկիւղածացդ ե սիրելեացդ (Դիւան Ն. Զուղ., 113):

ԵՐԿՈՒՇԱԲԹԻՂՈՒՍ, գ. մկ. Երկու-

շաքքի լուսաղեմին, լոյս երկուշաքքի, համտ. ԿԻՐԱԿԻՂՈՒՍ, ՀԻՆԳՇԱԲԹԻՂՈՒՍ: Յունիսի ժ գիշերն երկուշաքքիլուս ազգն յուռուս եկաւ մտաւ ի լիման Կաֆային (ՄԺ I, 211): Մարտի Թ տնտեսին կիրակին երկուշաքքիլուս շարժ եղաւ (ՄԺ I, 222):

ԵՐԿՏԱՍՆ, թ. Երկու տասը՝ քսան:

Այլ տանուտէր տարու ստուգէ / երկտասանօք գթիւքըն ձգէ/ Զցածն է հոյէն առաջ բաշխէ (Դ. Զեյթ., 186):

ԵՐԿՐՆԱՒՈՐ, ա. Երկնատը, երկնային. ամփոփում երկնաւոր ե երկրաւոր բառերի:

Շնորհք ընդ քեզ ե երկրնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ ամենակալէ (Դիւան Ն. Զուղ., 103):

ԵՐԿՔԱՌ, թ. Երկու քառեակ: Այլեւ

քառից տարերց յօդեալ / Այլ երկքառ տատիւն լուծեալ (Զաք. Ա, Դ):

ԵՐՋԱՆԿԱԶԳԻ, ա. Երջանիկ, երջանկատեսակ:

Համապատիւ ե գերաթիւ, երջանկազգի ե քրիստոսընկալ դասուդ, որք զերկնաւորական տպաւորութիւնն, որ ի Քրիստոսէ Փրկչէ ունիք (Ոսկ. նամ., 1967, 134):

ԵՐՋԱՆԿԱՊԱՏԻԻ, ա. Երջանիկ պատուի արժանացած, պատուարժան:

Սրբանըւէր ե երջանկապատիւ պանծալի ե մեծագոյն եղբօր մերոյ Նիղազար վարդապետիդ (Դիւ. Ս. Յակ., 1933, 121):

ԵՐՋԱՆԿԱՊԵՐՃ, ա. Պերճ՝ մեծ երջանկությամբ:

Բարեխօսութեամբ

Մրբոյ Լուսաւորչին պահեսցէ միշտ
հաստատուն եւ երջանկապերճ իշ-
խանութեամբ (Ագուլ, կոնդ., 103):

ԵՐՐԵՐԱՒ, չբ. երեւալ (գրչ.), դղողալ:
Շարժեցաւ երկիր, քակտեցան տներ,
բարձրանայր ծովն, երբերայր և ետս
դառնայր (ՄԺ I, 208):

ԵՓՐԱՅԴՈՒ, ԵՓՐԱՏՈՒ, ԵՓՐԱՏՈՐ,
ԵՓՈՒՏՈՒ, գ. Կայսր, միապետ,
տե՛ս ԻՄՓԷՐԱՏՈՐ: Այս քաղաքս
եփրադօլին երկիրն է (Չ. Ագուլ.,
12): Եփրադօլին երկրէն դուրս է-
լանք, ընգաք Ֆէլամիկի երկիրն (Չ.
Ագուլ., 14): Է թագաւորաց մինն
այս է, քան զՍպանիօլն եւ քան
զեփրատօլն (գրչ. իփրատօլ)
փոքրն այս է (Շահմ. չիւ., 319):
Թվոյն 1697 հաշտեցան Ինկիլիզն
ու Ֆէլէմէնկն հետ Ֆրանցայու թա-

գաւորին եւ հաշտեցուցին եփրա-
տօրն այլ ի հետ Ֆրանցուսին (ՄԺ
II, 404): Եկ պարոն Իւրայէլն եփ-
ռատօլին յերկրէն ի հետ գրովն ի-
րանալթէս լէքսօս փալթիինի (եզով,
18): Իմացաք զկարողութիւն քո
թագաւորութեանդ և եփռատօլին
(եզով, 17):

ԵՕԹՆԱԿԵՐԵՏԵԱՆ, ա. Եօթը կեր-
պով կերտուած, եօթը կառոյց ու-
նեցող: Շառաշմամբ եւ պարփակ-
մամբ ըստ նոյն եղանակի դիմեալ
առ աշտարակօքն եօթնակերտեան
(գրչ. երթնակերտեան) (Դաւրիժ.,
426):

ԵՕԹՆԱՊՈՐՏ, գ. Եօթը պորտը՝ սե-
րունդը, նախնիներ: Յիշատակն
օրհնութեամբ եղիցի իւրեան որդ-
ւոյն և զաւակացն և ամենայն զար-
մից կամ եօթնապորտին (ԴՆՉՎ VII,
113):

- 9 -

ԶԱՆԻՐԱՅ (թուրք. zahire), գ. Պարէն,
պաշար, հացամբեր: Ե նաւ, Ե թօ-
փագ, զախիրայ եւ այլ բազում բարու-
թիւն առին գնացին Ազախ (ՄԺ I,
223): Թէ զախիրայէ պակասութեանն
և թէ քաղաքիս ամենայն իրաց սղու-
թեանն, ցորեանն ասես՝ հատ մի չկայ
(Դիւ. Ա. Յակ., 1941, 84):

ԶԱՆՈՆԻԱՆ, գ. Զախոնդան - զգա-
յարանք (ՄՄ 1528, 1բ):

ԶԱՅՖՈՒԹԻՒՆ (արաբ d'alf «թոյլ»),
գ. Թուրքիւն: Ընդհա, որ է ձե-
ռացն դողալն, պատճառն Գ ազգ է.

Ա՛ զուլաթ-ի մահրիքանուն զայիֆու-
թենէ (Բունիաթ, 71):

ԶԱՊՈՒՆ ԱՆԵՒ (պրսկ. zebun «նի-
հար, թույլ»), հոդ. Թուլացնել:
ՄՀՖ զապուն «արաբ. պարսկ.
տկար, խեղճ»: Եւ ետ այնորիկ
Խանդամուրն ետեւանցն եկաւ ի
Պաղչա-Սարայն, Գ քովըն պտըտեց
ու մէջ իառ, ամիսմն լման հանց
զապուն արաւ (ՄԺ I, 214):

ԶԱՊՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. Նեղուքիւն,
տե՛ս ԶԱՊՈՒՆ ԱՆԵՒ: Խոտ չիքա-
րամ ըռնէ. ձրմեռն ալ այսպէս Ե-

ղաւ, անասու[նքն] զապունութիւն
քաշեցին (ՄԺ I, 220):

ԶԱՌՔԵՐԱՆ, ա. Հոյակապ, սքանչե-
լի: *Ձառքերան - հոյակապ, գեղուն,
հոյծ, բազմաբեր, ծոհ, լիապատառ,
համակալ (ՄՄ 2281, 135ա):*

ԶԱՌՆԱՓԱ, գ. Ընծուրտ: *Կա և ազգ
մի կենդանի, որ զառնափա ասեն,
որ վիզն խիստ երկայն է (Յ. Թու-
թունջ., 309):*

ԶԱՐԱՐՈՒԹԻՒՆ (արաբ. պրակ.
zarar, zarar), գ. Վնաս, վնասա-
կարուրիւն: ՀՖԲ և ՄՀՖ զարար
«արաբ. պարակ. վնաս»: *Պարսից
երկիրն խողվէց և կտրվէց՝ և էն
ժամանակումն մեր սովը այգար-
ներն... մեծ զարարութիւն ան տվել
(եզով, 353):*

ԶԱՐԴՈՒՅԻՉ, ա. Զարդարող: *Ըզձեզ
գովեմք, ո՛վ հոգեսունք... ծառք
կըրկնոստեղք քաղցրաբանիչք եւ
զարդուցիչք բարձրաթրոհչք բազ-
մաձագունք (Յ. Կոլոտ, 94):*

ԶԱՐԶԱՐԴԱՐ, գ. Ծաղկազարդի
ժող. անուանումը: *Որք մերձ են՝
փութով գան հաչին եւ Յիսնա-
կաց... այլք Մեծ Պահոց սկիզբն
մինչ Զարզարգարի շաբաթն (Սիմ.
Լեհ., 262):*

ԶԱՐԹՈՒՅՈՂԱԿԱՆ, ա. Արթնացնող,
սքափեցնող: *Դաշտիկ ծաղկալի, ո-
րոյ սկիզբն է նախազգուշացումն
խոստովանահարց եւ կոչնակիկն
զարթուցողական (Գալ. Կենս., 291):*

ԶԱՐՄԱՆ (բնաս.), գ. ա. Զարմանք,
զարմանալի: *է հանդիպող այս գե-
րեզման / Պատմեմ ձեզ բան յոյժ է*

*զարման / Լսել բանին շարագրու-
թեան (Յ. Քիրտ., 39):*

ԶԱՐՄԱՆԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ, գ. Զար-
մանալի կերտումով շինութիւն:
ԱԲ և ՀՖԲ զարմանակերտ «շէնքը
զարմանալի»: *Զգեղեցկութենէ և
պայծառ զարմանակերտութենէ
դամբարանի սուրբ գլխոյ առաքե-
լոյն ոչ որ լեզու կարէ պատմել
(Պատմ. երուս., 1931, 275):*

ԶԱՐՄԱՆԱՇԱՐ, ա. Զարմանալի
կերպով շարուած: *Սահմանաւո-
րեալ արեգածագ կողմամբն զար-
մանաշար աղբերակօք (Յ. Կոլոտ,
204):*

ԶԱՓՈՐՈՂՅԻՔ, գ. Կազակ, այդպէս
էին անուանում Զապորոժիէի կա-
զակներին: *Գայ հասանէ զօրա-
գլուխն Ռուսաց՝ անուանեալն Պո-
րոտաւքա, եւ ընդ նմա խն հազար
հեծեալս հազախաց, որ կոչին Զա-
փորոհցիք (Պատմ. Խոթ., 47):*

ԶԲԱՂԱՋԵՐԾ, ա. Զբաղմունքից
գերձ՝ ազատ: *Վասն հարկի սրբու-
թեանդ և մեր զբաղազերձ ազատ-
մանն յանձն առաք, զոր ինչ և հրա-
մայեցեր կատարել ծառայաբար
(Դիւ. Ս. Յակ., 1932, 253):*

ԶԳԱՂԱԿԱՆ, ա. Զգայական, զգայու-
թեամբ արուող: *Յաղագս չորս ար-
ուեստին, որ են իմաստութիւն զգա-
լական ի աշխարհն (Տէֆթ., 376):*

ԶԵՆԱԹ, ԶԷՆԷԹ,

ԶԻՆԱԹ, ա. Շքեղութիւն, հանդիսա-
տուրութիւն: *Յորժամ թագաւորն ի
դուրս ելանէ, այս է զինաթն՝ ԻԴ յե-
դաք, ԻԴ շաթիր և ԻԴ խաչալամ, Լ
դաւուլխանայ (Յ. Թութունջ., 303):*

Որքան **գէնէթ** որ ունի, ինքն նոյն-
պէս այլ ունի կիսն (Յ. Թուրթունջ.,
308): Եւ յորժամ թագաւոր դուրսն
ելանէ, այս է **գենաթն** (Յ. Թու-
թունջ., 308):

ԶԷԹՈՆ, գ. Զեյթուն: Թէ՛ գէթոնն և թէ՛
խաղողն այս տարի սակաւ է (Դիւ.
Ս. Յակ., 1941, 84):

ԶԹԱՓԵԼ, չբ. Սթափուել: **Զթափեանց**
յանխելութենէ և միտքդ ժողովէ և
զօգուտն քո ընտրեա՛ (Դիւան Ն.
Զուդ., 88):

ԶԻՆԱՆԱՂԱՅ, ա. Զէնով վարժ
խաղացող՝ կոռուղ, զինավարժ:
էր այրս այս Մխիթար երեւելի ի մէջ
քաղաքին Վանայ... վասն զի կարի
ձիավար էր եւ **զինախաղաց** եւ
ուժնդակ (Դաւրիժ., 414):

ԶԻՊԻՆՈՅ, գ. Աղբաւնոց: Հէօճճէթ
եաֆայու մեր վանուց վերայ **զի-
պիլնոց** պախճային (Երուս. դիւ.):

ԶԴՋԱՆԱԼԻ, ա. Զղջալի: Ա.Բ գղջալի
«լի գղջամբ, գղջացող, ողբա-
կան»: Բարկութիւն է առաւել
գղջանալի, քանզի առաւել ունի առ
ի բանականութենէ (ՄՄ 1756,
34բ):

ԶՈՒՌԻԱԹ (արաբ. պարսկ. zaher

«երևելի, բացորոշ»), գ. ա. Իւրա-
յին, առնմակից: Շիխի **զուռիաթն**,
որ թագաւորութիւն ա արելի, Շա-
հիսմէլին ԻԴ տարի այ, Շահ Թա-
մազն ՄԴ տարի այ (Սանահն., 65):
Մեր **զուռիաթ** մարդ էլ մատնարկի
միջումն բան շունինք՝ ո՛չ մեք, ո՛չ
մեր որդիք (Սանահն., 140):

ԶՉԱՓԱԹ, մկ. Զափաւոր, քիչ: **Զչա-
փաւ** ես գրեցի, զբաւանդակն Սրբու-
թիւնդ գիտասցէ (Կ. Ամատ., 57):

ԶՐԱՍԱՅ, գ. ա. Զրախօս, դատար-
կախօս: Աստուած դատ արասցէ
ընդ իս և ընդ **զրասացան**, և հրա-
մանուցդ աղօթք և օրհնութիւն մի՛
վերասցի յինէն (Դիւ. Ս. Յակ.,
1933, 24):

ԶՐԱԽՆՔ, գ. Գագաք: **Զրաւնք** - կա-
տարք, գագաթք, ոլորտք, անգոր-
դանք, անգաւանք (ՄՄ 2281,
129բ):

ԶՕՌԻՎ,

ԶՕՌՈՎ, մկ. Ստիպմամբ, հազիւ: Ա-
նօրէնի ասկի ձեռնից **զօրիվ** ազա-
տենք (Եզով, 356): Իւր քաջութեան
զօռովն ոչ տայր հանգիստութիւն
Իսմայելացոց (Սանահն., 62):

-է-

ԷԱՊԱՏԻԻ, ա. գ. Պատուաւոր, ա-
ռաջնորդ: Դէտ, էապատիւ, առաջ-
նորդ, ազոր (ՄՄ 2019, 167ա):

ԷՄՆՈՒԹԻԻՆ (արաբ. emin «մաքսա-
պետ»), գ. Մաքսապետութիւն: Ո՛չ

մաքս ունել, ո՛չ էմնութիւն, ո՛չ կօմ-
րուկ եւ ո՛չ այլն, որպէս ի Լեհ կամ ի
Տաճկաստան (Սիմ. Լեհ., 170):

ԷՄՐ (արաբ. amr, բուրբ. emir «հրա-
ման»), գ. Հրամանագիր, կար-

գաղբուփին: ՄՀԲ *ամբ նոյն նշ:*
եւ ետ այնորիկ թագաւորէն էմբ ե-
ղաւ թէ՛ Սւզուն բերթ պիտի խորդա-
կըւի (ՄԺ I, 213): Անկից մէկ բարէ-
պաշտ քրիստոնեամն էմբ էտո ե-
կաւ, թէ՛ Բ ոսկի թող առնուն (ՄԺ I,
221): Դու գիտես, որ առանց էմբի
այտտեղ գործ առաջ չի գնար, թէ
որ շիտակ էմբ և պարաթ ունիս և
խէթիշէրիֆ (Դիւ. Ս. Յակ., 1940,
282):

ԷՄՐ ԱՆԵԼ, հրդ. Հրամայել, հրա-
ման արձակել: *Ճանպէքէրէյ խանն*
էմբ արաւ, յունիս ամսու ոչխարա-
զէն պայրամ արին (ՄԺ I, 220):
Մէկ դատաւոր մի կայր... էմբ շա-
րաւ (ՄԺ I, 221):

ԷՄԻՐ (թուրք. esir), գ. Գերի, ծառայ:
ՀԲԲ *եսիր նոյն նշ:* *հմի էլ էսիր են*
տարեւ ղզլպաշիցն (եզով, 258):
Այս էսիրներն որ տեղս գայ, հրա-
մանք առես թագաւորական աւզն
գմրուկ շառնեն էսիրայ գլուխ ԶՃ
(եզով, 370):

ԷՍԿԱԼԷ (իտալ. scala, թուրք. iskele),
գ. Նաւահանգիստ: *Ղինու Ը օր*
գնացար Ղուրսէր, որ է Հնդկաց ծո-
վու էսկալէն (Յ. Թուլթունջ., 307):

ԷՄՆԷՖԷ (արաբ. թուրք. csnaf), գ.
Արհեստաւոր, վարպետ: *Ե խա-*
լեան կուզէ... պիտի ըրդատ, պիտի
երկաթ բանող, ամէն էսնէֆէ մընա-
ցեալ (ՄԺ I, 227):

ԷՍՔԻՃՈՒԹԻՒՆ (թուրք. cskici), գ.

Հին իրերի վաճառականութիւն,
հնավաճառութիւն: *Ո՛չ պախալ, ո՛չ*
խանութ նստիլ եւ ո՛չ այլ ինչ, բայց
միայն հին ու մին ծախել, էսքիճու-
թիւն առնել (Սիմ. Լեհ., 170):

ԷՐԵՍՓԱՌԱՇ (հայ. «երէց») եւ
պարսկ. farras «սպասաւոր»), գ.
Սպասաւոր, կամֆը կատարող:
Ես՝ հնազանդ էրեսփառաշ էջմիած-
նայ Բարսեղ եպիսկոպոսս իրիցի
այգին փոխէցի ի վրէն վէրէք էլավ
ի Ա լաւ գոմէշ իրանց կամիւ տվին
(Սանահն., 170):

ԷՐԷՎԱՅՐԻ, գ. Վայրի երէ՛ որս: *էրէ-*
վայրի - ոչխար կամ ած (ՄՄ*
1127, 139բ):

ԷՐՈՒՇՏԱ ԱՊՈՒՐ, հրդ. Արիշտայով
սպաւոր: *Դեղն այն է, որ շիրիկ ձի-*
թով ըսպանախ և էրուշտա սպուր
ուտէ (Բունիաթ, 94):

ԷՓԵԿՈՒՄՄԱՅ (լոմ. epigramma
«մակագրութիւն»), գ. Ոտանա-
ւոր, արձանագրութիւն: *Զոտանա-*
ւորս վերտառեալ քաջաներբողս՝
կարգացեալ ի հելլէն բարբառ է-
փիկոսամմայ (Դիւան Մխիթ., 145):

ԷՔԷՍԵԱՍՏԱԿԱՆ (լոմ.
ekklesiastes), ա. Եկեղեցական,
հոգեւորական: *Իսահակ վարդա-*
պետն ետ ինձ գաւազան էքլէ-
սիաստական իշխանութիւն ի վե-
րայ դամբարանի սուրբ Առաքե-
լոյն, ի տօնի Պէնտէկոստէին (ՄԺ
I, 310):

-Ը-

ԸՂՁԱՏՈՉՈՐ, ա. Իդներով տոչորուած՝ վառուած, բաղձալի: Այս Փիլիպպոս կաթողիկոս հանապազ ըզձատոչոր եւ խանդակաթ տենչմամբ փափագէր, թէ որո՞վ արդեօք իցէ հնար, զի առեալ զսուրբ Աջն բերցէ ի սուրբ էջմիածին (Դարիժ., 261):

ԸՆԴԱԳՐԵԼ, նբ. Ստորագրել, ստորին մասում գրել: **Ընդագրել** - խորագրել (ՄՄ 2019, 172բ):

ԸՆԴԲԱՐԵԼ, նբ. Վանել, հեռացնել: **Ընդբարեմ** - ի բաց մերժեմ և հեռացուցանեմ յինէն, բացասեմ հրաժարմամբ, լատ. *abrenūo* (Վ. Յուն., 29):

ԸՆԴՂՈՄ, ա. Հոծ, անտրոհ, խիտ: **Ընդոծ** - յաճախագոյն և երկարածիզ, երբեմն նշանակէ խիտ առ խիտ (Վ. Յուն., 29):

ԸՆԴ ՔԱՐՇՍ, մկ. Քարշ տալով, գետնաբար: **Ջորականք եւ ծառայք եւ սպասաւորք իշխանացն...** հարկանէին, ապտակէին, զարկուցանէին զգետնի եւ **ընդ քարշս տանէին** (Դարիժ., 363):

ԸՆԹԱԹՐԵԼ, նբ. Ենթադրել: **Ընթաթրել** - եխտել* (ՄՄ 1127, 139բ):

ԸՆԿԵՐԱՆՄԱՆ, ա. Ընկերոջ նման՝ ընկերաբար: **Ջուարթնոց նման պահպանելով...** **Ընկերանման յորդորելով** (Առ էջմ., 194):

ԸՆԿԵՐԵԼ, չբ. Օգնել, աջակցել: Ն. Բիզ. **ընկերեմ** «1. մէկտեղ ըլլալ, 2. օրինել», ՄՀԲ **ընկերել** «թոյլ տալ» (իմաստափոխ.): **Հէլպէտ ուզէր մէկ սուճամն ըսդակ շահու**

հասարակէն, որ ընկէրէր հասարակն զկրօֆն (գրաֆ) (Գովր., 155):

ԸՆԿՁՄԵՋ, գ. (բար.) Ընկոյզի միջուկ: **Գ օր հանապազ կաթ տան, անօթուց ամբու ընկզմէջ տան, զայս դեղերս արա՝ խիստ լաւ է (Բունիաթ, 95):**

ԸՆՃԵԼ, նբ. **Ընճել** - ձգել կամ կոխել (ՄՄ 1127, 139բ):

ԸՇՏԱՊԳԻԱՅ, ա. մկ. Արագընթաց: **Ըշտապգնայ** - շուտգնաց (ՄՄ 1127, 140ա):

ԸՌԱՄԱՆԻ, գ. Նոսան գոյն, տե՛ս ՌԱՄԱՆԻ:

ԸՌԱՄԻԿ,

ԸՌԱՄԿԱԿ, գ. Ռամիկ, շինական: **Մեծ և փոքր իշխեցողք, գլխաւորք և ըռամիկք** (Եզով, 418): **Պահ մի նմանիմք ըռամիկահին / Կարօտ մընամք դահեկանին (ՌՄՀԲ II, 308):**

ԸՌԱՏԱՀԱՆ, գ. Պաշտօնեայ կամ անձնանուն, թերեւս վրաց. **Ratevani** (ծան. հրատ.): **Հրամանաւ Ռօստօմ խանի եկինք խօի ըռատահան Ամիլախօրի ազնի որդի Իւանի բէժինէն (Սանահն., 150):**

ԸՌՌԻՍ,

ԸՌՌԻՏ, գ. Ռոս, տե՛ս նաև ՌՌՌՍ, ՌՌՌՍ: **Ըռուտի թագաւորն թատարիք է տեսնում (Եզով, 258): Ըռուտի և մեր բարեպաշտ և աստուածայսէր թագայորիս մերոյ (Եզով, 427): Աստուծոյ ողորմութեամբ մեք՝ Կատարինայ ենփրաթ-**

ոից, ինքնակալ ամենայն ըռուտի երկրի (եզով, 431):

ԸՌՈՒՍՏԵՎԱՐ, գ. ա. Ռուսերէն, ռուսական: Հրամայական թուրտ, որ է ըռուտեՎար ուքազ կասեն (եզով, 395): Էսպէս էլ նմայնապէս ուքազ աղարկեցինք ըռուտեՎար Բաքոյ (եզով, 396):

ԸՍԳԱՍՏ,

ԸՍԳԱՍՏՈՒԹԻՒՆ, ա. գ. Զգաստ, գգաստութիւն: Եւ ըսգաստն Գիւլինար աչ ըսգինն տղային տա հանապազ եւ ձախն՝ աղչրկանն (ՄԺ I, 246): Նոքա խիստ ըսգաստութեամբ այս կողմն և այն կողմն կարծիք կանեն (եզով, 163):

ԸՍԳԵՆՈՒՎ (գրբ. գգեմով), նբ. Հազմել: Անկեալ դնէաք ի ներքոյ ծանր պարտուց ՂՍ զոշի, զոր արարեալ էր Արևելցի Դաւիթ եպիսկոպոսն ըսգենլով խաֆթան (Դիւան Ժ, 86):

ԸՍԻՒՆ, գ. Ստիմ: Եւ ըսգաստն Գիւլինար աչ ըսգինն տղային տա հանապազ եւ ձախն՝ աղչրկանն (ՄԺ I, 246):

ԸՍԼՈՒԿԱ (ռուս. сЛуга), գ. Ծառայ, սպասաւոր: Աւան ուզպաշի, ըսլուկա Կարապետ Իւան (եզով, 382):

ԸՍԼՈՊՈԹ, գ. Հրաման, տե՛ս ՍԼՈՊՈԹ:

ԸՍԿԵՍՐՈՐ, գ. Սկեսրայր: ՄՃԲ սկէսէր նոյն նշ.: Մէք՝ հօջայ Մէլիք Աղէ որդի և թոռունք և հարսունք մեր, հայր և պապ և ըսկեսրօր Մէլիք Աղէ յիշատակն հոգևոր որ թողեր էր (Յ. Քիւրտ., 10):

ԸՍՊԱՀԻ, գ. Հեծեալ գօրբ, տե՛ս ԻՍՊԱՀԻ: Ոչ տեսեալ էին և ոչ լը-

սեալ, որ ծառայք և իշխանք ենկիշերիք և ըսպահիք միաբան լինի և թագաւորն սպանեն (ՄԺ I, 211): Ըսպահիք շարդեցին, զոմանս թրով, սրով սպաննեցին, զոմանս ղեղդեցին, զոմանս ծովըն ձգեցին (ՄԺ I, 220): Է նա ըսպահի քաղաքս դառ[ն]ացուցին (ՄԺ I, 223):

ԸՍՊԱՆՏ (պրսկ. sepand), գ. (բար.) Վայրի փեզեմայ, Peganun harmfula: Հուլպա, ըսպանտ, տուղտ եփէ ջրով և դիր ի վրա տեղոյն (Բունիաթ, 75):

ԸՍՊՕՍԱԿԱՆ, ա. մկ. Զբօսնելիս, հարեւանցի կերպով: Արդ որք դիպիք ըսպօսական և ընթեռնուք սիրով այսբան, մի՛ խնայէք զհայր մեղայն (ԴՉՎ VII, 244):

ԸՍՏԱՄՈՔ, գ. Ստամոֆ: Ըստամօքին պուխարէն լինի, որ գլուխն ելանէ (Բունիաթ, 62): Երեսին գունն ի սևութին զարնէ, և յըստամօքն քամի շատ լինա (Բունիաթ, 66): Որ քաղցենալու լինի, որ ուռի ըստամօքն (Բունիաթ, 89):

ԸՍՔԱՆՉԵԼԻՔ, տե՛ս ՔԱՆՉԵԼԻՔ:

ԸՐԷՆԷՄ, գ. Հովարտակ, պաշտօնական գրութիւն, տե՛ս ԲԱՂԱՄ: Զամենայն հարկաւոր զգիրսն, եթէ ըրէիւէմ և եթէ այլ հուքմեր... պարոն քէլէնթէր խոճայ Աւետիսի գիտութեամբն և կամակցութեամբն առաքեսցէ առ մեզ (Դիւան Ն. Զուր., 63):

ԸՐՔՆԻՍԱՆ (արաբ. rak-al-nisā), գ. (բժշկ.) Նստատեղի նյարդի բորբոս, Ichias: Ըրքնիսան ի յոսկրացատուն կու բաժանի (Բունիաթ, 106):

-Թ-

ԹԱԲԻ, գ. Հպատակ, ենթակայ: Այս թագաւորս ևս թաբի է Հապաշոյ թագաւորին (Յ. Թուխունջ., 305):

ԹԱԲՕՐ, գ. Թափոր, եկեղեցական հանդէս, տե՛ս նաև ԹԱՓՈՒՐ: Ուրուֆաթով եւ քահանայիւք գան թաբօրով ի սուրբն Պետրոս, երկու երկու (Սիմ. Լեհ., 161):

ԹԱԳԱՅՈՐ, գ. Թագաւոր: Ըռուստի և մեր բարեպաշտ և աստուածայսէր թագայորիս մերոյ (եզով, 427):

ԹԱԳԱՒՈՐԱՊԵՐՃ, ա. Թագաւորի նման պերճ: Աստուածագարգ և թագաւորապերճ, իմաստնապաճոյճ և հրաշափառ գղեկի, հասցէ գիր սիրոյ և նամակ գգուական առ ամենայն հայկասեռ ազգոյ (Ոսկ. նամ., 1967, 134):

ԹԱԳԱՒՈՐՉԱԿԱՅ, գ. Թագաւորացն, թագազարմ: Տէղն եկաւ Սէֆիղուլի խան, որ առաջի անունն Ալիսա-Միրզայ էր, սորայ ասլն թագաւորագոյ է, որ է լակզի Դաղստանու (Չ. Ազուլ., 68):

ԹԱԳՆԱԳՆԱՅ,

ԹԱՔՆԱԳՆԱՅ, ա. Թափուն, գաղտնի ուղիներ ունեցող: Այրն քանզի հմուտ էր վայրացն, ընդ թաքնագնայ (գրչ. թագնագնայ) ձորակ ինչ, նախ քան զանցանէլն Չօմարին զկապն, փութանակի եհաս ի գիւղն (Դաւրիժ., 389):

ԹԱԳՈՒՆ, ա. Թափուն: Բազում շար-շարանօք [զնահապետն] սպանին թագուն ի մէջ բանտին (ՄԺ I, 285):

ԹԱԳՐԱՐ,

ԹԱՔՐԱՐ, մկ. Դարձեալ, վերստին: Ի գալն 20 աւուր ճանապարհ գետ ի վեր, և եկաք թագրար անցաք զգետն (Յ. Թուխունջ., 310): Ժ աւուր ճանապարհ ևս եկանք ի գետի վերայ և թաքրար անցաք զգետն (Յ. Թուխունջ., 305): Այնոր ներքին թաքրար տեսաք այլվի ե հավուզ մեծ (Յ. Թուխունջ., 316):

ԹԱԴԷՍՍԱՆՔ, գ. Քրիստոնէական յարանուանութիւն ուղ միջնադարում, որ ծագել է հայերից՝ եւ այս է թագաւորութիւնս Բ ազգ աղանդ են... միւս ազգն ասի թագէտսանք, որ ի յազգէն հայոց յառաջ են եկեալ (Յ. Թուխունջ., 304):

ԹԱԹԱՐՈՒԹԻՒՆ, գ. Դաժանութիւն, խստութիւն՝ իբրեւ հոմանիշ «քաթար» անուանը: Կարի և դիւր էր ինձ զթաթարութիւնն ի գործ ածել և զշափ անձինն գիտացուցանել (Դիւ. Ս. Յակ., 1932, 253):

ԹԱՎԵԼ, նբ. Թալանել, առգրաւել: ՀԲԲ թալել՝ «տե՛ս թալանել»: Անիծած Նողայն Դ քովն աւիրեց, որ թալլեց տընէր ու տեղրանք քակեց, ոչխար ու տաւարն քիշեց (ՄԺ I, 214): Ոմանս թալլեց, ոմանս ի սուր

մաշեց (ՄԺ I, 217): Մեծատունը դռնէդուռ անկան՝ դատի, նայիպ, որտեղ ցորեն իմանային, կու թալլէին (ՄԺ I, 223):

ԹԱԼՊԻՍ, ա. Խաբէբայ: եթէ ես ձեռնամխիլ կամիցիմ այսց վիճակացս թալլիս լինիմ և յանցաւոր (Գաւազ. Աղթմ., 133): Թէ ձեռնամխիլ կամիցիմք յայս վիճակս, թալլիս և խաբէբայ եղիցուք (Գաւազ. Աղթմ., 134):

ԹԱՆԾԱԿԻՑ, ա. Թախծիւն հաղորդակից, թախծոտ: Ո՛վ թախծակիցք իմ թէմանք լուսոյ, թարգմանօրէն հասկացուցէք ինձ / Ու՞ր է թագն մեր ընդելուզեալ (Ներբ. Սրապ., 21):

ԹԱՆՍԻՐՈՒԹԻԻՆ (պարսկ. tox), գ. Խարդաւանք, շարուփիւն: ՄՀԲ թախսիր «մեղք, յանցանք»: Ով էս բանիս թախսիրութիւն անէ կամ այլ և այլ անէ, Աստուածածին իր բանն և իր որդանցն խոռով կենայ (Սանահն., 170):

ԹԱՄԱՍՈՒԿ,

ԹԱՄԱՍՈՒՔ (թուրք. temessük), գ. Մուրհակ, պարտատուագիր: Ստեփաննոս վարդապետն թամասուկ է գրեր մեր կողմենէ և Մեսրոպ վարդապետին կողմանէ (Իրևան Ն. Զուգ., 87): Պարոն Աւետին շորս հարիւր թումանի թամասուկն տայք խանին մլազունն (Իրևան Ն. Զուգ., 92): Հայր սուրբ, Ստեփաննոսն այս տեղս ինքար արար զիւր տված թամասուքներն խօճա Պաղտասարին (Իրւ. Ս. Յակ., 1940, 202):

ԹԱՆՀԱ (պարսկ. tanha «միայնակ»), ա. Անմարդ՝ աշխից հեռու

տեղ: Առ դուռուշուն և գրամ, Բ օրն մէկ թանհա տեղ մի նիստ (Բունիաթ, 114):

ԹԱՆՃԱՐԱ (թուրք. tencere), գ. Կաթսա, մեծ աման: Աստուած արհնէ Ամիրճանէնց պառան. մին թանճարա [Երեստ Սբ. Յակոբայ] (Ակոռ., 201):

ԹԱՆՏԷՄ (լատ. tandem), շ. Ի վերջոյ, վերջապէս: Թանտէմ գտեալ զկոպար լճին՝ անցի ի գեօղն (Կամենից, 150): Թանտէմ տաժանմամբ մեծաւ հասինք ի զղեակն Սթառօշէլի (Կամենից, 153): Թանտէմ, յերեկոյին անագան հասինք յաւան (Կամենից, 158):

ԹԱՊԱԼԻԼ, ԹԱՊԼԻԼ,

ԹԱՊԿԱԼԻԼ, շբ. Թաւալուել: ՄՀԲ թապալ «թաւալ, թաւալում»: Թաւալիմ, թապալիմ (գրչ. թապկալիմ, թապլիիմ) ի վերայ վարդի (ՈՒՄՀԲ, 126):

ԹԱՊՈՒԹ (թուրք. tabur), գ. Զօրք, գօրամաս: Ելան ի վերա Խըրիմին, եկան Խի հայով եւ նաւղայով, մայլըպաշոյլ եւ թապուռով եւ ամալթալից դարձան (ՄԺ I, 215):

ԹԱՌԱԹՄԱ (թուրք. terletme), գ. Քրտնեցում, քրտնելը: Սապան այն է, որ սարամէն կամ ի թառալթմայէն յետև լինի (Բունիաթ, 64):

ԹԱՎԱՅ (պարսկ. tavlic), գ. Ախոռ: Սոյն թվին ներքի պուռն, գոմերն եւ թավլէքն շինեցաք, որ ի շարժէն բլաւ ամէնն (ՄԺ I, 309):

ԹԱՏԱՐԻՔ,

ԹԱՏԱՐՈՒՔ (թուրք. arwap. tedarük), գ. Պատրաստութիւն: Մեք մինչի

լօթկի թէտարիք կանենք... զմեզ շուտ շաշմիշ կանեն (եզով, 422): Մեզ խապար եբեր, թէ օսմանյուն կոտի թատարիք ունի (եզով, 257): **Թատարուք** տեսաք, որ գնանք նիազով էլչուն դէմ, որ մեզ այդ կողմն ճամփէ, Իսրայէլի նէզիր պուլարն (եզով, 318): Որիշ տեղ էլ հրաման անք արեւ, որ էլ թաղարիք ան տեսման (եզով, 357):

ԹԱՐԱՆԱԾՈՒ, ա. Թարախալից, թունալի: **Զթարախածու** մնացորդ բաժակն ախորժանօք ըմպէր՝ կոշելով զանուանս գողեացն իշխանս և կուրոպաղատս (Ստ. Ռօշքայ, 101):

ԹԱՐԵՂ,

ԹԱՐԻՂ (թուրք. tarig), գ. Թուական, ամսաթիւ, նաև՝ կարգ, սովորութիւն: Որէնքն էլ պիղամաղ եղան թողափուլ տուին մինչի գրոյս Գ գրեալ թարեղն և թարեղունս լսեցին, թէ ջնդրալ եկել ա Պաքու (եզով, 425): Այլ և այս թարիղէս մին փոքր յառաջ օսմանլուէն ԶԹ մարդ մեզ վերայ ղօշուն եկին (եզով, 422): Որ թարեղումտ ուրէնց տեղն որ կալմնան, ասկար աղարկի և տիրութիւն առի (եզով, 406):

ԹԱՐՃԻՄԱՆ (պարսկ. terjeman), գ. Թարգման, նաև մի պաշտօն միջնադարեան արևելում: Ի միատուօրն վազվազակի թարճիմանի ձեռովն ի մննունդն էին ուղարկեալ, կարծելով թէ դու ի մնունդն ես (Դիւ. Ս. Յակ., 1941, 41): Նա զթէրճիմանք ուղարկեց մէհքէմէն (Դիւ. Ս. Յակ., 1941, 41):

ԹԱՐՓԱՏԵՂ (պարսկ. tarf «շահ, օգոտ, նուաճում» բառից), գ. Ռուսատեղ, ձկնորսատեղի: ՀԱԲ ունի թարփ կամ թարբ «ձուկ որսալու համար ջրի առաջ դրուած կողով»: Դօրիկանցէ իւր թարփատեղօվն (Սանահն., 166):

ԹԱՅԵԱԼ, ա. Թրջուած, թացացած: ՄՀԲ թացվիլ նոյն նշ.: Չունկս անկեալ և երեսս կետինն թացեալ... ազդ արարից (եզով, 344):

ԹԱԻԱՄԱՐՄԻՆ, ա. Թաւ մարմնով, մազոտ: Նա ոչ հաւանէր մտօք նորա, զի թաւամարմին էր (ՄԺ II, 323):

ԹԱԻԱՅ (իտալ. tavola «սեղան»), գ. Սեղան, նաև՝ խնջոյք: Ի թագաւորի սէրայն Բ թաւայ կայ, որ սէրայի դիմացն է. թաւայ ասելն տիվանխանայ է (Շահմ. յիշ., 317):

ԹԱԻՈՍ, ա. Թաւ մորթի ունեցող, զոհաբերութեան կենդանի: Հրամայեաց եւ սրբոյն Գրիգորի գօհել նմա եւ թաւոտս մատուցանել կոոցն Անահտայ (Ստ. Ռօշքայ, 30):

ԹԱՈՒԶ ՂՈՒՇԻ, գ. Սիրամարգ: Տեսանք... թաւուզ ղուշի, Հնդստանայ կատու եւ այլ կերպ կերպ կենդանիք (Շահմ. յիշ., 317):

ԹԱՓԱՆՅՆԻ, ա. Թափանցիկ: ՄՀԲ թափանց «թափանցող»: Յեամանի լան սեալին է, այսինքն որ թափանցնի (Դարիժ., 445): Ժանկահարի գոյն է այս քարս եւ թափանցնի (Դարիժ., 448):

ԹԱՓԼՎԻԼ, կր. Հրաժարունկ: *Լսիլ է պ. պրասդավան, թէ կու թափլլին ֆունտադորութենէ (Գովր., 252):*

ԹԱՓՇԻ (պարսկ. topši), գ. Մեծ ափսէ, մատուցարան: *Աստուած աւրհնէ Քոսակ Յովանէս և իւր որդի մահրասի հաշատուրն, Բ արծաթէ թափշի ետ Սբ. Յակոբայ (Ակոռ., 201):*

ԹԱՓՈՒՐ, գ. Թափուր, տե՛ս ԹԱՔՕՐ: *Թափուր ելաք մէմըն ման եկաւ վարդապետն... զընաց պառկեցաւ, լեզուն կապեցաւ, հոգին առ աստուած աւանդեաց (ՄԺ I, 219):*

ԹԱՔԻԻ, մկ. Թափուն: *Ճաճանշափայլ լուացընցուղ պըճնեցար թաքիւ (Յ. Կոլոտ, 200):*

ԹԵԿՆԱԹԵԿ, ա. Ոլորապտոյտ: ԱՔ թեկն ի թեկին «նաւերը շարժելով, կտորտուելով»: *Յորզընթաց գետով եւ թեկնաթեկ հեզաքայլ առուի՝ ոլորտախաղացեալ առ հարաւով (Յ. Կոլոտ, 205):*

ԹԵՐԱՏԱՇ, ա. Թերակատար, անտաշ, անվարժ: *Տրդատ կազմողս թերատաշ (Դիւան հայ վիմ. IV, 65):*

ԹԵՒԱԿՏՈՒՐ, ա. Թեւերը կտրած՝ կտորած, փխբ. թեւաքափ: *Հիֆ թեակտոր նոյն նշ.: Կու կամին ամէն իրաց թեակտոր առնել մեզ (Եզով, 139): Հաստատեն զմեզ թեակտոր առնել և կորուսանել (Եզով, 162):*

ԹՂԱԻ, մկ. գ. Թգաչափ, մէկ թիգ: *Մայիսի է ձիւն եկաւ, ցուրտ և հողմ սաստիկ, Սուլդախա (Սուլխաթա՞) դաշտերն ու սարերն ի սպիտակա-*

ցուց թղաւ, կանկնեցաւ բուրն (ՄԺ I, 210):

ԹԷՁ ԹԷՁ, մկ. Արագ-արագ: *Կաշին նօսր լինի, աշիշ ուժն պակաս լինի, գաշըն թէզ թէզ թարթէ (Բոնհաթ, 66):*

ԹԷՆՐԻՐ ԱՆՆԵԼ (թուրք. tahrir), հրդ. Յուցակագրել, մարդահամար անել: *ՌՂԲ Ջաֆարն թէհրիր երաւ Արզրումայ փաշայիս եւ օգօստոս ամսոյն մահ անկաւ (ՄԺ I, 242):*

ԹԷՄՊՈՒՐ, գ. Երաժշտական լաւալին գործիք: *Այս յատուկ իլմ-ըլ մըսուգուն զարուեստն և զմըզամըն գրամը, որ է սազն և զգոյնըն սազերաց՝ զթէմպուրն, սէնթուրն և զմուղնին գրեցաք (Տէֆթ., 376):*

ԹԷՏԱՐԻՔ, տե՛ս ԹԱՏԱՐԻՔ:

ԹԷՐՃԻՄԱՆ, տե՛ս ԹԱՐՃԻՄԱՆ:

ԹԷՐՃԻՄԱՆՈՒԹԻՒՆ, գ. Թարգմանութիւն, թարգմանի պաշտօն, տե՛ս նաև ԹԱՐՃԻՄԱՆ: *Պատկերն... վերոյգրեալ Պապօս թէրճիմանութեան ժամանակին քաշել տուեր է (Ջուար, 1867, 205): Եաֆայու զթէրճիմանութիւնն վաճառեալ ոմն առ այլ ոմն եւ զկնի սակաւիկ եւ այլ ոմն (Երուս. գիւ.):*

ԹԷՐՍԵԱՆԱ (թուրք. tersane), գ. Նաւարան, նաւամատոյց: *Հասին ի Կ.Պօլիս եւ մտին ի թէրսխանան (Գալ. Կենս., 85):*

ԹԷՕԼՕԼՈՍ (հուն. theologos), գ. Աստուածաբան: *Պատուով հանգուցին զնշխարսն... թէօլօլոս Ղրիգորի եւ հրիսօստոմայն զսուրբ Յօհան (Քէօմ., 27):*

ԹՐԻԱՀԱՇՈՒԹԻՒՆ, գ. Թռահաշիւ, տումար: *Գրեցաւ նամակս ի թրւա-*

հաշույթեան մերոյ ՌՃԺԳ (1664) յամսեանն նոյեմբերի ի Իէ (Դիւ. Ս. Յակ., 1933, 122):

ԹԹԱՔԱՂ, գ. Թթահաւաք, թութք թափ տալը: *Եւ համաձայն թթաքաղին / Ածեալ ի միտ զպատգամս նոցին / Եւ տաղեցից զերգս առածին (Ս. Ապար., 149):*

ԹԻԿՆԱՍՏԱՆԿԵԼ, նբ. Դրժել, ուրանալ: *Թիկնաստանդեմ - ստեմ և փոխեմ զասացեալս իմ, ոչ կամիմ գալ առ իրն առաջադրեցեալ և պատճառեմ զբանս պէսպէս, լատ. թէքնճիվէնսոս (Վ. Յուն., 30):*

ԹԻԿՆԵՂԵԼՈՒԹԻՒՆ, գ. Թիկունմ կանգնելը, աջակցութիւն: *Միաբանութեամբ եւ միմեանց թիկնեղելութեամբ պատուհասակոծ առնել դաշինս (Յ. Կորոտ, 262):*

ԹԻՒՆԱՂԻՐ, ա. Թոյնով լի, թունատ: *Աբ թունալից նոյն նշ.: Յայսմ վշտալի եւ տրտմակսկիծ, դառնաշունչ եւ թիւնալիր ամի (Ագուլ. կոնդ., 95): Սուտակասպաս և թունալիր նենգաւոր արբ սպրդողք և օձտողաբար պատառողք, որոց ունկնդիր լինելով իմ՝ բարեկամ համարեցայ (Դիւ. Ս. Յակ., 1933, 119):*

ԹԻՒՐԱՆՍՈՒՔ, գ. ա. Թիւր՝ կեղծ խօսող: *Եզրակացուցանելով զխնդիրն ի կարկամոռն լեզուաց թիւրախօսիցն ըստ իւրոց արդեանց (Նոր. ծաղ., 23):*

ԹԻՒՐՆԹԵՐՅ, ա. Դժուարընթեռնելի (բոխղ. դիւրընթեց-թիւրընթեց): *Եւ թէպէտ գովելի չէ զգիր*

տորին / Այլ թիւրընթեց է դիտողին (Ձեռ. յիշ. ժէ, 349):

ԹՂԹԱՔԱՅՈՂ, գ. Թուրթ՝ նամակ բացող: *Ի Վեննայ չիցէ ոք թղթաբացող, որպէս յոյժ կասկածեմ զուժեմնէ (Դիւան Մխիթ., 41):*

ԹՈՂԹ, գ. Թուրթ: *Չունիմք կարողութիւն այդ կողմն խօսակցութիւն ուղարկել կամ թողթ կամ գանձ (Եգով, 156): Այս թողթս կարգեցաք ուղարկել (Եգով, 163):*

ԹՈՅԱՍԱՐՄԻՆ, ա. Մարմնով թոյլ, թուրկազմ, տկար: *Կանայք նոցա եւ դստերք թոյլամարմինք եւ քաղաքացիքն ամէն մէջհանաճիք (Սիմ. Լեհ., 171):*

ԹՈՒՆԹՈՒՆ,

ԹՈՒՆԻ ԹՈՒՆ, գ. Թոռան թոռ, կոռ: *Ես՝ Բարսեղ արհի եպիսկոպոս թոռէթոռն պարոն Արղուլթին, տվի վախմ Սամծէրու Բ էգին իւր ընծանովն (Պատմ. Հաղբ. 163): Մենք, մեր որդիքն կամ թոռունքս, ծոթոռ, թոռնի թոռ, որ... այգոյն մալ առնելոյ լինինք (Կալված., 158):*

ԹՈՐ, գ. Գոյն: *Բէ և Աբ թոյր նոյն նշ.: Թոր - գոյն (ՄՄ 2019, 193ա):*

ԹՈՐՎԱՆ ԽՈՅԱՏ, հրդ. Խեցու կտոր: *Թորվան խոցատ, որ է թոնրի խեցի կտոր (ՄՄ 6275, 195բ):*

ԹՈՒԱՉԱՓ, մկ. (Այս) թուր չափով՝ ֆանակով: *ՀԲԲ թուաչափ «գ. գործիք, որ մեքենայօրէն կատարում է թուաբանական գործողութիւնները» (իմաստափոխ.): Ի թուաչափ քանակութեան համարոյ (Աղան. Միաբանք, 252):*

ԹՈՒՉՄ, ա. Խաար: ԲՀ ունի թուզ «գիշեր կամ մթին»: **Թուզմ** - խաար, մառն, մոեղն, ախուրք, խաարակուրք, արջնաթոյր, խրթնի (ՄՄ 2281, 135ա):

ԹՈՒՎԱՄՈՂԹՈՒԹԻՒՆ, գ. Թուվամորթութին: Իմացեալ Շապոյ գթուլամոթութին Արկադեա՝ խօսի ընդ նմա զխաղաղութին (ՄԺ II, 325):

ԹՈՒՃ, գ. Վենետիկի և Ջենովայի հասարակապետութիւնների գահեղեցի պատուանունն է, դոժ, տէս ՏՈՒՔՍ: Դեռ եւս պատերազմի է ընդ թուճին Վանատիկայ (Յ. Կարն., 27):

ԹՈՒՐՂՈՒ ԹՈՒՐՂՈՒ,

ԹՈՒՐՂԻ ԹՈՒՐՂԻ (թուրք. türü «տեսակ»), ա. մկ. Տեսակ-տեսակ, գանազան: Տեսաք գեղեցիկ շինուածք... Ը կամար մէկ մէկի վերայ, արծաթեղէն եւ թուրլու թուրլու ամարաթով (Շահմ. յիշ., 315): Հավուզների մէջն [կայր] թուրլու թուրլու ծաղիկ շինովի (Շահմ. յիշ., 316): Յամէն դոան մէջ ԼՁ թուրլու շինուածք ունի (Շահմ. յիշ., 316): Անցաւ քանի մի օր, ելաւ թուրլի թուրլի դոներ եբաց (Դիւ. Ս. Յակ., 1941, 202):

Թ(ՈՒ)ՐՔԱՎԱՆՔ, գ. Աղուանմում բնակութիւն հաստատած թուրքալեզու ցեղեր: Միհրահմէտ թրքաղվանից իշխանն յայսմ ամի առնու գճարապաթ (Ստ. Ռօշքայ, 199): Իսկ թուրքաղվանքն նախ քան գտիրելն Ասպահանայ բռամբ առին ի Ջուղայեցոց հայոց եօթանասուն հազար թուման (Ստ. Ռօշ

քայ, 199): Սոքա թուրքաղվանքն էին հայք Աղուանք ի Շիրուան գաւառին (Ստ. Ռօշքայ, 199):

ԹՈՒՐ ՔԱՇԵԼ, հրդ. Սուրբ վրա բերել՝ հարուածել, յարձակուել: Ներկեաց զինքն շարախօսութեամբ և մուրթաթ Սարգիս արեղայն թուրկու քաշէ վերայս (Դիւ. Ս. Յակ., 1940, 284): Դարձաւ սուլթան իւր գօրօքն եւ թուր քաշեց, այնպէս պատերազմեցաւ յերկիր սասանեցաւ (Մանր ծամ. I, 225):

ԹՈՒՐՔԱՎԱՐ, 1. ա. Թուրքի նման, թուրքական: Աքուլիս որ մին թուրքավար մանսար շինեցին, տվին Մէլիք-Սվին (Ջ. Ագուլ., 139): 2. գ. Թուրքերէն: Անտի առաք ընդ մեզ թարքման մի թուրքավար գիտացօղ, որ էր մաճար (Դիւան Մխիթ., 22):

ԹՈՒՐՔՆԱԿ, գ. Թուրքերէն: Սոքա եւս ուխտ եկին յերուսաղէմ մեծաւ հաւատով, հայոց լեզու խօսին, թուրքնակ չի գիտեն (Սիմ. Լեհ., 306):

ԹՈՒՓՊԵՏ, գ. Հրեաանու պետ, թուրք. թոփչի բաշի «հրեաանային գորամասի պետ»: Ապա դարձուցին զթոփսն ի մի կողմն եւ ուղղեալ ճարտարութեամբ զերկուան միայն եւ այնպէս հարին զթոփապետն Տաճկաց, որ յերկուս հերձաւ (Պատմ. Խոթ., 64):

ԹՈՓ ԵՒ ԹՅԱՆԿ,

ԹՕՓ ԵՒ ԹՈՒԱՆԿ (թուրք. top «թնդանոթ» եւ tüfenk «հրացան»), հրդ. Ջէնֆ զինամբերք, հրազէն, բոց. թնդանոթ և հրացան: Սկսան հարկանել ի հրաբոր-

բոք թոփից եւ ի թֆանկիցն մինչեւ ցիրիկունն (Պատմ. հոթ., 50): Կրիցեն զզարհուրեցուցիչ զէնան, որ թոփ եւ թֆանկք կոչեն (Յ. Կամենացի, 42): Սկսան հարկանել ի հրաբորբոք թոփից եւ ի թֆանկիցն մինչեւ ցիրիկունն (Յ. Կամենացի, 50): Քանի մարդ մեռաւ սրով և թրով, թօփով և թուանկով (Դիւան ժ, 26): Մեռաւ սրով և թրով, թօփով և թուանկով, սովով և ծարաւով (Դիւան ժ, 26):

ԹՐԸՄԻԹ,

ԹՐԷՄՊԷԹ (իտալ. trombette «փող»), գ. երաժշտական փողային գործիք: Յորժամ թագաւորն ի դուրս ելանէ, այս է զինաթն՝ ԻԴ շաթիր և ԻԴ խաշալամ, Լ դաւուլխանայ, արծաթէ թրքմիթ (Յ. Թուլթունջ., 303): Այս է զենաթն... ԻԴ խաշալամով, Լ դապուշխանայ թրէմպէթով (Յ. Թուլթունջ., 308):

ԹՐԾԱԾ ՔԱՐԲԻՃ, հրդ. Թրծած աղիւս, աե՛ս ՔԱՐԲԻՉ: Անտի երեւէր եօթն մարանքն... մեծամեծք երկայն եւ բարձր եւ լայն, թրծած քարբիճէ, շէնքն աւեր (229): -

ԹՕԵՄԱՔԱՆ (պարսկ. tukhma «դժուարամարտութիւն»), գ. (բժշկ.) Շատ ուռեղաց առաջացած ստամոքսացաւ, ստամոքսի խանգարում: Ի յաջ ձեռաց ուսայ-

լիմէն երակ առնեն, թօխմաքանին ըզկաթն տան (Բունհիւաթ, 96):

ԹՕՓ ԿՊՈՅՅ, հրդ. Ռուսք արձակեց: Ժե օրն ՌՇԳ թօփ կպոյց, երեք դինաց փլոյց զբերդի պարիսպն (Դաւրիժ., 482): Թվին ՌՇէ հօսորով փաշայն վազիր եղաւ, եկեալ ի վերայ Արզրուսու՝ ժէ օրն ՌՇԳ թօփ կպուց Գ դիմաց (ՄԺ II, 269):

ԹՕՓ ԶԳԵԼ, հրդ. Թնդաւնոթով կրակել: Մինան ազայս, որ եսկիշար աղասի էր, ի վերին բերդէն սկսաւ թօփ ձգել ի վերայ ապարանից փաշային (Դաւրիժ., 383): Մովէն յանկարծ թօփ ձգեցին / Յանճէ ձայնոյն սարսափեցին (ՌԻՄՇԲ, II, 557):

ԹՖԱՆԿԱՒՈՐ, ա. գ. Հրացանակիր զինուոր: Զօրավար ոմն Վայիո աւնուն՝ գլուխն Ալամանացն զօրաց, հասանէ ի տեղին այնմիկ շորս հազար թֆանկաւոր արամբ (Պատմ. հոթ., 58):

ԹՖԱՆՔ ԶԳԵԼ, հրդ. Հրազէնով կրակել: Եւ եկեալ մերձ բերդին նախշուանու բանակ եղեալ նստաւ, այնքան մերձ, որ թէ թֆանք ձգէին՝ հասանէր (Դաւրիժ., 67): Մի՛ ձգէր թֆանք կամ նետ, զի ես սակաւ արամբք գամ առ ձեզ խօսել ընդ ձեզ բանս ինչ իրաւամբ (Դաւրիժ., 67):

-ժ-

ԺԱՄԱՍՈՂ, գ. եկեղեցական արարողութիւն՝ ժամերգութիւն կատարող, ժամասաց: *Յիշեցէք... զտէր թորոս եպս., ժամարար և ժամասող ոչ վերջանայ իւր կարգէն (Աղան. Միաբանք, 348):*

ԺԱՄԱՏՆԱԿ, գ. ժամատուն (նուագ.): *Կայր անդ երեքհարիւր տուն հայի եւ փայտէ ժամատնակ մի եւ հինգ էրէց (Սիմ. Լեհ., 34):*

ԺԱՄԲԱՐ, գ. ժամարար, պատարագիչ ֆահանայ: *ՄՀԲ ունի ժամարրութիւն «ժամարար՝ պատարագիչ լինելը»: Սա հաստատեաց ամենայն եկեղեցիս լուարար, ժամարար, զի ի տվէ եւ ի գիշերի անխափան կատարեացեն աղօթք (Սիմ. Լեհ., 280): Ա-*

մէն եկեղեցի ունէր երկու իրեք քահանայ տեղացի եւ դրսեցի, լուարար, ժամարար (Սիմ. Լեհ., 332):

ԺԵՈՐՏԵԼ, չբ. **Ժխորտել** - խառնակամտել (*ՄՄ 1127, 141ա*):

ԺՈՂՈՎԱԿԵՏՂ, գ. ժողովատեղի (ջրերի): *Եւ օր մի գնացաք ի ժողովակետող ջուրց, որ ի հորս, փողոցս եւ ի ձորս թողուն (Սիմ. Լեհ., 220):*

ԺՊՏՈՒԹԻՒՆ, գ. ժպիտ, խնդութիւն: *Յոգնաթախանձ ժպտութեամբ խնդրիք ի յԱստուածասիրութենէ ձերմէ ի փառս Քրիստոսի (Ղուկ. նամ., 122):*

ԺՐԱՆՄԱՆ, ա. ժիր կերպով: *Թեւոց նման վեր բերելով, ժրանման աշխատելով (Առ էջմ., 194):*

-ի-

Ի ԱՌԱՉՈՒՍ, մկ. Առջեւից, առաջը: *Ամենն քշելով տանէին դէպ ի Դադստանն. ետուստ սուր, ի առաջուստ Կուր կէտն (եզով, 340):*

ԻԵՐՄՈՒՆ, թ. Երեսուն: *Տասն որբլեան զամէնն գնա / Իերսուն ւ՛ երկուք այլ ընդ նոցա / Թիւ նոր տարուն է, որ մնայ (Դ. Զեյթ., 184):*

Ի ՉԱՏ ԿԵՆԱԼ, հրդ. Հէտո՛ գեծ մնայ: *Խմէ քացխով և զինքն ուտէ և սավտա ընծայող կերակրոցն ի զատ կացիր (Բունիաթ, 100):*

Ի ԺՄՈՒՆ, մկ. ժամում, ամէն ժամը մէկ: *ՄՀԲ ժմու(ն) «ժամանակին,*

հարմար պահին»: *Ջամէն դեղերն այդ ջրովդ շաղվէ և հապ արա և տուր ի ժմուն Գ տրամ (Բունիաթ, 96):* *Շահմ-ի հանտալ Ա. Ա տրամ, հացի աղ՝ կէս տրամ, հապ արա և տուր ի ժմուն Ա տրամ (Բունիաթ, 75):*

ԻԼԻՆ,

Ի ԼԻՆՔ (գրբ. ի լի), ա. մկ. կիբը, լեցում: *Առաջին նարտվանն կայր Ե հավուզ ջրով Իլին (Շահմ. չիշ., 316):* *Աշխարհս վարդով ի լինք, քեմ դուն մենակ չես (ՈՒՄՀԲ, 113):*

ԻԼՈՒԹՐԻՃԻԱ (խապ. la Liturgia), գ. Պատարագամատոյց, խորհրդա-

տեւոր: Բայց վասն **իլլութրիճիայի** խնդրեմ յղել կամ զօրինակ նորին, քանզի խղճմտանք իմք նեղեն զիս (Ոսկ. նամ., 1966, 302): Վասն այն մէկ քանի բանից ուղղելոյ **իլլութրիճիէն** (Ոսկ. նամ., 1966, 302):

Ի ՀԱՃՈՒԿՍ, մկ. Ի հանոյս: Թերեւս ասասցէ զբան ինչ **ի հաճուկս** սուխտայիցն եւ զերծուցէ զանձն իւր ի մահուանէ (Դաւրիժ., 416):

Ի ՀԵՐՈՒՆ ՀԵՏԷ, մկ. Նախորդ տարուանից, վաղուցուանից: Այլ եւ ոչ գիտելով զսրբոյ եւ զանսրբոյ **ի հերուն հետէ** եւ ի վաղ ժամանակէ ի փողոցի անկեալ ոսկերք (Դաւրիժ., 458):

ԻՂՐԱՐ (պարսկ. eqrar) գ. Խոստովանութիւն, գիտակցութիւն: Ու՞ր է քո իղրարն, ու՞ր է դովլին (Գիւ. Ս. Յակ., 1941, 40): Այլքն իւրեանց բերանով **իղրար** արին ինձ մատ, թէ մեր յօժար կամօք ծախեցինք (Սանահն., 96):

ԻՄԱՊԻՍԻ, ա. Իմ տեսակին պատկանող, իւրային: Թէ՛ իմ տուեալ կոնդակն եւ թէ՛ այլոց **իմապիսից** կոնդակքն վասն Հաղբատու վանից (Կալված., 173):

ԻՄԱՍՏՆԱԿԵՐՏ, ա. Իմաստուն կերպով կերտուած՝ շինուած: Ի ներքոյ արեգական ոչ գտանիր այնպէս **իմաստնակերտ** եւ հանճարաշէն շինուածք եւ յօրինուածք, որպէս պատմէ Աստուածաշունչն (Պատմ. երու., 1932, 15):

ԻՄԱՍՏՆԱՆՄԱՆ, ա. Իմաստունի նման՝ իմաստնաբար: **Իմաստնա-**

նման իմաց տալով, Լուծողանման բանս յայտնելով (Առ էջմ., 194):

ԻՄԱՍՏՆԱՊԱՃՈՅՃ, ա. Իմաստուն, իմաստնութեամբ պահուեալ՝ պարուում: **Իմաստնապաճոյճ** եւ հրաշափառ դղեկի հասցէ գիր սիրոյ եւ նամակ գգուական առ ամենայն հայկասեռ ազգոց (Ոսկ. նամ., 1967, 134):

ԻՄԱՍՏՆԱՊԵՐՃ, ա. Իմաստնութեամբ պերն: [Թուղթ] աստուածակացոյց տանդ եւ **իմաստնապերճ** կառավարչիդ եւ խնամատարիդ հասարակաց, չԱստուծոյ հօրէ ընտրեցելոյ (Ղուկ. նամ., 117):

ԻՄԱՍՏՆԱՎՃԻՌ, ա. Իմաստնաբար արուած վճիռ: Արդարեւ ի քեզ ճշմարտես զբանս **իմաստնավճիռ** (Ղուկ. նամ., 121):

ԻՄԴԱՆԵԱՅ, ԻՄՏԱՏ,

ԻՄՏԱՏԻԱՅ (թուրք. imdat), գ. Օգնութիւն: Ո՛չ միայն հասարակօրէն գնուիրակութիւնն խնդրեմք յայս տարի ի ձէնջ, այլ յատկապէս **գիմտատիայ** (Ազուլ. կոնդ., 93): Ընդ նուիրակութիւնն եւ ընդ **իմզադեային** զամէնն մի ըստ միոջէ յանձնէք (Ազուլ. կոնդ., 96): Մեզանով պիտի լինի մեզ **իմտատ** աշխարհի եւ ամենայն քրիստոնէից (եզով, 19):

ԻՄՓԷՐԱՅՈՐ, ԻՆՓԷՐԱՅՈՐ,

ԻՓԷՐԱՅՈՐ (լատ. imperator, իտալ. imperatore), գ. Կայսր, միապետ, տե՛ս նաև ԵՓԷՐԱՏՈՒ: Բարեպաշտօն տիրօղ եւ իշխօղ ծովու եւ ցամաքի... Պետր Ալէքսէիջ **իմբրատո** (եզով, 360): Գլուխն Դումպիոյ թագաւորն է իբրև **իմփէրաթօր** (Յ.

Թուլթունջ., 307): Ահա մալիմ լինի մերս սահապ մեծի Պետր Ալէքսէիճ ինքնակալ իմփէռայթօռիդ (եզով, 371): Մէք խորհրդի բան ունինք շահական իմփէռայթօռին ասելոյ (եզով, 371): Քաջամարտ և հզօր իմփրատօր (եզով, 421): Աստուծոյ ողորմութեամբ մէք՝ Պետրոս Առաջին, ինփրայթօռ, ինքնակալ բովանդակ ըռուտի երկրի (եզով, 353): Մեր տէր Պետր Ալէքսէիջ Իփրաթօր Աստուծով զօրացեալ (եզով, 381): Պետր վէքիլ իփրատօր ծովու և ցամաքի աստուածապար իշխեցօղի (եզով, 418): Հոկտեմբերի 1 եկի ի Վեննա, որ է Պէջ եւ է թախտ ենփերատօրին (ՄԺ II, 404):

ԻՄՓԻԱԿՐԻՅԱ,

ԻՆՓՐԱԹՐԻՅԱ (ռուս. Императрица), գ. Կայսրուհի, թագուհի, նաև՝ **ԵՆՓՐԱԹՈՒՅՑ**: Մեծ ինփրաթօրիցէս քօմակ որ աղարկուճ ենք ձեզ (եզով, 430): Մեծ իմփռադրիցին զուլ ենք գրվել (եզով, 437): Աստուծոյ ողորմութեամբ մէք՝ Կատարինայ ենփրաթօրից, ինքնակալ ամենայն ըռուտի երկրի (եզով, 431):

ԻՆՓԻԱԿՈՒՈՒԹԻԻՆ,

ԻՆՓՐԱՅԹՈՒՈՒԹԻԻՆ, գ. Կայսրութիւն, տէրութիւն: Պատուական հայոց ասկին... մեր ինփրայգօռութեան ողորմութեամբն շատ բարև ունեմք (եզով, 353): Դուք նորայ պիրկ հաստատ հավատէք և մեր ինփռադօռութեան ողորմութեանն ամենայն խորհուրդն յայտնէք

Պատուական ուզբաշոցդ և կլխաւորացդ... մեր ինփրայթօռութեան ողորմութեամբ շատ բարև հասցէ (եզով, 393):

Ի ՅԱՆ ԼԻՆԵԼ (բժկ.), հրդ. Խելագարուել: Մէկ մարդ որ սիրոյ տէր լինի, հանապազ ի մտացն չերթար, միտքն ու խելքն ի յան կու լինի, ի քնէ կու կտրի (Բունիաթ, 75):

Ի ՅՂԵՂՆ ԵԼՆԵԼ, հրդ. Խելքը թոցնել, խելաթափուել: Որ կինն այրիկ շունենա և յաւելի սերման գոլոշն ի յղեղն ելնէ (Բունիաթ, 105):

Ի ՅՈՒՐ, մկ. Որտեղ, որտեղ որ, ուր: Ի յու՛ր որ թագաւորի ծառայ գտանէր, կու սպանանէր (Դիւան ժ, 38):

ԻՆԿԼԻԶ, գ. Անգլիացի: Թվոյն 1697 հաշտեցան ինկլիզն ու ֆէլէմէնկն հետ Ֆրանցայու թագաւորին եւ հաշտեցուցին եփրատօրն այլ ի հետ Ֆրանցուտին (ՄԺ II, 404):

ԻՇԱՆՈՅ, գ. Փարսիւ: Մէկ ծայրն իշանոցն էր դիպել, զայն գնեցի Օղուզիցն և վախճ արարի Սուրբ Աստուածածնիս Սանահնոյ (Սանահն., 120):

ԻՇԱՎԱՃԱՌ, գ. Էջ վաճառող: Նա զայրացեալ յոյժ կոչեաց գկրօնաւորն իշավաճառ և յանդիմանեաց գնա (Նոր. ծաղ., 128):

ԻՇԽԱՆԱՇՔԵՂ, ա. Վեհաշոյք: Ահ իշխանաշոյք «իշխանական պատառով»: Թէպէտ եւ իշխանաշքեղ պետութեամբն քան զյոլովս էր գերազանցեալ (Յ. Կոլոտ, 232):

ԻՍԿ ԲԱՆԻՅ, գ. Բանի, խօսքի, գործի իսկոյթիւնը, Խաթիւնը: Հրամայեաց նո-

ցա գնալ մինչ ի Ջուղայ, տեսանել եւ իմանալ **գիսկն բանից** եւ բերել նմա համբաւ ճշմարիտ (Դարբիժ., 88):

ԻՍԿԵԼԷ, գ. Նաւահանգիստ, տե՛ս ԷՍԿԱԼԷ: Ապրիլի 17 մտանք ի Մառսիլեայ, որ է... լաւ **խսկէլէ** (ՄԺ II, 406): Ղինու Ը օրէն ճանապարհ է մինչև Դուրսէլ, որ է Հնդկաց ծովու **խսկէլէն** (Յ. Թուլթունջ., 301):

ԻՍՀԱԼ (արաբ. ishal), գ. (բժշկ.) Լուծ, Darhorrea: Թէ **խհալն** գէտ աղեց սըկրթուքի պէս գա, շատ գէր կղտա (Բունիաթ, 91): **Իսհալն** արիւն և թարախ խառն գայ (Բունիաթ, 91): **Իսհալն**, որ տաքութիւն շատ լինի, խածկած գարով ճաւաւ եփեն և տան (Բունիաթ, 125):

ԻՍՊԱՀԻ (թուրք. sipahi), գ. Ջիաուր, հեծեալ զօրք, այրուծի, տե՛ս նաև **ԸՍՊԱՀԻ**: Ջգեօղս եւ զանդաստանս տա գնովք ծառայ իւրոց եւ **խպահի անւանէ** (ՄԺ II, 354):

ԻՍՏԱԿԱՊԷՍ, ա. մկ. Մաքուր, մաքրապէս (յստակ>իստակ): Բնակին լիսնկունք միշտ ի տեղս մաքուրս և ցամաքս, վասն **խտակապէս** պահելոյ զհնքեանս (Նոր. ծաղ., 191):

ԻՍՏՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, յատկութիւն: Տրտմութիւն է՝ **խտունակութիւն** իմն զբնաւից խորհրդոց, բանից և գործոց, որով որ ախտացեալ ոչ զօգտակարս ստորասցէ (Նոր. ծաղ., 42):

Ի ՎԱՂՆ ԶԳԵԼ, հրդ. Հեաաձգել, ձգձգել: Ջայս օտւր դատաստան ի վաղըն ոչ ձգեն (Յ. Թուլթունջ., 303): Դատաստանագիրքն առաջև-

ներն՝ այս օրէն դատաստանն **վաղն չեն ձգել** (Յ. Թուլթունջ., 308):

Ի ՎԱՅՐ ԹԱՓԵԼ, նր. Յաձ թափել: Ջբազումս ի վայր **թափէին**, և դիակունք արիւնաշաղախ թաւալէին (Դիւան ժ, 35):

Ի ՎԱՅՐ ՂՐԿԵԼ, հրդ. Ներքև իջեցնել, մղել: **խառնուածն...** ժողովի ի յղեղն, և բնութիւն զհնքն ի վայր **ղրկէ** (Բունիաթ, 82):

Ի ՎԵՐԱՅ ՀԱՍԱՆԻԼ, հրդ., Վրայ հասնել՝ հասկանալ, ըմբռնել: Եթէ որ կարգայ, կարէ դիւրաւ հասկանալ եւ ի վերայ **հասանիլ** եւ ապա սովաւ յարտաքին գիրքն ձեռնարկել (Դարբիժ., 322):

ԻԻՂԱԹՈՐ, ա. Իսլից՝ հիւրից թորուած, ցամաքած, վտիս: Կուսանքն և օրիորդքն հոլանի եղեալ, **զիւղաթոր** մի ցցունս և վարսս յանդգնաբար մերկացեալ (ՄԺ I, 183):

ԻԻՆԱՆԵԱՆ, ա. Յունական, յունացի: Տասնեուլթն դուռն Ֆէնէրի՝ ներս եւ դուրս ազինք **իւնանեան** (Քէօմ., 39):

ԻԻԲ ԳԼԽՈՒ, հրդ. Ինքնագլուխ, ինքնուրոյն: Ազարէն գնայ, Բ իրիցի **իւր գլխու** պսակել կուտայ, տանէ (Ջ. Ագուլ., 78):

ԻԻԲԵԱՆՅԷ, դ. Իրեցից, իւրայիններից: Տարան ի վերայ հորի միոյ և **իւրեանցէ** մէկ տաճիկ ազատ արարին, որ այլոց գլուխն կտրատեաց (Սանահն., 64):

ԻՓՐԱՏՈԼ, գ. Կայսր, տե՛ս ԻՄՓԷՐԱԹՐ: Յայս երկիրս կայ է թագաւոր քրիստոնեայ, որ մեծն և առաջինն Թումպիոյ թագաւորն է, որ է

իբրև **իփրատօլ** ի վերայ այլոցն (Յ. Թուլունջ., 302):

Ի ՔԱԿԻ, մկ. Վերջանալուն մօտ, ի ֆակի գալ՝ «սպառուել»: Յորժամ

գրամն **ի քակէ** գայցէ, տեսցուք թէ յորում պատշաճ իցէ և որն հարկաւոր (Դիւ. Ս. Յակ., 1932, 252):

-Լ-

ԼԱԱԹՈՐ, ա. Լալագին, արասա-
ուաղէմ: *Ընկալցի Տէրդ իմ զձօ-
նեայս երկրպագութիւն... ողորմելի
և լալաթոր դիմօք* (Դիւ. Ս. Յակ.,
1930, 385):

ԼԱՈՒԱԿ, գ. Խեղն, լալկան՝ լացի
արժանի (մականուն): *Միսթար
Վարդապետ Մոկացի Լալուակ Միօ
կոչեցեալ (Կամենից, 128):*

ԼԱՅՆԱՍԻՐՏ, ա. Լայն՝ մեծ սիրտ ու-
նեցող: *Յերկիրն Դիադինու աշօք
մերօք տեսեալ աղչիկ մի վեցա-
մեայ, իբր զկատարեալ երիտա-
սարդ պիղով և մօրուսով, մեծերես
և լայնասիրտ* (ՄԺ I, 285):

ԼԱՅՆԱՍՄԲԱԿ, ա. Լայն՝ մեծ սրմ-
բակներով, արագընաց, պնդա-
կազմ: *ՈՒնէր նա ազնիւ ձի մի՝ կա-
պուտ գունով, բարձր հասակաւ,
լայնասմբակ, երկարապարանոց
(Չաք. Բ, 24):*

ԼԱՆՅ (հունգ. lanez), գ. Շղթայ:
Դաշտին մէջ մէյ մէկ կտոր հող,
գոր հին ատեն շղթայով կը շա-
փէին (ծան. հրատ.): *Եւ ըզՍղաշայ
Մանուկն Իսիգուցեանց զըրանք
վէքիւ ըրթին վրայ, այսինքն խո-
տանոցինը եւ լանցինը ըրթին բոլո-
րը* (Գովր., 106):

ԼԵԹԱՏ, ա. Թլուատ, թոթով: *Մին
փոքր լեզուն լեթատ է, և անունն
այս մետրապօլիտին Իգնատիոս
կու անուանի (Չուար, 1867, 132):*

ԼԵԿՏԱՄՈՒՍ (լատ. Lactamus «ու-
րախ լիցում»), գ. Հոգևոր արարո-
ղութիւն: *Ի Կամենից քաղաքն մեծ
ուրախութիւն կատարեցին, այ-
սինքն է որ կոչի Լեկտամուս (Կամե-
նից, 51):*

ԼԵՌՆԱՔՈՒՂԵ, ա. Լեռներից բխող:
Պսակեալ անուշահամ **լեռնաբուղի**
աղբերակօք (Յ. Կոլոտ, 206):

ԼԵՌՆԱՀԱՆԳՈՅՆ, ա. Լեռան հան-
գոյն՝ լեռան նման, բարձրաբերձ:
ԱՔ **լեռնահանգէտ** «լեռնանման»:
*Յորժամ սակս զերգս գրեցի / Լեռ-
նահանգոյն զմեղս յիշեցի* (Գալ.
Կենս., 152):

ԼԵՐԿ ԵՒ ԼՐԻԿ, հրդ. Լուտ, խոնարհ:
*Գրեցաւ... ձեռամբ Թումայ լերկ և
լրիկ արեղայի* (Աղաւն. Միաբանք,
156):

ԼԵԿՕԼԱՊ (հունգ. legálabb), մկ. Առ-
նուագն: *Ալ քիչ քան 20 բէրսօնայ
ներկայ չի գտվի, որ լէկօլապ քը-
սան հօգի ըլան խորհուրդին մէջ
(Գովր., 363):*

ԼԵՀԷՅԻ, գ. Լեհ, լեհացի: Թվին Ռձնել
կրկին խաւարեցաւ արեգակն: Սոյն

որս առին **լէհէցիք** զԿամենից բերդն Օսմանցոցէն յետ եւ զաֆտեցին (ՄԺ I, 306):

ԼԷՀՆԱԿ, գ. Լեհերէն: Լույս չայքն հայնակ չի գիտեն, այլ **լէհնակ** եւ խբշակնակ գրուցեն (Սիմ. Լեհ., 346):

ԼԷՇԿԵՐ, գ. ա. Լէշ՝ դիակ ուտող (մականուն): Այս Բաքըր փաշայս զխօշայ Ալխասն կախեսաց ի փայտէ, որոյ մականունն **Լէշկեր** ասէին (Գիւան ժ, 107):

ԼԷՎ, ա. Լաւ: նոցայ լէվ պիրկ սիրով պախես եւ նոցայ խէտ լէվ սիրով ճանապարհ[հ] գնաս (եզով, 395):

ԼԻԱՊԱՍԱՌ,

ԼԻԱՊԱՍԱՐ, ա. Լիարժեք, հոյակապ: Համակալ-ձոհ, լիսպատառ, բազմաբեր (ՄՄ 2281, 126ա): **Լիսպատար-հոյակապ**, զառբերան, բազմաբեր, ձոհ, համակալ (ՄՄ 2281, 135ա):

ԼԻԱՌՆՈՏ, գ. Լեոնտ, լեոնային վայր: Ամենայն ախի գայ ի Յայրարատ ի լիառնոտին միում ի դաշտավայրի (ՄԺ II, 301):

ԼԻԿԱՍԱՐ, ա. Լիակատար, լիարժեք: **Լիկատար** եւ դու գրուիս ի գիրն կենդանեաց (եզով, 157):

ԼԻԿԻՈՆ (լատ. legion), գ. Լեգեոն: Կոչի այս կամարս վերինն երուազէմ... **լիկիոն**, որ է գունդ (Տէֆթ., 379):

ԼԻՆԹԻԼՕՄ, տէս ԶԻՆԹԻԼՕՄ:

ԼԻՄԱՆ (իտալ. շքուրք. liman), գ. Ծովածոց, նաւահանգիստ: Յունիսի ժ գիշերն երկուշաբթիլուա ազգն յուռուս եկաւ մտաւ ի լիման Կաֆային (ՄԺ I, 211): Ապրիլի 17 մտանք

ի Մառսիլեայ... է քաղքին մէջ տեղն լիմանն (ՄԺ II, 406): Թօլօն Ֆոանցայու թագաւորին է եւ է մեծ լիման (ՄԺ II, 406):

ԼԻՍ, ա. Լիբը, լեցում: ՀԲԲ լիս «լոյս» (համանուն): Զմեծամեծ համբարանոցս լիս ցորենովք եւ ամենայն բարութեամբք իբրեւ միջաբեր զաւակի թողի ի ժառանգութիւն սմա (Յիշ. Ուլն., 294):

ԼԻՎՕՎ, ա. մկ. Լաւ կերպով: Ալ իվելի դոքա լիվով ձեզ կու պահեն եւ հավաղով կու լինէաք (եզով, 394):

ԼԻԻՍԻԴԱՐՈՐ (լեհ. lustrator), գ. Քըննիշ, տեսուչ: Հրամանաւ թագաւորին երեք իշխանք եկին ի Կամենիցս, որք էին լիսգրագորներ (Կամենից, 39):

ԼՅԵՆԱՐԿՈՒԹԻԻՆ, գ. Լուծ կրելը, լուծի տակ ընկնելը: Ես վասն այնորիկ զփախուստ առի, զի յուսային ձեր լծենարկութեան եղանակն յայլ իմն փոխեսցի (Գիւան Մխիթ., 127):

ԼՅՆԱԿԻՑ, գ. Լծակից, ամուսին: Ես՝ Տէր Խաչատուրի լծնակից Մարին, որքս փոխեսցա առ այն, որում ցանկայի (Գձվ VII, 269):

ԼՅՈՒԱՐ, գ. Մանկալ: Մաճակալ - լծուար (ՄՄ 1127, 146ա):

ԼՄԱՆՕՎ, մկ. Ամբողջութեամբ, լրիս: Քրիստոնեականն լմանովն տպելու ժամանակն է (Պօղ. նամ., 91):

ԼՄԸԼՏԵԼ, չբ. Լմբլտեղ - խոով կենալ կամ ճմլել (ՄՄ 2019, 173ա):

ԼՆԿԱԼ, չբ. Կաղալ (ձիւ մասին): ՀԲԲ լնկալ «մի ուսով կաղալ»: Զին էր վատաքայլ եւ ոստոսմամբ լնկայր (Կամենից, 153):

ԼՈՂՈՒՆՔ, գ. Լողացող կենդանի (ներ): *Թուրլու թուրլու թռչունք, և՛ անասունք, գազանք, սողունք, լողունք, զամենն շինած է, ամենու բերնէն ջուր կու թռչի (Շահմ. յիշ., 316):*

ԼՈՄԱՅԱՍԱՐԱՍ, ա. Լումայի պէս, փխբ. չնչին, աննշան, սարաս բղղչ. համար տե՛ս ԱՂԲԻԻՐԱՍԱՐԱՍ: *Որոց հաճոյ և ընդունելի երևիցի այս լոմայասարաս աշխատն իմ (Տէֆթ., 318):*

ԼՈՄԱՅԵԿ, գ. Մի փոքր լումայ, փխբ. չնչին մի բան: *Գոնէ մօր մերոյ զմեզ ծնողի լոմայեկ իմն ընծայեցուք (Յ. Կոլոտ, 213): Լոմայեկս այրոյ զոր արկանեմ ըստ իմ կարի (Յ. Կոլոտ, 238):*

ԼՈՅՍԵՐԱՄ, ա. Լոյսի նմանող: *Մ՛վ լոյսերամ դասք քահանայից և խումբք սարկաւագաց (Հնատիպ, 14):*

ԼՈՒԱՅՈՂՔ, գ. Լուացի անող, լուացարար: *Մասն ինչ առնուն աստ լուացողք՝ մեք լուացեալ եմք բազում անգամ (Քէօմ., 16):*

ԼՈՒԱՅՈՒՆՔ,

ԼՈՒԱՅՈՒՆՔ, գ. Լուացի մնացորդները, մնացած ջուրը: *Ն՛ՀԲ լուացանք «ջուր, որով լինի լուանալ գտուրբ բաժակն յետ ըմպելոյ գտուրբ արիւնն»: Բերեալ դնեն ի մէջ առուին մէկ եւ երկու օր ի թրջոց, եւ ապա լուանան, եւ լուացունք (գրչ. լուացօնք) ջուրն դարձեալ թափի յառուն ի մէջ ջրոյն՝ որով պղծի ջուրն (Դարիժ., 351):*

ԼՈՒԱՅՈՒՔ, գ. Մսից արտադրուող հեղուկ: *ՀԲԲ լուացուք «լուացից*

յետոյ մնացած ջուրը»: *Գնացածն ի փորուն՝ մսի լուացուք նմանի (Բունիաթ, 91):*

ԼՈՒԹԷՐԱՆ, գ. Լութերական, գերմանացի բարեփոխիչ Մարտին Լութերի (XV-XVI դդ.) վարդապետութեան հետեւող, լութերականութիւն ընդունող, տե՛ս նաև ԼՈՒԹԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ: *Եթէ ոչ արացէ զմեծարանս սրբազնասրբոյ Խորհրդոյն՝ ստոյգ լութէրան է (Կամենից, 157):*

ԼՈՒ Ի ԼՈՒ, մկ. ա. Մէկ առ մէկ, բերան-բերան: *ԱԲ լու ի լու «լուսիլը» (իմաստաւիտիս.): Հրաշալի տեսիլ երեւեցաւ Սբ. Գրիգոր Լուսաւորչին, զոր ինքն լու ի լու ամենեցուն պատմեաց (Ստ. Ռօշթայ, 33):*

ԼՈՒԼՈՒԻ (արաբ. Լուս «մարգարիտ»), ա. (բժշկ.) Մարգարտանման: *Պաւսիրն... Գ ցեղ կու լինի. Ա մանր սիկիլներ, և որ տաճիկն լուլուի կասէ (Բունիաթ, 122): Այն սունկն, որ լուլուի կասեն, սալտայի մօտ է (Բունիաթ, 123):*

ԼՈՒԾՈՂԱՆՄԱՆ, ա. Լուծողի՝ մեկնողի նման, ինչպէս մեկնիչը: *Իմաստնանման իմաց տալով / Լուծողանման բանս յայտնելով (Առ էջմ., 194):*

ԼՈՒՍԱԲՈՒՂ (գրբ. լուսաբուղիս), ա. Լոյս բխող, լուսատու, հմմտ. ԼՈՒՍԱՓՈՒՆ: *Դաւիթ վարդապետն նըլիրակ եկաւ մեզի էջմիածնէն, նորընծայ տէր Յակոբ կաթողիկոսէն, լուսաբուղ մեռոնան, մէկ յաբեղայ սարկաւագով (ՄԺ I, 227):*

ԼՈՒՍԱԿԱՌ, ա. Լոյսով կառուցուած: ՄՀԲ-ն ունի լուսակառոյց նոյն նշ.: Յակոբ կաթողիկոս ամենայն հայոց և պատրիարզ Վաղարշապատու... լուսակառ և քրիստոսանկար Սուրբ Աթոռոյս էջմիածնի (Գիւան ն. Ջուղ., 53): Պատրիարզ Վաղարշապատու լուսակառ... Սրբոյ Աթոռոյ էջմիածնի (Գիւ. Ս. Յակ., 1941, 157):

ԼՈՒՍԱՀԵՏ, ա. Լուսաւոր: *Լուսահետ գիտութիւնս ի մէջ ամենայն ազգիս մերոյ առափոեաց* (Յ. Կոլոտ, 205):

ԼՈՒՍԱՄԱՔՈՒՐ,

ԼՈՒՍՈՅՄԱՔՈՒՐ, ա. Լոյսի նման մաքուր, սրբակրօն: *Իւր քահանայքն փիլիսոփայ, Լուսամաքուր* (գրչ. լուսոյմաքուր) շատ սրբեղայ (ՈՒՄՀԲ, 170):

ԼՈՒՍԱՇԱՂԱՆ, ա. Լոյսով շաղախուած: *Ետու յիշատակ... աստուածընկալ լուսաշաղախ Սբ. Գերեզմանին* (Աղան. Միաբանք, 261):

ԼՈՒՍԱՇԱՂԵԼ, չբ. Լոյսը բացուել: *Հասի ի տափարակն անշէն, ուր եւ լուսաշաղեցաւ այգն* (Կամենից, 149):

ԼՈՒՍԱՇԷՆ, ա. Լուսակառոյց: *Լուսաւորեցէ... Տէր Կարապետ վերագիտողի սրբոյն Գլակայ լուսաշէն վանից* (Յ. Կոլոտ, 206):

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԳԱՆԱՆ, գ. Հայ առաքելական եկեղեցու հետևորդ: Ն. Բիւզ. *լուսաւորչեան նոյն նշ.: Գան ի ներքոյ գաւազանի ինքնակալի կայսերն մեծի... յազգիս Հայոց լուսաւորչագաւան քրիստոնեայք* (Ղուկ. նամ., 125): *Կիրակի և չորեքշաբթի գՔրիստոս պատարագեմք անդ առ ի քաւութիւն և ի թո-*

ղութիւն բոլոր լուսաւորչագաւան Հայոց ազգի (Պատմ. երուս., 1931, 209): *Աստուածային բազմապատկի օրհնութիւն ի վերայ լուսաւորչագաւան քրիստոնէից* (Գիւան ն. Ջուղ., 65):

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԾԻՆ, ա. Գր. Լուսաւորչով ծնուած՝ հաստատուած: *Սրբազան հօրդ մերում և լուսաւորչածին երամոցս... մատուցանեմք ողջոյն* (Գիւ. Ս. Յակ., 1941, 41): *Անվթարելի պահեսցէ յամերամ կենօք ի պարծանս մեր և հանուրց լուսաւորչածին հօտին* (Գիւ. Ս. Յակ., 1941, 201):

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԵՐՏ, ա. Գր. Լուսաւորչի կերտած՝ հիմնած: *Տանելով գմերս նաստութիւն յերկնատիպ սրօբէպար լուսաւորչակերտ ուխտն* (Յ. Կոլոտ, 206):

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿՐՕՆ, ա. Գր. Լուսաւորչի կրօնի՝ դաւանանքի համապատասխան: *Ժամանեցի թուղթ սիրոյ... լուսաւորչակրօն եւ միաբնադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս* (Ագուլ. կոնդ., 104):

ԼՈՒՍԱՒՈՐՉԱՇԱԽԻՂ, ա. Գր. Լուսաւորչի շախիղ՝ ուղին ընդունող: *Ամենայն սահմանաց դրոխն պարագրունակ զետեղելոց մերազնէից՝ լուսաւորչաշախիղ քրիստոսագգած լուսերամիցդ* (Ագուլ. կոնդ., 84):

ԼՈՒՍԱՒՈՐՉԱՇԷՆ, ա. Գր. Լուսաւորչի շինած՝ հիմնած: *Նորոգեաց... զեղրգոտի լուսաւորչաշէն վանացն զսագերն* (Յ. Կոլոտ, 207):

ԼՈՒՍԱՓՈՒՆ, ա. Լուսաւոր, լուսաբովս, հմմտ. **ԼՈՒՍԱՔՈՒՂ**: *Խաչա-*

տուր վարդապետն եկաւ էջմիածնայ լուսափռութի մեռոնաւ, որ էր նիւրիակ նորընծա տէր Մովսէս կաթողիկոսի (ՄԺ I, 217):

ԼՈՒՍՆ ՍՐՔԵԼ, հրդ. Տեսողութիւնը բացուել՝ լաւանալ: Իրով խառնէ և դիր ի յաչքդ, զթանձր կոպսն նօւրացնէ և զլուսն սրբէ (Բունիաթ, 77):

ԼՈՒՍՈՅՄՕՏ, գ. Լոյսի՝ լուսանալուն մօտ, առատօտ: Թվին ՌՃՁԱ ապրիլի Ա օր, որ օրն է շաբաթ լուսոյմօտն, Ովսէփն մօրէն ընծայեցաւ, աշխարհ եկաւ (ՄԺ I, 294):

ԼՈՒՍՈՎԵՈՐՈՑ, գ. Զերմութիւն (արեգակի): Արեգակն - լուսովխորոյ (ՄՄ 2019, 180բ):

ԼՈՒՍՐԱՐ, գ. Լուսարար, եկեղեցու ներքին բարեգարդութեանը հսկող եկեղեցական: Կայր հայոց լուսրար մի սուրբ եւ առաքինի, ճգնաւոր եւ պահեցող (Սիմ. Լեհ., 253): Զսա հրաւիրեալ օրհնեցին մոնոզոն եւ լուսրար (Սիմ. Լեհ., 278):

ԼՈՔՆԱԼ, չբ. Լողալ, հայ. լոզանալ բառից: Ի վայրս երեւէր Տիբերական ծովն. որք իջեալ ի լեռնէն՝ լոքցաք ի ծովն (Սիմ. Լեհ., 309):

ԼՍԱԿ, գ. Լսողութիւն, լսողութեան զգայարան: Ծանօթութիւնս այս յառաջագայի ի հնկից զգայութեանց գլխաւորաց մարմնոյ, այսինքն՝ ի տեսակէ, որ է յաչս, ի լսա-

կէ, որ է յականջս... (Նոր. ծաղ., 4):

ԼՍԻՉ, գ. Լսող, ունկնդիր: Այլ ի լեռինն կատարի, Թէ ասոյդ լինիս լսիչ (ՈՒՄՇԲ, 334):

ԼՎՈՏ, ա. Լուեռով առատ: Յոյժ ջերմ է անդ եւ ըլոտ (Սիմ. Լեհ., 221):

ԼՐԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. Չարախօսութիւն, բամբասանք: Կարկուծիւն - շարախօսութիւն կամ վատաբանութիւն զուսմեմնէ (Վ. Յուն., 35):

ԼՐԲՎԵԼ, չբ. Լրբութիւն անել՝ վիճել, դժել: ՄՇԲ լրբենալ «լրբանալ, լիբ դառնալ»: Ով լրբվի, մեր ազգէ կամ մեր ընդանուց հակառակի, դաւի անէ՝ Աստուածածնի խոսվանքն ընկնի (Սանահն., 170):

ԼՐԹԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Մարտին Լութերի վարդապետութիւնը, տես նաև ԼՈՒԹԷՐԱՆ, ԼՐԹՈՒՆ: Յայտնապէս քարոզէ զլրթերականութիւն (Գալ. Կենս., 106):

ԼՐԹԿԱ (ռուս. ЛЮДКА), գ. Նաակ: Քուռ գետն լօթկօվ կանցանուի, լօթկէն ղզլպաշի և ղարապօրկի ձեռին է (եզով, 422): Մեք մինչի լօթկի թէտարիբ կանեմք... զմեզ շուտ շաշմիշ կանեն (եզով, 422):

ԼՐԹՈՒՆ, տես ԼՈՒԹԷՐԱՆ: Էր նէմ-ցայու սէրագգէրն քուրվիրշտն Սաքսն, որ է լօթոան (ՄԺ II, 404): Թագաւոր քուրվիրշտն Սաքսն ի Լէհաց ազգին, որ էր լօթոան եւ եղև կաթուղիկ (ՄԺ II, 404):

-Խ-

ԽԱԲԷԱԲԱՐ, ա. մկ. Խաբէութեամբ, դաւադրաբար: *Յոմանց լուաք, թէ խաբէաբար գունտք հայոց ի ձեռս անկեալ սրախողխողք եղեալ են (Դիւան Մխիթ., 27):*

ԽԱԲԻՏԱՆ, գ. Կապիտան, տէն ԿԱՓԻՏԱՆ: *Երես հետ մեզ խաբիտանն իրեք դատողաց (Միմ. Ահ., 211):*

ԽԱԲՈՎ, մկ. Խաբէութեամբ: *Այլեւ զթոռն սորա եւս խաբով տարան ի Ստամբօլ եւ զնա եւս սպանին (Դարիժ., 63):*

ԽԱԶԱՆ, գ. Կազակ: *Գայ հասանէ զօրագլուին Ռուսաց՝ անուանեալն Պորոտաքա եւ ընդ նմա Խճ հազար հեծեալս Խազախաց, որ կոչին Զափորոհիք (Պատմ. Խոթ., 47):*

ԽԱԶԱՏԵՏԻ, գ. Խազագրուած տետր՝ զիբ: *Այս խազատետրս Տէր Սարգիս եպիսկոպոսի է (Աղան. Միաբանք, 470):*

ԽԱԶՄԱՍԷՐ, ա. Կոռուսէր, խոռվարար: *Խազմասէրքն եւ խոռվարարքն ի ժողովրդականաց, որք վասն փառասիրութեան... գումարտակ լինէին (Դարիժ., 273):*

ԽԱԹԵՐ ՀԱՄԱՐ,

ԽԱԹԻ(Ն) ՀԱՄԱՐ, հրդ. Ի պատիւ, ի սէր, յանուն: *Վասն Աստուծոյ խաթրին համար կու կատարիմք (եզով, 156): էլլին մեր խաթրին համար վիզ էկալ հետ տանելոյ (Նշխարք, 8): Մեր հաւատի խաթրի համար մենք էս ճանապարհից ետ դառնալու շենք (եզով, 436): Վասն*

Աստուծոյ խաթեր համար... փոքր ինչ տնջութիւն տուր (Գալ. Կենս., 232):

ԽԱԱԹԱԳԻՆ, գ. Նուէր, փոխնատուցում: *ՄՀԲ խալաթ «Իբրեւ նուէր տրուած թանկագին հագուստ»:* *Արդութէցոնց շամահաթովն մեզ մի արավար հող խալաթագին երես պարոնտէրն (Սանահն., 148):*

ԽԱԼԱՌՈՒՆԵԼ, չբ. Վրդովել, խոռվուել: *ԱԲ խարբալել «մաղել, վրդովել, վտանգել», ՄՀԲ խարբալել «ոչնչացնել, փչացնել» (իմաստափոխ.): Անօրէնքն կու խալբալուին, միջակտուր կու լինին (եզով, 155):*

ԽԱՂԱՂԱԶԻԳ, ա. Խաղաղ ու ձիգ՝ երկար (տարիներ): *Որում լիցի յարամնալ պարագայց ամօք եւ խաղաղաձիգ աւուրբք (Դիւան ժ, 90):*

ԽԱՂԱՂԱՅՈՅՁ, ա. Խաղաղ յոյգեր ունեցող, հանդարտամիտ: *Սիրագործ նորոգատարազ շարագրութեանց բանիցն խաղաղայոյցից համաձայնեալ եւ մեր (Դիւ. Ս. Յակ., 1941, 200): Արդ ի ժամս խաղաղայոյզ ճշմարտասիրութեան զիջեալ ըստ կարծիս քում (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):*

ԽԱՂԵՏՂ, գ. Խաղալու տեղ: *Խաղետղ - հրապարակ եւ տեղի խաղուց (Վ. Յուն., 35):*

ԽԱՂԵՑՆԵԼ, պբ. Խաղաղացնել՝ հանգստացնել: *Տուր զամենն ի*

պառկելուն ժամն Ե-Ձ հեղ կու քիսէ, զցան կու խաղեցնէ (Բունիաթ, 107):

ԽԱՂԻԶ, գ. Սարբի շարժուող մասը, պախ: Անդամանդ... զբեւեռն ցուցիչին զխաղիչն այսով առնեն (Դաւրիժ., 447):

ԽԱՄՀԱՏ (պարսկ. خام «ամնշակ, խակ» բառից), գ. Խոպան, ամնշակ հող: ՄՀՖ խմահատ «մշակուած խոպան, հերկուած կորդ» (Իմաստափոխ.): Մեր խմհատն բացածն ու բացվելուն մինչև Բրտայ ծախեցինք մեր կամաւ (Սանահն., 140): Թուրքէրի տներն և հողերն Աստուածածնի խմհատ էր արարած (Սանահն., 146): Խմահատի տեղ վանքին ըլի (Սանահն., 175):

ԽԱՅԾԱՏԵԼ, նր. Խայթել, խոցոտել: ՆՀՖ խայծոտեմ /-իմ «անկանիլ խայծից կամ խայտից ի խաղողս», ԱՖ խայծոտիմ «խայծոտ՝ խատուտիկ ըլլալ»: Գազանք ճոռնի խայծատեցին / Սուրբ մարմին վիրաւորեցին (Կ. Ամատ., 55):

ԽԱՅՐԻԿ, գ. Բերք, արդիւնք: ԲՀ, ԱՖ և ՀԲՖ ունեն խայրի «պտուղ, բերք, արդիւնք»: Խայրիկ-հասկ, բերք, բեղուն, մուրկ (ՄՄ 2281, 129բ):

ԽԱՆԾԱԼ, չբ. Պարծենալ, խրոխտանալ: ԲՀ խանծալ «պանծալ»: Խանծալ - խրոխտալ, պարծել, կոկորդալի խօսել, պսպուզել, կոկովտել (ՄՄ 2281, 125ա):

ԽԱՆՈՐԱՅՔ, գ. Խաներ, իշխանագուններ (յոգ.): Երկիրն մեր սղութին է, առուտուր չիբայ, խանո-

րայք, պարոնայք տարտարոսի և ժողովուրդն երերմնի (ՄԺ I, 223):

ԽԱՆՏԷԿ, գ. Խրամ, ական, պառնեշ: ԱՖ, Ն.Բիւզ. և ՄՀՖ ունեն խանդակ «փոս, խրամ»: Գոն պահապանք յայն կողմն, և խանտէկն յոյժ ցած է (Պատմ. Խոթ. 59): Բագում պատերազմ եղաւ ձի հազար ճէնկճիով, ձի հազար խանտէկ փորողով (ՄԺ II, 408):

ԽԱՇԱՄ,

ԽԷՇԱՄ (արաբ. khasham), գ. (բժշկ.) Քթի լորձաթաղանթի հիւանդութիւն: Խաշամ, որ է քթին ցաւիլն, այն է, որ քիթն բռնվի և հոտ շառնէ (Բունիաթ, 79): Ժ՛ դուռն, որ յիշէ զքթին ցան, որ է խէշամն (Բունիաթ, 79):

ԽԱԶԱԿԱՌ, ա. Խաչան և կառուցուած: Վանքս՝ նորակերտեալ կրամած խաչակառ կաթնուղիկէիւ և բախատես բնակարանիւք (Յ. Կոլոտ, 205):

ԽԱԶԱՀԱՆԳԻՍ,

ԽԱԶԱՆԳԻՍ, գ. Հոգեհանգստի եկեղեցական արաբողութիւն: Նոյն ժամանակն հանել տուաք և խաչահանգիստ արարաք (Ձուար, 1868, 147): Կու կամի, թէ խաչանգիստն ինձ անել տայ, և ևս առաջմանէ տեսեալ էի սուրբ թագաւորին զօրութիւնն (Ձուար, 1869, 183): Սկըսանք շարական և արարի զխաչահանգիստն... այս մուրատնուս այլ հասար (Ձուար, 1869, 183):

ԽԱԶԱՀԱՆՈՂ,

ԽԱԶ ԽԱՆՈՂ, գ. Խաչ հանող՝ Յիսուսին խաչող: ՀԲՖ խաչահանել «երե-

սին խաչ հանել», ՄՀԲ *խաչահանել* «խաչը հանել՝ խաչել», ԱԲ *խաչահան* «զՔԲխտոս խաչ հանող, հրեայ եւ մեղատուր»: *Խաչահանողացն մասնակից լինի* (Կալված., 85): *Ով չի տայ ու խակառակի, զանէձք Կալյէնին առցէ եւ զխաչ խանողացն* (Ձեռ. յիշ. Ժէ, 463):

ԽԱՉՈՐԴԻ, գ. Խաչի որդի՝ սանիկը կնփահօր համար: *Սրհնէ զքեզ տամք եւ տեղօք / Ջրո խաչորդիքն միաբան* (ՈՒՄՀԲ II, 235):

ԽԱՉՈՒՎԱՌ, գ. Խաչվառ՝ կտաւի կամ վահանի վրայ նկարուած խաչ: Ն.Բիւզ. *խաչվառ* «խաչ եւ վառ բառերից, դրօշ», ՄՀԲ *խաչվառ նոյն նշ.:* *Աստուած արհնէ Շնհաւորն եւ իւր դուտոր Մարիամն. Ա խաչուվառ ետուն* (Ակոռ. 205):

ԽԱՊԱՐԱԲԵՐ, գ. Տեղեկաբեր, խաբար՝ լուր բերող: *Խապարաբերքն ոմն շաշուտ հուտ համարեալ եւ ոմն ի ճանապարհի կապեալ կանք* (Եզով, 371):

ԽԱՊԱՐԻ ՆԱՅԵԼ, հրդ. Լուրի սպասել, յուսալ: *Մեր աչքն ի ճանապարհին է, խապարի կու նայինք* (Կիւան Ս. Յակոբայ, 1940, 203):

ԽԱՌՆԱԿԱՄՏԵԼ, չբ. Խառնակ՝ պղտոր մտեր ունենալ: *Ժխորտել - խառնակամտել* (ՄՄ 1127, 141ա):

ԽԱՌՆԱԿՎԵԼ, կբ. Կեանկցել: *Ոմանք մարդիք զմեզ են թակում... մեր աղջկերանց հետ խառնակվում են* (Եզով, 415):

ԽԱՌՈՒԱՄ, գ. Խառնուրդ: *Այս ցաւերս... ի պալղամի եւ ի սավտայի խառուածոց է* (Բունիաթ, 73):

ԽԱՍՍԱՍԻ (պարսկ. xas-dar «առանձնաշնորհեալ»), ա. Երեւելի, մեծատուն: *Ես՝ Ականաթէրէցի պարոն Յեկանս խաղարի վկայ եմ* (Սանահն., 157): *Խասատար Նազարն վկայ [եմ]* (Սանահն., 158):

ԽԱՐԴՈՒՔ, գ. Մետաղի խառտոմ, փշրոմ: ՄՀԲ *խարտուկ* նոյն նշ.: *Հանց որ ոսկուց եւ երկաթի եւ պղնձի եւ այլ խարդուք որ ի մէկ տեղ լինի* (Դաւրիժ., 448):

ԽԱՐՃԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ (թուրք. harc «ծախս»), գ. Ծախսատարութիւն, «ծախս, որ վնարում էին ոչ թե դրամով, այլ ոստելիքով» (ըստ Բ. Զուգասգեանի): *Ես՝ Գէորգ անարժան եւ յոգնամեղ վարդապետս... բազմաշխատ տընութեամբ յորդաջան աշխատութեամբ եւ յոլով խարճագնացութեամբ ետու շինել* (ՄԺ I, 311):

ԽԱՐՅ, Անստոյգ նշ.: *Շրջակն ածեալ՝ տեսի զխարցն իմն ընդարձակ ի հանդիպօջ արեւելեան հարաւոյ* (Կամենից, 149): *Նշմարեցի ի մէջ խարցին մարդանման* (Կամենից, 150):

ԽԱՒԱՐԱԿՈՒՐԲ*, ա. Խաւար, մթին: *Խաւարակուրբ* - խաւար, մառն, մռեղն, ախուրք, թուզմ, արջնաթոյր, խրթնի (ՄՄ 2281, 135ա):

ԽԱՒԱՐԱՄՈՅՑ, ա. Խաւար մոծամող, փխբ. սատամայ: ԲՀ *խաւարամած* «խաւարածին, որ է սա-

տամայ»։ *Խաւար, առջնաթեր, խաւարամոյժ, որ է սատանայ (ՄՄ 2019, 162բ)։*

ԽԱՒԱՐԱՆՄԱՆ, ա. Խաւարի նման։ *Խաւարանման (գրչ. խամուրանման) խրատ տալով, Մնողանման հոգ տանելով (Առ էջմ., 194)։*

ԽԱՒԵՂԲԱՐ, գ. Հօեղբայր, տե՛ս նաև ՀՈՂՈՐԲԱՐ, ՀՈՐԱՂԲԱՅՐ։ *Յիշեցէք ի Քրիստոս... խանրին Մէրիկն եւ խարեղբար որդի Բարդամն (Ձեռ. յիշ. Ժէ, 316)։*

ԽԲԱՐՁՈՒԹԻՒՆ, գ. Խաբար բառից՝ խաբարութիւն, լուր։ *ՈՒրէնքն ոչինչ բանի խբարչութիւն մինչև ի գողէ (՛) ժամանական (եղով, 357)։*

ԽԲԻԻ, գ. Ղպտի։ *Կային հոռոմք, խբդիք, ֆռանկք, բայց հայք՝ ոչ (Միմ. Լեհ., 213)։*

ԽԲՁԱԿՆԱԿ, գ. Ղփչաղերէն։ *Կովայ Հայքն հայնակ չի գիտեն, այլ Լեհնակ եւ խբչակնակ գրուցեն (Միմ. Լեհ., 346)։*

ԽԵՂԱԹԻՒՐԵԱԼ, ա. Խելագարուած, խելքը-միտքը կորցրած։ *Ոմանք խելաթիւրեալք եւ մոլեգնեալք վասն մեծի աղետիցն եւ կորստեան ընչիցն (Միմ. Լեհ., 395)։*

ԽԵՂԱՊԱՏՈՒՄՆ, գ. Ուշաթափութիւն, խելից գնալը։ *Ի խելապատմանէ գլխոյս պատճառաւ հարհրման մի՞նաշաղէին լուսարանքս (Կամենից, 153)։*

ԽԵՂԱՅ ԵՐԹԱԼ, հրդ. Խելքը ցգել։ *ՄՀԲ խելաց թափիլ նոյն նշ.։ Թէ հիւանդն ի խելացն երթա, զըստածուն շընդունի եւ դեղն չօգնէ (Բուհրաթ, 81)։*

ԽԵՂԱՅՆՈՐԱԺԷՏ, ա. Խելապակաս, խելագար։ *Խելացնորածէտ - ախտացեալ հիւանդութեամբ խելացնորիւ, լատ. ֆռէնէթիքուս (Վ. Յուն., 37)։*

ԽԵՂՈՒՆԱԿ, ա. գ. Խելացի, ընդունակ։ *Օվիտէոս ասէ. «Բարկութիւն խելառից է՛ ի բանս, իսկ բարկութիւն խելունակաց է՛ ի գործս» (Նոր. ծաղ., 55)։*

ԽԵՂՔՈՒԿ, գ. Խելք (փղջ)։ *Յաշխարհս ես ի շուրջ եկի / Ձխելքուկս ի վրայ բերի (ՈՒՄՀԲ II, 93)։*

ԽԵՈԱԼ, չբ. Գոռայ։ *ԲՀ ունի խեռ «Էլն կամ նախանձ», ԱԲ խեռամ «ճեռայ, հիմանայ, միայլ» (իմաստափոխ.), ՀԲԲ խեռայ «չարանայ, նեղանայ»։ Խեռայ - գոռայ, ոգողել, քինայ, սխալ (ՄՄ 2281, 124ա)։*

ԽԵՐԻՔ, մկ. Բաւական, հերիք։ *Խերիք արա, Ստեփանոս, վայ եւ եղուկ կարգա զօրն ի բուն (ՈՒՄՀԲ, 417)։*

ԽԵՅԵԱԼ (գրբ. խցեալ), ա. Փակուած, խցուած։ *Բացին զՆոր դուռն Ամթայ... որ մէկ դուռն ի մէջ բերդին էր, ել եւ մուտն խցեալ զնա, որ անուանի Ջրդուռն՝ հրամանաւ թագաւորին (Դաւրիժ., 428)։*

ԽԵՒ ԳԱԼ, հրդ. Խելքը թոցնել, խելագարուել։ *Ջծոցդ ես բացեր գէտ դրախտի դուռ / Ջիմ խելքս տարիք, խե կու գամ ի ժուռ (ՈՒՄՀԲ, I, 119)։*

ԽԷԹԻՇԷՐԻՖ, գ. Հրամանագիր, տե՛ս ՀԷՏԻ ՇԷՐԻՖ։ *Դու գիտես որ առանց էմրի այստեղ գործ առաջ չի գնար, թէ որ շիտակ էմր եւ պա-*

րաթ ունիս և **խէթիշէրիֆ** (Գիւ. Ս. Յակ., 1940, 282): Մինչև Հստամպօլու փաթրըկուժիւնն **խէթիշէրիֆ** մուճըպունճայ չի լինի (Գիւ. Ս. Յակ., 1940, 315):

ԽէՉՔԱՐ, գ. Խաչաւ: Ես՝ Գուլագիզս, Երագիզս, Սարգիսս մեր **խէշքարի** ջէրկի թեղէց հողն... վախս տվինք Սանահնու Սուրբ Աստուածածնին (Սանահն., 170):

ԽէՎՈՒԹԻՒՆ, գ. Հոգեկան խանգարում: Ճոնոննին, որ է **խէվուժիւն**, Գ ազգ կու լինա, մեկին ասեն սապա (Բունիաթ, 64): Սանիա ասելն պարսկերէն **խէվուժիւն** ասել է (Բունիաթ, 65):

ԽէՏ, կ. Հետ: Դաբ ձեր Հայոց երկիրն ճանապարհ լինի, որ մին զմինոյ **խէտ** ամենայն ինչ որ զարուր լինի, հազրեմք (եզով, 357): Նորա **խէտ** աղարկիցինք աշկար և բաց (եզով, 357):

ԽէՐՆ ՏԵՄՆԵԼ / ՏԵՄՆՈՒԼ, հրդ. Օգուտ քաղել՝ ստանալ, շահ ունենալ: Գալուստ վարդապետն էտո, զոր բարեաւ և ուրախութեամբ վայելեսցէ և **խէրն տեսնու** (Կալվածագր., 94):

ԽԷՐ-ՇԱՌ (պարսկ. xer-šur «լաւ ու վատ»), հրդ. Բարի ու չար, լաւ ու վատ: Այս առուտրումս մեր աւճախին գիր առանք, որ... ամէքս մեր հողի **խէրի-շառի** տէրութիւն անենք (Սանահն., 152):

ԽԺԱՐԱՆ, ա. Խժական՝ խժացող, բարձրագոյ: **Խժարան** ձայնիւ զաղաղակ եղեալ, անզերծ զամենե-

սեան ի բուռն առնուլ կարծէին (Սանահն., 60):

ԽԻՏԱԼ, չբ. Գոռալ: ԲՀ ունի խիտալ «կասկածել»: Խիտալ - գոռալ, ոգոզալ, միամարտել (ՄՄ 2281, 135ա):

ԽԼՐՈՅՆԵԼ, չբ. Խելքահան անել, խենթացնել: Շատ անխելքներ ի խելք բերես, եւ շատ խելօք ալ **խլրոցնես** (ՈՒՄՀԲ, 76):

ԽՂՃԱՆՔ, գ. Խղնմտանք: Վասն Աստուծոյ թողէ՛ք զմեզ, մարդիկ, ի մեր **խղճանքն** և ի տառապանքն (Գիւ. Ս. Յակ., 1940, 318):

ԽՄԱՅՀԱՏ, ԽՄՀԱՏ, տե՛ս ԽԱՄՀԱՏ:

ԽՄԲԱՓԱՌ, ա. **Խմբափառ** - զարդասէր (ՄՄ 2019, 173ա):

ԽՆԱՄԱՇԱՍՈՒԹԻՒՆ, գ. Մեծ խնամք՝ հոգաձուրիւն: Գրեն մեզ զբազմագոյն գոհունակութիւնս **զխնամաշատութենէ** քրիստոսագորի և ամենաբարեպաշտի ինքնակալ կայսերն մեծի (Ղուկ. նամ., 125):

ԽՆԱՄՔ ՏԱՆԵԼ, չբ. Խնամել, պահպանել: Աղաչեմ զդասս ընթերցողաց սուրբ Աստուածաշնչիս, որ լաւ **խնամք տանիք**, ի հրոյ եւ ի ջրոյ պահէք (Թորոս աղբար, 397): Որ սիրով եւ հաւատով ընթեռնու եւ լաւ **խնամք տանէ** (Թորոս աղբար, 397):

ԽՆԴՐՎԱՅԿ, գ. Խնդրանք, խնդրուածք: Մեք պեթկական տեղիս կացող հայոց **խնդրվացիօվն** դատեցինք (եզով, 354): Ասկին **խնդրվացքն** և ամենայն բանն յայտնի առնի (եզով, 354): Մեք

ձեր խնդրվացկոփն ըզձեզ մեր թագաւորութեան հրամանին տակն կու բերեմք (եզով, 357):

ԽՆԿԱՏՈՒՓ, գ. Տուփ, ուր խումկն են պահում, գործածում: *Ի ձեռն իւրեանց ունին զխնկատուփն (Զուար, 1868, 377):*

ԽՆՋՈՅ, գ. հաղի մի տեսակ: ՄՀԲ ունի *խնջիկ* «բացականչական նշան», ՀԲԲ *խնջակ* «խրատուլակ»: *Խնջոյս - լզբի խաղ (ՄՄ 1528, 2ա):*

ԽՈՉԱՆՉՈՒԿ, գ. (կենդ.) Դելֆին: *Խոզանձուկն, որ է տիլֆին (ՄՄ 6275, 200ա):*

ԽՈՆԱՐԱՆԱԼ, չբ. 1. Տառապել: *Խոհարանալ - թշուառանալ, տառապել, մարկանալ, անկածանալ: 2. Ծոպանալ: Խոհարանալ - ծոպանալ, յանգել, ջերանիլ, անկուածիլ (ՄՄ 2281, էջ 135բ):*

ԽՈՆԵՄԱԶԳՕՆ, ա. Խոհեմ, ուշիմ: *Խոհեմազգօնի մեծի եղբորդ իմոյ Սարգսի (Յ. Կոլոտ, 179):*

ԽՈՆԵՄԱՇԱՏ, ա. Շատ խոհեմ, խոհուն, լրջմիտ: *Երեմիա խոհեմաշատ վարդապետն յղեալ էր ի քաղաքս մեր (Կալված., 149):*

ԽՈՂԽՈՄԵԼ, նբ. Ոռզել: ԲՀ ունի *խողոմել*, ԱԲ *խոխոմել* նոյն նշ.: *Խողխոմել - ոռոզել (ՄՄ 2281, 128բ):*

ԽՈՅԱԿԱՊ, ա. Թագակապ՝ գմբէթաւոր: ԱԲ և ՀԲԲ *խոյակապ* «հոյակապ» (համանուն): *Խոյակապ - թագակապ և թագէ կաթուղիկէն (ՄՄ 1528, 2ա):*

ԽՈՍԱՅԱԿԱՆ, ա. Խոսուացում: *Երգումն է կրկին, այսինքն հաստատական... Եւ խոսուացական, որ է յաղագս հանդերձելոյն (ՄՄ 1756, 53ա):*

ԽՈՍՏՈՎ ԼԻՆԵԼ, գ. Խոստովանել: *Խոստով լերուք զմեղս մարնոյ, Մեղայ ասացէք ի դէմս Աստուծոյ (ՈՒՄՀԲ, 559):*

ԽՈՏԱԴԷՋ, գ. Խոտի դէգ: *Վհատեցեալ նստայ ընդ խոտադիզաւ միով ի հանգչել (Կամենից, 150):*

ԽՈՏԱԼԻՐ, ա. Խոտով լեցում: ԱԲ և ՀԲԲ ունեն *խոտալից* նոյն նշ.: *Ունի գիւղս գովելիք բազումս ծաղկաւէտ ու խոտալիր (Յ. Կարն., 9): Եւ անտի է գաւառ մի գեղեցկաշէն յոյժ, պարոնանիստ, խոտալիր եւ ջրաւէտ (Յ. Կարն., 10):*

ԽՈՏԱՀԱՐ, ա. Հնձած խոտի նման: ՄՀԲ ունի *խոտահար* «գ. խոտահարբ, խոտատեղ» (իմաստափոխ.), ՀԲԲ *խոտահար* «խոտ հարող՝ հնձող»: *Ի դրանէ այրին մինչեւ ցբուն իսկ ներսի յանկիւնս այրին, իբրեւ զխոտահար զամենեսեան ջարդեալ ի վայր թափեցին (Դարիժ., 85):*

ԽՈՐԱԳԷՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. Խորագիտութիւն, խորին իմացութիւն: *Դարձեալ Սարգիս վարդապետին կողմանէ... խորագէտագիտութեամբ սկսաւ տեղւոյս առաջնորդ եղեալքն որսալ (Դիւ. Ս. Յակ., 1933, 121):*

ԽՈՐԳԱԿԸԻՆԵԼ, կբ. Կործանուել, խորտակուել: *Եւ ետ այնորիկ թա-*

գաւորէն էմր եղաւ թէ՛ Օւզուն բերթ պիտի խորդակըւի (ՄԺ I, 213):

ԽՈՐՀԱԳԷՏ, ա. Խորագէտ, իմաստուն: Քանզի ոչ էր այր խորագէտ (գրչ. խորհագէտ), այլ պարզամիտ, վասն որոյ հաւանեցաւ (Դարիժ., 394):

ԽՈՐՀԱՌՈՐ, ա. Անտեսանելի: *Խորհաւոր* - քողասուզեալ, պատրուակեալ, աներևակի, որչասուզեալ (ՄՄ 2281, 123բ):

ԽՈՐՀՐԳՈՒՆԱԿ, ա. ՈՒնակ, հմուտ: եցոյց ինձ Մօնահնետ Պալտէսքի՝ խորհրդունակ սրբազանի համագումարին զսերեցմանէ հաւատոյ (Կամենից, 128):

ԽՈՒԺԿՈՒ, ա. Հուժկու: Սա խուժկու եւ յաղթող լեալ քան զհարսն իւր եւ հնազանդեաց զէհ քաղաք, որ է Հօթուն (ՄԺ II, 358):

ԽՈՒԾԱԾ, ա. Չար, գէշ (ծան. հրատ.): Հաւանութիւն տվիլ է հասարակին խորհրդին. զէրայ հասարակն խուժած խորհուրդ արած ըլար նայ, գրած պիլեր թէ չի անինք (Գովր., 234):

ԽՈՒՏՈՒԿՅՆԵԼ, պբ. Խուտուտ տալ: ՀԲԲ խուտուկ «խաիկ, խուտուտ»: Հանց կու խայթեն որպէս ասեղ, *խուտուկցնեն* որպէս զգե (ՈՒՄՀԲ, 517):

ԽՈՒՐՏԱՆ (պարսկ. khurda), գ. (բժշկ.) Ուտի թաթի մանր ոսկորները: Թէ յամէ և դեղ շառնեն և իջնու ի յոտիցն ի խուրտանին... և դեղն դժար կու լինի (Բունիաթ, 106):

ԽՈՒՂՈՒԹԻՒՆ, գ. Խոռվութիւն: *Ելեալ մեծ խոռվութեան եւ յելուզակաց ոմանց նախարարացն...* յարեան պատերազմ երկոքին արքայքն (Ստ. Ռօշթայ, 52):

ԽՈՒՎԱՆՔՆ ԸՆԿՆԵԼ, հրդ. Խոռվ-բին՝ նզովբին արժանանալ: Ով որ այս բանիս հակառակի, Աստուածածնի խոռվանքն ընկնի (Սանահն., 143):

ԽՈՒՎԱՐԿ, ա. Խոռվութիւն արկանող զցող (ամն): ԱԲ խոռվարկու «խոռվարար»: Պատուիրեմ հարկի եւ սպառնալեօք, խոռվարկ, կռուագբօս եւ շարանիւթ անձանց ոմանց (Գալ. Կենս., 341):

ԽՍԱԳՈՐ, ա. Երևելի, տէս ԽԱՍՏԱՐ:

ԽՏՏԱՅԱԻ, գ. (բժշկ.) Աշխի հիւանդութիւն: *Խտտացաւ* - հիւանդութիւն իմն աչաց, որ շառագունէ զպիտակոյց նորին և ուռուցեալ զկոպսն, յետս շրջէ իբր զարինատեսիլ և զկեղունակս, լատ. օֆթալմիայ (Վ. Յուն., 39):

ԽՐԱՄԱՏԱԶԳԱԾ, ա. Վտանգի, վնասի զգացողութիւն: *Խրամատագգած* - զգածեցեալ վնասաբերի և աւերածեալ խորհրդով կամ դիտաւորութեամբ կամ մտածութեամբ կամ իրակութեամբ կամ բանի և այլով համայնիւք (Վ. Յուն., 38):

ԽՐԱՍՊԱՏԺԵԼ, նբ. Պատժել խրատով, կշտամբել: *Խրատապատժեմ* - կշտամբեմ բանիւք կամ պատժեմ քինախնդրութեամբ և խրատու, լատ. քասթիկօ (Վ. Յուն., 38):

ԽՐԸՄՅԻ, գ. Ղրիմեցի, տե՛ս ՂՐԸՄ-ՅԻ:

ԽՐԹՆԱԶԳԻ, ա. Բնատրուբեամբ բարդ, դժուարիմանալի: Եւ էր պատրիարքն հայոց վարդապետ մի Կեսարացի Գրիգոր անուն, խըրթնազգի եւ խստակրօն (Սիմ. Լեհ., 8):

ԽՐՈՆՏԱՌՈՅԵԼ, նբ. Խրոխտանալ, սպառնալ: *Խրոխտառոցեմ* - շարժեմ զգլուխս հանդէպ կրծոյս՝ ահացուցանելով զորք և կամ սպաննամ միանգամայն զբանս խրոխտս և զոգորալիս ելուզանելով (Վ. Յուն., 39):

ԽՐՈՂՏ, ա. Խրոխտ: *Խրոհտ* են և քաջ գիտուն (ՈՒՄՂԲ, 211):

ԽՐՈՒԱՏԼԻ, գ. Խորուարք: Ի վարատինու ցորենն խրուատլի երկիրն տանելոց են (Գիւան Մխիթ., 55): Ոմանք ի նոցունց կողմն խրվատլու գնան (Գիւան Մխիթ., 55):

ԽՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ, գ. Խցում բնակուելը, ճգնակեցութիւն: Բնակեալ են բազմահոյլ միաբանք, որք ունին զկարգաւորութիւն ամենայն իրաց, ժամատեղաց եւ սեղանատեղաց, զգեստուց եւ խցակացութեան (Դարիժ., 239):

ԽՕՎ.

ԽՕԻ, մկ. Խում, արդեօֆ, չէ՞ որ: *Երեւանայ բերի Աքուլիս, թէ կէնան, խօվ կացին ոչ (Զ. Ագուլ., 117): էս խօւ մեզ հախու պարտք ու վաճուպ և կարի հարկաւոր է (Գիւան Ն. Ջուղ., 50):*

ԽՕՔՕՐ ՏՂԱ / ՈՐԳԻ, գ. Հօրեղբօր որդի: *Մեռանելիս ժամանակին կտակ է արել և իւր խօքօր տղա Աստուածատուրն վաքիլ է արել (Կալված., 75): Ոչ ով խօսող չլինի հետ մեր Սուրբ Վարդանայ եկեղեցուն՝ ո՛չ որդոց և ո՛չ դստերաց, ո՛չ խօքօր որդոց և ո՛չ հաքուր որդոց (Կալված., 132):*

ԽՕՔ ԲԵՐԵԼ, հրդ. Լուր բերել՝ հաղորդել: *Հաշթարխանու մեր մարդն եկին մեզ խօսք բերին (Նզով, 258):*

ԽՕՔՆ ՓՈՒՉ ԼԻՆԻ, հրդ. Խօսքը անտեսուի: Թէ մեր ազգէն դաւի անօղ լինի, խօսքն փուչ լինի (Կալվածագր., 87):

ԽՕՐՈՉԽՕՍ, գ. Ալխրականչ: ՄՂԲ խորոզ «ախաղաղ»: *Կէս գիշերուն ձայն հանեցին / Խօրոզխօսուն թրատեցին (ՈՒՄՂԲ II, 320):*

-Մ-

ԾԱԿԾԱԿԵՐԵՍ, ա. Ծակ-ծակ՝ ծաղկատար երես ունեցող: *Քանզի էր... ծակծակերես եւ պեպնոտ,*

շեկագոյն եւ պակասամօրուս (Զաք. Ա, 48):

ԾԱՂԵԼ, նբ. Ծախել: Թնդոցի հողի կէսն ծախած էր, կէսն էլ նոր ծա-

խեցինք (գրչ. **ծաղեցինք**) ի վերայ Սարգիս պարոնտիրին (Սանահն., 156):

ԾԱՂԷԿ, գ. Ծաղիկ: Որ թէ զխօրօտմօրօտն ասեն չէ նման... Ոչ մանուշակ **ծաղէկն** նշան գարնան (ՌԻՄԶԲ, 188):

ԾԱՂԿԱՀԱՆ, գ. Ծաղկող, ներկարար: Ի վերոյ պէկիկ են արք ներկարարք, որք են **ծաղկահան** (Քէօմ., 11):

ԾԱՂԿԱՆՄԱՆ, ա. Ծաղկի նմանող: Յիշել հայցեմ զմեզ անխափան / եւ զընտանիսն ազնւական / Որք լինելոց են և որ կան / Զդեռաբողբոջ **ծաղկանման** / զԱստուածատուրն և զՈստիան (Պատմ. Խոթ., 82):

ԾԱՂԿԱՓՔՈՅԹ, ա. Ծաղկափթիթ, փխր. մատաղահասակ: Երջանիկ եւ գեղեցիկ **ծաղկազարթ**, **ծաղկափթոյթ**, ազատ ազգէ ազատածին Կոհոու Իգիթ, որ փոխեցաւ էս տարի (Դիւան հայ վիմ. II, 108):

ԾԱՂԿԵՀԱՄ, ա. Ծաղկի համ ունեցող, անուշահամ: Զուղայեցիք պատուեցին զնա համադամ կերակրօք եւ **ծաղկեհամ** գինեաւ (Դարիժ., 69):

ԾԱՆԵԱԿ, գ. ա. Ծանօթ: ՄՀԲ **ծանեակ** լինել «ծանօթ՝ յայտնի լինել»: Ողջոյն տամ փոքրաւորաց քոց, այսինքն՝ Սուքիաս վարդապետին և քոյին մեծ և փոքր սպասաւորացդ, որ ոչ եմ **ծանեակ** նոցին (Դիւ. Ս. Յակ., 1932, 186):

ԾԱՆՐԱԾԱՆԱԼ, ա. Մեծածաւր, լայնատարած: Անհուն շնորհօք ես

լրացեալ / Իբրեւ զծով **ծանրածաւայ** (ՌԻՄԶԲ II, 81):

ԾԱՆՐԱՉՄԵՌ, ա. գ. Ծանր՝ ցուրտ անձեռ: Զմեռնն այն **ծանրածմեռն** եւ ձիւնամեծ էր, վասն որոյ բեռնակիր անասունքն ամենեքեան վաստակեալ մնացին ի ճանապարհին (Դարիժ., 106):

ԾԱՆՐԱՀԷՆ, ա. Ծանրաւուն, փխր. թանկագին: Ապա սկսաւ վատնել եւ կորուսանել զինչա եւ զխազինայս... **զծանրաշէն** բուռվառան, մեծագին քրոջսն (Սիմ. Լեհ., 411):

ԾԱՆՐԱՊՈՅՐ, գ. Թանկարժէք մի քաւ: **Ծանրապոյր**, որ է մառճան սպիտակ (ՄՄ 6275, 200բ):

ԾԱՆՐԱՎԱՀԱՌ, ա. Ծանր՝ թանկ վաճառող: Ի Սպահան քաղաքն ամենայն ինչ՝ թէ ուտելի եւ թէ զգենլի եւ թէ այլ ինչ, ամենայն **ծանրավաճառ** եւ թանկագին է (Դարիժ., 148):

ԾԱՌԱՏԱԿ, ա. մկ. Ծառի տակ: Այլքն **ծառատակնին** դժբաքով նշան չափէին (Սիմ. Լեհ., 155):

ԾԱՌԱՆՈՅ, գ. Ծառաստան, փխր. դրախտ: **Ծառանոց** - դրախտ, թփուտ (ՄՄ 2281, 130բ):

ԾԵՐԱՄԻՏ, ա. Ծեր՝ իմաստուն միտք, խոհուն: ՄՎ **ծառայակիցք** իմ **ձերամիտք**, ծանուցէք ինձ / Ու՞ր է ծնողն մեր հոգեւոր (Ներք. Սրապ., 21):

ԾԵՐՈՒՆԱԿ, ա. Ծերունական: Եկեալ պատմեսցէ ձեզ... զաղաւնեւրամ բազմայոյլութեանց եւ կամ զմերոյ **ձերունակ** տկարութեանց (Ագուլ. կրնդ., 94):

ԾԵՐՈՒՆԻԿ, գ. Ծերունի (վաղշ.): *Աղաչեմ յիշել... զիս՝ զեղկելի ձերունիկս՝ զՍարգիս մոնոզոնիկս (Ձեռ. յիշ. ԺԷ, 404):*

ՄԷՏԻՈՒԹԻՒՆ, գ. Պատերազմ, հակաառաժառ: *Մինք ալ մեր կարողութեանը գորայ ընկերութիւն տանք մեր թագուհոյն, ունենալով ձէձէլութիւն հետ Բրուսին (Պրոստիային) (Գովբ., 129):*

ՄԸՄՄԱՆ ԶՈՒՐ, հրդ. Ծմբաշուր: *Զսևուկ հնտիկն քացխով գրջես... հանապազ լուս ճըծման ջրով (Բունիաթ, 103):*

ՄԻԼ (վրաց. cili), գ. Մաս, բաժին, հասանելիք: *Ջումի ծիլն և զՄորանց ծիլն ճալէնովն գնեցինք և զՍամծերու Գոգիպանց ծիլ այգին առանք և վախմ հաստատեցինք (Սանահն., 113): Մեր հայրական ծիլ Քիստում տուն և իր առաջի կան հաւասար ծախեցի (Սանահն., 142):*

ՄԻՐԱՆԱՍԿԵԱՅ, ա. Ծիրանագեատ, արքայական ծիրանի հագած: *Օգոստոսիառ և ծիրանասգեաց Պէտրէ Ալէքսի ինքնակալ թագաւորին (Եգով, 335):*

ՄԻՐԱՆԳՈՅՆ, գ. Ծիրանագոյն: *Հայերէն շափիւղայ ծիրանգոյն, արապերէն ճապալաղում (Դաւրիժ., 441):*

ՄԼՈՒԿ, գ. Ձեռք: *Դաստակ - ձեռն, բազուկ, ծլուկ (ՄՄ 2019, 164ա):*

ՄԵԱԿԵՐԱԿԱՆ, գ. Ծխատէր քահանայ (ներ): *ԱՖ ծխակեր նոյն նշ.: Զմատակարարութիւն սուրբ խորհրդոյն և զայլ հանդիսութիւնս ե-*

կեղեցականս, որք ծխակերականք են (Դիւան Մխիթ., 157):

ԾԾՄԲԱՂԱՍՆԳԻԿ, գ. Ծծմբային փմիական նիւթ: *Ամենայն տարերաց և տարրացեալ գոյից սկզբնասերմն ասի ծծմբաղասնդիկ, որ է գոլորշումն և շոգունակ գորութիւն իմն (Տէֆթ., 379):*

ԾԿԱԿԵԼ, չբ. Կտուցը բացուխտսի անել: *ԲՆ ունի ծկծկել «ձայն ձայնել», ՀԲԲ ծկակել «սաստիկ ծարաւ զգալ» (իմաստափոխ.): Անասունի նման կու հէծային եւ կու տառապէին եւ հաւձագի պէս կու ծկակէին (Ձեռ. յիշ. ԺԷ, 315):*

ԾԿՏԱԼ, չբ. Զկտալ, գխտալ: *ՀԲԲ ծկտալ «ոգելից ըմպելիքից կոկորդը այրուել» (իմաստափոխ.): Նշանն այն է, որ կերակուր չուզենա, որ ծկտա և փսխէ և փորն պինտ լինի (Բունիաթ, 97):*

ԾՆԿՍԵԼ, չբ. Ծնարբել, ծունկի գալ: *Շինած էր զկինն ծնկսած առ սուրբ հաշն (Սիմ. Լեհ., 120): Երբեմն ծնկսէր եւ երբեմն կանգնէր (Սիմ. Լեհ., 120): Մինն ծնկսեալ աղեղն քարշէր, եւ միւսն քար վերացուցեալ կամէր հարկանել զնա (Սիմ. Լեհ., 155):*

ԾՆՇԵԼ, նբ. Հիւծել: *Մնշել - ծիւրել, ծմբել (ՄՄ 2281, 126բ):*

ԾՈՆ, ա. Լեցուն, լիբը: *Մոհ - զառբերան, բազմաբեր, լիսպատառ, համակալ (ՄՄ 2281, 135ա):*

ԾՈՄԱՐՁԱԿ, ա. Ծոմից արձակ դուրս, ծոմարձակ լինել՝ ծոմից դուրս գալ: *[Հրամայէ] ծոմարձակ լինել եւ գինի խմել (Ճեմճ., 261):*

ԾՈՎԱՇՈՒՐՋ, ա. Ծովապատ, ջրով շրջապատուած: *Ի թվին ՌձԻԲ եկի ի ծովաշուրջ Անապատն Լմայ, հանդերձ հոգևոր որդւովք իմովք (Դիւան ժ, 57):*

ԾՈՎԵՐԵՍ, գ. Ծովի երես՝ մակերեւոյթ: *Ամպարն ի ջօհարի կարգ չէ, ապա ի ջօհարի կարգէ բանած ի յեմանի ծովերեսն կու լինի (Դաւրիժ., 55):*

ԾՈՒԼԻ, շր. Ծովանալ: ԱԲ ունի ծուլալ, ՄՉԲ ծուլնալ նոյն նշ.: *Շուշալ - ծուլիլ կամ հեղգալ (ՄՄ 1127, 148բ):*

ԾՌԹՌԹ, գ. Ծռռ: *Մենք, մեր որդիքն*

կամ թռռունքս, ծռթռռ, թռռնի թռռ, որ... այգոյն մալ առնելոյ լինինք (Կալված., 158):

ԾՐԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ծածկախօսութիւն: *Ծրարաբանութիւն - ոճ իմն խօսելոյ, որ համանմանիւք և երկիմացիւք բանիւք զքօղէ զիմացն ուղղական և իբր ներածրարէ զիսկն իրին (Վ. Յուն., 40):*

ԾՕԿԻԱԿՈՒՄ, գ. Զողիակ, կենդանակերպ: *Ներ եթերականին եւ ծօղիակուսին ստորեւ կանն պարագրեալք (Յ. Կոլոտ, 240):*

-Կ-

ԿԱԶԵԼ (ռուս. каз-аѣ), նր. Դատել, պատժել: *Որիչ եւ զատ դատաստան ունին եւ սուր, որ զհայ գողս եւ զաւազակս կազեն եւ զլխատեն (Սիմ. Լեհ., 338):*

ԿԱԹԼԻԿ, գ. Կաթիլ (փղղշ.), փխբ. շնչին մի բան: *Զմեզ ի կեանս կոշողին իբրու կաթլիկ մի առ նըլիրեսցուք (Յ. Կոլոտ, 213):*

ԿԱԹՆԱՄԵՂՐԱՔՈՒՆ, ա. Մեղր ու կաթ բխեցնող, փխբ. սուրբ: *Հասեալ մերոյս անարժանութեան ի կաթնամեղրաբուխ աւետեացն քաղաք (Յ. Կոլոտ, 210):*

ԿԱԹՆԱՌՈՒ, ա. Կաթնակեր, կաթ ուտող: *ՄՉԲ կաթնարբու նոյն նշ.: Յորոյ... լեալ էր ասպնջական և պատսպարան և փոխաբերաբար*

կաթնառու իմաստից (Աղան. Միաբանք, 61):

ԿԱԹՈՒԼԻԿ, գ. Կաթոլիկ: *Թւոյն 1697 յօգոստոսի 15 թագաւոր քուրվիրշտն Սաքան ի Լէհաց ազգին, որ էր լօթնան եւ եղեւ կաթոլիկ (ՄԺ II, 404):*

ԿԱՂՈՒԻՆՔ, գ. Կաթոլիկ ռեֆորմատոր ժամ Կալովինի (XVI դ.) վարդապետութեան հետեւող, կալովինականութիւն ընդունող, տես նաև ԳԱՎԻՆՔ: *Ինչ գոր եղեալ են լոյթերականքն եւ կալուիինք ի վերայ մերոյս դաւանութեան (Դաւան., 108):*

ԿԱՆԵԿ, գ. Պաղի կոթ: *Կախեկ - բարկագոյն և խիստ մասնիկն այն ամենից պտղոյ, յորմէ կախին յոս-*

տոյ ծառոյն, զոր ուամկորէն կոթ
անուանեն (Վ. Յուն., 41):

ԿԱԾԿԻՐԱՆ, գ. (բար.) Քաջավարդ,
գորտնուկազգիների ընտանիքին
պատկանող բոյս: *Կածկիրան*, որ
է խաշափայտ (ՄՄ 6275, 201բ):

ԿԱԾԿՆՏՈՒՆ,

ԿԱԾԿՏՈՒԿ, գ. Կայծակ, որոտ: *Անձ-
րեւ եկաւ, որոտում եղեւ, կածկը-
տուն, հեղեղն եկաւ եւ պատեց բո-
լոր քաղաքն (ՄԺ I, 219): Փայլակ -
կածկտուկ (ՄՄ 1127, 156ա):*

ԿԱՄԱՆԵԼ, ա. Քրեական, տե՛ս
ԿԻՄՆԱԼ:

ԿԱՄԱՐԱԿԵՐՏ, ա. Կամարակապ,
կամարով շինուած: *Ի մէջ յայնմ ա-
ւերակ շինուածոյն գոյ գմբեթաշէն
յարկ մի՝ բոլորածև, կամարակերտ
ձևով յօրինեալ (Պատմ. Երուս.,
1931, 212):*

ԿԱՄԱՐԱԶԳԵԱԼ, ա. Կամարի նման
ձգուած: ԱՖ և ՄՀԲ կամարաձգու-
թիւն «կամարի ձգուած»: *Գոյ ե-
կեղեցի մի ևս՝ մարմարոնեայ քա-
րիւ կամարաձգեալ (Պատմ. Երուս.,
1931, 275):*

ԿԱՄԱՔԱՐՇԵԼ, չբ. Ստիպմամբ՝ ոչ
կամովին փաշել, ներգրաւել: *Երկո-
տասան եպիսկոպոսօք դաշնակից
կամեցան, յորոց մի էր Ներսէս
Կամբրոնացին, կամաքարշեալ եւ ոչ
կամաւ (Առ էջմ., 161):*

ԿԱՄԼՆՅԱՅԻ, գ. Կամլնիցի (փաղափ
Լեհաստանում) բնակիչ: *Կանմէն-
ցացիք թղթովք իւրեանց պարոն
Ստեփանին, որ էր դուքս Ռուզաց,
առաքեցին յէջմիածին (Ստ. Ռօշ-
քայ, 157):*

ԿԱՅՏԱԳՈՅՆ, գ. Կայծի գոյն, հրա-
գոյն: *Կայծագոյնն լաւ է, կարկե-
հան ասեն (Դարբիժ., 441):*

ԿԱՅՏԱԿՆԱՏԵՍ, ա. Կայծակի տես-
նով, կայծակնացայտ: ԱՖ կայ-
ծակնատեսիլ «որ կրակի կը նմա-
նի»: Որ և մի ի շառաւիղացոյ փայ-
լակնանման կայծակնատես ժամա-
նեաց ի կայսերանիստ և ի փա-
փաբնակ քաղաքն ի մեծն Հոռով
(Աղան. Միաբանք, 111):

ԿԱՅՏՐՆԿԷՅ, ա. Կայծ սփռող՝ տա-
րածող: *Զորոտումն կայծրնկէց եւ
հրացան ամպոց դողացուցանէր
գամենայն մսեղիս (Դարբիժ., 273):*

ԿԱՅՆԵԼ, նբ. Կառուցել, կանգնեցնել,
տե՛ս նաև ԿԱՆԿԱՅՆԵԼ: ՄՀԲ կայնել
«կանգնել»: *Թվ ՌձեՆԴ (1695) ես՝
Վարդան, որդի Թանկրի Վարմիշին,
կայնեցի Սուրբ Խաչա բարէխաւս Շէ-
խումին (ԴՅՎ IV, 349):*

ԿԱՅՆԵՐԱԿԱՊ, ա. Կայսեր նման,
փխբ. կայսերակերպ: *Կայսերա-
կապ նմանն մեծին Ապկարու և
Կոստանդիանոսի, շքեղակապ զար-
դարեալ փառօք (Եզով, 340):*

ԿԱՅՆԵՐԱՍԷՐ, ա. Կայսերը սիրող,
հաւատարիմ: *Պէտր Մաթվ աթմի-
ռալիդ և կայսերասիրի... Մակարով
սէքրէթարիդ և այլօք խորհրդակցօք
(Եզով, 371): Ահա յուշ լիցի աստուա-
ծապաշտ և կայսերասէր իշխանու-
թեանն ձերում (Եզով, 371):*

ԿԱՅՆԵՐՈՒՀԻ, գ. Թագունի, կայս-
րունի: *Գրեաց և խնդրեաց ի քրիս-
տոսապսակեալ ամենաբարեպաշ-
տունհի կայսերունչոյն Ռուսաց
(Ղուկ. նամ., 121):*

ԿԱՅՐԱՆՈՍ, ա. Կայսրին յատուկ (խօսք): *Ընդ կայսրախօս համար-ձակեալքդ և բարձրահրաման ինքնակալեալքդ զիջեալ աստանօր զխաղաղութիւն մարգէք (Իրւ. Ս. Յակ., 1941, 200):*

ԿԱՆԱԶ ԳԼՈՒՆ, ա. Կանաչ գլխանոց կրող,- այդպէս էին անուանում մահմեդական մի աղանդի ներկայացուցիչներին, սելդններին՝ Ալլիի հետնորդներին, կանաչ գլխափաթոցի համար: *ՀԲԲ կանաչագլուխ նոյն նշ: Յայնմ ժամու եկեալ այր ոմն մահմետական, որ էր ինքն ամիր եւ կանաչ գլուխ (գրչ. կանաչագլուխ), հայհոյեաց զԽաչատուրն (Դարիժ., 405): Նոր դատին յունիսի ժժ եմուտ ի քաղաքս, կանաչ գլուխ է և շինտիլիկ, աղէկ մարդ կ'երեայ (Իրւան Ս. Յակոբայ, 1941, 84):*

ԿԱՆԱԿՈՐ, գ. (բար.) Կանեփ: *Կանաւոր, որ է կանեփ (ՄՄ 6275, 201բ):*

ԿԱՆԱՓԵԱՅ, ա. Կանեփից պարաստուած: *Ճգնաւոր եւ խարագնասգեաց [էր], ագանէր մագեղէն եւ կանափեայ գօտով շրջէր (Ժամ. Պող., 277):*

ԿԱՆԵԱՇԱՐԺՈՒԹԻՒՆ, գ. Նախապէս շարժուելը, զօրփ՝ դէպքերից առաջ զօրաշարժը: *Ջօրքն պարսից մեծաւ պատրաստութեամբ կանխաշարժութեամբ շուեալ [է] (Իրւան Մխիթ., 47):*

ԿԱՆԵԱՍՈՎՈՐ, ա. Նախապէս սովոր: *Նոյնպէս ի բառնիլ այնց պատճառաց՝ տացէ դարձեալ*

զպտուղ իւր կանխաստովոր յորդորմամբ (Յ. Կողոտ, 265):

ԿԱՆԵՆԻ, մկ. Վաղ, կանխահաս: *Այս է շիրիմս հանգստի /...Իւր անունն է Ֆռանկուլի / Քսան ամաց նահատակի / Կանխիւ մահուամբըն կատարի (ԴՀՎ VII, 113):*

ԿԱՆԿԱՅԵԼ, չբ. Պէտք է լինէր կանգնեցի, բայց վիմ. արձ.-ում հստակ երեւում է՝ **կանկայեցի**, տէս **ԿԱՅՆԵԼ**: *Ես՝ էտիլխանս կանկայեցի Սուրբ Խաչս եղբայր Ակոբին (ԴՀՎ IV, 237):*

ԿԱՆՈՒՄ, գ. Կանոն, «Ը կանոն»՝ ութ կանոն, սաղմոսի ութ բաժանումներից ամէն մէկը: *Ե տարի կարգացի Ը կանոն սաղմոսն, այլ բազում գրանք համբար արի (Նըշխարք, 5):*

ԿԱՆՁՆԱԼ, չբ. Կանաչել: *ՄՇԲ կանչանալ «կանաչել, կանաչով պատուել»: Աշուն էր, եղաւ գարուն, կանչցաւ երես դաշտերուն (ՈՒՄՇԲ, 416):*

ԿԱՆՅԱՐ (գերմ. Kanzler), գ. Կանցլեր, Գերմանիայում կառավարութեան գլխատը՝ վարչապետ: *ՀԲԲ կանցլեր: Կանցլար գրաֆ Գալուէլ Գլօլգին (եղով, 406):*

ԿԱՇԱՌԱԿՈՒՐ, գ. Կաշառակեր, հմմտ. կերակուր: *Իսկ նա, որ առեալ էր ի պատրեացն զոսկի դահեկանսն, ոսկեան այնու կաշառակուր լեալ էր տեսարան մտաց նորա (Դարիժ., 171):*

ԿԱՇԿԱՆԳՈՒԹԻՒՆ, գ. Միակցութիւն, անբաժանելիութիւն: *Համայար և սեփօրէն կաշկանդութեամբ ի*

տարուստ իբր ի մօտոյ բացատմէջ
(Դիւ. Ս. Յակ., 1941, 200):

ԿԱՊԱՆԱՏԵՂԻ, գ. Կիրն, անմատոյց վայր: Գնացեալ ի յանկեան ուրեք ինչ իւրոյ աշխարհին՝ բնակէր ի մացառս եւ ի կապանատեղիս (Դարիժ., 464):

ԿԱՊԱՐԱԳՄԲԷԹ, ա. Կապարեայ՝ մետաղեայ գմբեթով, տանիքով: Շատ խանութք են քարակիրք՝ կապարագմբէթ կառուցման (Քէօմ., 32):

ԿԱՊՈՒՏԱԶԳԵՍ, ա. Կապոյտ զգեստով: Իսկ զօրք անհաւատիցն... միահամուռ կապուտազգեստ եւ երկնագունակ, երկաթապատ պողոպատիկ զրահիւք հաստատեալ կային ի դիմի (Պատմ. խոթ., 54):

ԿԱՌԱՓՏԵԼ, նր. Հարուածել, ծեծել: Յիսուս նագովրեցին բարձեալ զխաչ իւր՝ տանէին ծեծելով և կառափտելով (Զուար, 1868, 331):

ԿԱՌԵԼ, նր. Քարանալ՝ անշարժանալ, փխբ. պապանձուել: Հմմտ. ՀԱՅ կառ «կանգնեցնել», կարկառ «հարակոյտ»: Յայնժամ կառեցան կապեցան բերանք ձեր, ոչ միայն զայս, այլ և զլոկ պատասխան թղթոց մերոց տալ մեզ (Դիւ. Ս. Յակ., 1940, 317):

ԿԱՍԿԱԾՈՒՏ, ա. գ. Կասկածելի՝ երկիւղալի (տեղեք, վայրեք): Ն. Բիւզ. կասկածոտ «ոտ գոյ կասկած՝ երկիւղ»: Նմանին շողոքորթիչք յուշկարպարկաց, որոց կէսն ձկան է և կէսն կնոջ և բնակին ի

յապառածս և ի կասկածուս տեղիս (Նոր. ծաղ., 86):

ԿԱՏԱԿԱՐԱՐ, գ. Կատակներ անող՝ զուարեախօս: Մարդիկն... խորագէտք եւ բանաստեղծք, առակախօսք, կատակարարք եւ ուրախացուցիչք (Սիմ. Լեհ., 329):

ԿԱՏԱՐԱԿՈՐԾՈՒԹԻՒՆ,
ԿԱՏԱՐԱԿՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Ասարտ: ՀԲԲ կատարագործել «կատարել, իրագործել»: Ըստ իւրաքանչիւրոց ծայրից բաժանելոյ փութացեալք լինէին առաջի եղեալս ինքեանց յիրին կատարագործութիւն (գրչ. կատարակործութիւն) (Դարիժ., 426):

ԿԱՏԱՐՆՈՒԹԻՒՆ, գ. Կատարում, լիացում: Զարդարեցեր սիրով Աստուած Սուրբ Հոգւոյն... ի լրումն կատարնութեան բարեաց գործոց ճանաչելոյ աշխարհի (Դիւ. Ս. Յակ., 1932, 279):

ԿԱՐԷՅՆ ԱՆԵԼ, հոդ. Կարիք(ներ)ը հոգալ: Ծախեցի Փոխտոաց տուն ու մառան... հախն առայ, իմ կարէցն արի (Սանահն., 160): Մեր խմհատն բացածն ու բացվելուն մինչև Բրտայ ծախեցինք... իւր շորս կոպարովն, հախն առանք, մեր կարէցն արարինք (Սանահն., 135):

ԿԱՐԻՉ, գ. Կարիք: Բարձցէ ի ձէնջ Տէր Աստուած մեր... զպատուհասն, զյանկարծականն, զթոթոն, զօսն, զարօսն, զմարուխն, զկարիչն և զփորփորիչն եւ զամենայն զոր ինչ կա յերկրի (Նգով, 140):

ԿԱՐԾԱՆՕՍՈՒԹԻՒՆ, գ. Կասկածամտոպիւն: Հմմտ. ՀԲԲ կարծեխօս «երևակայող»: Կարծախօսու-

թիւն-անհաւաստութիւն և տարակուսական իմն զօրութիւն բանից, որ ի կարծիս և ի տարակոյտ արկանէզ զլսօղան (Վ. Յուն., 41):

ԿԱՐԾՈՏՈՒԹԻՒՆ, գ. Քննասիրութիւն, նաև՝ կասկածամտութիւն: ՄՀԲ կարծոտ «կասկածատր»: *Նենգագործութիւն է՝ խոկումն չարեաց վասն մերձաւորին, յորմէ ծնանի և յառաջագայի մոլութիւն կարծոտութեան (Նոր. ծաղ., 118): Կարծոտութիւն է՝ չարավարկութիւն իմն գումեմնէ, վասն թեթևի ուրուք դատողութեան (Նոր. ծաղ., 118):*

ԿԱՐԿԱԶՈՏՈՒԹԻՒՆ, գ. Անմտութիւն, գրախօսութիւն: *Կարկաչոտութիւն - լեզուագարութիւն ախմարական, որ ո՛չ զվայելս ունի խօսելոյ և ոչ իսկ զժամանակ և զորպիսութիւն խօսիցն ընտրէ (Վ. Յուն., 42):*

ԿԱՐԿՏԱՆ, գ. Կարկատան: *Սկսան... թուք եւ ապտակ ի յերեսն եւ զմորուան ճողել եւ սեւ կարկտան մի ի վերայ աջոյ ուսին կարել (Դաւրիժ., 471):*

ԿԱՐՁՆՈՒՎ, գ. (բար.) Նուշի դառը միջուկ: *Կարձնուք, որ է դառն նուշ (ՄՄ 6275, 202բ):*

ԿԱՐՃԱԲՈՅՍ, ա. Կարն բուսած՝ ահած (մազեր): *Արտեանունք - վերջնագոյն մասն ճակատոյն, որ մակալաց վերակայի, ծածկեցեալ հերօք կարճաբուսիք (Վ. Յուն., 14):*

ԿԱՐՃԱՇՈՒՆՉ, ա. Կարն շունչ ունեցող: *Եւ կարճաշունչ նուագաձայն / Շրթունքս թոյլ եւ սխալական (ՌԻՄՀԲ II, 87):*

ԿԱՐՃԱՒԻ, գ. ա. Կարն օր՝ կեանք, տե՛ս նաև ԿԷՍԱԻԲԵԱՅ: *Այս է հանգիստ պարոն Աւաքին, որ կարճաւրաք ելաւ, էառ անդառամ պսակն (ԴՉՎ III, 18):*

ԿԱՐՄԻԲԵՐԵՍ, ա. Կարմիր երես ունեցող, թխագոյն, փխբ. առողջ: *Կանայք նոցա յոյժ գեղեցիկ եւ փափուկք են, կարմիրերես (Սիմ. Լեհ., 331):*

ԿԱՐՄԻՐ ՈՍԿԻ, հոդ. Օսմանեան ոսկեղբամ: *Կաշառս ետուն Վանայ փաշային ութ հարիւր կարմիր ոսկի ձեռամբ Աղթամարայ աղին (Դիւան ժ, 54):*

ԿԱՐՄՈՃ գ. Կամուրջ: *Վէնէտիկ քաղաք ժԲ մեծ պարոնի ձեռն այ... Զմ կարմոճ կայ մէջն (Հայ-Վենետ, 459):*

ԿԱՐՄՐԱՆԱՌՆ, ա. Կարմիրով խառն, կարմիրեանգ: *Այս քարիս... լաւն այն է, որ հարեն՝ կարմրախառն սեւագոյն զարնէ (Դաւրիժ., 454):*

ԿԱՐՄՐԱՏԵՍԱԿ, ա. Կարմիր տեսնով, կարմրագոյն: *ԱԲ կարմրատեսիլ ա. «կարմիր տեսնով»: Ծաղիկ պայծառ ես, գունով կարմրատեսակ, հոտով անուշ ես (ՌԻՄՀԲ II, 218):*

ԿԱՐՈՂԱՆՄԱՆ, ա. Կարող կերպով, ունակ: *Ծնօղանման հոգ տանելով / Կարողանման ձեռն տուելով / Հայրանման գուլ շարժելով (Առ էջմ., 194):*

ԿԱՐՏԱՅՆԵԼ, պբ. Ռիսուցանել, բոց. կարդալ տալ: *Կարտացնէ մեր մանկունքն (Ն. Մուշ., 497): Քրիստոնէից ժամանակն կայր դասատուն, որ է արտաքոյ դռան. անդ*

տղաք *կարտասցներ* (Ջուար, 1868, 117):

ԿԱՐՕՏԱՏԱՆՋ, ա. Կարօտից տանջուող: Մինն ի գետ Յորդանանու շրնորհեցեր յինքեան, առ ի մխիթարութիւն *կարօտատանջ* սրտի իւրոյ (Պատմ. Երուս., 1931, 274):

ԿԱՅՔԱՐ, գ. Կայծօր: Ոչ ունի լոյս, ոչ *կացքար*, ոչ *աբերթ* և ոչ ծծումբ, զի արասցէ լոյս հնարից (Ե. Մուշ., 245):

ԿԱԻԱՏԵՂ, գ. Կաի տեղ՝ կաահանֆ: Եղեւ Աստուծով առնուլ եւ *կաւատեղ*՝ վասն ջրոյն ոռոգման (Յիշ. Ուլն., 287):

ԿԱՓԻՏԱՆ (գերմ. Kapitän, ռուս. капитан), գ. Կապիտան, սպայ, նաև՝ նաւապետ, տէս նաև ԽԱՔԻՏԱՆ: Այս խօսքի համար շահն մէկ *կափիտան* էր դրել հետն (Եզով, 258):

ԿԵՂՈՒՏԵՂ, գ. Տուն ու տեղ, բոց. գիւղ ու տեղ: *Կեղուտեղ* կոտորեցինք, Բ փաշան ևս սպանեցինք (Եզով, 419):

ԿԵՆԱԿԻՐ, ա. Կեանքը կրող (հոգի): *Կենակիր* - նախապետական իմն զօրութիւն հոգւոյն, որ յաջողակօրէն յարգարէ զբնաւ նորին ներգործութիւնս, և իբր յինքեան կրէ զկեանս, լատ. սփիրիթուս (Վ. Յուն., 42):

ԿԵՆԱՄԱՇ, ա. Կեանքը մաշող: *Կենամաշ* աշխատութեամբ ի բազում ժամանակաց հետեւեալ արարի զերկնային և զերկրային բոլորովազունդս (Տէֆթ., 380):

ԿԵՆԴԱՆԱՏԵՍԻԼ, ա. Կենդանու տեւք ունեցող: ՀԲԲ *կենդանատեսակ* նոյն նշ: Ուր է դամիկէն աստուածային... Մի՛թէ առ *կենդանատեսիլ* չորեքկերպեան իմանալիսն համբարձաւ (Ներք. Սրապ., 23):

ԿԵՍԱՌՈՍ, գ. Կեսար՝ կայսր: Սընեալն էր ի Կեսարիայ առ կիկիանոս *կեսառոս* Դիոկղետիանոսի (ՄԺ II, 316):

ԿԵՐ,

ԿԵՐՈՒԱՄ (Ք), գ. Տերմին, որ ցոյց է տալիս աշխարհիկ կամ հոգևոր առաջնորդի իշխանութեան եւ կարողութեան սահմանները: ՄՀԲ *կերուած* «ուսիշ, կերիշ, մաշիշ» (համանուն): Այս է թէ՛մ եւ վիճակ Արզրում նստող փաշային *կերուածքն* (Յ. Կարն., 24): Ի հրահսոյ կողմն մինչ ի Տրապիզոն եւ Ախալցխոյ փաշային *կերուածն* (գրչ. *կերաց*) է (Յ. Կարն., 25): Եւ իշխող է սա մինչեւ ի Բալու Համթայ փաշային *կերն* (Յ. Կարն., 25):

ԿԵՐԱԿԻՐ, գ. Կերակուր կրող՝ մատուցող: *Կերակիր* - որ առբերէ զխորտիկս ի սեղան: Առ իշխանս է՛ արժանապատիւ իմն *կերակրութիւն*, զոր լաթինացիք տափիֆէն վերակոչեն (Վ. Յուն., 43):

ԿԵՐԱՐԿ, գ. Ուտելիք, մատուցող կերակուր: *Կերարկ* - ամենայն ինչ, որ տրի վասն ուտելոյ և ըմպելոյ, որպէս և ոռհիկ անուանի ամենայն ինչ, որ առ ի ուտել ի զգենուլ և յայլ պէտս առատրին (Վ. Յուն., 43):

ԿԵՐԿՐԵԼ, նբ. Կերակրել, փխբ. պատսպարել: Պահեց զԿարապետ

աշակերտն ի քովն ի Սուրբ Նշան, կերկրեց ու մխիթարեց (Միմ. Լեհ., 189):

ԿՋԱԿԱՏԵՍ, ա. Կզակը տեսնող, փխբ. աղբատ, ծերունի: *Ես՝ կզակատես խեղճուկ պանդոյր, Աբրահամ իբր սպասաւոր Պալաթեցի (Աղան. Միաբանք, 8):*

ԿԷՍԱԻՐԵԱՅ, գ. ա. Մատաղահասակ, վաղաժամ (մահացած): ՄՀԲ կիսօրեայ «կեանքի օրերը նոր կէս եղած, վաղամեռիկ», հմմտ. **ԿԱՐՃԱԻՐ**: Այս է հանգիստ Շապանին, որ կեսաւրեայ փոխեցաւ ի Քրիստոս (ԴՉՎ II, 120): Այս է հանգիստ Մլքայպէկին, որ կեսաւրեայ փոխեցաւ ի Քրիստոս (ԴՉՎ IV, 140)

ԿԷՍՈՒՍՈՒՄՆ, ա. Կիսատ ուամամբ, փխբ. մատաղահասակ, հմմտ. **ԿԷՍԱԻՐԵԱՅ**: Այս արկ տապանի եւ հանգիստ Ասլանայ, որ կէսուսումն գոլով բանն կենաց փոխեցաւ առ արարիչն (ԴՉՎ II, 127):

ԿԷՏ ԿՈՉՄԱՆ, հոգ. Կանչման՝ դատաստանի պահը, ցմահ: Հաստատուն պահեսցէ մինչև ի կէտ կոշման մերում, յաներկբայ ստօք և առանց ամօթու կատարել յանգ ծառայութեան մերում (Դիւան Ս. Յակոբայ, 1941, 201):

ԿԸԿՂԱԿԱՆ, ա. Տափուկ, հայ. կակուղ բառից: Մերկացնեն անդ զվարդապետն ի ներքոյ ջրոյն կրկրական (Քէօմ., 17):

ԿԸԶԳԱ, գ. Կրծկալ: Թէ հայնակ ու թէ մաճըրնակ եւ ոչ կըճգալնու վերայ մէկ միայն ոսգու կամ արծրթէ

շինօրն եւ սըրգըլապէն դուս (Գովր., 45):

ԿԸՐՏՍԵՐԱՄԵԱՆ, ա. Կրտսեր տարիքով, մանկահասակ: Յիշել հայցեմ զմեզ անխափան / Եւ բարեպաշտ մայրն իմ Համայն / ԶՊօռղոս եղբայրս կըրտսերամեան (Պատմ. Խոթ., 82):

ԿԹՈՅՆԱԼ (հայ. կթոց «տկար» բառից), ա. Թոպացած, ուժասպառուած: ՀԲԲ ունի կթոցեալ «գողդոջուն, տկար»: Մեր իշխանքն եւ մեծամեծքն թուլասիրտ են դարձել եւ ձեռքն լքեալ եւ ծունկքն կթոցեալք, մանաւանդ յուտել եւ ի ըմպել եւ արբենալ (Կամենից, 37):

ԿԻՆԵԼ, չբ. Գնալ (բրբ.): Առջի քաղաքն Վան, էնկից կինեցի Հիզու քաղաքն... էնկից կինեցի Եանուայայ (Ճենովա^o) (Հայ-Վենետ, 459):

ԿԻՇԵՌԵԼ, նբ. Կշուել (բրբ.): ՄՀԲ ունի կիշուել նոյն նշ.: Դրսէն կիշուեն զխաղողն և զէմպելով աստի տան ներս (Զուար, 1867, 208):

ԿԻՇՏԱՆԱԼ, չբ. Կշտանալ: Քանի ջուր խմէ, չի կիշտանա, բերանն ցամաք, լեզու դեղին... գոզն դեղին լինի (Բունիաթ, 96): Մի՛ նստիր ի մարդու քով / Որ կիշտանաս քիչ մի հոգով (ՈւՄՀԲ I, 181):

ԿԻՍԱՄԵՌԻԿ, ա. Կիսամահ: ՀԲԲ ունի կիսամեռ նոյն նշ.: Եւ իջուածոյ լուծման գիպեալ ըստ մարմնոյ / Յամս բազում կիսամեռիկ խեղճ գոլով (Թորգ. Տապան., 173):

ԿԻՍԱՌ, ա. Կիսատ, կէս-արարած (բոխղ.՝ կայսր-կիսատ): Եթէ մարթասցի, առցուք բարեխօս առ կայսր կամ առ պիղծ կիսառ իւր

(Դիւ. Ս. Յակ., 1931, 146): *Ձի եթէ պիղծն այն կիսառ սատակիր, յաստուստ ևս դիրին էր զամբաստանորէն առ կայսր բողոքել (Դիւ. Ս. Յակ., 1931, 146):*

ԿԻՍՈՒ ԿՏՐԵԼ, հռդ. Պարաֆի կէտը գեղչել: *Մարդ ընգաւ մէջ, որ բէրին, կիսու կտրեցին. գիր տվին, թէ չուրի ժև ամիս կէսու կտրածն տանք (Ձ. Ագուլ., 72): Դարցեալ այս կիսու կտրածս այլ տվին ոչ (Ձ. Ագուլ., 73):*

ԿԻՐԱԿԻԼՈՒՍ,

ԿԻՐԱԿԼՈՒՍ, մկ. Կիրակի վաղ առաւօտեան, լոյս կիրակի, հմմտ. ԵՐԿՈՒՇԱՌԹԻԼՈՒՍ, ՀԻՆԳՇԱՌԹԻԼՈՒՍ: *Թվին ՌԿե... գիշեր կիրակլուս, ազգն յուուս կոխեց Կաֆան և աւիրեց բազում տեղի, քաղաքս այս կրկին նորոգեացի (ՄԺ I, 208): Յուլիսի Ե աւր կիրակիլուս, ԽարաՍու քաղաքին Աստուած բարկացաւ, վասն մեղաց մերոց (ՄԺ I, 219):*

ԿԻԻՐՃԻ, գ. Վրացի, տն՛ս ԿՈՒՌՃԻ: *Յաւուրս կիւրճի Մէհմէտ փաշային, որ վաթսուն օր տեւաց, միտրապօլիան Քրոս կղզւոյ... էր կարի անհնազանդ պատրիարգին իւրեանց (Դիւան ժ, 85):*

ԿՂՊԱԿԱԳՈՐԾ, գ. Կողպէ, երկաթեայ իրեր պատրաստող, դարբին: *Մեսրոպ վարդապետն էր արհեստիւ դարբին, այսինքն կղպակազործ չիլինկիր (Գալ. Կենս., 242):*

ԿՂՏԱ, չք. Գղտալ, գկոտալով կերակուրը վեր գալ, գկոտալ: *Թէ իսհալն գէտ աղեց սըկրթուքի պէս*

գա, շատ գէր կղտա (Բունիաթ, 91):

ԿՄԱՆԻՔ, գ. Ճիչ, վայնասուն: ԲՀ ունի կմախել «կարթահարել կամ ջլատել»: *Կմախք - ճիչք, աւաղ, սրթաթաւումն*, վկանդ, անկաղէտ, վարանք (ՄՄ 2281, էջ 135բ):*

ԿՆԿՎՎՈՐ, ա. Վեղարատը, փխբ. հոգևորական: ԱԲ ունի կնկղաւոր նոյն նշ.: *Առնուին մարդագլուխ, այլ ևս կանանց՝ չորս երեսօք ոսկի, իրիցնուն երկու, հաբեղայից, Եպիսկոպոսաց, վարդապետաց ևս կնկղվորաց ևս ոչ փող մի (Սիմ. Լեհ., 254):*

ԿՆՃՈՒՑՈՒԹԻՒՆ, գ. Կնճիո՛ չուծուած խնդիր: ՀԲԲ կնճոտութիւն «կնճոտ լինելը»: *Առանց կնճոտութեան իրիք կարող լինել ճանաչելոյ գտնատեսական վիճակ եկեղեցւոյն (ՈՒղուր., 286):*

ԿՆՔԱՀԱՐՈՒԹԻՒՆ, գ. Կնքահայր լինելը, կնքահօր պաշտօն: *Սուրբ աւագանն ու կնքահարութիւն ի մէջ դրիր ու տէր կոչեցար (ՈՒՄՀԲ, 68):*

ԿՇՏՈՒԹԻՒՆ, գ. Կուշտ լինելը, յագեցածութիւն: *Դուք ձեր հանգըստութիւն... կշտութեամբ մեզ քաղցելոցս մի՛ մանրագոյնս բրդիցէք (Դիւ. Ս. Յակ., 1940, 318):*

ԿՈՒՌՈՒՂԻԿՈՍ, գ. Կաթողիկոս: *Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կոթողիկոս ամենայն Հայոց (Կալվաճ., 159):*

ԿՈՒՆԵԼ, նք. Արշաւել, գրաւել: *Թվին ՌԿե... գիշեր կիրակլուս, ազգն յուուս կոխեց Կաֆան և աւիրեց բազում տեղի, քաղաքս այս կրկին նո-*

րողգեսցի (ՄԺ I, 208): Շահինքէրայ սուլթանն գիշերով կոխեց եւ զինքն փախուց (ՄԺ I, 213): Պօղտան կոխեց անցաւ գնաց եւ նոքայ միամտեցան, թէ մեք ասի չեմք, մեք Օսմանլի ծառայ եմք (ՄԺ I, 225): Յունվարի ժէ-ուան կոխել են գեղերանք, ողջ զաֆթել են թէ՛ ձի... թէ՛ շալթուկ (եզով, 415):

ԿՈՒՍՎԵԼ, կր. Պարտոպեան մատնուել, տե՛ս նաև ԿՈՒՍԵԼ: Ի Թարեզ պատերազմեցան եւ կոխվեցաւ Ջըղալօղլին եւ փախեաւ (Դարբիժ., 478):

ԿՈԿՈՐԴԱՊԱՍՐԻՔ, ա. Կոկորդը լիացնող, փխբ. շատակեր, ցոփ: Այն ինչ ախորժականքն ի կերլեայց կոկորդապատրիք են եւ թողաբար ուշարարք հեշտութեան (Յ. Կոլոտ, 232):

ԿՈՂԱՅԳԻՑ,

ԿՈՂԱՅԿԻՆՑ, գ. Կողակից, ամուսին: Շինեցի եկեղեցիս հայրն իմ Ամիրխան եւ կողայգիցն իմ Փերին (ԴշՎ V, 157): Յիշատակ է... իւր կողայկինց Սառանն, իւր որդիքն՝ Մէլիքն, Հօհանէսն (Հնատիպ, 60):

ԿՈՂԲՅԻ ԱՂ, գ. Հայաստանի Կողբ գիւղից ստացուող աղը, փարաղ: ՄՇԲ կողբացի նոյն նշ: Կողբցի աղ, որ է Կողբայ աղ, որ է քարաղ, որ է զագմայտուղի (ՄՄ 6275, 202բ):

ԿՈՂՄԵԼ, նբ. Բաժանել: ՀԲԲ ունի կողմել «կողմնել», վերջինս էլ «կողբի ընկնել, ընկողմանել, պառկել»: Կողմել - բաժանել, մեկնել, քեցել, պողել (ՄՄ 2281, էջ 135ա):

ԿՈՂՄՆԷ, մկ. Կողմից: Ձէ հնարք մին կողմնէ օգնութիւն անել դոցա (եզով, 163):

ԿՈՂՈՎԱԿ, գ. Փոքր կողով: եցոյց մեզ օլուսինի եւ լուլանի իբր զկողովակս արճճէ զուզած (Սիմ. Լեհ., 151):

ԿՈՂՔ, գ. Կազմ (գրքի): Յիշատակ է սուրբ Աւետարանիս արձաթեայ կողքն Վանեցի մտ. Մարգարին (Աղան. Միաբանք, 407):

ԿՈՄԵՆՏԱՏ, **ԿՈՅՄԱՆԿԱՆԹ** (գերմ. Kommandant, ռուս. КОМАНДАНТ), գ. Կոմենդանտ՝ պարեաւ, նաև՝ նաապետ: Այս գրիս ասլն թողեցինք, սարեցին կոմենտատին մօտ Ավան ուզպաշին մհրովն (եզով, 442): Էլ էս գոլող անուն վերոյտեղեքին կոյմանդանթէրաց վերայ, որ ով ոք ուր ֆամիլովն գնայ էն ը-ռուստէվար ուքազն, տանեն ետուրանէնցն (եզով, 396):

ԿՈՅՇՏ (բբ. կոշտ) մկ. Մօտ, կողբը: Մէկ անիծածն իզարկ սուլթանին կոշտն թըւաբով, արունն ի գոգըն լըցվան, ի հօն հոգին առ Աստուած աւանդեց (ՄԺ I, 220):

ԿՈԶՆԱԿԻԿ, գ. Փոքրիկ կոչնակ: Դաշտիկ ծաղկալի, որոյ սկիզբն է նախագգուշացումն խոստովանահարց եւ կոչնակիկն զարթուցողական (Դալ. Կենս., 291):

ԿՈԶՈՂՔ, գ. Կանչող՝ հրափրող, մուսնտիկ: Իբրեւ եկին կողողքն, ասաց [ցնոսա] (Ստ. Ռօշքայ, 107):

ԿՈՌՓՈՒԿԱՅ (լատ. corporalis, իտալ. corporale), գ. Պատարագի ժամանակ օգտագործուող ներմակ կտաւ: Աստուած արհնէ ես-

ղուպի որդի մահճասի Թեղանն և որդիքն. մէկ ջոխտ լաւ արծաթէ քշոց, մէկ էլ զառ կոռփուռայ ետուն Սբ. Յակոբայ (Ակոռ., 203):

ԿՈՏՈՒՐ ԸՆԿՆԵԼ, հռդ. Կոտը ընկնել, սնանկանալ: Այս շուխէս գնայ հորմաց երկիրն (Ղրիմ), մեր շուխէն կոտուր կու ընկնի (Չ. Ագուլ., 131):

ԿՈՐԱԳԷՄ, ա. Կոր՝ կոացած դէմքով: Կորագէմ Մարտիրոս արեղայս ոչ սակաւ աշխատութեամբ գրեցի գներքի լուսանցքին անուանս (Աղան. Միաբանք, 262):

ԿՈՐԱԿՆԵԱ, ա. Ընկնուած, կորացած: ԲՉ կորակնել «խորշի կամ կորակոր», ՀԲԲ կորակնել «աչքը ներքն խոնարհեցնել, գետին նայել, փխբ. ամօթահար լինել», ԱԲ կորակնեմ նոյն նշ.: Կորակնեալ - կորացեալ, ընկճեալ, քահեալ, հոլեալ (ՄՄ 2281, 125ա):

ԿՈՐԵԿԱՆԱՌՆ, ա. Կրեկով խառնուած: Եբեր եւ մածուն, եւ կոգի, եւ հաց կորեկախառն (Չաք. Ա, 24):

ԿՈՐԻԻՆԱԿՈՐՈՅՍ, ա. Կորիւնը՝ ձագը կորցրած, հմմտ. ՁԱԳԱԿՈՐՈՒՍ: Առաւել կասկածիլ պարտ է ի յիմարաց կատաղեաց, քան ի յառջից կորիւնակորուսից (Նոր. ծաղ., 100):

ԿՈՐԾԱՆԱՐԱՐ, ա. Կործանարար, կործանաբեր ուսմունք պարունակող: Եւ զյոքունս մոլորեցուցին ի կործանակիրք կրօնս այսակրին եւ խաբուակին Մահմէտի (Պատմ. հոթ., 34):

ԿՈՐՈՎԱՆՈՉ, ա. Կորովի խոհ՝ մտքեր ունեցող: ԱԲ կորովախորհ նոյն նշ.: Ընդէ՛ր այդ քեզ մարթացաւ և ո՛րպէս այդ յոքնիմաստիդ և կորովախորհիդ դէպ եղև (Դիւ. Ս. Յակ., 1932, 278):_ _

ԿՈՒԼՈՒԽ (թուրք. kulluk), գ. Ծառալուծիւն: ՄՉԲ զուլուխ, նոյն նշ.: Թէ կուլուխ ուզոյս ըլի, յետ ու առաջ տվող ըլի (Սանահն., 157):

ԿՈՒՄԱՆԳԵՐ,

ԿՈՒՄԱՆՏՈՐ (ռուս. командир), գ. Հրամանատար, նաւապետ: Մեր կումանդերոց վերայ, որ է անումով Գելյան, Բաքու և Գարբանդ (Եզով, 405): Ամենայն տեղի կումանդէրի վերայ տեղիցս ազարկած այ (Եզով, 405): Արդ լինի, որ այն կումանտոր Ռէնդն... ոչ ծովու բան գիտէ, ոչ նաւի (Եզով, 259):

ԿՈՒՌՃԻ, գ. 1. Վրացի, տէս նաև Կիւրճի: Սկսաւ պատերազմել հետ կուռճուն (Եզով, 17): Կուռճուն և մեր ազգէն որչափ քրիստոնէայք... կու դարձուցանեն ի մոլութիւնս իւրայնոց (Եզով, 19): Որչափ քրիստոնէայք՝ թէ հոռոմ և թէ սրիեան, թէ կուռճի և կամ հայ (Եզով, 162): 2. Վրաստանցի, նաև վրաստանաբնակ հայ: Եկեալ են... ընդ նոցա կուռճի Տէր Գափրելն (Դիւան Մխիթ., 117):

ԿՈՒՌՃԻՍՏԱՆՅԻ, գ. Վրաստանցի, նաև՝ վրաստանցի հայ, տէս Կիւրճի: Այժմուս հալէպցիք, կուռճիստանցիք, սպահանցիք, թէվրիզցիք խորհուրդ եղեալ... և վճարեալ զպարտան (Չուար, 1868, 372):

ԿՈՒԻ (բրբ. կուռ), գ. Կողմ: Հախնազարանց շօնգուր հողի վերի կուրն մէկ ձէրն գնում այ Սուլուխանանց Լոշտարի հողն (Սանահն., 227):

ԿՈՒՈՒՂԲՕՍ, ա. Կոուարար, կոխնեւում վէներով տարուած: Պատուիրեմ հարկիւ եւ սպառնալեօք, խոսվարկ, կոուազքօս եւ շարանիւթ անձանց ոմանց (Գալ. Կենս., 341):

ԿՏԱԿ, գ. Գրակ (կ>գ): Արզրում եւս ամր դրկեցին... ամենայն քրիստոնէից գլուխն սեաւ կտակ անցուցին (ՄԺ I, 242):

ԿՏՈՒԱՄ, ա. Թեփահան արուած: Ն.Բիւզ. կտուեմ «կեղևեղ, ի կտակ բառէն, որ է կեղև», ՄՀԲ կտուած «արծն, արծնապակի» (համանուն): Առ յունայ ի հատ... գարի կտուած ժ տրամ (Բունիաթ, 70):

ԿՏՐԻՃԻԿ, ա. Կտրիճ (փղջ.): ՄՀԲ կտրճակ նոյն նշ.: Զիւր հօրն անուն ասեն իտտիկ, իտտ անաղէկ կտրիճիկ (ՈՒՄՀԲ, 310):

ԿՐԱԿ ՏԱԼ, հրդ. Այրել, կրակի մատնել: Տեսաք ամենայն ապրանքն թալանած, շատ տուն եւ վանք կրակ տուած երած, դապն դատարկ ժողովուրդն մնացին Աստուծոյ փառք տալով (Նշխարք, 8):

ԿՐԱՆՏՈՒՔԱՅ, տե՛ս ԳՈՒԱՆԴՈՒԳ: Կայր սահմանակից Փափին եւ մերձ կրանտուքայ Ֆլօրէնս, որ է մեծ դուքս (ՄԺ II, 173): Ինքն իւրեան տուքայ է, որպէս որ կրանտուքն Ֆլօրէնցայու (ՄԺ II, 406):

ԿՐԱՒԵԼ, նբ. Գրաւել: Աստուծով կատարելապէս կրախցուր ի հնազանդութիւն (Նգով, 360):

ԿՐԱՅ, տե՛ս ԳՐԱՓ: Կրաֆին եւ մեր էֆէնտի Շաֆիրովին գլուխ կու տամ (Նգով, 319):

ԿՐԿՆԱԿԱՒԱՐ, ա. մկ. Կրկնակի, երկից: Բնաւից քոյոց կրկնակաբար եղէ վերահասու (Գիւան Մըխիթ., 11):

ԿՐԿՆԱՄԵՏԱՐ, ա. Կրկնակի մեծարուած: Իսկապէս վերապատուեալ ձերունի հար հայոց կրկնամեծար արէծաղկութեամբ (Գիւ. Ս. Յակ., 1941, 200):

ԿՐԿՆԱՉՈՒ, ա. Կրկնաթոխ՝ կրկնակի թոխով օժտուած: Առիթ ազատութեան ըստ ողբերգող արթնածայնին սրբոյ ի շաւիղս կրկնաչուս առձեռնելի եւ արդար եւ վաստակախոնջ (Գիւ. Ս. Յակ., 1941, 200):

ԿՐԿՆԱՊԱՏԿԱՒԱՐ, ա. մկ. Կրկնակի շափով, առաւելապէս: Արժէք կալուածոցն հարկ է, զի առաւելագոյն իցեն, քան զմայրագումարն եւ զշահն, եւ այն կրկնապատկաբար յերիս մասունսն (ՈՒՂՈՒՐ., 288):

ԿՐԿՆԱՊԱՏԿԵԱՆ (բնստ.), ա. Կրկնակի, երկաակ: ՄՀԲ ունի կրկնապատ նոյն նշ.: Ի մէջ դրանէս մըտնումք՝ պարիսպ է աստ կրկնապատկեան (Քէօմ., 39):

ԿՐԿՆՈՍՏԵՂՔ, ա. Բազմաճիւղ: Ըգձեզ գովեմք, ո՛վ հոգեսունք... ծառք կրկնոստեղք քաղցրաբանիչք եւ զարդուցիչք բարձրաթրոիչք բազմաձագունք (Յ. Կոլոտ, 94):

ԿՐՄՆԱԼ (խալ. criminale «բեական»), ա. Քրեական: Գրով դատաստան անեն, թէ՛ չիվէ, թէ՛ կրմնալ եւ զայս օտր դատաստան ի վաղըն ոչ ձգեն թէ՛ չիվէ, թէ՛

կրմնալ (Յ. Թուխունջ., 303): Այս օրէն դատաստանն վաղն շեն ձգել, թէ չէրվիշ, թէ կամանել (Յ. Թուխունջ., 308):

ԿՕՃԿԵԼ, նբ. վերջացնել, լրացնել, աւարտին հասցնել: *Խորհուրդ անինք եւ տեսնունք, թէ ինչխտար ըսդակ պի կարէնանք ունենալու,*

որ հօն հասդատ բան կօճկրվի (Գովր., 134):

ԿՕՌՕՆԱՅԻՈՆ (ռուս. коронация), գ. Թագադրութիւն, կայսեր օժով: *Հոս է եփրայտօրին թագն եւ հոս կու լինի կօսօնայցիոն (ՄԺ II, 406):*

-Հ-

ՀԱԲԵՂԱԹԱՂ, գ. Աբեղաների՝ հոգեւորականների թաղամաս, կացարան: *Ի մտանելն ի ներս՝ ֆռանկաց հաբեղաթաղն է (Ջուար, 1868, 118):*

ՀԱԳԱԳ, գ. Թանկարժէք փառերի հղկիչ, ողորկիչ (ծամ. հրատ.): Աբ հագագ «ձայն հանող շունչ» (համանուն): *Այս լոսած արմաստովն զմեծագին արմաստն թրաշ կու անեն հագագներն (Դաւրիժ., 444):*

ՀԱԳԵՍՏ, գ. Հագուստ: *Ի գլուխս մեծաց եւ փոքունց... գօտի զարօվ եւ փաթանի (փաթաթան), հագեատն ամենայն արանց ավլաս եւ ծիրանի (Յ. Կարն., 39):*

ՀԱԳՄԱՆՈՅ (արաբ. hakim «բժիշկ»), գ. Բժշկանոց, հիւանդանոց: *Պարշանի եւ դարպասնի, այլ եւ բազում օթեանք հիւրոց, հիւանդաց, հագմանոց (Սիմ. Լեհ., 68):*

ՀԱԳՄՈՒԹԻՒՆ, գ. Բժշկութիւն: *Ջայն ոչ վասն ագահութեան, այլ վասն հագմութեան, որպէս կատուն վասն գօթութեան (Սիմ. Լեհ., 90):*

ՀԱԳՈՒՆ ԿԱՊՈՒՆ, գ. Հագ ու կապ, տարագ: *Յօռ ազգն գեղեցիկ են, և մեծ թագաւոր են, զօրեղ և մէրտում են, հայասէր են, հագուն կապուն օսմանցու պէս (Տէֆթ., 463):*

ՀԱԶԱՐ ԲԵՐԱՆ, հրդ. Հազար անգամ, բազմիցս: *Վայ եւ եղուկ հազար բերան / Ազգիս Հայոց, որ ի կով կան (ՈՒՄՇԲ, II, 112):*

ՀԱԹԵՐ, գ. Խաթը, տե՛ս նաև ԽԱԹԵՐ ՀԱՄԱՐ: *Եւս առաւել հարկ ի վերայ քո դնեմ, վասն Սուրբ Աթոռիս հաթերն և մեր ծերութեանն (Դիւան ն. Ջուլ., 61):*

ՀԱԽԷՆ ԳԱԼ, հրդ. Հախից գալ՝ պատժել, հարցերը լուծել: *Ջգողն քո ցոյց տո՛ր մեզ, որ մենք հախէն գամք (Յ. Կարն., 56):*

ՀԱԽԻՍԱՅ (արաբ. պարսկ. haq և hays «բաժին»), գ. Հասանելիք բաժին ընդհանուրից: *Ղազարի Հովիկի հողն... և այլ հախիսայ որ ունի ի վերայ մեր, ներսն հասպէցինք (Սանահն., 148):*

ՀԱԽՆ ԱՌՆԵԼ, հրդ. Հաշիւը ստանալ: *Իմ յօժար սրտիւ ծախեցի...*

Հախնազարանց շօնգուր հողի վերի կուռն, հախն առանք (Յ. Ղր., 162):

ՀԱԿԱՃԱՌՕՂ, գ. Հոետոր, ընդդիմախօս: Զուղայեցի Սիմոն վարդապետն... քաջաբան հակաճառօղ [էր] ընդդէմ ամենից ազգաց (Ժամ. Պող., 281):

ՀԱԿԱՌԱԿԱԳԱՐՁ, գ. Հակառակութիւն, վրդովմունք: Հակառակադարձ - խազմ, վրդով, դերձիկք, փարագմունք, կղամ (ՄՄ 2281, 124ա):

ՀԱԿԵՅՈՒՅԱՆԵԼ, նբ. Հակել՝ թե՛ել, հակուած լինել: Սէրն բնական ընդ անձնիշխանութեամբ մարդկան ոչ անկանի, զի ստիպէ և հակեցուցանէ բնականաբար զյօժարութիւն իւրաքանչիւրոյ ուրուք առ ի սիրել զնմանին իւր (Նոր. ծաղ., 13):

ՀԱՄԱԳԵՂԱԿԻՅ, գ. Համագիւղացի, համերկրացի: Յովհաննէս ճգնագգեաց վարդապետ համագեղակից իմ (Յիշ. Ուլն., 287):

ՀԱՄԱՐՆԾԱՅԵԼ, նբ. Ընծայել, ամենին բաշխել: Ողշոյն եւ սէր համարնծայեմ ողջ կելոյն ի Տէր (Յ. Կոլոտ, 179):

ՀԱՄԱԹՈՒԵԼԻ, ա. Զուգակից, համահաւասար: ԱՅ համաթիւ «զուգաթիւ», ՀԲԲ համաթուել «ուրիշների հետ միասին թուել»: Նա [էր] ի մէջ նախամեծար հետորացն համաթուելի (Ստ. Ռօշքայ, 107):

ՀԱՄԱԿԱԼ, ա. Հոյակապ: Համակալ - հոյակապ, զառբերան, բազմաբեր, ծոհ, լիապատառ (ՄՄ 2281, 135ա):

ՀԱՄԱԿԱՏԱՐԱԾ, ա. Համատարած, ընդհանուր: Եսայէ, որ եմ ի երկրէն Պարտայու, ի գեեողէն, որ և կոչի Գուլտան համակատարած տանս Աղուանից (Եզով, 340):

ՀԱՄԱԿԱՐԳԱԳԼՈՒԽ, ա. Համակարգը՝ վանքը կամ միաբանութիւնը գլխատրոզ, վանահայր: Ընդ այլ համակարգազուխ բաբունեացն (Յ. Կոլոտ, 205):

ՀԱՄԱՀԱՒԱՆԱԿԱՆ, ա. Բոլորի համանութեանն արժանացած: Ոհնէր առ ինքն զհամահաւանական եւ զվկայական թուղթն (Յ. Կոլոտ, 121):

ՀԱՄԱՀԵՏԵՒՈՒԹԻՒՆ, գ. Հետեղութիւն, պատեառաբանուածութիւն: Կինելութիւն միոյ ոչ է ապականութիւն միւտոյն, եթէ ո՛չ համահետեւութեամբ (ՄՄ 1756, 70բ):

ՀԱՄԱՅԱՐ, ա. Միակից, կամակից, միանման: Համայար և սեռօրէն կաշկանդութեամբ ի տարուստ իբր ի մօտոյ բացատմէջ (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):

ՀԱՄԱՌՕՏԱԽՕՍ, ա. Համաոտ խօսող, համաոտագիր: Թէպէտ առաջին թարգմանեալն Ստեփաննոսի Սրենցուոյն գոյր ի մէջ մեր, այն համաոտախօս եւ դժուարահասկանալի էր (Դարբիժ., 323):

ՀԱՄԱՌՕՏԱՐԱՆ, գ. ա. Համաոտութիւն, համաոտած (գիրք): Աստուածաշունչ գրոց զհամաոտարան այլաբանական մեկնութիւն (Յ. Կոլոտ, 250):

ՀԱՄԱՎԱՐԿԵԼ, նբ. Ձևափոխել, վերածնել: Բարեմիտն ես, յամենայնի

յորդ... զթերին լիագոյն համավարկէր (Յ. Կողոտ, 314):

ՀԱՄԱՐՁԱԿԱՔԱՆ, ա. Համարձակ խօսող: Խօսիւք ճարտասան եւ ի հրապարակս համարձակաբան իշխանաց (Ագուլ. կոնդ., 85):

ՀԱՄԱՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Թուաբանութիւն: ԱՖ համարողութիւն նոյն նշ.: Յաղագս շորս արուեստին, որ են իմաստութիւն զգալական ի աշխարհս. նախ՝ աստղաբաշխութիւն, Բ. երկրաշափութիւն, Գ. համարողականութիւն, Դ. երաժշտականութիւն (Տէֆթ., 376):

ՀԱՄԱՐ ՏԱ, հրդ. Հաշի տալ, պարտքն ու պահանջը քննել: Նոքա տքնին վասն հոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց են ընդ ձեր առաջի Քրիստոսի (Կալվաձագր., 167): Գրգռեն զԱստուած ընդ մեզ բարկանալոյ / եթէ ներես, նայ դու ունիս համար տալոյ (ՌԻՄՉԲ II, 648):

ՀԱՄԲԱՐ ԱՆՆԵԼ, հրդ. Ընթերցել, աչֆի անցկացնել: Ե տարի կարգացի Ը կանոն (կանոն) սաղմոսն, այլ բազում գրանք համբար արի (Նըշխարք, 5):

ՀԱՄԲԱՐՆԱԼ, չբ. Համբառնալ: Որք ընդդիմացին սոցա, երկինս համբարնան (Ստ. Ռօշքայ, 34):

ՀԱՄԲԱՒՈՒՆԱԿ, ա. Համբաւատր, համբաւ ունեցող: Պարսից դեսբան Յիեահիբեկին և պերճապատիւ և համբաւունակ վաճառական պարոն Մօվսէսին (Ն. Մուշ., 30):

ՀԱՄԵՍՏԱՔԱՆՈՒԹԻՒՆ, գ. Համեստութիւն, խոնարհութիւն: Պար-

կեշտութեան մասունք են՝ բարեկարգութիւն, զարդ, համեստաբանութիւն (ՄՄ 1756, 151բ):

ՀԱՄԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԻՒՆ, գ. Ընկերակցութիւն, համագործակցութիւն: Հաճեսցի մխիթարել զմանկունհին, զորս համընկերակցութեամբ տիկին մատամալին Պակալուլթ... ետ բերել (Գիւան Մխիթ., 65):

ՀԱՄՇԱՀՐԻՆ, գ. Համաբաղաբացի: Համշահրին - ի մի քաղաքէ (ՄՄ 1528, 2ա):

ՀԱՄՏԵՍԱԿ, գ. Տակառապետ - համտեսակ կամ գաւաթ բռնող (ՄՄ 1127, 154բ):

ՀԱՄՐԱԸՁՈՒ, գ. Համր, փխբ. անկիրք: Անվարժքն եւ համրալեզուքն զիարդ կարեն վարժապետաց եւ ճարտարախօսից բանս ուսուցանել (Թորոս աղբար, 284):

ՀԱՄՓՈՆ, ա. Սեղանակից, խնջոյֆի մասնակից: Համփոնն - մի սեղան (ՄՄ 1528, 2ա):

ՀԱՅԱՅԹԱՂ, գ. Թաղում հայկական աւանդութեամբ: ՀԲԲ հայաթաղ «հայաբնակ թաղ» (համանուն): Շատ ապրեցաւ, հայութիւն արար, հայաթաղ արարին (Զ. Ագուլ., 89):

ՀԱՅԱՔԱՂԱՔ, գ. Հայերի հիմնած և հայերով բնակեցուած քաղաք. այդպէս էր կոչում, օրինակ Գեղա քաղաքը Տրամսիլվանիայում, տե՛ս նաև ԱՐՄԵՆՈՊՈԼՍԵՑԻ: Իբրև զամս երիս յամեցեալ վասն ընդունելոյ զբրիվիլէկոս ի կայսերէն հաստատելոյ զագատութիւն նորաշէն քաղաքին Շոմուշուլարի (Գեղա), որ այժմ Հայաքաղաք կո-

չի (Ստ. Ռօշբայ, 198): Կարլոս կայսրն... շնորհեաց զբրիվիլէկոս և զիշխանութիւն, որ էր Շօմուշույ-վար, փոխեալ կոչեաց Հայաքաղաք Armenopolis (Ստ. Ռօշբայ, 200):

ՀԱՅԵՑԱՐԱՆ, գ. Բեւ, ներկայացում: Հայեցարան - տեղի, ուր խաղք և պէսպէս հրճուանք հասարակականք հրապարակին. մերթ ասի և ինքեան հայեցմանն առ յայսպիսիս, լատ. սիէքթաճուլում (Վ. Յուն., 46):

ՀԱՅԿԱՍԵՌ, գ. Հայազգի, հայ: Հասցէ գիր սիրոյ և նամակ գգուական առ ամենայն հայկասեռ ազգո՞վասն բարեբարոյ և քիստոսակիրթ արեղայիդ (Սսկ. նամ., 1967, 134):

ՀԱՅԿՈՒՆԿ, գ. (բար.) Իբրև դեղ և օճանէլիֆ օգտագործուող խեժ, կնդրուկ, հայխումկ: Հայկունկ, որ է քունդուր, որ է կնդրուկ (ՄՄ 6275, 204ա):

ՀԱՅՀԱՅԵԼ, չբ. Հայհոյել: Այլ եւ հայհայեն զհաւատացեալս «նասրանի...» ասելով (Սիմ. Լեհ., 270):

ՀԱՅՈՒԹԻՒՆ ԱՌՆԵԼ, հրդ. Հայութիւն անէլ՝ ապրել որպէս հայ: Շատ ապրեցաւ, հայութիւն արար, հայայթաղ արարին (Զ. Ագուլ., 89):

ՀԱՅՏՈՒՔ (բուլդ. hayduk), գ. Հայդուկ, ապստամբ: ՄՀՖ հայտուտ «ավազակ, երուզակ»: Ի Կամենիցս Հայտուքներն եկին ի Մաճարք, որք էին թագաւորին Ստեփանոսին (Կամենից, 50):

ՀԱՅՐԱՇԱՐԺԵԼԱԿ, ա. Հօրից շարժուած՝ առաջ եկած: Հայրաշարժելակ - ի հօրէ շարժեալ (ՄՄ 1127, 143բ):

ՀԱՅՐԵՆՆԱՄԵՌ, ա. Հայրենիքի համար մահացած: Որոյ վասն եւ որդիքս հայրենամեռք եղաք ի վարատման (Յ. Կոլոտ, Յ. Կոլոտ, 24):

ՀԱՅՐԵՆՆԱՊԱՏՈՒԷՐ, ա. Հայրենի ասանդներն ունեցող: Կաթուղիկոտունքն էջմիածնի իբրեւ զհայրենապատուէր կտակ, աւանդութիւն ունէին ի մէջ իւրեանց (Դաւրիժ., 338):

ՀԱՅՐԻԿՈՒԹԻՒՆ, գ. Հայրութիւն՝ հոգեւոր առաջնորդութիւն: Եղ և ի հայրապետութեան տեառն Յակովբայ և արհիեպիսկոպոսի մերոյ տեառն Նիկողայոսի, զորոյն սրբանեալ հայրիկութեամբ հաստատեաց ընդունել ախտաժեւոր ամենայն ի փարատումն (ԳՆՎ VII, 198):

ՀԱՆԱՊԱՉԱՏԱՆՁ, ա. Մշտապէս տանջող: Հանապազատանջ վիշտն... ընդ ամենայն տեղիս պատմեալ հնչեցաւ (Ագուլ. կոնդ., 101):

ՀԱՆԱՊԱՉԵԱՅ, մկ. Հանապազօրեայ, յարատեւ: Ի լուսապաճոյճ եւ ի գերահոշակ Տալիթայէդ հովանասցի շնորհք, սէր եւ հանապազեայ խնամ անխիզ միացելոյդ (Թորոս աղբար, 401):

ՀԱՆԳՍԱՒԻՔ, գ. Աւարտ, վերջ: Հանգստալիք - վախճան, աւարտ, սահման, դադարումն (ՄՄ 2281, 124բ):

ՀԱՆՃԱՐԱՅԵԼ, ա. Հանճարեղ, շնորհներով լեցուն: ՀՖԲ հանճարայեղջ նոյն նշ.: Ախ, եղբարք, գկնի Փառակեցի Իսահակ շինասէր եւ շինարար արքեպիսկոպոսին եւ հանճարայեղ վարդապետին ո՞վ որ

է նստելոց ի սուրբ աթոռս Թաղէտ-
սի Առաքելոյն (ՄԺԼ, 308):

ՀԱՆՃԱՐԱՇԷՆ, ա. Հաննարեղ կեր-
պով շինուած: Ի ներքոյ արեգա-
կան ոչ գտանիր այնպէս իմաստնա-
կերտ և հանճարաշէն շինուածք և
յօրինուածք, որպէս պատմէ Աստ-
ուածաշունչն (Պատմ. երուս., 1932,
15):

ՀԱՆՃԱՐԱՐՈՒԵՍ, ա. Հաննարեղ
արուեստ ունեցող: Զամս 17 հե-
տեւեալ այս չքնագագիւտ և ճշգ-
րիտ հանճարարուեստ Տօմարիս
(Տէֆթ., 318):

ՀԱՆՐԱՋՆ(Ն)ԻՆ, ա. Ընդհանուրի՝
հանրութեան ֆննութեանն արժա-
նացած: Ընդունակն այսօրիկ ևս ի
հանրագննին տեսութենէ նորին
ընտրի և պատրաստի (Ղուկ. նամ.,
118):

ՀԱՆՐԱԿԱՐՕՏ, ա. Այն, որի կարիքը
հանրութիւնն ունի: Սրբոյ Կարապե-
տին, այսինքն՝ ընդ հանրակարօտ
գահին Տարոնոյ (Յ. Կոլոտ, 220):

ՀԱՆՐԱԿԵՑՈՅՑ, ա. Հանրութեանը՝
մարդկանց կեանք տուող: Հան-
րակեցոյց ողորմութեամբ և պահ-
պանութեամբ... այլ և հոգեւորած
շնորհօք և զօրութեամբք և նոյնա-
մովս արիւնաներկ սրբոյ Գեղար-
դեանն (Ղուկ. նամ., 117):

ՀԱՆՐԱՔԱՐՈՂ, ա. Հանրութեանը՝
ամենիմ ֆարոզ բերող: Հասանիլ
աւարտ տպեցման... ընդ հանրա-
քարոզ գրքիս (Յ. Կոլոտ, 220):

ՀԱՇԻՄ ԵՒ ՄԱՇԻՄ, հրդ. Հայրամաշ
լինել, տանջուել: Արդ ծանուցեալ
հեծեն, յոգւոց հանեն, հաշին ևս

մաշին, զի թերեւս զերծցին յաշ-
խարհէն Պարսից (Դարիժ., 97): Ա-
հա տասն տարի է տանջիմ, հաշիմ
և մաշիմ և հառաջամբ սրտիւ ա-
պաշաւեմ ի ներքոյ խիղճ մտաց հո-
գեկանաց (Դիւ. Ս. Յակ., 1933,
120):

ՀԱՇՈՒԵՄՈՒՏ, գ. Շահոյթ, ստաց-
ուածք (բերքի): Հաշուեմուտ
պտուղ և շահ տարեկան, զոր ժողո-
վեմք ի ստացուածոց մերոց, յան-
դեայց, յանդաստանաց, ի տանց, ի
քաղաքաց, լատ. փուէնթուս (Վ.
Յուն., 46):

ՀԱՉՊՉԵԼ, չր. Հաչել, փխբ. վայրա-
հաչել: Երեք շորս անգամ գիր եկաւ
ի Շամայ Սարգիս իրիցւէն... աւելի
պակաս հաչմէլն (Դիւ. Ս. Յակ.,
1941, 41):

ՀԱՊ ԱՆԵԼ (արաբ. Habb «դեղա-
հաբ»), հրդ. (բժշկ.) Մի ֆանի դե-
ղամիջոցների դեղախառնուրդ
պատրաստել, որ ունէր մանր
կլոր ձեւ: Շահմ-ի հանտալ Ա. Ա
տրամ, հացի աղ կէս տրամ, հապ
արա և տուր ի ժմուն Ա տրամ (Բու-
նիաթ, 75): Զամէն դեղերն այդ
չրովդ շաղվէ և հապ արա և տուր ի
ժմուն Գ տրամ (Բունիաթ, 96):

ՀԱՍԱԿԱԼԵԼ, նր. Հասնել ցանկա-
ցածին: Հասակալեմ - հասանեմ ի-
րին ցանկացելոյ և իւրացուցանեմ
զնա (Վ. Յուն., 46):

ՀԱՍԸ ՀԱՐՃ (թուրք. hasil «ար-
դիւնք, բերք»), հար «խարն»), գ.
Եկամտահարկ: Ե՛ւ ետ այնորիկ
կաֆացուս խարաճն եկաւ, հասըլ
հարճ կասեն, անունն անիծած ու

զինքն մարդոյ գլուխ Գ-Գ ոսկի (ՄԺ I, 221):

ՀԱՍ ՈՒ ՉՀԱՍ, հրդ. եկեղեցական օրէնքներով թոյլատրուող կամ արգելուող ամուսնութիւն ազգականութեան պատճառով: Այլ եւ դատ եւ իրաւունք առնեն եւ դատաստան հաս ու չհաս (Սիմ. Լեհ., 337):

ՀԱՍՏԱՒՈՅՐ, ա. Բուրումնաւտ: Բուրաստան անթառամելիս եւ միշտ հաստաբոյր (Դիւան Մխիթ., 119):

ՀԱՍՏԱԴՈՔ, ա. Հաստահիմն: Հաստադոք - որ ունի զստուար իմն եւ զամրագոյն արմ, եւ կամ որոյ կողմն ներքին հաստագոյն է, քան զկողմն վերին (Վ. Յուն., 47):

ՀԱՍՏԱՎԻՉ, ա. Հաստ վիզ ունեցող, փխբ. անընկալունակ, բուբ: Ոմանք հաստավիզ եւ բարձրապարանոց եղեալ խրոխտացեալ կան ընդդէմ հրամանաց Մեծի Աթոռոյս (Դիւան ն. Ջուղ., 108):

ՀԱՍՏԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. Հաստատուն գիր, հաստատութիւն: Հմմտ. ԱԲ հաստատագրութիւն «հաստատութիւն»: Առ ամենեսեան կարծեմ գոլ կատարելապէս ի նախնեաց վիպագրացն, զոր հաստատագրութեամբ հասուցին մինչ ի մեզ (Պատմ. Խոթ., 34):

ՀԱՍՏԱՏԱԿԱՌՈՅՑ, ա. Ամրակառոյց, պինդ կառուցուած: Հիմնեցաւ հաստատակառոյց ի վերայ հիման առաքելոց (Կամենից, 260):

ՀԱՍՏԱՏԱՀԱՒԱՏ, ա. Հաստատուն հաստաբ ունեցող: Յիշեցէ՛ք, ողոր-

մեցէ՛ք հաստատհաւատ քրիստոնեաք (ՌԻՄՇԲ II, 38):

ՀԱՎԱՐԻ, գ. Յորենի բոված ալիւր: Հավարի, որ է լուացած ցորենին ալուրն եւ բարակ մաղած եւ եփած (ՄՄ 6275, 205ա):

ՀԱՏՈՒԱԶԵՒ, ա. Հատուածանէ, հատուածներով: Մագաղն հատուածեւ ցուցաւ գրեալ ի սկզբանէն կարգս ոսկեղէն գրով (Ստ. Խօշքայ, 62):

ՀԱՐԱԶԱՆ, գ. Խարազան: Հարկանեն ուժգին հարազանաւ ի վերայ մերկ գագաթան նոցա մինչեւ վաջն ճէ (Սիմ. Լեհ., 170):

ՀԱՐԱԶՆԱԶԳԵԱՅ, ա. Խարազնագգեսա: Աւելի էին քան զութսուն ոգի՝ Ի՛Վ վարդապետք եւ այլքն արեղայ եւ հարազնագեաց կրօնաւորք (ՄԺ II, 352):

ՀԱՐԱՆՅ-ՊԱՊԱՆՅ, հրդ. Պապական, նախնիներին պատկանող: Եւ ազգն նետողաց սմա հնազանդեցաւ / Զի էր հարանց-պապանց թաղթն, որ նա նստաւ (ՌԻՄՇԲ II, 128):

ՀԱՐԿԱՄԻՏԻՒ, նբ. Հարկադրել, ստիպել: Հարկամիտիմ - ստիպիմ իբր ի հարկէ առ ի հետեիլ առաջագրեցելոյ իրին (Վ. Յուն., 47):

ՀԱՐԿՈՂ, ա. Հարկադրող, ստիպողական: Հարկող հրամանաւ սրբազան պատրիարգին մեծի Պօլսոյս (Յ. Կոլոտ, 285):

ՀԱՐԿՈՎԻ, ա. Հարկուող, հարկման ենթակայ: Թուրքերի տներն եւ հողերն Աստուածածնի խմհատ էր արարած հարկովի հողերն (Սանահն., 146):

ՀԱՐՄՆՎ, գ. Ժող. ստուգ. «Հայր մեա»-ի: *Օվ հանդիպող գերեզմանի, մին բերան հարմեղ ասի (ԴՉՎ II, 65):*

ՀԱՐՅԱԶՆՆԵԼ, նբ. Հարցաքննել, հարցուվործ անել: *Հարցազննեմ զհարդն եւ զորպէսն քոյոյ բարեպէս կելոյդ (Դիւան Մխիթ., 56):*

ՀԱՐՅՄՈՒՆՔ, գ. Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի կրճատ անուանումն է: *ՄՀԲ հարցմունք «հարցում, հարցնելը»: Ազարիայն Ա ճաշու գիրք, Ա փոքրիկ Հարցմունք վախմ ետ Սբ. Յակոբին (Ակոռ., 212):*

ՀԱՐՅՆԱՏԵՍ, գ. Շարականների հարցը ստուգելու գիրք (ըստ ՀԲԲ-ի): *Ոչ ունէր կարիս քարոզգրքրքի կամ հարցնատեսի, այլ առ ձեռն պատրաստ զինչ եւ պատշաճ պիտոյանայր ժամուն (Դարիժ., 320):*

ՀԱՅԱԾԱԽ,

ՀԱՅԱԾԱՎ, գ. Հացի վաճառանոց՝ խանութ, հացատուն: *Ոչ գտանէին կերակուր ամենեքեան մարդիք եւ անասունք զի փակեալ եղեն ամենայն դրունք եւ ամենայն մրքածաղք, մսածաղք եւ հացածաղք (Մժ I, 212): Վարպետքն հացածախից ի հայոց ազգէս ամենայն (Քէօմ., 37): Կածկըտուն, հեղեղն եկաւ եւ պատեց բոլոր քաղաքն... հացածախներն եւ խասապներն, պաւզաճիք եւ մէխանաճիքն (Մժ I, 219):*

ՀԱՅԳԻՆ, գ. Հացի՝ սնունդի գումար, տուրքի տեսակ Երուսաղէմում ուխտի գնացածների հա-

մար: *Յակոբայ միաբանիցն հացգին տան (Աղաւն. Միաբանք, 467):*

ՀԱՅԵՓՈՒԹԻՒՆ, գ. Հաց եփելը, հացքխութիւն: *Մահտասի Ամբակումս բարեմիտ եւ հաւատարիմ այր էր... ի գործս հացեփութեան օտարաց ծառայելով (Դարիժ., 403):*

ՀԱՒԱՍԱՐԱԿԱԲԱՐ, ա. մկ. Հաւասարապէս: *Համանգամայն - համագոյգ, միանգամայն, հաւասարակաբար (ՄՄ 2019, 163բ):*

ՀԱՒԱՍԱՐՄԱՏ, ա. Հաւատարիմ, հաստատուն: *Քոյդ դաշն ուխտ... առ իս առաւել հաւատարմատ հաստատութեամբ պահեցաւ անշիշանելի (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):*

ՀԱՒԱՏԻՍ, գ. Լուր: *Լաւ վատ եօլալ կ'երթանք... եւս նոր հաւատիսներն շուռութովն ծանուցանես (Պօղ. նամ., 93):*

ՀԱԻԿԹԱԶՓ, ա. Հակիթի շափ, ձուաչափ: *Զմրուխտք, լալ հաւկթաչափ եւ արմատէ զէքիրնի, գաւաթնի, եւ չի գիտէ մարդ զո՞րն գնէ կամ յո՞րն հայի (Սիմ. Լեհ., 18): Կայր աւազ խորանին առջեւ իրեք լալ մեծ հաւկթաչափ (Սիմ. Լեհ., 57):*

ՀԱԻԿՈՐ, գ. Հակուորութիւն, աչի՛ն հիւանդութիւն: *Ն. Բիւզ. ունի հակոյր նոյն նշ.: Ով ոք ի հետն [զմրուխտ] պահէ, աչաց ցաւ շտեսնէ, լոյսն աւելնայ, երկարածամանակ լինի, հակոոր չլինի (գրչ. հակոյր, հակուոր) (Դարիժ., 452):*

ՀԱԻՍ, դ. մկ. Հոս, այստեղ: *Եւ կողակիցի հաս շէր, Բ աւուրն ետոյ եկաւ և իւր կինն ոչ գտաւ (Մժ I, 209):*

ՀԱՓՍ (թուրք. haps, hapıs), գ. Բանտ, բանտարկություն: *ԼԳ հոգի մանզուլ փաշային ծառաներուն հախսէն ելան ցորեկով, բարով մտան նաւըն, ելան գընացին, քաղքին մարդիք ապուշ մնացին (ՄԺ I, 216):*

ՀԱՓՍ ԱՆԵԼ, հրդ. Բանտարկել, բռնագրաւել: *Խուլան հափս արին, ելան գընացին թէ՛ նաւըն կու կոխեմք, խազնան կառնումք (ՄԺ I, 221):*

ՀԱՔՈՒՐ, գ. Հօրախոյր: *Ոչ ով խօսող շինի հետ մեր Սուրբ Վարդանայ եկեղեցուն՝ ո՛չ որդոց և ո՛չ դատերաց, ո՛չ խօբօր որդոց և ո՛չ հաքուր որդոց (Կալված., 132):*

ՀԵԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Խոնարհություն, համեստ արտայայտուելը, փաղցրախօսություն: *Մարդավարութիւն, որ ըստ Պրիսկիանոսի կայանայ ի յերիս. նախ ի քաղաքականութիւնս և ազատականութիւնս, երկրորդ՝ ի բարեբարոյութիւնս, և երրորդ՝ ի հեզաբանութիւնս (Նոր. ծաղ., 190):*

ՀԵԹՄԱՆ (լեհ. hetman, գերմ. Hauptman «պետ»), գ. Կազակների հրամանատար: *Արդ՝ եթէ կամ իցէ քում թագաւորութեանդ վեհագունույ, առաքեսչիք նախ զմեծ իշխանն մեր զհեթման Լիթեւքին զկոչեցեալն Գարուլ Խոտքեիշ (Պատմ. Խոթ., 44): Ի միւս գրանէն մեծ հեթմանն Խոտքեիշ տեսեալ զգալուստ անօրինացն՝ բարկանայ յոյժ (Պատմ. Խոթ., 52):*

ՀԵԼԹԱՆ, գ. Թան: *Հելթան, որ է թան (ՄՄ 6275, 206ա):*

ՀԵԾԵԱԼ ՇԱՐԺՈՒԹԻՒՆ, հրդ. Հեծեալների արշաւանք, զօրաշարժ, պատերազմ, հմմտ.

ՀԷԾԵԼՈՒԹԻՒՆ: ն. Բիւզ. և ՄՇԲ ունեն հեծելշարժութիւն «ասպատակութիւն»: *Աւաղ գիմ հոգիս, հայրք և եղբայրք, թէ քանի՛ շարիք գործեցաւ ի յայս հեծեալ շարժութեանցս (Գիւան ժ, 28):*

ՀԵԾԵԼ ՔԱՇԵԼ, հրդ. Հեծեալներին՝ այրումիւն մարտի հանել, արշաւել: *Մահմուտ աղան հեծել քաշեց եւ վրան գնաց եւ նա հեծելն շարդեց, Մահմուտ աղան ճորով ազատեցաւ (Մանր ժամ. I, 213):*

ՀԵԾՆԱԼ, շք. Հեծնել (ծի): *Ամէնն եզ կու բանեցնեն, ազ եւ բեռն բանան, այլ եւ հեծնան (Միմ. Լեհ., 193): Ոչ թողուն այլ տավար հեծնալ՝ գատ իշոյն (Միմ. Լեհ., 329):*

ՀԵՂԻՆԵԿ, գ. Հեղինակ: *Հոգայ քաղաք աստուածապահ՝ / Հեղինեկիս միոյ զմահ՝ / Հայաստանեաց շիշաւ մեծ շահ՝ (Առ էջմ., 186):*

ՀԵՇՏԱՐԱԿԱՆ, ա. Հանութեամբ ունկնդրող, փաղցրալուր: *Յորդանաստ սիրով եւ հեշտալրական քաղցրութեամբ ընծայեցէք (Կամենից, 258):*

ՀԵՌԱՇՈՒՐՋ, ա. Հեռատու, հեռուներից: *Զհամայն աշխարհաց բերեալն... թէ ականց եւ զումաշից՝ հեռաշուրջ որք վաճառական (Քէօմ., 31):*

ՀԵՌԻԱՍՏԱՆ, մկ. գ. Հեռու, հեռատան: *Իշխանքներս և մելիքներս ի հեռիաստանէ... անկանիմք ի յոտս նազելի և ինքնակալ թագաւորիդ (Եզով, 17):*

ՀԵՏԱՆՆԻՒՐ, ա. Հետամուտ: *Բան երկակի առեալ լինի, այսինքն՝ նեղաբար եւ յայտնապէս, ըստ որում անուն բանի առեալ լինի ի հետախնդիր լինելոյ (ՄՄ 1756, 28բ):*

ՀԵՏԱՄՂԵԱԼ, ա. Հետ մղուած, հակադարձ (ուժով): *Նոյնպէս եւ երանելի գաշղալանն Բոլոցքի... հետամղեալ բարկութեամբ մեծաւ եւ քաջապէս մարտուցեալ դարձուցանէր զձախ թեւ զնդին (Պատմ. հոթ., 53):*

ՀԵՏԵՒԱԿԱԿՈՅՏ, ա. Հետեակ զօրքի կուտակումով: *Ո՞հնէր ընդ իւր արս իբրեւ երկոտասան հազար. նա եւ այլ եւս յոլովից ազատագունդ հեծելոց եւ հետեակակոյտ զօրաց, որք փութաշաւիղ հետեւմամբ դիմեցին ի մայրաքաղաքն Իլով (Պատմ. հոթ., 45):*

ՀԵՏԵՒԱՄԱՐՏ, ա. Հետեակ, հետեւագօր: *Ըստ ժամանակին առ հասարակ դիւցազանց հետեամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք և... պարածածկեալք (ՄԺ I, 269):*

ՀԵՏԵՒՈՂՈՒՀԻ, գ. Քրիստոնէութեան հետեւող կին: *Ճշմարտապէս լինին հետեւողուհիք Յիսուսի եւ Մարիամու (Գիւան Մխիթ., 100):*

ՀԵՏՄՏԵԼ, նբ. Հետապնդել, հետեւել: *Իբրև սկսան ի փախուստ դառնալ զաւրքն նոցա, յայն ժամ զաւրացն մերոց զհետմտեալ՝ զամենեսեան զնոսա սրոյ ճարակ տային (Սանահն., 52): Փախուցեալ զզաւրքն Դագախի և զհետմտեալ կոտորեալ որպէս արտ ռճորէից (Սանահն., 63):*

ՀԵՐԵՏԻԿՈՍԱԳԼՈՒՆ, գ. Հերետիկոսների՝ ուղիղ հաւատքից շեղուածների գլովս՝ գլխատուր: *Կամելով խոյս տալ յերկուց հերետիկոսագլխաց (Յ. Կոլոտ, 255):*

ՀԵՐՁՈՒԿ, գ. Հերձուած՝ աղանդատու (մականուն): *Եւ էր նէմցայու սէրագգէրն տուքա տը Լօրէնըն, որ Հէրձուկ կասէին ալամանակ (ՄԺ II, 406):*

ՀԳՕՐԵՂԱԲԱՐ, ա. Հգօրապէս, գօրեղ կերպով: *Որք եկեալ հգօրեղաբար յաղթեցին Պարսից (ՄԺ II, 325):*

ՀԷԾԷԼՈՒԹԻՒՆ, գ. Պատերազմ, գօրաշարժ, հմմտ. ՀԵԾՆԱԼ ՇԱՐԺՈՒԹԻՒՆ: *Ն.Բիւզ. ունի հեծելութիւն առանց մեկն., ՀԲԲ հեծելութիւն «ձի հեծնելը» (իմաստափոխ.): Հէձէլութեան ատենները կամ Աստուած հերի անէ, մէկ զօր փախ մը ըլար (Գովր., 195):*

ՀԷՏԻ ՇԷՐԻՖ (արաբ. hatti sherif), գ. Սրբազան (նաև՝ սուլթանի) հրամանագիր, տե՛ս նաև ԽԷԹԻ-ՇԷՐԻՖ: *Եւ շինեաց զքակեալ պարիսպն հոսորով եւ եզիր փաշա զԹայեարն Ուրհանցի եւ ետ հէտի շէրիֆ (ՄԺ I, 241):*

ՀԷՐԱՊԵՏ, գ. Հայրապետ: ՄՀԲ հարպետ նոյն նշ.: *Դամբարան վարդապետացն Ներսէսի Բաղիշեցոյ, միւս Ներսէսի հէրապետի... որք եղեալ են ի շիրմի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին (ՄԺ II, 362):*

ՀԷՐԷՆԻԳ, գ. Հայրենիք՝ ժառանգութիւն, ժառանգական կարուածք: ՄՀԲ հէրէնիք նոյն նշ.: Մեր կամաւ մեր հօր հէրէնիգն... գամէնն ծախէցինք (Սանահն., 140):

ՀԷՕՃՃԷԹ, գ. Դաշնաթուղթ, տե՛ս նաև ՀՈՒՃԱԹ: Գոյ մի հէօճճէթ, յորոյ վերայ զնոյն նօմերայն եղաք: Հէօճճէթ վասն Բ եւ Գ նօմերայի մաղազայիցն (Երուս. դիւ.): Հիւճէթ ցոյց տուաք, նայ տիրութիւն արաւ (Զուար, 1867, 131):

ՀԻ՞, դ. Ինչու՞, խի՞ (խակց.): Ո՞րպակ եւ հի՞ բերիցէ եղանակ կայման Տեառնդ (Դիւ. Ս. Յակ., 1930, 384):

ՀԻՄԱԿՈՒ, մկ. Հիմա, այժմեան, ներկայիս: ՄՀԲ հիմակ նոյն նշ.: Բրինձ ապուր... հիմակու ժամանակս ցեղ մի այլ դեղով կստածեն (Բունիաթ, 117):

ՀԻՄՆԱԻԵՐ, ա. Հիմնահատակ աւերուած: Ն. Բիւզ. հիմնաւեր «որոյ հիմունքն աւերեալ են»:
Զազգն Գարաց արտասահման արարեալ... եւ բերեալ էած ի հիմնաւերն ի Սպահան (Դարբիժ., 357):

ՀԻՆԳՇԱԲԹԻՂՈՒՄ, մկ. գ. Հինգշաբթի առաւօտեան, լոյս հինգշաբթի, հմմտ. ԵՐԿՈՒՇԱԲԹԻՂՈՒՄ, ԿԻՐԱԿԻՂՈՒՄ: Նոյնմբերի և լուսնի ժե խաւարեց շորեքշաբթի գիշեր Գ ժամին մինչև ի Ե ժամն, առաւօտն հինգշաբթիլուս որոտաց եւ երեկ անձրև (Մժ I, 209):

ՀԻՆԴՈՒԱՆԱ, գ. (բար.) Հինդուանա, որ է ձմերուկ (ՄՄ 6275, 206ա):

ՀԻՆՉՈՒԿ, շ. Երբ, երբ որ: ՄՀԲ հինչու նոյն նշ.: Դուլինճ մի այլ կա, որ ի բարակ աղիքն լինի, որ շիտակ է,

հինչուկ ի տափոխն կու իջնու (Բունիաթ, 94):

ՀԻ ՈՐ ՄԷԿ, դ. Որևէ մէկը: Օսգով կամ արժըթօվ շուխերն ապրշումէ շգրինֆներըն թէ տղայ կընտոց եւ թէ աղջիկնու եւ կամ հի որ մէկին արգիլված պիլայ (Գովր., 46):

ՀԻՏ, կ. Հետ: Հայն եկաւ եւ ոչ կար[աց առնուլ], ծեծվեցան հիտ թուրքին եւ [ետ դ]արձան (Մժ I, 227):

ՀԻՐԵԼ, նբ. Մղել - հիրել (ՄՄ 1127, 146ա):

ՀԻՒԱՆԳԱՀՈՏ, ա. Գարշահոտ: Մի՛ հիւանդահոտ եղիցի եւ կսկծելի բնակելոցն ի վանատունն (Յիշ. Ուլն., 292):

ՀԻՒԱՆԳԱՊԵՏ, գ. Հիւանդանոցի պետ, բժշկապետ: Պաշտօնատեարք... հինգերորդ՝ հիւանդապետ կամ տեսուչ հիւանդանոցին (ՈՒղուր., 270): Հիւանդապետն կամ տեսուչն հիւանդանոցին պարտի խնամ տանել այնմ ամենայնի (ՈՒղուր., 271):

ՀԻԻՃՃԷԹ, տե՛ս ՀԷՕՃՃԷԹ:

ՀԻՔԵԼ, նբ. Պարսաւել, ամբաստանել: Հիքել - պարսաւել, բամբասել, լուտալ, բարբօղել (ՄՄ 2281, 135ա):

ՀՄԱՐ, կ. Համար: Ամենայն ջաթտան հաւադալէ հմար աղարկեց (Եգով, 405):

ՀՄՏԱՖՈՒՆ, ա. Հմուտ, խելացի: Գիտենալ այլ տեսողք. բայց շատ գրամուտ եւ հմտաբուն պիտի լինի, որ զխառնիխուռն իմանայ (Տէֆթ., 318):

ՀՆԱԶԱՆԿԱՌՈՐ, ա. Հնազանդ ու լսող: *Խորհրդով իմաստուն ծերոց, ուղղաշաւորն թաց երիտասարդաց, հպատակաց հօր եւ հնազանդալուր մօր պատանեկաց (Ագոլ. կոնդ., 85):*

ՀՆԱՐԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. Ճարտարութիւն, վարպետութիւն: *Յորում յօրինեալ զանազան եւ պէս պէս նկարս եւ տեսակս շուշանաց եւ կենդանակերպից... պէս պէս հնարակերպութեամբ (Դաւրիժ., 87):*

ՀՆԱՐԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ, գ. Հնարամտութիւն, գաղտնի հնար: *Ոմանք ասացին պատճառ զձածուկ ներքնագործ հնարակերտութիւն Մելքիսէթ կաթողիկոսին (Դաւրիժ., 193):*

ՀՆՈՂԱԿ, գ. Սարդիոստայն - հնդակ կամ սարփուստայ (ՄՄ 1127, 151բ):

ՀՈԳԱՐԿՈՒ, ա. Հոգացող, խնամատար, հոգածու: *Ոչ է ազգս մեր հոգարկու իբրեւ զազգս զայլս առ ի գրել զյիշատակարան ժամանակաց (Յիշ. Ուլն., 285):*

ՀՈԳԵԱԳՈՅՆ, ա. Սիրելի, հոգեակ: *Հոգեագոյն քաջ մըշակ / Ի Քրիստոս սէ առեալ պըսակ (Կ. Ամատ., 54):*

ՀՈԳԵՐԱԺՆԱԿԱՆ, ա. գ. Եկեղեցուն տրուող հոգեւոր տուրք՝ բաժին: *Տուեալ էք նմա... զհոգեկան տուրան ձեր՝ զնուիրակականն, զհոգեբաժնականն, զգանձանականն եւ զայլս այսպիսիս (Ագոլ. կոնդ., 108):*

ՀՈԳԵՊԱՀՈՒԹԻՒՆ, գ. Զուտ կեանք պահպանելու համար սնուելը, բշակերութիւն: *ՄՃԲ եւ ՀԲԲ ունեն հոգեպահ, հոգեպահիկ նոյն նշ.: Երկու իրեք օրն մի անգամ ճաշա-*

կելով եւ զայն սակաւ պաքսիմատս վասն հոգէպահութեան (Սիմ. Լեհ., 278):

ՀՈԳԵՎՆԱՍ, ա. Հոգին վնասող, վնասարար: *Բառնամ ի ձէնջ զայն ամենայն խոտվութիւնս եւ զհոգեվնաս եւ զմարմնատոյժ տարածայնութիւնսն (Գալ. Կենս., 339):*

ՀՈԳԵՏԱԾ, ա. Հոգին խնամող, սնուցող: *Հանրակեցոյց ողորմութեամբ եւ պահպանութեամբ... այլ եւ հոգեւած շնորհօք եւ զօրութեամբք եւ նոյնամոլիս արիւնաներկ սրբոյ Գեղարդեանն (Ղուկ. նամ., 117):*

ՀՈԳԵՏԱՐՓ, ա. Հոգեւոր՝ ոչ մարմնական տարփանք՝ սէր ունեցող, հոգեպարար: *Յորմէ ճշմարիտ սիրով, հոգետարփ կարօտիւ եւ փրկչաւանդ ողջունիւ սրբով, հանդերձ յարամնացական օրհնութեամբ եւ նախախնամութեամբ (Ղուկ. նամ., 117):*

ՀՈԳԵՏԻՊ, ա. Հոգու տիպը՝ պատկերը կրող: *Հոգետիպ եւ աստուածագործ իւղն օծութեան (Ագոլ. կոնդ., 107):*

ՀՈԳԵՒՈՐՏԷՐ, գ. Հոգեւոր առաջնորդ: *Հոգեւորտէրն մէկ օրհնութեան նամակ էր առաքել ի վերայ մեր (Գիւ. Ս. Յակ., 1940, 203): Խնդրեմք... հոգեւորտիրոջ աջն համբուրես եւ բարեխօս լինիս (Գիւ. Ս. Յակ., 1940, 203): Մանի՛ր, հոգեւորտէ՛ր, թէպէտ ամենայն եղեալն գրեցանք (Գիւ. Ս. Յակ., 1940, 315):*

ՀՈԳՈՅ ՏՈՒՆ, հոգ. Հոգու տուն, փխբ. Ս.Էջմիածին: *ՀԲԲ հոգեւորուն «մարդու զանգը»:* *Զեր Աթոռին*

խնայեցէք, որ ձեր հոգոյ տուն է (Դիւան Ն. Զուգ., 104):

ՀՈԳՈՒՀԱՆ, ա. գ. Հոգին հանող՝ տանջող, շարշարող: Ի՞նչ խրատ կու տաս, ա՛յ հոգունհան (ՈՒՄՇԲ, 102):

ՀՈԳՈՒՆԱԿԱԲԱՐ, ա. մկ. Հոգու ունակութեամբ, կամեցողութեամբ: Հոգունակաբար թէ կամենայ պատրիարզն, կարէ զբնաւս ըմբռնել (ՃեմՃ., 268):

ՀՈԳՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. Հոգու ունակութիւնը՝ պարունակելը: ԱՅ հոգիունակ «ունող զՀոգի Սուրբ»»: Զերիս կարեմք իմանալ այլովք անուամբք, այսինքն՝ խորհրդով և հոգունակութեամբ (Նոր. ծաղ., 90): Հոգունակութիւն է նախատեսութիւն իմն զիրաց հանդերձելոց (Նոր. ծաղ., 90):

ՀՈԳՍՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. Հոգացողութիւն, խնամատարութիւն: Զեղ պարտ է ցաւել և հոգալ մեծաւ հոգսունակութեամբ զհոգան ձերոյ հոգւոյ քաւարանի Տանն (Կալվաձ., 168):

ՀՈՂԱՅԱՐԱՐ, ա. Հողով յարմարուած՝ կառուցուած, հողաշէն: Գըրեցաւ... ի քրիստոնեայ ժողով վայրիս ի հողայարմար տներս առ ափս եզեր գետոյն (Աղան. Միաբանք, 518):

ՀՈՂԱՀԱՐՈՅՔ, գ. Որոտմունք: Հողմահարոց - աղաղակ և որոտմունք (ՄՄ 2281, 127բ):

ՀՈՂՈԹԱՓ, գ. Հողաքափ, մաշիկ: Շորեղէն՝ երեք զառ շուրջառ, Գ մաղաշ, այլև հինգ հողոթափ (Սանահն., 115):

ՀՈՂՈՐԲԱՐ, գ. Հօրեղայր, տէս նաև ԽԱԻՐԵՂԲԱՐ, ՀՈՐԱՂԲԱՅՐ: Յիշեցէք... մին հողորբարն իմ՝ Վարդան եւ կին իւր Մուլքիճանին (Զեռ. յիշ. ԺԷ, 314):

ՀՈՅԱԿ, գ. Խոյակ: Սկսանի շինել գաւիթ մեծ ի վերայ Կաթուղիկէին... ինն հոյակօք՝ ի վերայ շորից սեանց (Զաք. Գ, 14):

ՀՈՅՍԿ (գրբ. հուսկ), մկ. Ամենից հետինը, վերջինը: Ես՝ նուաստս և հոյակն յամենից և տկար տրուպս յառաջնորդաց Բարսեղ (Սանահն., 114):

ՀՈՒԻՄ, գ. Կաթոլիկ: Այս աշխարհս բնաւ հոռոմ չկայ, միայն Լով երկու իրեք տուն հոռիմ (Սիմ. Լեհ., 347):

ՀՈՒՄԻ ՀԱԻԱՏ, հրդ. Կաթոլիկութիւն: Զաբեղաներն և զերեցնին զբլեղներն ածիլեցին / Հոռմի հաւատ մկրտեցին (Նշխարք, 54):

ՀՈՒՄՅԻ ԹՈՒՐՔ, հրդ. Հոռոմի՝ Բիւզանդիայի թուրք. երբեմն այսպէս էին կոչում օսմանեան թուրքերին: Յառաջմէ ևս ազդեալ եմք տէրութեանդ, որ հոռմցի թուրքն Թիփլիզ, Երևան, Նախջուան իւրեանց երկրովն և վալիաթովն առաւ (Եզով, 419):

ՀՈՎԱՆԱՆԱԼ, նբ. Հովանի լինել, պատասպարել: Բագուկ քո հովանասցէ և աջ քո կնքեսցէ (Հնատիպ, 14):

ՀՈՎԱՐԱՆ, գ. Ամառանցավայր: Տուաք շինել եկեղեցիս անուամբ սրբոյն Գրիգորիսի՝ հովարան Սուրբ աթոռոյն Ամարասա (ԴՉՎ V, 164): Նորոգեցի Սանահնին... եկեղեցու խաղտեալ տեղիքն կոփվածովք վի-

մօք, քանզի նա ի բնէ կացարան և ապա հովարան է սուրբ վանացս (Սանահն., 118):

ՀՈՏԵՑՈՒՑԻՉ, ա. գ. Հոտած, գարշահոտ: Հետօքն իւրեանց գեկեղեցիս եւ գհասարակութիւնս ապականեն՝ արկանելով գհոտեցուցիչ եւ զապականիչ թասկիրայս յեկեղեցիս (Գալ. Կենս., 341):

ՀՈՏՈՏԱԿ, գ. Հոտառօրթիւն, հոտառօրթեան զգայարան: Ծանօթութիւնս այս յառաջագայի ի հնկից զգայութեանց գլխաւորաց մարմնոյ, այսինքն՝ ի տեսակէ, որ է յաշս, ի լսակէ, որ է յականջս, ի հոտոտակէ, որ է ի քիմս, ի ճաշակէ, որ է ի բերանն և ի շօշափակէ, որ է ի ձեռս (Նոր. ծաղ., 4):

ՀՈՐԱԳԱՅՐ, գ. Հորեղբայր, տես նաև ԽԱԻԲԵՂՔԱՐ, ՀՈՂՈՐՔԱՐ: Հորաղբայր Սմպատայ (Դձվ III, 113):

ՀՈՐՄԱԳԱՀ,

ՀՈՐՄԱՅԳԱՅ, գ. Որսատեղ: Ծախեցի... թէ՛ պահէզատեղ, թէ՛ ջուր, թէ՛ ջաղաց, թէ՛ մեր հորսագահ, թէ՛ արաւտգահ (Սանահն., 153): Իւր ծիլ հող ու ջուրն, սարում, ձորումն, խմհատումն յորսայգահ, արօտգահ (Սանահն., 154): Հորսայգայ առաջ իմ հէրն տվել էր իր հոգուն համար (Սանահն., 172):

ՀՈՒՉԱՉ (արաբ. huzaz), բժկ. Գլխի հիւանդութիւն, գլխաւղեղային նեարդերի բորբոքում: Թաշանուշ և հուզազ Բ ազգէ՝ ի մաթիայէ, որ դաֆիլ լինի (Բունիաթ, 74):

ՀՈՒՃԱԹ, տես ՀէՕՃՃԷԹ: Մեզի մէկ լաւ ֆաթիվա տրուաւ, և մեք տարաք

զայն հուճաթ ևս արարաք (Գիւ. Ս. Յակ., 1933, 463)

ՀՈՒՄԱԿԱՇԻ, գ. ա. Անմշակ կաշի, փխբ. տկար, վտիտ: Միս եմ ու հումակաշի, զոսկերս կու հալես (ՈՒՄՇԻ, 123):

ՀՈՒՌՎԱՌ, գ. Բուրվառ: Ոչ գոյր հուրվառ եւ խունկ, եւ սալարկ յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ՝ եղեալ որքք գեռնոց (Դաւրիժ., 251):

ՀՈՒՐԹՈՒՆԱՅ (յուն. >թուրք. fırtına), գ. Փոթորիկ: Գիտես թէ Աստուած բարկացաւ, քամի եղաւ, հորթունայ եղաւ ան գիշերն, շախըներ կոտորտեցաւ, (Մժ I, 220):

ՀՈՔՆԱ ԱՅՆԵԼ, հրդ. (բժշկ.) Հոգնաանել: Թզի շարապ և կուլանկուպին տան և հոքնա այնեն (Բունիաթ, 102):

ՀՈՌԻՄ, գ. Կաթոլիկ, հոռմէական, լատինական, հմմտ. ՀՈՌԻՄ: Մին հոռմ վարդապետ, անունն Անաստաս... եկն Արուլիս ժողով անելու (Ձ. Ագուլ., 129):

ՀՈՉԱԿԱՆՈՐ, ա. Հոչականուն, անուանի: Առ հոչակարոյ եւ գերապատուելոյ տեսոն Մխիթար վարդապետի (Գիւան Մխիթ., 11):

ՀՈՉԱԿԱՎԷՊ, ա. գ. Հոչակատր (վէպ), փխբ. Ս.Գիրք: Նախադասես զիմաստն ոգեւոր նիւթականին, ըստ առածին հոչակավիպի (Գիւան Մխիթ., 4):

ՀՍԱԲՆ ՏԱԼ / ՏԵՍԱՆԵԼ, հրդ. Հաշիւ տալ, հաշուետուութիւն ներկայացնել, տես ՀՍԱՊԵԼ: Սայ վերայկացու գրեց... Ոհան-բաբէն, որ սարքարութիւն անէ, հասքն տայ

Շմաւոնին (*Զ. Ագուլ., 82*): Իւր խորհրդողականքն նստին եւ ընդ երեսփոխանին հասպ տեսանեն եւ գիտենան, թէ այս տարուոյս մուտն ինչ է եւ ելն ինչ է (*Կտակ Յակ., 329*):

ՀՍԱՊԵԼ (արաբ. hisab, պարսկ. hesab «հաշիւ»), նբ. Հաշուել: Այլ հախիսայ որ ունի ի վերայ մեր, ներսն հասպէցինք (*Սանահն., 148*):

ՀՐԱԲՈՒՆԱՊԵՏ, գ. Բաբունապետ, հմմտ. ն. Բիւզ. *հրաբունական*: Կաճարս աստուածային վերստին կառուցաւ... առաջնորդովեամբ Յակոբս քաջ *հրաբունապետին*, քարգործ Գրիգորին և Տօնականին (*ԴՉՎ VII, 118*):

ՀՐԱՄԱՆՔԸ ԲՈՒՆԵԼ, հոդ. Հրամանը պանել, հրամանին հետևել: Հոգևոր տէրն իմացաւ, մեզ վերայ օրհնութեան թուխտ զրկեց. հոգևոր տիրոջ *հրամանքն բռնեցինք* (*Սանահն., 143*):

ՀՐԱՄԲՈՒՆ, ա. Հրեղէն, հրեշտակային:

ԱԲ հրաբուն «հրեշտակային», ՀԲԲ հրաբուն «աստուածային»: Բազմութիւն *հրամբուն* զօրացն լնուին գատորին զաշխարհս (*Ագուլ. կոնդ., 89*):

ՀՐԱՆԻՅԱ (լեհ. granica, ռուս. граница), գ. Սահման: *Ոմն իշխան Վոյնիցքիչ ընթացաւ յետ նորա եւ եհաս նմա ի հրանիցան* (*Կամենից, 45*):

ՀՐԱՇԱԿՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Հրաշագործութիւն: *Առնեն յամենայն ժամ հրաշակործութիւնս* օգնող արքայիդ (*Եզով, 345*):

ՀՐԱՇԱՐԻ, ա. Հրաշալի: *Վարդապետք ամէն գան, որ ես հրաշարի ջուր արհնէք անեմ* (*Զ. Ագուլ., 120*):

ՀՕՎԱՐԱՆ, տե՛ս ՀՈՎԱՐԱՆ:

ՀՕՐԱՀՐԱՇ (բնստ.), ա. Հօր՝ Աստու հրաշալի (խօսեալ): *Շարժեալ բերանն աստուածահրաշ / Շրթանցն բղխէր բան հօրահրաշ* (*ՈՒՄՀԲ II, 13*):

- Զ -

ԶԱԳԱԿՈՐՈՒՄՏ, ա. Զագին կորցրած, հմմտ. ԿՈՐԻԻՆԱԿՈՐՈՅՍ: ՈՒՆԻ ն. Բիւզ. առանց մեկն.: *Շահն փոնգայր, մոնչէր, հնչէր եւ գոչէր որպէս ձագակորուստ առիւծ* (*Ջաբ. Ա., 29*):

ԶԱԳԱՍԷՐ, ա. Զագին սիրող, գութաբող: *Ձագասէր հաւալասան հաւուն նման ես* (*ՈՒՄՀԲ, I, 87*):

ԶԱԽԵԱԼ, ա. Զախ շեղուած մեղսագործ դարձած: ԱԲ *ձախանալ* «վատթարանալ», ՄՀԲ *ձախել* «ձախողուել»: *Ձախեալ էի՝ յաջ դասեցեր, Ղօղեալ էի՝ ամբացուցեր, Ճնշեալ էի՝ անդորրեցեր, Սեկնեալ էի՝ պատուաստեցեր* (*Առ էջմ., 193*):

ԶԱԽՈՏՆ, գ. Զախ կողմը, փաղափ ձախ հատուածը: *Ձձախտոն քաղ-*

քիս տեսցուք՝ յարեւմուտս գեօթ-
նեակ կըլայն (Քէօմ., 5):

ՁԱՅՆԱՆՄԱՆ, ա. Ձայնի նման: **Ձայ-
նանման** ազգ առնելով, **Դեկանման**
միշտ ուղղելով (Առ էջմ., 194):

ՁԱՅՆԱՌԻԿ, գ. Երգ ու պարի, երա-
ժշտութեան ձայն: **Ձայնատիկ- երգք**,
պարք, **տափղ** (ՄՄ 2281, 128ա):

ՁԱՅՆԱՌՈՐ ԳԻՐ (Ք), հրդ. Նոտա-
գրած, խազագրած (գիրք): ԱՒ
ձայնաւոր «ձայն ունեցող, ձայնել
երգելու յարմար», ՀԳԲ ձայնաւոր
գործիք «երաժշտական գործիք»,
ՄՀԲ ձայնաւոր «խթադիք» (հա-
մանուն): **Տէր Յոհան** և **Խըր հայր**
Գրիգորն ետուն մէկ **Յիսուս Որդի**,
մէկ **Ձայնաւոր գիրք**, մէկ **գիրքա-
կալի շապիկ** (Ակոռ., 208): **Յայսմ**
ժամանակի Մեսրոպ սքանչելի
այրն Աստուծոյ եգիտ **զՁայնաւոր**
գիրան, տուելովն Աստուծոյ ի վի-
մին տպաւորեալ ի Բալու (ՄԺ II,
326):

ՁԱՐ (ռուս. Царь), գ. Յար, կայսր:
Ունէր և զայլ թուղթս առ կայսրն
Լէօբոլոտոս, առ Բալադին էլէքթօրն
և առ ձարն Մոսկովաց (Ստ. Ռօշ-
քայ, 190): **Երթայ առ ձարն** և այն-
քան խորագիտութեամբ շրջի և ի
սմանէ դեսպան լինի առ Պարսից
արքայն (Ստ. Ռօշքայ, 190):

ՁԵՌԱՅ ԳԻՐ,

ՁԵՌԳԻՐ, հրդ. գ. Ձեռքի գիր՝ ստո-
րագրութիւն, ձեռագիր: **Ուղիղ**
սրտի գրինք զմօհրն և **զձեռաց գիրն**
մեր այս թղթիս (Եզով, 19): Դրի իմ
մօհրն **ձեռաց գիր**. ինձ ղապուկ այ
(Եզով, 20): Ես՝ Պաղտասարի որդի

Մելքոն իմ **ձեռքովս** մհրովս ինձ
ղապուկ է (Եզով, 157): Ես Շահնի որ-
դի Սուքիաս իմ **ձեռքովս** մօհրովս
ինձ խապուկ է (Եզով, 157):

ՁԵՌԱՅ ԽԱՉ,

ՁԵՌՆԱՅԽԱՉ, հրդ. գ. Հոգևորակ-
նի ձեռքի խաչ, որ գործածոււ է
արարողութիւնների ժամանակ:
Տէր Իսրայէլն և **Խըր որդի Յակոբն**
տվին մէկ խալիչայ, մէկ լաւ փոքր
ձեռաց խաչ (Ակոռ., 205): **Մահրա-
սի Աւետիքն** և **Գրգորն** ետուն Ա
արծաթէ **ձեռաց խաչ** (Ակոռ., 211):
Գրիգորն մէկ լաւ **ձեռնայխաչ** ետ
Սը. **Յակոբայ** (Ակոռ., 213):

ՁԵՌՔԱՄՈՒԹԻԻՆ, գ. Ձեռքից բռնել
և ման ածելը: ՀԲԲ **ձեռքածութիւն**
«ձեռնարկ մի բանի»: **Ձեռքածու-
թիւն** և **ձեռնածութիւն** - բմբռնումն
ի ձեռանէ և առաջնորդումն. լատ.
մանուտու՛րցիօ (Վ. Յուն., 48):

ՁԵՌՆԱՉԱՓ, գ. ա. Ձեռքի ափի
չափ՝ փոքր (տարածութիւն): **Ձա-
մենայն փափուկ տեղիս** մարմնոյն
ծակոտեցին ծայրիս սրոյ, յորոյ
մարմինն ոչ մնաց **ձեռնաչափ** տեղի
մի անծակ (Դաւրիժ., 420):

ՁԵՌՆԱՌԱՍ, ա. Առատաձեռն: Եր-
կիրն է յոյժ խաղաղութիւն, որ ոչ
գող կայ և ոչ բող, ոչ մարդասպան
և ոչ գօմբուկ, և թագաւորն է խիստ
ձեռնառատ (Յ. Թուլթունջ., 306):

ՁԵՌՆ ԱՌՆՈՒԼ / ԲԵՐԵԼ, հրդ. Ձեռք
զցել՝ գրաւել, հնազանդեցնել: **Հի-
մա պինդ կուզեն** զմեզ **ձեռն առ-
նուն** այս գարունս և ապա երիշ ա-
նեն (Եզով, 433): Թշնամին եկն
պատեաց զմեզ... Թփլիղ, Երեւան,

Գանջայ, թարեզգ առեալ են, հիմա կամին զմեզ ձեռն բերել (եզով, 432): Իսկ թէ էլ շատ ետացար զմեզ ձեռն բերին, դժուար կը լինի (եզով, 433):

ՁեռնՏՈՒՈՂ, գ. Օգնող, ձեռք գցող: Ապա դարձեալ այցելութեանց ամենահնար **ձեռնտուողին** ծագեալ նշոյլ ի սիրտ բանականութեանս նախադէմ խոնարհութեամբ (Գիւ. Ս. Յակ., 1941, 126):

Ձեռք ՏԱԼ, հրդ. 1. Ձեռնարկել, սկսել: Ագուլիս ներքի թաղի սուրբ Ովանէս անվան եկեղեցին այսօր **ձեռք տվեցին**, վեր կալան, որ շինեն (Ձ. Ագուլ., 63): Մեր տներն **ձեռք տվիք** շինելու, Ալեքսան էլ **ձեռք տվեց**, ինքն էլ շինեց (Ձ. Ագուլ., 90): 2. Հարմար լինել: Ետուանէնցն* գոս Գելան կամ Բաքու, ինչպէս ձեզ **ձեռք տայ** (եզով, 406):

ՁեՍԱՐ, գ. Կայսր: Ոմանք **զձեասարին** որդին կամէին, ոմանք զՄոսքովին իշխանն կամէին (Կամենից, 43):

ՁեՐԱԿԱՆ, ա. Ձեռ, ձեզ պատկանող: Կեամ ըստ արժանեաց իմոց **ձերական** սուրբ աղօթիւքն և շնորհօք Տեառն (Ոսկ. նամ., 1966, 294):

ՁեՐՊ, գ. Ծեպ: Բնակեն ի յայրս և ի **ձերպրս** քարանձաւաց լինելով (եզով, 344):

Ձէն (գերմ. zeche), գ. Արհեստաւորական ընկերութիւն, միաբանու-

թիւն: Աւուրը ամէն դի կամ ամէն շաբարա կու քալին **ձէխերը** (Գովր., 197):

ՁԸՄԸՌՈՆԱՄՈՒՏ, մկ. գ. Ձմեռնամուտ՝ ձմռան սկիզբը: Ի թվին ՌՉ տանուտէրն կարիճն, դեկտեմբերի ժԸ՝ **ձըմըռնամուտին**, ձմեռն երկար բռնեց և դիժար (Մժ I, 209):

ՁԸՆԱՄԵՄ, ա. Ձիւնառատ: ՆՉԲ **ձիւնամեծ** «ուր իցէ ձիւն մեծ կամ առատ»: **Ձըմեռըն** դիժար եղաւ և **ձընամեծ**, մահ անասնոց և խաշանց (Մժ I, 227):

ՁԻԹԱՏՈՒՆ, գ. Ձիթհամբ, ձիթանց: Անդ է **ձիթատուն**. համարեցի մինչև 17 քուբ, թող զմանտրերն (Ձուար, 1867, 203):

ՁԻՒՆԱՔԱՐԳ, ա. Ձիւնով բարդուած՝ կուտակուած: **Յաւէտընթաց** յառաջախաղաց վտակա ջուրցն, որ ի գլխոց **ձիւնաբարդ** սպիտակափայլ բարձրաբերձ լերանց առ ի ստորեւ հոսեալ իջանէ (Դարբիժ., 87):

ՁԻՐԱՍԷՐ, ա. Ձիւր՝ ձիւր սիրող: Ո՛վ **ձեռնտուք** իմ **ձիւրասէրք**, ձայնեցէք ինձ / Ու՛ր է ձրի բաշխողն իմաստից (Ներբ. Սրաս., 21):

ՁՄԵՌՈՆԱՏՈՒՆ, գ. Ձմեռանց: Մէկ մեծ **ձմեռնատուն** էր, որ գիր կէր գրած, ԲՃԸ տարի էր շինած (Ձ. Ագուլ., 90):

-Ղ-

ՂԱԼԵՕՆ (իտալ. galeone), գ. Մեծ նաւ, առագաստամա: *Թօնուզն ծովուն վերայ դալէօն ունի, կու ծեծվի ֆռանկի հետն (Տէֆտ., 463):*

ՂԱՄԱՐԱՓՈՒՅԼ (արաբ. qamar «ուսին»), ա. Լուանի փայլով շողացող: *Ղամարափայլ ծառեր պտղով զանազան / Որ տեսութեամբ անհաս է յաշ մարդկան (ՈՒՄՇԲ, 297):*

ՂԱՅԵՆ,

ՂԱՅԵՂ (պարսկ. گنج, թուրք. kayık), գ. Նաակ: ՄՇԲ ղայխայ «նաակ, մակոյկ»: *Մն ղայեղ էր, ՌՇ ուռուս մեռաւ (ՄԺ II, 269): Թվին ՌՇԴ ուռուզն առաւ զՏրապիզոն Մն ղայեխներով եւ ի սոյն ամի վրացի Մովրով շարդեաց (ՄԺ II, 358): Ղուրսէլու ղայեխով ի վերայ Կարմիր ծովուն կու գնայ, Լ աւուր ճանապարհ է մինչև ի Սովաքի (Յ. Թուրթունջ., 301): Յայսմի ամի հարիւր եւ քառասուն ղայեխ ըռուս եկն ի վերայ Տրապիզոնայ (Ժամ. Պող., 279):*

ՂԱՅՐԷԹ (արաբ. qayrat), գ. Ջանֆ, շանաբրուքիւն, աշխատանք: *Մեք տեսաք զնորա ղայրէթն եւ զգահմաթն հրամանուցդ եւ մեզ համար (Դիւ. Ս. Յակ., 1940, 316): Զինչ որ քումդ մեծութեանն կու վայելէ, զայն դու գրտես եւ քո ղայրէթն (Դիւ. Ս. Յակ., 1934, 124):*

ՂԱՆԱԼ, չք. Մուլանալ: *Ղանալ - ծուլանալ, յանգել, շերանիլ, խոհարանալ, անկուածիլ (ՄՄ 2281, 125ա):*

ՂԱՆՏԱԿ, գ. Խանդակ՝ խրամ, փոս: *Մօսքովն ղանտակի փորել էին, ամբողջնի շինել եւ առ լերամբ բանակ բանակ նստել: Դիզել էին բլուրնի իբրեւ ղանտակ (Միմ. Լեհ., 372):*

ՂԱՊԱՐ (արաբ. ghibar), գ. Փոշի կամ ցամ: *Նշանն այն է, որ համակ ի քուն լինին յիմէ ղապար շունենա (Բունիաթ, 70):*

ՂԱՏԱՂԱՅ, գ. Մունետիկ (ծան. հրատ.): *Հրամայէ պնդապահն առնել ի ճանապարհին, այսինքն՝ ղատաղայ (Ջաբ. Ա, 37):*

ՂԱՏԻՄ (պրսկ. qadim), ա. Հին, նախկին: *ԶԴարքն ղատիմի կայր եւ Պարսից խլած եւ զեպիսկոպոսի գեղն, որ հաստատ կայր նախնեաց մերոց (Սանահն., 113):*

ՂԱՏՐԱ ՂԱՏՐԱ (արաբ. katra katra), ա. մկ. Կաթիլ-կաթիլ: *Դոզն կաթ կաթ գայ, ղատրա ղատրա պավլ, երկուքին դեղն այլ մէկ է (Բունիաթ, 103):*

ՂԱՐԱՆԱՆԻՍ (թուրք. kara yanik, բոց. «սև թախիծ»), գ. (բժշկ.) Հոգեկան խանգարում: *Սարսամն, որ ի տաքէ լինի այն, որ ղարաեանիս կասեն (Բունիաթ, 60):*

ՂԵԿԱՆՄԱՆ, ա. Ղեկի նման: *Ղեկանման միշտ ուղղելով, ճարտարանման հիմնարկելով, Մայրանման ողորմելով (Առ էջմ., 194):*

ՂՈՒԼ ԳՐՎԵԼ (թուրք. kul «ստրուկ, ծառայ»), հրդ. Մատայութեան մտնել: հպատակութիւն յայտնել: Մեծ իմփռադրիցին զուլ ենք գրվել (եզով, 437):

ՂՈՒՄԱՇԱԳՈՐԾ, գ. Տարազագործ - զումաշագործ (ՄՄ 1127, 154բ):

ՂՈՒՇԵԱՆՍԱ, գ. Թռչնաբան, հաւանոց: Ելանք անտի, գնացինք ի զուշխանան. տեսանք անհուն թռչունք՝ ազգ և ազգ կերպ թռչունք (Շահմ. յիշ., 317):

ՂՐԸՄՅԻ, գ. Ղրիմեցի, Ղրիմի բնակիչ (հայ): Առաջնորդութեան տէր հաշատուր վարդապետի եւ տէր Թորոս հայրապետի եւ խորմցի տէր Մովսէսի արհնութեան արժանացար աջով նոցին (ՄԺ I, 212): Հաւատացեալք ժողովեցան՝ զրբմցիք, գեղացիք, այլք եւ կանայք, վանուց դուռն հասին, դուռն փակեցին, ներս մտին (ՄԺ I, 224):

-Ճ-

ՃԱՀԱԿԻՑ, ա. գ. Ճահ՝ կարգ, կարգակից, կրօնակից: Ով ճահակիցք իմ ճոխագոյն, ճռեցէք ինձ / Ու՛ր է ճշմարիտ որթն (Ներք. Սրայ., 21):

ՃԱՀԱՆԱԶԱԶԵԻ, ա. Ճահանջի՝ նառագայթի ձեւ ունեցող: Դամբարանն է ճահանչաձեւ մարմարոնեայ փորուածքով և մանրաշար բազմագոյն քարամբք զարդարեալ (Պատմ. երու., 1931, 275):

ՃԱՄԱԿԱԼԵԼ (պարսկ. jam «ապակի» բառից), նբ. Ապակեպատել (լուսամուտները): Մահդասի է վազն... փանջարէքն ամէն ճամակալէց (Ակոռ., 205):

ՃԱՆԱՊԱՐՀԱԳԻՐ, գ. Քարտեզ: Գրիգոր արքեպիսկոպոսն երթայ յերուսաղէմ... որպէս ցուցանէ երուսաղէմայ գօմիսարին ճանապարհագիրն (Ստ. Ռօշքայ, 165): Նիկողայոս արքեպիսկոպոսն Լէոպոլսի հայոց առեալ ի Վլատիսլաւէ թագաւո-

րէն Լեհաց զճանապարհագիր, գայ ի Հոռոմ (Ստ. Ռօշքայ, 175):

ՃԱՆԱԶՈՒԹԻԻՆ, գ. Ճանաչութիւն՝ ծանօթութիւն: Մեզ գրեր էին, թէ քո մեծութենէդ անիք մին ճանաչութիւն (եզով, 162):

ՃԱՇԱԿԱՐԱՐՈՒԹԻՆ, գ. Ճաշակ ձեւատրելը: Ամենայնից բաղձանաց լցուցիչ ունելով զճաշակարարութիւն (Յ. Կոլոտ, 311):

ՃԱՊԱՂԳԵԼ, նբ. Ճապաղել՝ տառածել, սփռել (-գ- յաւելաննչիւնով): ԶԱրտաշէսէ, զհարսանեաց նորին, զճապաղգելոյն դահեկանս արքային ի դուռն տաճարին (Ստ. Ռօշքայ, 15):

ՃԱՎԶԻ ՊԱՒԱՅ (արաբ. djawz-i buwa), գ. (բար.) Մշկընկույզի պտուղը, Myristica officinalis: Առ խասմիան, որ է կղբու ձու... ճավզի պաւայ Ա տրամ (Բունիթաթ, 85):

ՃԱՐՈՎԻ, ա. Ճարուող, ձեռքերովի՝ ի տարբերութիւն գնուող բաների:

իմ ստացելոցս՝ թէ ճարովի իցէ եւ կամ գնովի... տասանորդն լիցի կաթողիկոսին (Կտակ Յակ., 329):

ՃԱՐՏԱՐՄԱԿ, ա. ճարտարախօս: *Ճարտարմակ* - ճարտար կամ յոխորտախօս (ՄՄ 2019, 173բ):

ՃԱՒԱՀԻՐԵՂԷՆ, գ. Գոհարեղէն, թանկագին փառեր: *Տեսաք գեղեցիկ շինուածք՝ ոսկեղէն ճաւահիրեղէն* (Շահմ. յիշ., 315):

ՃԵԶՈՒԻԹ, գ. Յիսուսեան միաբանութեան անդամ, տե՛ս ԵԶՎԱՅԻԴ: *Յորժամ որ կամեցին ճեզուիթ պատրիքն գնալ առ տնեցիս Շերմանցւոց առ ի հովուել նոցա* (Ե. Մուշ., 126):

ՃԵՂԱՌԹԻԻՆ (թուրք. jclali «խոնվարար, ապստամբ» բառից), գ. Խոնովութիւն, աւազակութիւն: *Շատ անօրէնութիւն եւ չարիք եւ ճելալութիւն արել էր, պէկէրպէկիք սպաննել էր* (ՄԺ I, 226):

ՃԵՄԲԱՐ, ա. Բարակ: Բէ ճեմբար նոյն նշ.: *Ճեմբար - բարակ* (ՄՄ 1127, 145ա):

ՃԵՊԱՄԵՐԹ, ա. Յանախակի: *Ճեպամերթ - յաճախապէս, բազմիցս, լատ. ֆոէգուէնթէր* (Վ. Յուն., 48):

ՃԵՐՄԱԿ ԶՈՒՐ, հրդ. Օղի: *Ճերմակ ջուր փոքրիկ գաւաթով [ետ] (Զուար, 1867, 132):*

ՃԷՆԷՐԱԼ (լատ. generalis «ընդհանուր, գլխաւոր»), գ. Գենեւալ, տե՛ս նաև ԵՆԵՐԱԼ, ԶՆԴՐԱԼ: *Մէկ քանի ճէնէրալ ինկաւ, մէկն ճէնէրալ Հայեզլերն է, այլոց անուն չեմ գիտեր* (ՄԺ II, 404):

ՃԷՆԹՂՈՒՄ,
ՃԷՆԹՈՒԼՈՒՄ, տե՛ս ԶԻՆԹԻՂՈՄ:
Հանգուցեալ էր առ Քրիստոս պայծառագոյն և ճէնթլում վէնէցիոյ քաղաքիս (Հայ-Վենետ, 482): Այս ճէնթուլումիս կտակին կայ գրեալ, ի Բուրկուրաթիա տի Զիթրան ի մէջ նոցա տէֆթէրի (Հայ-Վենետ, 483):

ՃԷՏՎԷԼ, գ. Աղիւսակ: *Այս գիրքս ամենայն տումարական արուեստից և աստեղաբաշխական ճէտովլից և մեկնութեանց Տէֆտէր է (Տէֆթ., 317): Հարցեալ և ժողովեալ անհամար մեկնութիւն և ճէտովլէ աղիւսակը (Տէֆթ., 318):*

ՃԻՊԱՅ (պարսկ. յիւ «գրպան»), գ. Փոսոբակ, խորը ընկած տարածք: *Մ՛՛՛՛՛ ջիւպպէ, ջուպայ «արևելեան տարագի երկար և լայն վերնագգեստ» (իմաստափոխ.)*: *Մեր յօժար սրտիւ ծախեցինք ի վերայ Բարսեղ պարոնտէրին Զրանցի ջամփի տակի ճիպէքն... Զումանց ճիպէքի վերի կուռն* (Սանահն., 227):

ՃԻՐԱՔԿԱԼ, գ. Աշտանակ - շամտան կամ ճիրաքկալ (ՄՄ 1127, 134բ):

ՃԻՐՂԱՀԱՇՈՒԹԻՆ, գ. Տոհմի ճիւղաւորութիւն, տոհմաձառ: *Բնաւ մի՛ միսեցիին ի գործ եկեղեցականի, որ վերաբերի գաւառին եպիսկոպոսի՝ թէ՛ աստիճանի, թէ՛ ճիւղահաշութեան սակս գէեզական ախտին* (Գիւ. Ս. Յակ., 1940, 155):

ՃԼԱՄԱՀ, ա. (վրաց. glerki ճլեփ, ճլեթ՝ «թոփախ»), գ. Կիսամետ (ըստ Մ.Բրոսսեի): *Երեքին արեղայքն որք այնքան տանջեցան...*

Ալլամահ կենօք կային եւ ըղձային մահու (Դարիժ., 387):

ՃԿՆԱԾ, ա. ձգնած: Մարիամ Մակղաղենացուն *ճկնած մաղարան հոս է (ՄԺ II, 406):*

ՃՆԳՐԱ, գ. Գնենքալ, տնւ ճէնէրԱ: Մեծի իշխանաց իշխան Ափանաս Միխայէլիջ *ճնդրալիդ Դարբանտու (եզով, 432):*

ՃՇՄԱՐՏԱՅՈՅՁ, ա. ճշմարտօսիւն յուզող՝ տարածող: Յորմէ ժամանեացի գիր սիրոյ եւ օրհնութեան... *ճշմարտայոյզ վարդապետացո, արեւելականացո եւ արեւմտականացո (Գալ. Կենս., 339):*

ՃՇՄԱՐՏԱՈՒՍՈՒՅԻՉ, ա. գ. ճշմարիտ ուսուցիչ: Տէր Միսիթար *ճշմարտաուսուցիչ աստուածաբանութեան վարդապետ (Դիւան Միսիթ., 6):*

ՃՈՒԵԼ, նբ. ճոխացնել, զարգաց

նել: ՄՀԲ ճոխել «փետել» (համանուն): *Ջանայր զուսումն ճոխել ազգիս նախնի սրբոց յար հանգէտ (Թորգ. Տապան., 176):*

ՃՈՒԽՄԱՍՏ, ա. ճոխ իմաստ ունեցող: Մեծ վարդապետս՝ դեռ մանկութեան սուրբ հաւատովն բնաւորեալ *ճոխիմաստ (Թորգ. Տապան., 176):*

ՃՈՂԱՃԵՄ, ա. Շուայա: ԱԲ ճոխաճեմ «շառ»: *Ճողաճեմ - ցոփաբայլ (ՄՄ 2019, 173բ):*

ՃՈՂՈՒ, նբ. Սափրել: ԱԲ ճողել «մազերը քաշել՝ փետել», Ն. Բիւզ. ճողիմ «խուզել, կտրել»: Մշոյ Դարապանտայ խանն *հրովարտակ եհան ի վերայ քրիստոնէից ի վերայ աջ թևին կարել սև կարկտան և ճողուլ զմորուն (Դիւան ժ, 60):*

-Մ-

ՄԱԳԻԱԳ, գ. Մագաղաթ (ըստ Ստ. Ռօջնայի): *Եւ մագաղան հատուածել, որ ցուցաւ գրեալ ի սկզբանէն կարգս ոսկեղէն գրով (Ստ. Ռօջնայ, 62):*

ՄԱԹԻԱ (արաբ. madda «նիւթ»), գ. Ըստ բնագրի՝ նիւթարտադրութիւն: *Այսոնց երկուքին այլ սարսամին և պաղ սարսամին մաթիէն է (Բունիաթ, 63):*

ՄԱՎԱՔ (արաբ. melek), գ. Հրեշտակ: *Մալաք Մահմատ փաշայ անուն, որ մալայիք հրեշտակ թարգ-*

մանի, ըստ իւրեանց բառին, բայց ես կարծեմ թէ ի հրեշտակաց սատանայի էր (ՄԺ II, 395):

ՄԱՀՏԵՍԱՅՈՒ, գ. Մահտեսի՝ Երուսաղէմի ուխտի գնացած: *Հեզահոգի մահտեսացու խօճայ Յակոբ (Յ. Կողոտ, 236):*

ՄԱՂԿԱՏԱ, չբ. Մղկտալ: ԱԲ և ՄՀԲ *մաղկատուն «մղկտալը», Ն. Բիւզ. մաղկատանք նոյն նշ.: Ռմանց թեւքն խախտեալք էին ի տեղուջէ իւրեանց, եւ այլք այլ կեր-*

պիւ մաղկատային (Գալ. Կենս., 246):

ՄԱԳՂԱՔԱՓ, ա. Մաղձը՝ թոյնը թափող՝ բուժող: *Հնայել զմաղձաթափ օշարակս եւ զայլ դարմանս առնել (Յ. Կոլոս., 84):*

ՄԱՃԱՌ,

ՄԱՃԱՐ (արաբ. պարսկ. majar), գ. Աղբիւրներում այդպէս էին անուանում հունգարացիներին եւ Հունգարիան: ՄՉԲ մաճար նոյնն է: Դաղմատը... եւ սահմանակիցք Ալամանաց եւ Մաճառաց, Պողտանաց (Պատմ. Խոթ. 35): Յաւուրս այս Մահմետի յարեան Ֆռանկքն, որ Մաճարք կոչին, ի վերայ ծովու բազում նաւօք (ՄԺ II, 247): Ի սոյն ամսոյ եփրատօրն իւր որդին թագաւոր արաւ Մաճարու ի Փօժօն (ՄԺ II, 405):

ՄԱՃՐԻՆԱԿ, ա. գ. Մանարական՝ հունգարական, հունգարերէն: Թէ հայնակ ու թէ մաճըրնակ եւ ոչ կրճագալնու վերայ մէկ միայն ռսգու կամ արծըթէ շինօրն եւ սրբգըլապէն դուս (Գովր., 45):

ՄԱՅՏԵՍԻ, գ. Մահուեսի: Այս է տապան ողորմած հօգի մեծ խաթունին՝ կողակցուն պարոն Յակովբին, մայտեսի Մինասին որդուն (ԴՉՎ VII, 224):

ՄԱՅՐԱԿՈՒՄԱՐ, գ. Մայր գումար, դրամագլուխ: Արժէք կալուածոցն հարկ է, զի առաւելագոյն իցեն, քան զմայրագումարն եւ զշահն, եւ այն կրկնապատկաբար յերիս մասունսն (ՈՒղուր., 288):

ՄԱՅՐ ԼՈՒՍՈՅ, հրդ. Այդպէս էին անուանուում Մայր Աթոռ Ս. Էջ-

միածինը եւ նուիրապետական այլ աթոռներ: Յորմէ ժամանեցէ ողջոյն ի վերայ հոգևորապէս սիրեցեալ զաւակիդ Մօրս Լուսոյ շքեղաշուք եւ ճոխափառ խօճայ Յակոբջանիդ (Դիւան ն. Ջուղայի, 47): Դարձեալ ծանիր, լուսածնունդ զաւակ Մօրս Լուսոյ Սուրբ Էջմիածնի (Դիւան ն. Ջուղայի, 61): Յօժարեցան ի շինումն եւ ի նորոգումն Մօրն Լուսոյ քրիստոսադիր սուրբ Աթոռոյն Էջմիածնի (Դիւան ժ, 47):

ՄԱՆԱՎՇԱ,

ՄԱՆԱՎՇԱ (պրսկ. banafsha բառի թուրքերէն ձեւն է), գ. (բար.) Մանուշակ: Ի տամարէն երակ առնի ցաւցած դիճէն եւ մանալշա շարապով զականջն լուան (Բունիաթ, 78): Մանաւշա, խաթմի, սուսամի... զամէնն ջրով եփէ, տաք տաք ի մէջն դիր (Բունիաթ, 74):

ՄԱՆԿԱԿԵՐՏ, գ. Մանուկ: ՀԲԲ մանկակերտ «աժ. երեխայի կերտած շինած» (խմաստափոխ.): Մանկակերտ - պարմանի, մանկտիս, արբուն (ՄՄ 2281, 129բ):

ՄԱՆՉ ԺՈՂՈՎԵԼ,

ՄԱՆՉ ԺՈՂՈՎՕՂ, հրդ. Տղայ ժողովելը Օսմանեան կայսրութիւնում, տե՛ս նաև ՏՂԱՅ ԺՈՂՈՎԵԼ: Դարձեալ ի նոյն թուին սուլթան Սէլիմն արար զմանչ ժողովելն (Դաւրիժ., 474): Դարձեալ ի սոյն թուին մանչ ժողովողն էլ (Դաւրիժ., 480): Ի սոյն թիվին դարձեալ մանչ ժողովողն էլ (Ժամ. Պող., 279):

ՄԱՆՐԱՇԱՐ, ա. Մանր շարուածով: Դամբարանն է մանրաշար բազմագոյն քարամբք զարդարեալ

(Պատմ. երու., 1931, 275): **Մանրաշար** քարամբ յօրինեալ պատուի և մեծարի (Պատմ. երու., 1932, 12):

ՄԱՆՐԱՌՈՒԵՍ, ա. Մանր՝ նուրբ արուեստով շինուած: Երկաթի մարդիք որ զանկակ զարնեն, և ազգի ազգի մանրարվեստ սահաթնի, որ տեսողացն է սքանչելի (Սիմ. Լեհ., 159):

ՄԱՇԱԿ, գ. Աշխատատը, մշակ: Գիր տվինք Սանահնու Բարսեղ եպիսկոպոսին, որ տուն Դ ուր մաշակ գնաք թէ բոկանայ կայ, թէ բունիաթ տուն Ե Կոնայ սար ի վէց շափ քաղցու (Սանահն., 158):

ՄԱՌԱՆՍՏՈՒՆ, գ. Մառան, ամբարանոց: Զոր ինչ ի մառանատունն և ի մութպաղն... գրով յանձնեցի նոր առաջնորդ որդեկին իմոյ (Յիշ. Ուն., 294):

ՄԱՍԻԶ, գ. Ժամանակի միատը: Ժամ - մանրամաս, մասնիչ (ՄՄ 2019, 163բ):

ՄԱՍՈՒԿ, գ. Մասուկ, որ է թթու կաթն (ՄՄ 6275, 212բ):

ՄԱՍԱՄԱՅ (ֆրանս. madame), գ. Տիկին: Հաճեսցի մխիթարել զմանկուհին, զորս համընկերակցութեամբ տիկին մատամային Պակավուլթ ետ բերել (Դիւան Մխիթ., 65):

ՄԱՏ ԳԻՐ, հոդ. Մատով գիր՝ ստորագրութիւն: Մատ մի գիր ետու մօհրովս (Պօղ. նամ., 91): Ահա այս Բ տարի է, որ զքո մէկ մատն գիրն տեսած չեմ (Եզով, 435): Բուռն և սաստիկ հրաման ունին Օսմանցիքս, որ մէկ մատ գիր ուղարկեն ուր են կամի (Յ. Կարն., 26): Միթէ՞ Մեսրոպ վարդապետի մատ մի

գիրն քան զմեր հրամանն այլ բարձր այ (Դիւան ն. Զուլայի, 87):

ՄԱՏ ԳԻՆԵԼ / ԿՈՒՆԵԼ, հոդ. Ստորագրել, արձանագրել: Ես Զլուսի որդի Պիլիպոսս մատս գրի, ինձ դապուլ է (Կալվածագր., 79): Ես Գրիգորս մոհրն շունի, մատս գրի և ինձ դապուլ է (Կալվածագր., 146): Մովսէսի կողակից Մարիամս վասիի գորով իմ կողմանէս և իմ եթիմ Գևորգիս կողմանէ մատս կոխեցի (Կալվածագր., 152):

ՄԱՏՆԱՐԳ (հայ. մատն+արկ), գ. Խաղողի նորատունկ այգի, նոր: ՄՀԲ մատնարկ նոյն նշ: Մեք մեր կամաւ և յաւժար սրտի... մատնարգի Քարագլխի հողն իր Գ սամթով ծախեցինք ի վերայ Սարգիս պարոնտէրին (Սանահն., 141):

ՄԱՐԳԱՄԷՋ, գ. Մարգերի մէջ (առու): ՀԲԲ մարգամիջի «խնձորի մի տեսակ, մամը ու քաղցր» (համանուն): է ձորակն, յորում է առու մարգամէջ (Կամենից, 158):

ՄԱՐԳԱՇԱՀՈՒԹԻՒՆ, գ. Մարդ շահելը՝ սիրտը գրաւելը, սիրաշահութիւն: ԱԲ մարդաշահ «մարդ շահող»: Արի և քաջ լէ՛ր յիշխանութեան և ի մարդաշահութեան (Զաք. Ա, 6):

ՄԱՐԳԱՎԱՌՈՒԹԻՒՆ, գ. Մարդավարութիւն, քաղաքավարութիւն: Ոնին և մարդավարութիւն (գրչ. մարդավառութիւն) և են մեծ վաճառականք (Սիմ. Լեհ., 320):

ՄԱՐԳԻՍ, գ. Լաջուարդի նմանող քաղ: Մարգիս ինքն քար է, և գունն ի լաճուվարդի գունն կու նմանի և հոտն ի գինու հոտ կու նմանի (ՄՄ 6275, 213ա):

ՄԱՐԶՊԻԿ, գ. փոփշ. մարզպան-ի, փոփ մարզպան: *Զկնի Վարդայ Վահրամ մարզպիկն մարտիրոսացաւ (Ստ. Թօշքայ, 70):*

ՄԱՐՄԱՀԻՃ, գ. (կենդ.) *Մարմահիճ, որ է օձաձուկն (ՄՄ 6275, 213ա):*

ՄԱՐՄԱԶԵԼ, նբ. *Մարմաշել - ախորժել (ՄՄ 1528, 2ա):*

ՄԱՐՄԱՌԱԿԱԱԾ, ա. Մարմարապատ: *Տան դուս տեղն ամէն մարմառակալած և վերէն խիստ հիանալի մեծ եկեղեցի է շինած (Նըշխարք, 21):*

ՄԱՐՄՆԱՏՈՅԺ, ա. Մարմնին տոյժ վնաս պատճառող, վնասաբեր: *Բառնամ ի ձէնջ զայն ամենայն խոտվութիւնս եւ զհոգեվնաս եւ զմարմնատոյժ տարածայնութիւնսն (Գալ. Կենս., 339):*

ՄԱՐՈՒՆԻ, գ. Մարիոնիտ, քրիստոնէական յարանուանութիւն: *Կայր շորս եկեղեցի հուպ միմիանց մերձ Դարպասին՝ մէկ բակ, մէկ մարունի, մէկ հոռմի, երկու հայի (Սիմ. Լեհ., 318):*

ՄԱՐՔԻՉ (ֆրանս. marquis), գ. Ազնուական տիտղոս Եւրոպայի մի քանի երկրներում, **մարկիզ**: *Թագաւորն սեղանի վերին դիհն կու նստի, Դ կողմն սեղանին որչափ մեծամեծք կան՝ վէզիր, փիրիյօլ, մարքիզ (Շահմ. յիշ., 317):*

ՄԱՐԿԱՆԱԼ, շք. Թշուառանալ: *Մարկանալ - թշուառանալ, տառապել, խոհարանալ, անկաժանալ (ՄՄ 2281, 127բ):*

ՄԱՔՍԱՐԱՆ, գ. Մափսատուն: *Ի վէնէտիկու եկեալ գրեանց անտուկսն ներ մաքսարանի բանիցին (Ճեմճ.,*

277): Չե եւս էր գնացեալ առ մաքսարանն (Ճեմճ., 277):

ՄԱՔՐԱԶԱՆՈՒԹԻՒՆ, գ. Սրբազնութիւն, սրբակենցաղութիւն: *Ստիպեցայ այս առաջադրութիւն՝ առ ի անմեղադրելի պահել զպատին մաքրագնութեանդ (Դիւան Մըխիթ., 132):*

ՄԱՔՐԱՏԵՍ, ա. Մափրաւէր: Աթմաքրատեսակ նոյն նշ: *Լուսատես, հրաշատես, մաքրատես (գրչ. մաքրատեսակ) ի մի / Առ իս ցուցանելով ի սէր բորբոքէ (ՈՒՄՀԲ II, 183):*

ՄԱՔՐՈՑ, գ. Մափրոյ՝ մափրագործող միջոց: *Խոստովանիմ զպարտութիւն, որ սպառեալ գտաւ ի բերանս դասուն լքելոյ, քանզի մաքրոցն է այս նիւթ պսակաց և պատժապարտիցն (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):*

ՄԱՔՐՈՒՀԻ, ա. գ. Մափրաւէր, մափրակենցաղ կին: *Չըքնաղ մաքրուհի ձկնորսք անդ զեռմամբ ընթացեալ փութան (Քէօմ., 24):*

ՄԵԾԱԻԳՋ, ա. Մեծ իղձ ունեցող: *Մեծաիղձ կարօտի եւ ջանի եւ բազում գանձս ծախելով նորոգեաց զեղեցկաշէն, ի հիմանց մինչեւ ցգազաթ գմբէթին (Գաւրիժ., 267):*

ՄԵԾԱԽԻՐ, ա. Մեծ, նշանատու: *Եկին առ Բաթու, հայր Սարգախին, մեծախիր եւ մօտ ազգական զանին (ՄԺ II, 346):*

ՄԵԾԱՄՕՐՈՒՄ, ա. Մեծ մօրոտով: *Ահա երեւեցաւ ոմն մեծամօրուս ի լեոնակողմէն (Դիւան Մխիթ., 35):*

ՄԵԾԱՊԱՐ, ա. Խոշոր, զանգուա-
ծեղ: *Մեծապար ճամին ի կողմն,
գոր շինեաց Վալիտէ բուլթան
(Քէօմ., 32):*

ՄԵԾԱՎԱՐՁ, ա. Մեծ վարձ՝ ծախս
պահանջող: *Ձկատարուն մեծա-
վարձ իրակութեանս մերոյ առա-
ջադրեցելոյ ի քեզ արկանեմք առ ի
հոգալ կարեկցաբար (Ղուկ. նամ.,
125):*

ՄԵԾԱՏԱԺԱՆ, ա. Տառապալից,
տաժանակիր: *Յոյժ մեծատաժան
գիշեր եղեւ այն ինձ (Կամենից,
148):*

ՄԵԾԱՐԱՆԱԼ, նբ. Մեծաբել, մեծա-
րանի արժանացնել: *Ո՛վ տէր մեր
վարդապետ իմ, ողջունիւ զքեզ մե-
ծարանան (Քէօմ., 4):*

ՄԵԾԱՐԱՐՔ, գ. Իշխաններ, մեծա-
տունեք: *ՀԲԲ ունի մեծարար «մե-
ծագործ»:* *Օլախի մեծարարքն
ստեցին զիւրեանց երդումն (Կամե-
նից, 20): Գլխատեցին գայդ պիղծ
զՏոմշա ընդ նմա եւ զիւր մեծա-
րարքն (Կամենից, 35): Յետոյ եկին
մեծարարքն իւր եւ եպիսկոպոսն
իւրեանց (Կամենից, 42):*

ՄԵԾԵՐԵՍ, ա. Մեծ՝ լայն ետես ունե-
ցող: *Յերկիրն Դիադինու աչօք մե-
րօք տեսեալ աղչիկ մի վեցամեայ,
իբր զկատարեալ երիտասարդ պի-
ղով և մորուսով, մեծերես և լայնա-
սիրտ (ՄԺ I, 285):*

ՄԵԾԻՐԱՊԷՍ, ա. մկ. Մեծ չափով,
խիստ: *Մեծիրապէս - կարի, յոյժ,
սաստիկ, լատ. մահնօփէրէ (Վ.
Յուն., 51):*

ՄԵԾ ՄԱՄ, հրդ. Տառ: *Այս տներս,
որ վերստին շինեցի, թէպէտ փոքր,
ապայ գիտեմք թէ գրոց, թէ բրոց,*

*թէ մեծ մամիս, որ էր Բանաւշայ,
հարցանելով իմացայ (Չ. Ազուլ.,
91): Յիշատակ... մեծ մամուն Կիւ-
չիշէկին (Աղան., 31):*

ՄԵԾ ՊԱՊ, հրդ. Պապ: *Յիշատակ է
մեծ պապուն Կարապետի (Աղան.
Միաբանք, 31): Յիշեցէք... և զմեծ
պապուն Տէր Աստուածատուրին և
կողակցին Խոնդին (Աղան. Միա-
բանք, 455):*

ՄԵՂԱՔԱՆՈՒԹԻԻՆՔ, գ. Վհուկ - որո-
վայնակոչ, մեղաբաւութիւնք (*ՄՄ
2019, 169ա):*

ՄԵՂՈՒԱԿ, գ. Մեղու (փղջ.): *Ձո՞րս
արդեօք հաւաքեցից ծաղիկս մեղ-
ուակս մեղուաշէն (Յ. Կոլոտ, 313):*

ՄԵՂՈՒԱՇԷՆ, ա. Մեղուփ շինած:
*Ձո՞րս արդեօք հաւաքեցից ծաղիկս
մեղուակս մեղուաշէն (Յ. Կոլոտ,
313):*

ՄԵՂՍԱՄԱԿԱՐԹԵԱԼ, ա. Մեղեւորով
լեցում, մեղաագործ: *Ա՛ք մեղսա-
մակարդ «մեղով թաթախուած»:
Ես՝ ամենանուաստ մոլորամիտ և
չարայուշ և բոլորովիմբ մեղսամա-
կարթեալ անձին Սիմէօն խաբեբայի
և ոչ աբեղայի (Հնատիպ, 14):*

ՄԵՂՍԱՏԷՐ, ա. Մեղաց տէ՛ր՝ մեղա-
պարտ: *Մեք մեղսատէր եղաք, մինչ
ըմբռնեցիք զոմանս եւ բերիք մեզ
(Դիւան Միսիթ., 63):*

ՄԵՆԷԿԱԿ, ա. մկ. Միայնակ, ա-
ռանձնացած: *Հարիկ, քանի՞ կե-
նաս մենէկակ ի մէջ օձին (ՈՒՄՀԲ,
84): Կաղօթէ ինք մենէկակ ի մէջ յօ-
ձին (ՈՒՄՀԲ, 86):*

ՄԵՌՈՆԱՇՈՒՇ, գ. Մեռունը պահելու
աման՝ շիշ: *ՀԲԲ մեռոնաշիշ «մե-
ռոնի շիշ»:* *Մուսէլէնց Մարտիրոսն*

եբեր Ա արծաթէ մեռոնաշուշ, Ա պղընծէ բուրվառ (Ակոռ., 211):

ՄԵՐԱՆԱՆՆԵԱՆ, ա. Մեր նախնիներին պատկանող: Տէր Յակոբ կաթողիկոսդ ի գահն հայրապետական և յաթոռն մերանախնեան (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):

ՄԵՐԵԼՈՒԹԻՒՆ, գ. Մահ, վախճան: Վճարի ի կենացս և հրաշալի նշան տեսեալ ի մերելութեան զօրապետին տաճկաց (Ստ. Ռօշքայ, 82):

ՄԵՐԻ,

ՄԷՐԻ, գ. ա. Մշակած, արդիւնաւոր հող (ծան. հրատ.): ՄՀԲ և ՀԲԲ մէրի «անտառ» (իմաստափոխ.): Ինչ որ Դոլիկի տղէն ծիլ ունենայ՝ թէ՛ մերի, թէ՛ խմահատի տեղ, վանքին ըլի (Սանահն., 175): Մեր գեղի գլխի խմահատն տվինք, կէսն բաց, կէսն՝ մէրի (Սանահն., 152):

ՄԵՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆ, գ. Մօտիկութիւն, մօտ լինելը: Հրածարեալ էր ի զինուորութեան անուանէն եւ ի նորին յարգեանցն եւ ի մերձակալութենէ ալլազգեացն (Դաւրիժ., 326):

ՄԵՔ ՔԱՆԻ, դ. Մի քանի: ՄՀԲ մէկ քանի նոյն նշ.: Ի վրա աշացն դիր մեք քանի հեղ շատ օգտէ պալղամէ եղածին (Բունիաթ, 77):

ՄՁՄՁՈՒԿ, ա. Բարակ մագանման թելեր ունեցող, մազվզուկ: Ձկեղեն ծեծեն, զի մզմզուկ է, եւ անտի պարան օլօրեն՝ բարակ եւ հաստ (Սիմ. Լեհ., 233):

ՄԷԿ ԲԵՐԱՆ, մկ. Մեկ անգամ, նաև՝ միաբերան, միասին, տե՛ս նաև ՄԻՆ ԲԵՐԱՆ: Որ կարդաք, մէկ բերան ողորմի ասէք (ԴՀՎ V, 241):

ՄԷԿՆ Ի ՄԷԿԷՆ, մկ. Մէկ առ մէկ: Այոքբիկ են թագաւորք Օսմանցւոց... եւ այս է նոցա զարմն մէկն ի մէկէն մինչեւ ցայսօր ժամանակիս (Դաւրիժ., 431):

ՄԷԿՆ ԼԷ, դ. Մէկն էլ: Ա սահրատոն Հին Լաւոին այ, մին՝ Շէկ բերթն այ, մէկն՝ Լաճվարդն այ, մէկն՝ Ճալէ այ, մէկն լէ՛ ձենայ (Սանահն., 85):

ՄԷԿ ՈՒ ԿԻՍԿԱՆ, մկ. Մէկ ու կէս չափով: ՄՀԲ մէկ ու կէս «մէկի և նրա կէսի չափով»: Մանաւշայ խաթմի մէկ ու կիսկան բաժին ծեծեն ի վրան եսխու անեն (Բունիաթ, 87):

ՄԷԿ ՔԱՆ ՉՄԷԿ, մկ. Մէկը մէկից (չատ): Բերդս այս պարսպաւոր է, եւ մէկ քան զմէկ բարձր աշտարակ (Յ. Կարն., 30):

ՄԷԿ ՔԻՉ, մկ. Մի քիչ: Եւ մեք մէկ քիչ յորդորեցաք զնոսա և մխիթարեցաք որչափ որ մեր կարն էր (Չուար, 1867, 130):

ՄԷՀՄՈՒՆ, գ. Կապիկ: ՄՀԲ մայմուն նոյն նշ.: Շատ կերպ գագան [կայ], և է մայրի, առաւել ֆիլ, առիւծ, քէրկէրտան, մէհմուն (Յ. Թութունջ., 302): Այս 12 աւուր ճանապարհիս շատ կերպ գագան կայ, ևս առաւել ֆիլ, քարքեարդան, մէհմուն, առիւծ (Յ. Թութունջ., 307):

ՄԷՐԵՆԻՔ, գ. Ամուսնացող աղջկան որպէս օժիտ տրուող ինչ՞ տուն, այգի, վարեկահող և այլն: ՄՀԲ մայրենիք «մօրից ստացած ժառանգութիւն»: Ես՝ հոռուումի դուտար Յեղիսէս, իմ մէրենիք դարի արտի կէսն իմ մօր հոգոյն վասուպ

տվի Սուրբ Նախավկային (Կալվաձ., 65):

ՄԷՐՄԷՐ, գ. Մարմար: Ի շար պատուար պարիսպս՝ սրբատաշ մէրմէր գոլէն այն (Քէօմ., 6):

ՄԸԳԱՄ, գ. Մեղեղի, եղանակ: Այս յատուկ իլմ՝ըլ մըսուգուն զարուեստն և զմըգամքն գրեմք, որ է սագն և զգոյնքն սագերաց՝ զթէմպուրն, սէնթուրն և զմուղնին գրեցաք (Տէֆթ., 376): Են գտողք ձայնիք և մըգամացս յառաջ՝ քաղղէացիք (Տէֆթ., 376):

ՄԹՆԱԳԻՇԵՐ, գ. ա. Մուք գիշեր, անքափանց մութ: Ժամանեաց գիշերն ի վերայ, սկսաւ անձրեւ թորիլ եւ լինել սաստիկ մթնագիշեր (Դաւրիժ., 224):

ՄԺԵՌ, գ. ա. Մժեռ - մոռլ և մոռխուղ* (ՄՄ 1528, 2ա):

ՄԻԱԲՆԱԳԱՒԱՆ, ա. Հաւատակից, միաբնակութեանը դաւանակից: Ժամանեացի թուղթ սիրոյ լուսաւորչակրօն եւ միաբնադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս (Ագուլ. կոնդ., 104):

ՄԻԱԶՈՒՆ, ա. Միաբան, համերաշխ: Եւ բաժանելոց են զմիագուն ազգս մեր յիրերաց և պատառելոց են զմեր հօտս Քրիստոսի ի մասունս բազում (Դիւան Ն. Զուղ., 110): Խնայիցէք ի Սուրբ Աթոռս և ի միագուն ազգս մեր (Դիւան Ն. Զուղ., 110):

ՄԻԱՀԵՂՈՒՆ, մկ. ա. Միատեղ, միանուագ: Աբ միահաղոյն «մէկ անգամ»: Միւս պատկերքն նոյն ձայնով միահեղուն ձայնակցին ընդ Գաբրիէլի (Զուար, 1867, 206):

ՄԻԱՀՐԱՄԱՆ, ա. Մէկ հրամանով: Շնորհաբ ամենասուրբ Երրորդութեանն... և միահրաման հաստողին էիցս համայնից (Սանահն., 88):

ՄԻԱՆԿԻ, գ. Նշաձող, մըցաձող: Միանգր - կոչի ձողաձև նիշն, զոր կառուցանեն նասպարիսում, վասն խաղոց ընթացականաց, լատ. մէթա (Վ. Յուն., 52):

ՄԻԱՌՈՐԱԿ, գ. Ռեպինային անուշահոտ խեժ: Միաւորակ, որ է շոր գուկին (ՄՄ 6275, 213բ):

ՄԻԱՓՈՒՆՋ, ա. Մէկ փունջով: Գարնանային ի հովիտս լերանց շրջելով՝ զգեղեցիկս ժողովէ եւ միափունջ կապեցէ (Զեռ. յիշ. Ժէ, 407):

ՄԻԹՐՈՒՅԹՈՒԿ (յուն. metropolites), գ. Մետրոպոլիտ, արքեպիսկոպոս, թեմի առաջնորդ: Աբ ունի մետրապոլիտ, ՄՇԲ մետրապոլիտ նոյն նշ.: Ներս եւ դուրս ազինք իւնանեան... եւ միթրոպոլիդքն ընդ նմայն (Քէօմ., 39):

ՄԻ(Ն)ԱԼԹՈՒՆ (թուրք. binaltun), գ. Հազար ոսկի: Ով որ յետ ու յառաջ տայ ԳձԺԼ յարպետած նզոված ըլի, իր հէգիմին ԺԲ միալթուն (գրչ. մինալթուն) ջառիմայ տայ (Սանահն., 159):

ՄԻՆ ԲԵՐԱՆ, մկ. տե՛ս ՄԷԿ ԲԵՐԱՆ: Օվ հանդիպող գերեզմանի, մին բերան հարմեղ սաի (ԴՉՎ, II, 65):

ՄԻՆ ԳԱՌՆԱԼ, հրդ. Միաւորուել, միանալ: Ասլան փաշէն, որ էր Ախլցիսու փաշէն, յետ Շահնազար խանին յետ մին այ դառած (Զ. Ագուլ., 152):

ՄԻՆԵՐ, տե՛ս ՄՈՆՄԻՆԵՐ:

ՄԻՆԹԱՅԻ, գ. Վալախ. Վալախիայի լեռնային մասը կոչում էր

Մունտենա (Հեռնաստան), այս անունից էլ առաջ է եկել հայկական աղբիւրների Մունտանի, Մինտանի անուանումը (ծան. հրատ.): *Հանդերձեցին ամենայն զօրավարքն եւ զօրագլուխքն զբովանդակ հեծեալքն եւ զհետեակազօրս որպէս զՏաճիկս, նոյնպէս ըզՊողտանիցս, զՄինթացիս (Պատմ. Խոթ., 62):*

ՄԻՆ ՓՈՔՐ, մկ. Մի փոքր, մի փչ: *Մին փոքր լեզուն լեթատ է, և անունն այս մետրապօլիտին Իգնատիոս կու անուանի (Ջուար, 1867, 132):*

ՄԻՆՔ, դ. Մեմֆ: *Մինք մնացինք շուարած և գլուխ ի կոր դառանք (Եզով, 337):*

ՄԻՇՏԱՅԱԿՏ, ա. Մշտապէս, յափտեան: *Ամենազօրն Աստուած անթառամ պսակացն, միշտայաւտ խնդովեանն և ցնծովեանն արասցէ արժանի (Իււան Ն. Ջուղ., 49):*

ՄԻՋԱԲԵՐ, ա. Միջնեկ: *Չմեծամեծ համբարանոցս լիս ցորենովք եւ ամենայն բարովեամբք իբրեւ միջաբեր զաւակի թողի ի ժառանգութիւն սմա (Յիշ. Ուլն., 294):*

ՄԻՋԱԳԵՏ, ա. մկ. Գետի մէջ, միջագետ լինել՝ ընկղմուել գետի մէջ: *Հմմտ. ԱԲ Միջագետք «Նփրատի և Տիգրսի մէջ եղած» (համանուն): Ծնողքն մեծաւ աշխատութեամբ ի գետն անցուցանէին զտղայն և ի վերայ այլոցն դառնային միջագետ եղեալ (ՄԺ I, 183):*

ՄԻՋԱՍԵԻ, ա. Սեւ մաշկ ունեցող: *Ազգ մի կայ ապապտ անուն...*

իւրեանք սաշու են, չլլախ են, միջասե են (Տէֆթ., 461):

ՄԻՄԻՕՆԱՐ (ֆրանս. missionnaire), գ. Քարոզիչ, միսիոներ: *Յոյր սակս պարտաւոր է խորհրդակից լինել զայսմ ամենայնէ ընդ միսիօնար քահանայիցն (Ռեղուր., 265):*

ՄԻՐԻԿ, ա. Միրիկ - հակադարձ, հակառակ (ՄՄ 2281, 135ա):

ՄԻՒՍՈՅ (ֆրանս. monsieur), գ. Պարոն, մայր, տէս նաև ՄՈՒՍԻ: *Եւ տեսաք զՄիւսոյ Թաքիէնն, որ ըզՍախսն փլոյց (Շահմ. յիշ., 318):*

ՄԻՒՍ ՎԱՂՆ, հոդ. Վաղը չէ միւս օրը, յաջորդ օրուանից յետոյ: *Ձթադէլն ի վաղն ձգէին, եւ ի վաղուէն ի միւս վաղն՝ վասն բազում ճանձրութեանցն (Դաւրիժ., 460): Մնացին մինչեւ ի միւս վաղիւն եւ եկեալ բարձին զնոսա (Ջաք. Բ, 23):*

ՄԼԱՋՈՒՄ, գ. Համհարգ, թիկնապահ, ընկերակից: *Պարոն Աւետին շորս հարիւր թումանի թամասուկն տայք խանին մլազումն (Իււան Ն. Ջուղ., 92):*

ՄԿՆՄԻՐՏ, գ. Բագմամեայ խոտաբոյս, Polypogon monspeliensis Dest. բոյսը: *Առ թրպուիթ Բ դրամ, մկնծիրտ կէս դրամ, պօրա Ա դրամ, մաղէ (Բունիաթ, 93):*

ՄՀԱԼ ԳՏՆԵԼ (պարսկ. mohale), գ. Հնար, ճար գտնել: *ՀՖԲ մհալ շանել «յարգամֆ ցոյց շտալ, բանի տեղ շոնել»:* *Ղազախքն շահիսեան դարձան, մհալ գտան, որ Արղուիթեցոնցէ եղբարց ի վերայ միմեանց կոտորեցին (Սանահն., 64):*

ՄՀՏԵՐԵՑԿԻՆ, գ. Մահտեսի երէցի կին, հոգևորականի մահտեսի

կին: Յիշեցէք... զկողակիցն իւր
զՏօլվէթ մհտերեցկինն (Աղան.
Միաբանք, 230):

ՄՂՈՆՈՒԿԷՄ, մկ. Մէկ ու կէս մղոն:
Յայսմ տեղոյս մղոնուկէս հեռի,
դէպ յարևմուտս գոյ աղբիւր մի, որ
ասի աղբիւր կնքեալ, զի ի ներքոյ
երկրի ընթանայ (Պատմ. Երուս.,
1931, 237):

ՄՇՏԱԳԵՂՈՒԹԻՒՆ, գ. Մշտագեղ՝
մշտադպար լինելը: Զմեզ հոգևով
մարմնով կորուսիր / Դրախտ ցան-
կալի մշտագեղութեան / Զպտուղն
կենաց մեզ ի քէն տըւան (ՈՒՄՇԲ II,
119):

ՄՇՏԱԳԻՒՏ, ա. Մշտական, երկա-
րատե: Հոսի ի լեռնէն Պրիտոյ, որ
թարգմանի ցուրտ՝ վասն մշտա-
գիւտ ձեանն (Յիշ. Ուլն., 285):

ՄՇՏԱԺԱՌԱՆԿ, ա. Տիրոջ կողմից
մշտապէս ժառանգած, յախտե-
նական: Տրիտուր եւ փոխարէն
այսր ողորմութեան գմշտաժառանգ
զարքայութիւնն պարգեւէ (Ագուլ.
կոնդ., 101):

ՄՇՏԱՅԻՆ, մկ. Մշտակայ, մշտնջե-
նատր: Միջնորդ շնորհաց ես երկ-
նային / Ամպդ քաղցրահոս եւ մըշ-
տային (ՈՒՄՇԲ II, 81):

ՄՇՏԱՊԱՂԱՏ, ա. Մշտական՝ ան-
դադար պաղատանով: Հանա-
պագ մշտապաղատ եւ սրբանուէր
աղօթիւք կրէր չոգի իւր (Դարբիժ.,
257): Նոքա եկեալ ի միտս մշտա-
պաղատ աղօթիւք... դիմեալ կար-
դային առ այն, որ կարողն էր ապ-
րեցուցանել զնոսա ի վտանգէն
(Դարբիժ., 374):

ՄՇՏԱՏԱՆՋ, ա. Մշտապէս տան-
ջանքներ բերող: Տէրն զանողորման

ի մշտատանջ դժոխն առաքէ (Ա-
գուլ. կոնդ., 101):

ՄՇՏԱՅԱՆԿ, ա. Միշտ ցանկալի:
Զեղում գլխով ազնուամեծար պե-
տութեանդ մշտացանկ նորոգապա-
ճոյճ պայծառութեամբ (Դիւ. Ա.
Յակ., 1941, 200):

ՄՈՂԳՍԻ (արաբ. պարսկ. mohr
«կնիք» բառից), գ. Կնքապահ:
Միւս եւս թուղթ գրեաց Ամիրգու-
նայ խանն առ որդին իւր Թահմազ-
ղուլի խանն, որ հանապազ ի սպա-
սու շահին կայր, զի մոհրդար էր
շահին (Դարբիժ., 202):

ՄՈՄԳՆ, գ. Մոմակալ, աշտանակ:
ՀՅԲ մոմտան նոյն նշ.: Հանին եր-
կու քարէ մոմդան, որ մեծ իւղաբե-
րից մոմ դնեն ի մէջն եւ վառեն
(Դարբիժ., 190): Աստուած արհնէ
Բէրամն՝ Ա մեծ խաչ ետուր Սբ. Յա-
կոբայ, Բ լաւ ատենի մոմդան (Ա-
կոռ., 202):

ՄՈՄԵԱՆԱՅ, գ. Մոմ պատրաստե-
լու արհեստանոց, մոմանոց: Բը-
նակութիւնք միաբանից՝ հանդերձ
տնտեսատունիւ, սեղանատունիւ,
գինետունիւ, մոմխանայիւ և պատ-
րիարքարանիւ է հիւսիսային և
յարևմտեան կողմն վանից (Պատմ.
Երուս., 1931, 277):

ՄՈՆՈՂՈՆԻԿ, գ. Միայնակեաց,
կրօնատր (փղբշ.): ԱՅ մոնոզոնակ
«աբեղուկ», ՄՀԲ և ՀՅԲ մոնոզո-
նակ «փղբշ. Մոնոնզոն-ի»: Աղա-
չեմ յիշել... զիս՝ զեղկելի ծերունիկս՝
զՍարգիս մոնոզոնիկս (Զեռ. յիշ.
Ժէ, 404):

ՄՈՆՍԻՆԵՕՐ (ֆրանս. monseigneur),
գ. Պարոն, տէր, տե՛ս նաև
ՄԻՒՍՈՅ, ՄՈՒՍԻ: Եւ տեսաք մոն-

սինեօր (գրչ. **մինէօր**, **սինեօր**) դօֆինին, որ տղայ է եղեր իւրն (Շահմ. յիշ., 318): **Ջէեթ** վասն լուսոյ և զմի սկուտ շոորհէ վերակացու **մօնսինօրն** (Ստ. Ռօշթայ, 193):

ՄՈՌՆԵԼ, նր. Մոռանալ: ՄՀԲ մոռնալ նոյն նշ.: Աղաչեմք զկնի եկել քերցդ եւ կուսանացդ մի **մոռնել** զերախտիք (ԴՉՎ II, 57):

ՄՈՌՈՆՏԱՆԷՔ, գ. Մեռոն տանելու աման, անօր: Աստուած արհնէ Մուրատէնց Ղազարի որդի Սամուէլ. մէկ մեծ խաչ... Բ պատկեր, մէկ **մոռոնտանէք** երես Սբ. Յակոբայ (Ակոռ., 201):

ՄՈՍԿՈՎՔ, գ. Հայկ. աղբիւրներում յանախ այդպէս էին անուանում ռուսներին: Սահմանակիցք են Ալամանաց եւ Մաճառաց, Պողտանաց եւ Ռուսաց, որ **Մոսկովք** կոչին (Պատմ. Խոթ., 35):

ՄՈՐՄՈՔԱՀԱՐ, ա. Մորմոհուած, վշտահար: Գիշեր ու ցերեկ վասն սուրբ հաւատոյս մեր կային ու խորովին լալոտ աջօր, **մորմօքահար** կու գան, մէկ սարանջամ չեն կարեր գթնուլ (Դիւան ն. Ջուղ., 50):

ՄՈՒԱԴԻՆ (արաբ. պարսկ. mo'adel), մկ. ա. Համարժէք, հաւասար, նման: Թէ դաւի ունէնան, **մուադին** մենք ենք, պարոնտէրին հետ բան շունին (Սանահն., 162):

ՄՈՒ ԱՌ ՄՈՒ, մկ. Մէկ առ մէկ, մասնիկ առ մասիկ: ՀԲԲ ունի մու «մր»: Իհւղինեկիս վասն մահու / Իհւղ եւ հիւթ տարրացելու / Իհւսեալ բանիցս **մու առ մու** / Իիծեալ Գրիգորս Կեսարու (Առ էջմ., 189):

ՄՈՒԺ, գ. ա. Շփոթ (ծան. հրատ.): Աղաչեաց զնա, զի օգնական լիցի նմա այս **մուժ** ժամանակի (Կամենից, 66):

ՄՈՒԽ, գ. Մխախտ: ն. Բիւզ. և ՀԲԲ **մուխ** «ծուլ» (իմաստափոխ.): Խիստ է և բարկասիրտ թագաւորն... զայն նոր ելեալ շար **մուխն**, որ ասի թուլթուն և սև ջրի ըմպելոյ տներն աւերեց (ՄԺ II, 400): Թէ մէկ մի գտնու, որ **մուխ** կամ սև ջուր ըմպեն, ազատելոյ չէ (ՄԺ II, 400):

ՄՈՒՀՐ (արաբ. պարսկ. mohr), գ. Կնիք, դրոշմ: ՄՀԲ մօհր նոյն նշ.: Մէկն մեր մասարն է, որ հայի, թուրքի, խանիշխի մեծամեծաց, **մուհրն** ի վերայ, և մէկն քո մասարն է, որ շահի ուրտումն առնել տուիր (Դիւան ն. Ջուղ., 48):

ՄՈՒԿՏԱՍԻ, գ. Մահտեսի: ն. Բիւզ. մուղտեսի նոյն նշ.: Խաչս մուղտասի Մարտիրոսի. թվին ՌԿէ (ԴՉՎ V, 147):

ՄՈՒՃԱԿԱՐ, գ. Կռչակար: ԱԲ ունի մուճակ «փոքր ոտնաման», ՀԲԲ մուճակակար, մուճակագործ «մուճակ կարող»: Աստ են **մուճակարք** կոչկաց, եւ պտղոցն, որ ի ձիթաստան (Բէօմ., 35):

ՄՈՒՄԱՏԵՂ, գ. Մոմի տեղ, մոմակալ: Ազիգբէկն և Գիրակոսն բերին մէկ ջուխտ շամատան ջոխտակ **մումատեղով**, մէկ արծաթէ գանթեղ (Ակոռ., 203):

ՄՈՒՆԳ, գ. Աղմուկ: ՀԲԲ **մունգ** «յարդի հողախաւն մանրում» (համանուն): **Մունգ** - աղմուկ, շփոթ, դեղձնիկ, փազար (ՄՄ 2281, 135ա):

ՄՈՒՇԱՄԲԱՅ (թուրք. musamba), գ. Մովսիս, մոտով պատած անջրաթափանց շոր: *Յայնմ ժամու պատրիշքն ունէին ընդ ինքեանս յառաջագոյն քսակս կազմեալ ի մոմլաթէ, այսինքն ի մուշամբայէ (Դարիժ., 171):*

ՄՈՒՄԻ գ. Պարոն, տէս ՄԻՒՍՈՅ: *Ի գործս վաճառականութեան ընդ ֆռանկի միոջ մուսի Պօռեկարին (Ե. Մուշ., 128):*

ՄՈՒՐՈՔ, գ. Մօրոմ: *Զմուրդնին կնտած եւ այլոցն ածիլած, փայլան գուգած էր (Սիմ. Լեհ., 72):*

ՄՈՒՐՎԱՐԻՏ, գ. Մուրվարիտ, որ է մարգարիտ (*ՄՄ 6275, 214ա*):

ՄՈՒՆ, գ. ա. Խաւար, միջին: ԱՖ եւ ՀԲԲ *մոեղ, մղեղ «մաղոմի կամ մովսի պէս բան, կայծ, մոխիր, փոշի»*, ՄՀԲ *մոեղ «շատ մանր՝ փոշեման հարդ, մղեղ» (Իմաստափոխ.)*: Մոեղն - խաւար, մառն, ախուրք, խաւարակուրք, թուզմ, արջնաթոյր, խրթնի (*ՄՄ 2281, 135ա*):

ՄՈՂԳԱՅԼ, չր. Մոմոլայ: ԱՖ *մոզգայլիմ «սաստիկ տիսել, կոպ տալ»*: Մոզգայլ - մոմոլայ (*ՄՄ 1528, 2ա*):

ՄՍԱՔԼՈՒՐ, գ. Մսագունդ (հեգնական իմաստով): ՀԲԲ ունի *մսաբլուր «բլուրի մեծութեամբ մսի կտոր»*: էր այդ Մոցոք անձամբն մեծ իբրեւ *գմսաբլուրն Գողիաթ (Կամենից, 35)*: Որպէս երբեմն թագաւորն սուրբն Դաւիթ զանօրէն *գմսաբլուրն գ Գողիաթ (Կամենից, 44)*:

ՄՍԱՍԱՂ, գ. Մսի վաճառանոց՝ խանութ: ՀԲԲ *մսածաղ «մսով պատրաստած ծաղ, մսով կարկանդակ» (համանուն)*: Ոչ գտանէին կերակուր ամենեքեան մարդիք եւ անասունք, զի փակեալ եղեն ամենայն դրունք եւ ամենայն մրքածաղք, *մսածաղք եւ հացածաղք (ՄԺ I, 212)*:

ՄՐԱՔԱՓԵԼ (հայ. մրափել բառից), չր. Նիրհել, ննչել: *Երբ իրիկվնէ եւ մթնի, քունն նեղէ գմարդիկն, որ թմրին եւ մրաթափին (Սիմ. Լեհ., 246)*:

ՄՐԳԱՍԱՆ,

ՄՐՔԱՍԱՂ, գ. 1. Միւրգ վաճառող: *Անդ են հրէից գասապը մրգածախը (Քէօմ., 32)*: 2. Մրգի վաճառանոց՝ խանութ: Ոչ գտանէին կերակուր ամենեքեան մարդիք եւ անասունք, զի փակեալ եղեն ամենայն դրունք եւ ամենայն մրքածաղք, *մսածաղք եւ հացածաղք (ՄԺ I, 212)*:

ՄՐՏԵՒՈՐ ՈՒԹԻՒՆ, գ. Մօսիկութիւն (բոխդ. փոքրաւորութիւն-մօտեւորութիւն): *Մեծաւորաց մօտ փոքրաւորութիւնն կրակի մօտեւորութիւն է (Դիւ. Ս. Յակ., 1941, 126)*:

ՄՐԱԳՈՒԹ, ա. Մօր գուրն ունեցող, գորովագուր: *Սուրբ Տիրամայրն եմք յուսացեալ, զմօրագուլ սուրբ Տիրուհին (ՈՒՄՀԲ, 296)*:

ՄՐՎԱՒՈՐ, ա. Մօրոմաւոր: *Կոփած էր մին կողմն քարէն մեծ եւ մօրվաւոր զՄովսէս մարգարէն (Սիմ. Լեհ., 131)*:

ՅԱԳՈՒՅԱՆԵԼ, նբ. Մխիթարել: ԱԲ յագուցանել «Իրեն յարմարեցնել՝ քաշել, ընտանեցնել» (Իմաստափոխ.): *Յանգուցանել - մխիթարել (ՄՄ 1528, 2բ):*

ՅԱՄԻՆ, գ. Ուշանալը, յապաղելը: *Յամին - յապաղումն, պատճառեցեալ ի կամաց յամողին (Վ. Յուն., 55):*

ՅԱՅԳՈՂ, գ. Այգահող: *Ձկնի պատարագին յաւուրս հինգ յայգող եւ հանդիսական թաղումն արար (Դիւան Մխիթ., 135):*

ՅԱՅՏԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ, գ. Յայտարարութիւն, յայտարարելը՝ յայտնելը: *Սակաւագիծ և սիւղաբան ողջոյն առաք յենթակայի տրակիս, յայտարարողութեամբ գրեմ խոհեմութեան սուրբ հօրդ (Դիւան Ն. Զուղ., 89):*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. Յայտարարութիւն: *Առասուրբին - յայտնարարութիւն (ՄՄ 2019, 171ա):*

ՅԱՆԳՍՏԱԿԱՅՈՒԹԻՒՆ, գ. Հանգըստութիւն, ապահովութիւն: *Մի՛ արգելօղբ լինիցին հոգեւոր հրամանաց... ի յօգուտ եւ յապահով յանգատակացութիւն Սրբոյ Աթոռոյն էջմիածնի (Յիշ. Ուլն., 290):*

ՅԱՆԴԻՄԱՆԱԿՅՈՒԹԻՒՆ, գ. Յանդիման՝ առաջը կից կանգնելը: ԱԲ յանդիմանակացութիւն «1. ներկայութիւն, 2. ցուցումն»: *Յանդիմանակցութիւնս ըստ յաջակողմեանն եւ ի պսակազարգութիւնս ընդ*

սուրբս ամենայն (Ագուլ. կոնգ., 86):

ՅԱՆՁՆԱՌՈՒԿ, ա. Յանձնառու, համաձայն: *Մինչ տակաւին չէի յանձնառուկ, եկին եւ հասին մեծամեծ եպիսկոպոսունք (Յիշ. Ուլն., 289):*

ՅԱՊԱՌԵԼ, չբ. Յապաղել, անհոգանալ: *Յապառեմ - եպերեմ, անհոգանամ և իբր յապառնում ամանակի թողում զջան և զհոգացութիւն իրին առաջադրեցելոյ, երբեմն է՝ անգոսնեմ, առ յոչինչ համարիմ, լատ. նէկլիկօ (Վ. Յուն., 56):*

ՅԱՊՈՎԵԼ, չբ. Ապախնել, ապահով լինել: *Ն. Բիւզ. յապով «յապահով»:* *Այսուհետեւ ամենայն բան քեզանից գիտեմ և քեզ յապովեմ, լան և վատն քո աշացն կու տեսանեմ (Դիւան Ն. Զուղ., 105):*

ՅԱՋԱՊԱՐԵԼ, չբ. Անապարել, շտապել: *Յորժամ կամեսցի հզօր և մեծ թագաւորութիւնդ յաջապարել այսր կամօքն Աստուծոյ (եզով, 316)*

ՅԱՋՈՂԱԲԱՆ, ա. Յաջողակ, կարող: *Աղէկսանդրու եղև նման, Բախտի ծնունդ յաջողաբան (ՈՒՄՇԶ, 22):*

ՅԱՋՈՅԱԿԱԼ, գ. Աշակալ՝ գաւազանակիր: *Սա [էր] աշակերտ Աստուածատուր վարդապետի եւ յաջոցակալ եղիազար վարդապետի (ՄԺ 1, 228):*

ՅԱՌԱՋԱՅՈՐՈՒԹԻՒՆ, գ. Առաջաբան: *Գիրք բժշկութեան տումարի*

իմաստութեան. *յառաջայորութիւն* (Բունհաթ, 59):

ՅԱՌԱՋԵԿԵԼԱԿԱՆ, ա. նախաստեղծ: *Բարութիւն Աստուծոյ ստացեալ լինի ի բանական ստեղծուածոյն, իբրու կատարելութիւն նորա յառաջեղեղական* (ՄՄ 1756, 34ա):

ՅԱՌԱՋԵԼՈՒԾՆ, գ. Առաջացում, ծագում, բխում: *Յաստուածայինն շորք են միայն առնչութիւնք իսկականք՝ հայրութիւն, որդիութիւն, փշումն եւ յառաջելումն* (ՄՄ 1756, 21ա):

ՅԱՏԿԵՂԱԲԱՐ, ա. Յատուկ կերպով: ԱԲ *յատկեղ* «բուն յատուկ իրենը»: *Քոյինապիսի անձին յատկեղաբար պատկանի բանն հանրավիճակ* (Յ. Կոլոտ, 311):

ՅԱՏՈՒԿՏՈՐ, մկ. ա. Հատ-հատ, մէկիկ-մէկիկ: *Յատուկտոր ամենայն ազգս հայոց քրիստոնէից բնաջինջ առնելոյ են* (եզով, 419):

ՅԱՐԱՉՄԱՅԼԱՐԱՐ, ա. Մշտապէս զմայլութիւն՝ հիացմունք բերող, հիանալի: *Մատուցից զողջոյն միարար և սէր յարագմայլարար յոլով կարօտիւ և անյագ տենչմամբ* (Դիւ. Ս. Յակ., 1933, 119):

ՅԱՐԱԻՂ, ա. Յարատեւ իղձ ունեցող: *Տարփալի և յարաիղձ, տատանեալ և յանձկութիւն ի յաշխարհ հեռի, անտես եղբարց սիրելեաց և բարեկամաց* (Ոսկ. նամ., 1967, 133):

ՅԱՐԱԻՇԵՈՂ, գ. Ամենքին յարատեւ իշխող՝ տիեզերակալ: *Յարաիշխող Տիեզերակալի և օգոստափառ արքայից արքայից աստուածասիրի և*

բարեպաշտի... մեծի կայսերոյ Յովսեփայ (Դուկ. նամ., 118):

ՅԱՐԱՆՆԱՄ, ա. Մշտապէս խնամք տանող, փխբ. Աստուած: *Շնորհաւք ամենասուրբ Երրորդութեանն և բարեկորդ, մշտաբուխ, յարախնամ կերտողին* (Սանահն., 88):

ՅԱՐԱԿ, մկ. Միշտ, յարատեւ, հմմտ. ՅԱՐԱԿՈՒՆՈՒԹԻՒՆ: ԱԲ և ՀԲԲ *յարակ* «ա. գ. կպած, կցուած» (համանուն): *Յարակ - մակբայ ժամանակական, ընդ երկարածգութիւն ամանակի, լատ. տի՛ոս* (Վ. Յուն., 55):

ՅԱՐԱԿՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. Տեսողութիւն, երկարատեսութիւն: *Յարակունութիւն - երկարածգութիւն ամանակի. թիւ աւուրց և յոգնամենութիւն տեւելոյ, լատ. տի՛ութունիթաս* (Վ. Յուն., 55):

ՅԱՐԱՀՈՒՊ, ա. Հպուած՝ մօտիկ, կից: Վասն գերեզմանի *Կոզեռ վարդապետին, որ անդ է, այնպէս կոչեն զբլուրն եւ յարահուպ գերեզմանի Կոզեռ վարդապետին* (Դաւրիժ., 258):

ՅԱՐԱՆԳ, մկ. Միշտ, յաւէտ: *Յարանգ - տակաւին, յաւէժ, ցանկ, յարամիշտն* (ՄՄ 2281, 127բ):

ՅԱՐԱՇԱՐԵԼ, նբ. Միակցել: ՀԲԲ և ԱԲ *յարաշար* ած. «խրար կից շարուած, շարայարուած»: *Յարաշարել - յարեւ շողկապել, լեռել* (ՄՄ 2281, 130ա):

ՅԱՐԱՍԱՂԱՐԹ, ա. Մշտադալար: *Յարասաղարթ* բախաբերուն գերկատարուն (Դիւան Միսիթ., 123):

ՅԱՐԱՔԱՐՈՋ, ա. Մշտապէս փառգող: *Ի ձեռն յարաքարոզ բանից սրբազնագործել* (Յ. Կոլոտ, 215):

ՅԱՐԳՈՒՆԵԼ, նր. Հասաատեղ: ԱԲ և ՀԲԲ *յարգուն* «զնով, ընտիր, յարգ ունեցող»: *Յարգունել* - հաստատել (ՄՄ 2019, 174ա):

ՅԱՐԵԿ, գ. Անկում: *Յարեկ* - անկումն, աւարտ, դարումն, անդոյր, անկանուրդ (ՄՄ 2281, 124բ):

ՅԱՐ ՀԱՆԳԷՏ, մկ. Հար և նման: *Ջանայր զուուումն ճոխել ազգիս նախնի սրբոց յար հանգէտ* (Թորգ. Տապան., 176):

ՅԱՐՄԱՐԱՆԿԱՐ, ա. Յարմար՝ գեղեցիկ նկարներով: *Կառուցան մեծամեծ և հոշակաւոր ուխտք... յարմարանկար ձեւաւք և շքեղափայլ տեսեամբ* (Սանահն., 54):

ՅԱՐՄԱՐԱՓՈՅԹ, ա. Յարմարաւէտ գործող, փութաշան: *Յարմարափոյթ* - որ արդ պատրաստեալ է առ ի զիր ինչ առնել թարց յապաղման կամ ծոլութեան, և որ առձեռն պատրաստ գոյ, մինչ խնդրի կամ պիտոյանայ, լատ. *փոս՛միթուս* (Վ. Յուն., 55):

ՅԱՐՊԵՏ, գ. Հայրապետ: *Ով որ դաւ ունէնայ, դաւին հետ Սմպատին ըլի, ով որ յետ ու յառաջ տայ՝ ԳճԺԷ յարպետած նզոված ըլի* (Սանահն., 159):

ՅԱՆԵՂՆՈՒՏԷՐ, գ. Յանելեալ՝ լրացուցիչ պարտի տէր, պարտատուն պահէք, որ սուրբ Աթոռոյզ գատ յաւելնուտէր մի արասցէ (Կտակ Յակ., 330):

ՅԱՆՏԱՊԱՏՈՒԹ, ա. Յաւէտ պատմելի, յաւերժական: *Յնծալ քեզ յարժամ օրիորդացեալ մանկամբք*

Սիրնի ի խնամս Տեանն Յիսուսի յաւետապատում բերկրանօք (Գիւ. Ս. Յակ., 1941, 157):

ՅԱԻՏՏՆԹԱՅ, ա. Միշտ ընթացող, մշտագնայ: *Եւ զկարկաշահոս ծիծաղախիտ յաւետընթաց յառաջախաղաց վտակս շուրցն* (Դաւրիժ., 87):

ՅԱՓԿՑԻ, մկ. Ափով, ձեռնով: *Այլք յափկցի փորէին զաւազն, ուստի շող եւ կանաչ շուր ելանէր, որ մարդ հայելու շուզէր* (Սիմ. Լեհ., 242):

ՅԵՒ ՄՆԱԼ, հրդ. Ուշանալ, յապաղել: *Ի ճանապարհն որ երթայինք, այն ինչ յեղ մնար՝ սպանէին* (Նըշխարք, 7):

ՅԵԹԻՄ, գ. Որք: *Ջանում, եղբարք, ձեր յեթիմէ, էտ հասակաւ ձեզ աղի մեր, վեր Աստուած ունի, վայր՝ ձեզ* (Գիւան Ն. Ջուղ., 50):

ՅԵՍԱԻՈՒԼ (պարսկ. բուրբ. yasavol «ուղեկցող ձիատր»), գ. Պահակային զինուոր, ուղեկցող: *Ես՝ հուցի որդի Ամիրխանս, որ մին յեսաւոյն ես ի, վկայ եմ* (Սանահն., 150):

ՅԵՏՆԱԳԱՅ, գ. Յետագայում եկող, յետագայ սերունդ, հմմտ. ԵՏՆԱՄՆԱՅ: *Ով որք ի յայտու ուխտադրութեանս այլ և այլ արասցէ և փոփոխեսցէ, թէ՛ մեր և թէ՛ յետնագայքն մեր, նզովեալ եղիցի ի յԱստուծոյ* (Գիւան Ն. Ջուղ., 100):

ՅԵՏՆՈՒՑ, մկ. Կէսօրուայ եւ երեկոյի միջև (ծան. հրատ.), հետմիջօրէ: *ՀԲԲ յետնուց «ետեկց»* (իմաստափոխ.): *Տասնում օրն եր-*

- կուշաբթի՝ **յեանուց** մօտ Թէքրիտա-
դի հասար (Զուար, 1867, 130):
- ՅԵՏՈՎ**, մկ. Յետոյ: Մինչի ԺԴ ամիս
այս կոհւս կայր, **յետով** բարիշեցին
(Զ. Ագուլ., 78):
- ՅԵՓՈՐ**, կ. Երբ, երբ որ: **Յեփոր...** գը-
գոն (կը գան) և շենութիւն կու
գձեն մեծ ինփրայթօսին (եգով,
406):
- ՅԻՎԱՅՏԵՂ**, գ. Այգետեղ, այգի: ՄՀԲ
այգետեղ նոյն նշ.: Այլլի յետ տվինք
յիգայտեղն իր Դ կոպարովն, մեր
ճանճանոցովն (Սանահն., 140):
- ՅԻՂՓ**, ա. Յղփացած՝ յագեցած: Իբ-
րև գնացաք առ ինքն խոնարհօրէն,
գտաք զինքն յագ և **յիղփ** և անօթք
սեղանոյն ի հաւաքումն (Դիւ. Ս.
Յակ., 1932, 253):
- ՅԻՄՆ ԳՁԵԼ / ՁԳԵԼ**, հրդ. Հիմնար-
կել, հիմնարկել կատարել: Յին ե-
կեղեցին վեր կալան, **յիմն գձեցին**
քարով, կրով, ֆուրդատանայ ուս-
տայ բէրին (Զ. Ագուլ., 96): Աքու-
լայ բազարումն յարաւայի (հարա-
ւային) կողմն մին քարվանսարայ
յիմն ձգեց՝ դուգան, բազար շինե՛
(Զ. Ագուլ., 149):
- ՅԻՆՔՆ ՔԱՇԵԼ**, հրդ. Ներս փաշել՝
ներծծուել: ՀԲԲ **յինքնքարշումն**
«դէպի ինքն փաշելը՝ ձգելը»: Ձմէկ
ալ դին ի **յինքն քաշե** և շորութիւն ի
յանձն լինի (Բունիթ, 73):
- ՅԻՍՈՒՍԱԿԻՐ**, ա. Յիսուսին կրող,
հաւատաւոր: Դարձեալ կրկին ան-
գամ գեկուզումն լիցի ներկայիս ա-
պառնեաց սրբայնուէր և **յիսուսա-
կիր անձանց** (Սանահն., 117):
- ՅԻՍՈՒՍԱՍԱՏԱՐ**, ա. Յիսուսի սա-
տարումն ունեցող: Հասցէ գիր

- աւրհնութեան... ճոխափառ և պեր-
ճապաճոյճ, տեառնազար և **յիսու-
սասատար** ազատորդացդ (Սա-
նահն., 90):
- ՅԻՐՈՒՐ**, դ. Իրար: Բ մթիսալ աղվես-
տօսի աղ, Զ մթիսալ նարինճի շուր
խառնէ **յիրուր** և քսէ՝ օգտէ (Բու-
նիթ, 112):
- ՅՈԳՆԱԲՈՅԼ**, ա. Բազմաբոյլ, մեծա-
թիւ: Թէ աստուածապարգև մեծու-
թեամբ և **յոգնաբոյլ** իշխանացդ ճո-
խութեամբ ոչ զօրացաւ լնանիլ կո-
կորդ այլաձայնից (Դիւ. Ս. Յակ.,
1941, 200):
- ՅՈԳՆԱԳՆԱՅ**, ա. Շատ գնացած,
հոսած: Ընդ բազմաժամանակեայ
գօրոյն և **յոգնագնաց** հեղեղացն
քակեալ և փրկիկեալ էր հիմն (Սա-
նահն., 119):
- ՅՈԳՆԱՄԱՆԱԿԵՐՏ**, ա. Մեծ ծախ-
սով կառուցուած, թանկագին: Ի
մի վայր կողոպտէին լրապէս տա-
պալմամբ ամենայն շինուածոց
զկառուցմունս, այսինքն բարձրա-
բերձ աշտարակաց... **յոգնածախա-
կերտ** ապարանից եւ տանց (Դաւ-
րիժ., 426):
- ՅՈԳՆԱՀՐԱՇ**, ա. Բազմաթիւ հրաշ-
մեր գործող: Հոգետած շնորհօք և
զօրութեամբք և նոյնամուխ արիւ-
նաներկ սրբոյ Գեղարդեանն և **յոգ-
նահրաշ** սրբոյ տեղոյս իջմանն Նո-
րին (Ղուկ. նամ., 117):
- ՅՈԳՆԱՅԱՐԳ**, ա. Մեծայարգ: Խընդ-
րանօք եւ ծախիւք տեառն Յարու-
թեան **յոգնայարգ** վարդապետի (Յ.
Կողոտ, 136):
- ՅՈԳՆԱՇԵՍԱՏ**, ա. Մեծ աշխատանք
պահանջող, աշխատատար, յոգ-

նեցնող: Ես այսու դիտաւորութեամբ եւ յուսով յանձն առի զայսպիսի յոգնաշխատ եւ զբազմաերկ եւ զտաժանելի գործս (Դարիժ., 502): Հարցանեմք զորպիսութենէդ քունմէ, զճանապարհի յոգնաշխատ կրիցն և զաշխատանացն (Իլւ. Ս. Յակ., 1941, 41):

ՅՈԳՆԱԶԱՀԵԱՆ, ա. Բազմաթիւ՝ բազմատեսակ ջահերով: Զարդարեալ և շքեղացուցեալ է [վանքն Ս. Յակոբեանց]... բազմաթիւ կանթեղօք, յոգնաջահեան աշտանակօք, ծաղկանկարք ծածկոցօք (Պատմ. երուս., 1931, 275):

ՅՈԳՆԱՎԻՇՏ, ա. Մեծ վիշտ ունեցող: Որդիաբար համարձակեալ հարցանեմք զորպիսութիւն վեհիգ և ի յոգնավիշտ և ի դառնակենցաղ կրիցդ (Իլւ. Ս. Յակ., 1941, 201):

ՅՈԳՆԵՐԱԽՏ, ա. Բազմերախտ, շնորհապարտ: Յաջորդ սրբազան առաքելոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի և նոցին փոխանորդի՝ յոգներախտ Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի (Ղուկ. նամ., 117): Լեալ հեղինակ բազում գրեանց ազգիս մերոյ / Պայծառացաւ յոգներախտիք այրլս յարգոյ (Թորգ. Տապան., 174):

ՅՈԳՆԵՐԱՆԳ, ա. Բազմազոյն երանգներով, գոյնզգոյն: ՀԳԻ յոգներանկ նոյն նշ.: Զարդարել... մէկ մագաղաթ Աստուածաշունչ ոսկեակար եւ յոգներանգ ծաղկաւք (Թորոս աղբար, 406):

ՅՈԳՆԻՇԵԱՆ, ա. Յոգնիշխան - ամենակալ (ՄՄ 2019, 174ա):

ՅՈԳՆՈՐԱԿ, ա. Բազում՝ տարբեր որակներ ունեցող, բազմատեսակ: ԱԲ և ՀԲԲ յոգնորակական «շատ կերպ»: Իրք զարհուրականք եւ տեսութիւնք երկիւղալիք, ձայնք սաստկաբեղունք եւ ճայթմունք յոգնորակք (գրչ. յոքնաորակք) (Դարիժ., 425):

ՅՈՒՈՎԱԻՂՁ, ա. Մեծ ցանկութեամբ, իղձով: Յոյովաիղձ և յոգնատենչ բաղձանօք երեսս ի գետնի եղեալ համբուրմամբ ոտից քոց ներբանս մատուցանեմ (Ոսկ. նամ., 1966, 293):

ՅՈՒՈՎԱԾԱՆ, ա. Բազմաձախ, ձախաստար: Ի բազում տեղիս շինեցան յոյովաձախ ընչիւք գեղեցկաշէն և գմբէթատր եկեղեցիք Քրիստոսի (Սանահն., 52):

ՅՈՒՈՎԱԿՆԵԱՆ, ա. Շատ աչիւր՝ կամարներ ունեցող (կամուրջ), տէս նաև ԱԶԿ: Ի աղմուկ տեղիս կամարակապ բազմաձախ վիմաշէն յոյովակնեան կամուրջս (Սիմ. Լեհ., 148):

ՅՈՒՈՎԱՍԱԺԱՆ, ա. Տաժանակիր, մեծ տանջանքով: Բազմաջան երկամբ և յոյովատաժան կրիւք նորոգեցաք վերստին ապառաժ և անհեթեթ վիմօք և բռամած պնդութեամբ (Սանահն., 119):

ՅՈՅԺՈՅԺ, մկ. Սաստիկ շատ: Տեսաք ծառս անլուր եւ անտես պտուղս, իսկ թուրինճ եւ նարինճն յոյժ յոյժ (գրչ. յոյժոյժ) (Սիմ. Լեհ., 311):

ՅՈՏՆԱԶԱՓ, գ. ա. Ուսանաւոր, շափածոյ: ԱԲ ոտնաշափ «ոտափ բնական շափ» (իմաստափոխ.): Տաղաշափական արհեստիւ շինեալ

իբրու յոտնաչափ գեղեցիկ գունով (Գալ. Կենս., 161):

ՅՈՏՔԻ ՀԱՆՆԵԼ, հռդ. Ռաֆի համել՝ աւարտել: Թուրին ՌՁ (1557) Կեղեցի Ղուկաս վարդապետն գտումարն ի յոտքն հանեց (Մանր ժամ. II, 393):

ՅՈՐԳԱԿԱՆ (բնատ.), ա. Յորդ: Մինչ փորէին՝ շատանայր, եւ քան զեւ սկսաւ յորդական (Քէօմ., 34):

ՅՈՐԳԱՋԱՆ, ա. Բազմաջատ տքնութեամբ. յորդաջան աշխատութեամբ եւ յոյով խարձագնացութեամբ ետու շինել (Մժ I, 311):

ՅՈՐԳԸՆԹԱՅ, ա. Յորդ ընթացք ունեցող: Յորդընթաց գետով եւ թեկնաթեկ հեզաքայլ առուի՝ ոլորտախաղացեալ առ հարաւով (Յ. Կոլոտ, 205):

ՅՈՐՁԱՊՏՈՅՏ, ա. Փոփոխական եւ խրթին (խօսք), յորդառատ (ջուր): Յորձապտոյտ - նշանակէ զշրջաբերմունս և զխոթնածութիւնս բանից, և եւ զճանապարհ և զշաւիղս մանեմանս, և յատկապես առնանի վասն ջրոյ (Վ. Յուն., 56):

(Յ)ՈՐՍԱԳԱՀ, գ. Որսատեղ, տե՛ս ՀՈՐՍԱԳԱՀ:

ՅՈՐԿՅԱՆՄԱՆ, ա. Յոպայի՝ մատնիչի նման: Մատնեցին զիս արք շորս յուգայանման (Գալ. Կենս., 164):

ՅՈՐԺ ԶԳԵԼ, հռդ. Նեղը գցել: Պաշարեաց զքաղաքն և զբերդն և ի յուժ ձգել կարմիր գլխին. թողին զքաղաքն և ամրացան ի բերդն (Դիւան ժ, 24):

ՅՈՒՆԻԱ (լատ. unia), գ. Միաբանութիւն, միութիւն: Ժողովք բազում լեալ էին վասն Իլախից եւ

Լիզվայի երկրին միաբանութեան, այսպիսի է որ կոչի յունիա (Կամենից, 38):

ՅՈՒՌՈՒՍ, գ. Ռուս, տե՛ս նաև ԸՌՌՍ, ՌՌՍ, ՕՌՌՍ: Թվին ՌԿե... գիշեր կիրակուս, ազգն յուռուս կոխեց Կաֆան և աւիրեց բազում տեղի (Մժ I, 208): Թվին ՌԿՁ էր, ժ խատրըղա յուռուսին վրա գնաց Մէմի փաշան (Մժ I, 208):

ՅՈՒՍԱԿՏՈՐ, ա. Յոյսը կտրած, յուսահատ: ՀԲԲ յուսակտոր ւած. մկ. «յոյսը կտրած, յոյսը հատած, յուսակորոյս»: Նոքա էլ յուսակտոր եղեալ՝ ով գիտէ ինչ կու դառնան (Եզով, 372):

ՅՈՒՍԱՊԻԿԵԼ, չր. Յոսատուել, գոտեպնդել: Այսոքիւք համբաւովք առաւել ևս յուսապնդիմք, թէ զխնդիրս մեր ո՛չ անտես առնիցես (Ղուկ. նամ., 125):

ՅՈՒՍԱՅՈՂՈՒԹԻՒՆ, գ. Յոյս ունենալը: Յուսացողութիւն - կարծիք իմն իսկադիր և յոյս՝ յղացեալ զինքենէ կամ զայլմէ, ի կիր արկանի մերթ ի կողմն չար և մերթ ի բարի, լատ. ֆիտուցիա (Վ. Յուն., 56):

ՅՈՒՍԱՆՈՐԵԼ, նբ. Յոյս տալ: Այսոքիկ առաւել ևս յուսաւորեն մեզ՝ խնդրել ի բարեպաշտութենէ ձերմէ (Ղուկ. նամ., 121):

ՅՈՒԱԹՈՒԶ, ա. Օղով թոչող: Մեծ շնորհակալութիւն ունիմք հաւոց մեծի յօղաթոխ արծվիտ մերոց պարծանաց (Եզով, 139):

ՅՈՒՄԱՆԱԿԱՆ, ա. Օսմանական: Առաքեաց ի վերայ Սիմոնին յառնուլ զվրէժ յանարգանաց եւ ա-

րեան յօթնանական եւ իսմայէլական գնդին (ՄԺ II, 248):

ՅՕՐԻՆԱԿԵՐՏԵԱԼ, ա. Գեղեցիկ յօրինուածով կերտուած, ստեղծ-

ուած: Ի կարմրագոյն քարանց յօրինակերտեալ տաճար շքնաղ (Գալ. Կենս., 161):

-Ն-

ՆԱԶԱՐԷԹ (իտալ. lazaretto «զգուշարան՝ կարանտին տարափոխիկ հիւանդոսփիւնների դէմ»), ծան. հրատ.), գ. Զինուորական հիւանդանոց, լազարէթ: Վասն գօրացն, որ կան, եւս նազարէթ սահմանեալ են, զի Գ նազարէթն բաւէ, զոր կրեցեր (Իրևան Մխիթ., 109):

ՆԱԹԻԱՍ (վրաց. natsavi «ազգական, տոհմակից»), գ. Մերձաւոր, ազգակից: Իսկ որ իմ նաթիասու մնայ, յետ իմոց չունի հրաման, որ գայս ինչ վախմս կտրէ Աստուածածնի դռնէն (Սանահն., 225):

ՆԱԹԼԻՍ, գ. Սաղափի՝ մարգարտաբեր խեցեմորթու մի տեսակ: Նաթլիս, որ սատաֆին ցեղերուն է, որ փոքր է (ՄՄ 6275, 216բ):

ՆԱԼԲԱՆԳՆՈՅ,

ՆԱԼՊԱՆՏՆՈՅ (պարսկ. nal+band «դարբին»), գ. Դարբնոց: Կապեալ շրջեցուցանէին գՄիրուն, բերեալ հասուցին ի նալբանդնոցի (գրչ. նալպանտնոց) շուկայն (Դարբի., 413):

ՆԱՆԱԿԱՅԱՅԵԱԼ, ա. Նախապէս կայացած՝ եղած: Ստեղծագործել ոչ այլ ինչ է, քան թէ յառաջածել (ստեղծել) իր ինչ առանց նախա-

կայացեալ նիւթոյ (ՄՄ 1756, 160ա):

ՆԱՆԱՆԿԱՏԵԼ, նր. Կանխաւ նկատել, զգալ: ԱՖ և ՀՖՖ նախանկատ «առաջուց դիտած, միաժը դրած»: Գործ բանականութեան է՝ նախանկատելն զձախորդութիւնս և ի հանդիպիլն նոցին ըմբերել երկայնմտութեամբ (Նոր. ծաղ., 209):

ՆԱՆԱՌԱՔԵԼ, նր. Նախօրօք առաքել՝ ուղարկել: Գնալոց էր ի Պանիլովայ, առ սահմանաւն Մօլտաւիոյ, ուր նախառաքեցեալք էին գոյք եկեղեցւոյ (Կամենից, 156):

ՆԱՂՇԱՆԿԱՐ, ա. Նախշազարդ: Քարինք հիւսեալք նաղշանկարք / Կէս գիշերուն ձայն հանեցին / Խօրողխօսուն թրատեցին (ՌԻՄԶԲ II, 314):

ՆԱՅՆԺԱՄ, մկ. Այնժամ: Նայնժամ նոքա, որք կեալք էին, հարեալ խորտակեցին զգուռն եկեղեցւոյն (Դարբի., 302):

ՆԱՐԳԵԱՆՍ,

ՆԱՐԳԵՆԻՍ, մկ. Այժմ, ներկայումս: Բայց նարդեանս այսու աղագաւ գրեմ, զի ծանիցէ սուրբ ժողովդ զգալ մեր յայս կողմս (Ռսկ. նամ. 1966, 297): Դեսպանք այլոց ար-

քայից եւ զմնացեալսն նարդենիս (Քէօմ., 3):

ՆԱՐՏՎԱՆ, գ. Սանդրուղ: Այն տեղէն գնացաք ի պախշան. առաջին նարտվանն կայր ե հավուզ ջրով (Շահմ. յիշ., 316):

ՆԱՅՎԱԼ (վրաց. naevali), գ. Փոխանորդ, տեղապահ: Ես՝ Սարգիս ե պիսկոպոս գրեցի, այս բանիս վկայ եմ, Աստուած վկայ է. պարոն Մարիամ Դէղըփալի նացվալն ափխագս վկայ. Ավթանդիլի նացվալ Կիպրիէն վկայ (Սանահն., 226):

ՆԱԻԱԶԱԿ, գ. Նալի աագակ՝ ծովահէն (ամփոփում նաւագ եւ աւագակ բառերի): Վաճառականք ե այլք ի ձեռս նաւագակաց անկեալք, յետոյ ի Պտղոմայիդայ հասին (Ստ. Ռօշքայ, 136):

ՆԱԻԱԶՕՐ, գ. Նաւատորմ: Իսկ նաւագօրն Հենրիկի կայսերն յաջողապէս ի Պտղոմայիտ եհաս (Ստ. Ռօշքայ, 126):

ՆԱԻԱԿԻՏՐ, գ. Զկան տեսակ: Նաւակիտր - տեսակ իմն փոքեր ձկան, զորմէ ճառեն արգելուզ զնան ի գնացից յենմամբ եւթ իւրով ի նա, լատ. ոէմօռա (Վ. Յուն., 57):

ՆԱԻԱՂՈՅԳ, գ. Նալը վարող, նաւապետ, տե՛ս նաև ՆԱԻԿՈՅՈՍ: Աբ ունի նաւաղօղակ «նաւով լողացող՝ ճամբայ ընող»: Նաւաղոյղ - ղեկավար, նաւապետ (ՄՄ 2281, էջ 135բ):

ՆԱԻԱՏԵՂ, գ. Նաւերի տեղ՝ նաւամատոյց: Եկեալ ի նաւատեղն Դարաշամբայ գեղջն եւ նաւով անցեալ գգետն Երասիս (Դաւրիժ., 207):

ՆԱԻԿՈՅՈՍ, գ. Նաւապետ, տե՛ս նաև ՆԱԻԱՂՈՅԳ: Նակոոս - ղեկավար, նաւուղղիչ (ՄՄ 2281, 125ա):

ՆԱԻՈՒՂՂԻԶ, գ. Ղեկավար, նաւապետ: ՀԲԲ ե ԱԲ նաւուղղակ «նաւուղղ», վերջինս է՛լ «նալի գնացիմն ուղղութիւն տուող, ղեկավար»: Նաւուղղիչ - ղեկավար, նաւուղոս (ՄՄ 2281, 125ա):

ՆԵՆԳՎՈՏՈՒԹԻՒՆ, գ. Նենգուրթիւն, խաբերայութիւն: ԱԲ ե ՀԲԲ նենգեժոտ «խորամանկ, չարիք ընելու վարպետ»: Ո՛չ գիտէին Ջուղայեցիքն... զօձաբարոյ նենգժոտութիւն ազգին Պարսից (Դաւրիժ., 97):

ՆԵՐԶԻՆՈՒՈՐԵՅԵԱԼ, ա. Զինուորագրուած: Լուսաւորշաշաւիղ, քրիստոսագգած լուսերամիցց եւ դոցին ներգինուորեցելոց ի Տէր սրբոց եկեղեցեաց (Ագուլ. կոնդ., 84):

ՆԵՐԷՈՒԹԻՒՆ, գ. Ներէութիւն - էականութիւն (ՄՄ 2019, 174ա):

ՆԵՐՆԵՎԱԼԵԼ, նբ. Հոգում, սրտում ընկալել՝ ընդունել: Գիր մեր հոգևորական հրամանի արհնութեան՝ ներընկալեալ ի պարգևաց նորին (Սանահն., 94):

ՆԵՐՈՒՆՔ, գ. Սկիզբ, սերունդ: Ներունք - սկիզբն, սերմն, աշխարհք, զարմք, դեկնոս (ՄՄ 2281, 125ա):

ՆԵՐՍՈՒՆԱՊԵՍ, ա. Անձնական, ինտիմ: Ներսունապէս - կարի իմն ներքսապէս ե իբր յեցեալ ի սրտում՝ թէ՛ սիրով, թէ՛ խորհրդով ե թէ՛ այլովք իրօք, լատ. ինթիմէ (Վ. Յուն., 58):

ՆԵՐՍՅԻ, գ. Քաղափի ներսի բնակիչ: *Ներսիք հայնակ չի գիտեն, միայն տաճկնակ, ֆարսի (Միմ. Լեհ., 326):*

ՆԵՐՔԱՆԴԱԿԵԱԼ, ա. Ներսում՝ արտում ֆանդակում՝ դաջում: *Լուիջի՛ք որդիական սիրով եւ ներքանդակեալ ծրարեսչի՛ք ներ սիրարանի սրտի ձերում զսրբալոյս զաւանդութիւնս զայս (Ագուլ. կոնդ., 90):*

ՆԵՐՔԵՆԻ, գ. Ներքինի: *Թվին Ռեխէ ել ոմն զօրավար ներքենի Զաֆար փաշայ անուն ի յարեւելս (ՄԺ II, 356):* Հրամայեաց կամ դառնալ ի պիղծ օրէնն Մահմեդի եւ կամ զամենեսեան *ներքենիս* առնել (*ՄԺ II, 381*):

ՆԵՐՔՆԱԳՈՐԾ, ա. Ներքուստ գործած, գաղտնի: *Ոմանք ասացին պատճառ զծածուկ ներքնագործ հնարակերտութիւն Մելքիսէթ կաթողիկոսին (Դարբիժ., 193):*

ՆԵՐՔՆՈՅ, մկ. Ներսից, ներսի կողմից: *Ի մէջ այսմ կամարացս եթէ ի ներքնոցն և եթէ վերնոցն կախեալ գոն աւելի քան զԳձ կանթեղս, որ յաւուր տօնախմբութեանց լուսաւորին ամէնքն (Պատմ. երուս., 1931, 339):*

ՆԷՄԻՇ (հունգ. nemcs), գ. Ազնուական: *Կան երնան շատ տուն նէմիշներ, որոնցմէ պէտք է փրնտրելու, օր ցըցնուն (Գովբ., 197):*

ՆԷՄՅԱ, գ. Գերմանացի: *Թվոյն 1696 յօգոստոսի ամսոյ 20 պատերազմեցան նէմցան ու թուրքն, եւ էր նէմցայու սէրագգէրն քուր-*

վիրշոն Սաբան (ՄԺ II, 404): *Նէմցայու ազնն առա Պուտիմ ի Թուրքէն (ՄԺ II, 405):*

ՆԻԻԹՕՐԷՆ, ա. Ասարկայօրէն: *Սըտութիւն ասի եռակի, այսինքն՝ նիւթօրէն, որ է սուտ ասացեալն, տեսակաբար, որ է կամք սուտ ծանուցանելոյ... (ՄՄ 1756, 161բ):*

ՆՄԱՆԱԿԵՐՏ, գ. Նմանութեամբ կերտուած, մոդել: *Նմանակերտ - պատկեր ինչ կազմեցեալ ըստ նմանութեան իրի ուրուք, լատ. սիմուլաքոում (Վ. Յուն., 58):*

ՆՇԱՆԱԲԵՐ, գ. Նշան բերող, նշան կրող (մականուն): *ՀԲԲ նշանաբեր «նշանի մատամին և նշանի ուտելելինը բերող»:* *Ի սէր սրբոյ նշանիս կոչեցի զսուր նշանաբերն (Յիշ. Ուլն., 291):*

ՆՇԱՆԱՌ, գ. Նշան, ժեստ: *Նշանառ - ցուցակ իմն և նշան արհամարհանաց, որ լինի ի շարժառոցելոց ձեռին, շրջածութեամբ աշաց կամ առոցմամբ այլոց անդամոց (Վ. Յուն., 58):*

ՆՇԽԱՐԱԼԻ, ա. Նշխարով լի, նշխար պարունակող: *Խորագոյն փորեալ զգերեզմանն եզին գնշխարալի տապանն ի մէջ գերեզմանին (Դարբիժ., 172):* *Եւ առեալ բերին գնշխարալի սնդուկն առ քաղաքապետն (Դարբիժ., 173):*

ՆՇԽԱՐԱՆՈՒՅ, գ. Խուց, ուր պանտմ է նշխարը: *Ն. Բիւզ. նշխարախուց «նշխարատուն»:* *Ես՝ Սարգիս եպիսկոպոսս, նորոգեցի... զանկակատունն, զՍուրբ Գրիգորն*

և զնըշխարախուցն (Սանահն., 112):

ՆՈԿԱՐ,

ՆՈԿԷՐ (պրսկ. novkar), գ. Ծառա, նոխար (բրբ.): Հազիւ հօս եկին Խանդամուրն ու Շահսուվարն... Մուստաֆա մոզանին գլուխն կտրեցին քովի մէկ նոկէրովն (ՄԺ I, 215): Մոզան ու նոկարըն ան հատաղան սպաննեցին (ՄԺ I, 215):

ՆՈՅՆԱԶՕՐ, ա. Նոյն զօրութիւնն ունեցող, հաւասարագօր: Գթութիւն եւ ողորմութիւն ի նորին իսկակից Բանին էականի նոյնազօրի (Ազոյ. կոնդ., 85):

ՆՈՅՆԱԿԱՐԳ, ա. Նոյն կարգն ունեցող, նոյնատեսակ: Յորժամ ելօղ եւ նա, յորմէ ելանէ իր՝ են համաբուն, հարկ է զի իցեն նոյնակարգ եւ ունիցին զառընչութիւնս իսկականս (ՄՄ 1756, 21ա):

ՆՈՅՆԱՄՈՒԽ, ա. Նոյն զօրութեամբ մխտած՝ մխրճուած: Հանրակեցոյց ողորմութեամբ և պահպանութեամբ... այլ և հոգետած շնորհօք և զօրութեամբք և նոյնամուխ արինաներկ սրբոյ Գեղարդեանն, և յոզնահրաշ սրբոյ տեղուոյս իշմանն նորին (Ղուկ. նամ., 117):

ՆՈՎ, գ. Աղբիւր գոտի վրայ: Յիշատակ է նովս Ամիրճանին, Արբխանին, Ախիճանին, Թվին ՌՃԻ (ԴՂՎ V, 226):

ՆՈՏՐՈՂ, գ. Գրող, գրչագրող: Յոհան դպիրս Կամենցոյ նոտրող սորա աղաչեմ յիշէք ի Տէր (Աղան. Միաբանք, 237):

ՆՈՐԱԺԱՄԱՆ,

ՆՈՐԱԺԱՄԱՅՆ, ա. 1. Նոր ժամանած դարձի եկած: Ոմանք ի նորաժամայն (գրչ. նորաժաման) զաւակացն քրիստոնէից... դարձան եւ տակաւին եւս դառնան յանօրէն օրէնս Մահմետի (Դարիժ., 95): Զորոյ զհրաշագործութիւնս տեսանելով՝ նորաժաման (գրչ. նորաժամայն) զաւակաց մերոց մնան ի հաւատս քրիստոսական (Դարիժ., 262): 2. Դեռատի, պատանի: Զերեսին որդիսն իւր, որք էին նորաժամայն (գրչ. նորաժամայնք) տղայք, առաքեաց առաջի շահին (Դարիժ., 188):

ՆՈՐԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ, գ. Նոր կառուցելը, հիմնելը կամ նորոգելը: Գնացեալ էր ի յարքայանիստ քաղաքն Կ. Պալիս յաղագս վանուցն նորակերտութեան (Թորոս աղբար, 405):

ՆՈՐԱՅԱՐՄԱՐ, ա. Նոր յարմարեցուած՝ ստեղծուած: Զոր ինչ գրեցաւ ի պատուական նորայարմար Տօմարիս իմ վասն դեռակիրթ և խակավարժ մերազնեայ մանկանց (Տէֆթ., 318):

ՆՈՐԱՓՈՅՅԼ, ա. Նոր կամ նորովի փայլող՝ նորոգուած, կառուցած: Ահ նորափայլակ «նոր փայլած»: Յայտ լիցի յարգելութեանդ քում, որ ի վաղուց հետէ ունէի ի միտս իմ առ ի յայց առնել զնորափայլ զեկեղեցին (Գալ. Կենս., 270):

ՆՈՐԳ, գ. Նորատունկ այգի, նորբ: Զմեր տնկած նորգն վախմ տվաք Սանահնու Սուրբ Աստուածածինին (Սանահն., 139):

ՆՈՐԵԱԿ, ա. նոր (փղֆշ.), նորապակ: Այս է տապան Կորջու որդի Սարգիսին, որ է նորեակ թաքաւոր էր (ԴՆՎ II, 65):

ՆՈՐԷՔԵԼ, նբ. նորոգել: Յիշատակ է սուրբ տաջարիս վէմս, նորէքեցան Բարխուտարն, իւր կողակից Բաճուն, որ գեղիս նորօքիլն թվ. ՌՃՁՁ (ԴՆՎ II, 70):

ՆՈՐԻՆՈՐՈՅ,

ՆՈՐ ՆՈՐՈՒ, մկ. նորովի, վերստին: Յառաջնորդութեան Յովհաննէս վարդապետին շինի նորինորոյ պարիսպ սրբոյ վանքիս (Քորոս աղբար, 458): Ոչ քահանայ կու հանգչի եւ ոչ աշխարհական, նոր նորու խարճ կուզէ (ՄԺ I, 216):

ՆՈՐՈՎԱՌՈՒԹԻՒՆ, գ. նորգուլթիւն, վերաշինութիւն: Հասանել տեսութեան բարի համբաւոյն եւ նորոգառութեան Սրբոյ Աթոռոյս (Աղաւն. Միաբանք, 231):

ՆՈՐՈՎԱՏԱՐԱՁ, ա. նոր կերպով (շարադրուած): Դարձեալ առ նոյն սիրայար եւ սիրագործ նորոգատարազ շարագրութեանց բանիցն (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):

ՆՈՐՊԻՍԻ, մկ. Այնպիսի, նրա պէս: Աք եւ ՀԲԲ նորպէս «նորի պէս, նորապէս»: Յեղուկ եւ վայ նորպիտուն (գրչ. նորայ պիտուն), համ իւր տեղն է դառն ու դիժար (ՌԻՄՇԲ, 68):

ՆՈՒԱՁԱՁԱՅՆ, ա. նուազ ձայն ունեցող, նուաղուն: Եւ կարճաշունչ նուազաձայն / Շրթունքս թոյլ եւ սխալական (ՌԻՄՇԲ II, 87):

ՆՈՒԱՂԱՌՈՅ, ա. գ. Աղոս լոյս: Կըրթալոյս - նուաղալոյս (ՄՄ 1127, 141ա):

ՆՈՒԻՐԱՆԱԿԱՆ, ա. նուիրական: Աղաչեմ զվայելողքդ թողութիւն շնորհել եւ առ Տէր յիշել զսակաւ գծողս, իրական ձայնին արժանի առնել նուիրանական զյիշեալքս եւ զյիշողքդ (Հնատիպ, 14):

ՆՈՒԻՐԿԵԼ,

ՆՈՒԻՐԿՅԵԼ (°), չբ. նուիրակութիւն անել: Տէր Մարտիրոսն նուիրկեց զԻւովն եւ զԿամենիցն, եւ ելաւ գնաց փառօք եւ պատուով (Կամենից, 42): Տէր Գրիգոր վարդապետն... այս Ֆռանգաց աշխարհս նուիրակ ուղարկեց, որ եւ եկաւ ի Կամենիցս եւ նուիրկեց (սխալագր.) (Կամենից, 54):

ՆՈՒՆՅՈՒՍ, գ. (լատին. nuncio, իտալ. nunzio «ղեսպան»), գ. Սուրհանդակ, լրաբեր: Եկն Բարդուղիմէոս վարդապետն ի Կեոլայ յանձնարարական գրով նունցիոսին (Իւան Մխիթ., 93): Նիկողայոսն... թոյլ տուեալ ոմանց իրաց, ոչ առանց խորհրդակցութեան նունցիոսի փափին (Ստ. Ռօշքայ, 179): Զգանգատանս գրեցին առ Բիկնադէլլի նունցիոսն փափին (Ստ. Ռօշքայ, 180):

ՆՊԱՍՏԱՒՈՐԵԼ, չբ. Պատասպարուել, ապաստան գտնել: Աք նպաստաւորեմ/իւմ «նպաստ լինիմ, նպաստեմ» (իմաստափոխ.): Ընդ թաւ սաղարթեաւ ծառով իմիւ նպաստաւորիցէի ի յորդութեանէ անձրեւոյն (Կամենից, 150):

ՆՊԱՐՈՒՆԻ, ա. գ. նպար ստացող, թողակաւոր: Հիմնելով աստ ի Լէօպօլիս գլարժարան երկոտասանից նպարունեաց (Կամենից, 127): Յակոբ Պաղտասարեան Կ. Պօլսեցի քահանայիս եւ նպարունիս քահանայապետականի դպրատան (Կամենից, 128):

ՆՍԵՄԱՅԱՐԿ, ա. նսեմ, ստորին: Նսեմայարկ գիրս ստորին / ՈՒնի աւանդ գանձ գովելին (Աղան. Միաբանք, 34):

ՆՍՏԵՆՏԵՂ, գ. նստուկ: Մարդուն

կամ ի նստելոտեզն կամ ի քալելու ժամն դաֆիլ լինի մեռածին պէս (Բունիաթ, 69):

ՆՐԲԱԹԵԼ, ա. նուրբ թելով պատրաստուած: Նաղշուն նկարելով կարմրով, նրբաթել մըսրի պուրիան (Քէօմ., 33):

ՆՕՄԵՐԱՅ (լատ. numerus, իտալ. numero), գ. Համար, թիւ: Գոյ մի հէօճճէթ, յորոյ վերայ զնոյն նօմերայն եղաք: Հէօճճէթ վասն Բ եւ Գ նօմերայի մաղազայիցն (Երուս. դիւ.):

-Շ-

ՇԱԲԻՔ, գ. Շապիկ, եկեղեցական զգեստ: Մահդասի Մուրքումն ետ մէկ Ա շաբիք, Ա սկու տակի շոր (Ակոռ., 211): Մուրատի որդի Աւետիք ետ մէկ չիթ շաբիք (Ակոռ., 211):

ՇԱԼԷ ՇԱՊԻԿ, հրդ. Շալ կտորից շապիկ, առհասարակ՝ շորեղէն: Մահդասի Մէլիքշահայ որդիքն՝ մահդասի Աւետիքն եւ Գիգորն ետուն Ա քիմխայ շորջատ, Ա շալէ շապիկ (Ակոռու քյոթ., 211):

ՇԱՆԱՆ (արաբ. shaḡak), գ. (բժշկ.) Բունմ: Որ համակ գլուխն եւ շախախնին ցաւի, նշան է, որ ի յաջին շուր իջնու (Բունիաթ, 120):

ՇԱՆԱՎԵՏՈՒԹԻՒՆ, գ. Շահաւետութիւն: Ամենայն ջաթտան շախավետութեան ավազան կույ դառնայ, որ ուրէնց խին տեղարէնքն եւ երկրին կույ մոռանան (բնգր. մառանան) (եզով, 403):

ՇԱՀ ԱՆԵԼ, հրդ. Նպաստել, օգնել: Զրոնեխին ջուրն, ծովուն ջուրն շատ շահ անէ (Բունիաթ, 71): Տաք հանց ի վրան գինով տլէ այնէ, շատ շահ կանէ (Բունիաթ, 77):

ՇԱՀԻՍԵՒԱՆ (պարսկ. šah+sevan «շահին սիրող»), գ. Շահ Աբասի ստեղծած զինուորական ստորաբաժանման անդամ: Ղազախքն շահիսեան դարձան, մ՛հալ գտան, որ Արղութեցոնցէ եղբարց ի վերայ միմեանց կոտորեցին (Սանահն., 64): Այնուհետե կան Արղութէցիք շահիսեան (Սանահն., 64):

ՇԱՀԻՍԷՎԱՆՈՒԹԻՒՆ, գ. Շահիսեան լինելը՝ դառնալը, շահին զինուորագրուել, տե՛ս ՇԱՀԻՍԵՒԱՆ: Ով որ եկն ի շահիսէվանութիւն, այսպէս արարին, որպէս պատմեցաք (Դաւրիժ., 130): Որք գային ի շահիսէվանութիւն, զիրեանց եւ

զամենայն ընտանեաց անուանս
գրէին ի քարտիսի (Դարբիժ., 132):
ՇԱՀՈՐԳԻ, գ. Շահի ոռղի՝ թագա-
ժառանգ: Թահմազ շահորդին յա-
թոռն Պարսից նստցի և ոչ Աւրաֆն
(Ստ. Ռօշքայ, 200):

ՇԱՀՈՒԹԻՒՆ, գ. Շահ լինելը, թա-
գաւորութիւն: Յայսմի ամի սպան
զՋիհանշահն յետ լԱ ամի շահու-
թեան (Ժամ. Պող., 271),

ՇԱԿԱՊՈՂԱԿԱՆ, ա. Շաղկապող,
միացնող: ՀԲԲ շաղկապական
«շաղկապելու՝ կապակցելու յատ-
կութիւն ունեցող, կապակցող»:
Նշանն պանծալի տեառն Յիսուսի՝
միարար և շաղկապողական ի տա-
րուտ և ի բացուտ միջոցէ (Դիւ.
Ս. Յակ., 1941, 157):

ՇԱՅԵԱՅ,

ՇԱՅՂԱՅ (պրսկ. չայցօ, թուրք.
kayek), գ. Նաւակ, մակոյկ: ՄՀԲ
ղայխայ նոյն նշ.: Եւ ետ այնորիկ Ս
շայխայ Ֆէնէպլըռէն եկան, Սան-
տրխատով ու Կեզլով կոխեցին եւ
զարկին կրակ (ՄԺ I, 216): Յամ-
սեան յուլիսի հայրն զօրացաւ, եկաւ
Դաման քաղաքն իյառ, ԼԴ շայղայ,
ծանտր գին կըտրեց (ՄԺ I, 226):

ՇԱՆ ՀԱՆ, հռդ. Տանչանֆ: Հենց որ
Իզմիրէն դուրս եկի, սելալի ըռաստ
եկինք. շան հալ քաշեցի (Զ. Ագուլ.,
45):

ՇԱՆՊՈՒՐ, գ. Շամփուր, երկաթայ
ձող: Տէրունէնց պառաւ հսապետն
եբեր մէկ սաղաւարդ, մէկ շապիկ,
վարաքուրի շանպուր շինելին էլ
երկաթ դվաւ (Ակոռ., 210):

ՇԱՊԿԱՓՈՒՅԱՆ, գ. Շապիկի փո-
խան, ներքնաշոր: Զգեստն մինչեւ
ի շապկափոխան ի գաւիթս եկեղե-
ցոյն մէզատ արարեալ ծախեցին
(Գալ. Կենս., 73):

ՇԱՏԲԵՐ, ա. Արդինարար - շատբեր
(ՄՄ 1127, 133բ):

ՇԱՏՎՈՒՒ, գ. (բսբ.) Տատակա-
փուշ: ԱՖ շատժու «ուտապիուշ»:
Շատժուի, որ է ուղտափուշն (ՄՄ
6275, 219ա):

ՇԱՐԱԶՈՒԳԵԼ, նբ. Կազմել, շարել,
հմմտ. ՇԱՐԱԶՈՒԳԻԼ: Ի բնէ նորոգ
սկսանել յառնել եւ ի շարագուգել
գնորոգ յառաջ ածեալ զգիրս գայս,
որ կոչի Պատմագիրք (Դարբիժ.,
499):

ՇԱՐԱԶՈՒԳԻԼ, նբ. Զուգատրուել,
կենակցել: Մերք ասեն. արդ ոչ ոք
է աստ, որ տեսանիցէ զմեզ, հա-
ճեաց յօժարապէս շարագուգիլ ընդ
մեզ, ապա թէ ոչ ամբաստանեսցուք
զքէն (Նոր. ծաղ., 124): Լղտունք
հետագօտիցեն զիգունս մինչև ի
հարիւր մղոնս, առ ի շարագուգիլ
ընդ նոսա (Նոր. ծաղ., 155):

ՇԱՐԱԶՈՒԳՈՒՄՆ, գ. Կենակցելը,
զուգատրուելը, տե՛ս նաև ՇԱՐԱ-
ԶՈՒԳԻԼ: Իղշախոհոյթիւն է՝ ըստ
չորից եղանակաց... երկրորդն կա-
յանայ ի պոռնկիւն, այսինքն ի շա-
րագուգումն առն և կնոջ ազատից
(Նոր. ծաղ., 186):

ՇԱՐԱԿՆՈՒ ԳԻՐ, հռդ. Շարակնոց,
շարականների ժողովածու: Զա-
րակնու գիրս ի ճՂ դուռիշ առի ի
Տիւրիկ քաղաքն եւ եղի յիշելիք
(Ձեռ. յիշ. Ժէ, 354):

ՇԱՐԱՇԱՂԵԱԼ, ա. Շարաղբուած, գրուած: *Ի նոյնոյ Կարապետ փաղերայէ Հնծացոյ շարաշաղեալ (Գալ. Կենս., 152):*

ՇԱՐԺԱԿՅԵԼ, նբ. նպաստել, օծանդակել: ԱՅ շարժակից լինիմ «միատեղ շարժիլ՝ փոփոխիլ»: *Շարժակցեմ - շարժմամբ անդամոց մարմնոյս հեշտացուցանեմ գնայեցողս, լատ. ճէսթիքուլոն (Վ. Յուն., 58):*

ՇԱՐԺԱՌՈՅԵԼ, շբ. Շարժել, թափահարել: *Շարժաոոցեմ - յօրացմամբ իմիւ շարժեմ զձեռս կամ զանձս իմ այսր և անդր (Վ. Յուն., 59):*

ՇԱՐ Ի ՇԱՐ,

ՇԱՐԻԻՇԱՐ, ա. մկ. Շարժով, շարան-շարան: Կարստ շարվէշար «շարժով»: *Ջամենեսեան այնու շղթային կապեալ զկնի միմեանց շար ի շար (գրշ. շարվիշար) (Դուրիժ., 371):*

ՇԱՐՇ, գ. երկրաշարժ: *Այս շարշս էլ յունվարի Դ-ումն Շամարի քաղաքն յենց եկաւ, որ մինչի Զ, էմ հոգի մեռաւ (Զ. Ագուլ., 74):*

ՇԱՐՇ ԳԱԼ, հրդ. Շարժ՝ երկրաշարժ լինել: *Թվին Ռձժէ յունվարի Դ-ումն Ագուլիս կամաց շարշ եկաւ (Զ. Ագուլ., 74): Աստուածածնուն պասէն յենց շարշ եկաւ, որ շատ մարդ այ մեռէլ, շատ ավերութիւն էլէլ այս քաղաքներումս (Զ. Ագուլ., 76):*

ՇԱՐՈՒՆՔ, գ. Շարան, ուլունք, զարդեղէն: *Սահմանեցին զպալիոզունս առաքել զմայրաքաղբունս, օծտեցին զպատկերս և զշարունքս (Ն. Մուշ., 497):*

ՇԱՐՅԱՅ, գ. (կենդ.) Ռնգեղջիւր: Շարֆայ, որ է միեղջիւր և քարկար-

տան, որ է եղջիւրի եղջիւր (*ՄՄ 6275, 219ա*):

ՇԱՓԻՎԱՀԱՆԳՈՅՆ, ա. Շափիղայի (կապտագոյն թանկարժէք փար) նմանող: *Երգ... սակս շափիղահանգոյն կարմրագգեստ շքնաղաշէն սրբոյ վանիցն Հնծուց (Գալ. Կենս., 153):*

ՇԱՔԱՐԼԱՄԱՅ, գ. Քաղցրաւենիք, շաքարեղէն: *Յառաջն սկսանի ջրի կերակուր, միս խաշած... յետոյ շաքարլամով յէմիշթայ, յետոյ շաքարլամայ չոր (Շահմ. յիշ., 318):*

ՇԱՅ ԱՆԵԼ (արաբ. shafa «բժշկական մումեր»), հրդ. (բժշկ.) Մոմ դնել: *ՄՀՔ շաֆ «1. ակնաթընց, 2. դեղամոմ»:* *Ջամէնն աղա և մաղէ, մրտի ջրով շաղուէ, շաֆ արա դերձնով և ի բան տուր՝ օգտէ (Բունիաթ, 92):*

ՇԲԻԹԱԼ (լեհ. szbital), գ. Հիսանդանոց, բուժարան, տե՛ս նաև ՍԲԻՏԱԼ: *Ամէն ամի վճարք առնեն, նոյնպէս թային կայ շբիթալնուն եւ վանօրէիցն (Սիմ. Լեհ., 78): Կայր մեզ անդ եկեղեցի մի քարէ եւ շբիթալ, տօշակ եւ անկողին (Սիմ. Լեհ., 92): Վանատիկու շբիթալն տարին երկու երեք ֆուցի գինի կու գար (Սիմ. Լեհ., 102):*

ՇԴԻՐԻՆՅ (գերմ. strümpfe «զանգապան»), գ. Գուլպա: *Օսգով կամ արծրթով շուխերն ապրշումէ շգրինֆներըն թէ տղայ կընտոց եւ թէ աղջիկնու եւ կամ հի որ մէկին արգիլված պիլայ (Գովր., 46):*

ՇԵՆՈՒԹԻՒՆ,

ՇԵՆՈՒԹԵՆ, գ. Շէն, շինուփին: Գիւսնայ ծօլին պրվինցումն գեղ, գա-

վառ, շնութեն, ուրէնց ֆամիլօվն (եզով, 406): Յեփոր զբզոն և շենութիւն կու գձեն մեծ ինփրայթօսին (եզով, 406):

ՇԷՆԼԻՔ (թարգ. senlik, հայ. շէն բարից), գ. ՈՒՐԱխՈՒՅԻՆ, հանդէս: ՀԲԲ շէնլիք «որտեղ շինութիւններ կան, մարդիկ են ապրում»: Սուլթան նրատել էր, օրն ուրբաթ էր, սէյմէններն եկան լըցվան թէ՛ շէնլիք կաններ, թվաք կու քաշենք (Մժ I, 220):

ՇՐՆԱՑՕՐԵԼ, չր. Շնորհատրել: Ես ալ գօնֆերմավադ կու անեմ եւ կու հաստատեմ եւ կու շրնաֆօրեմ եւ կու օրհնեմ (Դիւան Մխիթ., 154):

ՇԻԿՆԱԳՈՒՆԻԿ,

ՇԻԿՆԱԳՈՒՆԱԿ, ա. Շիկագոյն, հրագոյն: ՄՀԲ շիկագոուն, շէկագուն նոյն նշ.: Շառաւիղ շիկնագունիկ (գրչ. շիկնագոյնեղ, շիկագունեղ) դու համասփիւռ ծաղկանց ամիրայն (ՈՒՄՀԲ II, 151): Պտուղն որպէս ալ մեծագին, բոցաճաճանշ շիկնագունակ (ՈՒՄՀԲ II, 182):

ՇԻՆԱԿ (յոզմակի՝ ՇԻՆԱԿՆԷՔ), գ. Շինական, գիւղաբնակ: Մեր շինակն Ղուկաս պարոնտէրն ձորումն հող էր առել, գեղումն հող էր տվել առանց մեր գիր (Սանահն., 148): Մեր շինակնէքն տվել ին, մեր է տվինք (Սանահն., 148):

ՇԻՒՂԱԳԷՁ, գ. Կոտակում՝ դիզում, ա. Դիզում: Շիւղադէզ - կուտակ ինչ շիւղից կամ այլոց նիւթոց, գորս գիզաբարդել սովորեն մրջինք ի վերայ բունոց իւրեանց, մանաւանդ

յանտառս և ի վայրս խոնաւուտս (Վ. Յուն., 59):

ՇԼԱՆԿԱՏԵԼ, չր. Կկոցած նայել: Շլանկատեմ -հայիմ սակաւ ինչ ունելով գտեսութիւն և իբր զկիսակոյր, լատ. շէքուցիօ (Վ. Յուն., 59):

ՇԼՐ ՄԼՐ, ա. Շոլոր-մոլոր, փխր. հարբած: Տաքուկ քէպպիկ կէր և քէֆ հասուր. աչքդ շէշ ու փէշ լինի շլլր մլլր (Տէֆթ., 319):

ՇՀԱՐ, գ. Շահար, քաղաք: ԱԲ շահար «անմատ»: Այս միջումս Գանշու շհարն և մեր եմք մնացեալ, իրար հետ լաւ եմք (եզով, 420):

ՇՆԱԿ, գ. Փոքր շուն, շնիկ: Մեր փոքր շնակն, որ ընդ մեզ շրչէր, մնաց եւ ոչ երեկ յառաջ, երկեալ (Սիմ. Լեհ., 157):

ՇՆՈՐՀԱԶԵՂՈՒՆ, ա. Շնորհներով լեցում: Ընդ շնորհազեղուն օրհնութեան ողջունամատոյց և սիրածանոյց թղթոյս ի խոնարհ զիմաց ծանուցումն լիցի (Ղուկ. նամ., 118): Աստուածապարգև և շնորհազեղուն օրհնութիւնս ծաներուք, հոգևոր որդիք մեր ի Տէր (Դիւան ն. Ջուղ., 68): Շնորհազեղուն օրհնութեանս ծանուցումն լիցի հոգևոր և հարազատ որդւոյդ (Դիւան ն. Ջուղ., 78): Ընդ աստուածապարգև և շնորհազեղուն օրհնութեան նամակիս ծանուցումն լիցի (Ազուկ. կոնդ., 87):

ՇՆՈՐՀԱՌՈՒԹԻՒՆ, գ. Պարգետաւում ըստ շնորհի: Շնորհառութիւն - պարգևումն կամ ընձեռումն շնորհի ուրուք ըստ արդեանց և անժանաւորութեան, լատ. պէնէֆի՛չիում (Վ. Յուն., 59):

ՇՆՁԱԳԼՈՒԽ, գ. Շունչ, մարդագրովս: *Կաթուղիկոսն... եկաւ Աքուլիս, նվիրակն ժողովեց, շնչագլուխ առաւ ոմն մին թուման, ոմն այլ ավել (Զ. Ագուլ., 128):*

ՇՆՁԱՄԱՔՈՒՐ, ա. Մախուր շունչ ունեցող՝ մաքրակենցաղ: *Վսեմախոհ ըրաբունապետի եւ փոխանորդի սրբոյն Յովհաննու՝ շնչամաքուր եւ աստուածաբան աւետարանչին (Ագուլ. կոնդ., 84):*

ՇՆԻԱՐ, ա. Շնորհաւոր բառից՝ շնորհ ունեցող, շնորհալի: *Բացիր գամուլ ծերոյ արգանդն և շնար ծնար (ՈՒՄՂԲ, 65):*

ՇՈԳՈՒՆԱԿ, ա. Շոգի՝ ջերմութիւն ունեցող: *Ամենայն տարերաց և տարրացեալ գոյից սկզբնասերմն ասի ծծմբաղասնդիկ, որ է գոլորշումն և շոգունակ զօրութիւն իմն (Տէֆթ., 379):*

ՇՈԳՎՈՒՏԱՆ, ա. Շողշողուն: Մէջ շողկտան նոյն նշ: *Այ՛ վիդ շողկտան, երեսդ է փայլուն (ՈՒՄՂԲ, 128):*

ՇՈԳՋԵՐ, գ. ա. Շոգ: *Տաւթ - շողջեր (ՄՄ 1127, 154ա):*

ՇՈՃՈՅՆԵԺ, գ. (բար.) Մի տեսակի խեժ: *Շոճոյխեժ, զոր ոմանք կոկոսն մի կոչեն (ՄՄ 6275, 219բ):*

ՇՈՌՈՒՄՈՌ,

ՇՈՒՐ ՈՒ ՄՈՒՐ, մկ. Այս ու այն կողմ: *Տղայն թաւալէր և առնէր շոռուսոռ (գրչ. շուր ու մուր) (ՈՒՄՂԲ, 252):*

ՇՈՏՈՎ, մկ. Շուտով: *Այս անգամ շոտով այդ մեծ թագաւորէդ և քո բարերարութենէդ որ մեզ մին ճար չի լինի (Եզով, 162):*

ՇՈՐԱԳԻՆ, գ. Հագուստի, ինչի համար տրուելիք հարկ, շորի գին: *Ամէն շաբաթ իրիգուն գանձանակ բռնէն, եկեղեցուն համար շորագին լինի (Զ. Ագուլ., 147):*

ՇՈՒԵՏ, գ. Շուեղացի: *Յաղթութիւնս ընկալան ընդդէմ բազմագոյն ներհակաց օտար եւ ընտանի թշնամեաց՝ երբեմն ընդ գրիժագաց եւ երբեմն շուետաց (Պատմ. Խոթ., 43):*

ՇՈՒԽ (գերմ. schuh), գ. Հողաթափ, կոշիկ: *Սագով կամ արծըթով շուխերն, ապրշումէ շգրինֆներըն թէ տղայ կընտոց եւ թէ աղջիկնու եւ կամ հի որ մէկին արգիւլած պիւլայ (Գովր., 46):*

ՇՈՒՆԹԱՆ, գ. Սուլթան-շունթան (բոխդ.): *Ի ՌՁԹ սուրբ Սարգսի շաբթուն հինգշաբթին մեռաւ սուլթան Մուրատն, եւ թագաւորեաց եղբայրն իւր շունթան Իբրահիմ (ՄԺ II, 395): Ի ՌՂԹ թուին սպանին ըզշունթան Իբրահիմն եւ եղին գսուլթան Մահմատն (ՄԺ II, 395):*

ՇՈՒՆՁ ԱՍՏՈՒԱԾԱԿԱՆ (բնաս.), հրդ. Աստուածաշունչ մատեան: *Ի թվականիս մեր հայկազեան / Որ էր անցեալ քսան յոբելեան / Այլ եւթտասն աւելի լման / Գրեցաւ Շունչաւ աստուածական (Յ. Քիւրտ., 8):*

ՇՈՒՆՁՆ ԿԱՐՃՆԱԼ,

ՇՈՒՆՁՆ ՊԱԿՍԵԼ, հրդ. (բժշկ.) Շունչը կտրուել, հեւալ: *Նշանն այն է, որ հազ լինի և շունչն պակսի (Բունիաթ, 97): Խոչակն բռնվի և շունչն կարճնա եւ երեսին գոյնն մթնա (Բունիաթ, 118): Շունչն կարճնա և աշի ճերմկուցն ի դեղնութիւն գարնէ (Բունիաթ, 118):*

ՇՈՒՇԱԼ, շք. Ծոպանալ: ԱՅ շուշել
«ծուլնալ, թուլնալ»: **Շուշալ** - ծու-
լի կամ հեղզալ (*ՄՄ 1127, 148բ*):

ՇՈՒՏԱՆՅԻԿ, ա. Թափանցիկ - շու-
տանցիկ (*ՄՄ 1127, 140բ*):

ՇՈՒՏԱՓՈՒԹՈՒԹԻՒՆ, գ. Շտապո-
ղականութիւն՝: ԱՅ շուտափութիւն
«ճարպկութիւն»: Դստերք անա-
ռակութեան են ութ, այսինքն՝ ան-
խորհրդականութիւն, անհաստա-
տութիւն, շուտափութութիւն... (*ՄՄ 1756, 10բ*): **Շուտափութութիւն**
կամ անխորհրդականութիւն է պա-
կասութիւն խորհրդոյ (*ՄՄ 1756, 131բ*):

ՇՈՒՏԿՆԱՅ, ա. մկ. Արագընթաց:
Ըշտապզնայ - շուտզնայ (*ՄՄ 1127, 140ա*):

ՇՈՒՏՈՎ ՇՈՒՏՈՎ, մկ. Շատ շու-
տով, ճեպով: Քո հրամանքդ էլ շու-
տով շուտով էլանես գաս Ըստամ-
պօլ (*Դիւ. Ս. Յակ., 1940, 315*):

ՇՈՒԻՉԱՌ, գ. Շուրջառ: ՄՇԲ շուռ-
ջառ: Մահրասի Աւետիքն և Գի-
գորն... ետուն գառբաբ շուրջառ (*Ա-
կոռ., 211*):

ՇՈՒԻՉԱՌԻՌԻԼ, շք. Շուրջառ հագ-
նել. ծիսական արարողութեան
այն պահը, երբ հոգեւորականնե-
րը շուրջառ են հագնում: Յետոյ ա-
մենեքեան շուրջառութիւն՝ մոմեր ի
ձեռին ունելով (*Ձուար, 1867, 181*):
Ապա սկսան գարտնալք, զկնի ե-
պիսկոպոսք, ապա պօնսինօրք
շուրջառովորիլ (*Սիմ. Լեհ., 136*):

ՇՈՒԻՅ (գերմ. schürze), գ. Գոգնոց:
Ոչ այս երկրին մէջ եւ ոչ օգկայ եր-

կիր չի գըտվի ոչ մէնդէջ, ոչ սուգ-
նայ, ոչ շուրց, ոչ գեբդ թէ հայնակ
եւ ոչ մաճըրնակ եւ ոչ կրգալ
(*Գովր., 45*):

ՇՎՈՒ, գ. Երաժշտական գործիք, շվի:
Կարստ (անտիպ բառ.) ունի շվու
«եօթ անցք ունեցող փողային գոր-
ծիք, սրինգ»: **Չօպանի դավալին** աճ-
մա բառն շվու կ'ըսեն, որգոն՝ հովիւն
շվու կ'ածէ (*Տէֆթ., 377*):

ՇՐՋԱԶԵՂԵԼ, շք. Փոխակերպել,
փոխուել: Մառախուղ թանձր
շրջագեղաւ, թէ եւ անձրեւն մեղմա-
ցաւ (*Կամենից, 150*):

ՇՐՋԱԾԵԼ, շք. Աշխարհ շուրջը ածել՝
նայել: **Չաչս** իւր այսր և անդր
շրջածելով և ոչ զմի մուտ նշուլիցն
կարաց տեսանել (*Ստ. Ռօշքայ, 119*):

ՇՐՋԱԿԱՅԵԼ, ա. Շրջագայել: **ՀԻՔ**
շրջակայել «շուրջը կանգնել՝ պա-
տել (պահպանութեան համար)»:
Վարդապետական քարոզութեամբ
շրջակայեալ ի վերայ ամենայն երկ-
րի (*Աղան. Միաբանք, 488*):

ՇՐՋԱԿՆ ԱԾԵԼ, հրդ. Շուրջը նայել,
հայացք ձգել: ԱՅ ունի շրջակ
«պարոյկ»: **Շրջակն ածեալ՝ տեսի**
զխարցն իմն ընդարձակ ի հանդի-
պոջ արեւելեան հարաւոյ (*Կամե-
նից, 149*):

ՇՐՋԱԿՆԱԾՈՒ, ա. Ռիսումնասիրող,
բննասէր, բոց. շուրջը զննող: **Չի**
էր այր խորագէտ եւ շրջակնածու,
զմտաւ ածէր գտանել զհնար իմն
(*Կամենից, 124*):

ՇՐՋԱՇՈՒՐՋ, մկ. ա. Շուրջբոլորը, ամենուր: *Եւ այնպէս շրջաշուրջն գնացիւք հասաք յաջողմամբ Տեառն յատուածակեցոյց արքայանիստ կայսերապերճ քաղաքն (Յ. Կորնոս, 209):*

ՇՐՏԻԼ, չբ. Շփոթուել: ԱԲ շրտնում «շուարիլ, պուշ մնալ»: *Շրտիլ - մտացն ելնուլ (ՄՄ 1127, 148բ):*

ՇՕԳՕՏՕԼ (հունգ. sokadalom), գ. Տօնավաճառ, ամբողջ: *Եւ գիտացվի օր շօգօտօլին կլայ ծախելու հի վօլ, տարը շօգօտօլէն ինտան ամե-*

նեւին չի ծախէ (Գովր., 101): Նա ազատ ըլա աս էրկրին մէջ ամէն դի ու ամէն անգամ ծախելու ու ալ ի-ժով հիոր շօգօտօլները (Գովր., 196):

ՇՕՇԱՓԱԿ, գ. Շօշափելիքի զգայա-
րան: *Մանօթութիւնս այս յատաշա-
գայի ի հնկից զգայութեանց գլխա-
ւորաց մարմնոյ, այսինքն՝ ի տեսա-
կէ, որ է յաշս, ի լսակէ, որ է յա-
կանջս, ի հոտոտակէ, որ է ի քիմս,
ի ճաշակէ, որ է ի բերանն և ի շօշա-
փակէ, որ է ի ձեռս (Նոր. ծաղ., 4):*

-Ո-

ՈՆԸՆԿԱ, ա. Մէկի դէմ ռիս պա-
հող, փինախնդիր: *Այսմ բանէ սա-
կաւ ինչ թուլացոյց իշխանն
զբռնութիւնն, բայց յոյժ ոխընկալ
եղեւ ի սրտի իւրում (Դաւրիժ.,
371):*

ՈՂԵՒՈՐԱԿԱՆ, գ. Ճանապարհորդ:
*Ողևորական - ճանապարհորդ, ուղ-
(ղ)էգնաց, ոահվար (ՄՄ 2281, էջ
136ա):*

ՈՂՈՂԻ ՏԱՆԵԼ, հրդ. Ջրհեղեղի են-
թարկուել, ֆշել-տանել: *Սելաւի
ըռաստ եկինք. Աստուած գմեզ
փրկեաց ողողի տանելու (Ձ. Ագուլ.,
45):*

ՈՂՈՐԿԱՍԱՅ, ա. Ճշմարտախօս: *Եւ
ժողովուրդն նմա չատաց / Գիտէին
որ չէր ողորդասաց (ՈԻՄՇԷ II, 102):*

ՈՂՈՐՄԱԾԱՍԻՐՏ, ա. Գթասիրտ,
նեւողամիտ: *ՀԳԲ ողորմասիրտ
նոյն նշ.: Եւ էր ողորմածասիրտ,*

*քանզի եժ-ան ամաց հասարակ
հարկն շնորհեաց ամենայն ումք
(Ջաք. Ա, 10):*

ՈՂՈՐՄԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. Ողորմութիւն,
կարեկցանք: *Ընծայեալ մատուցի
թուղթն այս մաղթանաց և խնդրուա-
ծոց, գլխաշարժութեան և ողորմար-
կութեան (Ղուկ. նամ., 117):*

ՈՃՈՐ, գ. Մղօտի արտ (ծան.
հրատ.): *Իսկ այլքն Արղութեցիք...
փախուցեալ զզարքն Դազախի և
զհետմտեալ կոտորեալ որպէս արտ
ոճորէից (Սանահն., 63):*

Ո՞Յ (գրբ. յո՞), դ. Ո՛Ւ՞ր: *Ոյ գիտեն թէ
յո՞ (գրչ. ո՞յ) երթան, զի աշխարհն
այն աւեր եւ ամայի է (Սիմ. Լեհ.,
379):*

ՈՋԵԿԵԱԼ, ա. Ջեկած՝ չընդունած,
չհաստատուած: *Մաներուք, հո-
գևոր որդիք մեր ի Տէր... յանգիմա-*

նել գոչեկեալն յօրէնս Տեառն (Սահան., 102):

ՈՉՀԱՒԱՆՈՂ, գ. Չհամաձայնող: *Ոչհաւանողսն անողորմաբար շարշարէր եւ այլ բազում շարիս գործեաց (Ժամ. Պող., 277):*

ՈՍԿԱԿԱԶՄ, ա. Ոսկիակազմ, ոսկեզարդ: *Խիստ մեծ և զարմանալի եկեղեցի է... ամենայն ոսկակազմ, մարմառիայ և անգին քարով (Նըշխարք, 17):*

ՈՍԿԱՏՈՒՓ, ա. Ոսկեկազմ (գիրք): Ն. Բիւզ. և ՄՀԲ *ոսկէտուփ նոյն նշ.: Աստուած արհնէ Փառակեցոնց Սարգսի որդի Յարութիւնն և Նազարն. մէկ լավ ոսկատուփ Աւետարան իւր մահաճովն [ետուն Սբ. Յակոբայ] (Ակոռ., 200):*

ՈՍԿԵԳԵՂ, գ. Ոսկեայ դեղ՝ ներկ: *Ի դասագլուխքն [գոն] աթոռք պատրիարկաց նոցին, ոսկեգեղով զարդարեալ, և յաջմէ կողմենէ գոյ ևս փոքրիկ ամբիտն մի (Պատմ. Երուս., 1932, 12):*

ՈՍԿԵԿԻՑ, ա. Ոսկեմման: *Սպիտակափայլ ոսկեկիցն նշույազարդք գեղապաճոյճս փայլէին (Ագուլ. կոնդ., 89):*

ՈՍԿԵՍՍՓՈՐ, ա. Ոսկեմկար սափորով, ոսկեպատ: *Աւարտեցաւ ոսկեսափոր Տաւնականս ի մայրաքաղաքս Համիթ՝ Տիգրանակերտ (Թորոս աղբար, 451):*

ՈՏԱՇԱՐԵԱԼ, ա. Ոտանատրի պես շարուած, չափաբերուած: *Տեղեաց տնօրինականաց... զպատմողաբարն ոտաշարեալ (Աղան. Միաբանք, 136):*

ՈՏԱՑ ՀՈՂ, հրդ. Ոտֆի հող, փխբ. չնչին, խեղճ, խոնարհ: *Ի նուաստ ծառայ ոտաց հող, տրոպ և անարժան ծառայէդ հասցէ թուղթս արտասուական (Եզով, 370):*

ՈՏԷՃ, գ. Մի տեսակի հիւանդութիւն, ոտիճ: *Ոտէճ, որ է այն աղան, որ կու ժողովի ի մաքուն ագին տակն և ի դմակին ներքեն, որ է ինքն դալար գուֆան (ՄՄ 6275, 220բ):*

ՈՏՆԱԳԱՐ, գ. Անդամալոյժ, ընկնաւոր: *Փիլիպպոս կաթողիկոսն... զմանուկ մի համր եօթնամեայ և ոտնագար աղօթիւք բժշկեաց (Ստ. Ռօշթայ, 178):*

ՈՏՆԱՌՈՒՔ ԼԻՆԵԼ, հրդ. Ոտֆ գցել՝ խանգարել, խոչընդոտել: *Նոքա բնդ միմեանս միաբանելով կու ջանան, թէ Սուրբ Տանս զարար հասուցանեն, մեզ ոտնառուք լինելով (Դիւան Ն. Զուլայի, 91):*

ՈՐԲԱՂՐԱՄ, գ. Որբերի համար նուիրատուութիւն՝ տուրֆ: *Զամենայն զտէրունի հասս և զիրաւունս ձեր, որպէս կանոնիւք հաստատեալ է, այսինքն զպտղին, զորբադրամն, զժամուցն, զհոգեբաժինն, զտեառնականն (Դիւան Ն. Զուլ., 80):*

ՈՐԴԱՀՈՍԱՆ, ա. Յորդ, ջրառատ: Ա՛հ յորդահոս նոյն նշ.: *Որդահոսան գետ, աղբիւր բարեհամ, զիա՛րդ ցամաքեցար (ՈՒՄՀԲ II, 72):*

ՈՐԴԵԿՈՒԹԻՒՆ, գ. Որդի, որդեգիր լինելը: *Զանդրանիկ որդեակն իմ, մերս յաւժարութեամբ, զերեմիա դպիրս, շնորհակալ եմք ինքեան որդեկութեան (Դարիժ., 403):*

ՈՐԴՈՐԵԼ, նբ. Յորդորել: ՄՀԲ որդորել «առատացնել, շատացնել» (համամունն): *Խիստ առապով տաշէր շոր միս, Քաշալերէր եւ յորդորէր գիս (ՈՒՄՀԲ, 180):*

ՈՐԿՈՅԷ ՈՐԿԻ, հրդ. Որդուց որդի՝ սերնդէ սերունդ: *ՈՒնի բերթ պարունանիստ որդոցէ որդիք Շաշիկ, Պայազիտ, Խամուր-ղալան (Յ. Կարն., 21): Չունի սահման, որ օճախ ունենայ եւ կամ զիշխանութիւն որդոցէ որդիս տայ (Յ. Կարն., 27):*

ՈՐԿԵՆՈՒԹԻԻՒՆ, գ. Որպիտութիւն: *Բնաւ մին բան չի լուայ գորկենութենէ ձերմէ (Դիւան Մխիթ., 23):*

ՈՐՁԱՊԳՆՈՒԹԻՒՆ, գ. Առումադութիւն: *Չունին զուլում եւ անիրաւութիւն, շկայ եւ որձապղծութիւն, եւ թէ ուրեք գացի, իսկոյն այրեն անխտիր (Սիմ. Լեհ., 87):*

ՈՐՆՈՐ, դ. Որբ, որբ որ: *Հայոց ասկն... որնոր պարսից երկրումն էք (Եղով, 354):*

ՈՐՉԱՆՔ, դ. Որչափ, ինչքան: *ՄՀԲ եւ Կարստ (ամտիպ բառ.) ունեն որչաք նոյն նշ.: Թէ քաղաք, թէ գաւառ ում պետէնա, որ պեթկական եւ ուրէնայ ուզէցած, ընդունելի եւ որչանք որ ուրէնց լազումէնայ (Եղով, 402):*

ՈՐՉԱՍՈՒՉԵԱԼ, ա. Սուզուած, ծածկուած: *ԱՖ եւ ՀԲԲ որչասույզ «բունը պահուրտած»: Պարունակեալ - քողասուզեալ, ծածկեալ, ողջասուզեալ (ՄՄ 2019, 163բ):*

ՈՐՍԱՒՈՐ, գ. Որսորդ: *Չորդիս իւր խրախուսեաց իբր որսաւորաց եւ ձկնահանից (Յ. Կոլոտ, 249):*

ՈՐՐԵԼ, նբ. Օրորել: *Որրենք պիտի քեզ ի քունդ անյարիր (ՀՎԲ, 318):*

ՈՒԶԱՅԻՆ, նբ. Ուզեցիմ: *Ս. շուալ ուզացին եւ շաթան, հայէ եւ տաճկէ խարած Զ Զ. խոուշ (ՄԺ I, 223):*

ՈՒԶՔԱՇԻ,

ՈՒԶՊԱՇԻ (թուրք. yüzbaşı), գ. Հարիւրապետ: *Ես՝ Ղօրխմազ-բէկա Արդուլէցոնց ուզբաշի, վկայ եմ այս բանիս, որ այսպէս հստատեցօ (Սանահն., 137): Ի ուզպաշոցն է հրամանօւն եկեալ Գ մարդ (Եղով, 371): Մեք՝ կաթողիկոսք եւ ուզպաշիք կամեցանք պահեցինք (Եղով, 381):*

ՈՒԺԱՐ, ա. Յօժար, տե՛ս նաև ՕՎԺԱՐ: *Իմ կամաւ եւ ուժար սրտի մլայփոսի Ազիզբէկանց հողն տվի Սանահնու առաջնորդ Սարգիս յեպիսկոպոսին (Սանահն., 173): Իմ կամաւ եւ ուժար սրտի հողն տվի (Սանահն., 176):*

ՈՒԺԳՆԱԲԱ(Ղ)Խ, ա. Ուժգին բախող՝ հարուածող: *Չուլեաց անդէն երկուս թօփս մեծամեծս, հզօրս եւ ուժգնաբաղխս (գրչ. ուժգնաբախ) որոց (Դաւրիժ., 113):*

ՈՒԼՈՒՆԱՎԱՃՍՈՒ, գ. Ուլունքներ վաճառող: *Յայնժամ ուլունավաճառ էի, եւ այժմ զիս՝րդ եղէ շահ (Չաք. Ա, 25):*

ՈՒԼՈՒՑԱՅ, տե՛ս ՕԼՈՑԱՅ:

ՈՒԽՏԱԽԱՉ, գ. Խաշ՝ որպէս ուխտի նպատակ, փխբ. բաղձալի մի բան: *Լուսին, քօ ծծերդ է ուխտախաշեր, Խունկ ու մոմ առեր եւ ի ուխտ եմ եկեր (ՈՒՄՀԲ, 101):*

ՈՒԽՏԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ, գ. Ուխտը կատարելը, նպատակին հասնելը: *ԱՖ ուխտակատար նոյն նշ.: Յայտ է, թէ ոչ եւս կարեմ գնալ*

յուխտակատարութիւնս (Յիշ. Ուն., 292):

ՈՒԽՏԵՅԻ, գ. Արշասպ: *Ուխտեցի, որ է արջասպ, որ է դեղին գաճ (ՄՄ 6275, 220բ):*

ՈՒՂԱՌՈՐ, գ. Ուղարկող: ՀԲԲ ուղաւոր «ուղևոր» (խմաստափոխ.): Այս շալապի քեխիէն մեծ մուխթապար և պէթկական մարդ է, զինչ պատասխան տացուք մեր գլխաւոր ուղաւորացն (եզով, 370):

ՈՒՂԱՌՈՐԵՆ, նք. Ուղարկել, համփու դնել, հմմտ. ՕՂԱՌՈՐԵՆ: ՀԲԲ ունի ուղաւորել «տէս ուղևորել» (խմաստափոխ.): *Ի շուեւն նորա՝ ուղաւորեաց զնա մինչեւ էանց զգիւղ մի (Գիւան Մխիթ., 98): Ի գնալն ի քաղաքէն մեծաւ հանդիսիւ ուղաւորեցին զնա, որ և զնաց ի հողին (Կամենից, 41): Բագում սիրով զինքն ուղաւորեցին ի ճանապարհն իւր (Կամենից, 54):*

ՈՒՂԻՂԱՓԱՌ, ա. Ուղղափառ: *ես՝ անարժան ֆրայ Ագոստինոս քահանայս էի... կրօնիւք հնազանդ ուղիղափառ հաւատոյն Քրիստոսի (Նշխարք, 5): Լէհոյ աշխարհն է լաւ ուղիղափառ քրիստոնեայ (Նըշխարք, 11):*

ՈՒՂԱՔԱՐՈՒԹԻՒՆ,

ՈՒՂԱՔԱՐՈՒԹԻՒՆ, գ. Ուղղափառութիւն, ուղիղ դասանանք: *ես այսպէս եկեղեցին Հայոց մնաց յուղղաբարութեան զամս Ղն (Ստ. Ռօշքայ, 79): Հաւատովք են քրիստոնեայք և գործով ուղղաբարութեան (ՌԻՄՇԲ, 204):*

ՈՒՂԱԿՈՆԵՆ, չք. Ուղղորդել, ուղի հարթել: *Ուղղակոնեմ - հարթեմ և ուղղեմ զթիրութիւն կամ առ ուղին դարձուցանեմ զարտելեալն (Վ. Յուն., 60):*

ՈՒՂԱՇԱՒՂԵԹԱՅ, գ. Ուղիղ, բարի շափղ՝ ընթացք ունեցող: *Խորհրդով իմաստուն ծերոց, ուղղաշաղընթաց երիտասարդաց, հպատակաց հօր և հնազանդալուր մօր պատանեկաց (Ագուլ. կոնդ., 85):*

ՈՒՂԱՓԱՌԱԿՈՒՆԵՂ, գ. Ամենից ուղղափառ, նշմարտագոյն: *Մայրագոյն պատրիարք առաքելականի և ուղղափառագունեղի եկեղեցւոյս Քրիստոսի (Ագուլ. կոնդ., 104):*

ՈՒՂԱՐԿԵՆ, նք. Ուղարկել: *Քո թագաւորական հրամանովն ուղղըրկեր էին մեռոն Վասիլօփիճովն, որ մեզ գրեր էին մեծ աւետիք (եզով, 154):*

ՈՒՂՊԱՏԱԿԻ*, ա. Խոհուն, խելացի (°): *Ուղպատակի - հանճար, տեսուն, կարծուն (ՄՄ 2281, 129բ):*

ՈՒՅՄԻՇՎԵՆ, նք. Մտածել, խորհել: *Սղբկին սէպն այնպէս ույմիշվեցանք, թէ հի որ մէկին վրայ ինչօր ընէր, նայ ամէն մէկն պարտ ունէնայ (Գովր., 134):*

ՈՒՆԿԱՐ, գ. Հունգար, հունգարացի, տէս նաև ՄԱՃԱՐ: *Դարձեալ ի նոյն ամին ունկարաց կայսրն կոտորեաց զթուրքն, որ է Քրիշչին (ՄԺ I, 194):*

ՈՒՆՈՂԱԿԱՆ, ա. Ունակ, հնարաւոր: *Յիշողականութիւն իմացա-*

կան... է՛ ունողական պահողութիւն նորին (ՄՄ 1756, 119բ):

ՈՒՆՔ, գ. Յոյն(եր): **ՈՒՆՔ** կու հակա-
ուակին (Զուար, 1867, 203): Կու
լսեն ունքն, ոտից կանգնին (Զու-
ար, 1867, 204):

ՈՒՇՄՈՒԹԻՒՆ, գ. Ուշիմ, ընդունակ
լինելը: ԱԲ և ՀԲԲ ունեն ուշիմու-
թիւն նոյն նշ.: Զիմաստս եւ
զշնորհս առնու ուշմութիւնք եւ
խելք ուտանան (Քէօմ., 16):

ՈՒՍԿԱՅ, մկ. Ուստելից: ՀԲԲ և ՄՀԲ
ուսկայ, հուսկայ, օսկայ «այժմ,
հիւմ» (համանուն): Անքուն որ-
դունք են ի աշուն / Թէ ո՛ւսկայ կու
գայ անուշ լօղման (ՈՒՄՀԲ, 343):

ՈՒՏՈՂ, ա. Շատակեր: Արծաթամոլ
և մարմնապաշտ, ախտաբիծ, ու-
տող և մանրող Գանիէլի գազան...
մանաւանդ ինքնահաւան անժուր
ընթերցողք (Տէֆթ., 318):

ՈՒՐԷՆՔ, դ. Իսեանմ՛ իւեմֆ: **ՈՒՐԷՆՔ**
ոչինչ բանի խբարչութիւն մինչև ի
գոյէ ժամանական (եզով, 357):

ՈՒՐՈՒԿ ՅԱԻ, հրդ. (բժշկ.) Հայ. ու-
րուկ՝ բորոտ բառից, բորոտու-

թիւն: Գողութիւն, որ է ուրուկ ցաւ,
որ տաճիկն ճուտամ ասէ (Բու-
նիաթ, 118):

ՈՒՐՏՈՒ (թուրք. ordu), գ. Բանակ:
Կարստ (անտիպ բառ.) որտու
«հորդա», ՆՀԲ որտու նոյն նշ.: Ա-
ռի այն մարդն, ուրտուն տարի
հետս, որ բանն շինեմք (Դիւ. Ս.
Յակ., 1940, 315):

ՈՒՔԱՉ (ռուս. ука3), գ. Հրաման,
հրամանագիր: Հասանք տեղն Ափ-
րաբսի Պետր Մաթովիչի ուքազովն
(եզով, 257): Խնդրեմ որ մէկ ուքազ
լինի գինիքն ջրով գայ (եզով, 259):
Թագաւորն պիտի շուտով ուքազ
ուղարկէ մին փօտիաչով (եզով,
319): Հրամայական թուխտ, որ է ք-
ռուտէվար ուքազ կասեն (եզով,
395):

ՈՒՏՈՒՆԱԹ (արաբ. ufumat), գ.
(բժշկ.) Բորբոխում, զարշահոտու-
թիւն: [Խաշամին] պատճառն ըս-
տամոքին գոլոշէն է և անձինն ու-
ֆունաթն է, որ ի գլուխն կեննէ
(Բունիաթ, 79):

-Չ-

ՉԱԼԲԱՐԱ (թուրք. çalpara «նոնում,
ոխթ») բառից), գ. Բամբիո: Հոռ-
մի խօսիւք եղանակեն «քիրէլէ-
զիոն» եւ... փոխանակ ծընծղայի
չալբարայ քշտեն (Սիմ. Լեհ., 218):

ՉԱՆՉՐ(ՆԵՐ),

ՉԱՂԱՉ, գ. Զրաղաց(ներ): Գիտես,
թէ Աստուած բարկացաւ, քամի ե-

ղաւ, հուրթունայ եղաւ ան գիշերն,
չախչըներ կոտորտեցաւ, (ՄԺ I,
220): Նողայ եւ ուռուս պատեցին
բոլոր պարիսպն... չախչըներ քակե-
ցին եւ վանորայքն չալիբեցին (ՄԺ
I, 213): Պարիսպէն կըտորմն տեղ
բլաւ Գ տան վերայ եւ շատ քանչե-

լիք եղաւ, տունն քակտեցաւ, չաղաչն աւերեցաւ (ՄԺ I, 220):

ՉԱՆԱՐԺԱՆ, ա. Անարժան (չ+ան- կրկնակի ժխա. մասնիկներով): *Տէրն ամենայնի... ինձ՝ չանարժանիս եցոյց այսչափս, որ չեմ բաւական (Նշխարք, 5):*

ՉԱՌԹԱԶԱՆՈՒԹԻՒՆ, գ. ճարտասանութիւն - շտրբազանութիւն (բոխդ.): *Ոմանք ուսան զփիլիսոփայութիւն, ոմանք՝ զչառթազանութիւն (Դիւան Միսիթ., 55):*

ՉԱՐԱԲԱՌ, ա. Չարափառ: *Այլ ոչ կայ քան զիս չարաբառ / Վասն իմ խնդրեցէք թողութիւն (ՌԻՄՇԲ II, 40):*

ՉԱՐԱԲՕԹ, ա. Չարագոյժ, աղէտաբեր: *Զի՞նչ է այս կրկնակի չարաբօթ լուր, որ ասանի ի Սուրբ Աթոռս և յականջս ամենեցուն (Դիւան Ն. Զուղ., 107):*

ՉԱՐԱՃՐՃԻԿ, ա. Չարակամ, անկարգ: *ԱՖ չարաճճի «չար գազան, գէշ ճճի և անոր նմանողը»: Առաջմանէ չարաճրճիկ ազգն Հոռոմոց բազում նեղութիւնս հասուցին ազգիս Հայոց (Յ. Կարն., 52):*

ՉԱՐԱՊԱՆՏՈՒԹԻՒՆ, գ. Չար բախտ ունենալը: *Տիրել է ինձ մեծ ձախորդութիւն, չարապախտութիւն և թմրութիւն (Ն. Մուշ., 244):*

ՉԱՐԱՎԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. Չարակամութիւն, չկամութիւն: *Կարծոտութիւն է՝ չարավարկութիւն իմն զումեմնէ, վասն թեթևի ուրուք դատողութեան (Նոր. Ծաղ., 118):*

ՉԱՐԱՐԻՉ, գ. Չաստուած, ստաւաստուած: *Դարձարուք յունայն օ-*

րինաց ձերոց եւ ծաներու՛ք չարարիչն եւ՝ զՏէր Աստուածն երկնի եւ երկրի (Դարիժ., 358):

ՉԱՐԱՓԱՌՆՈՒԹԻՒՆ, գ. Չարափառ լինելը, շեղում ուղիղ հաւատից, աղանդատութիւն: *ԱՖ չարափառութիւն «նեւեալիկոսութիւն, դրժբախտութիւն»: Չարափառնութիւն ըստ Դամասկոսի է՝ հետեւութիւն իւրոց հաճութեանց ըստ տնասրութեան սրտի (Նոր. ծաղ., 161):*

ՉԱՐԳԵԼ, նբ. Չարդ(ու)ել, փխբ. սատկել, ոչնչանալ: *ՄՇԲ չարդիլ «կոտորուել»: Գ յամիս Նողային ձին ու տաւարն եւ ոչխարն չարդեցան, իրենք սովայլից մեռան (ՄԺ I, 227):*

ՉԱՐԵԿԵԼ (պարսկ. çaryak «հառորդ մարը»), նբ. Քառատել: *Պիտի շանկալն զարնեն կամ շորս չարեկեն, նա յառաջ վիզն կու զարնեն կամ խեղդեն (Միմ. Լեհ., 146):*

ՉԱՐԵՆԱԼ, չբ. Չարանալ: *Ի՞նչ կու շահի, որ կու չարենայ (ՌԻՄՇԲ, 347):*

ՉԱՐԿՈՒԼ, գ. Քառանկյունի՝ չորս անկիւնները ծաղկազարդած (թաշկիմակ): *Սահակէնց Մէլիքսէթն և Պողոսն Ա շահ, Ա պղընծէ բուրվառ, Ա սպիտակ չարկուլ եաղլախ ետուն (Ակոռ., 203):*

ՉԱԻՔ ԱՆԵԼ, հրդ. Ծննդանել. ակնարկուով է երաշտ տարիներին անձն ետեղալու նպատակով կատարուող աղօթքը: *Վասն երաշտութեան համար չաւք արաք ի՛նքանանայէայ, Բ-ըն մուսաֆիր էր,*

Ա-ըն կեզլովցի, մէկն բաբերդցի, մէկմ ալ հաբեղայ (ՄԺ I, 219):

ՉԱՓԱԿԱԿԱՆ, ա. Չափաւոր: ԱԲ չափական «1. չափած, 2. տաղաչափական, 3. երկրաչափական» (Խմաստափոխ.): Անհատողութեան սկիզբն ի նիւթական իրս՝ է կրկին, այսինքն՝ նիւթ առաջին եւ քանակութիւն չափական (ՄՄ 1756, 14բ):

ՉԱՓՆՈՒՍՏԱՇՆԱԿԵՐ, ա. Շատ ուտելոց հագուստի կոճակները բաց անող (ծան. հրատ.): ՄՇԲ չափոստ «պարսկ. հարմանը»: Ետոյ եկաւ Յակոբ վարդապետն... անառակ եւ շատակեր ջրախումն [եւ շ]ոպչն, չափըոստաշակեր (ՄԺ I, 226):

ՉԳԱՂՈՒՍՏ, գ. Չգալը, ուշանալը: Յայտ լիցի մեծութեան հզօրիդ, եթէ չգալուստ քոյ յամելոց իցէ... ի թիկունս հասոյ Ռ-ապետիւ (հազարապետ) միով (եզով, 360):

ՉԵՂՉ, գ. Չղջիկ: ԱԲ և ՀԲԲ չեղջ, չիղջ նոյն նշ.: Չեղջ - մաշկաթեւ (ՄՄ 2019, 174ա):

ՉՐՆՉԵԼ, չբ. Չնչիւնանալ, փոքրանալ: Շրթունք իմ անշարժեցան / Ոսկերք իմ տառապեցան / Չընչինս չընչեցան / Պարանոց իմ գլխակորեցան (Ներբ. Սրապ., 20):

ՉԻԲԳԱՅ (հունգ. csipke), գ. Ժանեակ: Ամենեւին մէկ հազըսղէղէնուն վերայ արծըթէ ոսգու զարդարանքներ չի գըտլի, ոչ գիւղիւշ, ոչ չիբգայ, ոչ բօղիշբան, ոչ բասամանդ, ոչ ֆրանձըլ (Գովր., 45):

ՉԻՆԻՆՂԷՆ, գ. Խեցեղէն, յախնապակեղէն: Շինեալ են Բ մեծամեծ

աղօթանոցս և արտաքուստ չինիեղէն և գոյնգոյն մարմարոնեայ քարամբ զարդարեցեալ է (Պատմ. Նրուս., 1932, 15):

ՉԻՎԱՐԳԱՊԵՏ, գ. Անարժան վարդապետ: Մին Ռհան անուն չիվարդապետ շուղեցի, սայ քուրդացաւ, շատ զարար տվեց Ջուղու (Չ. Ա. գուլ., 103):

ՉԻՎԼ (լատ. cīvilis, իտալ. civile), ա. գ. Քաղաքացիական: Գըրով դատաստան առնեն՝ թէ՛ չիվէ, թէ՛ կրմնալ և զայս օուր դատաստան ի վաղըն ոչ ձգեն՝ թէ՛ չիվէ, թէ՛ կրմնալ (Յ. Թովթունջ., 303):

ՉԻՔԱՐԺԱՆ, ա. Անարժան: Տէրն փութով ի մէնջ եբարձ, զի չիբարժան ազգ տիրատեաց (ՈՒՄՇԲ, 369):

ՉԻՔԱՌՈՐՈՒԹԻՒՆ, գ. Չփաւորութիւն: Նոյն խօսակցութեան մէջ... հասկացոյց սորայ չիբաւորութիւնն, եւ փափն հրաման արաւ՝ փարթտան (Իրւան Մխիթ., 103):

ՉԼԻՆԵԼԻՔ, գ. Չլինելու՝ անհաւանական մի բան: Չլինելիքներն կու լինա (Պօղ. նամ., 90):

ՉԿԱԹՈՒՂԻԿՈՍ, գ. Սուտ Կաթողիկոս: Թէպէտ ամենայն եղեալն գրեցանք... Ակոր չկաթողիկոսին չիշութիւնն չէի կանար պատմել (Իիւ. Ս. Յակ., 1940, 315):

ՉՀԱՍՈՒԹ, գ. ա. Չհաս լինելը՝ ազգականութեան պատճառով ամուսնութեան արգելումը, հմմտ. ՀԱՍ ՈՒ ՉՀԱՍ: Թէ ոք կամէր կին առնուլ եւ չհասութք լինէր, չերթային առ հովիւ կամ առաջնորդ (Սիմ. Լեհ., 193):

ՉՄԱՐԳԻ ՈՒՆԵԼ, հրդ. Մարդու տեղ՝ բանի տեղ շրմել: ԱՔ շմարդի «ա. անհարակ, անխելք»: Այսու պատճառաւ առաւել եւս զօրացան ներհակքն ի վերայ նիկօլին եւ ի շմարդի ունէին (Դարիժ., 296): Եթէ խորհրդակիցք եւ եթէ սպասաւորք, ի շմարդի կալեալ զԴարիժ, արհամարհանօք ունէին զնա (Դարիժ., 299):

ՉՈՐԱՊԱՔ, գ. Ծովապահութիւն, սակաւկերտութիւն: Բոլոր տարին շորապաք, երկու օրն անգամ մի ճաշակէին եւ զայն բանջար (Սիմ. Լեհ., 300):

ՉՈՐՀԱՅԱԿԵՐ, ա. Սակաւապետ, ֆշակեր, ժուժկալ: Եթէ գիտէ՝ ծանուցանէ վասն շորհացակերի որդի... Պետրոսին կողմանէ (Դիւան Մխիթ., 110):

ՉՈՐ ՄԱՆՐԱՉՈՒԿ, հրդ. (կենդ.) Տառելի: Չոր մանրածուկն, որ է տառելի (ՄՄ 6275, 221ա):

ՉՈՒԱՆԳՕՏԻ, ա. Չուանով գօտկուրուած, շուանէ գօտի կապող: Կարգաւորք, հաբեղայք եւ մոնոզոնք խարագնագգեստ եւ շուանգօտի (Սիմ. Լեհ., 301):

ՉՈՒՆԱԿ, ա. Ոչ ունակ, սպաշնորհ: Նոքա եղեալ էին կաթողիկոս զու-նակ սպաշնորհն (ՄԺ II, 323):

ՉՈՒՈՒՏ, գ. Հրեայ, տե՛ս ՉՈՒՀՈՒԳ: Եագուպ Խայիմ շուտաին տվի քարէտուն քըրայով, պիզտի տուն վերի (Կամենից, 112):

ՉՏԷՐ, գ. Սուտ տե՛ր՝ շխհանայ: Վերակացու Սուլթանշահ շտէր Յովհաննէս Տէրզնցին (Աղան. Միաբանք, 112):

ՉՔԵՐԳՈՂ, գ. Անարժան ֆերթո՛ղ՝ ստեղծագործող: Գրեցաւ ձեռամբ անիմաստ եւ անհմուտ չքերդող Սահակ սարկաւակը (Չեռ. յիշ. Ժէ, 384):

ՉՔՂՈՒԱԿ (հայ. չիք+լու+ակ), ա. Անխելի: Չքլուակ - անլսակ (ՄՄ 2019, 174ա):

ՉՔՆԱՂԱՆՄԱՆ, ա. Չքնաղ կերպով: Չքնաղանման յօրինելով, Պարզանման բանս մեկնելով (Առ էջմ., 194):

ՉՕՄԱԼԱԿ (թուրք. çomlak), գ. Կաւէ աման, պոտոնկ: Չօմալակն ձեփէ և եփէ, որ շունչն չելնէ (Բունիաթ, 121):

-Պ-

ՊԱԹԵԼ (արաբ. baṭīl «վերացած, ուժից զրկած»), չք. Ուժագրկել, թուլացնել: Հազարն ցաւ մի է, որ զհաւասան կու պաթիլէ, ամէն անձն զէտ մեռած լինի (Բունիաթ, 70):

ՊԱԹԱՃԻ, գ. Բալթաշի (տապա-րակիր)՝ սուլթանի թիկնապահ զօրքի մի տեսակը (ժան. հրատ): Ոչ ոք մնաց ի բանակն, բայց միայն ընդ իւր երկու հազար մերձաւոր

սորաքս եւ... նոյնչափ տապարակիրս, որք են պալթաճիք (Պատմ. հոռթ., 62):

ՊԱՍՐ (թուրք. baldir), գ. (բժշկ.) Սրումֆ, ուտֆ: Յաւ մի կա, որ մարդուն պալտրներն կու լինի, և կու հաստնա պալտրնին, և տամարներն կու լարի ծուռ ծուռ (Բունիաթ, 107):

ՊԱՍԵԼ, նբ. Պահել: ՀԲԲ պախել «1. վախել, վախենալ, երկիւղ կրել, 2. կտարվել, ճեղքվել»: Հրամայէք, որ ուրէնցն խաղաղ պախեն և ամենայն ջաթտան էնպէս կենան (Եզով, 357): Քրիստոնէութեան յավատն դուք առանց ախ և երկուղի պախէք (Եզով, 393): Նոցայ լէվ պիրկ սիրով պախես և նոցայ խէտ լէվ սիրով ճանապարհ գնաս (Եզով, 395):

ՊԱՀԱՌՈՒԹԻԻՆ, գ. Խնայողութիւն, պաշար: [Սուրբ Տունս] զպահառութիւնս բազում ունի այժմ ի մարմնականաց իրաց (Ագուլ. կոնդ., 92):

ՊԱՀԵՅՆԵԼ, պբ. Բուժել, թարմացնել: Տուր շնխաղողի ջուր և մէշ պահարի և վարդէջուր օծ ի վրա, որ պահեցնէ (Բունիաթ, 92):

ՊԱՀԷՂԱՏԵՂ (պարսկ. pahoz «բանջարանոց, պարտէզ»+հայ. տեղ), գ. Բանջարանոց: Ինչ որ մեր պապ Ղարախանին կայ, երեք բաժնէն մէկն իմն այ, որ ծախեցի... թէ՛ պահէգատեղ, թէ՛ ջուր, թէ՛ ջաղաց (Սանահն., 153):

ՊԱՀԷ Ի ՊԱՀ, մկ. Ամեն պահի, բուպէ առ բուպէ: ՄՃԲ պահ ի պահու «ժամ առ ժամ, պահ առ պահ»:

Մահմետականքն պահէ ի պահ առաւել եւս ժողովէին եւ բազմանային (Դարիժ., 407):

ՊԱՀՊԱՆՈՂԱԿ, ա. Պահպանող, պահապան: ԱԲ պահպանողական նոյն նշ.: Առաքեալ զպահպանողակ զօրութեան աշոյ քո (Հնատիպ, 14):

ՊԱՂԻՆՔ (արաբ. baqi), ա. գ. Խոսվարար, անհնազանդ, անիրաւ: Իրենց միջէն աւիրեցաւ թապուրն եւ դոքա ալ հասան, շարդեցին ժիհոգի կամ ալ պակաս, ալ պաղիքն դարձան գնացին (Մժ I, 215): Ռոսկի գին կըտրեց, թող զալ պաղիքն, որ ընկան եւ մնացին գերի (Մժ I, 216):

ՊԱՃԱՆԱՍ, գ. Քենեկալ: Մեծ որդին Յեքուպն առեր է եփրատօլին քէնին և է պաճանախ եփրատօլին (Մժ II, 404):

ՊԱՅԱՂԱՏԱԶԱՐՄ, **ՊԱՅԱՂԱՏԱԶՆ**,

ՊԱՅԱՂԱՏԱՏՈՂՄ, ա. Պայազատների զարմից, տոհմից, իշխանագուն, ազնուատոհմ: Ժամանեսցի գիր սիրոյ և ողջունի... սիրելի պայազատագարմ և իշխանագուն Խօճայ Յակոբիդ (Իււան Ն. Զուլ., 44): Հասցէ գիր արհնութեան... ի վերայ պայազատագարմ և ազնուատոհմ ազատորդացդ (Սանահն., 90): Ի վերայ պայազատագն սիրելի որդուոյն քոյ Քրիստոսիւ զօրացեալ թագագարմն տլֆինին (Դաւան., 125): Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան և նամակ պահպանութեան պայազատատոհմ և պերճապատիւ իշխանիդ մերոյ՝ քա-

լանթար պարոն Զաքումիդ (Դիւան Ն. Զուդ., 103):

ՊԱՅԱՐ (ռուս. боярин), գ. Բոյար, տե՛ս նաև **ՊՅԵԱՐ**: Պաքուայ և Դարպանդու շնդրալների և պայարների ղուլուղին (եզով, 419):

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՏԵԼ, նբ. Պայծառ, շֆեղ կերպով կերտել՝ կառուցել: ԱԲ պայծառակերտ «մեծաշէն, փառաւոր»: Ի հիմանէ շինեցաւ Ս. Սարգիս անուն եկեղեցիս... բազում աշխատանօք պայծառակերտեաց զսա ի փառս Աստուծոյ (Աղան. Միաբանք, 493):

ՊԱՅԾԱՌԱՄՇՔԵՂ, ա. Պայծառ ու շֆեղ: Աւագ խորանն... է այնքան պայծառաշքեղ և ճառագայթարձակ ոսկեզօծ խաչկալիւ, մինչ զի ամեն-կին ոչ զանագանի ի լուսեղէն երկնից (Պատմ. Երուս., 1931, 273):

ՊԱՅԾԱՌԱՊԱՀՈՒԹԻՒՆ, գ. Պայծառ՝ շէն պահելը: Այս ամենայն ի փառս Աստուծոյ եւ ի պայծառապահութիւն սրբոյ վանացս (Յիշ. Ուլն., 294):

ՊԱՅՐԱՆ (թուրք. պարսկ. bayrak), գ. Դրօշ: Բայց զոր ձողն կրէր՝ կենդանի ըմբռնեալ տարան ընդ ինքեանս ի բանակն Տաճկաց, նոյնպէս եւ զձողն առին, որ թարգմանի տաճիկ լեզուաւ պայրախ (Պատմ. Խոթ., 51): Փախըստական եղեւ ճանապէհէրան եւ սուլթանն պայրախն առին եւ հագիւ ի խառըրդան ընկան (ՄԺ I, 212):

ՊԱՆՊԱՌԱԿ, ա. Ծաղրաբան, կատակախօս՝ ըստ իմաստի: ՀԲԲ ունի պանպ «անստոյգ նշ. բառ»:

Աստուածատուր սուրբ քահանայ / Խիստ պանպառակ, ծեր մասխարայ (ՈՒՄՀԲ, 513):

ՊԱՆՏՐԱՋՈՒՐ, գ. Պանրի ջուր՝ շինուկ: Ն. Բիւզ. և ՄՀԲ պանդրջուր նոյն նշ.: Յետ այնոր զպանտրաջուրն տուր (Բունիաթ, 112):

ՊԱՇՏՈՒՄ,

ՊԱՇՏՈՒՆ, գ. Պաշտամունք, եկրրպագութիւն, ժամերգութիւն: ԱԲ պաշտունն «պաշտօն»: Ե ապագի փող, որ Քրիստոմի մահուան թաղման է և պաշտունուց տվի (Սանահն., 143): Պաշտուն պատարագ մատուցինք բարեխօսութեամբ Սուրբ Ստեփանոս Նախավկային (Կալված., 158):

ՊԱՍՄԱԳԻՐՔ,

ՊԱՍՄԱՅ ԳԻՐ, գ. Տպագրուած գիրք, տպագիր, տե՛ս ԲԱՍՄԱՅ ՏԱԼ: ՄՀԲ պասմայ «տպագրուած»: Այս ձեռագրիս օրինակն Փափն գրել է պասմայ գրող եւ յուղարկել է ի կեհ (Թորոս աղբար, 289): Պատկերագործք, նկարագիրք, պատկերահանք, պասմագիրք հանողք (Սիմ. կեհ., 344):

ՊԱՎԼ (արաբ. bawl), գ. (բժշկ.) Մէջ: Գողն կաթ կաթ գայ, դատրա դատրա պավլ, երկուքին դեղն այլ մէկ է (Բունիաթ, 103):

ՊԱՏԱՆԱՏԵՂ, գ. Յիսուսին պատանմով պատելու տեղը Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարում: Այս պատանատեղ է, այս Գողգոթայ է (Աղան. Միաբանք, 165): Ի դիմաց սորա Քրիստոսի պատանատեղն է, և կայ վերան կախեալ ու-

թը կանդեղ (Զուար, 1868, 372):
Շաբաթ լոյս իջնուն ի վայր, ուր
պատանատեղն է Քրիստոսի (Սիմ.
Լեհ., 269):

ՊԱՏԱՌ, գ. Հոդակառու: ԱՖ պատառ
«հացի կտոր, բրդած կտոր» (ի-
մաստափոխ.): Աստուած ողորմի
Փշրկէնց Մահդասի Հայրապետին և
իւր որդի մահդասի խօճայ Մարգա-
րէին, որ ետուն ընծայ... Սիղուտու
ճանապարհին Կրկըշարտու պա-
տառներն (Ակոռ., 198):

ՊԱՏԱՌ-(ՈՒ)ԱԾ, ա. Պատռուած,
նեղ, փոս: ՀԲԲ պատռուած, պա-
տռուածք «պատռուելը, պատռ-
ուումն»: Թէ եզն եւ ձի եւ այլ անասուն
դէպ լինէր անկանել ի խորափիտ պա-
տռուածին (գրչ. պատռածին), ոչ
կարէր ելանել (Դաւրիժ., 223):

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՒՅՈՒԹԻՒՆ, գ.
Պատարագ մատուցելը, պատար-
ագ: Սպասաւորեալ ամենայն կե-
նօք և քաղաքավարութեամբ իւրով
Աստուծոյ, մանաւանդ սրբոց տա-
ճարաց, աղօթանուիրութեամբ և
պատարագամատուցութեամբ
(Ոսկ. նամ., 1967, 134):

ՊԱՏԻ ՊԱՐԻԹ (պարսկ. bād-i
barīd), գ. (բժշկ.) Յուրա քամի: Եւ
ցաւ մի այլ կա, որ իրենն պատ-
ի պարիթ կասեն (Բունիաթ, 95):

ՊԱՏԻ ԱՌՆԵԼ, հոգ. Պատուել,
յարգանքի արժանացնել: Տարաւ
զիս ի իւր տունն եւ լաւ պատիւ ա-
րար (Պօղ. նամ., 88):

ՊԱՏԿԱՌԵԼՈՒԹԻՒՆ, գ. Պատկա-
ռանք: ԱՖ պատկառութիւն նոյն նշ.:
Ամօթխածութիւն է՝ պատկառելու-

թիւն իմն ասելոյ կամ գործելոյ զիրս
անհամեստս (Նոր. ծաղ., 189):

ՊԱՏԿԵՐՍԿ, գ. Գրոյքիւն պատկերի
վրա, պատկեր (ամփոփում պատ-
կեր և կերտ բառերի): ՀԲԲ պատ-
կերք «պատկեր»: Յիշատակ է պատ-
կերտկըս տն. Նուրիճանի որդի Փիր-
գատա Մըղտէսին (ԴՅՎ VII, 197):

ՊԱՏԿԵՐ ՔԱՇԵԼ, հոգ. Պատկերը
բաշէլ՝ նկարել: Տարան զիս ի սա-
րայն իւրեանց, կամեցան զիմ
պատկերիս կերպն քաշելոյ (Մ.
Շահմ., 318):

ՊԱՏՄՈՒՏԱՆ, գ. Պատռանդան,
տն՝ս նաև ՊԱՏՈՆԴԱՆ: Ազիգբէկն
և Գիրակոսն բերին մէկ լաւ փառա-
ւոր խաչ տեղի պատմութեանով, մէկ
ջուրտ շամատան ջոխտակ մումա-
տեղով, մէկ արծաթէ գանթեղ (Ա-
կոռ., 203):

ՊԱՏՇԱՃԱԳՈՐԾԵԱԼ, ա. Պատշան՝
վայելուչ կառուցում: Ժողովա-
րանք մեծամեծք այլազգեաց կա-
ռուցեալք երեւէին, առ արտաքին
տեսութիւնս պատշաճագործեալք
արժանի գոլ հիացման (Դաւրիժ.,
426):

ՊԱՏՈՆԴԱՆ, գ. Պատռանդան,
տն՝ս նաև ՊԱՏՄՈՒՏԱՆ: Երիշա-
նէնց Գուրիագն [ետ] մէկ լաւ խաչ
իւր պատռնդանովն (Ակոռ., 206):

ՊԱՏՐԻՉ, գ. ա. Խաբող, պատրող
(բոխղ. պատրիարք-պատրի-
պատրիչ): Յետոյ զնացին մօտ ի
պատրիչն իւրեանց՝ թէ մեր մեծն
դու ես, այլոց ի՞նչ պարտիմք (Դիւ.
Ս. Յակ., 1932, 254):

ՊԱՐԱՊՆՏԱԾ, ա. Ամբարցած, շուր-
ջանակի ազուցած: Կայր մասն

սուրբ մարմնոյն ի մէջ մէրմէրի սընտրկին, երկաթով պարապնտած (Միմ. Ահհ., 131):

ՊԱՐԱԻԿ, գ. Պարոզ: Պարաիկ - պար բռնող (ՄՄ 1127, 150ա):

ՊԱՐԶԱՆՄԱՆ, ա. Պարզ կերպով: Պարզանման բանս մեկնելով, Ջերմանման մաքուր սիրով (Առ էջմ., 194):

ՊԱՐԶՃԱՌ, ա. Պարզախօս: Շնորհիւ րակերտ՝ եզակ անճառ / Արթուն քարոզ՝ ծագաց պարզճառ (Աղան. Միաբանք, 464):

ՊԱՐԸՆԷՔ, գ. Պարոնայք, իշխաններ: Նուէմբեր ամսոյ ի վերջքն մեծամեծ պարընէքն յամէն յաղացան (՝) հալիլ բէկին (ՄԺ I, 194):

ՊԱՐԻՍՊ ԱՌԵԱԼ, հոդ. Պարսպի նման շրջապատած: Զժողովեալն յերուսաղէմայ անուամբ իւրն պարիսպ առեալ նստեր է և ընդ մեզ մարտնչի բանորանօք (՝) և նենգութեամբ (Դիւան Ս. Յակոբայ, 1933, 120):

ՊԱՐՈՆԱՀԱԻԱՔ, ա. Պարոններին՝ իշխաններին ի մի հաւաքով: Մեծափարթամ եւ պարոնահաւաք մայրաքաղաքիդ Ասպահանու (Յ. Կոլոտ, 260):

ՊԱՐՈՆԱՆԻՍՏ, ա. գ. Իշխանանիստ: Կեղի փոքր դղեակ... է այժմ պարոնանիստ եւ կարի ախորժահայք (Յ. Կարն., 10): Եւ անտի է գաւառ մի գեղեցկաշէն յոյժ, պարոնանիստ, խոտալիբ եւ ջրաւէտ (Յ. Կարն., 10): Անդ եկեալ էր եւ դարբերեալ էր՝ թողլով գերկիրն իւր եւ

պարոնանիստ զքաղաքսն իւր (Կամենից, 42):

ՊԱՐՈՆԱՅՈՅ, գ. Իշխանագն, ագնուական: Ոմն պարոնացոյ Օլախի երկրէն եկաւ ի այս երկիրս, եւ օլախցիքն կամեցան զինքն առնուլ իւրեանց ի պարոնութիւն (Կամենից, 35):

ՊԱՐՍԱԻԱԲԱՆԵԼ, չբ. Պարսաւել, պարսաւանքի խօսք ասել: Կամիմ ես լինիլ ջատագով ընդդէմ, որք ամբարտաւանեն յառաջ բերելով զբանս այնոցիկ, որք պարսաւաբանեն զկանայս (Նոր. ծաղ., 23):

ՊԱՐՍԱԻԱԳԷՏ, ա. Պարսաւանքի արժանի: Հմմտ. ԱԲ պարսաւադէտ «մեղադրող», ՀԲԲ պարսաւադէտ «բամբասաւտ»: Բայց զի ոմանք խակամիտք և անկիրթք, պարսաւագէտք և պատճառաբանք՝ այլ և այլս բարբանջեն (Ոսկ. նամ., 1966, 303):

ՊԱՐՍՔԱՐԵԼ (հայ. պարս+բարել), չբ. Քարկոծել: Ապստամբեալն ի միմեանց բնաւ մի՛ ընկալցին ի ժառանգութիւն աստիճանի, ի դռնաբացէն մինչև ցեպիսկոպոսն. զայնպիսիսն պարսքարեցի յերկուց կողմանց (Դիւ. Ս. Յակ., 1940, 154):

ՊԱՐՏԱԶՍՈՒԹԻՒՆ, գ. Պարտից ազատ՝ գերծ լինելը: Զբազում վիշտս եւ զնեղութիւնս կրեալ վասն պարտազատութեան (Յ. Կոլոտ, 156): Ի շինութիւն եւ ի պարտազատութիւն Սուրբ Յակոբայ Աթոռոյն (Յ. Կոլոտ, 159):

ՊԱՐՏԱՀԱՏՈՒՅՈՒՄ, գ. Պարտի հատուցում: ԱԲ պարտահատոյց «պարտավճար»: Աւարտեցար զսա

ի փառս Աստուծոյ ... ի պարտահատուցումն մեր (Յ. Կոլոտ, 143):

ՊԱՐՏԱՏՈՒ, գ. Պարտ տուող՝ պարտատէր: Մնասցէ կաթողիկոսու լիւնն ի ձեռս իրեանց եւ այլ իմն կերպիւ զերծցին ի ձեռաց պարտատուաց (Դաւրիժ., 62):

ՊԱՐՏԱՅՈՒ, ա. Պարտաւորեցնող (գիր): Սկսեցին ճնարել այսպէս գրեցին սուտ պարտացու գիր մի, թէ Շերմանցուց փոխանորդ Անդրիասն առաւ հարիր թուման դրամ (Յ. Մուշ., 127):

ՊԱԿԱՅԻԱՆ (թուրք. boyahane), գ. Ներկատում: Կածկրտուն, հեղեղն եկաւ եւ պատեց բոլոր քաղաքն... տապախխանաներն եւ պաւեայ խանաներն (ՄԺ I, 219):

ՊԱԶԱՃԻ (թուրք. bozaci) գ. Կորեկաջուր պատրաստող: Կածկրտուն, հեղեղն եկաւ եւ պատեց բոլոր քաղաքն... հացածախներն եւ խասապներն, պաւզաճիք եւ մէջխանաճիքն (ՄԺ I, 219):

ՊԱՔԻԿ, գ. Պագիկ՝ համբոյր: Արևուդ համար պաքիկ մի տուր (ՈՒՄՇԲ, 408):

ՊԵՏԷՆԱԼ, շր. Պէտմ գալ: Թէ քաղաք, թէ գաւառ ում պետէնա, որ պեթկական եւ ուրէնայ ուզէցած, ընդունելի եւ որչանք որ ուրէնց լազումէնայ (եզով, 402):

ՊԵՐՂ, գ. Բերդ: Պերդի մէջի տաճկաց խօսք նոցա այս կեավորներ վեր առնունք, փուլացնենք (եզով, 416):

ՊԵՒԵՏԻԿՈՍ, գ. Պետա: Ո՛վ պեւետիկոսք քաջ, հովուպետ ի մէջ Իլովի (ՈՒՄՇԲ, 235):

ՊԷՆԵՑԻՅԻԱՂՈՍ (իտալ. beneficiato «բարեշնորհեալ»), գ. Ժառանգատուր (ծան. հրատ.): Թոյլտուութեամբ Ս. Ժողովոյն առնէ զնա պէնէֆիցիարդոս աթոռակալ եկեղեցւոյն (Ստ. Ռօշքայ, 188):

ՊԷՏ / ՊԷՏՔ ԱՆԵԼ, հրդ. 1. Այցելել: ՄՇԲ Պէտ այնել «խնամել»: Պէտ անել, այց առնել (ՄՄ 1127, 134ա): 2. Բուժել: Պէտք անել, բուժել, օգնել (ՄՄ 1127, 137բ):

ՊԻՉՏԻ, ա. Փոքր՝ պատիկ: Եագուպ Խայիմ շուուտին տվի քարէտուն քըրայոյվ, պիգտի տուն վէրի, 18 գոլոթի (Կամենից, 112):

ՊԻՂ, գ. Բեխ: Յերկիրն Դիադինու աչօք մերօք տեսեալ աղչիկ մի վեցամեայ, իբր զկատարեալ երիտասարդ պիղով եւ մորուսով, մեծերես եւ լայնասիրտ (ՄԺ I, 285):

ՊԻՐԿ ԿԵՆԱԼ, հրդ. Ամուր՝ հաստատուն մնալ: Ինչպէս տաք սրտով նշանց էք տվել եւ մինչ ի պիրկ կացել էք (եզով, 357): Պիրկ կէնէք եւ թշնամի դարշուց ամենայն ժամ կանկնէք եւ թուր տէք եւ թշնամին յաղթէք (եզով, 430): Մեծ ինփրայթօսին եւ ամենայն ողորմութեամբն հրամանի տակում պիրկ կու կենան, որ է պօղպրթէքի կասեն (եզով, 406):

ՊԼԵՏԵՈՒՆ (պարսկ. կլապտուն կամ կլապիտոն), գ. Մետախէ գոյնգոյն թելերով բանուած (ծան. հրատ.): Իւան Դրիգորի կին երես մէկ ջուխտ փէշկիր, մին պլեախուն պարձ (Ակոռ., 208):

ՊԼԻԿ ԿՏՐԵԼ, հրդ. Պլիկ «պղնձէ կամ արծաթէ մանրադրամ»

(ՄՀՖ), այստեղ՝ դրամ հատել: Սա հրամայեաց **պլիկ կտրել** պղնձէ և սահմանեաց զգրամն տաղմայ զարնել (Գիւան ժ, 108): Այս Ջաֆարն առանց մուսալիմ գալու գնաց. սա ևս հրամայեաց **պլիկ կտրել** (Գիւան ժ, 111):

ՊՈՂՈՊԱՏԻԿ, գ. Պողպատ: ԱՖ պողովատիկ նոյն նշ.: Ճակատամարտէին քաջութեամբ՝ պարունակեալ ահարկու զինուք եւ պարփակեալք փայլակնացայտ պողոպատիկ զըրահիւք (Պատմ. հոթթ., 46): Երկաթապատ **պողոպատիկ** զրահիւք հաստատեալ կային ի դիմի (Պատմ. հոթթ., 54):

ՊՈՂՈՎԱՏԱՇ, ա. Պողպատով տաշած: ԱՖ **պողովատատաշ** «պողպատէ գործիքով տաշած»: Սանահինն էր ի սահմանս կողէ քաղաքին, գեղեցկայարմար և չքնաղատես կոփուածով և **պողովատաշ** վիմար (Սանահն., 53):

ՊՈՂՈՏԵՆՈՒԱԳ, գ. Կատակերզութիւն: **Պողոտենուագ** - տեսակ իմն բանաստեղծականի վերաճառութեան, որ զքաղաքականաց կամ զյատկառից անձանց զվարս և ըզկեանս առցուցանէ, լատ. քօմէտիա (Վ. Յուն., 62):

ՊՈՂՍԱՆ, **ՊՈՒՂՍԱՆ**,

ՊՈՂՍԱՆՅԻ, գ. Հայկ. աղբիւրներում այդպէս էին անուանում մոլդաւացիներին եւ Մոլդաւիան, Բոգդան 3-րդ իշխանի անունից: Դաղմատք... են սահմանակիցք Ալամանաց եւ Մաճառաց, **Պողտանաց** (գրչ. **Պուղտանաց**) (Պատմ.

հոթթ., 35): Հանդերձեցին ամենայն զօրավարքն եւ զօրագլուխքն զբովանդակ հեծեալքն եւ զհետեւակազօրս՝ որպէս զՏաճիկս, նոյնպէս ըզ**Պողտանիցս**, զՄինթացիս եւ զԲումեւելցիս, զՊոսնացիս եւ զԱնատուցիս (Պատմ. հոթթ., 62):

ՊՈՍՆԱՅԻ, գ. Բոսնիացի: Հանդերձեցին ամենայն զօրավարքն եւ զօրագլուխքն... զ**Պոսնացիս** եւ զԱնատուցիս (Պատմ. հոթթ., 62):

ՊՈՒՂԱՐՆԱԿ, գ. Բուլղարեէն: Պօսնու մարզն ամէն **պուղարնակ** կու գրուցեն (Սիմ. Լեհ., 48):

ՊՈՒՏ ՊՈՒՏ, ա. Կէտ-կէտ, բծաւոր: ՀՖՖ **պուտ պուտ** «ծողովորակաւ խաղ», նոյն է պապլաս, որ նշանակում է «վայրի խաչիսայ բոյսը»: Կա և ազգ մի կենդանի... և ինքն խիստ սիրուն կաշի ունի **պուտ պուտ** (Յ. Թովթունջ., 310):

ՊՈՒԿՈՒՄԷՅՍԻ (գերմ. Bürgermeister, ռուս. бургомистр «ֆաղաֆապետ»), գ. Տեղական պաշտօնեայ, ֆաղաֆաղովա: Հաշիարխանէն ինձ չափար ուղարկեցին, թէ **պուրկումէտորերն** եկին ապրանքն ամէն քաշեցին տարան (Եգով, 257): **Պուրկումէտորերն** եկին ապրանքն ամէն գաւթեցին տարան (Եգով, 259):

ՊՈԿԱԼԱՊ, գ. Բերդապահ, տե՛ս ԲԻԳԱԼԱՊ: **Սողիհա բերդին զպըրկալապն** եհան եւ ի նոցա տեղի ոմն զՖոանգ եղիր ի բերդն (Պատմ. հոթթ., 28): ԶԲիսոցքին... եհան եւ զՕլախ **պուկալապներն** եղիր ընդ իւր իշխանութեամբն (Պատմ. հոթթ., 32):

ՊՍԱԿԱԶԱՐԳՈՒԹԻՒՆ, գ. Պսակավ զարդարունելը: Ահ պսակազարդիմ նոյն նշ.: Յանդիմանակցութիւնս ըստ յաջակողմեանն եւ ի պսակազարդութիւնս ընդ սուրբս ամենայն (Ագուլ. կոնդ., 86): Ընդունիցիք... պսակազարդութիւնս ընդ սուրբս ամենայն յաւիտեանս (Ագուլ. կոնդ., 99):

ՊՏՈՒՂ ԲԵՐԵՆ, հրդ. Պտուղ՝ բերտալ: Կայ և ծառ շաֆթալուի, որ շիրա կու կշռէ մին հատն և ի տարին բոլոր պտուղ կու բերէ (Յ. Քութունջ., 309):

ՊՏՈՒՏ, գ. Պտոյտ, շրջագիծ: Միսինայ մեծ աղայ է, որ պտտտն է՞ միլայ. այս աղէս ել Իսպանօլի այ (Զ. Ագուլ., 17):

ՊՏՊՏՈՆ (հայ. պուտ+պուտ+ոն), ա. Գոյնգոյն, երփներանգ: ՀԲԲ պտպտուն «պուտ-պուտ կէտերով, խայտաբղէտ»: Արդունէց Յովսէփի որդի Մատուրն Ա լաւ պտպտոն եաղուիս, Ա զառպապ ուրար, մէկ լաւ ճառ կանթեղով ետ (Ակոռ., 206):

ՊՐԱՍԴԱՎԱ (ռուս. Пристав), գ. Վերակացու, ոստիկանապետ Յարական Ռուսաստանում: Կսիլ է պ. պրասդավան, թէ կու թափլլին ֆունտադօրութենէ (Գովր., 252):

ՊՐՎԻՆՅԷՔ (ռուս. ПроВинция), գ. Պրովինցիաներ՝ մարզեր, գաւառներ: Ինչ վախտ որ դաքայ թէ շատ և թէ փոքր պրովինցէքն գրգոն (Եգով, 405): Գիլանայ ծովին պրովինցումն գեղ, գավառ, շնութեն (Եգով, 406):

ՊՐՕՊՐՕԷՔՅԻ (ռուս. Протекция «հովանաւորութիւն» բառից՝ под протекцией), գ. Հովանաւորութիւն: Մեծ ինփրայթօռին և ամենայն ողորմութեամբն հրամանի տակում պիրկ կու կենան, որ է պօղպրթէքցի կասեն (Եգով, 406): Մեծ ինփրայթօռին ողորմութեան հրամանին տակ գրգոն, որ է պօղպրթէքցի (Եգով, 406):

ՊՕԵԱՐ, գ. Բոյար, տէս ՊՍՅԱՐ: Աւատաւէր, ազնուական, բոյար: Մօսկովու կարգեալ մեծ պօեար (Եգով, 258): Ինքնակալ թագաւորի կարգեալ մեծ պօեար և վազիր (Եգով, 260):

ՊՕՂՕՁ (թուրք. boğaz), գ. (բժշկ.) Կոկորդ: Զիպահ պօղօզին Բ դին կարմիր ուռեց լինի, որ զպօղօզին զԲ դին ուռեցնէ ի դուրսէն (Բունիաթ, 81):

ՊՕՄԱՆ, գ. Պայման: Գին է դրել եւ պօման. թէ շուտով գան եւ գնեն՝ ազատին (Միմ. Լեհ., 174):

ՊՕՆՍԻՆՕՐ, տէս ՄՈՆՍԻՆՆՕՐ: Սկսան նախ իշխանքն գալ եւ զկնի քահանայք եւ կարգաւորք, ապա եպիսկոպոսք, զկնի պօնսինօրք (Միմ. Լեհ., 135):

ՊՕՉԿԱ (ռուս. Бочка), գ. Տակառ: Ամէնուց ինձ հետ բերում եմ թագաւորական, թէ շուշայով և թէ պօշկով (Եգով, 259):

ՊՕՈՉՅԱՆ, գ. Փոռ, փողահար, շէփորահար: Այս է զինաթն... Լ դաւուրխանայ, արծաթէ թրբիթ, նաֆիր (պղնձէ գալարափող), պօսօգան (Յ. Քութունջ., 303):

-Զ-

ԶԱՀԱՍՏԱՆ, գ. Զահերով՝ լոյսերով առատ վայր, փխբ. լուսատուրթիւն: Դեգերեալ եւ մարգեալ ի վարժարանս ջահաստանի առ ոտս վարդապետաց (Միմ. Լեհ., 2):

ԶԱՀԱՐԲՈՒՆ, գ. Զահարբուն - մոմեղէն (ՄՄ 2019, 174ա):

ԶԱՂԱՐՃ, գ. Զրաղաց: Սորա ներքին [կայ] ջաղարճն մեծ և շէն (Զուար, 1867, 181):

ԶԱՂԱՅԱՅՏԵՂ, գ. Զաղացի՝ ջրաղացի տեղը: Մեր փողրակի կշտի գետունն մին ջաղացայտեղ տրնգուտք շինեցի (Զ. Ագուլ., 116):

ԶԱՅԱՆՔ, գ. Զանֆ, արդիւնֆ: ԲՀ, ԱԲ և ԱԲ ջայլանք «լաց, կոծ, ողբ» (իմաստափոխ.): Զայլանք - ջան, երկ, վաստակ (ՄՄ 2281, էջ 136ա),

ԶԱՆԱԿՈՒՌ, ա. Զանաղիբ: Աստանոր ջանակունն տուփանօք ետու ի լոյս ածել զլուսատուս այս (Յ. Կոլոտ, 234):

ԶԱՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ, գ. Հոգածութիւն, ջանասիրութիւն: Թարեցաւ... ջանացողութեամբ Սաացի Շահին ջէլէպուն (Ժամ. Պող., 280):

ԶԱՌԻՄԱՅ (արաբ. պարսկ. jarime), գ. Տուգանֆ: Ով որ յետ ու յառաջ տայ՝ ԳձԺԳ յարպետած նզոված քլի, իր հէգիմին ԺԲ միայթուն ջառիմայ տայ (Սանահն., 159): Գձ դուռու ջառիմայ տվինք, շատ էլ շարիք գործեաց (Հնատիպ, 56):

ԶԱՐՄԱԿ, ա. Ճերմակ: Գրիգորի կին Շահասանամն մէկ ջոխտ սուրմայ փէշկիր, մէկ սուրմայեախայ շապիկ, մէկ էլ ջարմակ փէշկիր ետ (Ակոռ., 206): Ետուն մէկ ջարմակ գառբաբ շուրշառ (Ակոռ., 211):

ԶԵՐԱՆԻԼ, չբ. Ծուլանալ: ԱԲ ունի ջերանիլ «խիստ տաֆանալ, հիւանդանալ մարմնով և հոգով» (իմաստափոխ.): Զերանիլ - խոհարանալ, ծուլանալ, յանգել, անկուածիլ (ՄՄ 2281, էջ 135բ):

ԶԷՊԵԱՆԱՅ (թուրք. cephanc), գ. Վատողի, փամփուշտի, ակամի, պայթուցիկ նիւթերի պահեստ: Ապագան ընթացաւ զկնի նոցա եւ բազումս կոտորեաց եւ էառ զամենայն թօբ եւ ջէպախանա (ՄԺ I, 241):

ԶԻՆՏՈՒ (պարսկ.-վրաց. jaldu, jildo, ծան. հրատ.), գ. Պարգեւ, շնորհ: ՄՀԲ ջլտու նոյն նշ.: Յորժամ լուա Շահ Ապագն, զղաղախն քշեց տարաւ դարագիրտ և Արղութէցոնց ժգեղ ջիլտու էրեա (Սանահն., 64):

ԶԻՆԹԻՂՕՄ (ֆրանս. gentilhomme), գ. Պալատական ազնուական Ֆրանսիայում, ջենթլմեն, տե՛ս նաև ՃԷՆԹԻՂՈՒՄ: Որշափ մեծամեծք կան վէզիր, փիրիլօլ, մարքիզ, ջինթիլօմ (գրչ. լինթիլօմ, ճինթուլունք) եւ այլ մեծամեծք, շուրջ զսեղանովն կու կանգնին (Շահմ. յիշ., 317):

ՋՂՈՏԵԼ, նբ. ձղեղ՝ նդոտեղ: *Եսայի կաթողիկոսի գիրն դամբախ ջղոտեց (եզով, 425):*

ՋՆԴԻՒԱԼ, գ. Գեմեռայ, տե՛ս նաև ԵՆԵՐԱԼ, ՃԼՆԷՐԱԼ, ՃՆԴԻՐԱԼ: Պաքուայ և Դարպանդու ջնդրալների և պայարների դուլուղին (եզով, 419): Գիր գրեցին ուղարկեցին Պաքու ջնդրալին մօտն, որ թէ ջնդրալն էլ ուղարկի վերև (եզով, 425):

ՋՈՒՏԱԿ, ա. Զոյգ: Ազիզբէկն և Գիրակոսն բերին մէկ լաւ փառաւոր խաչ տեղի պատմութանով, մէկ ջուխտ շամատան ջոխտակ մուսատեղով, մէկ արծաթէ գանթեղ (Ակոռ., 203):

ՋՈՎՈՒԹԻՒՆ, գ. Տարբերութիւն: Ամէնն մին եղան, պարիշեցանք, այլ ջոկութիւն չկայ (եզով, 421):

ՋՈՐԻԼ, գ. Խումբ, բազմութիւն: Աբ ջոլիր «բոլորած բազմութիւն» (դրափոխ.): *Ջորիլ - ժողով (ՄՄ 1127, 151ա):*

ՋՈՒՀՈՒԳ,

ՋՈՒՀՈՒՏ, գ. Հրեայ: ՄՀԲ ունի ջըհուտ: Աման ջուհուդի ձեռնէն և անգրիցուց ձեռնէն (եզով, 415): Հանուժ են դուրս գցում, աման աման ջուհուտի և անգրեցունց ձեռնէն (եզով, 416):

ՋՈՂԱՅԵՑԻ,

ՋՈՒՂԵՑԻ, գ. Զուղայեցի, Զուղայի բնակիչ: *Խաչս յիշատակ է ջողայեցի Մհրսի Յակոբ վաճառականին, թվ ՌձԺ (1661) (ԴՆՎ III, 161): Մին Ռհան անուն չիվարդապետ ջուղեցի, սայ քուրդացաւ, շատ գարար տվեց Զուղու (Զ. Ագուլ., 103):*

ՋՈՒՐ ԱՒՐՀՆԷՔ,

ՋՈՒՐՕՐՀՆԷՔ, գ. Զրօրհնէի եկեղեցական արարողութիւն, տե՛ս նաև ԶՐԱՒՐՀԻՔ: ԱԲ և ՄՀԲ ջրօրհնէք նոյն նշ: *Վարդապետք ամէն գան, որ ես հրաշալի (բնգր. հրաշարի) ջուր արհնէք անեմ (Զ. Ագուլ., 120): Տէր Պետրոս կաթողիկոսն... արար զջուրօրհնէք (Ժամ. Պող., 257): Զուր օրհնենքից մինչև այսօր շամխալն ու իսմին, որ մակուր կնացին (եզով, 418):*

ՋՐԱՆՈՒՄ, ա. Շատ ջուր խմող, փխբ. ագահ: *Ետոյ եկաւ Յակոբ վարդապետն... անառակ եւ շատակեր ջրախումն եւ շոպլն, չափը ռաստաշակեր (ՄԺ I, 226):*

ՋՐԱՀԵՂՅՈՅՑ, ա. գ. Զրախեղդ, ջրահեղծ: ԱԲ ջրահեղծոյց նոյն նշ: *Ջրահեղցոյց եղեն միայն ի կոստանդնուպոլիս տաճիկք երեքտասան հազար (Ժամ. Պող., 274):*

ՋՐԱՈՂՈՂ, ա. գ. Զրհեղեղ: Հանդերձ եռեակ սեռիւք ի լաստէն ջրատող ի Մասիք Արարատեայ (ՄԺ II, 300):

ՋՐԱՒՀԻՔ,

ՋՐԱՒՀՆԷՔ, գ. Զրօրհնէի, տե՛ս նաև ԶՈՒՐ ԱՒՐՀՆԷՔ: *Ես՝ Զաքարիա կամէցայ, ուր որ գնամ կամիվ Աստուծոյ... զատիկ կամ վարդավառ կամ սուրբ խաչ կամ ջրարհնիք արարիցեմ (Զ. Ագուլ., 5): Ես՝ Զաքարիայ ջրարհիք Ըստամբօլ արարի Աստուծով (Զ. Ագուլ., 31):*

ՋՐԲԻՆ, գ. Զրարբին, ռոզգոտղ հողամաս: Աստուած արհնէ Միրգէն,

մէկ լաւ ջրբիւն ետ Սբ. Յակոբայ (Ակոռ., 208):

ՋՐԼՈՒԱՅՔ, գ. Լուսացաւան, լազան: Կաղմարն, ջրլուացքն, իպրիխն եւ ամէն անօթքն եւ կահնքն գուտր ոսկէջրած արծաթէ (Սիմ. Լեհ., 415):

ՋՐՀԱՅԵՅ, գ. Զրով գուշակութիւն

անող: Վհուկ - գարընկեց կամ ջրհայեց (ՄՄ 1127, 153բ):

ՋՐՀՈՒՍ, գ. Զրհոս: Կարիճ կրկին նահանջ բերէ / Աղեղնատուն, այծեղջիր է / **Ջրհուն** եւ ձուկն նահանջ է (Դ. Զեյթ., 186):

ՋՐՔԱՇ, գ. Դոյլ - ջրքաշ կամ փառշ (ՄՄ 1127, 138ա):

-Ռ-

ՌԱԲԲԻԱՆՄԱՆ, ա. Ռաբբի նման: **Ռաբբիանման լուծանելով**, Սահմանանման յայտ բերելով (Առ էջմ., 194):

ՌԱԶՈՒԹԻՒՆ, գ. Հաւանութիւն, հանութիւն: Մեք՝ երկու քոյրքս մեր **ուզութեամբն** ծախեցինք, գինն բէղսուր առինք (Կալված., 30): Իմ **ուզութեամբս** իմ հայրենիք Գումբեթի արտն տվի մեր վանք Սուրբ Յովանիսին վախմ (Կալված., 36):

ՌԱՀԱԹ (արաբ. raiyyat), գ. Հարկատու, հպատակ ժողովուրդ, հողագործ զանգուած, տե՛ս նաև **ՌԻԱԹ**: Մեր **ուհաթի** կամակցութեամբ մատնարգի գլխի Ունանանց հողն ծախեցինք ի վերայ Սարգիս պարոնտէրին (Սանահն., 145):

ՌԱՀՎԱՐ, գ. Ճանապարհորդ: ՀԲԲ **ուհվար** «հեծնելու ձի» (իմաստափոխ.): **Ռահվար** - ճանապարհորդ, ուղղէգնաց (ՄՄ 2281, էջ 136ա):

ՌԱՂԱՄ, տե՛ս **ՐԱՂԱՄ**: Հանդերձ թագաւորական **ուղաման**... և ի

մէնջ բազում հաստատուն մահաարներով, նզովիւք և մուշակայիւք գալոց են և բողոքելոց են ի դրունս արքայի (Գիւան Ն. Զուղ., 110):

ՌԱՄԱՆԻ, գ. Նուան գոյն: ՄՀԲ **ըուման** «նուտ, նոնէնի»: Ըոզիանին մէկ մթղալ ի Հնգստան ԲՃ՝ Ֆլօրի գին ունի, **ուամանին** (գրչ. ըումանին) այլի այն գինն է (Դարիժ., 452):

ՌԷԶՈՎԱԳՒ ԼԻՆԵԼ (լատին. resolvo), հորդ. Արձակել, մերժել: Որ բանին վերայ խորհուրդ անէլով **ուէզօրվադ** եղաւ Պատուելի Հասարակն, թէ տանք մինք ալ 500 ոսգի (Գովր., 129):

ՌԻԱԹ, գ. տե՛ս **ՌԱՀԱԹ**: Պատահէր բանս ինչ առաջարկեալ խօսէր ի կողմանէ շահին եւ ի կողմանէ ուխտին, եթէ շահն խաղաղատ է և արգարադատ է եւ ոչ թողու իշխանաց, որ գուլում առնեն **ուխտին** (Դարիժ., 181):

ՌՈՒՄԵԼՅԻ, գ. Ռումինացի: Մեծաւ գգուշութեամբ հանդերձեցին ամենայն զօրավարքն եւ զօրագլուխքն

գրովանդակ հեծեալքն եւ զհետե-
ւակազօրս՝ որպէս զՏաճիկս, նոյն-
պէս զՊողոտանիցս, զՄինթացիս եւ
զՌուսեցիս (Պատմ. Խոթ., 62):

ՌՌՌՍ, գ. Ռուս, տէս նաև ԸՌՌՌՍ,
ՕՌՌՌ: Այնքան երթևեկութիւն
ռուսացն ոչ յիմանան, թէ ռուսքն
թշնամի են ձեզ (Ն. Մուշ., 132):
Սայ պատճառ եղև, որ ռուստն մեր

Հայոց թագաւորութիւնն շկարաց
հաստատել (Ն. Մուշ., 243):

ՌՕՅԿ (հունգ. rojt «ծուպ»), ա. Վեր-
ջաւոր, ծուպաւոր: Նոր բան որ ալ
լան ըլար եւ սրգըլամն պիլայ շինօ-
րէ առանց վիդիզ գիւղիւշ պիզտի
բիզով մըն եւ շափաւոր ռոյզօվըն
(Գրովր., 46):

-Ս-

ՍԱԳԱԶԵԻ (պարսկ. sag «գմբէթի
ծածկ, տան առաստաղ»), ա. Թե-
փակտուր: Կայ քաղաքն մեծ եւ փա-
ռաւոր վիմաշէն կամարակապ եկե-
ղեցի մի՝ սագաձեւ խաչանման եւ
պարսպաւոր (Միմ. Լեհ., 336):

ՍԱԼԱՐԱՅԱՐԿ, ա. Սալայատակ,
սալարկած: Յետոյ խլեալ եւ
յափշտակեալ զեկեղեցիս եւ զվա-
նորայս ի ձեռաց մերոց՝ վիմաշէն,
կամարակապ, սալարայարկ (Միմ.
Լեհ., 411):

ՍԱԼԱՐԱՏԱԿ, ա. Սալակապ: Փիլիպ-
պոս կաթողիկոսն Հայոց... շինեաց
զսալարատակ յատակն Սուրբ Յա-
կոբայ գեղեցիկ եւ վայելուշ (ՄԺ II,
395):

ՍԱԼԹԵՌՆՅԵՍ (վրաց. saxl^tuxucesi)
գ. Պալատական կառավարիչ,
պալատական գործերի կարգաւո-
րող: Բառը գետեղված է Սանահնի
վանքին վերաբերող 1652 թ. մի
փաստաթղթի կնիքի վրա՝ «Սալթ-
խուցես Վախտանգ» ձևով (Սա-
նահն., 71):

ՍԱԼ (պարսկ. arwarp. sele), գ.
Պարզև, ընծայ: Իմ դամում դար-
թաշի սալնով ծախեցի, Ուղուզի
պալնի Առութի Փարսատանի հախն
ինձ հասաւ (Սանահն., 160):

ՍԱՀԱԹԱՏՈՒՆ, գ. Ժամատուն, ժա-
մացոյց կրող աշտարակ: Յաջա-
կողմն կայր սահաթատուն մի, բարձր
քան գաշտարակ (Միմ. Լեհ., 60):

ՍԱՀԱԹ ԵՒ ԿԷՍ, հրդ. Ժամ ու կէս,
մէկ ու կէս ժամ: Աշխարհ եկաւ կի-
րակի կէս գիշերն յետ, որ կիրակի
կու լուսանայ, Թ սահաթ եւ կիսուն
(ՄԺ I, 294):

ՍԱՀԱՆ, գ. Սահան - դուռ (ՄՄ 1127,
152ա):

ՍԱՀԱՐԻ (արաբ. sihr «հմայուել»),
ա. Կախարդուած, հմայուած: Սա-
հակն ասէ՛ ի սահարին սաֆրայէն եւ
պաղղամէն լինի (Բունիաթ, 64):

ՍԱՀՄԱՆՔ, գ. Կարգ, աամոյոյթ: Լա-
հաան կացաւ մեր հայոց պատվիրա-
նին, սահմանքին (Զ. Ազուլ., 130):

ՍԱՂԱՒԱՐԿ, գ. Սաղաւարտ: Տէրու-
նէնց պառաւ Խսապետն եբեր մէկ

սաղաւարդ, մէկ շապիկ, վարաքուրի շանպուր շինելին էլ երկաթ դվաւ (Ակոռ., 210):

ՍԱՂ ԴՈՒՐՍ ԵՆՆԵԼ, հոդ. Կենդանի մնալ, փրկուել: Մարդն ամէն սաղ դուրս ելանք (եզով, 256):

ՍԱՂՄՈՍԱԶԱՅՆ, ա. Սաղմոս երգի ձայնով, փխբ. քաղցրաձայն, երգեցիկ: Էրեւանայ քաղքէն տարան / Շատ սարկաւազ սաղմոսաձայն (ՈՒՄՀԲ, 326):

ՍԱՄՈՒՐԵԱՅ, ա. Սամուրի մտքոյց պատրաստուած: ՄՀԲ սամուր «պրակ. սամուր»։ Բերեալ մեծ մուշտակ մի սամուրեայ եւ էարկ ի վերայ նորա (Զաք. Ա, 15):

ՍԱՄՐՏԱԿՈՍ, ա. ԱԲ սամարտիկոս «բարբարոսական»։ Սամրտակոս - փառասէր (ՄՄ 2019, 174բ):

ՍԱՅՆԹԵՅԱՅ (խտալ. sentenza «վիճիտ, կարծիք»), գ. Թագաւորական հրաման, վիճիտ, դատավիճիտ: Որպէս դատաստան առնեն դատիքն առաջի թագաւորին, թագաւորն տայ սայնթեցայ (Յ. Թութունջ., 303):

ՍԱՆԱՅԵԱԹ, գ. Արհեստագործութիւն, արհեստատրոյթիւն: Միայն մեծամեծք ծածկվին Ա. ֆուլթայով և ի սանայեաթէ պակաս են (Յ. Թութունջ., 303):

ՍԱՆԱՏ (արաբ.-պարսկ sanad), գ. Փաստաթուղթ, մուրհակ, ապացոյց: Արդովէցոց ջամիաթն ամենեքեան, որ այս սանատներոյս մէջն գրած կան (Սանահն., 96):

ՍԱՆԿԱՍԻՈՐ, գ. Սանդալ՝ թեթեւ կօշիկ հագնող. այդպէս էին ասում Ֆրանչիսկեան միաբանութեան անդամներին: ԱԲ սանդաւաւոր «սանտալ հագած»։ Հարքն Սանդաւաւորք ունելով զպարտէզ մի, կամին վաճառել հաւանութեամբ Իքսին (ՈՒՂուր., 255):

ՍԱԶԱՆ (թուրք. sacak), գ. Տանիք, փու: Յոպպէու վանոց՝ սաչախն փլեալ է, ուստի հրաման առեալ են ընդ կամար քարէ շինելոյ (երուս. դիւ.):

ՍԱՌԱՆԻԼ, չք. Սառչել, մտել: Յանկարծակի լինի որոտում եւ գոռացմունք, մինչեւ սառանիլ ոմանց (Միմ. Լեհ., 289):

ՍԱՌՆԱՊԱՏՈՒԹԻՒՆ, գ. Սառն, սառնութեամբ պատուած լինելը: ԱԲ սառնապատ «ա. սառով պատած»։ Ի բազում ժամանակաց եւ տեղոյն սառնապատութեան սակի բոլոր եւ հասարակ շինութեան եւ նորոգման էր կարօտացեալ (Թորոս աղբար, 400):

ՍԱՌՆԱՍՈՒՈՆ, ա. Սառնասուն, ցրտաշունչ: Եւ գայ յայս կողմն է երկիր մի մեծ եւ լեառնային սառնասուն, անփայտ եւ ձրմեռային (Յ. Կարն., 24):

ՍԱՌՆՈՐԱԿԵԱՅ, ա. բիւրեղեայ: ԱԲ սառնորակ «սառ-ի՝ բիւրեղի նման»։ Սառնորակեայ - յօրինեցեալ ի սառնորակէ, լատ. քրիսթալլինում (Վ. Յուն., 64):

ՍԱՏՏԿԱԲԵՂՈՒՆ, ա. Սաստիկ՝ խիստ բեղմնատու: Իրք զարհուրականք եւ տեսութիւնք երկիւղալիք, ձայնք սաստկաբեղունք եւ

ճայթմունք յոգնորակք (Դարիժ., 425):

ՍԱՐԱ (արաբ. Sara), գ. (բժշկ.) Ընկնատրոսթիւն, epilepsy: Թէ յղեղն ընկնի՝ զքթա և սապաթ և սարա և թաշանուշ լինի (Բունիաթ, 72):

ՍԱՐԱՄԷՋ, գ. մկ. Սարերի մէջ, սարերի միջով: Այս ծովակիս ջուրն կելնէ 2 սարամիջով կու գնայ Մարր (Յ. Թուխունջ., 309):

ՍԱՐԱՆՃԱՄ,

ՍԱՐԱՆՋԱՄ (պարսկ. screnjam) գ. Արդիւնի, վերջ, աւարտ: Պիտի որ մեր հայոց համար մին ֆիքր և սարանճամ տեսնուք (եզով, 417): Մորմոքահար կու գան, մէկ սարանջամ շեն կարեր գթնուլ (Դիւան Ն. Զուլ., 50):

ՍԱՐԳԻՍԳԻՐՔ, գ. եկեղեցական բովանդակութեան մի գիրք: Մեկնիչք եւ քաղուածք, Փիլոնգիրք եւ Քարոզգրքեր, Տօնականք, Սարգիսգիրք եւ այլ անթիւ ազնիւ գրեանք (Սիմ. Լեհ., 412):

ՍԱՐՄԱՏԵԱՆՔ, գ. Սև ծովից հիւսիս ապրող ժողովուրդ, աղբիւրներում յանախ այրպէս էին անուանում պոլոմներին: Հանապազ մախայր ելանել ի վերայ աստուածապաշտ աշխարհին Իլախաց, որ Սարմատ եւ Սարմատեանք կոչին, որք են ազգաւ Դաղմատք (Պատմ. Խոթ., 35):

ՍԱՐՔԱՐՈՒԹԻՒՆ (պրսկ. sarkar «տէր, վերակացու»), գ. Վերակացուի, տեսուչի, հրամանատարի պաշտօն: Սայ վերայկացու դրեց Ռհան-բաբէն, որ սարքարութիւն ա-

նէ, հաբն տայ Շմաւոնին (Զ. Ագուլ., 82): Դօգազն... սարքարութիւն արաւ, որ Վերի թաղի եկեղեցին շինեց (Զ. Ագուլ., 149):

ՍԱՒԱՌՆՈՒԹԻՒՆ, գ. Սաւառնում, նախաճիւղ: Դէմքդ մարդոյ է՝ լուսոյ կազմութեան / Դրկելիքդ՝ արծիւ սաւառնութեան (ՈՒՄՇԲ, 61):

ՍԱՔՐԵՍՏԱՆ, գ. Թափառոց: Աք սաքրեմ «պահվել»: Մտեալ սաքրեստան՝ ախեց դովին (ՈՒՄՇԲ II, 97):

ՍՔԻՏԱ, գ. տե՛ս ՇԲԻԹԱ: Բազում անգամ ասացաք, թէ սքիթալն հիւանդանոց կամ հիւրանոց լսի (Սիմ. Լեհ., 336): Ամենայն եկեղեցի ունի երկու սքիթալ, հրամայէ մուծանել գնա ի սքիթալն եւ դիմար առնել (Սիմ. Լեհ., 102):

ՍԳԱՊԱՏԵԱ, ա. Սգով պատուած: Աք սգապատ «սգաւոր»: Աթոռն է Հայք սգապատեալ / նման ծովու ալէկոծեալ (Ս. Ապար., 101):

ՍԳՈՒՇՈՒԹԻՒՆ, գ. Զգուշութիւն: Սգուշութեամբ կացէք ի վերայ գործարանին (եզով, 139):

ՍԳՈՒՍԿԱՅՈՒԹԻՒՆ, գ. Աւագութիւն, կառավարչի պաշտօնէութիւն, տե՛ս ՍՏԱՐՈՍՏԱ: Բան Վրլոտքո Մացէյ... զՀայոց ազգն քան զամենեսեան առաւել սիրէր եւ ընդունէր, եւ էր սգարոսդայութեան նորա ամբ (Կամենից, 39): Բան Միքօլայ Դրիսքիյ նստաւ ի Կամենիցս սգարոսդայութիւն (Կամենից, 42):

ՍԿՐՈՒՍ (լեհ. strus), գ. Զայլամ: Շրջէին ի բակն մեծամեծ տէվէխուշիք, որ է ջայլամ, սգրուս (Սիմ. Լեհ., 229):

ՍԵԱՒԻՆ, ա. Թափանցիկ (ըստ իմաստի): *Յեամանի լաւն սեալին է, այսինքն որ թափանցնի, խոր ու կարմիր է եւ միջակ կարմիր եւ բաց (Դարիժ., 445):*

ՍԵԳՐԸԳԱՐ, գ. Խորհրդական, դրպիր, տե՛ս ՍԷԿՐԷ-ՏԱՐ: *Մինն ի նոցանէ եկաւ ի եկեղեցին Հայոց, որ էր թագաւորին սեգրըդար (Կամենից, 39):*

ՍԵՂՏԵՆԲԵՐ, գ. Սեպտեմբեր: *Սեղտենբերի ամսուն Քէրթաղաչ փաշան եկաւ Կաֆայ քաղաքիս պէկլէպէտի եւ նազըր (Մժ I, 226):*

ՍԵՒԱՌՈՐԵԱՆ, ա. Սետվ ներկուած՝ պատուած: ԱՐ սեւաթոյր «սև գունով, մուր»: *Սուգ առ յերկիր, օգնեա՛ ճիգոյս / Մապէս արեւ ամիտփեաց զլոյս / Սփոեցաւ մէզ վերայ ճոգոյս / Սեւաթորեալ խաւար անլոյս (Առ էջմ., 188):*

ՍԵՒԱՅԿՎՈՒՆ, գ. ա. Սև վեղարով, սև գլխանոց կրող, փխր. հոգևորական: ՈՒՆԻ Ն. Բիւզ. առանց մեկն.: *էջմիածնայ թէ մէոռն, թէ նվիրակ, թէ սեւայգլուխ չի գան Ալի-Օսմանայ երկիրն (Չ. Ագուլ., 66): Ոչ թէ մեզ, այլ և ամենայն սեւայգըլխացն իսպառ հատին գողորմութիւնն և զկերակորն այլ (Գիւ. Ս. Յակ., 1933, 463):*

ՍԵՒ ԵՐԵՍ ԳԱՅ, հրդ. Սևերես լինի՝ ամօթամբով մնայ: ԱՐ սևերես «ռմկ. աներես»: *Մեզանէ յետ ինչ մարդ որ այս վերոյ գրեալ գրիս այլ և այլ անէ, առ մեզ սև երես գայ (Կալվածագր., 158):*

ՍԵՒՆ ԳՐԵՆ, հրդ. Սևով (սև թանաֆով) գրել՝ գրանցել: *Ի միում ամի տասն անգամ բառնի և դնի անուն մի ի սուրբ պատարագն, անունն այն ի սևն գրեսցի (Գիւան Ս. Յակոբայ, 1940, 317):*

ՍԷՉԱՌ (լատ. caesar), գ. Կայսր, ինքնակալ: *Մեծ իշխան ճգօր տէր սէգառ մեծ դուքս Պետրոս Ալէքսանոս (եզով, 20):*

ՍԷԿՐԷՏԱՐ,

ՍԷՔՐԷՏԱՐ, (լեմ. sekretarz, ռուս. секретарь), գ. Քարտուղար, տե՛ս նաև ՍԵԳՐԸԳԱՐ: *Վեհափառի և զերապատուի տեառնդ սէկրէտարի (Ոսկ. նամ., 1966, 302): Պէտր Մաթվ աթմիռալիդ և կայսերասիրի... Մակարով սէքրէթարիդ և այլօք խորհրդակցօք (եզով, 371):*

ՍԷՅՄԷՆ (թուրք. seğban), գ. Թուրֆական գորֆի մի տեսակ: *Խան էլաւ գնաց, սուլթանն նրստել էր, օրն ուրբաթ էր, սէյմէններն եկան լըցվան (Մժ I, 220):*

ՍԷՆԷՏՈՒ (լատ. senator), գ. Սենատոր, Սենատի անդամ: *Հաւատարիմ դատաստան առ սէնէթօռացդ և մերս բարերարք և զեղիցկագունեղք Գարբիէլ յիվանօվիճիդ (եզով, 371):*

ՍԷՐՈՒՆ, ա. Գեղեցիկ, սիրուն: *Ես՝ անարժան Գրիգորս շինեցի Թաղավարդու եկեղեցին... այնպէս սէրուն էր, որ գիշերն քուն չէ (ԴՉՎ V, 170):*

ՍԸՂԱՐԿԵՆ, նք. Պաշարել: ՄՀԲ սղար՝ խսար «պաշարում», ԱՐ

սղարել «պաշարել»: *Իջին քրիստոնեայքն ի բերդէն... եւ շատ սրղարկեցին զբերթն (Ժամ. Պող., 270):*

ՍՐԲԱՍԱՆՁ, ա. մկ. Սրբաջինջ՝ իսպառ, ամբողջովին ջնջուած, բնաջինջ: *Քամի եղաւ, հուրթունայ եղաւ ան գիշերն... Ահմատ սօֆի կասէին, տընով տեղով, որդով եւ զըս[տ]երով սրբաշանջ եղաւ (Մժ I, 220):*

ՍՐԲՍԿԱՊԱՐ, գ. Սրսկապան, ներքին սենեակ, որ բաժանուած էր վարագոյրով: *Եւ աստ յԱրտազ գաւառի պատահէ նմա օթեւանս առնել մօտ առ դուրս ի ներքսագոյն սրբսկապարի խորանի դամբարանի սուրբ առաքելոյն Թադէոսի (Մժ II, 315):*

ՍՐԲՊ,

ՍՐԲՖ, գ. Սերբ, սերբիացի: *Ոմն Տեսբոթ անուն յայտնեցաւ այսմ ժամանակիս... և էր ինքն սրբպ, այսինքն արնաւութ (Կամենից, 19): Ի վերայ նորա կախեալ կան Բ կանթեղս, որոց Բ է Հայոց ազգին, Ա հէպէշից, Ա խպտող, Ա վրաց և Ա սրբֆից (Պատմ. Երուս., 1931, 338): Կայ չորս գլխաւոր վանք՝ չորս ազգի, բայց սրբֆ, ֆոանկ չկայ, միայն կարգաւորք (Սիմ. Լեհ., 261):*

ՍՐԱՌՈՍՏ, **ՍՐԱՐՈՍՏԱ**, տէս ՍՍԱՐՈՍՏԱ:

ՍԻԿԻԼ (թուրք. zigila), գ. (բժշկ.) Գորտնուկ, կոծիծ: *ՀԲԲ սիկիլ «ասեղնագործութեան մի տեսակ մանր նախշերի ձևով»: ԽԳ դուռն, որ յիշէ գսիկիլնին և գպահաղն (Բունիաթ, 115): Դեղ կոծիծին է սիկիլն (Բունիաթ, 115): Պաւա-*

սիրն... Գ ցեղ կու լինի. Ա մանր սիկիլներ, և որ տաճիկն լուլուի կասէ (Բունիաթ, 122):

ՍԻՃԻԼ,

ՍԻՋԻԼ, (յուն. sigillon, լատ. sigillum «կնիք»), գ. Հրամանագիր, հրովարտակ: *ՄՀԲ սիգեղ, սիգէլ նոյն նշ: Վրէժխնդիր մահմետականքն հարկէին զգատաւորն առնել սիջիլ մահուան ի վերայ նիկողայոսի, զի սպանցեն զնա, եւ դատաւորն արար սիջիլ (գրչ. սիճիլ) (Դարիժ, 402):*

ՍԻՆՏՈՒ, գ. Պարոն, տէս ՄՈՆՍԻՆՏՈՐ: *Թագաւորէն առաքեալ սինէօս Յիվան Անտրիէհ այլ տեղեկացաւ (եզով, 338):*

ՍԻՆՈՒՌ, **ՍԻՆՈՒՐ**,

ՍԻՆՈՐ (հուն. synoros), գ. Սահման: *ՄՀԲ սինօս «սահման, սահմանագիծ»: Դուզանի գեղի և Եպիսկոպոսի գեղի սնուռն հաստատեցինք (Սանահն., 146): Գորգի թագաւորն փէշքաշ էտուր... Արտայհան Վրաստան սինուռն (գրչ. սինուրն) (Սանահն., 62): Լ աւուր ճանապարհ է մինչև ի Սովաքի, որ է սինօր Բանդհին արաբի թագաւորին (Յ. Թութունջ., 301):*

ՍԻՊԻՍՏԱՆ (պարսկ. sipistan), գ. (բարբ.) Յորցենի բոյսը: *Առ յունապ, մանուշակ, պիան, սիպիստան ժի հատ, եիէ ջրով (Բունիաթ, 60):*

ՍԻՊՏԱԿ, գ. Սպիտակ գինի: *Սէն ասէ. սիպտակ բերէք, ալէլուեայ / Վէվն ասէ. Վեց-վեց խմէք, Տէր որդրմեա՛ (Ա. Երեմ., 35):*

ՍԻՐԱՒԱԿԱԳ, ա. Սիրափափագ, սիրալի: *Կցեալ [էր] սիրաբաղձ ի յաննինչ սըրտի / Որով կազդուրէր վէրս ունեցողի (Ազան. Միաբանք, 371):*

ՍԻՐԱՔԵՐ, ա. Սիրով բերուած, սիրելի: *Յայտ առնեմ... զսիրաբեր գիրն ընկալայ, շնորհակալ եմ (Դիւան Միսիթ., 12):*

ՍԻՐԱԳՈՐԾ, ա. Սիրոյ գործած, սիրական: *Դարձեալ առ նոյն սիրայար և սիրագործ նորոգատարազ շարագրութեանց բանիցն (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):*

ՍԻՐԱԶԱՆ, ա. Սիրասուն, սիրելի: *էր սա եղբօր որդի նորայն / Նախամեծար եւ սիրազան (ՄՄ 1430, 98ա):*

ՍԻՐԱԽԱՌՆ, ա. Սիրով միախառն, փխբ. բարեկամական: *Ապա ունիւմ ընդ Տեառնդ փոքր ինչ վէճ սիրախառն (Դիւ. Ս. Յակ., 1932, 252):*

ՍԻՐԱԾԱՆՈՅՅ, ա. Սէրը ծանուցող, սէրն ի ցոյց դնող: *Ընդ շնորհագեղուն օրհնութեան ողջունամատոյց և սիրածանոյց թղթոյս ի խոնարհ դիմաց ծանուցումն լիցի (Ղուկ. նամ., 118):*

ՍԻՐԱԿԵՐՏ, ա. Սիրով կերտուած, սիրալի: *Բայց է և այլ ինչ բազում խորհուրդ և բան, զոր ի սիրակերտ և ի ցանկալի տեսութեան ցուցցուք հաստատելով զպայման Քրիստոսի (Դիւ. Ս. Յակ., 1941, 157):*

ՍԻՐԱՄԱՅԻՔ, գ. Սիրամարգ: ԱՖ և ՀԲԲ *սիրամայր «մօրը սիրելի կամ մայրասէր, կամ սիրող մայր» (հա-*

մանուն): Ձեռ զսիրամայրք կամկարագնաց ես, Գունզգուն գեղով պայծառացեալ ես (ՌԻՄՀԲ, 103):

ՍԻՐԱՄԵՐԺ, ա. Սէրը մերժող, չարական: *Որպէս ասէի զումեմնէ... տիրատեաց գողով եւ սիրամերժ (Յ. Կոլոտ, 207):*

ՍԻՐԱՅԱՅՏԱԿԱՆ, ա. Սէրը յայտնի դարձնող: *Պսակիցեց* ևս զԱստուածապսակեալ արքայդ արքայից շնորհալոյս սրբովք նշանօք սիրայայտականօք (Ղուկ. նամ., 122):*

ՍԻՐԱՊԱՏԱՐՈՒՆ, ա. Սիրալիբ, սիրով լի: ԱՖ *սիրապատար նոյն նշ.: Ընդ սիրապատարուն օրհնութեան թղթիւս յուշարարութիւն լիցի մեծի բարերարութեանդ ձերում (Դիւան ն. Ջուղ., 113):*

ՍԻՐԱՍԵՌ, ա. Սիրասուն, սիրելի: *Ի բացեալ կացելոց յումեմն եղկելոյ սիրասեռն տարփմամբ ի համբոյր հպլով երկնաշու գարշապարացդ Տեառնդ (Դիւ. Ս. Յակ., 1931, 146):*

ՍԻՐԱՐԱՆ, գ. Սիրոյ հանդիսարան: *Լուիջի՛ք որդիական սիրով եւ ներքանդակեալ ծրարեսջի՛ք ներ սիրաբանի սրտի ձերում զսրբալոյս զաւանդութիւնս զայս (Ազուլ. Կոնդ., 90):*

ՍԻՐԵԼԱԶՐԿՈՒԹԻՒՆ, գ. Սիրելիից զրկուելը: *Սիրելագրկութիւն - զըրկիլն յայնց իրաց, որք կարի իմն սիրելիք իցեն, զորօրինակ ի հօրէ, յամուանոյ, յորդուոյ, ի բարեկամէ իսկականէ և յայլոց (Վ. Յուն., 64):*

ՍԻՐՏ ԹՈՒՆԱՅ, հոդ. Սիրտը տակնուվրայ լինի: *Յեաշմն (հասպիս) ով հետ պահէ՛ ժածք չի լինի, մար-*

դոյ սիրտ չի թռնայ, կայծակի աղէկ է (Դաւրիժ., 456):

ՍԻՐՏՆ ԽԱՌՆՏԻԼ, հրդ. Սիրաը խառնել, սրախառնո՞ւմ գգալ: ՄՀԲ սիրտն խառնակել նոյն նշ.: Երբ հազարն դիպի մարդուն, յանձն սիրտն խառնտի և փսխէ (Բունիաթ, 70):

ՍԻՐՏՆ ՔԱՂՅՐ, հրդ. Բարեհաճ: Աշխարհի անդորրութիւն և թագաւորաց սիրտն քաղցր առ մերային տառապեալ ազգս (Դիւան ն. Ջուղայի, 70):

ՍԻՔԱԶԱՆ, ա. Սիգապանձ: Տաղ Հալէպցի սիքազան տէր Սարգսի ասացեալ է (ՌԻՄՀԲ II, 221):

ՍԼՕՊՕԹ (հունգ. szabad «ազատութիւն»), գ. Հրաման, իրաւունք, «սլոսլոս չէ» իրաւունք չկայ: Օգկանուն ամենեւին ըսլոսլոս չիւայ ծախելու, ոչ մէկ հայի մըն ալ (Գովր., 100): Էրկուսում ու իրեքում օրը ամենեւին սլոսլոս չէ ծախելու (Գովր., 197):

ՍԵՐԱՄԵԾԱՐ, ա. Մեծարուած, սխալալի: Արդ այսպիսի սխրամեծար անաւթոյս գտաւ ցանկացող այրս այս մահդասի Ամբակումս (Թորոս աղբար, 398):

ՍԵՐԱՏԱՐԱԾ, ա. Հիացում տարածող: Յիսուսապարգեւ ողջոյնն բազմա կարօտիւ եւ սխրատարած սիրով մատուցանեմ (Դիւան Մխիթ., 12):

ՍԿԶԲՆԱԿՈԶ, ա. Բարձրագոյ: Վաղիմն աւուրբ և կանուխ ժամանակօք սկզբնագոյ ձայնիւ ջանամբ ի դոյն և յարիմբ ի դոյն (Դիւ. Ա. Յակ., 1941, 200):

ՍԿԶԲՆԱՆԱՂ, գ. Երածտական ստեղծագործութեան սկիզբ, նախերգանք: Սկզբնախաղ - յատկապէս կոչի նախանուագումն այն հանդարտիկ և համաձայնեցութիւն աղեաց քնարին և այլոց գործեաց երածտական, գոր նախ քան զերգելն սովորեն երգիչք և քնարահարք փորձառոցել, լատ. փռէլու՛տիում (Վ. Յուն., 64):

ՍԿԶԲՆԱՀԱՍՏԱՏ, ա. Ի սկզբանէ հաստատուած: Շնորհք առաքելական ի վերայ տիրապահ և աստուածախնամ, սկզբնահաստատ և սեպհականեալ առ հասարակ բոլոր տէրունի վիճակի Սրբոյ Աթոռոյս էջմիածնի (Դիւան ն. Ջուղ., 93): Սկզբնահաստատ և սեպհական տէրունի ժողովուրդք (Դիւան ն. Ջուղ., 95):

ՍԿԶԲՆԱՍԵՐՄ, գ. Սկզբնապատճառ, նախաշարժիչ: Ամենայն տարերաց և տարրացեալ գոյից սկզբնասերմն ասի ծծմբադասընդիկ, որ է գոլորշումն և շոգունակ գօրութիւն իմն (Տէֆթ., 379):

ՍԿՈՒՀ, գ. Սկիհ: Աստուած աւրհնէ Վարդան. մին սկուհ մալճըմայ, Ա լաւ սկիհ իւր մաղզմանովն, մէկ էլ շաբիք եբեր (Ակոռ., 210):

ՍԿՈՒՏ, գ. Դրամի միատր, վաճառանադրոյմ դրամ (ըստ Ղ. Ալիշանի): Զձեթ վասն լուսոյ և զմի սկուտ շնորհէ վերակացու մօնսինօրն (Ստ. Ռօշքայ, 193): Մինչև ի հինգհարիւր սկուտն ի տարին հասանէ (Ստ. Ռօշքայ, 193): Թոշակ վաթսուն և ինն սկուտիցն հատուցելոց ցարդ ի նոյն

ժողովոյ առ ժողովըրդապետն հատուացի (Ռիդուր., 284):

ՍԿՈՒՏԵՊՂ, գ. Սկուտեղ, մատուցարան: *Սկուտեպղն ի ափսին դրին, ի վերայ ծովուն գնացին (ՌԻՄԶԲ, 373):*

ՍՂՆԱՂ ՍՂՆԱՂ ԱՆԵԼ, հրդ. Բաժան-բաժան լինել, մեկուսանալ (սղնախնեում): *Մեք այլ խալղս ամենքն իւր երկրունն սղնաղ սղնաղ եմք արել (Եզով, 422):*

ՍՆՈՏԱՊԱՏՈՒԱՍՏ, ա. Սնոտի մտֆերով, խօսֆերով պատուաստուած՝ կցմցուած: *Թէ առարկեն՝ վասն է՞ր գրեալ / Մնոտապատուաստ ճառս յարմարեալ (Ս. Ապար., 89):*

ՍՆՈՏԻԱՊՊԱՍ, ա. Սնոտի, դատարկախօս: *Մեք մեզէն գտցուք ասելով պոսօսպոախտ բանիւք եւ սնոտիասպաս պարծանօք զմեծաբանութիւնս խօսէին (Գալ. Կենս., 74):*

ՍՆՈՒՏԱՇ,

ՍՆՕՐՏԱՇ, ա. Սահմանակից, տե՛ս ՍԻՆՕՐ: *է սնօրտաշ Հապաշի թագաւորին ընդ օսմանցոց, և իւր երկիրն է յոյժ խաղաղութիւն (3. Թութունջ., 306):* Մնարու թագաւորն, որ է սնօրտաշ Օսմանցոց և Հապաշին (3. Թութունջ., 310):

ՍՈՐԱՅ (թուրք. soba), գ. Վառարան, թոնիւր: *Երկուքն յերիցանցն մտին ի մէջ սորային, որ շինեալ էին ի մէջ տանն վասն հրավառութեան (Դաւրիժ., 304):*

ՍՈՂՈՄԱՅՆՈՒԹԻԻՆ, գ. Խառնակութիւն, անհնազանդութիւն: Որք

խնդրեն յԱստուծոյ զվրէժխնդրութիւն... երկրորդն է՛ սողոմայնութիւն, երրորդն է՛ վճարագրկութիւն վարձկանաց (Նոր. ծաղ., 112):

ՍՈՂԱՔ, գ. Օսմանեան սուլթանի թիկնապահ զօրքի մի տեսակը (ծան. հրատ.): *Ոչ ոք մնաց ի բանակն, բայց միայն ընդ իւր երկու հազար մերձաւոր սողաքս (Պատմ. Խոթ., 62):*

ՍՈՒՆՏԱՅ,

ՍՈՒՆՏԱՅ (պարսկ. suxta, թուրք. softa / suhte) գ. Մահմեդական հոգեւորական դպրոցի՝ մետրեալի ուսանող: *Բ մզկիթ ու մէճիթ աւիրեցաւ ու մէտրըսէ բըլաւ որ սոխտայներն խրխտեցան (ՄԺ I, 219):* Թերեւս ասացէ՛ղ զբան ինչ ի հաճուկս սոխտայիցն եւ զերծուցէ՛ղ զանձն իւր ի մահուանէ՛ (Դաւրիժ., 416):

ՍՈՒՎՆԱՅ (հունգ. szoknya), գ. Կանանց շրջագգեստ: *Ոչ այս երկրին մէջ եւ ոչ օզկայ երկիր չի գրավի ոչ մէնդէյ, ոչ սուզնայ, ոչ շուրց, ոչ գեբգ՝ թէ հայնակ եւ ոչ մաճըրնակ եւ ոչ կրգալ (Գովր., 45):*

ՍՈՒՉԻ (թուրք. sucu, su «չոր» բառից), գ. Ջրպետ, արհմնի թէյարանի կամ արհարանի սպասաւոր: *Այդ վարդան տղայդ երէվանէցի էլչուն որդի է, որ խանին ջրպետ և սուչի էր, գոր դուք լաւ տեղեակ էք (Դիւան Ն. Ջուղ., 50):*

ՍՈՒՍ (արաբ. sust), ա. Թոյլ, սուստ լինել՝ թուլանալ: *Այս մաթիս, որ ի մէկ դիհն իջնու, գմէկ*

դին կու ծոէ և սուստ կու լինի (Բու-
նիաթ, 73):

ՍՈՒՐ ԶԳԵԼ, հռդ. Սուր գործածել՝
կռուել: *Սուր ձգեցին մէջ քաղաքին
/ Սատակեցին գիշխան նորին
(ՈՒՄՀԲ, II, 227):*

ՍՈՒՓԼԻՔԱՅ (լատ. supplica «աղօ-
թել»), գ. Աղերսագիր, խնդրա-
գիր: *Մեք ըստ հրամանի ձերում
տուաք զգիրն Մեծի Դքսին հան-
դերձ միով սուփիլքայիւ, որով
խնդրէաք շնորհել մեզ զփալթ
թխոյն (Ոսկ. նամ., 1966, 302):*

ՍՈՒՔԱ (գրբ. սոխ), դ. Սրանք:
*Սուքա էլ բերանով ամենայն շատ-
թան ձեր խնդիր խնդիրք արին (Յ-
զով, 393):*

ՍՊԱՌԱՊԵՏ, գ. Սպարապետ: *Որք
երբեմն թագադիրք լեալք Արշակու-
նեաց եւ այժմ վերստին ստեղնեալ
եւ պտղաբերեալ թագաւորու-
թեամբն, զի այժմ սպառապետ կո-
չեցեալ (ՄԺ II, 336):*

ՍՎԷՏՔ, գ. Շուեղ, շուեղացի: *Եկին
սվէտք լութերականք ի Լէօպոլիս...
և զօճիոս ոչ սակաւ գործեալք յա-
մենուրեք (Կամենից, 147):*

ՍՏԱՄԲԵԼ (իտալ. stampare), նք.
Տպագրել: *Խոստացաւ զմեր Տօնա-
ցոյց ստամբել իւր խարճօլ ի Վէնէ-
տիկ (Դիւան Մխիթ., 26):*

ՍՏԱՆԻԼ, կբաւ. Ստանալ բայի՝
ստացուել: *Փարթամութիւն ստանի
աշխատանօք, վայելի երկիւղիւ և
թողանի ցաւով (Նոր. ծաղ., 73):*

ՍՏԱՍԱՅՈՒԹԻՒՆ, գ. Սուտ, ստախօ-
սուտիւն, խաբէտիւն: *ՄՀԲ ստա-
սաց «ստախօս»: Հայր նորա առ-
նէր զբարեգործութիւնս բազումս,*

*բայց չետ որոց ծնաւ երախայն այն,
զոչ այլ ինչ գործէ, բաց ի ստասա-
ցութենէ և ի խաբեբայութենէ (Նոր.
ծաղ., 108):*

ՍՏԱՐՈՍԱ,

ՍՏԱՐՈՒՍՏԱ (լեհ. starosta), գ. Ա-
ւագ, կառավարիչ, երեց, տանու-
տէր: *ՄՀԲ սղարօւղա նոյն նշ.: Բե-
րեալ ծանուցին փոքր զօրավարին
ստարոստա Սենտոմիրսքին զամե-
նայն պատասխանիս Տաճկաց
(Պատմ. Խոթ., 61): Ինքն զօրա-
վարն եւս ստարոստա՝ Սենտոմիրս-
քին յանձնաօթն լեալ գնայր զհետ
նոցա, մինչեւ որ մերձ եղեն ի բա-
նակն Տաճկաց (Պատմ. Խոթ., 65):
Գնաց ի սէյրան սթառօստին / Եւ
յարքեպիսկոպոսն Լեհին (ՈՒՄՀԲ II,
109): Յետոյ սթարօստան քաղա-
քին... / Կրկեցին խնդիրք նվիրակին
(ՈՒՄՀԲ II, 106): Ողորմած հոգի
Բան Շնավցքին Լովու ստարու-
տան հոգին առ Աստուած փոխեց
(Կամենից, 110):*

ՍՏԷՊԱՓԱՅԼ, ա. Ճառագայթ: *Լոյս -
ճաճանչ ճառագայթ, ստէպափայլ
(ՄՄ 2019, 163ա):*

ՍՏՈՐԱՆԿԱՆԻԼ, չբ. Ստորադա-
(ու)ել, հակադր(ու)ել: *ԱՅ ստո-
րանկիմ «վար ընկնել, հպատակ-
ուել»: Գոյն ստորանկանի փոփոխ-
ման, ի բաց կայ յաւիտենականու-
թենէ (ՄՄ 1756, 42բ): Բողոր նիւթ
մարմնոց ստորնագունիցս ստո-
րանկանի զանազանութեան ըստ
շարժման երկնային մարմնոյն (ՄՄ
1756, 56ա):*

ՍՏՈՐԱՍԱՀՄԱՆՆԱԼ, ա. Ստոր՝ ցած
սահմանուած՝ համարուած: *Շնու-*

թիւն է տեսակ ստորասահմանեալ վաւաշոտութեան (ՄՄ 1756, 131ա):

ՍՏՈՐՈՏ, ա. Անագնի, ցած, անարգ: ՆՀՖ ստորոտ «ստորին կողմն կամ եզր իրաց՝ որպէս ոտք անցա» (իմաստափոխ.): Բագարատ իշխանն Հայոց ստորոտ և լիրբ ի շարախօսութենէ ոմանց դրեալ խորհիտ զկաթողիկոսն (Ստ. Թօշքայ, 94):

ՍՏՈՒԱՐԱՄԱՒԱՂ, ա. Ստուար ծաւալներ ընդգրկող, առատաձեռն: Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ... և ստուարածաւալ պարգևատուէ և բարեբարէ (Գիւան Ն. Զուղ., 51):

ՍՏՈՒԵՐԱՓԱՐԱՍ, ա. Ստուերը՝ մութը փարատող: Ընծայէ բուրումն հոտոց, սոյն գունակ և այս ստուերափարատ Արփի (Յ. Կոլոտ, 234):

ՍՏՈՒՔ, գ. մկ. Ստոյգ: ՄՀՖ ստուգ նոյն նշ.: Հրաման առած են... նաւով Ղարա Տէնկիզ վրայ գնան Ղըռիմն, այլ չիմացաք թէ ստուք կամքներն որ տեղի վրայ է (եզով, 257):

ՍՐԱՏԵՍ ԱՌՆԵԼ, հրդ. Տեսողութիւնը բացուել՝ լաւանալ: Կաքվի լեղի և հում մեղր դիր ի յաչքդ, սրատես առնէ (Բունիաթ, 77):

ՍՐԲԱՅԴՐԱՄ,

ՍՐԲԱԿՐՈՒՄ, գ. Եկեղեցուն տրուող տուրքի տեսակ: Ձեր ամէն հասք ու իրաւունք, ձեր անթերի պտուղն, սրբայդրամն... տվէք Տէր Բարսեղ արհեսկիսկոպոսին (Մանահն., 84): Զամենայն տէրունի հոգևորական արդիւնքն ձեր՝ ...զպտղին, զսրբա-

դրամն (բնագրում՝ սրբագրում), զժամուցն, զբառասնիցն, զտեառնականն, այլև տունք՝ լինի քահանայից, տանուտերանց (Գիւան Ն. Զուղ., 96):

ՍՐԲԱՆՈՐՀՈՒՐԴ, ա. Սուրբ՝ անաբատ խորհրդով: Քանզի էր վարուք յոյժ ճգնող և պահող և մտօքն սրբախորհուրդ (Իււրիժ, 263):

ՍՐԲԱՍՏԵՂՈՒՆ (բնատ.), ա. Աստղալից: Արմաւենույդ բարձրագիտակ սրբաստեղուն (Գիւան Մխիթ., 123):

ՍՐԵՂԵՆ, գ. Սառ զէնքերի ամբողջութիւնը, հմմտ. ԲՈՅԵՂԵՆ: Կայսր ետ նմա ոչ բազում ինչ զօրս... և թէ բոցեղէն, և թէ սրեղէն (Կամենից, 19):

ՍՐԻԵԱՆՔ, գ. Ասորիներ: Որչափ քրիստոնեայք՝ թէ հոռոմ և թէ սրիեան, թէ կուռճի և կամ հայ (Եզով, 162):

ՍՐԿԻՀ, գ. Սկիհ, տե՛ս նաև ՍԿՈՒՀ: Կանթեղանք, սրկիհք, թէ մետաքսեղէն և կամ դիպակեղէնք զգետսք, և զոր ինչ ի մառանատունն և ի մովթպազն (Յիշ. Ուլն., 294):

ՍՐՈՅ ՃԱՐԱԿ, հրդ. Սրի՝ կրակի բաժին: Եւ ոչ հաւանելն նոցա՝ սուր ի վերայ եղեալ զամենեսեանս սրոյ ճարակ տայր (Մանահն., 51): Զամենեսեան զնոսս սրոյ ճարակ տային և յաւարի առեալ զամենայն բանակս նոցա (Մանահն., 52):

ՍՐՏԱԿԻՒՐԻՆ, ա. Սիրտը դիւրին՝ հանելի դարձնող: ԱՐ սրտադիւրութիւն «յօժար սիրտ»: Որբա՞ն

մարդիկ բարեբարեալք լինին և սրտադիրին ի քաղցրագոյն մարդասիրութենէ ձերմէ (Ղուկ. նամ., 125):

ՄՐՏԱԿՈՐՈՒԹԻՒՆ, գ. Սիրաը կոր լինելը՝ սրտմտութիւն, յուսահատութիւն: Անառակութիւն յաղթեալ լինի փախչելով, իսկ սրտակորութիւն եւ այլք մոլութիւնք՝ ընդ դէմ կալով (ՄՄ 1756, 14ա):

ՄՐՏԱՄԵՌ ԱՌՆԵԼ / ԼԻՆԵԼ, հրդ. Վախեցնել, վախենալ: Զայն գոռալոյ եւ որոտման սոցա խլացուցանէր զլսելիս եւ սրտամեռ առնէր զամենեսեան (Դարիժ., 223): Եւ յայսմ պատճառէ ահաբէկ եւ սրտամեռ եւ խելաթափ էին լեալ ամենքեան յահէ շարժին (Դարիժ., 374):

ՍՓԵԼ, նբ. Արծարծել - նորոգել, սփել, զօրանալ (ՄՄ 2019, 166բ):

ՍՓՈՓԱՐԱՆ, գ. Սփոփանմ՝ մխիթարութիւն բերող վայր: Որ է Սուրբ Աստուածածին՝ պանդխտից եւ մեր սփոփարան (Քէօմ., 8): Շինել տայր զեկեղեցին՝ բնակչաց եւ եկաց սփոփարան (Քէօմ., 40):

ՍՓՈՓԶԱԿՏՈՒՐ, ա. Սփոփող, մխիթարական: Ոչ [է] հասեալ ի աւարտն ի զբաղմանէ սփոփչակտուր լեալ ոչ կատարեալ ի աւարտ ածել (Գալ. Կենս., 153):

ՍՔԱԼԱ (ռուս. скала, լեհ. skała), գ. Ժայռ: էր քաղաքս ի վերայ սքալա վրմի (Սիմ. Լեհ., 332):

ՍՔԱՆՁԵԼԱՇՆՈՐՀ, ա. Սքանչելի շնորհ ունեցող: Տէր Յովհաննէս կաթողիկոս... սպասաւոր մեծի եւ սքանչեաշնորհ Սուրբ Աջոյն Լուսաւորչի (Գալ. Կենս., 258):

ՍՔԷՄԼԻՔ (ռուս. сКамейка), գ. Նստաբան: Կային աթոռք, սքէմլիք եւ սեղանք տրապիզաց ըստ իրեանց սահմանաց (Սիմ. Լեհ., 152):

ՍՔԼԵՔ (լեհ. sklep), գ. Խանութ, տաղավար: Եթէ տներ մեծագոյնք եւ եթէ սքլեքներ ամենայն բարութեամբ, որչափ ինչ որ ունէր՝ բովանդակ այրեցաւ (Կամենից, 63):

ՍՔՈՂՈՒՆ, ա. Ծածուկ, դարանակալ: Արողուն - անյայտ, առանց գիտելոյ, դարանամուտ, դաւադէտ (ՄՄ 2281, 129ա):

ՍՕԼՏԱՏ (ռուս. солдат), գ. Զինուոր: Ամէն դասի զուրի սօլտատ մի շուպուխով, որ են եասախչիք: Զայն տեսեալ սօլտատաց... հարկանեն ուժգին հարագանաւ ի վերայ մերկ գազաթան նոցա (Սիմ. Լեհ., 169):

ՍՕՎԴԱ(Յ)ԳԱՐՈՒԹԻՒՆ (պարսկ. scvdaker «վանառական»), գ. Վանառականութիւն, խոշոր առևտուր: Ամենայն ժամ եւ միով գիրանք գրել եւ համարձակ սօվդագարութիւն վայելել (եզով, 353): Զոկ ջոկ քաղաքանում ան, կալման եւ ուրէնց սօվդայգարութիւնն առնումք մեզնէ (եզով, 354):

-վ-

ՎԱԶ ԳԱ, հրդ. Հեռու մնալ, ձեռք
հաշել: *Վազ չես գալ մեղաց, մինչեւ
յե՞րբ գործես (ՈՒՄՀԲ, II, 660):*

ՎԱԶԻՐՈՒԹԻՒՆ, գ. Վեգիրի պաշտոն,
պալատական պաշտոնեություն:
ՄՀԲ վազիր նոյն նշ.: *Թվին ՌԿԱ
Մուրատ փաշան մեռաւ ի Յամիթ, եւ
էտո զվազիրութիւնն Նասուֆ փա-
շան (ՄԺ II, 270): Ի թագաւորու-
թեան ալլասեռի... ի վազիրութեան
Քօրբուլուի (Աղան. Միաբանք, 26):*

ՎԱԹՍՈՅՆ, թ. Վաթսուն: ՄՀԲ վաթ-
ցուն նոյն նշ.: *Լեալ ամաց վաթսուն
(գրչ. վաթսոյն) եւ երից, արգոյա-
ւոր եւ մեծաշուք առաջի ամենայն
ազանց (Դաւրիժ., 278):*

ՎԱՆԻՐ ՖՈՒՆԱՐԱՅ, տե՛ս ՖԱՆԻՐ
ՖՈՒՆԱՐԱՅ: *Վախիր ֆուխարայ
Դամուրիսան փաշան շարկամ եղաւ,
Շահինքէրայ սուլթանն գիշերով
կոխեց եւ զինքն փախուց (ՄԺ I,
213):*

ՎԱՆՄԻԱԹ (արաբ. պարսկ. vaqt),
գ. Ընծայաբերութիւն, եկեղեցուն
տրուած նուէր: *Ո՛չ ոք չունի այս
հաստատ սիգէլիս եւ իմ տված
վախմիաթիս հակառակիլ՝ ո՛չ իմոց,
ո՛չ օտարաց (Սանահն., 146): Կուն-
դիկանց տան տակի աղբինքն իմ
կամաւ եւ օժարութեամբ վախմիաթ
տվինք Սուրբ Աստուածածնուն
(Սանահն., 165):*

ՎԱԿԱՉ, գ. Վակաս: *Մուքէլի
դուստր Գուլին իւր հոգոյ բաժին*

*փողէն մէկ արծաթէ վակազ առաւ
(Ակոռ., 204):*

ՎԱՀ, ա. ԱԲ վահ «վախ» (համա-
նուն): *Վահ - հին (ՄՄ 1528, 2բ):*

ՎԱՀԱՆԱՌՐԱՊԷՍ, ա. Վահանի
նման, ամուր: *Պաշտպանողի վա-
հանաւորապէս կաթողիկէ եկեղեց-
ւոյն Քրիստոսի (Յ. Կոլոտ, 310):*

ՎԱՀԵՆԱԼ, չբ. Վախենալ: ՄՀԲ վա-
հել նոյն նշ.: *Թագաւորաց առջև
երթաս, ոչ երկնչիս, ոչ վահենաս
(ՈՒՄՀԲ, 76):*

ՎԱՂԱՈՒՐ, ա. Վաղուց լսուած գո-
յութիւն ունեցած: *Գոհութիւն եւ
փառք Քրիստոսի Փրկչին մերոյ...
զի զիւր վաղալուր յորոգայթն ման-
րեալ փշրեաց (Դիւ. Ս. Յակ., 1941,
157):*

ՎԱՂԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. Ժամանակի
երկարում՝ տարածում: *Վաղար-
կութիւն - երկարեցումն եւ տարա-
ծումն ժամանակի, ի ներկայէն առ
յայլս ամանակս, լատ. տիլացիօ (Վ.
Յուն., 68):*

ՎԱՂԵՄԷ, մկ. Վաղուց, վաղուցուա-
նից, հմմտ. գրբ. վաղեմի: *Վաղեմէ
լսեր եմք եւ այսօր երևելի աշօք բա-
ցօք կու հաւատամք (Եզով, 156):
Վաղեմէ մէրայնոց ոմանց մէլիմ է
նոցա գործք, եւ մեք վաղեմէ հոքս
քաշելով քանի քանի անգամ պէթ-
կական ժամանակին արգարգ արեր
եմք (Եզով, 372):*

ՎԱՂԵՆԱՅԱՆՉ, ա. Վաղուցուայ՝
շարունակական նախանձով: *Ի*

խայթեցմանէ վաղենախանձ եւ ինքնահաւան ազգին յունաց (Յ. Կոլոտ, 257):

ՎԱՂՎԱՂՈՏ, ա. Փոլթկոտ, փխբ. փոփոխամիտ: ԱՖ վաղվաղկոտ «փոլթացող, անհամբեր»: Երրորդ տեսակն յիմարաց է այնոցիկ, որք են վաղվաղոտք և առնեն զամենայն ինչ առանց խորհրդոց (Նոր. ծաղ., 99):

ՎԱՂՎՆԿԱՅ, մկ. Վաղ առաւօտ, կանուխ: Սակաւ մի զաֆրան խառնեն, վաղվնկաց տան, որ խմէ (Բունիաթ, 92):

ՎԱՃԱՆԱՆ, գ. Ըստ իմաստի՝ գինեվաճառ: Մի՛ որ վաճառեսցէ գինի եւ մի՛ արբցէ գինի. եւ բնաւ մի՛ երեսեսցի նշան կամ հոտ գինւոյ՝ ոչ առ ուսմիկս եւ ոչ առ վաճախանս (Դարիժ., 345):

ՎԱՅԵԼՁԱԳՈՐԾ, ա. Վայելուչ արուեստ ունեցող, հմուտ: Հասցէ գիր օրհնութեան... վայելչագործ արուեստաւորաց, արգարավաստակ երկրագործաց (Սանահն., 104):

ՎԱՅԵԼՁԱԶԱՆ, ա. Վայելուչ, պատշաճ: Այս է գեղեցիկ մարմարեայ գահ մի՛ յոյժ վայելչազան (Քէօմ., 19): Մարգարտեաւ ի հրմուզէ՝ ճոխացնել զհարսս վայելչազան (Քէօմ., 22):

ՎԱՅԵԼՁԱԿԵՐՏ, ա. Վայելուչ կերտուած: Վասն կարի առաւել վայելչակերտ գեղեցկատիպ չքնաղատես յօրինուածոյ արուեստին, մեծամեծքն Ջուղայեցւոց տանէին ի ծաղկել (Դարիժ., 324):

ՎԱՅԵԼՁԱՏԵՄԻԼ, ա. Վայելուչ տեսք ունեցող: ԱՖ վայելչատեսակ «սի-

րուն»: Բայց ի զօրաց Լեհացն գնացին ուղարկել զգեսպանսն երկու հարիւր հեծեալք, զարդարեալ ազգի ազգի ճոխութեամբ եւ վայելչատեսիլ գազանամորթ վերարկւօք (Պատմ. Խոթ., 65):

ՎԱՅ ԵԿԱԻ, հրդ. Դժբախտութիւն՝ շարիք եկաւ: Վայ եկաւ ամէնուս վերայ / Ծարաւեցան, ու ջուր չկայ (ՈՒՄՇԲ, II, 602):

ՎԱՅՐԱԾԱՆ, ա. Ծախսաշատ, մըխտոյ, շայլ: Սուրբ Աթոռն ի ներքոյ ՌՇ թուման պարտուց էարկ և զիրաւունսն վայրածախ շոսյութեամբ կորուսանէ (Դիւ. Ա. Յակ., 1933, 152):

ՎԱՅՐԱՀԱՍ,

ՎԱՅՐԱՍԱՀ, ա. Վայր սահող՝ ցած, անարգ: Հանապազօր տեսանելով զգիր եւ զվայրասահ (գրչ. վայրահաս) եւ զմարմնապաշտ օրէնս մահմետականաց... թերանային ի քրիստոնէական հաւատոցս (Դարիժ., 354):

ՎԱՅՐԵՆԻՔ, գ. Հարազատ վայր, հայրենիք բառի համարանութեամբ: ԱՖ վայրենի «վայրի, կատաղի» (համանուն): Միշտ որոնեմ վայրենիք ինձ երթալոյ / Չի չկայ երբէք զիս հոգացող, ափսոսս ինձ (ՈՒՄՇԲ I, 180):

ՎԱՌԱՆ, գ. (պարսկ. var «լախ»), գ. Ողորկլախ, փալլախ: Գ կամ Գ զիրաթ թամամ այար այս վառան է (Դարիժ., 452):

ՎԱՌԻ ԽԱԶ, գ. Եկեղեցական սպասք մեծ խաչ: Ետ չորս արծաթէ սկիհ, մեծ վառի խաչ մի և նորո-

գեաց զձմրան ժամատուն (Գաւազ. Աղթմ., 128):

ՎԱՍՏԱԿԱՆՈՆՋ, ա. Յոգնուրեամբ վաստակած: ՀԲԲ ունի խոնջավաստակ «խոնջած ու վաստակած»: Առիթ ազատութեան ըստ ողբերգող արթնածայրին սրբոյ ի շաւիղս կրկնաշուս առձեռնելի և արդար և վաստակախոնջ (Դիւ. Ա. Յակ., 1941, 200):

ՎԱՍԱՔԱՅԼ, ա. Վատ փայլող՝ վարգող, դանդաղընթաց: Ձին էր վատաքայլ եւ ոստոստմամբ ընկայր (Կամենից, 153):

ՎԱՏԵՐԱՋ, գ. ա. Վատ երազ տեսնելը: Բիւրեղն, որ է պիլօրն, ի հետ պահեն վատերազ եւ գիշերախաբ չի լինի (Դաւրիժ., 444):

ՎԱՏՆԵԼ, նբ. Վատաբանել: ԱԲ և այլու՝ վատնել «փիչացնել, մսխել» (խմաստափոխ.): Ձաղէկ կնիկն գովեցիր, Կին հաշարի (ստահակ) դու վատնեցիր (ՈՒՄՇԲ, 402):

ՎԱՏՐԱ (հունգ. veder, լեհ. wiadro «գոյլ»), գ. Ձափման միատը, 10 լիտը, դոյլ: Գիտացվի օր տվանք ըզըրախին արընտայով Աղաշայ Ծարուկին սացուան, մէկ տարով, որ ինքը ծախէ գուբով ալ եւ վատրայով ալ եւ ընդօր ուզենայ (Գոպր., 100):

ՎԱՐԱՆ, գ. Վարակի մի տեսակ: Վարախ, որ է աղտն ականջին և մեղուին փեթակին և ակոխն և այլն (ՄՄ 6275, 231բ):

ՎԱՐԱՂԱԾ (արաբ. varag «ոսկու կամ արծաթի բարակ շերտ»), ա. Ոսկեգօծած, ոսկով երիզած: ՄՀԲ

վարաղ «ոսկու կամ արծաթի բարակ թերթ»: Յամէն դռան մէջ ԼԶ թուրու շինուածք ունի... ամէնն ոսկով վարաղած (Շահմ. յիշ., 316):

ՎԱՐԱՆԱՄԱՏՈՅՑ, ա. Վարանում կասկած բերող, կասկածելի: Յետ բազում աւուրց բազմաց եկն եհաս Ստեփան բազում վարանամատոյց թղթերովք (Դիւ. Ա. Յակ., 1930, 385):

ՎԱՐԴԱՊԵՏԱՊԵՏ, գ. Վարդապետների պետ, րաբունապետ: Անաղտ հայելի և ակն արևու... վարդապետապետ Տէր եղիազար (Դիւ.Ա. Յակ., 1930, 385):

ՎԱՐԺՈՂ, գ. Վարժեցնող՝ ուսուցիչ: ՀԳԲ վարժող(ք) «սովորող» (իմաստափոխ.): Վեհ աշակերտ մեք վարժողին Վարդանայ / Հրեշտակական վարուք ճգնեալ անխնայ / Սրոբէավար քաղաքավար յարակայ (Աղան. Միաբանք, 87):

ՎԱՐԺՈՂԱՆՄԱՆ, ա. Վարժողի՝ ուսուցչի նման: Վարժողանման միշտ կրթելով, Տեղեկանման հմուտ գոյլով (Առ էջմ., 194):

ՎԱՐԻՍ (թուրք. varis), գ. Ժառանգ: ԱԲ վարիս «համարում, կարծիք» (համանուն): Ես՝ Աղա հայիկս... իմ յօժարութեամբն և այլ վարիսներովն այս հինգ գիրս ընծայ և վախմ արարաք (Յ. Քիւրտ., 10):

ՎԱՐԿ, գ. Փոքր մասնիկ, հմմտ. վայրկեան: Վարկ է՝ մասնիկն այն, զոր թէպէտ և փոքրիկ իմն է, սակայն գրեցեալ ի թաթ կշռոյն, շարժէ գնա և ստորահակէ, ուստի ո-

մանք կէտ անուանեն վասն փոքրութեան, լատ. մօմէնթում (Վ. Յուն., 68):

ՎԱՐՁԱՀԱՒԱՔ, գ. Հարկահաւաք, հարկապահանջ: Պաշտօնատեարք... վեցերորդ՝ վարձահաւաք և ուղղիչ դատից (Ռեղուր., 270): **Վարձահաւաքն** պարտի պահանջել գհատցլթս համօրէն եկղեցւոյն (Ռեղուր., 271):

ՎԱՐՁԱՎԱՃԱՌ, ա. Վարձը՝ գինը վճարող: Մի՛թէ հաց տամք մարդոյ եւ գին առնումք եւ լինիմք վարձավաճառ (Ձաք. Ա, 24):

ՎԱՐՁԱՐԱՐ, ա. Առատաձեռն: Առուել կանայք նոցա վարձարարք, զոր բազում գործս եւ վարձս ունին (Միմ. Ահ., 340):

ՎԱՐՄԷԿԻԱ (հունգ. varmegye «գաւառ»), գ. Կոմսութիւն: Երբ գրիմինալ բան պատահի գօյգօյլօյ վարմէկիայէն, ձէնէ Բ ասէսօր եւ նոցայ հետ զդատաստանը կտրեն (Գովր., 67):

ՎԱՐՆՈՐԱԿ, գ. (բարբ.) Վարունգ: Վարնորակ, որ է խիար (ՄՄ 6275, 232ա):

ՎԱՐՈՒՅ, գ. Գաւազան: ԱՖ վարոց «Էղելու գործիք, գաւազան», ՄՀԲ վարոցիկ «փոքր վարոց՝ նիպոտ»: Իբրեւ ետես Տիրան, ասաց. «Գանել զնա ստուար վարուցօք» (ՄԺ II, 321):

ՎԱՐՍԻՉ, գ. Վարսայարդար, վարսավիր: Եւ սահիրիչն սկսաւ խորհիլ ի միտս իւր... իսկ կայսրն վարսիչին իւրում ներեալ՝ ետ զարժանապատուութիւն իմն (Նոր. ծաղ., 97):

ՎԱՐՎԱՂՆԻՇԱԿ, գ. (բարբ.) Սև մորս բոյսը: Վարվաղնիշակ, որ է շնխաղող (ՄՄ 6275, 231բ):

ՎԵՆԱԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ, գ. Վեհուրթիւն, բարձրութիւն: Ի վայելչութիւն վեհաբարձրութեանց սրբոյ ժողովին (Դիւան Մխիթ., 11):

ՎԵՆԱԶԱՐԿ, ա. Վեհուրթեամբ զարդարուն: Տէր Ներսէս կաթողիկոս Ամենայն Հայոց և պատրիարգ Վարդարշապատու, լուսակառոյց և տիրանկար, վեհագարդ Մեծի և Սրբոյ Աթոռոյս էջմիածնի (Դիւան Ն. Ջուղ., 87):

ՎԵՂԱՌՈՒՍՏՐ (հայ. վեհ+լատ. illustro «յոյս սփռել, լուսատրել»), ա. Վեհագոյն, լուսապայծառ: ՀԲԲ լուստեր «անյայտ նշ. բառ»: **Վեհալուստր** - յոյժ պայծառափայլ, լուսաւորագունեղ, վճառագոյն, լատ. իլլուսթրիսիմուս (Վ. Յուն., 70):

ՎԵՀԱՆՆԱՄ, ա. Վեհի՝ թագաւորի կողմից խնամուած: Աստուածային բազմագեղ օրհնութիւն ի վերայ աստուածապահ և քրիստոսախնամ գաւառացի և վեհախնամ քաղաքացի (Դիւան Ն. Ջուղ., 53):

ՎԵՇԿԻՄԵԱՆ, ա. Վեց մաս՝ բաժին ունեցող: Շինեցին հոր եւ մուսուլուգ՝ քանակաւ մատանց վեշդիմեան (Քէօմ., 35):

ՎԵՐԱԼԵՆՈՐՈՒԹԻՒՆ, գ. Հասունութիւն, ակետր հասակ: Մէր սուրբ ի տղայութեան... էլս ի վերալեւորութեան եւ զօրութիւնս ի ծերութեան (Ագուլ. կոնդ., 86): Ընդունիցիք... էլս ի վերալեւորութեան (Ագուլ. կոնդ., 99):

ՎԵՐԱԿԱՅԻԼ, չբ. Վերևում լինել, վեր գտնուել: ԱՖ վերակայ «գերակայ»: Արտևանունը-վերջնագոյն մասն ճակատոյն, որ մակաչաց վերակայի (Վ. Յուն., 14):

ՎԵՐԱԿԱՅԻ, գ. Վերակացու: Ի թվին Հայոց ՌՃԻԹ Ի թագաւորութեան Շահ Սլէմանին եւ իշխան տեղացս Մաղստտ պէկին, որ էր վերակացի տանն արքունի, շինեցաւ կամուրջս (ԴՉՎ II, 113):

ՎԵՐԱԿԵՐՏԵԼ, նբ. Վերստին կերտել, նորոգել: Զքայքայեալան վերակերտել և զամենևիմբ քակտեալան նորոգել և կազմել (Աղան. Միաբանք, 85):

ՎԵՐԱՃԱՆԱԶԵԼ, նբ. Վերստին անաչել՝ ընկալել: Հուս՝ որդին Քամայ, թոռն Նոյի, գոյով գոռոզ և ամբարտաւան, համոզէր մարդկան առ ի ոչ վերաճանաչել զերջանկութիւնս իւրեանց յԱստուծոյ (Նոր. ծաղ., 175):

ՎԵՐ ԱՌՆԵԼ, հրդ. 1. Կանգնեցնել, վերակառուցել: Սուրբ Ովանէս անվան եկեղեցին ըսկիսպն արարին վեր առնելու (Զ. Ագուլ., 130): 2. նբ. Վերցնել, ձեռքից առնել: Իրիցի փիլոսոն էջմիածնայ աթոռակալ Միքայէլ վարդապետն վեր առաւ (Զ. Ագուլ., 78):

ՎԵՐԱՅ ԱՌՆՈՒԼ, հրդ. Գրաւել, վերցնել: Օրդովարցի Միրզայ Ոսուֆի տղայ, անունն Միրզայ Աբու Յուսէն, սայ Ըսպհան սաղրուն անէ, շխալիսլամութիւն վերայ կառնու, գայ Օրդովար նստի (Զ. Ագուլ., 144):

ՎԵՐ ԳԱԼ, հրդ. Շարժուել, փանդուել: Երեւանայ անապատն, Զորայգեղու եկեղեցին, Քեղարթու վանքն, Ամենայփրկիչն՝ ամէն վեր եկաւ (Զ. Ագուլ., 143):

ՎԵՐԵԼԵԿ, գ. Աստիճան, աստիճանի հարթակ: ԱՖ վերելեակ «վրան նստողը, եղողը» (Իմաստափոխ.): Աստիճան - վերելեկ կամ սանտրխտ մատ (ՄՄ 1127, 135ա):

ՎԵՐԸՆԳՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ, գ. Ընդունելութիւն: ԱՖ վերընդունիմ «ընդունիմ»: Պատրիարզն մեծաւ վերընդունելութեամբ... բուռվաօք եւ երգօք ընդ առաջ ելեալ ընկալաւ (Ճեմճ., 269):

ՎԵՐԻ ԿՈՒՌ, հրդ. Վերևի կողմը, մասը: Իմ յօժար սրտիւ ծախեցի... Հախնազարանց չօնգուր հողի վերի կուռն, հախն առանք (Յ. Ղր., 162):

ՎԵՐՅԱԻԵԼՈՒԼ, նբ. Յաւելել, ավելացնել: Ի վերայ նոցունց վերյաւելուլ զբազումս դենարս (Ճեմճ., 278):

ՎԵՐ (Յ)ԸՆԿՆԵԼ, հրդ. Յաճ ընկնել, կործանուել: Ես՝ քաղաքացի Խօճայ Բէհբուզս, Սուրբ Նշանի հարաւային կամարն վեր էր յընկել, շինել տուի յիշատակ ինձ և ծնողաց իմոց (Պատմ. Հաղբ., 112):

ՎԵՐՆԱՐՈՒՆ, գ. Վերինը՝ Աստուած: ԲՉ դերաբոյն նոյն նշ.: Դերաբուն - ամենիցս Հայր կամ վերնաբուն (ՄՄ 2019, 171բ):

ՎԵՐՆԱԿ, գ. Վրադիր, լրացուցիչ, (գումար): ԼեՌ (35.000) դիան

փող էլ Բալասանէն վերնակ ա-
ռինք, որ դէմէ դէմ փոխեցինք
(Կալված., 59):

ՎԵՐՆԱՊԱՏՈՒԵԼ, նբ. Պատուի ա-
ժանացնել ի վերուստ: Ու՞ր է վկա-
յեալն յամենայն բերանոյ ի բարիս /
Միթէ ընդ վկայսն Քրիստոսի վեր-
նապատուեցաւ (Ներբ. Սրապ., 23):

ՎԵՐՆՈՅ, մկ. Վերելի կողմից, վերե-
փց: ՀԲԲ վերնոց «տան վերևի
վանդակապատ մասը»: Ի մէջ
այսմ կամարացս եթէ ի ներքնոցն և
եթէ վերնոցն կախեալ գոն աւելի
քան զՊՃ՝ կանթեղս, որ յաւուր տօ-
նախմբութեանց լուսաւորին ա-
մէնքն (Պատմ. Երուս., 1931, 339):

ՎԵՐՈՎ, մկ. Վերեւում, վերին մա-
սում: Գրեալ կայ դռան վերովն
հայ[է]րէն գրած մէկ ղանատն
(Զուար, 1868, 116):

ՎԵՐՈՒՆՍՈՂՔ, գ. Սերունդ: Վերու-
նօղք - զարմք, հարք, ծնողք (ՄՄ
2281, 129ա):

ՎԵՐՋՆԱՍՏԱՅՈՒԹԻՒՆ, գ. Ստացուա-
ծի՝ գրի վերջ: Մատեան յիշատա-
կիս, որ գրեցաւ ի վերջնաստացու-
թեանս (Աղան. Միաբանք, 453):

ՎԵՅՇՄԱԲԹԻ, գ. Ուրբաք: Յունիս ամ-
սոյ ժև, որն վեցշաբթի, թագաւորն
ենրիքուս էլաւ գիշերով ի Քրաքո-
վին բերդէն (Կամենից, 45):

ՎՋՈՒՐԱՐ, գ. Ուրա՛ր՝ պարանոցին
կրելու համար: Սակս արդեանցն
եստ վերստին գառ շուռջառ մին,
ընդ նմին՝ գեղապաճոյճ վզուրար
մի ժամարարի մարգարտաշար ե-
գերօք (Սանահն., 119):

ՎԷՐԷԺ, գ. Վրէժ: Զինչ որ անէ, ձեռն
է, մի թէ Աստուած վէրէժն անէ (ՄԺ
I, 216): Աստուած վէրէժ անէ նո-
ցին (ՄԺ I, 224):

ՎԷՔԻՎՈՒԹԻՒՆ (արար. թուրք. *veqil*
«փոխանորդ, ներկայացուցիչ»), գ.
Վէֆիլի՝ փոխանորդի պաշտօն: Ի
միւս տարին կազմեալ նորոգեցի զԱ-
ւետարանս այս ի վէքիլութեան Յով-
հաննէս վարդապետին (Աղան.
Միաբանք, 69): Գնեալ եմք... ան-
ուամբ Տարսիզացի Մելքոնին, վէքի-
լութեամբ Սարգսին (Երուս. դիւ.):

ՎԻՁ ԷԿԱԼ, հրդ. Համաձայնեց,
յամնն առաւ: Էլչին մեր խաթրին
համար վիզ էկալ հետ տանելոյ
(Նշխարք, 8):

ՎԻՋՆ ՏԱԼ, հրդ. Վիզը կարել: Այս
խանն ինքն իւր թուրն վեր ունի,
գնայ այս Շմաւոնիս վերայ, թէ
վիզն տայ (Զ. Ագոլ., 161):

ՎԻՄԱԾԱԾՔ, ա. Վէմով (շիւմաֆա-
րով) ծածկուած: Շիրիմք վիմա-
ծածք յիւրում տապանի / ՈՒնի ի
պահեստ զայր մի պիտանի (Յ. Կո-
լոտ, 150):

ՎԻՄԱԾԻԼ, ա. Վէմից՝ ֆարից ծլած՝
գոյացած: Ի վիմածիլ բլրոջ գագա-
թան աստուածաբնակ ուխտ (Յ. Կո-
լոտ, 204):

ՎԻՊԻՉ (բնստ.), գ. Վիպերգող,
բանաստեղծ: Չուեաց ի մէնջ զմեզ
ուսուցիչ / Չունիմք գայլ ոք զգիրս
թարգմանիչ / Չկայ խրթին տառից
մէկնիւր / Չմնաց հանգոյն նորա վի-
պիչ (Առ Էջմ., 188):

ՎԻՋԱԿ, գ. Վիճակ: Արքեպիսկոպոս
վանից և վիջակի Սուրբ Առաքելոյն

Թագէտսիւ առ Աստուած փոխեցաւ (ՄԺԼ, 305):

ՎԻՔԱՐՈՒԹԻՒՆ (լատ. vicarius «փոխարինող, տեղապահ»), գ. Վիֆարի՝ տեղապահի պաշտօն: ՄՀԲ վիզայր «տեղակալ, թեմի առաջնորդի փոխանորդ»: Մէկ լաւ վարդապետ արեւտ, անուն Պօղոս, և իւր իշխանութիւն արեւտ վիքարութեան վերայ մեր աշխարհին (Նշխարք, 23):

ՎԱՍԻՔԱՅ (ռու. Власыка), գ. Տէր, տիրակալ: Մեծամեծք ամենեքեան ժողովեցեալք էին, ընդ որս եւ վլատիքայ Ռուզաց Շումլայնսքի (Կամենից, 156):

ՎԿԱՆԴ, գ. ձիչ: Վկանդ - անկաղէտ, ճիշք, աւաղ, սրթաթաւուճն*, կմախիք (ՄՄ 2281, էջ 135բ):

ՎՃԱՐԱՋՐԿՈՒԹԻՒՆ, գ. Անվնարունակութիւն, աղատութիւն: Որք խնդրեն յԱստուծոյ զվրէժխնդրութիւն... երկրորդն է՝ սողոմայնութիւն, երրորդն է՝ վճարագրկութիւն վարձկանաց (Նոր. ծաղ., 112):

ՎՃՏԱՔՈՒՆ, ա. Վճիտ, զովալ: Ի վճտաբղից աղբերց վարդապետացն հոսմէականաց (Դիւան Մխիթ., 5):

ՎՇՏԱՊԱՏ, ա. Վշտով պատուած, վշտացած: Ուրբանոսի գերահրաշ Պապիդ՝ վշտապատ և տառապեալ, տրտմախտեալ և յամենայն ուրախութեանց տարամերժ Ոսկանս (Ոսկ. նամ., 1966, 293):

ՎՇՏԱՏԱՆՋ, ա. Վշտերից տանջող: Շնորհիւ Տեառն օրըստօրէ

խաղաղացեալ հանդարտի երկիրս վշտատանջ (Ազուլ. կոնդ., 102):

ՎՈՒՋԻԻ, մկ. Շտապ: Ծանուցես մեզ վռազիւ, զի ի բաց հրածարեցայց (Դիւան Մխիթ., 131):

ՎՈՕՇ, գ. Ապուրի տեսակ, կորկոտապուր: Պառան բացեալ զթոնիրն՝ եհան պոտկով եփեալ կորկոտապուր, զոր ոմանք վոօշ ասեն (Դարիժ., 164):

ՎՐԱՆԱՔՆԱԿԻԼ, շք. Վրաններում բնակուել, բանակել: Աստի հանդիսաւորապէս անցեալ գնացին ի վայրս վրանաքնակիլ (Դիւան Մխիթ., 77):

ՎՐԱՄ ԳՐԵԼ, հրդ. Ինձ վրայ գրել, ինձ վերագրել (պարտքը): Ո՛հմ որ տայ գիրս՝ տեղն գիրք տաս, վրաս գրես (Պօղ. նամ., 91):

ՎՐԻԺԱԿԵԼ, նբ. Խոցել: ԱԲ և ՀԲԲ վրիժակել «զէնք բանեցնել, նէտահարել» (Իմաստափոխ.): Վրիժակել - խաչել, խոցել (ՄՄ 2019, 175ա):

ՎՐԻԺԵԼ, նբ. Վրիժել - տանջել (ՄՄ 1528, 2բ):

ՎՕՌԷՍԱԿԱՆ (հուն. boreas «հիւսիս-արևելեան սառը քամի»), ա. Սաստիկ քամու նման: Բագուժ միջոցաւ եւ սահմանաւ առնու զբորբորումն վառման հրայրեցութեան... սաստիկ վօռէասական հողմոյն նպաստութեամբ (Դարիժ., 425):

ՎՕՎՕՐ, դ. Ով, ով ուր: Վօվօր քայցնու նատ բացայ, նայ պիտոր ունենայ դիսդութիւն, այսինքն ընտոր պիւրովն ու աղաներն ու նօղարիշներն

ու սարքարդան... հոս քաղքին մէջ ունենան քալցնեղու (Գովր., 30):

ՎՕՐԱՇ (հունգ. varras «կար»), գ.

Կարուածփ: Արծըթէ կամ ոսգու ապրշէ վօրաշ ալ չի գտվի (Գովր., 46):

-S-

ՏԱԿԱԿ, գ. (բար.) հաղողի տունկ:

Տակակ, որ է տունկն խաղողի (ՄՄ 6275, 232բ):

ՏԱԿԻ ՇՈՐ, հրդ. Տակը փռելու շոր, սփռոց: *Մահգասի Մուլքումն ետ մէկ Ա շաբիք, Ա սկու տակի շոր (Ակոռ., 211):*

ՏԱԿՈՒՆ ԼԻՆԵՆ, հրդ. Մէկին կամ մի բանի ներոյ՝ ենթակայ լինել: *Մեր մեծ և բարձր ինփրայթօռութեան ողորմութեան հրամանին տակուն լինէք*, որ ձեր կալէ համար և ձեր զնշութիւն (Եզով, 393):

ՏԱԿՎԻ, գ. Արմտիփ, բոց. տակերը: *Գան բժիշկք ի Պարսից եւ ժողովեն զոմանց զգլուխն եւ զոմանց զտակվին, տանին ի պէտս զեղոց (Յ. Կարն., 40):*

ՏԱԿՎԻՏԱԿ, մկ. Իրար տակ, մէկը միւսից ներքե: *Փանգահրն եւ հայք թունազեղ ասեն... երկայնուկ եւ բոլոր լինի, մէկ մէկի ներքե տակվիտակ (գրշ. տակվէտակ) է (Դաւրիժ., 454):*

ՏԱՂՏԵՏՐ, գ. Տաղարան, տաղերի տետր՝ գիրք: Մշֆ ունի տաղատետր նոյն նշ.: *Թէ քարոզ, գանձ, տաղտետր եւ մեղեգիք, թէ դաս վարդապետաց եւ գրագիր (Սիմ. Լեհ., 205):*

ՏԱՃԿԵՒԱՐ,

ՏԱՃԿԵՒԱԿ, գ. ա. Տանկերէն՝ թուրքերէն, թուրքական: *Սանատս ընդ տաճկեար հէօճէթին իւրեանց տվինք (Կալված., 152):* *Ներսցիք հայնակ չի գիտեն, միայն տաճկընակ, ֆարսի (Սիմ. Լեհ., 326):*

ՏԱՄԱՐՈՏ, ա. Տամար՝ բիծ ունեցող (ֆար): Մշֆ ունի տամար «ջիղ, երակ»: *Գոճազմն, որ է լազուարտ, երկնից գունովն է կապոյտ, եւ լանայն է, որ տամարոտ եւ սպիտակ չի լինի (Դաւրիժ., 445):* *Տամարոտն ամեն գոյն լաւ չէ (Դաւրիժ., 447):*

ՏԱՄՈՒՐ ՀԻՆՏԻ (պրակ. tamr-ī hindī), հրդ. (բար.) Հնդկարմա: *Ի տրամ տամուր հինտի խառնեն տան, որ խմէ (Թունիաթ, 78):*

ՏԱՆԴՐՈՒԹԻՒՆ, գ. Տանուտէրութիւն, գիտլի տանուտէրի պաշտօնը: Մշֆ տանըտրութիւն նոյն նշ.: *Իշեցէք Աւետիս աղէս, գեղիս Կ (60) տարի տանդրութիւն արի Մէլիք Պէկի շախովն, իմ սարհատն էս այ՝ Աղայքարի ձորէն դահանկն, Աղպուպաղին (ԴՉՎ IV, 383):*

ՏԱՆՈՅՏԵՐ, գ. Տանուտէր: Այս է հանգիստ Ակորճանին, որ է որդի տանոյտէր Սարքիսին, թվ ՌՂԴ (1645) (ԴՉՎ IV, 207): Այս է հան-

գիստ պարոն Բաճին, որ է մայր տանոյտէր Սարքսին, թվ ՌՂԳ (ԳՉՎ IV, 207):

ՏԱՆՈՎ ՈՒ ՏԵՂՈՎ, հրդ. Տուն ու տեղով՝ գերդաստամով: Սուրբ Աթոռս գինքն օրհնէ իւր տանով և տեղովն և գեղի քահանայիւք և ժողովրդովն (Դիւան ն. Զուղայի, 62):

ՏԱՊԱԽԱՆԱՆԱ (թուրք. tabakhanc), գ. Կաշի թաբախեղու՝ մշակելու արհեստանոց: Կածկըտուն, հեղեղն եկաւ եւ պատեց բոլոր քաղաքն... տապախխանաներն եւ պաւեայ խանաներն (ՄԺ I, 219):

ՏԱՊԱՆ ԶԱՓԵԼ (թուրք. daban «նրբան, գետին»), հրդ. Քայլել, երկար նամփոռդել: Եւ մէկ մի Ռ և Շ տապան չափելով գնաց և հետն այլ ոչ երևէր բազում ժամանակ (ՄԺ I, 210):

ՏԱՊԱՏՈՉՈՐ, ա. Տապից տոչորուող: Յիշեցէք ի Քրիստոս, զի յոյժ տապատոչոր սրտիւ հարեալ (Աղան. Միաբանք, 161):

ՏԱՊԻԼԻ (արաբ. tabil «ղեղ»), գ. (բժշկ.) Այտուց: Ըսթսխա (այտուց), որ է արծուիքն, Գ ազգ կու լինի. մէկին ասեն տապիլի (Բունիաթ, 100):

ՏԱՌԱՊԱԿՐՈՒԹԻՒՆ, գ. Տառապանք կրելը, շարշարանք: Զանազանիւք տառապակրութեամբ եկեալ մտաք ի Միածնաէջ եւ Սուրբ Աթոռս (Ագուլ. կոնդ., 91):

ՏԱՎԱՅ ԴՈՒՇԻ, գ. Զայլամ, տե՛ս նաև ԴէՎԱԴՈՒՇԻ: Տեսանք... հապաշի ողնիկ, տավայ զուշի և այլ

կերպ կերպ կենդանիք, որ ոչ էաք տեսեալ (Շահմ. յիշ., 317):

ՏԱՎՎԱՐ (արաբ. dawwar), գ. Գըլխապտոյտ: Տավվարն, որ սուտարի ասեն, նշանն այն է, որ գլուխն ի շուրջ գա (Բունիաթ, 62):

ՏԱՏԱՆՋՈՒԹԻՒՆ, գ. Տատանում և տանջանք բառերի ամփոփում: Ի տարածգիլն յայնմանէ ո՛չ վարանեալ սուզից իմ տատանջութեամբ (Յ. Կոլոտ, 232):

ՏԱՏԱՍՎԱԶԵՒ, ա. Տատասկի ձեռնեցող՝ փշոտ: Սա ծաղկերանի եւ խարտեալ ոսկով զարդարէր գինքն, այլ ի ներքոյ տատասկածե խորք զգենոյր (ՄԺ II, 333):

ՏԱՐԱԲԵԿԵԼ, նբ. Յնցել, բեկել: Խընդութիւն սրտի ծաղկեցուցանէ զկեանս մարդկան, իսկ տրտմութիւն ոգւոց տարաբեկէ զոսկերս (նոր. ծաղ., 40):

ՏԱՐԱՆՈՒԾԱՆԻԼ, չբ. Տարրալուծուել: Քացախ ոչ կարէ փոխարկիլ ի գինի, եթէ ոչ տարալուծանիցի ի նիւթն առաջին (ՄՄ 1756, 177ա):

ՏԱՐԱԶԿԵԼ,

ՏԱՐԱԶԳԻԼ, նբ. Երկարածգել, հետածգել: Աճ տարածգութիւն «երկարացնելը, ուշացնելը»: Թէ հնար իցէ՞ զՏօմարն իմ... տարածգել շանացէ (Դիւան Միսիթ., 39): Ի տարածգիլն յայնմանէ ո՛չ վարանեալ սուզից իմ տատանջութեամբ (Յ. Կոլոտ, 232):

ՏԱՐԱՅԻ, գ. Բամբակախառն մետախայ գործուածք: Փանաշուց Կարապետն ետուր Սբ. Յակոբայ Դ տարայի շապիբ (Ակոռ., 209):

ՏԱՐԱՍՔԱԻՂ, ա. *Տարասքաւղ* - ապականիչ (*ՄՄ 1127, 154բ*):

ՏԱՐԿՊԸՏՈՒՏ, գ. Տարուայ պտոյտ՝ շրջան, տարուայ սաւառ: *Տարիմըն կեցան Գոռելին մէջն, Խաննողային մէջն. տարէպըտտուն ելան ի վերա Խըրիմին (ՄԺ I, 215): Տարեմն եկած էր Իպրախն փաշան, որ է Պիշխիճին, սուլթան ս[պա]ննեց, տարէպտտուն իրենք մեռան (ՄԺ I, 221):*

ՏԱՐԻՆ Ի ԲՈՂՈՐ, հրդ. Ողջ տարին, շարունակ: *Եղ եւ մեղր Ա լիտրն կէս ղուռուշ, գինի անթիւ, եւ սոքայ անպակաս տարին ի բոլոր (Յ. Կարն., 42):*

ՏԱՐԻՆ ՏԱՄՆԵՐԿՈՒ ԱՄԻՍ, հրդ. Ամբողջ տարին, անդադար: *Տարին տասներկու ամիս / Անհոգ կացի յաշխարհի (ՈՒՄՀԲ, I, 486):*

ՏԱՐՄԵՐԱՄ, գ. Խումբ, դաս: *Տարմերամ - դաս, պար, կոյտ (ՄՄ 2281, 124ա):*

ՏԱՐՈՒՎԱՅ (պարսկ. darüyc «նստիկանապետ, որ ունէր նաև հարկեր գանձելու իրաւասութիւն»), գ. Հսկիչ, պահակ, ոստիկանապետ: *Կարգեցաւ այր ոմն ի վերայ քաղաքին Թիֆլիսու ի գործ մովրովութեան, որում այժմ տարուղայ ասեն (Դարիժ., 120):* Լօռու սուլթան և գործակալը Սոմխէթու, տարուղայ և մէլիք, մեր այսպէս հաստատեցաք, և դուք ևս մի՛ ջանայք առ ի խափանել (Սանահն., 70):

ՏԱՐՈՒՍՏ, մկ. Հեռուից: *Յորմէ ժամանեալ հասցէ աւանդն տէրունի նշանն... շաղկապողական ի տա-*

րուստ և ի բացուստ միջոցէ (Դիւ. Ս. Յակ., 1941, 157):

ՏԱՐՎԻԼ, չբ. Պարտուել: *Այս գրածս թէխսիմն որ գիտենաս, ինչ խաղ որ խաղաս՝ չես տարվիր (Տէֆթ., 377):*

ՏԱՔ, ա. Կծու, սուր համ ունեցող: *Երբ անձն լցվի և կամ տաք կերակուր ուտէ, որ է սոխն է սխտորն (Բունիաթ, 67):*

ՏԱՖ ԱՆՆԷԼ (արաբ. Daf «վանել»), հրդ. Փարատել, մի բանից (հիւանդութիւնից) ազատել: *Մամի է, որ կուզէ որ էլնելու ճար գտնէ, նա հոգին չի թողուր, տաֆ կանէ, չի թողուր որ երկնին ժուռ գայ (Բունիաթ, 62):*

ՏԱՖՆԻ ԶԷԹ, գ. (բար.) Դափնիի ձեթ: *Առ սընտիկ, հինա, քացխով խառնէ և քիչ մի տաֆնի ձէթ այլ խառնէ (Բունիաթ, 104):* Թոր բորի գեղն այս է. Գ տրամ սընտիկ, ժ տրամ տաֆնի ձէթ (Բունիաթ, 112):

ՏԳՆԵԼ, չբ. Տֆնել, հիգ թափել: *Իսկ ես ջանայի եւ խայրաթ առնէի եւ տգնէի ցայգ եւ ցերեկ (Սիմ. Լեհ., 209):*

ՏԵԱՌՆԱԶԱԻՐ, ա. Տիրոջով՝ Աստուծով հզօր: *Հասցէ գիր արհնութեան... ճոխափառ և պերճապաճոյճ, տեառնազար և յիսուսաստար ազատորդացդ (Սանահն., 90):*

ՏԵԱՌՆԱԿՈՆ, ա. Տիրոջ՝ Հիսուսի կոխած, քայլած (տեղերը Երուսաղէմում): *Ոգուով չափ ուրախ եմք և ջանամք... գտեառնակոխ սուրբ քաղաքիդ գհողն լիգել (Դիւ. Ս. Յակ., 1932, 122):*

ՏԵԱՌՆԱԿՏԱԿ, ա. Տիրոջ՝ Յիսուսի կտակած: *Եւ այս ոչ իւրք կայանայ և գլխաւորի, եթէ ոչ տեառնակտակ բանիւ, զոր հրամայէ, եթէ՝ Զխաղաղութիւն իմ տամ ձեզ (Դիւ. Ս. Յակ., 1940, 154):*

ՏԵԱՌՆԱՀԱՍՏԱՏ, ա. Տիրոջ՝ Աստծու հաստատած: *Վստահ եմք առ այդ... առաքելակտակ կանոն և տեառնահաստատ հրաման (Դիւ. Ս. Յակ., 1941, 200):*

ՏԵԱՌՆԱՄՍՏՈՅՅ, ա. Տիրոջ՝ Աստծու տուած: *Եղիագար կաթնողիկոս ամենայն հայոց և պատրիարք Վաղարշապատու, լուսակառոյց և տեառնամատոյց Սրբոյ և Մեծի Աթոռոյս էջմիածնի (Դիւան Ն. Զուղ., 68):*

ՏԵԱՌՆԱՊԱՀ, ա. Տիրոջ՝ Աստծու պահպանութիւնն ունեցող: *Աստուածային օրհնութիւն ի վերայ տեառնապահ Իլովայ (Կամենից, 255):*

ՏԵԱՌՆԱՊԱՐԳԵՒ, ա. Տիրոջ՝ Աստծու պարգեւած: *Ընդ տեառնապարգև օրհնութեանս և ընդհանրական նամակաւ ծանուցումն լիցի ձեզ աստուածասիրացող (Դիւան Ն. Զուղ., 66):*

ՏԵԱՌՆԱՎԻՃԱԿ, ա. Տիրոջ՝ Աստծու վիճակում հաւատքի մէջ գտընուող: *Առաքեալ մատուցանեմ գաստուածային ողջոյն... հանդերձ տեառնավիճակ գնդի, որ յեկեղեցին հայկազունեաց (Դիւան Ժ, 90):*

ՏԵԱՌՆԱԻԱՆԴ, ա. Տիրոջ՝ Աստծու ասանդն ունեցող, հմմտ. գրք. փրկչաանդ: *Մատուցանեմք զող-*

ջոյն տեառնաւանդ հանդերձ երկրպագական համբուրիւ (Դիւան Ս. Յակ., 350):

ՏԵՂԱԿԱՆԱԼ, նբ. Տեղեակ լինել՝ տեղեկանալ: *Խորհուրդ արարին իրեք ամիս եւ տեղակացան՝ իմացեալ զամենայն իրս եւ զբանս տարակուսանաց (Սիմ. Լեհ., 276):*

ՏԵՂԱՅ, մկ. Տեղի, այստեղի: *ՄՀԲ տեղացի նոյն նշ.: Թէ տեղաց մի պարտք անելու ջանամք, հինգ դուռուշ մարդի շի աւտար տալու (Դիւ. Ս. Յակ., 1941, 86):*

ՏԵՂԱՒԱՐ, գ. Տաղաւար, տեղաւորուելու՝ օրեանելու տեղ: *Երբ իջնէաք, ամենայն մարդ տեղաւար շինէր, ի մէջն մտնէր (Նշխարք, 10):*

ՏԵՂԻԿԱՆԱԼ, նբ. Տեղեկանալ, տե՛ս նաև ՏԵՂԱԿԱՆԱԼ: *Տեսի և տեղիկացայ, որ ոչ են քրիստոնեայ և ոչ զմեզ եխպայր համարեն (Ն. Մուշ., 495):*

ՏԵՆԱԲԱՆԵԼ, նբ. Պատմել, ասեմաբանել (սխալագր.՞): *Ատել - ոգել, պատմել, բացիրել, տենաբանել (ՄՄ 2019, 166բ):*

